

ՔԻՄԻԱՅԻ

ԹԵՍՏԱՅԻՆ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

ՇՏԵՄԱՐԱՆ

III

ՄԱՍ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2013

ՀՏԴ 373.1 : 54
ԳՄԴ 74.2 + 24
Ք 542

Խմբագիրներ՝ **Լիդա Սահակյան**
Տարիել Ղոչիկյան
Համբարձում Խաչատրյան

Աշխատանքների համակարգող՝ **Գյուլնարա Փալիկյան**

Հեղինակներ՝ **Լիդա Սահակյան** (մ. գ. դ., պրոֆեսոր, ԵՊԲՀ)
Տարիել Ղոչիկյան (ք. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ)
Համբարձում Խաչատրյան (ք. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ)
Ժաննա Սարգսյան (ք. գ. թ., ԵՊՀ, Ա. Շիրակացու անվ. ձմարան)
Զեփյուռ Կարապետյան (ք. գ. թ., Վաղարշապատի Մ. Գորկու անվ.
թիվ 5 ավագ դպր.)
Նինա Հոբոսյան (ք. գ. թ., Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Երևանի
Խ. Աբովյանի անվ. թիվ 84 հիմնական դպր.)
Սամվել Վարդապետյան (ք. գ. թ., դոցենտ, ԵՊՀ)
Առլիկ Խաչատրյան (ք. գ. թ., դոցենտ, ԵՊՀ)
Կարինե Ավետիսյան (ք. գ. թ., ԿԱԻ)
Գոհար Ներսիսյան («Այբ» ավագ դպրոց)
Գյուլնարա Փալիկյան (ք. գ. թ., ԳԹԿ)

Ք 542 Բիմիայի թեստային առաջադրանքների շտեմարան/ Հեղ. խումբ.— Եր.: Զանգակ,
2013.— 400 էջ:

ՀՏԴ 373.1 : 54
ԳՄԴ 74.2 + 24

ISBN 978-9939-68-130-6

© Հեղինակային խումբ, 2013
© «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ, 2013

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կառավարության և ԿԳ նախարարության կրթական քաղաքականության իրականացման շրջանակներում ներկայացվում է «Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանը՝ նախատեսված հիմնական և ավագ դպրոցների սովորողների, նախորդ տարիների շրջանավարտների, միասնական և պետական ավարտական քննություններին նախապատրաստվողների, ինչպես նաև քիմիա դասավանդող ուսուցիչների համար: Շտեմարանը կարող է օգտագործվել նաև ուսումնական տարվա ընթացքում՝ ընթացիկ ստուգողական թեստային աշխատանքներ անցկացնելու, սովորողների գիտելիքների մակարդակի ստուգման և գնահատման համար: Ժողովածուն ուսուցիչներին կօգնի օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու ուսումնական գործընթացի արդյունքների վերաբերյալ և բարելավելու առարկայի ուսուցման ձևերն ու եղանակները: Ուսումնական ձեռնարկը հարմար է նաև սովորողների գիտելիքների յուրացման մակարդակի ինքնաստուգման և ինքնագնահատման համար:

Շտեմարանում ընդգրկված են հանրակրթական դպրոցի «Քիմիա» առարկայի ծրագրային նյութերին համապատասխանող և դասընթացի գրեթե բոլոր բաժիններին վերաբերող առաջադրանքներ: Այն համապատասխանում է «Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց»-ին:

Նախատեսվում է, որ պետական ավարտական և միասնական քննությունների թեստերում ընդգրկվելու են միայն շտեմարանում առկա առաջադրանքներ:

Սույն ձեռնարկը շտեմարանի առաջին մասն է, որը պարունակում է մոտ 3000 թեստային առաջադրանք և կազմված է երեք գլխից:

Երրորդ գլխի առաջադրանքները՝ «Պնդումների փունջը», նորույթ են և 2013 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստերում չեն ընդգրկվի: Դրանք կընդգրկվեն արտաքին ընթացիկ գնահատման և հաջորդ տարիների քննական թեստերում:

Մտղթում ենք հաջողություն

ԲԱԺԻՆ

1

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ

Առաջին գլխում ներառված են միայն ընտրովի պատասխանով առաջադրանքներ:

Առաջադրանքներից յուրաքանչյուրի *համար տրված է չորս պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Դրանք կատարված են համարվում, եթե քննություն հանձնողի ընտրած պատասխանի համարը համընկնում է ճիշտ պատասխանի համարին:*

Պատասխանների ձևաթղթում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում, տրված է չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանի համարն ընտրելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը (*տես նկ. 1*): Օրինակ՝ 2-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 3-րդն է:

	1	2	3
1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
3	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

նկ.1

Հաշվարկներում պետք է օգտագործել հարաբերական ատոմային զանգվածների կիրառված արժեքները, բացի քլորից՝ 35,5:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ

1.1. ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1.1. Ատոմաանդեկուլային ուսմունք

1. Ո՞րը նյութի ֆիզիկական հատկություն չէ.

- | | |
|-----------------------|------------------------|
| 1) խտությունը | 3) հալման ջերմաստիճանը |
| 2) եռման ջերմաստիճանը | 4) ինքնաբոցավառվելը |

2. Քանի՞ քիմիական տարր է պարունակվում հետևյալ նյութերի մոլեկուլներում.

ջուր, ջրածնի պերօքսիդ, ծծմբական թթու.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 6 | 2) 5 | 3) 4 | 4) 3 |
|------|------|------|------|

3. Ո՞րն է ֆիզիկական մարմին.

- | | | | |
|--------|----------|----------|----------|
| 1) մեխ | 2) պղինձ | 3) երկաթ | 4) արծաթ |
|--------|----------|----------|----------|

4. Նշված նյութերից որո՞նք են անօրգանական.

- | | |
|---------------|----------|
| ա) մարմար | ե) կավիճ |
| բ) գլյուկոզ | զ) ճարպ |
| գ) քացախաթթու | է) ածուխ |
| դ) ալմաստ | |

- | | |
|---------------|---------------|
| 1) ա, բ, ե, է | 3) ա, բ, գ, զ |
|---------------|---------------|

- | | |
|---------------|---------------|
| 2) ա, դ, ե, է | 4) ա, դ, գ, է |
|---------------|---------------|

5. Ի՞նչ ֆիզիկական հատկություններով են իրարից տարբերվում ջուրը և էթանոլը ստանդարտ (25 °C, 101 կՊ) պայմաններում.

- | | |
|------------------------|------------------------|
| ա) գույնով | զ) ազրեզատային վիճակով |
| բ) եռման ջերմաստիճանով | դ) խտությամբ |

- | | | | |
|---------|---------|---------|---------|
| 1) ա, բ | 2) բ, դ | 3) ա, գ | 4) բ, ե |
|---------|---------|---------|---------|

6. Ո՞ր պնդումներն են ճիշտ նատրիումի քլորիդի վերաբերյալ.

- | | |
|---|---------------------|
| ա) սովորական պայմաններում պինդ վիճակում է | դ) հոտ չունի |
| բ) փոշին սպիտակ է | ե) ջրում լուծվում է |
| գ) բնորոշ հոտ ունի | զ) թթու համ ունի |

- | | | | |
|---------------|---------------|---------------|---------------|
| 1) ա, բ, գ, զ | 2) ա, դ, ե, զ | 3) ա, բ, դ, ե | 4) բ, գ, ե, զ |
|---------------|---------------|---------------|---------------|

7. Հետևյալ նյութերից սենյակային ջերմաստիճանում որո՞նք են պինդ վիճակում.

- | | | | |
|---------------|---------------|---------------|---------------|
| ա) սողա | գ) ացետոն | ե) ազոտ | է) նավթ |
| բ) մեթան | դ) կերակրի աղ | զ) խոզի ճարպ | ը) հանգած կիր |
| 1) ա, բ, ե, ը | 2) գ, դ, զ, է | 3) ա, դ, գ, ը | 4) բ, դ, գ, է |

8. Համապատասխանեցրե՞ք նյութի հատկությունները և անվանումը.

Հատկություններ	Անվանում
ա) բնորոշ հոտով թափանցիկ հեղուկ	1) կավիճ
բ) ջրում լուծվող սպիտակ պինդ նյութ	2) սախարոզ
գ) մետաղական փայլով պինդ գունավոր նյութ	3) քացախաթթու
դ) ջրում քիչ լուծվող անհոտ, անհամ գազ	4) թթվածին
	5) յոդ
	6) քլոր

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա3, բ2, գ5, դ4 | 3) ա6, բ2, գ5, դ4 |
| 2) ա3, բ1, գ6, դ3 | 4) ա6, բ1, գ5, դ3 |

9. Ո՞ր արտահայտությունն է ճիշտ ջրածին պարզ նյութի վերաբերյալ.

- 1) փոխազդում է թթվածնի հետ՝ առաջացնելով ջուր
- 2) առկա է բոլոր ածխաջրերի բաղադրությունում
- 3) զանգվածային բաժինը մեթանում 25 % է
- 4) միջուկի լիցքը +1 է

10. Ո՞ր պնդումն է ճիշտ կարմիր ֆոսֆոր պարզ նյութի վերաբերյալ.

- 1) օդում ինքնաբոցավառվում է
- 2) ջրում լավ է լուծվում
- 3) բնության մեջ ազատ վիճակում չի հանդիպում
- 4) ունի մոլեկուլային բյուրեղավանդակ

11. Հետևյալներից որո՞նք են պարզ նյութեր.

- | | | | |
|---------------|---------------|----------------------|----------------|
| ա) ֆուլերեն | գ) պիրիտ | ե) ամոնիակ | է) սնդիկ |
| բ) օզոն | դ) ալմաստ | զ) ածխածնի(II) օքսիդ | ը) երկաթարջասպ |
| 1) ա, բ, ե, գ | 2) գ, դ, զ, է | 3) գ, դ, զ, ը | 4) ա, բ, դ, է |

12. Ո՞ր շարքում են միայն բարդ նյութերի բանաձևեր.

- | | |
|---|--|
| 1) Al, Na ₂ O ₂ , HCl, Si | 3) Cl ₂ , O ₃ , Zn, Fe |
| 2) AgCl, H ₂ O, N ₂ , CO ₂ | 4) NaOH, P ₂ O ₅ , NH ₃ , SO ₂ |

13. Հետևյալ մետաղներից ո՞րն է բնության մեջ հանդիպում պարզ նյութի ձևով.

- 1) նատրիում 2) ալյումին 3) ոսկի 4) կալցիում

14. Ո՞ր քիմիական տարրի ատոմներն են մտնում թվարկված բոլոր նյութերի բաղադրության մեջ. նատրիումի պերօքսիդ, օզոն, ածխածնի(IV) օքսիդ, քլորակիր, ծծմբական անհիդրիդ.

- 1) ծծումբ 2) քլոր 3) թթվածին 4) ածխածին

15. Ո՞ր զույգում նշված երևույթներն են ֆիզիկական.

- 1) մոմի հալվելը և այրվելը 3) ջրի գոլորշանալը և պնդանալը
2) երկաթի սևանալը և ժանգոտվելը 4) սպիրտի այրվելը և գոլորշանալը

16. Ո՞ր զույգում նշված երևույթներն են քիմիական.

- 1) շաքարի հալվելը և ածխանալը 3) ջրի քայքայվելը և պնդանալը
2) երկաթի այրվելը և ժանգոտվելը 4) սպիրտի այրվելը և պնդանալը

17. Ո՞ր մեծությունը կամ հատկանիշը կարող է փոփոխվել քիմիական ռեակցիաների ընթացքում.

- ա) մոլեկուլների թիվը դ) նյութերի գումարային զանգվածը
բ) ատոմների թիվը ե) նյութերի գույնը
գ) նյութի բնույթը
- 1) բ, գ, դ 2) ա, գ, ե 3) բ, գ, ե 4) ա, գ, դ

18. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Արտմաների զանգվածները քիմիական փոխարկումների ընթացքում _____
_____ :

- 1) մեծանում են 3) փոքրանում են
2) մնում են անփոփոխ 4) կրկնապատկվում են

19. Հետևյալ մասնիկներից որո՞նք են քիմիապես անբաժանելի.

- ա) ջրի մոլեկուլը գ) հելիումի ատոմը
բ) թթվածնի ատոմը դ) ամոնիակի մոլեկուլը
- 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, դ

20. Ի՞նչ է ցույց տալիս քիմիական տարրի նշանը.

- ա) մոլային զանգված
բ) տարրի մեկ ատոմ
գ) տարրի հարաբերական ատոմային զանգված
- 1) ա, բ 2) բ, գ 3) ա, գ 4) ա, բ, գ

21. Ո՞ր պնդումն է ճիշտ թթվածին քիմիական տարրի վերաբերյալ.

- 1) թթվածինն անգույն գազ է
- 2) թթվածինն անհրաժեշտ է այրման համար
- 3) ջրում թթվածնի զանգվածային բաժինը 0,89 է
- 4) օդը պարունակում է ըստ ծավալի 21 տոկոս թթվածին

22. Հետևյալ հասկացություններից որո՞նք են վերաբերում ծծումբ քիմիական տարրին.

- ա) կարգաթիվը 16 է
- բ) դրսևորում է +6 բարձրագույն օքսիդացման աստիճան
- գ) հարաբերական ատոմային զանգվածը 32 է
- դ) ատոմի էլեկտրոնային թաղանթը կազմված է 3 շերտից
- ե) էլեկտրահաղորդիչ է

- 1) բ, գ, ե 2) ա, բ, գ, դ 3) բ, գ, դ, ե 4) ա, դ, ե

23. Հետևյալ արտահայտություններից որո՞ն է ճիշտ.

- 1) բոլոր նյութերը կազմված են մոլեկուլներից
- 2) բոլոր նյութերը կազմված են իոններից
- 3) գոյություն ունեն ոչ մոլեկուլային կառուցվածքով նյութեր
- 4) գոյություն ունեն միայն մոլեկուլային կառուցվածքով նյութեր

24. Ո՞ր արտահայտությունն իմաստ *չունի*.

- 1) մեթանոլի մոլեկուլ
- 2) ջրի մոլեկուլ
- 3) կալիումի ատոմ
- 4) սպիտակուցի ատոմ

25. Ո՞ր արտահայտությունն իմաստ *չունի*.

- 1) տասը մոլեկուլ 2) կես մոլեկուլ 3) մեկ ատոմ 4) կես մոլ

26. Ո՞րն է բնական խառնուրդ.

- 1) բետոն 2) օդ 3) յոդի թուրմ 4) օդի

27. Ո՞ր խառնուրդների բաղադրիչները կարելի է բաժանել շոգիացման եղանակով.

- ա) աղաթթվի
- բ) կերակրի աղի ջրային լուծույթի
- գ) ամոնիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի
- դ) կալիումի յոդիդի սպիրտային լուծույթի
- ե) քացախաթթվի ջրային լուծույթի
- զ) սպիրտի ջրային լուծույթի

- 1) ա, բ, գ 2) գ, դ 3) ա, ե, գ 4) բ, դ

28. Ո՞րն է նյութի մոլային բաժինը խառնուրդում.

- 1) նյութի քանակի հարաբերությունը խառնուրդի բաղադրամասերի քանակների գումարին
- 2) նյութի զանգվածի հարաբերությունը խառնուրդի զանգվածին
- 3) խառնուրդի բաղադրամասերի քանակների գումարի հարաբերությունը նյութի քանակին
- 4) խառնուրդի զանգվածի հարաբերությունը նյութի զանգվածին

29. Համապատասխանեցրե՞ք խառնուրդը և դրա բաղադրիչների բաժանման եղանակը.

<i>Խառնուրդ</i>	<i>Բաժանման եղանակ</i>
ա) նավթ	1) շոգիացում
բ) կավաջուր	2) մագնիսի ազդեցություն
գ) երկաթի և ածխի փոշիներ	3) թորում
դ) աղաջուր	4) զտում

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա1, բ2, գ3, դ4 | 3) ա3, բ4, գ2, դ1 |
| 2) ա4, բ1, գ2, դ1 | 4) ա3, բ1, գ2, դ4 |

30. Ո՞րն է զանգվածի ատոմային միավորը.

- | | |
|---|---|
| 1) ^{13}C ատոմի զանգվածի 1/12 մասը | 3) ^{12}C ատոմի զանգվածի 1/12 մասը |
| 2) ^{12}C ատոմի զանգվածը | 4) ^2H ատոմի զանգվածը |

31. Ո՞րն է զանգվածի ատոմային միավորի թվային արժեքը գրամներով.

- | | | | |
|--------------------------|--------------------------|--------------------------|--------------------------|
| 1) $2,66 \cdot 10^{-23}$ | 2) $6,02 \cdot 10^{-24}$ | 3) $1,66 \cdot 10^{-23}$ | 4) $1,66 \cdot 10^{-24}$ |
|--------------------------|--------------------------|--------------------------|--------------------------|

32. Ո՞ր պնդումներն են ճիշտ տարրի հարաբերական ատոմային զանգվածի վերաբերյալ.

- ա) չափողականությունը գ/մոլ է
 - բ) տարրի մեկ ատոմի զանգվածի հարաբերությունն է զանգվածի ատոմային միավորին
 - գ) ցույց է տալիս, թե քանի անգամ է տարրի ատոմի զանգվածը գերազանցում ածխածնի ատոմի զանգվածի 1/12-ը
- | | | | |
|------------|---------|---------|---------|
| 1) ա, բ, գ | 2) ա, բ | 3) բ, գ | 4) ա, գ |
|------------|---------|---------|---------|

33. Պնդումներից որո՞նք են ճիշտ նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածի վերաբերյալ.

- ա) չափողականություն չունի
- բ) ցույց է տալիս, թե քանի անգամ է նյութի մոլեկուլի զանգվածը մեծ զանգվածի ատոմային միավորից

գ) հավասար է մոլեկուլը կազմող տարրերի հարաբերական ատոմային զանգվածների գումարին՝ հաշվի առնելով ատոմների թիվը մոլեկուլում
դ) չափողականությունն է՝ գ/մոլ

- 1) բ, դ 2) ա, դ 3) բ, գ, դ 4) ա, բ, գ

34. Որքան է ծծմբի մեկ ատոմի զանգվածը (գ).

- 1) 32 2) $5,3 \cdot 10^{-25}$ 3) $5,3 \cdot 10^{-23}$ 4) 0,032

35. Որքան է ալյումինի մեկ ատոմի զանգվածը (գ.ա.մ.).

- 1) 27 2) $4,48 \cdot 10^{-26}$ 3) $4,48 \cdot 10^{-23}$ 4) $6,02 \cdot 10^{23}$

36. Որքան է թթվածնի մեկ ատոմի զանգվածը (գ.ա.մ.).

- 1) 16 2) 32 3) $2,66 \cdot 10^{-23}$ 4) $5,32 \cdot 10^{-23}$

37. Ո՞ր տարրի մեկ ատոմի զանգվածն է 19 գ.ա.մ.

- 1) կալիում 2) ֆտոր 3) արգոն 4) թթվածին

38. Որքան է տարրի մեկ ատոմի զանգվածը (գ), եթե դրա հարաբերական ատոմային զանգվածը 64 է.

- 1) $1,06 \cdot 10^{-23}$ 3) $6,02 \cdot 10^{-24}$
2) $1,06 \cdot 10^{-22}$ 4) $6,02 \cdot 10^{-23}$

39. Որքան է ջրի մեկ մոլեկուլի զանգվածը (գ).

- 1) 18 3) $2,99 \cdot 10^{-23}$
2) $6,02 \cdot 10^{-23}$ 4) 0,018

40. Ո՞ր երկտարր միացության մեկ մոլեկուլի զանգվածն է հավասար սիլիցիումի մեկ ատոմի զանգվածին.

- 1) NO 2) N₂ 3) CO 4) HCN

41. Քանի՞ գ.ա.մ-ով է տարբերվում օրթոֆոսֆորական թթվի մեկ մոլեկուլի զանգվածը մետաֆոսֆորական թթվի մեկ մոլեկուլի զանգվածից.

- 1) 18 2) 36 3) 31 4) 62

42. Քանի՞ գ.ա.մ-ով է յոդի մեկ ատոմի զանգվածը մեծ ծծմբական թթվի մեկ մոլեկուլի զանգվածից.

- 1) 156 2) 98 3) 29 4) 127

43. Ո՞ր պնդումն է ճիշտ.

ա) ցանկացած մոլեկուլի զանգվածը մեծ է ցանկացած ատոմի զանգվածից
բ) բոլոր մոլեկուլները կազմված են ատոմներից

- 1) երկուսն էլ ճիշտ են
2) երկուսն էլ սխալ են
3) ճիշտ է միայն ա–ն
4) ճիշտ է միայն բ–ն

44. Ո՞ր զույգի նյութերն են նույն տարրի ալոտրոպ ձևափոխություններ.

- 1) ջրածին և դեյտերիում
2) ջուր և գոլորշի
3) թթվածին և օզոն
4) դեյտերիում և տրիտիում

45. Ո՞ր զույգի նյութերն են նույն տարրի ալոտրոպ ձևափոխություններ.

- 1) քվարց և սիլիկահող
2) կավիճ և մարմար
3) գրաֆիտ և ֆուլերեն
4) թուջ և պողպատ

46. Ինչ թվով թթվածնի ատոմներ կան 9,6 գ օզոնում.

- 1) $6,5 \cdot 10^{22}$ 2) $7,5 \cdot 10^{22}$ 3) $1,806 \cdot 10^{23}$ 4) $3,612 \cdot 10^{23}$

47. Ինչո՞վ են տարբերվում նույն քիմիական տարրի ալոտրոպ ձևափոխությունները.

- 1) կարգաթվով
2) ատոմում նեյտրոնների թվով
3) ատոմում էլեկտրոնների թվով
4) մոլեկուլում ատոմների թվով և կառուցվածքով

48. Համապատասխանեցրե՞ք քիմիական տարրերն իրենց ալոտրոպ ձևափոխություններին.

<i>Քիմիական տարր</i>	<i>Ալոտրոպ ձևափոխություն</i>
ա) ֆոսֆոր	1) ալմաստ և գրաֆիտ
բ) ածխածին	2) շեղանկյուն և պլաստիկ
գ) թթվածին	3) երկթթվածին և օզոն
դ) ծծումբ	4) կարմիր և սպիտակ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ1, գ2, դ4
2) ա4, բ1, գ3, դ2
3) ա4, բ3, գ2, դ1
4) ա2, բ1, գ3, դ4


49. Ինչպե՞ս են փոխվում միջմոլեկուլային հեռավորությունները գազերում արտաքին ճնշումը մեծացնելիս.

- 1) մեծանում են
2) փոքրանում են
3) մնում են անփոփոխ
4) մնում են անփոփոխ մինչև որոշ սահման

50. Սենյակային ջերմաստիճանում հետևյալ նյութերից որոնք են գտնվում հեղուկ և գազային վիճակում.


- ա) CaO բ) H₂O գ) CaSO₄ դ) NH₃ ե) HNO₃ զ) H₂
 1) ա, գ, զ 2) բ, գ, դ 3) բ, դ, ե, զ 4) ա, բ, գ, զ

51. Ինչ կառուցվածքով նյութի բյուրեղավանդակ է պատկերված հետևյալ նկարում.



- 1) ատոմային
 2) իոնային
 3) մետաղային
 4) մոլեկուլային

52. Ինչ կառուցվածքով նյութի բյուրեղավանդակ է պատկերված հետևյալ նկարում.



- 1) ատոմային
 2) մոլեկուլային
 3) իոնային
 4) մետաղային

53. Ինչ կառուցվածք ունի ածխածնի(IV) օքսիդը պինդ վիճակում (չոր սառույց).

- 1) ատոմային 3) իոնային
 2) մոլեկուլային 4) ոչ մոլեկուլային

54. Ո՞ր արտահայտությունը **ճիշտ է** զանգվածի պահպանման օրենքի վերաբերյալ.

- 1) սկզբնանյութերի ընդհանուր զանգվածը հավասար է վերջանյութերի ընդհանուր զանգվածին
 2) սկզբնանյութերի նյութաքանակների գումարը հավասար է վերջանյութերի նյութաքանակների գումարին
 3) քիմիական ռեակցիաների հավասարումների կազմումը հիմնված է զանգվածի պահպանման օրենքի վրա
 4) օրենքը հայտնագործել են Լոմոնոսովը և Լավուազիեն

55. Ինչ է արտահայտում նյութի պարզագույն բանաձևը.

- 1) ատոմների թիվը մոլեկուլում
 2) մոլեկուլում ատոմների քանակների ցանկացած հարաբերություն
 3) ատոմների միացման կարգը մոլեկուլում
 4) մոլեկուլում ատոմների քանակների նվազագույն հարաբերություն

56. Ո՞ր զույգի նյութերում է թթվածին տարրի զանգվածային բաժինը նույնը.

- 1) HNO₃ և HPO₃ 3) Al₂O₃ և CrO₃
 2) H₃PO₄ և H₂SO₄ 4) Al₂O₃ և Cr₂O₃

57. Ո՞ր միաշաքարի մոլեկուլում են ածխածին և թթվածին տարրերի մոլային բաժինները տարբեր.

- 1) ռիբոզ
2) դեզօքսիռիբոզ
3) ֆրուկտոզ
4) գլյուկոզ

58. Ո՞ր զույգի նյութերի հավասար զանգվածներում են պարունակվում նույն թվով թթվածնի ատոմներ.

- 1) K_2O և CaO
2) CO_2 և SO_2
3) $Fe(OH)_3$ և Al_2O_3
4) MgO և $NaOH$

59. Ո՞ր օքսիդում է թթվածնի զանգվածային բաժինն առավել փոքր.

- 1) CO_2
2) NO_2
3) SO_2
4) SnO_2

60. Բնության մեջ հանդիպող հետևյալ նյութերից որո՞նք է թթվածնի զանգվածային բաժինն առավել մեծ.

- 1) Fe_2O_3
2) H_2O
3) SiO_2
4) $CaCO_3$

61. Ձյան փաթիլում զո՞ր քիմիական տարրի զանգվածային բաժինն է առավել մեծ.

- 1) թթվածին
2) ջրածին
3) ազոտ
4) ծծումբ

62. Ո՞րն է տարրի զանգվածային բաժինը միացության մոլեկուլում.

- 1) տարրի ատոմների թվի հարաբերությունը բոլոր ատոմների գումարային թվին
2) տարրի հարաբերական ատոմային զանգվածի և ինդեքսի արտադրյալի հարաբերությունը միացության հարաբերական մոլեկուլային զանգվածին
3) բոլոր ատոմների գումարային թվի հարաբերությունը տարրի ատոմների թվին
4) միացության հարաբերական մոլեկուլային զանգվածի հարաբերությունը տարրի հարաբերական ատոմային զանգվածին

63. Ո՞ր նյութի մոլեկուլում է ածխածին տարրի զանգվածային բաժինն առավել մեծ.

- 1) CO
2) CO_2
3) CH_4
4) C_2H_2

64. Ո՞րն է ածխաջրածնի քիմիական բանաձևը, եթե դրանում ածխածնի զանգվածային բաժինը 0,857 է.

- 1) C_2H_6
2) C_3H_8
3) C_4H_8
4) C_4H_{10}

65. Հետևյալ օքսիդներից որո՞նք է քլորի զանգվածային բաժինը 59,66 %.

- 1) Cl_2O
2) Cl_2O_3
3) Cl_2O_5
4) Cl_2O_7

66. Հետևյալ քիմիական բանաձևն ունեցող միացություններից որի մոլեկուլում է պղնձի և թթվածնի զանգվածների հարաբերությունը 8 : 1.
- 1) CuO 2) Cu(OH)₂ 3) Cu₂O 4) CuSO₄
67. Ո՞րն է երկաթի օքսիդի քիմիական բանաձևը, եթե օքսիդի զանգվածը 1,38 անգամ մեծ է երկաթի զանգվածից.
- 1) FeO 2) Fe₂O₃ 3) Fe₃O₄ 4) FeO₃
68. Որքան է ծծմբի զանգվածային բաժինը (%) ծծմբի այն օքսիդում, որում թթվածնի մոլային բաժինը 0,75 է.
- 1) 20 2) 40 3) 50 4) 60
69. Ո՞ր տարրի զանգվածային բաժինն է առավել մեծ մալաքիտում (Cu₂(OH)₂CO₃).
- 1) H 2) O 3) C 4) Cu
70. Որքան է դրական օքսիդացման աստիճան ունեցող տարրի զանգվածային բաժինը (%) P₂S₃-ում.
- 1) 60,76 2) 3,924 3) 39,24 4) 62,00
71. Ո՞րն է նյութի քանակի չափման միավորը.
- 1) մգ 2) կմ 3) մոլ 4) մոլ⁻¹
72. Ո՞րն է մոլային զանգվածի չափման միավորը.
- 1) գ/լ 2) լ/գ 3) մոլ/լ 4) գ/մոլ
73. Ո՞ր պնդումներն են ճիշտ մոլային զանգվածի վերաբերյալ.
- ա) այն 1 մոլ նյութի զանգվածն է
բ) այն նյութի զանգվածի և համապատասխան նյութաքանակի հարաբերությունն է
- 1) ճիշտ է միայն *ա*-ն 3) երկուսն էլ ճիշտ են
2) ճիշտ է միայն *բ*-ն 4) երկուսն էլ սխալ են
74. Որքան է ալյումինի օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ).
- 1) 54 2) 102 3) 150 4) 300
75. Որքան է H³⁷Cl բաղադրություն ունեցող քլորաջրածնի մոլային զանգվածը (գ/մոլ).
- 1) 18 2) 36,5 3) 37 4) 38
76. Ի՞նչ զանգվածով (գ) ծծմբային գազն է պարունակում այնքան մոլեկուլ, որքան 10 գ ջրածնում է.
- 1) 80 2) 160 3) 320 4) 400

77. Որքան է 2 մոլ նյութաքանակով ջրում պարունակվող ատոմների ընդհանուր թիվը.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) $3,612 \cdot 10^{23}$ | 3) $6,02 \cdot 10^{23}$ |
| 2) $9,03 \cdot 10^{23}$ | 4) $3,612 \cdot 10^{24}$ |

78. Որքան է 5 մոլ ջրի զանգվածը (գ).

- | | | | |
|-------|-------|-------|--------|
| 1) 18 | 2) 36 | 3) 90 | 4) 180 |
|-------|-------|-------|--------|

79. Որքան է թթվածնից և քլորից կազմված հավասարամոլային գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ).

- | | | | |
|---------|-------|---------|---------|
| 1) 35,5 | 2) 32 | 3) 51,5 | 4) 43,5 |
|---------|-------|---------|---------|

80. Հետևյալ նյութերից որի մեկ մոլն է պարունակում առավել մեծ թվով ատոմներ.

- | | | | |
|---------|--------|--------------------|---------|
| 1) ջուր | 2) յոդ | 3) ջրածնի պերօքսիդ | 4) օզոն |
|---------|--------|--------------------|---------|

81. Որքան է 4 գ ջրածնից և 4 գ հելիումից կազմված խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ).

- | | | | |
|---------|---------|---------|---------|
| 1) 2,10 | 2) 2,25 | 3) 2,67 | 4) 3,00 |
|---------|---------|---------|---------|

82. Որքան է ատոմների թիվը 80 գ ծծմբի(VI) օքսիդում.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) $2,408 \cdot 10^{23}$ | 3) $2,408 \cdot 10^{24}$ |
| 2) $1,6 \cdot 10^{24}$ | 4) $3,01 \cdot 10^{24}$ |

83. Քանի ատոմ է պարունակում գազային ֆտորի երկու մոլը.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) $1,66 \cdot 10^{23}$ | 3) $2,408 \cdot 10^{23}$ |
| 2) $2,408 \cdot 10^{24}$ | 4) $6,02 \cdot 10^{23}$ |

84. Հետևյալ քանակությամբ նյութերից որոնք են պարունակվում առավել մեծ թվով մոլեկուլներ.

- | | |
|----------------|---------------|
| 1) 10 մոլ ազոտ | 3) 254 գ յոդ |
| 2) 20 գ ջրածին | 4) 270 գ ջուր |

85. Որքան է 36 գ ջրում պարունակվող մոլեկուլների թիվը.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) $1,8 \cdot 10^{-23}$ | 3) $6,02 \cdot 10^{23}$ |
| 2) $6,02 \cdot 10^{-23}$ | 4) $1,204 \cdot 10^{24}$ |

86. Ինչ զանգվածով (գ) մեթանում կպարունակվի նույնքան ատոմ, որքան 9 գ ջրում է.

- | | | | |
|--------|--------|--------|--------|
| 1) 3,2 | 2) 1,6 | 3) 8,4 | 4) 4,8 |
|--------|--------|--------|--------|

87. Քանի ատոմ է պարունակում 18 գ ավմաստը.

1) $2,71 \cdot 10^{23}$

3) $9,03 \cdot 10^{24}$

2) $9,03 \cdot 10^{23}$

4) $2,71 \cdot 10^{24}$

88. Քանի ատոմ է պարունակում ածխածնի օքսիդի մոլեկուլը, եթե մոլեկուլի զանգվածը $7,309 \cdot 10^{-23}$ գ է.

1) 1

2) 2

3) 3

4) 4

89. Որո՞նք են բաց թողած բառերը հետևյալ նախադասությունում.

Գլխավոր ենթախմբերում կարգաթվի մեծացմանը զուգընթաց փարրերի արտմային շառավիղը _____ է, օքսիդների և հիդրօքսիդների թթվային հատկությունը` _____ :




1) մեծանում, թուլանում

3) փոքրանում, ուժեղանում

2) մեծանում, ուժեղանում

4) փոքրանում, թուլանում

90. Թթուների դր զույգի մոլեկուլներում տարրի օքսիդացման աստիճանի և վալենտականության թվային արժեքները *չեն համընկնում.*



91. Թթվածնի քանի ատոմ է պարունակում 1,02 գ ալյումինի օքսիդը.


1) $1,806 \cdot 10^{21}$

2) 0,03

3) 0,01

4) $1,806 \cdot 10^{22}$

92. Ո՞ր նյութի $9,03 \cdot 10^{23}$ մոլեկուլների զանգվածն է կազմում 69 գրամ.



93. Քանի գրամ ազոտական թթուն (HNO_3) կպարունակի նույնքան թթվածնի ատոմ, որքան ջրածնի ատոմ պարունակում է 6 մոլ ֆոսֆորական թթուն (H_3PO_4).

1) 378

2) 6

3) 588

4) 8

94. Ո՞ր քիմիական տարրի պարզագույն ջրածնային միացության խտությունն է հավասար թթվածնի խտությանը.

1) ֆոսֆոր

3) քլոր

2) ծծումբ

4) սիլիցիում

95. Ո՞րն է x-ի թվային արժեքը $HClO_x$ միացության մոլեկուլում, եթե դրանում թթվածնի զանգվածային բաժինը 56,8 % է.

1) 1

2) 2

3) 3

4) 4

96. 100–ական գ զանգվածով հետևյալ հալոգենաջրածիններից որի նյութաքանակն է առավել փոքր.
- 1) HBr 2) HCl 3) HF 4) HI
97. Ինչ ծավալ (մլ) է զբաղեցնում մեկ մոլ ջուրը 4 °C–ում.
- 1) 15 2) 22,4 3) 18 4) 2,24
98. Ո՞ր նյութի 10 գ զանգվածով նմուշում ատոմների թիվը կլինի առավել մեծ.
- 1) Al₂O₃ 2) P₂O₃ 3) N₂O₃ 4) Cl₂O₃
99. Որքան է ատոմների թիվը ծծմբի մեկ մոլեկուլում, եթե նրանում էլեկտրոնների թիվը 128 է.
- 1) 4 2) 6 3) 8 4) 10
100. Որքան է պրոտոնների քանակը (մոլ) ծծմբի(IV) օքսիդի 1 մոլում.
- 1) 8 2) 16 3) 32 4) 40
101. Ո՞ր ուրվագիրն է ճիշտ արտացոլում քրոմի օքսիդացման աստիճանի փոփոխությունն ըստ հետևյալ ռեակցիայի հավասարման.
- $$2\text{NaCrO}_2 + 3\text{H}_2\text{O}_2 + 2\text{NaOH} = 2\text{Na}_2\text{CrO}_4 + 4\text{H}_2\text{O}$$
- 1) Cr⁺³ → Cr⁰ 3) Cr⁺³ → Cr⁺⁶
 2) Cr⁺⁴ → Cr⁺³ 4) Cr⁺² → Cr⁺⁶
102. Որքան է պղնձի(II) նիտրատի ջերմային քայքայման ռեակցիայի պինդ արգասիքի մոլեկուլում դրական և բացասական օքսիդացման աստիճան ունեցող տարրերի զանգվածների հարաբերությունը.
- 1) 1 : 4 2) 4 : 1 3) 7 : 16 4) 16 : 7
103. Որքան է էլեկտրոնների թիվը կալիումի պերմանգանատի ջերմային քայքայումից ստացված երկտարր միացության մոլեկուլում.
- 1) 87 2) 55 3) 41 4) 25
104. Ո՞րն է CaC₂ + H₂O → ուրվագրին համապատասխանող ռեակցիայի գազային վերջանյութի պարզագույն բանաձևը.
- 1) CH₃ 2) CH₂ 3) CH 4) C₂H₂
105. Որքան է CaH₂ + H₂O → ուրվագրին համապատասխանող ռեակցիայի գազային վերջանյութի մոլային զանգվածը (գ/մոլ).
- 1) 2 2) 16 3) 18 4) 26

106. Որքան է ծծումբ պարունակող երկտարր միացության լրիվ այրման ռեակցիայի քանակաչափական գործակիցների գումարը, եթե 1 մոլ քանակությամբ այդ նյութի այրումից ստացվել են 64 գ ծծմբի(IV) օքսիդ և 18 գ ջուր.

- 1) 5 2) 7 3) 9 4) 10

107. Ինչ զանգվածային հարաբերությամբ պետք է վերցնել n -թվով ածխածնի ատոմ պարունակող ալկենը և թթվածինը, որպեսզի այրումն ընթանա անմնացորդ.

- 1) 1 : 2 2) 7 : 24 3) n : 2 4) $7n$: 24

108. Ո՞ր պնդումներն են ճիշտ ատոմների վերաբերյալ.

- ա) քիմիապես բաժանելի չեզոք մասնիկներ են
 բ) կազմված են միջուկից և էլեկտրոններից
 գ) զանգվածը հիմնականում կենտրոնացած է միջուկում
 դ) քիմիապես անբաժանելի լիցքակիր մասնիկներ են

- 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, գ

109. Համապատասխանեցրե՞ք նյութի քիմիական բանաձևը և դրանում մեծ զանգվածային բաժին ունեցող տարրի հարաբերական ատոմային զանգվածը.

Նյութի բանաձև	A_r
ա) Fe_2O_3	1) 32
բ) $Na_2S_2O_3$	2) 64
գ) $CaCO_3$	3) 56
դ) FeS_2	4) 29
	5) 16

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ1, գ5, դ4 3) ա3, բ4, գ5, դ1
 2) ա3, բ1, գ2, դ1 4) ա3, բ1, գ5, դ1

110. Համապատասխանեցրե՞ք նյութի քիմիական բանաձևը և դրանում մեծ հարաբերական ատոմային զանգված ունեցող տարրի պարբերության համարը.

Նյութի բանաձև	Տարրի պարբերության համար
ա) N_2H_4	1) 3
բ) PCl_5	2) 2
գ) Mn_2O_7	3) 5
դ) HBr	4) 1
	5) 4

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ1, գ5, դ3 3) ա2, բ4, գ5, դ3
 2) ա2, բ2, գ5, դ3 4) ա2, բ1, գ5, դ5

111. Ո՞ր շարքում թվարկված բոլոր տարրերն են Մենդելևի ՊՀ տարբեր խմբերից.

- 1) ֆտոր, քլոր, բրոմ, յոդ
- 2) լիթիում, նատրիում, կալիում, ռուբիդիում
- 3) ածխածին, սիլիցիում, գերմանիում, անագ
- 4) թթվածին, սիլիցիում, ազոտ, հելիում

112. Որո՞նք են բաց թողած բառերը հետևյալ նախադասությունում.

Երկրորդ պարբերությունում կարգաթվի մեծացմանը զուգընթաց փարրերի (բացառությամբ ազնիվ գազի) հարաբերական էլեկտրաբացասականությունը _____ է, օքսիդիչ հատկությունը՝ _____ :

- | | |
|-------------------------|--------------------------|
| 1) փոքրանում, թուլանում | 3) մեծանում, թուլանում |
| 2) մեծանում, ուժեղանում | 4) փոքրանում, ուժեղանում |

113. Համապատասխանեցրե՞ք նյութի քիմիական բանաձևը և դրանում դրական և բացասական օքսիդացման աստիճան ունեցող տարրերի զանգվածային հարաբերությունը.

Նյութի բանաձև	Զանգվածային հարաբերություն
ա) N_2O	1) 7 : 8
բ) NO	2) 7 : 20
գ) N_2O_3	3) 7 : 4
դ) NO_2	4) 7 : 12
	5) 7 : 16

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա3, բ1, գ4, դ3 | 3) ա2, բ1, գ1, դ5 |
| 2) ա3, բ1, գ4, դ5 | 4) ա2, բ1, գ4, դ5 |

114. Համապատասխանեցրե՞ք քիմիական տարրի նշանը և դրա բարձրագույն օքսիդի հիդրատի ընդհանուր բանաձևը.

Քիմիական տարրի նշան	Օքսիդի հիդրատի ընդհանուր բանաձև
ա) S	1) H_2RO_3
բ) Cl	2) HRO_4
գ) N	3) H_2RO_4
դ) C	4) HRO_3
	5) HRO_2

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա3, բ2, գ4, դ3 | 3) ա2, բ2, գ5, դ3 |
| 2) ա3, բ2, գ5, դ1 | 4) ա3, բ2, գ4, դ1 |

115. Համապատասխանեցրե՛ք տարրի օքսիդի և դրա հիդրատի քիմիական բանաձևերը.

<i>Տարրի օքսիդի բանաձև</i>	<i>Օքսիդի հիդրատի բանաձև</i>
ա) MnO	1) $HMnO_4$
բ) Mn_2O_3	2) $Mn(OH)_2$
գ) Mn_2O_7	3) $Mn(OH)_3$
դ) MnO_2	4) H_2MnO_3
	5) $HMnO_3$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

1) ա2, բ3, գ1, դ3

3) ա2, բ3, գ1, դ4

2) ա2, բ3, գ5, դ4

4) ա2, բ4, գ1, դ4

116. Համապատասխանեցրե՛ք նյութի բանաձևը և դրանում ածխածնի նշված (C°) ատոմի օքսիդացման աստիճանը.

<i>Նյութի բանաձև</i>	<i>Ածխածնի օքսիդացման աստիճան</i>
ա) $CH_3C^\circ H_2OH$	1) 0
բ) $CH_3C^\circ OOH$	2) +1
գ) $CH_3C^\circ HO$	3) -2
դ) $CH_3C^\circ OCH_3$	4) -1
	5) +3

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

1) ա4, բ5, գ2, դ3

3) ա1, բ2, գ3, դ4

2) ա1, բ2, գ4, դ3

4) ա4, բ5, գ2, դ5

1.1.1. Ատոմամոլեկուլային ուսմունք

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	30	3	59	4	88	3
2	4	31	4	60	2	89	1
3	1	32	3	61	1	90	2
4	2	33	4	62	2	91	4
5	2	34	3	63	4	92	4
6	3	35	1	64	3	93	1
7	3	36	1	65	2	94	4
8	1	37	2	66	3	95	3
9	1	38	2	67	3	96	4
10	3	39	3	68	2	97	3
11	4	40	3	69	4	98	3
12	4	41	1	70	3	99	3
13	3	42	3	71	3	100	3
14	3	43	4	72	4	101	3
15	3	44	3	73	3	102	2
16	2	45	3	74	2	103	3
17	2	46	4	75	4	104	3
18	2	47	4	76	3	105	1
19	2	48	2	77	4	106	3
20	2	49	2	78	3	107	2
21	3	50	3	79	3	108	2
22	2	51	4	80	3	109	4
23	3	52	1	81	3	110	4
24	4	53	2	82	3	111	4
25	2	54	2	83	2	112	2
26	2	55	4	84	4	113	2
27	4	56	2	85	4	114	4
28	1	57	2	86	4	115	3
29	3	58	4	87	2	116	4

1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն

- Ո՞րն է անագի՝ հիմնական վիճակում գտնվող ատոմի արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևը.
 - 1) $3s^23p^2$
 - 2) $3s^23p^4$
 - 3) $5s^25p^2$
 - 4) $4s^24p^4$
- Ո՞ր տարրի ատոմի էլեկտրոնների բաշխումն է ըստ էներգիական մակարդակների՝ 2, 8, 18, 7.
 - 1) բրոմ
 - 2) ֆոսֆոր
 - 3) ազոտ
 - 4) քլոր
- Քանի՞ չզույգված էլեկտրոն է առկա քլորի՝ հիմնական վիճակում գտնվող ատոմում.
 - 1) 1
 - 2) 4
 - 3) 5
 - 4) 6
- Քանի՞ էլեկտրոն է առկա քրոմի՝ հիմնական վիճակում գտնվող ատոմի արտաքին էներգիական մակարդակում.
 - 1) 1
 - 2) 2
 - 3) 6
 - 4) 10
- Ո՞ր տարրի ատոմն ավելի հեշտությամբ էլեկտրոն կտրամադրի.
 - 1) մագնեզիում
 - 2) ծծումբ
 - 3) ալյումին
 - 4) կալիում
- Ո՞րն է արծաթի՝ հիմնական վիճակում գտնվող ատոմի էլեկտրոնային բանաձևը.
 - 1) $\dots3d^94s^2$
 - 2) $\dots4d^{10}5s^1$
 - 3) $\dots3d^{10}4s^1$
 - 4) $\dots3p^64s^24p^5$
- Էլեկտրոնային բանաձևերից ո՞րն է համապատասխանում Cr^{3+} իոնին.
 - 1) $1s^22s^22p^63s^23p^63d^54s^1$
 - 2) $1s^22s^22p^63s^23p^63d^3$
 - 3) $1s^22s^22p^63s^23p^63d^44s^2$
 - 4) $1s^22s^22p^63s^23p^64s^24p^6$
- Br^- իոնին ո՞ր էլեկտրոնային բանաձևն է համապատասխանում.
 - 1) $\dots2s^22p^6$
 - 2) $\dots3s^23p^6$
 - 3) $\dots4s^24p^5$
 - 4) $\dots4s^24p^6$
- Քվանտային թվերի ո՞ր արժեքներով է բնութագրվում 4p ենթամակարդակում գտնվող էլեկտրոնը.
 - 1) $n = 4, l = 2$
 - 2) $n = 4, l = 3$
 - 3) $n = 4, l = 1$
 - 4) $n = 4, l = 0$
- Որքան է լրիվ լրացված էներգիական մակարդակների թիվը K^+ իոնում.
 - 1) 4
 - 2) 3
 - 3) 2
 - 4) 1

11. Ո՞րն է $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^{10} 4s^2 4p^6 5s^2$ էլեկտրոնային բանաձևով X տարրի ատոմի բարձրագույն օքսիդի բանաձևը.
- 1) X_2O 2) XO 3) X_2O_3 4) X_2O_5
12. Որքան է ատոմային օրբիտալների թիվը d ենթամակարդակում.
- 1) 1 2) 3 3) 5 4) 7
13. Որքան է էլեկտրոնների առավելագույն թիվը d ենթամակարդակում.
- 1) 2 2) 5 3) 6 4) 10
14. Ո՞րն է ատոմային օրբիտալների ընդհանուր թիվը չորրորդ էներգիական մակարդակի p ենթամակարդակում.
- 1) 10 2) 3 3) 7 4) 5
15. Ո՞րն է տարրի կարգաթիվը, եթե նրա ^{40}X իզոտոպի միջուկը պարունակում է 22 նեյտրոն.
- 1) 18 2) 40 3) 42 4) 62
16. Հետևյալ ենթամակարդակներից որոնք իրական չեն հիմնական վիճակում գտնվող ատոմի համար.
- ա) $5s$ բ) $3f$ գ) $3d$ դ) $1p$
 1) բ, գ 2) ա, դ 3) ա, գ 4) բ, դ
17. Որքան է էլեկտրոնների թիվը S^{2-} իոնի արտաքին էներգիական մակարդակում.
- 1) 5 2) 6 3) 7 4) 8
18. Ո՞ր մեծությունն է նույնը հետևյալ մասնիկների համար. Kr , Rb^+ և Br^- .
- 1) պրոտոնների թիվը 3) նեյտրոնների թիվը
 2) էլեկտրոնների թիվը 4) զանգվածային թիվը
19. Որքան է պրոտոնների գումարային քանակը (մոլ) HPO_3 -ի մեկ մոլում.
- 1) 30 2) 40 3) 44 4) 60
20. Հետևյալ տարրերից որի՞ ցնդող ջրածնային միացության բանաձևն է H_3R , եթե նրա բարձրագույն օքսիդում թթվածնի զանգվածային բաժինը 74,074 % է.
- 1) բորի 2) ազոտի 3) ֆոսֆորի 4) ծծմբի
21. Ո՞ր զույգի տարրերն են առավել նման իրենց հատկություններով.
- 1) Ca, Sr 2) Al, Si 3) Ag, Na 4) P, S

22. Որքան է էլեկտրոնների ընդհանուր քանակը նատրիումի օքսիդի մեկ մոլում (մոլ).

- 1) 11 2) 19 3) 30 4) 62

23. Ո՞րն է նախադասության ճիշտ լրացումը.

Ատոմային օրբիտալը _____ :

- 1) էլեկտրոնների թիվն է 3) էլեկտրոնների կուտակում է
2) էլեկտրոնային ամպի լիցքն է 4) մերձմիջուկային տիրույթ է

24. Ո՞ր տարրն է խորհրդանշում հետևյալ ենթամակարդակի էլեկտրոնաբջջային գծապատկերը.



2p

- 1) Be 2) C 3) O 4) S

25. Որքան է 4-րդ էներգիական մակարդակում էլեկտրոնների առավելագույն թիվը.

- 1) 50 2) 32 3) 18 4) 8

26. Որտեղից է անջատվում էլեկտրոնը ռադիոակտիվ տարրի β -տրոհման ժամանակ.

- 1) ատոմի արտաքին էլեկտրոնային շերտից 3) միջուկից
2) ատոմի առաջին էլեկտրոնային շերտից 4) պրոտոնից

27. Ինչպե՞ս է փոխվում տարրի իզոտոպի զանգվածը ռադիոակտիվ α -տրոհման արդյունքում.

- 1) մեծանում է 3) մնում է անփոփոխ
2) փոքրանում է 4) կրկնապատկվում է

28. Ի՞նչ նշանով են ներկայացնում իզոտոպի զանգվածային թիվը.

- 1) Z 2) A 3) N 4) A_r

29. Որքան է $^{16}_8\text{O}$, $^{17}_8\text{O}$, $^{18}_8\text{O}$ իզոտոպների զանգվածային թվերի գումարը.

- 1) 24 2) 25 3) 51 4) 136

30. Ինչո՞վ են տարբերվում ^{35}Cl և ^{37}Cl իզոտոպները.

- 1) միջուկի լիցքի մեծությամբ
2) միջուկում պարունակվող պրոտոնների թվով
3) էլեկտրոնների թվով
4) միջուկում պարունակվող նեյտրոնների թվով

31. Ինչ է ցույց տալիս պարբերության համարը քիմիական տարրերի պարբերական համակարգում.
- 1) տարրերի թիվը
 - 2) էներգիական մակարդակների թիվը
 - 3) կարգաթիվը
 - 4) բարձրագույն օքսիդացման աստիճանը
32. Որքան է 20 գ նեոնի և 4,48 լ (ն. պ.) արգոնի մոլեկուլների թվի հարաբերությունը.
- 1) 2 : 1
 - 2) 5 : 1
 - 3) 1 : 1
 - 4) 1 : 5
33. Քիմիական տարրերի զրո դասին են պատկանում ոչմետաղները.
- 1) միայն *s*
 - 2) միայն *p*
 - 3) հիմնականում *p*
 - 4) ն *s*, ն *p*, ն *d*
34. Ո՞ր տարրի հիմնական վիճակում գտնվող ատոմի էլեկտրոնային բանաձևն է $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^3$.
- 1) ածխածին
 - 2) ազոտ
 - 3) թթվածին
 - 4) ֆոսֆոր
35. Որքան է թափուր օրբիտալների թիվը ազոտի ատոմի հիմնական վիճակում.
- 1) 0
 - 2) 1
 - 3) 5
 - 4) 7
36. Ո՞ր շարքի բոլոր բնութագրերն են համապատասխանում $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^5 4s^1$ էլեկտրոնային բանաձևով տարրին.
- 1) *s*-տարր, մետաղ, I խումբ, գլխավոր ենթախումբ
 - 2) *d*-տարր, մետաղ, VI խումբ, երկրորդական ենթախումբ
 - 3) *d*-տարր, ոչմետաղ, VI խումբ, երկրորդական ենթախումբ
 - 4) *d*-տարր, մետաղ, V խումբ, երկրորդական ենթախումբ
37. Ո՞ր տարրի ատոմում է տեղի ունենում էլեկտրոնի «անկում».
- 1) Zn
 - 2) Sr
 - 3) Cr
 - 4) Mn
38. Ո՞ր օրբիտալներն են բնութագրվում մագնիսական քվանտային թվի $-1, 0, 1$ արժեքներով.
- 1) *s*
 - 2) *p*
 - 3) *d*
 - 4) *f*
39. Ո՞ր շարքի բոլոր մասնիկներին է համապատասխանում արտաքին էներգիական մակարդակի $3s^2 3p^6$ էլեկտրոնային բանաձևը.
- 1) Ar^0, Cl^-, S^{2-}
 - 2) Ne^0, Cl^-, Ca^{2+}
 - 3) Kr^0, K^+, Ca^{2+}
 - 4) Ar^0, Cl^0, Ba^{2+}

40. Ո՞րն է $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^{10} 4s^2 4p^2$ էլեկտրոնային բանաձևն ունեցող տարրի ցնդող ջրածնային միացության բանաձևը.

- 1) PH_3 2) H_2Se 3) AsH_3 4) GeH_4

41. Ո՞ր շարքում են ներատոմային տարրական մասնիկներ.

- 1) Na^+ , ${}^1_1\text{p}$, ${}^1_0\text{n}$ 2) ${}^1_1\text{p}$, ${}^1_0\text{n}$, ${}^4_2\text{He}$ 3) ${}^1_1\text{p}$, ${}^1_0\text{n}$, ${}^0_{-1}\text{e}$ 4) ${}^1_1\text{p}$, ${}^4_2\text{He}$, ${}^0_{-1}\text{e}$

42. Ո՞ր մեծություններն են նույնը տվյալ տարրի իզոտոպների համար.

- ա) զանգվածային թիվ գ) նեյտրոնների թիվ
 բ) պրոտոնների թիվ դ) էլեկտրոնների թիվ
 1) ա, բ 2) գ, բ 3) բ, դ 4) դ, ա

43. Որքան են ${}^{12}\text{C}$ իզոտոպի 1 մոլում պրոտոնների, նեյտրոնների և էլեկտրոնների քանակները (մոլ) համապատասխանաբար.

- 1) 6, 7, 6 2) 7, 6, 6 3) 6, 6, 7 4) 6, 6, 6

44. Ո՞ր խմբում և ո՞ր ենթախմբում է գտնվում պարբերական համակարգի $ns^2(n-1)d^{10}np^3$ էլեկտրոնային բանաձևն ունեցող տարրը.

- 1) V և երկրորդական 3) IV և գլխավոր
 2) V և գլխավոր 4) VI և երկրորդական

45. Համապատասխանեցրե՞ք տարրի նշանը և նրա հիմնական վիճակում գտնվող ատոմի էլեկտրոնային բանաձևը.

Տարրի նշան	Էլեկտրոնային բանաձև
ա) Na	1) $\text{Ne } 3s^2$
բ) Al	2) $\text{Ne } 3s^1$
գ) K	3) $\text{Ne } 3s^2 3p^1$
դ) Br	4) $\text{Ne } 3s^2 3p^6 4s^1$
	5) $\text{Ne } 3s^2 3p^6 3d^{10} 4s^2 4p^5$
	6) $\text{Ne } 3s^2 3p^6 3d^{10} 4s^2 4p^3$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ1, գ6, դ5 3) ա2, բ3, գ4, դ5
 2) ա4, բ2, գ5, դ3 4) ա2, բ4, գ5, դ1

46. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը.

2-րդ էներգիական մակարդակում էլեկտրոնների առավելագույն թիվը հավասար է _____ :

- 1) 16 2) 8 3) 18 4) 32

47. Համապատասխանեցրե՞ք տարրի անվանումը և նրա ատոմի արտաքին էներգիական մակարդակում էլեկտրոնների թիվը.

<i>Մետաղի անվանում</i>	<i>էլեկտրոնների թիվ</i>
ա) լիթիում	1) 0
բ) մագնեզիում	2) 1
գ) արգոն	3) 2
դ) բոր	4) 3
	5) 4
	6) 8

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա2, բ3, գ6, դ4 | 3) ա1, բ5, գ6, դ2 |
| 2) ա2, բ3, գ1, դ6 | 4) ա1, բ5, գ3, դ2 |

48. Որքան է ջրածին տարրի թեթև իզոտոպի մոլային բաժինը (%) մեթանի՝ CH_3D , մոլեկուլում.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) 20 | 2) 40 | 3) 60 | 4) 80 |
|-------|-------|-------|-------|

49. Հետևյալ ենթամակարդակներից որո՞ւմ է էլեկտրոնի էներգիան առավել մեծ.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) 2p | 2) 3d | 3) 3s | 4) 4s |
|-------|-------|-------|-------|

50. Ո՞ր բառն է բաց թողած հետևյալ արտահայտության մեջ.

էլեկտրոնների այն վիճակը, որը բնութագրվում է միևնույն _____ քվանտային թվով, կոչվում է էներգիական մակարդակ:

- | | |
|----------------|---------------|
| 1) օրբիտալային | 3) մագնիսական |
| 2) գլխավոր | 4) սպինային |

51. Որքան է օրբիտալների թիվը երրորդ և չորրորդ էներգիական մակարդակներում համապատասխանաբար.

- | | | | |
|-----------|----------|-----------|------------|
| 1) 9 և 16 | 2) 3 և 4 | 3) 16 և 9 | 4) 18 և 32 |
|-----------|----------|-----------|------------|

52. Ի՞նչ թվով նեյտրոնների զանգվածը կկազմի 5 գրամ.

- | | | | |
|------|---------|-------------------------|-------------------------|
| 1) 5 | 2) 5000 | 3) $6,02 \cdot 10^{23}$ | 4) $3,01 \cdot 10^{24}$ |
|------|---------|-------------------------|-------------------------|

53. Որքան է երկաթի ^{56}Fe իզոտոպում պրոտոնների, նեյտրոնների և էլեկտրոնների թիվը համապատասխանաբար.

- | | | | |
|---------------|---------------|---------------|---------------|
| 1) 56, 26, 30 | 2) 56, 30, 26 | 3) 26, 30, 26 | 4) 26, 26, 30 |
|---------------|---------------|---------------|---------------|

54. Քանի չզույգված էլեկտրոն է առկա 17 կարգաթվով առաջին գրգռված վիճակում գտնվող տարրի ատոմում.
- 1) 1 2) 3 3) 5 4) 7
55. Քանի չզույգված էլեկտրոն է առկա 17 կարգաթվով երրորդ գրգռված վիճակում գտնվող տարրի ատոմում.
- 1) 1 2) 3 3) 5 4) 7
56. Երկաթի ատոմում երրորդ էներգիական մակարդակի էլեկտրոններից քանիսն են վալենտային.
- 1) 8 2) 6 3) 14 4) 0
57. Գլխավոր և օրբիտալային քվանտային թվերի ինչ արժեքներով են բնութագրվում հիմնական վիճակում գտնվող կալցիումի վալենտային էլեկտրոնները.
- 1) 4 և 3 2) 4 և 0 3) 1 և 3 4) 4 և 1
58. Ո՞ր իզոտոպի միջուկում է նեյտրոնների թիվը մեծ պրոտոնների թվից.
- 1) ^{12}C 2) ^{14}N 3) ^{18}O 4) ^{32}S
59. Ալյումինի ինչ զանգվածում (գ) է պարունակվում 39 գ պրոտոն.
- 1) 27 2) 81 3) 13 4) 8
60. Ո՞ր քվանտային թվերն են էլեկտրոնի հիմնական էներգիական բնութագրերն ատոմում.
- 1) n և m_ℓ 2) n և m_s 3) n և ℓ 4) ℓ և m_ℓ
61. Ի՞նչ է ցույց տալիս օրբիտալային քվանտային թիվը.
- 1) էլեկտրոնների թիվը էներգիական մակարդակում
 2) օրբիտալների կողմնորոշումը տարածության մեջ
 3) էլեկտրոնների էներգիան տվյալ մակարդակում
 4) ենթամակարդակների թիվը տվյալ էներգիական մակարդակում
62. Ո՞ր շարքի իզոտոպներից յուրաքանչյուրն է պարունակում հավասար թվով պրոտոններ և նեյտրոններ.
- 1) ^4He , ^{16}O , ^{32}S 3) ^{16}O , ^{32}S , ^{64}Cu
 2) ^{14}N , ^{28}Si , ^{56}Fe 4) ^{12}C , ^{24}Mg , ^{40}Ar

63. Ո՞րն է բաց թողած բառը.

31 գրամ սպիտակ ֆոսֆորում պարունակվող _____ թիվը $9,03 \cdot 10^{24}$ է:

- | | |
|----------------|-----------------|
| 1) պրոտոնների | 3)ատոմների |
| 2) նեյտրոնների | 4) մոլեկուլների |

64. Հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- 1) և՛ ազոտի, և՛ ֆոսֆորի ցածրագույն օքսիդացման աստիճանը -3 է
- 2) կալիումի մետաղական հատկություններն ավելի ուժեղ են արտահայտված, քան նատրիումինը
- 3) ածխածնի ոչմետաղական հատկություններն ավելի ուժեղ են արտահայտված, քան սիլիցիումինը
- 4) և՛ թթվածնի, և՛ ծծմբի բարձրագույն օքսիդացման աստիճանը $+6$ է

65. Ո՞ր տարրական մասնիկի զանգվածն է ընդունվում հավասար պրոտոնի զանգվածին.

- | | |
|--------------|----------------------|
| 1) էլեկտրոնի | 3) α -մասնիկի |
| 2) նեյտրոնի | 4) β -մասնիկի |

66. Հետևյալ իզոտոպներից ո՞րը նեյտրոն չի պարունակում.

- | | | | |
|---------------------|---------------------|-----------------|-----------------|
| 1) ^{80}Br | 2) ^{79}Br | 3) ^1H | 4) ^3H |
|---------------------|---------------------|-----------------|-----------------|

67. Ո՞ր շարքում են ճիշտ ներկայացված ^{39}K իզոտոպում առկա պրոտոնների, էլեկտրոնների և նեյտրոնների թվերը համապատասխանաբար.

- | | |
|---------------|---------------|
| 1) 19, 19, 19 | 3) 19, 20, 19 |
| 2) 19, 19, 20 | 4) 19, 19, 18 |

68. Որքան է ^{23}Na -ի 4,6 գ նմուշում պարունակվող նեյտրոնների զանգվածը (գ).

- | | | | |
|--------|--------|--------|--------|
| 1) 1,2 | 2) 2,4 | 3) 3,6 | 4) 4,2 |
|--------|--------|--------|--------|

69. Ո՞րն է տարրի քիմիական նշանը, եթե R^{2-} անիոնն ունի արգոնի ատոմի էլեկտրոնային փոխդասավորությունը.

- | | | | |
|------|-------|------|-------|
| 1) S | 2) Cl | 3) N | 4) Te |
|------|-------|------|-------|

70. Ո՞ր տարրի ատոմի երրորդ էներգիական մակարդակում է առկա 10 էլեկտրոն.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) Ar | 2) Cl | 3) Ti | 4) Ca |
|-------|-------|-------|-------|

71. Ո՞րն է էլեկտրոնների բաշխումը S^{2-} իոնում.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 2, 8, 5 | 2) 2, 8, 6 | 3) 2, 8, 7 | 4) 2, 8, 8 |
|------------|------------|------------|------------|

72. Ինչ է տեղի ունենում, երբ էլեկտրաչեզոք ատոմը վերածվում է անիոնի.

- 1) միջուկի լիցքն աճում է
- 2) ատոմում ավելանում է էլեկտրոնների թիվը
- 3) զանգվածային թիվը փոխվում է
- 4) ատոմում ավելանում է նեյտրոնների թիվը

73. ^{234}Pa իզոտոպը ձր իզոտոպի α - և β - տրոհումից կգոյանա.

- 1) ^{238}U
- 2) ^{234}Th
- 3) ^{237}Np
- 4) ^{227}Ac

74. R^{3-} իոնում նեյտրոնների և էլեկտրոնների ընդհանուր թիվը 78 է, իսկ պրոտոնների թիվը 9-ով պակաս է նեյտրոնների թվից: Ո՞րն է տարրի քիմիական նշանը.

- 1) P
- 2) N
- 3) As
- 4) Sb

75. Ինչո՞վ են տարբերվում 1s և 3p էներգիական ենթամակարդակների վրա գտնվող մեկական էլեկտրոնները.

- ա) էներգիայով
 - բ) լիցքով
 - գ) օրբիտալի ձևով
 - դ) օրբիտալի չափսով
- 1) ա, բ, դ
 - 2) ա, գ, դ
 - 3) ա, բ
 - 4) բ, գ

76. Որքան է չորրորդ էներգիական մակարդակում օրբիտալների թիվը.

- 1) 4
- 2) 9
- 3) 16
- 4) 25

77. Ինչո՞վ են տարբերվում ^{32}S և $^{32}\text{S}^{2-}$ մասնիկները.

- 1) էլեկտրոնների թվով
- 2) պրոտոնների թվով
- 3) նեյտրոնների թվով
- 4) միջուկի կազմությամբ

78. Որքան է ջրածնի միջին հարաբերական ատոմային զանգվածը նմուշում, եթե այն պարունակում է 2,0 գ ^1H իզոտոպ և 4 գ ^2H իզոտոպ.

- 1) 1,0
- 2) 1,5
- 3) 2,0
- 4) 2,5

1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	27	2	53	3
2	1	28	2	54	2
3	1	29	3	55	4
4	1	30	4	56	2
5	4	31	2	57	2
6	2	32	2	58	3
7	2	33	3	59	2
8	4	34	4	60	3
9	3	35	1	61	4
10	3	36	2	62	1
11	2	37	3	63	1
12	3	38	2	64	4
13	4	39	1	65	2
14	2	40	4	66	3
15	1	41	3	67	2
16	4	42	3	68	2
17	4	43	4	69	1
18	2	44	2	70	3
19	2	45	3	71	4
20	2	46	2	72	2
21	1	47	1	73	1
22	3	48	3	74	3
23	4	49	2	75	2
24	3	50	2	76	3
25	2	51	1	77	1
26	3	52	4	78	2

1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը

1. Տարրի ատոմն ունի $ns^2(n-1)d^{10}np^4$ էլեկտրոնային բանաձևը: Պարբերական աղյուսակի որ խմբում է գտնվում այդ տարրը.
- 1) IV խմբի երկրորդական ենթախմբում 3) VI խմբի գլխավոր ենթախմբում
2) IV խմբի գլխավոր ենթախմբում 4) VI խմբի երկրորդական ենթախմբում
2. Հետևյալ տարրերից որն է իր քիմիական հատկություններով նման ծարիրին.
- 1) կալցիում 2) արսեն 3) կապար 4) ծծումբ
3. Ինչ է ցույց տալիս ՊՀ խմբի համարը գլխավոր ենթախմբի տարրերի համար.
- 1) արտաքին էլեկտրոնային շերտում օրբիտալների թիվը
2) արտաքին էլեկտրոնային շերտում էլեկտրոնների թիվը
3) միջուկում պրոտոնների թիվը
4) էլեկտրոնային շերտերի թիվը
4. Ըստ տրված էլեկտրոնային բանաձևերի՝ որ տարրն է օժտված առավել փոքր քիմիական ակտիվությամբ.
- 1) $1s^22s^22p^4$ 3) $1s^22s^1$
2) $1s^22s^22p^6$ 4) $1s^22s^22p^63s^1$
5. Պարբերական համակարգի գլխավոր ենթախմբերում ինչպե՞ս է փոխվում ատոմի շառավիղը միջուկի լիցքի աճմանը զուգընթաց.
- 1) մեծանում է 3) չի փոխվում
2) փոքրանում է 4) փոխվում է պարբերաբար
6. Հետևյալ տարրերի ատոմներից որն ունի առավել փոքր շառավիղ.
- 1) թթվածին 2) ազոտ 3) քլոր 4) ֆտոր
7. Ո՞ր շարքում են իոնները դասավորված ըստ շառավղի աճման կարգի.
- 1) K^+ , Ca^{2+} , Al^{3+} 3) Br^- , S^{2-} , P^{3-}
2) P^{3-} , S^{2-} , Cl^- 4) Na^+ , K^+ , Rb^+
8. Ո՞ր շարքում են տարրերի ատոմային շառավիղները նախ մեծանում, ապա փոքրանում.
- 1) Br, Cl, F 3) Br, I, Cl
2) F, Cl, Br 4) Cl, F, Br

9. Ո՞րն է արտահայտության ճիշտ շարունակությունը.

Պարբերական համակարգի III պարբերության փարբերի շառավիղները ասումային համարի մեծացման հետք _____ :

- 1) մնում են անփոփոխ 3) փոքրանում են
2) մեծանում են 4) փոխվում են պարբերաբար


10. Ո՞ր շարքում են տարրերը դասավորված էլեկտրաբացասականության աճման կարգով.

- 1) Sb, Te, Br, Cl 2) C, Br, P, Si 3) Br, P, S, Sb 4) O, Se, P, Te

11. Ատոմի արտաքին էլեկտրոնային շերտի հետևյալ բանաձևերն ունեցող տարրերից որի էլեկտրաբացասականությունն է առավել մեծ.

- 1) $3s^23p^5$ 2) $4s^24p^5$ 3) $2s^22p^5$ 4) $5s^25p^5$

12. Կորերից ո՞րն է համապատասխանում H–He–Li–Be տարրերի իոնացման էներգիայի (կՋ/մոլ) փոփոխությանը՝ տարրի ատոմային համարից կախված.



13. Ո՞ր շարքում են տարրերը դասավորված ըստ դրանց առաջացրած պարզ նյութերի մետաղական հատկությունների թուլացման.

- 1) Be, Sr, Ca 2) Li, Na, K 3) Ca, Mg, Be 4) Na, Al, Mg

14. Ո՞ր շարքում են տարրերը դասավորված ըստ մետաղական հատկությունների ուժեղացման.

- 1) Mg, Ca, Be 2) Mg, Na, K 3) Na, Mg, Al 4) K, Na, Mg

15. Ո՞րն է (որոնք են) բաց թողած բառը(երը).

Կովալենտային կապի էներգիան HF–HCl–HBr–HI մոլեկուլներում ձախից աջ _____ :

- 1) փոքրանում է 3) չի փոխվում
2) մեծանում է 4) մեծանում է, ապա փոքրանում

16. Ինչպե՞ս է փոխվում կովալենտային կապի երկարությունը $F_2-Cl_2-Br_2-I_2$ մոլեկուլներում.

- | | |
|----------------|------------------------------|
| 1) փոքրանում է | 3) փոքրանում է, ապա մեծանում |
| 2) մեծանում է | 4) մեծանում է, ապա փոքրանում |

17. Որո՞նք են բաց թողած բառերը հետևյալ արտահայտությունում.

Երկրորդ խմբի գլխավոր ենթախմբի տարրերի օքսիդներին համապատասխան հիդրատների (հիդրօքսիդների) _____ շառավղի մեծացման հետ _____ է:

- | | |
|-------------------------------|---------------------------------|
| 1) գույնը, մզանում | 3) լուծելիությունը, մեծանում |
| 2) լուծելիությունը, փոքրանում | 4) դիսոցման աստիճանը, փոքրանում |

18. Ինչպե՞ս են փոխվում օքսիդների թթվային հատկությունները հետևյալ շարքում.
 $N_2O_5-P_2O_5-As_2O_5-Sb_2O_5$.

- | | |
|----------------------------------|----------------------------------|
| 1) ուժեղանում են | 3) թուլանում են |
| 2) թուլանում, հետո ուժեղանում են | 4) ուժեղանում, հետո թուլանում են |

19. Ինչպե՞ս է փոխվում թթուների ուժը հետևյալ՝ $H_2S-H_2Se-H_2Te$, շարքում.

- | | |
|----------------|-------------------------------|
| 1) մեծանում է | 3) չի փոխվում |
| 2) փոքրանում է | 4) մեծանում, հետո փոքրանում է |

20. Ինչպե՞ս է փոխվում ջրածնային միացությունների մոլեկուլների կայունությունը հետևյալ՝ $CH_4-SiH_4-GeH_4$, շարքում.

- | | |
|--------------------------|----------------|
| 1) մեծանում է | 3) փոքրանում է |
| 2) փոխվում է ոչ օրինաչափ | 4) չի փոխվում |

21. Ինչպե՞ս է փոխվում թթուների ուժը հետևյալ՝ $HClO-HClO_2-HClO_3$, շարքում.

- | | |
|----------------|-------------------------------|
| 1) մեծանում է | 3) չի փոխվում |
| 2) փոքրանում է | 4) մեծանում, հետո փոքրանում է |

22. Ինչպե՞ս է փոխվում թթուների ուժը հետևյալ՝ $HNO_3-HPO_3-HAsO_3$, շարքում.

- | | |
|----------------|-------------------------------|
| 1) մեծանում է | 3) չի փոխվում |
| 2) փոքրանում է | 4) մեծանում, հետո փոքրանում է |

23. Ինչպե՞ս է փոխվում հիմքերի ուժը հետևյալ՝ $Fe(OH)_3-Fe(OH)_2-Ba(OH)_2$, շարքում.

- | | |
|----------------|-------------------------------|
| 1) փոքրանում է | 3) չի փոխվում |
| 2) մեծանում է | 4) մեծանում, հետո փոքրանում է |

1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	9	3	17	3
2	2	10	1	18	3
3	2	11	3	19	1
4	2	12	1	20	3
5	1	13	3	21	1
6	4	14	2	22	2
7	4	15	1	23	2
8	3	16	2		

1.1.4. Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք

1. Ի՞նչ քիմիական կապեր են առկա ածխաթթվի մոլեկուլում.

- 1) իոնային
- 2) կովալենտային ոչ բևեռային
- 3) կովալենտային բևեռային
- 4) իոնային և կովալենտային ոչ բևեռային

2. Ո՞ր նյութի մոլեկուլում է ատոմների միջև կապը կովալենտային բևեռային.

- 1) H_2O
- 2) O_2
- 3) CaO
- 4) $CaCl_2$

3. Ո՞րն է իոնային կապով նյութի բանաձև.

- 1) C_2H_4
- 2) CF_4
- 3) SO_2
- 4) $LiCl$

4. Ո՞ր շարքի բոլոր միացություններում են առկա միայն իոնային կապեր.

- 1) HNO_3 , Na_2SO_4 , NH_3
- 2) $NaCl$, Li_2O , CaF_2
- 3) $AlCl_3$, HCl , NaF
- 4) SO_2 , CO , $SiCl_4$

5. Ո՞ր շարքում են առկա միայն կովալենտային բևեռային կապերով միացություններ.

- 1) H_2S , NH_3 , CH_4
- 2) N_2 , Br_2 , O_3
- 3) $NaCl$, Cl_2 , HCl
- 4) H_2SO_4 , $CuSO_4$, SO_2

6. Ո՞ր զույգի մոլեկուլներում է առկա կովալենտային ոչ բևեռային կապ.

- 1) H_2O_2 , HCl
- 2) BaO_2 , FeS_2
- 3) N_2 , NaH
- 4) SCl_2 , Cl_2

7. Նյութերից որի մոլեկուլում է ջրածնին միացած տարրի ատոմը գտնվում sp^3 հիբրիդային վիճակում.

- 1) C_2H_4
- 2) C_2H_6
- 3) BH_3
- 4) C_2H_2

8. Քանի՞ σ - և π -կապ է առկա էթենի մոլեկուլում.

- 1) 5 և 1
- 2) 4 և 2
- 3) 5 և 2
- 4) 1 և 4

9. Որքան է ծծումբ տարրի վալենտականությունը S , SO_2 , H_2S , SO_3 նյութերի մոլեկուլներում.

- 1) 1, 1, 2, 3
- 2) 1, 4, 2, 6
- 3) 0, 4, 2, 6
- 4) 0, 2, 2, 6

10. Ո՞ր հատկությունն է բնորոշ ատոմային բյուրեղավանդակով միացություններին.

- 1) հալման բարձր ջերմաստիճանը
- 2) ջրում լավ լուծելիությունը
- 3) բարձր էլեկտրահաղորդականությունը
- 4) մետաղական փայլը

11. Ո՞ր նյութի բյուրեղավանդակի հանգույցներում են գտնվում ատոմներ.

- 1) քլոր 2) սիլիցիում 3) ածխաթթու գազ 4) կերակրի աղ

12. Ի՞նչ կապ կառաջանա $1s^2 2s^2 2p^6 3s^1$ և $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^5$ էլեկտրոնային բանաձևեր ունեցող տարրերի ատոմների միջև.

- 1) կովալենտային բևեռային 3) մետաղային
2) կովալենտային ոչ բևեռային 4) իոնային

13. Հետևյալ իոններից որո՞նք է առկա դոնորակցեպտորային մեխանիզմով առաջացած կովալենտային կապ.

- 1) հիդրօքսիդ 3) հիդրոկարբոնատ
2) ամոնիում 4) երկհիդրոֆոսֆատ

14. Ո՞ր նյութի մոլեկուլում կարող է առաջանալ ներմոլեկուլային ջրածնային կապ.

- 1) քացախալդեհիդ 3) էթիլալիլոլ
2) հեղուկ ֆտորաջրածին 4) 4-ամինապենտանաթթու

15. Հետևյալ միացություններից որի մոլեկուլում է ծծումբն առավելագույն օքսիդացման աստիճան ցուցաբերում.

- 1) H_2SO_4 2) H_2SO_3 3) FeS_2 4) FeS

16. Ջրածնի և քլորի ո՞ր ատոմային օրբիտալների վրածածկից է առաջանում կովալենտային կապը քլորաջրածնի մոլեկուլում.

- 1) s և p 2) p և p 3) s և s 4) s և d

17. Ի՞նչ կապ է գոյանում A և B տարրերի ատոմների միջև, եթե դրանց հարաբերական էլեկտրաբացասականության արժեքների տարբերությունը մեծ է երկուսից.

- 1) կովալենտային բևեռային 3) մետաղային
2) կովալենտային ոչ բևեռային 4) իոնային

18. Հետևյալ միացություններից որոնցում են ատոմները կապված իոնային կապով.
ա) HCl , բ) H_2O , գ) $NaCl$, դ) KBr , ե) AgF , զ) SiO_2 .

- 1) ա, բ, 2) գ, դ, ե 3) գ, զ 4) ա, ե, զ

19. Որքան է կապի երկարությունը $H-Cl$ մոլեկուլում (նմ), եթե H և Cl ատոմների շառավիղները համապատասխանաբար 0,053 նմ և 0,099 նմ են.

- 1) 0,152-ից փոքր 2) 0,152-ից մեծ 3) 0,081 4) 0,152

20. Ո՞րն է հիբրիդացման ընթացքում ատոմային օրբիտալների կրած փոփոխությունը.
- 1) ատոմային օրբիտալների թիվը
 - 2) ատոմներում էլեկտրոնների թիվը
 - 3) ատոմային օրբիտալների հավասարեցումն ըստ ձևի և էներգիայի
 - 4) գլխավոր քվանտային թիվը
21. Ի՞նչ հիբրիդային վիճակում է գտնվում ջրածինն միացած ատոմը համապատասխանաբար BH_3 , BeH_2 , CH_4 մոլեկուլներում.
- 1) sp^2 , sp , sp^3
 - 2) sp^3 , sp^2 , sp
 - 3) sp^3 , sp , sp^2
 - 4) sp , sp , sp
22. Հետևյալ մոլեկուլներից ո՞րը բևեռային չէ.
- 1) NH_3
 - 2) CH_4
 - 3) H_2O
 - 4) HF
23. Ո՞րն է բաց թողած բառը.
- Մեկ արտոմի չբաշխված էլեկտրոնային զույգի և մյուս արտոմի թափուր օրբիտալի մասնակցությամբ կովալենտային կապի առաջացումը կատարվում է _____ մեխանիզմով:*
- 1) փոխանակային
 - 2) դոնորակցեպտորային
 - 3) իոնային
 - 4) ատոմային
24. Ինչպե՞ս է անվանվում դոնորակցեպտորային մեխանիզմով կովալենտային կապ առաջացնելիս էլեկտրոնային զույգ ընդունող ատոմը.
- 1) կատիոն
 - 2) անիոն
 - 3) դոնոր
 - 4) ակցեպտոր
25. Ո՞ր շարքի բոլոր մոլեկուլներում է առկա եռակի կապ.
- 1) N_2 , CO_2 , C_2H_4
 - 2) CO , CO_2 , C_2H_2
 - 3) CO , N_2 , C_2H_2
 - 4) N_2 , CO , C_2H_4
26. Քանի՞ կովալենտային կապ է առկա հիդրօքսոնիում իոնում.
- 1) 2
 - 2) 3
 - 3) 4
 - 4) 5
27. Ո՞ր միացության մոլեկուլում է առկա տեղայնացված կովալենտային կապ.
- 1) ցեզիումի ֆտորիդ
 - 2) բրոմաջրածին
 - 3) նատրիումի քլորիդ
 - 4) կալիումի հիդրիդ
28. Ո՞ր շարքի բոլոր միացությունների մոլեկուլներում են առկա դոնորակցեպտորային մեխանիզմով առաջացած կովալենտային կապեր.
- 1) NH_4Cl , $NaCl$, Cl_2
 - 2) $NaNO_3$, NH_4OH , CO
 - 3) $NaOH$, CO_2 , NH_3
 - 4) CO , CH_4 , N_2H_4

29. Ո՞ր նյութի մոլեկուլների միջև է հնարավոր միջմոլեկուլային ջրածնային կապերի առաջացում.

- 1) $(C_2H_5)_2O$ 2) C_2H_4 3) $HCOOH$ 4) $HCOOCH_3$

30. Ո՞ր նյութի մոլեկուլում է կովալենտային կապի բևեռայնությունն առավել փոքր.

- 1) HF 2) HBr 3) HI 4) HCl

31. Համապատասխանեցրե՛ք վրածածկվող ատոմային օրբիտալները և գծապատկերները.

Օրբիտալ	Գծապատկեր
ա) p-p	1.
բ) s-d	4.
գ) s-s	2.
դ) s-p	3.
	5.

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա5, բ3, գ1, դ4 2) ա2, բ3, գ1, դ5 3) ա2, բ4, գ1, դ3 4) ա5, բ4, գ1, դ4

32. Ո՞ր պնդումներն են ճիշտ ատոմային բյուրեղավանդակով միացությունների վերաբերյալ.

- ա) կարծր նյութեր են դ) պլաստիկ նյութեր են
 բ) ջրում լուծվում են ե) դժվարահալ են
 գ) ջրում չեն լուծվում

- 1) բ, ե 2) ա, դ, ե 3) գ, դ 4) ա, գ, ե

33. Ո՞ր շարքում են միայն ոչ բևեռային կովալենտային կապով նյութերի բանաձևեր.

- 1) Br_2 , N_2 , HBr 2) K , H_2 , P_4 3) H_2 , S_8 , O_2 4) CO , CS_2 , CCl_4

34. Ի՞նչ հիբրիդային վիճակում է գտնվում ածխածնի ատոմը ածխածնի(IV) օքսիդի մոլեկուլում, և ի՞նչ կապ է առկա ածխածնի ու թթվածնի ատոմների միջև.

- 1) sp^2 , կովալենտային բևեռային 3) sp^3 , կովալենտային բևեռային
 2) sp , կովալենտային ոչ բևեռային 4) sp , կովալենտային բևեռային

35. Ո՞ր պնդումներն են ճիշտ վալենտային շերտի $2s^2 2p^2$ էլեկտրոնային բանաձևն ունեցող տարրի պարզագույն ջրածնային միացության վերաբերյալ.

- ա) մոլեկուլը բևեռային է
 բ) մոլեկուլը ոչ բևեռային է
 գ) մոլեկուլում տարրը sp^3 հիբրիդային վիճակում է
 դ) մոլեկուլում տարրը sp^2 հիբրիդային վիճակում է

ե) ունի կանոնավոր քառանիստային կառուցվածք

զ) մոլեկուլի կառուցվածքը գծային է

1) բ, գ, դ

2) ա, ե, զ

3) բ, գ, ե

4) գ, դ, զ

36. Ինչպե՞ս է առաջանում քիմիական կապը ամոնիակից ամոնիում իոն առաջանալիս.

1) դոնորակցեպտորային մեխանիզմով

3) իոն-իոն փոխազդեցությամբ

2) փոխանակային մեխանիզմով

4) ջրածնային կապի առաջացմամբ

37. Համապատասխանեցրե՞ք քիմիական կապի տեսակը և նյութի բանաձևը.

<i>Քիմիական կապի տեսակ</i>	<i>Նյութի բանաձև</i>
ա) իոնային	1) Cu
բ) կովալենտային բևեռային	2) Br ₂
գ) կովալենտային ոչ բևեռային	3) CO
դ) մետաղային	4) KF
	5) He

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

1) ա4, բ2, գ5, դ2

3) ա3, բ4, գ2, դ1

2) ա4, բ3, գ2, դ1

4) ա2, բ5, գ1, դ4

38. Հետևյալ մոլեկուլներից ո՞րը գծային է.

1) C₂H₂

2) H₂O

3) HF

4) CO₂

39. Հետևյալ մոլեկուլներից ո՞րը հարթ կառուցվածք չունի.

1) BCl₃

2) C₂H₄

3) C₆H₆

4) CH₄

40. Ո՞ր նյութի մոլեկուլում է կովալենտային կապն առավել բևեռային.

1) H₂Se

2) H₂Te

3) H₂S

4) H₂O

41. Համապատասխանեցրե՞ք նյութի բանաձևը և դրա մոլեկուլում σ-կապերի թիվը.

<i>Նյութի բանաձև</i>	<i>σ-կապերի թիվ</i>
ա) CH ₄	1) 1
բ) CH ₃ CHO	2) 2
գ) H ₂ S	3) 3
դ) NH ₃	4) 4
	5) 6

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

1) ա4, բ3, գ5, դ2

2) ա3, բ1, գ3, դ2

3) ա5, բ1, գ4, դ3

4) ա4, բ5, գ2, դ3

42. Ո՞ր շարքի բոլոր նյութերի մոլեկուլները կարող են առաջացնել միջմոլեկուլային ջրածնային կապեր.

1) CH_4 , H_2O , CH_3OH

2) HF , $\text{C}_2\text{H}_5\text{OH}$, H_2O

3) NH_3 , CH_3CHO , HF

4) C_2H_6 , NH_3 , H_2O_2

1.1.4. Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	15	1	29	3
2	1	16	1	30	3
3	4	17	4	31	3
4	2	18	2	32	4
5	1	19	1	33	3
6	2	20	3	34	4
7	2	21	1	35	3
8	1	22	2	36	1
9	3	23	2	37	2
10	1	24	4	38	2
11	2	25	3	39	4
12	4	26	2	40	4
13	2	27	2	41	4
14	4	28	2	42	2

1.2. ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ

1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը

1. $AB + CD = AD + CB$ փոխարկումը քիմիական ռեակցիաների որ տեսակին է պատկանում.

- 1) միացման 2) փոխանակման 3) տեղակալման 4) քայքայման

2. Ո՞ր տեսակին է պատկանում չեզոքացման ռեակցիան.

- 1) օքսիդացման–վերականգնման 3) փոխանակման
2) կատալիտիկ 4) միայն դարձելի

3. Ո՞ր նյութերի միջև ընթացող ռեակցիաներն են իոնափոխանակային.

- ա) բարիումի հիդրօքսիդի և ծծմբական թթվի
բ) երկաթի և քլորի
գ) մագնեզիումի քլորիդի և կալիումի հիդրօքսիդի
դ) ցինկի և աղաթթվի
ե) արծաթի նիտրատի և նատրիումի քլորիդի
զ) կալցիումի կարբոնատի և աղաթթվի

- 1) ա, բ, գ, դ 2) ա, գ, ե, զ 3) ա, դ, ե, զ 4) ա, գ, դ, ե

4. Հետևյալ հավասարումներին համապատասխան ռեակցիաներից որն է համասեռ.

- 1) $2Cu + O_2 = 2CuO$ 3) $CaO + H_2O = Ca(OH)_2$
2) $2CO + O_2 = 2CO_2$ 4) $Fe + 2HCl = FeCl_2 + H_2$

5. Հիմնականում որ ռեակցիաների դեպքում է վերջանյութերի թիվը մեծ ելանյութերի թվից.

- 1) միացման 3) տեղակալման
2) քայքայման 4) փոխանակման


6. Ո՞րն է ջերմակլանիչ ռեակցիայի հավասարումը.

- 1) $2NO + O_2 = 2NO_2$ 3) $S + O_2 = SO_2$
2) $2H_2O = 2H_2 + O_2$ 4) $2H_2 + O_2 = 2H_2O$

7. Ո՞ր դասին է պատկանում $1 : 2$ մոլային հարաբերությամբ ֆոսֆորի(V) օքսիդի և $NaOH$ -ի ջրային լուծույթի փոխազդեցության ռեակցիան, և որ աղն է ստացվում.

- 1) միացման, NaH_2PO_4 3) փոխանակման, NaH_2PO_4
2) տեղակալման, Na_2HPO_4 4) քայքայման, Na_3PO_4

8. Ռեակցիայի դիրքը տեսակը ներկայացված է.



1) միացման

3) տեղակալման

2) քայքայման

4) փոխանակման

9. Որքան է $\text{Fe} + \text{HCl} \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հետևանքով ստացվող բարդ նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

1) 2

2) 73

3) 127

4) 162,5

10. Ո՞ր զույգ նյութերի միջև է հնարավոր փոխանակման ռեակցիա.

ա) Al և O_2

դ) CrO և HCl

բ) Al(OH)_3 և H_2SO_4

ե) Zn և $\text{Fe(NO}_3)_2$

գ) Ca և HCl

1) ա, բ

2) բ, դ

3) գ, դ

4) բ, ե

11. Համապատասխանեցրե՞ք նյութերն այն ազդանյութերին, որոնց միջև ջրային լուծույթներում հնարավոր է փոխանակման ռեակցիա.

Նյութ	Ազդանյութ
ա) NaOH	1) HNO_3
բ) MgCl_2	2) KOH
	3) Fe
	4) NH_4OH

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

1) ա1, բ2, ը4

3) ա2, ա3, բ1, ը3

2) ա4, բ1, ը3

4) ա3, ա4, ը2, ը4

12. Ի՞նչ զանգվածով (գ) պինդ մնացորդ կստացվի 32,4 գ կալցիումի հիդրօքսիդի նաթը 1000°C -ում մինչև հաստատուն զանգված շիկացնելիս.


1) 1,12

2) 5,6





3) 11,2

4) 20




13. Ո՞րն է և՛ միացման, և՛ օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարում.






14. Ո՞ր դեպքում է ջուրը փոխանակման ռեակցիայի արգասիք.



15. Ո՞ր դեպքում է ջուրը քայքայման ռեակցիայի արգասիք.



16. Որո՞նք են քայքայման ռեակցիաների հավասարումներ.





1) ա, բ

2) բ, գ

3) գ, դ

4) ա, դ

17. Որո՞նք են և՛ միացման, և՛ վերօքս ռեակցիաների հավասարումներ.



1) ա, գ

2) բ, գ

3) ա, բ

4) գ, դ

18. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին կստացվի MnO_2 -ի առկայությամբ 490 գ կալիումի քլորատի քայքայումից.

1) 22,4

2) 6

3) 134,4

4) 122,5

19. Ո՞րն է վերջանյութի գործակիցն՝ ըստ ածխածնի(II) օքսիդի և թթվածնի միացման ռեակցիայի հավասարման.

1) 1

2) 2

3) 3

4) 4

20. Ի՞նչ ծավալով (լ) գազ կստացվի 5 լիտր օզոնի և անհրաժեշտ քանակի արծաթի փոխազդեցությունից.

1) 0

2) 5

3) 3

4) 4

21. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) քլոր կմիանա 14 գ երկաթին տաքացման պայմաններում.

1) 0,25

2) 0,375

3) 5,6

4) 8,4

22. Ո՞րն է համապատասխան հիդրօքսիդի քայքայման ռեակցիայի հավասարման մեջ Fe_2O_3 -ի և H_2O -ի քանակաչափական գործակիցների հարաբերությունը.

1) 1 : 1

2) 2 : 3

3) 1 : 3

4) 1 : 2

23. Որքան է արծաթի նիտրատի ջերմային քայքայումից ստացված գազային խառնուրդում պարզ նյութի ծավալային բաժինը.

1) 1/2

2) 1/3

3) 2/3

4) 1/5

24. Ո՞ր տեսակին է պատկանում ռեակցիան, որի հավասարումն է $2\text{NH}_3 = \text{N}_2 + 3\text{H}_2 - Q$.

1) ջերմանջատիչ, քայքայման

3) ջերմակլանիչ, միացման

2) ջերմակլանիչ, քայքայման

4) ջերմանջատիչ, միացման

25. Ո՞ր գործընթացը *չի կիրառվում* գազային նյութերի միջև ընթացող քիմիական ռեակցիաներն իրականացնելիս.

- 1) տաքացում
2) նյութերի մանրացում
3) ձնշման բարձրացում
4) կատալիզատորի ազդեցություն

26. Ռեակցիայի ո՞ր տեսակը ներկայացված է.



- 1) միացման
2) քայքայման
3) փոխանակման
4) տեղակալման

27. Որո՞նք են *ոչմետաղ* → *թթվային օքսիդ* → *թթու* → *աղ* ծագումնաբանական կապն արտահայտող փոխարկումների շղթայում համապատասխան ռեակցիաների հավասարումների ճախ մասերը՝ ըստ իրականացման հերթականության.



- 1) բ, ե, դ
2) բ, ա, դ
3) գ, դ, ե
4) ե, ա, գ

28. Ո՞ր զույգի նյութերը կարող են լինել X-ը և Y-ը ներկայացված ռեակցիաների ուրվագրերում.



29. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխաթթու գազ կանջատվի 4 մոլ կալցիումի կարբոնատը քայքայելիս.

- 1) 2,24
2) 22,4
3) 56
4) 89,6

30. Սենյակային ջերմաստիճանում մետաղների ո՞ր զույգը *չի կարող* փոխազդել խիտ ազոտական թթվի հետ.

- 1) Mg, Ni
2) Ca, Cu
3) Ag, Zn
4) Fe, Al

31. Ո՞րն է բաց թողած նյութի բանաձևը հետևյալ՝ $3\text{CuO} + \dots = 3\text{Cu} + \text{N}_2 + 3\text{H}_2\text{O}$, ռեակցիայի հավասարման մեջ.

- 1) NO
2) NO₂
3) NH₃
4) HNO₂

1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	12	3	23	2
2	3	13	4	24	2
3	2	14	3	25	2
4	2	15	2	26	2
5	2	16	2	27	2
6	2	17	1	28	2
7	1	18	3	29	4
8	4	19	2	30	4
9	3	20	2	31	3
10	2	21	4		
11	1	22	3		

1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին

1. Ինչպե՞ս է փոխվում հաստատուն ջերմաստիճանում իրականացվող ռեակցիայի արագությունը ժամանակի ընթացքում.

- 1) անընդհատ մեծանում է
- 2) անընդհատ փոքրանում է
- 3) մնում է անփոփոխ
- 4) փոխվում է պարբերականորեն

2. Ո՞ր առնչությամբ է որոշվում համասեռ ռեակցիայի արագությունը.

- 1) $V = \pm \Delta c / \Delta t$
- 2) $V = \pm \Delta c \cdot \Delta t$
- 3) $V = \Delta c + \Delta t$
- 4) $V = \Delta c - \Delta t$


3. $Zn_{(զ)} + 2HCl_{(լ)} = ZnCl_{2(լ)} + H_{2(գ)}$ ռեակցիայի արագությունը ո՞ր դեպքում կմեծանա.

- 1) ցինկի մակերեսը փոքրացնելիս
- 2) ցինկի մակերեսը մեծացնելիս
- 3) ջերմաստիճանը իջեցնելիս
- 4) ճնշումը փոքրացնելիս

4. Քիմիական ռեակցիան, որի $\gamma = 4$, իրականացրել են նախ 50, ապա 20 °C ջերմաստիճանում: Նախկինի համեմատ քանի՞ անգամ կփոխվի արագությունը.

- 1) կմեծանա 64 անգամ
- 2) կփոքրանա 64 անգամ
- 3) կմեծանա 4 անգամ
- 4) կփոքրանա 16 անգամ

5. Ո՞ր գծապատկերն է ճիշտ արտացոլում ռեակցիայի արագության կախումը ջերմաստիճանից (T).



6. Ի՞նչ դեր է կատարում ֆերմենտը $C_6H_{12}O_6 \xrightarrow{\text{ֆերմենտ}} 2C_2H_5OH + 2CO_2$ ռեակցիայում.

- 1) կատալիզատորի
- 2) ելանյութի
- 3) վերջանյութի
- 4) միջանկյալ նյութի

7. Ի՞նչ ժամանակահատվածում է ընթանում չեզոքացման ռեակցիան ($H^+ + OH^- \rightarrow H_2O$) ուժեղ թթվի և ուժեղ հիմքի լուծույթներն իրար խառնելիս.

- 1) ակնաբարթորեն
- 2) ժամերի ընթացքում
- 3) շաբաթների ընթացքում
- 4) ամիսների ընթացքում

8. Էրբ է քիմիական ռեակցիայի արագությունը ունենում իր առավելագույն արժեքը.
- 1) սկզբում
 - 2) վերջում
 - 3) միջնամասում
 - 4) ավարտի պահին
9. Ստորև բերված ռեակցիաներից որի դեպքում է արագությունը հաշվարկվում $v = k[O_2]$ բանաձևով.
- 1) $S + O_2 = SO_2$
 - 2) $2CO + O_2 = 2CO_2$
 - 3) $2H_2 + O_2 = 2H_2O$
 - 4) $N_2 + O_2 = 2NO$
10. Քիմիական ռեակցիայի արագության վերաբերյալ դր ձևակերպումն է ճիշտ.
- 1) ուղիղ համեմատական է փոխազդող նյութերի կոնցենտրացիաների արտադրյալին
 - 2) հակադարձ համեմատական է փոխազդող նյութերի կոնցենտրացիաների արտադրյալին
 - 3) ուղիղ համեմատական է ստացված նյութերի կոնցենտրացիաների արտադրյալին
 - 4) կախված չէ կոնցենտրացիայից
11. Ռեակցիաների դր դասին է պատկանում $C + O_2 = CO_2 + 402$ կՋ հավասարումով արտահայտվող ռեակցիան.
- 1) ջերմակլանիչ, միացման
 - 2) ջերմակլանիչ, տեղակալման
 - 3) ջերմանջատիչ, միացման
 - 4) ջերմանջատիչ, քայքայման
12. Ջրածնի ատոմներից 10 գրամ ջրածին գազ գոյանալիս որքան ջերմություն (կՋ) կանջատվի, եթե H – H կապի էներգիան 436 կՋ/մոլ է.
- 1) 2180
 - 2) 436
 - 3) 872
 - 4) 4360
13. Ինչպե՞ս կփոխվի $H_2 + Cl_2 = 2HCl$ ռեակցիայի արագությունը ճնշումը երկու անգամ մեծացնելիս.
- 1) կմեծանա երկու անգամ
 - 2) կմեծանա չորս անգամ
 - 3) կփոքրանա երկու անգամ
 - 4) կփոքրանա չորս անգամ
14. Ի՞նչ է ցույց տալիս ռեակցիայի ջերմաստիճանային գործակիցը.
- 1) ռեակցիայի արագությունը 10 °C–ում
 - 2) ակտիվ բախումների թիվը
 - 3) քանի անգամ կմեծանա ռեակցիայի արագությունը ջերմաստիճանը 10 °C–ով բարձրացնելիս
 - 4) քանի անգամ կմեծանա ռեակցիայի արագությունը ջերմաստիճանը 10 °C–ով իջեցնելիս

15. Ո՞ր կինետիկական հավասարումն է ճիշտ $\text{Cu} + \text{Cl}_2 = \text{CuCl}_2$ ռեակցիայի համար.

1) $v = k \cdot C_{\text{Cu}} \cdot C_{\text{Cl}_2}$

3) $v = k \cdot C_{\text{Cl}_2}$

2) $v = k \cdot C_{\text{Cu}}$

4) $v = k/C_{\text{Cl}_2}$

16. Ինչպե՞ս կփոխվի ռեակցիայի արագությունը, եթե ռեակցիայի ջերմաստիճանային գործակիցը 3 է, իսկ ջերմաստիճանը բարձրացվել է 40 °C-ով.

1) կմեծանա 27 անգամ

3) կմեծանա 64 անգամ

2) կմեծանա 81 անգամ

4) կփոքրանա 8 անգամ

17. Ո՞րն է $2\text{A} + \text{B}_2 = 2\text{AB}$ համասեռ ռեակցիային համապատասխանող կինետիկական հավասարումը.

1) $v = k [\text{A}]^2$

3) $v = k [\text{A}]^2 [\text{B}_2]^2$

2) $v = k [\text{A}] [\text{B}_2]$



4) $v = k [\text{A}]^2 [\text{B}_2]$

1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին



Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	7	1	13	2
2	1	8	1	14	3
3	2	9	1	15	3
4	2	10	1	16	2
5	4	11	3	17	4
6	1	12	1		

**1.2.3. Քիմիական հավասարակշռություն:
Լե Շատելյեի սկզբունքը**

1. Ո՞ր դարձելի համակարգում հավասարակշռությունը միաժամանակ կտեղաշարժվի նույն ուղղությամբ և ջերմաստիճանը, և՛ ճնշումը բարձրացնելիս.



2. Ո՞ր դեպքում է հետևյալ դարձելի համակարգերից մեկում հավասարակշռությունը տեղաշարժվում դեպի աջ ջերմաստիճանը բարձրացնելիս և չի տեղաշարժվում ճնշումը բարձրացնելիս.



3. Արտաքին ո՞ր ազդակի ազդեցությամբ դարձելի ռեակցիայի հավասարակշռությունը կտեղաշարժվի դեպի աջ.

- 1) վերջանյութի կոնցենտրացիայի փոքրացման
- 2) վերջանյութի կոնցենտրացիայի մեծացման
- 3) ելանյութի կոնցենտրացիայի փոքրացման
- 4) կատալիզատորի առկայության

4. Ո՞ր գործոնը $2NO_2 \rightleftharpoons N_2O_4 + Q$ դարձելի գործընթացի հավասարակշռությունը կտեղաշարժի դեպի աջ.

- 1) ջերմաստիճանի իջեցումը
- 2) ջերմաստիճանի բարձրացումը
- 3) ճնշման իջեցումը
- 4) NO_2 -ի քանակի փոքրացումը

5. Ո՞րն է $N_{2(g)} + 3H_{2(g)} \rightleftharpoons 2NH_{3(g)}$ ռեակցիայի հավասարակշռության հաստատունի բանաձևը.

1) $k = \frac{[N_2][H_2]^3}{[NH_3]^2}$

3) $k = \frac{[NH_3]}{[N_2][H_2]}$

2) $k = \frac{[N_2][H_2]}{[NH_3]}$

4) $k = \frac{[NH_3]^2}{[N_2][H_2]^3}$

6. Ի՞նչ փոփոխություններ կդիտվեն $N_2 + 3H_2 \rightleftharpoons 2NH_3$ հավասարակշռային համակարգում ճնշումը երկու անգամ մեծացնելիս.

- ա) կմեծանա ամոնիակի ելքը
- բ) հավասարակշռությունը չի տեղաշարժվի
- գ) ուղիղ ռեակցիայի արագությունը կմեծանա
- դ) հավասարակշռությունը կտեղաշարժվի ելանյութերի առաջացման կողմը

- 1) բ, գ 2) գ, դ 3) ա, բ 4) ա, գ

7. $A + B \rightleftharpoons D + E$ ռեակցիայի հավասարակշռության հաստատունը մեկ է: Որքան է A նյութի հավասարակշռային կոնցենտրացիան (մոլ/լ), եթե էլանյութերի սկզբնական կոնցենտրացիաներն են $C_A = C_B = 0,04$ մոլ/լ.

- 1) 0,010 2) 0,015 3) 0,020 4) 0,025

8. Ո՞ր գործոնի ազդեցությամբ $H_{2(g)} + I_{2(g)} \rightleftharpoons 2HI_{(g)} - Q$ համակարգում հավասարակշռությունը կտեղաշարժվի վերջանյութի առաջացման կողմը.

- 1) ձնշման մեծացման 3) ջերմաստիճանի իջեցման
2) ձնշման փոքրացման 4) ջերմաստիճանի բարձրացման

9. Ազոտի ծավալային բաժինը գլանում՝ մխոցի տակ գտնվող $N_2 + 3H_2 \rightleftharpoons 2NH_3 + Q$ հավասարակշռային խառնուրդում, 50 % է: Ինչպե՞ս կփոխվի ազոտի մոլային բաժինը խառնուրդում, եթե գլանում ճնշումը մեծացվի.

- 1) կմեծանա 3) կփոքրանա
2) կմնա անփոփոխ 4) նախ կփոքրանա, ապա կմեծանա

10. Ազոտի ծավալային բաժինը գլանում՝ մխոցի տակ գտնվող $N_2 + 3H_2 \rightleftharpoons 2NH_3 + Q$ հավասարակշռային խառնուրդում, 50 % է: Ինչպե՞ս կփոխվի ազոտի մոլային բաժինը խառնուրդում ջերմաստիճանը բարձրացնելիս.

- 1) կմեծանա 3) նախ կփոքրանա, ապա կմեծանա
2) կփոքրանա 4) կմնա անփոփոխ

11. Ո՞ր համակարգում ΔG ճնշման իջեցումը, ΔH ջերմաստիճանի բարձրացումը հավասարակշռությունը կտեղաշարժեն դեպի ձախ.

- 1) $N_2 + O_2 \rightleftharpoons 2NO - Q$ 3) $N_2 + 3H_2 \rightleftharpoons 2NH_3 + Q$
2) $H_2 + Cl_2 \rightleftharpoons 2HCl + Q$ 4) $2H_2O \rightleftharpoons 2H_2 + O_2 - Q$

12. Ինչ դեր է կատարում կատալիզատորը դարձելի ռեակցիաներում.

- 1) տեղաշարժում է հավասարակշռությունը դեպի աջ
2) տեղաշարժում է հավասարակշռությունը դեպի ձախ
3) նպաստում է հավասարակշռության դանդաղ հաստատմանը
4) նպաստում է հավասարակշռության արագ հաստատմանը

13. Հետևյալ ազոակներից որը նշված համակարգի հավասարակշռությունը կտեղաշարժի դեպի ձախ.



- 1) ձնշման իջեցումը 3) ծծմբի ավելացումը
2) ջերմաստիճանի իջեցումը 4) H_2S -ի կոնցենտրացիայի մեծացումը

14. Ո՞ր դեպքում է դարձելի ռեակցիայի հավասարակշռությունը տեղաշարժված դեպի աջ.

- 1) հավասարակշռության հաստատունը՝ $K \ll 1$
- 2) հավասարակշռության հաստատունը՝ $K \gg 1$
- 3) ուղիղ և դարձելի ռեակցիաների արագությունները հավասար են
- 4) ուղիղ ռեակցիայի արագությունը շատ փոքր է

15. Որքան է $A + B \rightleftharpoons C + D$ դարձելի ռեակցիայի հավասարակշռության հաստատունը, եթե հավասարակշռային խառնուրդում հայտնաբերվել է 2 մոլ A նյութ, իսկ A և B նյութերի սկզբնական քանակները եղել են 4-ական մոլ.

- 1) 1
- 2) 3
- 3) 4
- 4) 8

16. Ո՞ր սկզբունքի համաձայն է հավասարակշռային համակարգում որոշվում տեղաշարժի ուղղությունը.

- 1) Պաուլիի
- 2) Մարկովնիկովի
- 3) Հունդի
- 4) Լե Շատելյեի

17. Ի՞նչ նպատակով են ծծմբի(VI) օքսիդի արդյունաբերական ստացման ռեակցիան՝ $2SO_{2(g)} + O_{2(g)} \rightleftharpoons 2SO_{3(g)} + Q$, իրականացնում կատալիզատորի առկայությամբ.

- 1) հավասարակշռությունը դեպի աջ տեղաշարժելու
- 2) հավասարակշռությունը դեպի ձախ տեղաշարժելու
- 3) ակտիվ բախումների թվի մեծացման
- 4) ակտիվացման էներգիայի փոքրացման

18. $2A + B \rightleftharpoons C + 2D$ համակարգում ստեղծվել է հավասարակշռություն: Հայտնի է, որ A նյութի սկզբնական կոնցենտրացիան 4 մոլ/լ է, իսկ հավասարակշռայինը՝ 1,6 մոլ/լ: Որքան են C և D նյութերի հավասարակշռային կոնցենտրացիաները (մոլ/լ) համապատասխանաբար.

- 1) 0,6 և 1,2
- 2) 2,4 և 1,2
- 3) 1,2 և 2,4
- 4) 1,2 և 0,6

1.2.3. Քիմիական հավասարակշռություն: Լե Շատելյեի սկզբունքը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	7	3	13	4
2	2	8	4	14	2
3	1	9	2	15	1
4	1	10	4	16	4
5	4	11	3	17	4
6	4	12	4	18	3

1.2.4. Քիմիական ռեակցիայի ջերմեֆեկտ: Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ: Ջերմաքիմիական հավասարումներ

1. Ինչ զանգվածով (գ) ածխի այրումից կանջատվի 2412 կՋ ջերմություն, եթե ածխի այրման ջերմաքիմիական հավասարումն է $C_{(այ)} + O_{2(գ)} = CO_{2(գ)} + 402$ կՋ.
- 1) 7,2 2) 36 3) 72 4) 108
2. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի 100 լ (ն. պ.) ազոտիլենը լրիվ այրելիս, եթե ազոտիլենի այրման ջերմությունն է $Q_{այր.} = 784$ կՋ/մոլ.
- 1) 350 2) 3500 3) 35 000 4) 350 000
3. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ջրածնի այրումից կանջատվի 12,1 կՋ ջերմություն, եթե ջրածնի այրման ջերմաքիմիական հավասարումն է $2H_{2(գ)} + O_{2(գ)} = 2H_2O_{(գ)} + 484$ կՋ.
- 1) 0,58 2) 1,12 3) 5,6 4) 22,4
4. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի 5 գ մեթանը լրիվ այրելիս, եթե 2 լ (ն. պ.) մեթանի լրիվ այրումից անջատվում է 80 կՋ ջերմություն.
- 1) 28 2) 56 3) 280 4) 640
5. Որքան է ջրի առաջացման ջերմությունը (կՋ/մոլ), եթե ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է $2H_{2(գ)} + O_{2(գ)} = 2H_2O_{(գ)} + 565$ կՋ.
- 1) 565 2) 282,5 3) 141,25 4) 300
6. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի 10 գ $CaCO_3$ առաջանալիս, եթե ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է $CaO_{(այ)} + CO_{2(գ)} = CaCO_{3(այ)} + 160$ կՋ.
- 1) 320 2) 16 3) 160 4) 32
7. Որքան ջերմություն (կՋ) կծախսվի 25 գ $CaCO_3$ -ը քայքայելիս, եթե ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է $CaCO_{3(այ)} = CaO_{(այ)} + CO_{2(գ)} - 160$ կՋ.
- 1) 160 2) 40 3) 100 4) 25
8. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ամոնիակի կատալիտիկ օքսիդացումից կստացվի 233,2 կՋ ջերմություն, եթե ամոնիակի օքսիդացման ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է $4NH_{3(գ)} + 5O_{2(գ)} = 4NO_{(գ)} + 6H_2O_{(գ)} + 1166$ կՋ.
- 1) 8,96 2) 17,92 3) 22,4 4) 35,84
9. Ինչ նյութաքանակով (մոլ) ածխի այրումից կանջատվի 1005 կՋ ջերմություն, եթե ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է $C_{(այ)} + O_{2(գ)} = CO_{2(գ)} + 402$ կՋ.
- 1) 1,5 2) 2,5 3) 3,5 4) 4,5

10. Ո՞ր պնդումն է ճիշտ քիմիական ռեակցիային ուղեկցող ջերմային էներգիայի վերաբերյալ.

- 1) միայն անջատվում է
 2) միայն կլանվում է
 3) հաստատուն մեծություն է
 4) ն անջատվում է, ն կլանվում

11. Որո՞նք են այրման ռեակցիաների հավասարումներ.

- ա) $2\text{NO} + \text{O}_2 = 2\text{NO}_2$
 բ) $\text{HCl} + \text{NaOH} = \text{NaCl} + \text{H}_2\text{O}$
 գ) $2\text{CO} + \text{O}_2 = 2\text{CO}_2$
 դ) $2\text{Mg} + \text{O}_2 = 2\text{MgO}$
 ե) $2\text{Fe}(\text{OH})_3 = \text{Fe}_2\text{O}_3 + 3\text{H}_2\text{O}$
- 1) ա, բ, գ
 2) գ, դ, ե
 3) գ, դ
 4) ա, բ

12. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(II) օքսիդ պետք է այրել 141 կՋ ջերմություն ստանալու համար, եթե ջերմաքիմիական հավասարումն է $2\text{CO}_{(գ)} + \text{O}_{2(գ)} = 2\text{CO}_{2(գ)} - 564 \text{ կՋ}$.

- 1) 22,4
 2) 16,8
 3) 11,2
 4) 5,6

13. Ո՞րն է քայքայման ջերմակլանիչ ռեակցիայի հավասարում.

- 1) $(\text{CuOH})_2\text{CO}_3 = 2\text{CuO} + \text{CO}_2 + 2\text{H}_2\text{O} - \text{Q}$
 2) $2\text{C}_2\text{H}_2 + 5\text{O}_2 = 4\text{CO}_2 + 2\text{H}_2\text{O} + \text{Q}$
 3) $\text{N}_2 + \text{O}_2 = 2\text{NO} - \text{Q}$
 4) $2\text{HNO}_3 + \text{Ba}(\text{OH})_2 = \text{Ba}(\text{NO}_3)_2 + 2\text{H}_2\text{O} + \text{Q}$

14. Ո՞րն է միացման ջերմակլանիչ ռեակցիայի հավասարում.

- 1) $\text{Mg} + \text{H}_2\text{SO}_4 = \text{MgSO}_4 + \text{H}_2 + \text{Q}$
 2) $2\text{Cu} + \text{O}_2 = 2\text{CuO} - \text{Q}$
 3) $2\text{Ba} + \text{O}_2 = 2\text{BaO} + \text{Q}$
 4) $\text{CaCO}_3 = \text{CaO} + \text{CO}_2 - \text{Q}$

15. Ածխի այրման ջերմաքիմիական հավասարումն է $\text{C}_{(պ)} + \text{O}_{2(գ)} = \text{CO}_{2(գ)} + 402 \text{ կՋ}$: Ի՞նչ նյութաքանակով (մոլ) ածխի այրումից կանջատվի 2412 կՋ ջերմություն.

- 1) 4
 2) 6
 3) 8
 4) 10

16. Որքա՞ն է ացետիլենի այրման ջերմությունը (կՋ/մոլ), եթե 10,4 գ ացետիլեն այրելիս անջատվել է 341,4 կՋ ջերմություն.

- 1) 853,5
 2) 1572
 3) 426,7
 4) 3144

17. Ո՞րն է էթիլենի հիդրատացման ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումը, եթե 0,25 մոլ էթիլենը հիդրատացնելիս անջատվել է 11 կՋ ջերմություն.

- 1) $\text{CH}_2 = \text{CH}_{2(գ)} + \text{H}_2\text{O}_{(հ)} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{OH}_{(հ)} + 11 \text{ կՋ}$
 2) $\text{CH}_2 = \text{CH}_{2(գ)} + \text{H}_2\text{O}_{(հ)} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{OH}_{(հ)} - 44 \text{ կՋ}$
 3) $\text{CH}_2 = \text{CH}_{2(գ)} + \text{H}_2\text{O}_{(հ)} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{OH}_{(հ)} + 44 \text{ կՋ}$
 4) $\text{CH}_2 = \text{CH}_{2(գ)} + \text{H}_2\text{O}_{(հ)} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{OH}_{(հ)} + 2,75 \text{ կՋ}$

18. Ացետիլենի այրման ջերմությունը 1200 կՋ/մոլ է: Համապատասխանեցրե՞ք ացետիլենի այրման ընթացքում անջատված ջերմության քանակը (կՋ) ածխաջրածնի քանակության հետ.

Ջերմության քանակ (կՋ)	Ացետիլենի քանակություն
ա) 660	1) 0,55 մոլ
բ) 1320	2) 28,6 գ
գ) 3000	3) 56 լ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ2, գ3
 2) ա2, բ1, գ1
 3) ա2, բ1, գ3
 4) ա1, բ2, գ2

19. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի գլյուկոզի այրումից 12 մոլ CO_2 գոյանալիս, եթե այդ ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է $\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6 + 6\text{O}_2 = 6\text{CO}_2 + 6\text{H}_2\text{O} + 2800$ կՋ.

- 1) 2800 2) 5600 3) 1400 4) 700

20. Ինչ քանակով (մոլ) երկաթ է փոխազդել ըստ $\text{Fe} + \text{S} = \text{FeS} + 97$ կՋ ջերմաքիմիական հավասարման, եթե անջատվել է 12,125 կՋ ջերմություն.

- 1) 0,125 2) 0,25 3) 0,5 4) 0,75

21. Որո՞նք են բաց թողած բառերը.

Քիմիական ռեակցիայի ջերմությունը հավասար է _____ այրման ջերմությունների գումարի և _____ այրման ջերմությունների գումարի տարբերությանը՝ քանակաչափական գործակիցները հաշվի առնելով:

- 1) օքսիդիչների, վերականգնիչների 3) վերջանյութերի, ելանյութերի
 2) վերականգնիչների, օքսիդիչների 4) ելանյութերի, վերջանյութերի

22. Որքան է քլորաջրածնի գոյացման ջերմությունը (կՋ), եթե 2 դմ³ (ն. պ.) քլորը ավելցուկով ջրածնի հետ փոխազդելիս անջատվել է 16,4 կՋ ջերմություն.

- 1) 89,28 2) 90,24 3) 91,84 4) 92,58

23. Որո՞նք են բաց թողած բառերը.

Քիմիական ռեակցիայի ջերմությունը հավասար է _____ գոյացման ջերմությունների գումարի և _____ գոյացման ջերմությունների գումարի տարբերությանը՝ քանակաչափական գործակիցները հաշվի առնելով:

- 1) գազերի, հեղուկների 3) վերջանյութերի, ելանյութերի
 2) հեղուկների, գազերի 4) ելանյութերի, վերջանյութերի

24. Ո՞ր պնդումն է ճիշտ $2\text{Na} + 2\text{H}_2\text{O} = 2\text{NaOH} + \text{H}_2 + \text{Q}$ հավասարումով ընթացող ռեակցիայի վերաբերյալ.

- 1) միացման է և ջերմանջատիչ
- 2) քայքայման է և ջերմանջատիչ

- 3) տեղակալման է և ջերմանջատիչ
- 4) փոխանակման է և ջերմանջատիչ

1.2.4. Քիմիական ռեակցիայի ջերմաֆեկտ: Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ: Ջերմաքիմիական հավասարումներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	9	2	17	3
2	2	10	4	18	1
3	2	11	3	19	2
4	3	12	3	20	1
5	2	13	1	21	4
6	2	14	2	22	3
7	2	15	2	23	3
8	2	16	1	24	3

1.2.5. Էլեկտրոլիտային դիսոցման տեսություն

1. Հետևյալ նյութերից ո՞րն էլեկտրոլիտ չէ.

- 1) NaCl 2) CaCl₂ 3) AlCl₃ 4) CCl₄

2. Ո՞ր բանաձևով է որոշվում էլեկտրոլիտի դիսոցման աստիճանը.

- 1) $\alpha = n/N$ 3) $\alpha = m/M$
2) $\alpha = N/n$ 4) $\alpha = m/N_A$

3. Ջրային լուծույթներում հետևյալ թթուներից ո՞րն է ուժեղ.

- 1) CH₃COOH 2) HCN 3) H₂S 4) HBr

4. Որքան է քաղցախաթթվի դիսոցման աստիճանը, եթե դրա 4 մոլ/լ կոնցենտրացիայով մեկ լիտր լուծույթը պարունակում է 0,04 գ ջրածնի իոններ.

- 1) 0,005 2) 0,05 3) 0,002 4) 0,01

5. Ամոնիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով 1 լ լուծույթում հայտնաբերվել են 0,34 գ OH⁻ իոններ: Որքան է այդ լուծույթում ամոնիումի հիդրօքսիդի դիսոցման աստիճանը.

- 1) 0,1 2) 0,05 3) 0,01 4) 0,02

6. Ջրային լուծույթում հետևյալ թթուներից ո՞րն է թույլ.

- 1) HNO₃ 2) HNO₂ 3) HI 4) HClO₄

7. Ո՞ր իոնները միաժամանակ չեն կարող գտնվել լուծույթում մեծ քանակությամբ.

- 1) Na⁺ և SiO₃²⁻ 2) H⁺ և Cl⁻ 3) Cu²⁺ և S²⁻ 4) Cu²⁺ և SO₄²⁻

8. Ո՞ր միացության դիսոցումն է ընթանում դիպոլ-դիպոլային փոխազդեցության հետևանքով.

- 1) NaCl 2) C₂H₅OH 3) NaNO₃ 4) HF

9. Ո՞րն է բաց թողած արտահայտությունը.

Էլեկտրոլիտային դիսոցումը _____ ջրում լուծվելիս կամ հալվելիս.

- 1) էլեկտրոլիտի տրոհումն է առանձին ատոմների
2) էլեկտրոլիտի քայքայումն է առանձին մոլեկուլների
3) իոնների առաջացումն է ցանկացած միջավայրում
4) էլեկտրոլիտի տրոհումն է իոնների

10. Նյութը ջրում լուծելիս լուծույթը գունավորվել է երկնագույն: Ո՞ր նյութն են լուծել, և ո՞ր իոնով է պայմանավորված լուծույթի գունավորումը.
- 1) CuCO_3 , CO_3^{2-} 2) CuSO_4 , Cu^{2+} 3) CuS , S^{2-} 4) Cu(OH)_2 , Cu^{2+}
11. Ո՞րն է քացախաթթվի էլեկտրոլիտային դիսոցման հավասարումը.
- 1) $\text{CH}_3\text{COOH} \rightleftharpoons \text{CH}_3^+ + \text{COOH}^-$ 3) $\text{CH}_3\text{COOH} \rightleftharpoons \text{CH}_3\text{COO}^+ + \text{H}^-$
 2) $\text{CH}_3\text{COOH} \rightleftharpoons \text{CH}_3\text{COO}^- + \text{H}^+$ 4) $\text{CH}_3\text{COOH} \rightleftharpoons \text{COOH}^+ + \text{CH}_3^-$
12. Ո՞ր շարքի բոլոր նյութերի ջրային լուծույթներն էլեկտրական հոսանք չեն հաղորդում.
- 1) $\text{C}_2\text{H}_5\text{OH}$, HCHO , $\text{C}_{12}\text{H}_{22}\text{O}_{11}$ 3) NaCl , HNO_3 , H_2CO_3
 2) H_2SO_4 , KNO_3 , H_2S 4) CH_3COOH , KOH , HCl
13. Լուծույթով հաստատուն էլեկտրական հոսանք անցկացնելիս ո՞ր շարքի բոլոր իոնները կտեղաշարժվեն դեպի կաթոդ.
- 1) K^+ , Ca^{2+} , Br^- , SO_3^{2-} 3) OH^- , SiO_3^{2-} , NO_3^- , ClO_4^-
 2) H^+ , Ba^{2+} , Sn^{2+} , Fe^{3+} 4) Mg^{2+} , Ca^{2+} , OH^- , SO_4^{2-}
14. Հետևյալ նյութերի հավասարամոլային լուծույթներից ո՞րն օժտված կլինի առավել բարձր էլեկտրահաղորդականությամբ.
- 1) նատրիումի ֆոսֆատ 3) քացախաթթու
 2) նատրիումի քլորիդ 4) ծծմբային թթու
15. 7,4 գ կալցիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի մեջ դանդաղ անցկացրել են 4,48 Լ (ն. ս.) ածխաթթու գազ: Ինչպե՞ս կփոխվի լուծույթի էլեկտրահաղորդականությունը.
- 1) աստիճանաբար կմեծանա 3) սկզբում կմեծանա, հետո կփոքրանա
 2) աստիճանաբար կփոքրանա 4) սկզբում կփոքրանա, հետո կմեծանա
16. Ո՞ր նյութերի դիսոցումից են որպես անիոն առաջանում միայն OH^- իոններ.
- 1) թթուների 3) թթու աղերի
 2) ալկալիների 4) միջին աղերի
17. Ո՞ր զույգի նյութերն են դիսոցվում՝ առաջացնելով H^+ իոններ.
- 1) H_2SO_3 , NH_3 3) $\text{C}_2\text{H}_5\text{OH}$, $\text{Ca(HCO}_3)_2$
 2) $\text{C}_3\text{H}_7\text{OH}$, Na_2HPO_3 4) KHSO_4 , HCOOH
18. Ո՞ր շարքի բոլոր նյութերի դիսոցումից են առաջանում H^+ իոններ.
- 1) $\text{C}_2\text{H}_5\text{OH}$, HClO_3 , KOH 3) HNO_3 , NaHSO_4 , CH_3COOH
 2) CH_3OH , $\text{Ca(HCO}_3)_2$, HCl 4) $\text{C}_6\text{H}_5\text{OH}$, CH_3CHO , HBr

19. KHCO_3 -ի նոսր լուծույթում առավել մեծ քանակությամբ զրո իոններն են պարունակվում.
- 1) H^+ 2) HCO_3^- 3) K^+ 4) CO_3^{2-}
20. 1 մոլ քանակությամբ զրո նյութի դիսոցումից են առաջանում առավել քիչ քանակությամբ H^+ իոններ.
- 1) NaH_2PO_4 2) Na_2HPO_4 3) $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$ 4) H_3PO_4
21. Կալիումի քլորիդի լուծույթն անգույն է, իսկ կալիումի պերմանգանատինը՝ մանուշակագույն: Ո՞ր մասնիկներով է պայմանավորված կալիումի պերմանգանատի լուծույթի գույնը.
- 1) Mn^{2+} 2) H_3O^+ 3) K^+ 4) MnO_4^-
22. Լուծույթում առկա զրո իոններով է պայմանավորված նատրիումի որոշ աղերի լուծույթների գույնը.
- 1) H^+ 2) Na^+ 3) H_3O^+ 4) անիոնով
23. Նյութերից որոնք են ջրային լուծույթում դիսոցվում՝ առաջացնելով Mn^{2+} իոններ.
- ա) MnCl_2 գ) MnSO_4 ե) MnO
 բ) KMnO_4 դ) MnO_2 զ) $(\text{CH}_3\text{COO})_2\text{Mn}$
- 1) ա, գ, զ 2) բ, գ, դ 3) բ, դ, ե 4) ա, ե, զ
24. Ո՞ր նյութի ջրային լուծույթում կատիոնների թիվը եռակի մեծ կլինի անիոնների թվից (հիդրոլիզն անտեսել).
- 1) մագնեզիումի քլորիդ 3) ալյումինի սուլֆատ
 2) կալիումի ֆոսֆատ 4) երկաթի(III) քլորիդ
25. Ո՞ր զույգ նյութերի ջրային լուծույթները կարելի է տարբերել լակմուսով.
- 1) $\text{Ba}(\text{OH})_2$ և HCl 3) $\text{Ca}(\text{OH})_2$ և NaOH
 2) ZnCl_2 և H_2SO_3 4) $\text{Ba}(\text{NO}_3)_2$ և NaCl
26. Ո՞ր նյութերի ջրային լուծույթում մեթիլնարնջագույնը կդառնա վարդագույն.
- ա) NaNO_3 գ) $\text{Ba}(\text{OH})_2$ ե) HCOOH է) $\text{C}_2\text{H}_5\text{OH}$
 բ) NaHSO_4 դ) HCl զ) HClO
- 1) բ, գ, դ, է 3) ա, գ, դ, ե
 2) բ, դ, ե, զ 4) բ, գ, զ, է
27. Ո՞ր շարքի նյութերն են ուժեղ էլեկտրոլիտներ.
- 1) NaOH , H_2SiO_3 3) HCl , $\text{Ba}(\text{OH})_2$
 2) H_2SiO_3 , KNO_3 4) H_2S , K_2SO_4

28. Ո՞ր շարքի նյութերն են թույլ էլեկտրոլիտներ.

- 1) Na_2SiO_3 , MgCl_2 3) BaCl_2 , H_2SO_4
 2) H_2SiO_3 , NH_4OH 4) HBr , NaNO_3

29. Ո՞ր շարքում են նյութերը դասավորված ըստ թթվային հատկությունների ուժեղացման.

- 1) HClO_3 , HIO_3 , HBrO_3 3) HBr , HNO_3 , H_2CO_3
 2) H_2CO_3 , CH_3COOH , HClO_4 4) HNO_3 , HNO_2 , HPO_2

30. Ո՞ր շարքի բոլոր իոնները միաժամանակ կարող են գոյություն ունենալ ջրային լուծույթում.

- 1) Na^+ , Ba^{2+} , CO_3^{2-} 3) Mg^{2+} , OH^- , PO_4^{3-}
 2) Ca^{2+} , NO_3^- , CO_3^{2-} 4) K^+ , Al^{3+} , NO_3^-

31. Ո՞ր բանաձևով է որոշվում էլեկտրոլիտի դիսոցման աստիճանը (%).

- 1) $\alpha = nN$ 3) $\alpha = \frac{n}{100} \cdot N$
 2) $\alpha = \frac{n}{N} \cdot 100$ 4) $\alpha = \frac{N}{100} \cdot n$

32. Ինչ զանգվածով (գ) սուլֆատ իոններ են պարունակվում կալիումի սուլֆատի 0,6 մոլ/լ կոնցենտրացիայով 0,5 լ ջրային լուծույթում.

- 1) 34,8 2) 28,8 3) 52,2 4) 87

33. Ինչ զանգվածով (գ) սուլֆատ իոններ են պարունակվում պղնձի(II) սուլֆատի 1 մոլ/լ կոնցենտրացիայով 0,5 լ լուծույթում.

- 1) 12 2) 36 3) 48 4) 72

34. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների մոլեկուլային և կրճատ իոնային հավասարումները.

<i>Մոլեկուլային հավասարումներ</i>	<i>Կրճատ իոնային հավասարումներ</i>
ա) $\text{Cu}(\text{OH})_2 + \text{H}_2\text{SO}_4 = \text{CuSO}_4 + 2\text{H}_2\text{O}$	1) $\text{Zn}^{2+} + 2\text{H}^+ = \text{Zn}^0 + \text{H}_2$
բ) $\text{FeSO}_4 + 2\text{KOH} = \text{Fe}(\text{OH})_2 + \text{K}_2\text{SO}_4$	2) $\text{Fe}^{2+} + 2\text{OH}^- = \text{Fe}(\text{OH})_2$
գ) $\text{KCl} + \text{AgNO}_3 = \text{AgCl} + \text{KNO}_3$	3) $\text{Cu}(\text{OH})_2 + 2\text{H}^+ = \text{Cu}^{2+} + 2\text{H}_2\text{O}$
դ) $\text{Zn} + 2\text{HCl} = \text{ZnCl}_2 + \text{H}_2$	4) $\text{Zn}^0 + 2\text{H}^+ = \text{Zn}^{2+} + \text{H}_2$
	5) $\text{Ag}^+ + \text{Cl}^- = \text{AgCl}$
	6) $\text{Fe}^{3+} + 3\text{OH}^- = \text{Fe}(\text{OH})_3$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- 1) ա5, բ2, գ3, դ4 3) ա5, բ6, գ3, դ1
 2) ա3, բ2, գ5, դ4 4) ա3, բ2, գ5, դ1

39. Համապատասխանեցրե՛ք ջրային լուծույթի միջավայրը աղերի բանաձևի հետ.

<i>Միջավայր</i>	<i>Բանաձև</i>
ա) թթվային	1) $\text{CH}_3\text{COONH}_4$
բ) չեզոքին մոտ	2) NaHSO_4
գ) հիմնային	3) BaCl_2
դ) չեզոք	4) K_2CO_3

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա1, բ3, գ4, դ2 | 3) ա2, բ1, գ4, դ3 |
| 2) ա2, բ4, գ1, դ3 | 4) ա1, բ3, գ2, դ4 |

40. Համապատասխանեցրե՛ք մետաղների իոնները բոցի գույնին.

<i>Մետաղի իոն</i>	<i>Բոցի գույն</i>
ա) Na^+	1) մանուշակագույն
բ) Ca^{2+}	2) դեղին
գ) Ba^{2+}	3) աղյուսակարմիր
դ) K^+	4) երկնագույն
	5) դեղնականաչավուն
	6) կապույտ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա2, բ3, գ4, դ6 | 3) ա1, բ2, գ4, դ6 |
| 2) ա1, բ5, գ4, դ1 | 4) ա2, բ3, գ5, դ1 |

41. Ո՞ր աղի ջրային լուծույթում լակմուսը կկարմրի.

- | | | | |
|-----------------------------|---------------------|------------------------------|---------------------------|
| 1) Na_2SO_4 | 2) NaAlO_2 | 3) CH_3COONa | 4) NH_4Cl |
|-----------------------------|---------------------|------------------------------|---------------------------|

42. Ի՞նչ նյութեր են առաջանում Na_2SO_3 -ի լուծույթում այդ աղի առաջին աստիճանի հիդրոլիզից.

- | | |
|--|--|
| 1) NaOH և H_2SO_4 | 3) NaHSO_3 և H_2O |
| 2) NaOH և NaHSO_3 | 4) NaOH և NaHSO_4 |

43. Ո՞ր զույգ աղերի լուծույթներում լակմուսի գույնը չի փոխվի.

- | | |
|---|---|
| 1) K_2SO_4 , NaNO_3 | 3) NH_4NO_3 , CH_3COONa |
| 2) Na_2CO_3 , CuSO_4 | 4) Na_2S , AgNO_3 |

44. Ո՞ր աղի ջրային լուծույթում է լակմուսը կարմրում.

- | | |
|--------------------------|-------------------------------|
| 1) Na_2S | 3) $\text{Ba}(\text{NO}_2)_2$ |
| 2) CuCl_2 | 4) K_2CO_3 |

45. Ո՞ր զույգ նյութերի լուծույթները կարելի է տարբերել ֆենոլֆտալեինով.

- | | |
|---------------------------------|--|
| 1) KOH և NH_4Cl | 3) $\text{Ca}(\text{OH})_2$ և NaOH |
| 2) NaHSO_4 և HCl | 4) NH_4Cl և HNO_3 |

46. Ո՞ր շարքի իոնների իսկությունն է հաստատվում զազի անջատմամբ այդ իոնները պարունակող լուծույթին համապատասխան ազդանյութ ավելացնելիս.

- | | |
|--|---|
| 1) SO_3^{2-} , CO_3^{2-} , NH_4^+ | 3) Na^+ , Cl^- , H^+ |
| 2) SO_4^{2-} , Al^{3+} , NO_2^- | 4) NO_3^- , Br^- , Fe^{3+} |

47. Որո՞նք են ճարպերի հիմնային հիդրոլիզի արգասիքները.

- 1) գլիցերին և ճարպաթթուներ
- 2) գլիցերին և ճարպաթթուների աղեր
- 3) ալկալիական մետաղների գլիցերատներ և ճարպաթթուներ
- 4) գլիցերին և բազմատոմ սպիրտներ

48. Ո՞ր դեպքում FeCl_3 -ի հիդրոլիզը կխորանա.

- | | |
|-------------------------|--------------------|
| 1) լուծույթը սառեցնելիս | 3) HCl ավելացնելիս |
| 2) NaOH ավելացնելիս | 4) KCl ավելացնելիս |

49. Ի՞նչ գույն է ստանում լակմուսը ZnCl_2 -ի լուծույթում.

- | | |
|------------|-------------------|
| 1) կարմիր | 3) երկնագույն |
| 2) կապույտ | 4) մանուշակագույն |

50. Ո՞ր նյութերի փոխազդեցությանն է համապատասխանում $\text{Ca}^{2+} + \text{CO}_3^{2-} = \text{CaCO}_3$ կրճատ իոնային հավասարումը.

- | | |
|---|----------------------------------|
| 1) CaCl_2 և K_2CO_3 | 3) CaO և H_2CO_3 |
| 2) CaCO_3 և Na_2CO_3 | 4) Ca և H_2CO_3 |

51. Ո՞ր շարքում են բերված համապատասխանաբար CuSO_4 -ի և NaOH-ի փոխազդեցության ռեակցիայի լրիվ և կրճատ իոնային հավասարումների բոլոր գործակիցների գումարային թվերը.

- | | | | |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 12 և 4 | 2) 10 և 4 | 3) 12 և 3 | 4) 10 և 2 |
|-----------|-----------|-----------|-----------|

52. Ի՞նչ զանգվածով (գ) 5 % զանգվածային բաժնով յոդի թուրմ կարելի է պատրաստել 20 գրամ յոդից.

- | | | | |
|--------|--------|--------|--------|
| 1) 100 | 2) 160 | 3) 400 | 4) 200 |
|--------|--------|--------|--------|

53. Ո՞ր ֆերմենտի ազդեցությամբ է արագանում ջրածնի պերօքսիդի քայքայման գործընթացը կենդանի բջիջներում.

- | | |
|------------|-----------|
| 1) կատալազ | 3) ուրեազ |
| 2) ամիլազ | 4) պեպսին |

54. Որքան է X նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածն ըստ հետևյալ կրճատ իոնային հավասարման. $X + 2H^+ = Mg^{2+} + CO_2 + H_2O$.

- 1) 24 2) 84 3) 85 4) 146

55. Համապատասխանեցրե՛ք իոնային հավասարումների ձախ և աջ մասերը.

Ձախ մաս	Աջ մաս
ա) $H^+ + HCO_3^- =$	1) $= CO_3^{2-} + H_2O$
բ) $2H^+ + CO_3^{2-} =$	2) $= CO_2 + H_2O$
գ) $OH^- + HCO_3^- =$	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ2, գ1 2) ա2, բ1, գ1 3) ա1, բ1, գ2 4) ա1, բ2, գ2

56. Ո՞րն է նստվածքի առաջացմամբ ընթացող իոնափոխանակային ռեակցիայի ձախ մասի ուրվագիրը.

- 1) $KOH + HCl \rightarrow$ 3) $Cu(OH)_2 + HCl \rightarrow$
 2) $NaOH + CuCl_2 \rightarrow$ 4) $NaOH + NH_4NO_3 \rightarrow$

57. Ո՞րն է գազի անջատմամբ ընթացող իոնափոխանակային ռեակցիայի ձախ մասի ուրվագիրը.

- 1) $Na_2CO_3 + NaHSO_4 \rightarrow$ 3) $Na_2CO_3 + (CH_3COO)_2Ca \rightarrow$
 2) $Na_2CO_3 + BaCl_2 \rightarrow$ 4) $Na_2CO_3 + MgCl_2 \rightarrow$

58. Որքան է հիդրօքսիդ իոնի մոլային կոնցենտրացիան (մոլ/լ), եթե 800 մլ լուծույթը պարունակում է 0,2-ական մոլ $NaOH$, $LiOH$, $Ba(OH)_2$ (ալկալիները լրիվ են դիսոցիլված).

- 1) 1,0 2) 0,8 3) 0,6 4) 0,4

59. Որքան է $KAl(SO_4)_2$ աղի դիսոցումից ստացվող իոնների գումարային թիվը.

- 1) 6 2) 4 3) 3 4) 2

60. Ո՞ր նյութերն են ջրային լուծույթում դիսոցվելիս առաջացնում H^+ իոններ (աղերի հիդրոլիզն անտեսել).

- ա) HCN գ) $HClO_3$ ե) $Mg(HSO_4)_2$
 բ) NH_4Cl դ) C_2H_5OH զ) $HOCl$
 1) ա, գ, ե, դ 2) ա, գ, ե, զ 3) բ, գ, դ, զ 4) բ, դ, ե, զ

61. Ի՞նչ վերջանյութեր են գոյանում ալկալու և թթվի փոխազդեցությունից.

- 1) աղ և ջուր 3) երկու աղ
 2) նոր հիմք և նոր թթու 4) աղ և ջրածին

69. Հետևյալ մասնիկներից որն ամենամեծ կոնցենտրացիան ունի նուր սելենական թթվի (H_2SeO_4) լուծույթում.

- 1) SeO_4^{2-} 2) $HSeO_4^-$ 3) H^+ 4) H_2SeO_4

70. Հետևյալ նյութերից որը ջրային լուծույթում կօքսիդանա երկաթի(III) քլորիդով, իսկ արծաթի նիտրատի հետ կմտնի փոխանակման ռեակցիայի մեջ.

- 1) H_2SO_4 2) $NaNO_3$ 3) KI 4) K_2SO_4

1.2.5. Էլեկտրոլիտային դիսոցման տեսություն

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	25	1	49	1
2	1	26	2	50	1
3	4	27	3	51	2
4	4	28	2	52	3
5	3	29	2	53	1
6	2	30	4	54	2
7	3	31	2	55	1
8	4	32	2	56	2
9	4	33	3	57	1
10	2	34	2	58	1
11	2	35	3	59	2
12	1	36	3	60	2
13	2	37	4	61	1
14	1	38	2	62	4
15	4	39	3	63	1
16	2	40	4	64	2
17	4	41	4	65	2
18	3	42	2	66	4
19	3	43	1	67	4
20	2	44	2	68	4
21	4	45	1	69	3
22	4	46	1	70	3
23	1	47	2		
24	2	48	2		

1.2.6. Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ

1. Ո՞րն է $\text{H}_2\text{S} + \text{SO}_2 \rightarrow \text{S} + \text{H}_2\text{O}$ վերօքս ռեակցիայում օքսիդացումից և վերականգնումից ստացված ծծմբի չեզոք ատոմների մոլային հարաբերությունը համապատասխանաբար.

- 1) 1 : 1 2) 2 : 1 3) 1 : 3 4) 1 : 2

2. Ո՞րն է 0,75 մոլ KMnO_4 -ի քայքայումից ստացված օքսիդացման արգասիքում ատոմների ընդհանուր թիվը.

- 1) 0,375 2) 0,75 3) $2,2575 \cdot 10^{24}$ 4) $4,515 \cdot 10^{23}$

3. $\text{Al}(\text{NO}_3)_3$ -ի ջերմային քայքայումից ստացված վերականգնման արգասիքի ծավալը (ն. պ.) օքսիդացման արգասիքի ծավալից քանի՞ անգամ է մեծ.

- 1) 2 2) 12 3) 4 4) 3

4. Ո՞րն է օքսիդիչ նյութը $\text{Zn} + 2\text{HCl} \rightarrow \text{ZnCl}_2 + \text{H}_2$ օքսիդացման-վերականգնման ռեակցիայում.

- 1) HCl 2) Zn 3) ZnCl_2 4) H_2

5. Ծախսված HCl -ի դր մասն է (%) որպես վերականգնիչ հանդես գալիս հետևյալ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայում. $\text{HCl} + \text{MnO}_2 \rightarrow \text{Cl}_2 + \text{MnCl}_2 + \text{H}_2\text{O}$.

- 1) 22,4 2) 36,5 3) 50 4) 100

6. Ծախսված Cl_2 -ի դր մասն է որպես օքսիդիչ հանդես գալիս հետևյալ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայում. $\text{Cl}_2 + \text{KOH} \rightarrow \text{KCl} + \text{KClO}_3 + \text{H}_2\text{O}$.

- 1) 1/6 2) 5/6 3) 1/5 4) 1/2

7. Ո՞ր պնդումներն են ճիշտ անօրգանական նյութերի մասնակցությամբ ընթացող ռեակցիաների վերաբերյալ.

- ա) տեղակալման ռեակցիաները միայն օքսիդացման-վերականգնման են
բ) բոլոր փոխանակման ռեակցիաները օքսիդացման-վերականգնման չեն
գ) միացման ռեակցիաները միայն օքսիդացման-վերականգնման են
դ) քայքայման ռեակցիաները միայն օքսիդացման-վերականգնման են
ե) այրման ռեակցիաները օքսիդացման-վերականգնման են

- 1) գ, դ, ե 2) ա, բ, գ 3) ա, դ, ե 4) ա, բ, ե

8. Որքան է X վերականգնիչից 1 մոլ օքսիդիչին անցած էլեկտրոնների նյութաքանակն (մոլ) ըստ հետևյալ օքսիդացման-վերականգնման ռեակցիայի ուրվագրի. $\text{Fe}_3\text{O}_4 + \text{X} \rightarrow \text{Fe} + \text{Al}_2\text{O}_3$.

- 1) 6 2) 8 3) 16 4) 24

9. Հետևյալ իոններից որը կարող է լինել ն' օքսիդիչ, ն' վերականգնիչ.

- 1) Fe^{2+} 2) K^+ 3) S^{2-} 4) Cl^-

10. Քանի մոլ էլեկտրոն է մասնակցում մեկ մոլ ամոնիակի օքսիդացմանը՝ ըստ հետևյալ վերօքս ռեակցիայի ուրվագրի. $NH_3 + O_2 \rightarrow NO + H_2O$.

- 1) 3 2) 4 3) 5 4) 6

11. Քանի մոլ էլեկտրոն է մասնակցում մեկ մոլ բրոմի օքսիդացմանը՝ ըստ հետևյալ վերօքս ռեակցիայի ուրվագրի. $Br_2 + Cl_2 + H_2O \rightarrow HBrO_3 + HCl$.

- 1) 3 2) 4 3) 5 4) 10

12. Որքան է հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը հետևյալ ուրվագրով վերօքս ռեակցիայում. $KIO_3 + KI + H_2SO_4 \rightarrow I_2 + K_2SO_4 + H_2O$.

- 1) 13 2) 16 3) 18 4) 20

13. Ո՞ր շարքի բոլոր նյութերում է ծծմբի օքսիդացման աստիճանը նույնը.

- 1) H_2SO_3 , $Na_2S_2O_7$, K_2SO_4 3) SO_2 , $SOCl_2$, Li_2SO_3
2) SO_2Cl_2 , Na_2SO_3 , SO_3 4) FeS_2 , H_2S , SCl_2

14. Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ ծծմբի օքսիդացման աստիճանի նվազման.

- 1) H_2S , K_2SO_4 , SO_2 3) SO_2 , S_8 , K_2S
2) H_2S , H_2SO_3 , H_2SO_4 4) SCl_2 , Na_2SO_3 , SF_6

15. Ո՞րն է օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարում.

- 1) $Ca(OH)_2 + 2HNO_3 = Ca(NO_3)_2 + 2H_2O$
2) $CaCO_3 = CaO + CO_2$
3) $Ca(NO_3)_2 + Na_2CO_3 = CaCO_3 + 2NaNO_3$
4) $2Ca(OH)_2 + 2Cl_2 = CaCl_2 + Ca(ClO)_2 + 2H_2O$

16. Որքան է $Hg + HNO_3 \rightarrow Hg(NO_3)_2 + NO_2 + H_2O$ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

- 1) 8 2) 10 3) 16 4) 20

17. Ո՞րն է վերականգնիչ նյութի գործակիցը $C + HNO_3(սին) \rightarrow CO_2 + NO + H_2O$ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման մեջ.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

18. Ո՞րն է $\text{BaO}_2 + \text{H}_2\text{SO}_4 = \text{BaSO}_4 + \text{O}_2 + \text{H}_2\text{O}$ օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.
- 1) 6 2) 9 3) 10 4) 13
19. Որքան է ամոնիակով 0,5 մոլ պղնձի(II) օքսիդի վերականգնման պինդ արգասիքի զանգվածը (գ).
- 1) 16 2) 32 3) 24 4) 40
20. Ինչ զանգվածով (գ) օքսիդացման արգասիք կստացվի ծծմբի(IV) օքսիդը ջրային լուծույթում քլորով օքսիդացնելիս, եթե գործընթացին մասնակցել է 0,2 մոլ էլեկտրոն.
- 1) 3,2 2) 4,0 3) 4,9 4) 9,8
21. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(II) օքսիդի և ջրածնի խառնուրդ կծախսվի պղնձի(II) օքսիդից 25,6 գ պղինձ ստանալու համար.
- 1) 1,12 2) 2,24 3) 4,48 4) 8,96
22. Մեկ մոլ վերականգնիչին օքսիդիչի քանի մոլեկուլ է համապատասխանում ներկայացված ուրվագրով ռեակցիայում. $\text{FeS}_2 + \text{O}_2 \rightarrow \text{Fe}_2\text{O}_3 + \text{SO}_2$.
- 1) 4 2) 11 3) $1,6555 \cdot 10^{23}$ 4) $1,6555 \cdot 10^{24}$
23. Մեկ մոլ վերականգնիչին օքսիդիչի քանի մոլ է համապատասխանում ներկայացված ուրվագրով ռեակցիայում. $\text{KClO}_3 + \text{HCl} \rightarrow \text{KCl} + \text{Cl}_2 + \text{H}_2\text{O}$.
- 1) 0,17 2) 0,20 3) 1 4) 6
24. Որքան է օքսիդիչի քանակն ըստ $6\text{KOH} + 3\text{Cl}_2 \rightarrow 5\text{KCl} + \text{KClO}_3 + 3\text{H}_2\text{O}$ օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման.
- 1) 0,5 2) 2,5 3) 3 4) 6
25. Ինչ քանակով (մոլ) վերականգնիչ է մասնակցում 1 մոլ օքսիդիչի վերականգնման գործընթացին՝ ըստ հետևյալ ուրվագրով ռեակցիայի. $4\text{Na}_2\text{SO}_3 \rightarrow \text{Na}_2\text{S} + 3\text{Na}_2\text{SO}_4$.
- 1) 1 2) 2 3) 3 4) 6

1.2.6. Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	10	3	19	2
2	4	11	4	20	4
3	3	12	3	21	4
4	1	13	3	22	4
5	3	14	3	23	2
6	2	15	4	24	2
7	4	16	2	25	3
8	2	17	3		
9	1	18	4		

1.2.7. Հալույթների և լուծույթների էլեկտրոլիզը

1. Ինչպե՞ս են անվանում իներտ էլեկտրոդներով էլեկտրոլիզի ժամանակ բացասական էլեկտրոդի վրա ընթացող գործընթացը.

- | | |
|--------------------------|---------------------------------|
| 1) անոդային օքսիդացում | 3) ն օքսիդացում, ն վերականգնում |
| 2) անոդային վերականգնում | 4) կաթոդային վերականգնում |


2. Ինչ նյութ կանջատվի անոդի վրա իներտ էլեկտրոդների կիրառմամբ կալիումի քլորիդի հալույթի էլեկտրոլիզից.

- | | | | |
|-----------|------------|---------|------------|
| 1) ջրածին | 2) թթվածին | 3) քլոր | 4) կալիում |
|-----------|------------|---------|------------|

3. Ինչ նյութ կանջատվի կաթոդի վրա ալյումինի օքսիդի հալույթի էլեկտրոլիզից.

- | | |
|-------------|------------------------|
| 1) թթվածին | 3) ածխածնի(II) օքսիդ |
| 2) ալյումին | 4) ալյումինի հիդրօքսիդ |

4. Ո՞ր կորն է համապատասխանում CuSO_4 -ի ջրային լուծույթով հաստատուն էլեկտրական հոսանք անցկացնելիս լուծույթում ստացվող նոր նյութի զանգվածի փոփոխությանը ժամանակի ընթացքում.



5. Ինչ նյութ(եր) կանջատվի(են) իներտ անոդի վրա երկաթի(II) սուլֆատի ջրային լուծույթով հաստատուն էլեկտրական հոսանք անցկացնելիս.

- | | | | |
|-------|-----------------|-----------------|----------------------|
| 1) Fe | 2) O_2 | 3) H_2 | 4) H_2 և Fe |
|-------|-----------------|-----------------|----------------------|

6. Ինչ նյութ(եր) կանջատվի(են) իներտ անոդի վրա ցինկի քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզից.

- | | | | |
|------------------|-----------------|---------------------------------|--------------------------------|
| 1) Cl_2 | 2) O_2 | 3) Cl_2 և H_2 | 4) H_2 և O_2 |
|------------------|-----------------|---------------------------------|--------------------------------|

7. Ինչ նյութեր կանջատվեն իներտ էլեկտրոդների վրա նատրիումի սուլֆատի ջրային լուծույթով հաստատուն էլեկտրական հոսանք անցկացնելիս.

- | | | | |
|----------------------|----------------------|--------------------------------|--|
| 1) Na և O_2 | 2) Na և H_2 | 3) H_2 և O_2 | 4) O_2 և H_2O |
|----------------------|----------------------|--------------------------------|--|

8. Ինչ նյութեր կանջատվեն իներտ էլեկտրոդների վրա արծաթի նիտրատի ջրային լուծույթի էլեկտրոլիզից, եթե գործընթացը դադարեցվել է մետաղի անջատման ավարտից անմիջապես հետո.

- | | | | |
|----------------------|--------------------------------|----------------------|-----------------------|
| 1) Ag և O_2 | 2) H_2 և O_2 | 3) Ag և H_2 | 4) Ag և NO_2 |
|----------------------|--------------------------------|----------------------|-----------------------|

9. Ինչ նյութեր կանջատվեն իներտ էլեկտրոդների վրա ցինկի սուլֆատի ջրային լուծույթով հաստատուն էլեկտրական հոսանք անցկացնելիս.

- 1) Zn և H_2 2) Zn և H_2O 3) H_2 և O_2 4) Zn, H_2 և O_2

10. Ինչ երևույթ կդիտվի, եթե ցինկի քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներ) ավարտից հետո էլեկտրոլիտային գուռում մնացած զանգվածին ավելացվի նատրիումի հիդրօքսիդի լուծույթի ավելցուկ.

- 1) նստվածքի անջատում 3) նստվածքի լուծում
2) լուծույթի պղտորում 4) գազի անջատում

11. Ջուրն էլեկտրոլիզի ենթարկելիս ինչ ծավալային հարաբերությամբ են գազերն անջատվում համապատասխանաբար կաթոդի և անոդի վրա.

- 1) 1 : 1 2) 1 : 2 3) 2 : 1 4) 3 : 1

12. Որքան է երկաթի(II) սուլֆատի ջրային լուծույթի էլեկտրոլիզից (իններտ էլեկտրոդներ) էլեկտրոլիտային գուռում առաջացող նյութի մոլային զանգվածը (գ/մոլ).

- 1) 107 2) 90 3) 88 4) 98

13. Ջրային լուծույթում ընթացող ջրային նյութերի էլեկտրոլիզից (իններտ էլեկտրոդներ) անոդի վրա թթվածին կանջատվի.

- 1) Na_2SO_4 , $CuCl_2$, $Zn(NO_3)_2$ 3) $CuSO_4$, KOH , H_2SO_4
2) Na_2CO_3 , $FeCl_2$, $Ba(OH)_2$ 4) $MgBr_2$, $NaOH$, KNO_3

14. Որքան է ջրային լուծույթում էլեկտրոլիզի ենթարկված $CuSO_4$ -ի զանգվածը (գ), եթե իներտ անոդի վրա անջատվել է 1 մոլ գազ.

- 1) 32 2) 128 3) 196 4) 320

15. Ջրային լուծույթում ինչ զանգվածով (գ) կերակրի աղ է ենթարկվել էլեկտրոլիզի, եթե իներտ էլեկտրոդների վրա անջատվել է 44,8 լ (ս. պ.) գազային խառնուրդ.

- 1) 44,8 2) 58,5 3) 117 4) 146

16. Ջրային լուծույթում $NaCl$ -ի էլեկտրոլիզի ընթացքում իներտ անոդի վրա անջատված գազը սենյակային ջերմաստիճանում անցկացրել են $NaOH$ -ի ջրային լուծույթի մեջ: Ո՞ր շարքում են լուծույթում ստացված նյութերի քիմիական բանաձևերը.

- 1) $NaCl$ և $NaClO_4$ 3) $NaCl$ և $NaClO$
2) $NaClO$ և $NaClO_3$ 4) $NaCl$ և $NaClO_3$

17. Ո՞ր նյութերը և ինչ հերթականությամբ համապատասխանորեն կանջատվեն իներտ անոդի վրա ջրային լուծույթում պղնձի(II) քլորիդը էլեկտրոլիզի ենթարկելիս, եթե կաթոդի վրա անջատվել են և պինդ, և գազային նյութեր.

- 1) նախ քլոր, ապա թթվածին
- 2) նախ թթվածին, ապա քլոր
- 3) նախ քլոր, ապա ջրածին
- 4) նախ պղինձ, ապա ջրածին

18. Համապատասխանեցրե՛ք ջրային լուծույթում իներտ էլեկտրոդներով էլեկտրոլիզի ենթարկված աղի և էլեկտրոլիզը դադարեցնելուց հետո լուծույթում առկա նյութի բանաձևերը.

<i>Աղի բանաձև</i>	<i>Լուծույթում մնացած բանաձև</i>
ա) NaCl	1) K_2SO_4
բ) K_2SO_4	2) KOH
գ) NaF	3) NaOH
դ) $ZnCl_2$	4) $ZnCl_2$
	5) $Zn(OH)_2$
	6) NaF

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա3, բ2, գ3, դ4 | 3) ա3, բ1, գ6, դ4 |
| 2) ա3, բ1, գ6, դ5 | 4) ա3, բ1, գ3, դ5 |

19. Համապատասխանեցրե՛ք իներտ էլեկտրոդներով ջրային լուծույթում էլեկտրոլիզի ենթարկված նյութի բանաձևը և էլեկտրոլիտային գուռում մնացած լուծույթի միջավայրերը.

<i>Նյութի բանաձև</i>	<i>Լուծույթի միջավայր</i>
ա) NaCl	1) թթվային
բ) $ZnSO_4$	2) հիմնային
գ) $CuCl_2$	3) չեզոք
դ) $AgNO_3$	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա2, բ1, գ1, դ3 | 3) ա3, բ2, գ1, դ1 |
| 2) ա2, բ1, գ3, դ1 | 4) ա3, բ2, գ1, դ3 |

20. Համապատասխանեցրե՛ք ջրային լուծույթում իներտ էլեկտրոդներով էլեկտրոլիզի ենթարկված նյութի և կաթոդի վրա անջատված նյութի(երի) բանաձև(եր)ը.

Նյութի բանաձև	Կաթոդի վրա անջատվող նյութի(երի) բանաձև(եր)
ա) CuSO_4	1) Zn
բ) NaOH	2) Cu և O_2
գ) K_2SO_4	3) H_2
դ) $\text{Zn}(\text{NO}_3)_2$	4) Zn և H_2
	5) Na
	6) Cu

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- 1) ա6, բ3, գ3, դ4 2) ա2, բ5, գ3, դ1 3) ա6, բ5, գ3, դ1 4) ա2, բ5, գ3, դ4

21. Կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթով հաստատուն էլեկտրական հոսանք անցկացնելիս ինչ նյութ կանջատվի իներտ կաթոդի վրա.

- 1) K և O_2 2) H_2 և O_2 3) K և H_2 4) H_2

22. Ո՞ր ուրվագիրն է համապատասխանում կաթոդային վերականգնմանը իներտ էլեկտրոդներով նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթն էլեկտրոլիզի ենթարկելիս.

- 1) $4\text{OH}^- - 4e^- \rightarrow 2\text{H}_2\text{O} + \text{O}_2$ 3) $\text{Na}^+ + e^- \rightarrow \text{Na}^0$
 2) $2\text{H}_2\text{O} - 4e^- \rightarrow \text{O}_2 + 4\text{H}^+$ 4) $2\text{H}_2\text{O} + 2e^- \rightarrow \text{H}_2 + 2\text{OH}^-$

23. Ո՞ր ուրվագիրն է համապատասխանում կաթոդային վերականգնմանը իներտ էլեկտրոդների կիրառմամբ նատրիումի քլորիդի ջրային լուծույթն էլեկտրոլիզի ենթարկելիս.

- 1) $2\text{Cl}^- - 2e^- \rightarrow \text{Cl}_2$ 3) $\text{Na}^+ + e^- \rightarrow \text{Na}^0$
 2) $2\text{H}_2\text{O} - 4e^- \rightarrow \text{O}_2 + 4\text{H}^+$ 4) $2\text{H}_2\text{O} + 2e^- \rightarrow \text{H}_2 + 2\text{OH}^-$

24. Ո՞ր ուրվագիրն է համապատասխանում անոդային օքսիդացմանը իներտ էլեկտրոդների կիրառմամբ նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթն էլեկտրոլիզի ենթարկելիս.

- 1) $4\text{OH}^- - 4e^- \rightarrow 2\text{H}_2\text{O} + \text{O}_2$ 3) $\text{Na}^+ + e^- \rightarrow \text{Na}^0$
 2) $2\text{H}_2\text{O} - 4e^- \rightarrow \text{O}_2 + 4\text{H}^+$ 4) $2\text{H}_2\text{O} + 2e^- \rightarrow \text{H}_2 + 2\text{OH}^-$

25. Ինչպե՞ս է փոխվում անոդի զանգվածը, եթե AgNO_3 -ի ջրային լուծույթի մեջ ընկղմում են արծաթե էլեկտրոդներ և անցկացնում հաստատուն հոսանք.

- 1) մեծանում է 3) չի փոխվում
 2) փոքրանում է 4) սկզբում մեծանում, հետո փոքրանում է

26. CuSO_4 -ի ջրային լուծույթի մեջ ընկղմել են 10-ական գ զանգվածով պղնձե էլեկտրոդներ և իրականացրել էլեկտրոլիզ, որի հետևանքով կաթոդի զանգվածը մեծացել է 3,2 գրամով: Քանի գրամով է փոքրացել անոդի զանգվածը.

- 1) 3,2 2) 6,4 3) 10 4) 20

27. Արծաթի նիտրատի ջրային լուծույթի մեջ ընկղմել են a -ական գրամ զանգվածով իներտ էլեկտրոդներ և լուծույթը ենթարկել էլեկտրոլիզի: Որոշ ժամանակ անց իներտ կաթոդը հանել են, լվացել, չորացրել և նորից կշռել, որից հետո զանգվածը կազմել է b գրամ: Ինչ փոխհարաբերության մեջ են a -ն և b -ն.

- 1) $a = b$ 2) $a > b$ 3) $a - b < 0$ 4) $a \gg b$

28. Կալիումի նիտրատի a գրամ ջրային լուծույթի մեջ ընկղմել են իներտ էլեկտրոդներ և անցկացրել հաստատուն էլեկտրական հոսանք: Որոշ ժամանակ անց գործընթացը դադարեցրել են և նորից որոշել լուծույթի զանգվածը, որը կազմել է b գրամ: Ինչ փոխհարաբերության մեջ են a -ն և b -ն.

- 1) $a = b$ 2) $a > b$ 3) $a - b < 0$ 4) $a \ll b$

29. Ո՞ր նյութերի ստացման համար է իրականացվում կերակրի աղի ջրային լուծույթի էլեկտրոլիզը.

- 1) նատրիում և թթվածին 3) նատրիում, ջրածին և քլոր
2) նատրիում և քլոր 4) նատրիումի հիդրօքսիդ, ջրածին և քլոր

30. Ո՞ր նյութի ստացման համար է իրականացվում նատրիումի հիդրօքսիդի հալույթի էլեկտրոլիզը.

- 1) թթվածին 3) նատրիումի հիդրիդ
2) նատրիումի օքսիդ 4) մետաղական նատրիում

31. Ո՞ր շարքի բոլոր կատիոնները ջրի մոլեկուլների հետ միաժամանակ կվերականգնվեն իներտ կաթոդի վրա համապատասխան աղերի ջրային լուծույթները էլեկտրոլիզի ենթարկելիս.

- 1) Cu^{2+} , Ag^+ , Na^+ 3) Fe^{2+} , Fe^{3+} , Zn^{2+}
2) Au^{3+} , Ag^+ , Cu^{2+} 4) Mg^{2+} , Ca^{2+} , Al^{3+}

32. Ո՞ր նյութ(երն) է(են) անջատվում իներտ էլեկտրոդների վրա կալցիումի քլորիդի հալույթի էլեկտրոլիզից.

- 1) կալցիում և քլոր 3) քլորաջրածին
2) ջրածին և քլոր 4) կալցիումի հիպոքլորիդ

33. Ինչ զանգվածով (գ) մետաղ է անջատվել իներտ կաթոդի վրա կալցիումի քլորիդի հալույթի էլեկտրոլիզի ընթացքում, եթե անոդային օքսիդացմանը մասնակցել են $3,01 \cdot 10^{23}$ թվով էլեկտրոններ.
- 1) 4 2) 10 3) 20 4) 40
34. Իներտ էլեկտրոդների կիրառմամբ ջրային լուծույթում FeCl_2 -ը էլեկտրոլիզի ենթարկելիս լուծույթից անջատվում է նստվածք, որի զանգվածն օդում երկար մնալիս ավելանում է 3,4 գրամով: Որքան է վերջանյութի զանգվածը (գ).
- 1) 9 2) 10,7 3) 18 4) 21,4
35. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի իներտ անոդի վրա, եթե ջրային լուծույթում պղնձի սուլֆատի էլեկտրոլիզը դադարեցնելուց հետո ստացված լուծույթում հայտաբերել են 39,2 գ ծծմբական թթու.
- 1) 4,48 2) 8,96 3) 11,2 4) 22,4
36. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ է անջատվել իներտ կաթոդի վրա, եթե կերակրի աղի ջրային լուծույթի էլեկտրոլիզից ստացված լուծույթում հայտաբերել են 13,6 գ հիդրօքսիդ իոններ ($\alpha=1$).
- 1) 1,12 2) 4,48 3) 2,24 4) 8,96
37. Արդյունաբերության մեջ ո՞ր մետաղն են ստանում համապատասխան աղի հալույթի էլեկտրոլիզից.
- 1) Cu 2) Ca 3) Fe 4) Ag
38. Արդյունաբերության մեջ ո՞ր մետաղն են ստանում՝ համապատասխան հալոգենիդի հալույթն էլեկտրոլիզի ենթարկելով.
- 1) պղինձ 2) ալյումին 3) նատրիում 4) քրոմ
39. Ինչ մասնիկների հոսք է կատարվում արտաքին շղթայում էլեկտրոլիզի ընթացքում.
- 1) էլեկտրոնների 3) անիոնների
2) կատիոնների 4) ատոմների
40. Որպես անոդ, թե՛ կաթոդ պետք է ծառայի նիկելապատման ենթակա մետաղե իրը, և ինչ նյութից պետք է պատրաստված լինի մյուս էլեկտրոդը.
- 1) անոդ, գրաֆիտից 3) կաթոդ, գրաֆիտից
2) կաթոդ, նիկելից 4) անոդ, նիկելից

41. Որպես ոսկեգոծման համար նախատեսված իր դիր էլեկտրոդը պետք է ծառայի, և ինչ նյութից պետք է պատրաստված լինի մյուս էլեկտրոդը.

1) անոդ, գրաֆիտից

3) անոդ, ոսկուց

2) կաթոդ, գրաֆիտից

4) կաթոդ, ոսկուց

42. Արծաթի, ցինկի և պղնձի(II) նիտրատների հավասարամոլային ջրային լուծույթն էլեկտրոլիզի ենթարկելիս մետաղները իներտ կաթոդի վրա ինչ հերթականությամբ կվերականգնվեն.

1) Ag, Zn, Cu

3) Cu, Zn, Ag

2) Ag, Cu, Zn

4) Zn, Cu, Ag

43. Ո՞ր շարքի բոլոր կատիոնները կվերականգնվեն իներտ կաթոդի վրա ջրային լուծույթներում համապատասխան աղերն էլեկտրոլիզի ենթարկելիս.

1) Cu^{2+} , Ag^+ , Na^+

3) Fe^{2+} , Fe^{3+} , K^+

2) Au^{3+} , Ag^+ , Cu^{2+}

4) Mg^{2+} , Ca^{2+} , Al^{3+}

1.2.7. Հալույթների և լուծույթների էլեկտրոլիզը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	16	3	31	3
2	3	17	1	32	1
3	2	18	2	33	2
4	3	19	2	34	4
5	2	20	1	35	1
6	1	21	4	36	4
7	3	22	4	37	2
8	1	23	4	38	3
9	4	24	1	39	1
10	3	25	2	40	2
11	3	26	1	41	4
12	4	27	3	42	2
13	3	28	2	43	2
14	4	29	4		
15	3	30	4		

**1.2.8. Նյութերի գազային վիճակը: Ավոգադրոյի օրենքը:
Մենդելեև-Կլապեյրոնի հավասարումը**

1. Ինչ ծավալ (լ, ն. պ.) է զբաղեցնում 20 գրամ հելիումը.

- 1) 22,4 2) 44,8 3) 56 4) 112

2. Որքան է գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ), եթե դրա հարաբերական խտությունն ըստ մեթանի երկուս է.

- 1) 16 2) 32 3) 48 4) 56

3. Ինչ ծավալ (լ) է զբաղեցնում 56 գ ածխածնի(II) օքսիդը 127 °C և 404,878 կՊա ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ Ջ/Կ} \cdot \text{մոլ}$).

- 1) 14 2) 16,4 3) 22,4 4) 44,8

4. Ինչ քանակով (մոլ) թթվածին է պարունակվում 27 °C և 15195 կՊա ճնշման պայմաններում գտնվող 40 լիտր տարողությամբ պողպատե բալոնում ($R = 8,3 \text{ Ջ/Կ} \cdot \text{մոլ}$).

- 1) 244 2) 240 3) 224 4) 160

5. Ո՞ր գազն է նպատակահարմար օգտագործել օդապարիկները լցնելու համար.

- 1) հելիում 3) մեթան
2) թթվածին 4) ջրածին

6. Ինչ քանակով (մոլ) ատոմներ կան 11,2 լիտր (ն. պ.) մեթանում.

- 1) 0,5 2) 0,75 3) 1,2 4) 2,5

7. Որքան է նատրիումի և պղնձի նիտրատների հավասարամոլային խառնուրդի քայքայումից ստացվող գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ հելիումի.

- 1) 10,33 2) 20,72 3) 22,53 4) 41,33

8. Հետևյալ քանակություններով նյութերից որն է պարունակում առավել մեծ թվով մոլեկուլներ.

- 1) 4 մոլ O_2 2) 220 գ CO_2 3) 20 գ H_2 4) 44,8 լ NH_3

9. Որքան է ազոտի և թթվածնի 56 լ (ն. պ.) հավասարամոլային խառնուրդի զանգվածը (գ).

- 1) 35 2) 40 3) 56 4) 75

10. Ո՞րն է գազային նյութի ծավալի (V), մոլային ծավալի (V_m) և նյութի քանակի (n) միջև կապն արտահայտող բանաձևը.

1) $V = V_m/n$

3) $V = V_m \cdot n$

2) $V = n/V_m$

4) $V = V_m + n$

11. Հավասար ծավալներով ազոտի և թթվածնի խառնուրդին դ՞ր գազը պետք է ավելացնել նույն խտությամբ նոր խառնուրդ ստանալու համար.



12. Ինչ ծավալային հարաբերությամբ են փոխազդում ազոտը և ջրածինը ամոնիակի ստացման ռեակցիայում.

1) 1 : 2

2) 1 : 3

3) 3 : 1

4) 2 : 3

13. Ինչպիսին է միևնույն արտաքին պայմաններում հավասար ծավալներով վերցրած համապատասխանաբար հելիումի, մեթանի, թթվածնի և ծծմբի(IV) օքսիդի զանգվածների հարաբերությունը.

1) 16 : 4 : 4 : 1

3) 18 : 2 : 4 : 1

2) 1 : 4 : 8 : 16

4) 1 : 4 : 8 : 32

14. 10 լ օդոնի զանգվածը քանի՞ անգամ է մեծ 5 լ թթվածնի զանգվածից.

1) 1,5

2) 48

3) 3

4) 32

15. Որոշակի ծավալով փակ անոթում 300 Կ–ում գտնվող գազի ճնշումը հավասար է 1 մթն (101,3 կՊա): Ո՞ր ջերմաստիճանում (Կ) գազի ճնշումը կկրկնապատկվի.

1) 200

3) 500

2) 400

4) 600

16. Հետևյալ գազերից որի՞ հարաբերական խտությունն է ըստ հելիումի 16.



17. Որքան է A գազի հարաբերական խտությունն ըստ ազոտի, եթե խտությունն ըստ հելիումի X է.

1) $1/X$

2) $X/7$

3) $28X$

4) $7X$

18. Հետևյալ գազերից որն է օդից ծանր.



19. Ո՞ր պնդումն է ճիշտ գազի մոլային ծավալի վերաբերյալ.

1) գազի խտության հարաբերությունն է գազի զանգվածին

2) գազի ծավալի հարաբերությունն է գազի նյութաքանակին

3) գազի խտության հարաբերությունն է գազի նյութաքանակին

4) գազի զանգվածի հարաբերությունն է գազի նյութաքանակին

20. Որքան է ջրածնի ծավալային բաժինը (%) ջրածնի և հելիումի խառնուրդում, որի խտությունն ըստ օդի 0,1 է.
- 1) 25 2) 75 3) 45 4) 55
21. Ջրածնի և քլորի 50 մլ ծավալով խառնուրդի ճառագայթումից հետո պարզվել է, որ 10 մլ քլոր չի փոխազդել: Որքան են ջրածնի ծավալային բաժինը (%) սկզբնական խառնուրդում և ստացված քլորաջրածնի ծավալը (մլ) համապատասխանաբար.
- 1) 25 և 75 2) 75 և 25 3) 60 և 40 4) 40 և 40
22. Ինչ ծավալ (լ) է զբաղեցնում 10 գ ածխածնի(II) օքսիդը 15 °C-ում և 105,352 կՊա ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ Զ/}^{\circ}\text{C} \cdot \text{մոլ}$).
- 1) 9,1 2) 10,1 3) 11,1 4) 8,1
23. Ո՞ր պնդումներն են ճիշտ.
- ա) գազերում միջմոլեկուլային տարածություններն անհամեմատ մեծ են մոլեկուլների չափերից
 բ) սովորական պայմաններում գազային վիճակում գտնվող նյութերն ունեն մոլեկուլային բյուրեղավանդակ
 գ) արտաքին միատեսակ պայմաններում հավասար զանգվածներով գազերը զբաղեցնում են նույն ծավալը
- 1) ա, գ 2) բ, գ 3) ա, բ 4) ա, բ, գ
24. Ինչ ծավալային հարաբերությամբ պետք է խառնել CO և CO₂ գազերը արգոնի խտությամբ գազային խառնուրդ ստանալու համար.
- 1) 1 : 1 2) 1 : 2 3) 1 : 3 4) 1 : 4
25. Նույն ծավալով երկու փակ անոթներից մեկում միկնույն ջերմաստիճանում տեղավորել են A գրամ, իսկ մյուսում՝ 2A գրամ նեոն: Քանի անգամ կտարբերվեն ճնշումներն անոթներում.
- 1) 2A 2) 2 3) A/22,4 4) 2,24
26. Քանի անգամ է հեղուկ էթանոլի ($\rho = 0,8 \text{ գ/սմ}^3$) ծավալը մեծ նույն քանակով (մոլ) ջրի ($\rho = 1 \text{ գ/սմ}^3$) ծավալից.
- 1) 22,4 2) 2,56 3) 2,75 4) 3,19
27. Ինչ ծավալ (լ) կզբաղեցնի 1 մոլ թթվածինը 27 °C և 101,3 կՊա ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ Զ/}^{\circ}\text{C} \cdot \text{մոլ}$).
- 1) 22,4 2) 25,0 3) 24,58 4) 23,0

28. Որքան է 1-ական լիտր ազոտի և արգոնի խառնուրդի խտությունն ըստ ջրածնի.
- 1) 34 2) 17 3) 24 4) 12
29. Ինչ ծավալ (լ) կզբաղեցնի 8 գ ջրածինը 27 °C ջերմաստիճանի և 90 կՊա ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ Ջ/Կ} \cdot \text{մոլ}$).
- 1) 22,4 2) 89,6 3) 110,7 4) 8,96
30. Ինչ զանգվածով (գ) ազոտը 47 °C-ում և 10 լ ծավալով փակ անոթում կստեղծի 166 կՊա ճնշում ($R = 8,3 \text{ Ջ/Կ} \cdot \text{մոլ}$).
- 1) 28 2) 0,625 3) $3,7625 \cdot 10^{23}$ 4) 17,5
31. Ո՞ր ջերմաստիճանում (°C) 6 գ արգոնը 3 լ ծավալով փակ անոթում կստեղծի 145 կՊա ճնշում ($R = 8,3 \text{ Ջ/Կ} \cdot \text{մոլ}$).
- 1) 273 2) 349,4 3) 76,4 4) 88,9
32. Ինչ ծավալային հարաբերությամբ պետք է վերցնել պրոպանը և օդը՝ ըստ պրոպանի այրման ռեակցիայի հավասարման.
- 1) 1 : 10 2) 1 : 15 3) 1 : 20 4) 1 : 25
33. Ինչ ծավալ (լ) կզբաղեցնի գազը նորմալ պայմաններում, եթե այն 20 °C և 101,325 կՊա ճնշման պայմաններում զբաղեցնում է 27,91 լ ծավալ ($R = 8,3 \text{ Ջ/Կ} \cdot \text{մոլ}$).
- 1) 22,4 2) 23,05 3) 25,05 4) 26,05
34. Ո՞ր զույգ նյութերի փոխազդեցությունից գազային նյութ կանջատվի.
- 1) CuO և H₂SO₄ 3) NH₄Cl և NaOH
2) Al₂O₃ և NaOH 4) KNO₂ և H₂SO₄
35. Ինչ երևույթ է նկատվում մագնեզիումի հիդրոկարբոնատի լուծույթը տաքացնելիս.
- 1) միայն նստվածքի գոյացում
2) միայն գազի անջատում
3) նստվածքի գոյացում և գազի անջատում
4) ակներև փոփոխություն չի նկատվում
36. Ինչ ծավալ (լ, ն. պ.) են զբաղեցնում ֆտորի $2,408 \cdot 10^{24}$ մոլեկուլները.
- 1) 4,0 2) 9,6 3) 38,0 4) 89,6
37. 7 դմ³ (ն. պ.) պրոպանն այրել են թթվածնի ավելցուկում: Ռեակցիայի ավարտից և սկզբնական պայմանների բերելուց հետո գազային խառնուրդի ծավալը կազմել է 33 դմ³: Ինչ ծավալով (դմ³) թթվածին են խառնել պրոպանին.
- 1) 27 2) 37 3) 47 4) 57

38. Ինչ ծավալով (լ, ն. պ.) էթիլեն կպահանջվի 42,0 գ պոլիէթիլեն ստանալու համար, եթե պոլիմերացման ռեակցիայի ելքը 80 % է.

- 1) 22,4 2) 42 3) 56 4) 112

39. Նույն զանգվածով ի՞նչ նյութն է զբաղեցնում առավել փոքր ծավալ (ն. պ.).

- 1) օզոն 2) թթվածին 3) ազոտ 4) ջրածին

40. He, N₂, NH₃, Ar գազերի հավասար զանգվածային բաժիններով խառնուրդում ի՞նչ գազի մոլային բաժինն է ամենափոքրը.

- 1) He 2) N₂ 3) NH₃ 4) Ar

41. Ո՞ր գազային խառնուրդն է օդից ծանր՝ անկախ բաղադրությունից.

- 1) CH₄ և O₂ 2) C₃H₈ և O₂ 3) NH₃ և O₂ 4) CH₄ և CO₂

42. Հետևյալ ֆազային անցումներից ի՞նչն են անվանում սուբլիմացում.

- 1) հեղուկ → պինդ 2) պինդ → գազ 3) հեղուկ → գազ 4) պինդ → հեղուկ

43. Ջրի հետ խառնելիս ի՞նչ նյութն է սուսպենզիա առաջացնում.

- 1) կերակրի աղ 2) ամոնիումային սելիտրա
3) կավիճ 4) բուսական յուղ

44. Ո՞րն է ճիշտ արտահայտությունը հետևյալ նախադասությունն ավարտելու համար.

Կոլոիդ համակարգերում ցրված մասնիկների չափերը _____ :

- 1) միջանկյալ են իսկական լուծույթների և կոպտացրիվ համակարգերի ցրված մասնիկների չափերի միջև
2) ավելի փոքր են իսկական լուծույթներում լուծված նյութի մասնիկներից
3) ավելի մեծ են կոպտացրիվ համակարգերում ցրված մասնիկներից
4) ավելի մեծ են էմուլսիաներում ցրված մասնիկներից

45. Համապատասխանեցրե՞ք կոլոիդ համակարգերի օրինակները և տեսակները.

<i>Կոլոիդ համակարգի օրինակ</i>	<i>Կոլոիդ համակարգի տեսակ</i>
ա) կաթ	1) անբոզոլ
բ) ձվի հարած սպիտակուց	2) փրփուր
գ) ծուխ	3) էմուլսիա
	4) դոնդող

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ4, գ3 2) ա3, բ2, գ1 3) ա4, բ2, գ1 4) ա3, բ1, գ4

46. Ո՞ր զույգի նյութերը միմյանց հետ էմուլսիա կառաջացնեն.

- 1) բենզոլ և տոլուոլ
 2) ջուր և քացախաթթու
 3) ջուր և բենզոլ
 4) մեթանոլ և պրոպանոլ

**1.2.8. Նյութերի գազային վիճակը: Ավոգադրոյի օրենքը:
 Մենդելևև-Կրապելյոնի հավասարումը**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	17	2	33	4
2	2	18	1	34	3
3	2	19	2	35	3
4	1	20	4	36	4
5	1	21	4	37	3
6	4	22	4	38	2
7	1	23	3	39	1
8	3	24	3	40	4
9	4	25	2	41	2
10	3	26	4	42	2
11	3	27	3	43	3
12	2	28	2	44	1
13	2	29	3	45	2
14	3	30	4	46	3
15	4	31	3		
16	1	32	4		

1.2.9. Լուծույթներ

1. Ո՞ր շարքի նյութերն են համապատասխանաբար լավ լուծելի, քիչ լուծելի և գործնականում անլուծելի.

- 1) նատրիումի նիտրատ, կալցիումի հիդրօքսիդ, արծաթի քլորիդ
- 2) ամոնիակ, նատրիումի հիդրօքսիդ, սիլիկաթթու
- 3) բուսական յուղ, բարիումի հիդրօքսիդ, մեթան
- 4) կապարի սուլֆիդ, ցինկի քլորիդ, քլորաջրածին

2. Ջերմաստիճանը բարձրացնելիս ինչպե՞ս է փոխվում գազային նյութերի լուծելիությունը ջրում.

- 1) փոքրանում է
- 2) մեծանում է
- 3) սկզբում մեծանում, հետո փոքրանում է
- 4) չի փոխվում

3. Ո՞ր գազերն են ջրում լավ և վատ լուծվում համապատասխանաբար.

- 1) ազոտ և քլորաջրածին
- 2) ամոնիակ և քլորաջրածին
- 3) մեթան և թթվածին
- 4) ամոնիակ և ջրածին

4. Ո՞րն է ջերմության անջատման պատճառը նատրիումի հիդրօքսիդը ջրում լուծելիս.

- 1) իոնների հիդրատացումը
- 2) էլեկտրոլիտային դիսոցումը
- 3) քլորեղավանդակի քայքայումը
- 4) լուծույթում մասնիկների բաշխումը

5. Ի՞նչ փոփոխություն է նկատվում ամոնիումի նիտրատը ջրում լուծելիս.

- 1) լուծույթը սառչում է
- 2) լուծույթը տաքանում է
- 3) լուծույթը սկզբում տաքանում, հետո սառչում է
- 4) տեսանելի փոփոխություն չի նկատվում

6. 100 գ սառը ջրում լուծել են որոշակի ծավալով քլորաջրածին և ստացել σ գ հազեցած լուծույթ: Այնուհետև նույն զանգվածով ջրի մեկ այլ նմուշ տաքացրել են և, քլորաջրածին լուծելով, ստացել b գ հազեցած լուծույթ: Ի՞նչ փոխհարաբերության մեջ են σ -ն և b -ն.

- 1) $a > b$
- 2) $b > a$
- 3) $a = b$
- 4) $a \ll b$

7. Աղի 200 գ հազեցած ջրային լուծույթը, որում լուծված նյութի զանգվածային բաժինը 30 % է, սառեցրել են մինչև T ջերմաստիճան, ինչի հետևանքով անջատվել է 40,4 գ աղ: Որքան է աղի լուծելիությունը (գ/100 գ H₂O) T ջերմաստիճանում.

- 1) 40
- 2) 20
- 3) 14
- 4) 7

8. Ո՞ր նյութերը չեն կարող միմյանց հետ իսկական լուծույթ առաջացնել.

- 1) քսիլոլ, բենզոլ
- 2) ջուր, բենզոլ
- 3) քացախաթթու, մրջնաթթու
- 4) ջուր, սախարոզ

9. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Լուծված նյութի _____ լուծված նյութի զանգվածի հարաբերությունն է լուծույթի զանգվածին:

- 1) զանգվածային բաժինը 3) մոլային կոնցենտրացիան
2) մոլային բաժինը 4) ծավալային բաժինը

10. Երկվալենտ մետաղի 12 գ նմուշի և ջրի փոխազդեցությունից անջատվել է 6,72 Լ (ն. ս.) գազ: Ո՞րն է այդ մետաղը.

- 1) Cu 2) Zn 3) Fe 4) Ca

11. Որքան է աղի մոլային կոնցենտրացիան (մոլ/լ), եթե 2 Լ լուծույթում 16,1 գ ցինկի սուլֆատ է պարունակվում.

- 1) 0,1 2) 0,2 3) 0,05 4) 0,01

12. Որքան է 11,2 Լ (ն. ս.) ջրածնի ստացման համար անհրաժեշտ աղաթթվի 2 Մ լուծույթի ծավալը (մլ).

- 1) 250 2) 1000 3) 500 4) 600

13. Մետաֆոսֆորական թթվի 10 % զանգվածային բաժնով 200 գ լուծույթում որքան են համապատասխանաբար թթվի զանգվածը (գ) և մոլային բաժինը (%).

- 1) 10 և 1,22 2) 20 և 2,44 3) 40 և 3,66 4) 10 և 2,44

14. Ո՞ր պնդումն(երն) է(են) ճիշտ.

ա) նատրիումի քլորիդի ցանկացած ջրային լուծույթ հաստատուն բաղադրություն ունի
բ) բյուրեղային նատրիումի քլորիդը հաստատուն բաղադրություն ունի

- 1) ճիշտ է միայն *a*-ն 3) ճիշտ են և՛ *a*-ն, և՛ *բ*-ն
2) ճիշտ է միայն *բ*-ն 4) երկու պնդումներն էլ սխալ են

15. Ո՞րը լուծույթների կոնցենտրացիայի քանակական արտահայտման ձև չէ.

- 1) լուծված նյութի զանգվածային բաժինը
2) լուծված նյութի մոլային բաժինը
3) լուծված նյութի մոլային զանգվածը
4) մոլային կոնցենտրացիան

16. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը.

Ճնշումը բարձրացնելիս գազային նյութերի լուծելիությունը ջրում մեծանում է, քանի որ այն _____:

- 1) ջերմակլանիչ և դարձելի գործընթաց է
2) ընթանում է համակարգի ծավալի մեծացումով

- 3) ընթանում է համակարգի ծավալի փոքրացումով և դարձելի գործընթաց է
- 4) ջերման ջատիչ և ոչ դարձելի գործընթաց է

17. Որքան է ազոտական թթվի մոլային կոնցենտրացիան (մոլ/լ), եթե 200 մլ լուծույթում պարունակվում է 6,3 գ թթու.

- 1) 0,2
- 2) 2
- 3) 0,5
- 4) 0,1

18. Ո՞ր գործոնից է կախված կալիումի նիտրատի լուծելիությունը.

- 1) ջերմաստիճանից
- 2) լուծիչի ծավալից
- 3) աղի քանակից
- 4) ճնշման չափավոր փոփոխությունից

19. Ինչպիսին է նատրիումի կարբոնատի ջրային լուծույթի միջավայրը.

- 1) չեզոք
- 2) հիմնային
- 3) թույլ թթվային
- 4) ուժեղ թթվային

20. Ինչ ծավալային հարաբերությամբ պետք է խառնել համապատասխանաբար ծծմբական թթվի և նատրիումի հիդրօքսիդի հավասարամոլային լուծույթները՝ չեզոք լուծույթ ստանալու համար.

- 1) 49 : 20
- 2) 20 : 49
- 3) 1 : 2
- 4) 1 : 1

21. Ո՞րն է էթանոլի և ջրի անսահմանափակ խառնվելու պատճառը.

- 1) ջրի մոլեկուլների միջև ջրածնային կապերի առաջացումը
- 2) սպիրտի մոլեկուլների միջև ջրածնային կապերի առաջացումը
- 3) սպիրտի և ջրի մոլեկուլների միջև ջրածնային կապերի առաջացումը
- 4) սպիրտի և ջրի մոլային զանգվածների տարբերությունը

22. Ո՞ր նյութը ջրի հետ խառնելիս սուսպենզիա կառաջանա.

- 1) կալիումի պերմանգանատ
- 2) նատրիումի քլորիդ
- 3) կալցիումի կարբոնատ
- 4) նատրիումի նիտրատ

23. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ամոնիակ պետք է լուծել ջրում 12 կգ 10 % զանգվածային բաժնով ամոնիակի ջրային լուծույթ (անուշադրի սպիրտ) ստանալու համար.

- 1) 224,2
- 2) 1581,2
- 3) 3600,4
- 4) 12000,4

24. Որքան է նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով լուծույթի ($\rho = 1,22$ գ/մլ) մոլային կոնցենտրացիան (մոլ/լ).

- 1) 4,8
- 2) 0,53
- 3) 2
- 4) 6,1

25. Ջրային լուծույթում էթանոլի մեկ մոլին բաժին է ընկնում 23 մոլ ջուր: Որքան է էթանոլի զանգվածային բաժինն (%) այդ լուծույթում.

- 1) 16
- 2) 14
- 3) 12
- 4) 10

26. Ինչ զանգվածային հարաբերությամբ պետք է խառնել ջուրը և շաքարը, որպեսզի ստացվի 20 % զանգվածային բաժնով շաքարի լուծույթ.
- 1) 5 : 1 2) 4 : 1 3) 2 : 1 4) 1 : 5
27. 1,792 Լ (ն. պ.) քլորաջրածինը լուծել են ջրում և ստացել 100 մլ լուծույթ: Որքան է վերջինիս մոլային կոնցենտրացիան (մոլ/լ).
- 1) 8 2) 4 3) 0,8 4) 0,08
28. Պոտաշի լուծույթը հագեցրել են ածխաթթու գազով: Ինչպես է փոխվել ջրածնի իոնների կոնցենտրացիան լուծույթում.
- 1) մեծացել է 3) հավասարվել է 0–ի
2) փոքրացել է 4) չի փոխվել
29. Ինչ զանգվածային հարաբերությամբ պետք է խառնել 35 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթն ու ջուրը, որպեսզի ստացվի 10 % զանգվածային բաժնով թթվի լուծույթ.
- 1) 2 : 5 2) 1 : 2 3) 2 : 1 4) 4 : 1
30. Որոշակի քանակությամբ երեք աղեր լուծել են ջրում: Ստացված լուծույթում հայտնաբերվել են 0,4 մոլ SO_4^{2-} , 0,1 մոլ Cl^- , 0,4 մոլ K^+ և 0,5 մոլ Na^+ իոններ: Ո՞ր շարքում են համապատասխանաբար բերված այդ աղերի նյութաքանակները (մոլ) և բանաձևերը.
- 1) 0,1 NaCl, 0,2 K_2SO_4 , 0,1 KCl 3) 0,1 NaCl, 0,4 K_2SO_4 , 0,2 Na_2SO_4
2) 0,1 NaCl, 0,2 K_2SO_4 , 0,2 Na_2SO_4 4) 0,2 NaCl, 0,2 K_2SO_4 , 0,2 Na_2SO_4
31. Քլորաջրածնի 0,1 մոլ/լ կոնցենտրացիայով 8 մլ ջրային լուծույթին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի 0,1 մոլ/լ կոնցենտրացիայով 5 մլ լուծույթ: Ինչ գույն կունենա լակմուսը վերջնական լուծույթում.
- 1) կարմիր 3) կապույտ
2) մանուշակագույն 4) անգույն
32. Քլորաջրածնի 0,1 մոլ/լ կոնցենտրացիայով 5 մլ ջրային լուծույթին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի նույն կոնցենտրացիայով 5 մլ լուծույթ: Ինչ գույն կունենա լակմուսը վերջնական լուծույթում.
- 1) կարմիր 3) կապույտ
2) մանուշակագույն 4) անգույն
33. 657 մլ ջրում լուծել են ըստ հելիումի 9,125 հարաբերական խտությամբ 44,8 Լ (ն. պ.) հալոգենաջրածին և ստացել թթվի լուծույթ ($\rho = 1,05$ գ/մլ): Որքան են ստացված լուծույթում հալոգենաջրածնի զանգվածային բաժինը (%) և լուծույթի ծավալը (մլ) համապատասխանորեն.
- 1) 30 և 2085,6 2) 20 և 1390,4 3) 10 և 695,24 4) 5 և 347,64

34. Աղի որոշակի զանգվածային բաժնով 100 գ լուծույթին ավելացրել են 300 գ ջուր: Ինչպե՞ս կփոխվի աղի զանգվածային բաժինը.
- 1) կմեծանա 3 անգամ
2) կփոքրանա 3 անգամ
3) կմեծանա 4 անգամ
4) կփոքրանա 4 անգամ
35. Որքան է նատրիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով ջրային լուծույթում ($\rho = 1,12 \text{ գ/սմ}^3$) լուծված նյութի զանգվածային բաժինը (%).
- 1) 7,143
2) 80,143
3) 40,143
4) 2,243
36. Որքան է քլորաջրածնի զանգվածային բաժինը (%) դրա 5,5 մոլ/լ կոնցենտրացիայով ջրային լուծույթում ($\rho = 1,1 \text{ գ/սմ}^3$).
- 1) 36,5
2) 11,1
3) 18,55
4) 18,25
37. Ինչ զանգվածով լուծված նյութ է պարունակում նատրիումի քլորիդի 0,9% զանգվածային բաժնով 500 գ լուծույթը.
- 1) 3,3
2) 3,5
3) 4,2
4) 4,5
38. 1,12 գ/սմ³ խտությամբ 2,5 մոլ/լ կոնցենտրացիայով 448 գրամ աղաթթուն քանի՞ գրամ լուծված նյութ է պարունակում.
- 1) 30,6
2) 35,5
3) 36,5
4) 44,8
39. Խառնել են ծծմբական թթվի 1 մոլ/լ կոնցենտրացիայով 200 մլ լուծույթը լիթիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով 200 մլ լուծույթին: Որքան է ստացված նյութի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում ($\rho = 1,04 \text{ գ/սմ}^3$).
- 1) 4,5
2) 5,3
3) 5,2
4) 5,5
40. Քացախաթթվի 9 % զանգվածային բաժնով 250 գրամ լուծույթում ինչ զանգվածով ջուր է պարունակվում.
- 1) 22,5
2) 225
3) 227,5
4) 228

1.2.9. Լուծույթներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	15	3	29	1
2	1	16	3	30	2
3	4	17	3	31	1
4	1	18	1	32	2
5	1	19	2	33	3
6	1	20	3	34	4
7	3	21	3	35	1
8	2	22	3	36	4
9	1	23	2	37	4
10	4	24	4	38	3
11	3	25	4	39	2
12	3	26	2	40	3
13	2	27	3		
14	2	28	1		

**1.2.10. Պինդ նյութեր: Բյուրեղային և ամորֆ նյութեր:
Բյուրեղավանդակների տեսակներ**

1. Հետևյալ նյութերից որի կառուցվածքային մասնիկներն ունեն կանոնավոր դասավորություն.

- 1) պոլիէթիլեն 2) ապակի 3) կերակրի աղ 4) պարաֆին

2. Ինչպե՞ս են փոխվում հալման ջերմաստիճանները նյութերի NaCl, HCl, Cl₂, He շարքում ձախից աջ.

- 1) փոքրանում են 3) չեն փոխվում
2) մեծանում են 4) նախ մեծանում են, ապա փոքրանում

3. Համապատասխանեցրե՞ք նյութի բյուրեղավանդակի տեսակը և նյութի անվանումը.

<i>Բյուրեղավանդակի տեսակ</i>	<i>Նյութի անվանում</i>
ա) մոլեկուլային	1) քվարց
բ) ատոմային	2) սախարոզ
գ) իոնային	3) ոսկի
դ) մետաղային	4) կերակրի աղ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- 1) ա2, բ1, գ4, դ3 3) ա1, բ4, գ2, դ3
2) ա2, բ4, գ3, դ1 4) ա3, բ1, գ4, դ2

4. Ինչպե՞ս են անվանվում մասնիկների կարգավորված կառուցվածքով պինդ նյութերը.

- 1) իներտ 2) ամորֆ 3) բյուրեղային 4) ամֆոտեր

5. Ո՞ր հատկությունն է բնորոշ իոնային բյուրեղավանդակով քիմիական միացություններին.

- 1) լավ լուծելիություն ոչ բևեռային լուծիչներում
2) ցնդելիություն
3) հալման բարձր ջերմաստիճան
4) ցածր քիմիական ակտիվություն

6. Ո՞ր հատկությունն է բնորոշ ատոմային բյուրեղավանդակով քիմիական միացություններին.

- 1) կարծրություն և հալման բարձր ջերմաստիճան
2) կարծրություն և հալման ցածր ջերմաստիճան
3) փափկություն և հալման բարձր ջերմաստիճան
4) փափկություն և հալման ցածր ջերմաստիճան

7. Սովորական պայմաններում դժար թուր նյութերն ունեն ատոմային կառուցվածք.

- 1) պլաստիկ ձուլման, ամոնիակ, օզոն
- 2) ազոտ, մեթան, ածխածնի(IV) օքսիդ
- 3) գրաֆիտ, սիլան, ֆոսֆորի(V) օքսիդ
- 4) կարբորունդ, ալմաստ, սիլիցիումի(IV) օքսիդ

8. Յոդ պարունակող փակ սրվակում մանուշակագույն գոլորշու առկայությունը յոդի դժար հատկությամբ է պայմանավորված.

- 1) սուրլիմացմամբ
- 2) կոնդենսացմամբ
- 3) քայքայմամբ
- 4) օքսիդացմամբ

9. Համապատասխանեցրե՛ք նյութի բանաձևը և բյուրեղավանդակի տեսակը.

Նյութի բանաձև	Բյուրեղավանդակի տեսակ
ա) Au	1) մոլեկուլային
բ) KCl	2) իոնային
գ) C _{ալմաստ}	3) ատոմային
դ) Br ₂	4) մետաղային

Ո՞ր շարքի թուր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ3, գ2, դ1
- 2) ա4, բ1, գ3, դ2
- 3) ա4, բ2, գ3, դ1
- 4) ա4, բ2, գ1, դ3

10. Ըստ բյուրեղավանդակի հանգույցներում առկա մասնիկների տեսակի՝ ինչպիսի բյուրեղավանդակներ են հայտնի.

- | | |
|-----------------|---------------|
| ա) իոնային | ե) իզոմերային |
| բ) պոլիմերային | զ) ջրածնային |
| գ) մոլեկուլային | է) մետաղային |
| դ) ատոմային | |
- 1) բ, գ, դ, զ
 - 2) ա, գ, դ, է
 - 3) բ, դ, է, զ
 - 4) ա, գ, դ, է

11. Ո՞ր ռեակցիայի արգասիքն է առաջացնում իոնային բյուրեղավանդակ.

- | | |
|------------------------|--|
| 1) $H_2 + I_2 = 2HI$ | 3) $SO_2 + H_2O = H_2SO_3$ |
| 2) $NH_3 + HI = NH_4I$ | 4) $6CO_2 + 6H_2O = C_6H_{12}O_6 + 6O_2$ |

12. Հետևյալ նյութերից որո՞նք են ամորֆ.

- | | | | | |
|---------------|-----------|---------|----------|-----------|
| ա) պոլիէթիլեն | բ) ջրածին | գ) ջուր | դ) ապակի | ե) բենզոլ |
| 1) ա, բ | 2) բ, գ | 3) ա, դ | 4) դ, է | |

13. Համապատասխանեցրե՞ք նյութի բանաձևը և բյուրեղավանդակը.

Նյութի բանաձև	Բյուրեղավանդակ			
ա) H ₂ O				
բ) C _(գրաֆիտ)				
գ) HCN				
դ) Fe				
ե) KCl				

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ1, գ3, դ2, ե1
2) ա4, բ2, գ3, դ4, ե1

- 3) ա1, բ4, գ3, դ2, ե1
4) ա4, բ3, գ4, դ2, ե1

14. Պատասխանների ո՞ր շարքն է համապատասխանում մոլեկուլային բյուրեղավանդակով և 20 °C–ում հեղուկ ագրեգատային վիճակում գտնվող նյութերին.

- | | | | | | | | |
|---------------|---------------------|---------------|---------------|-----------|----------------------|-------------|-------------|
| ա) բենզոլ | բ) նատրիումի նիտրատ | գ) սոլյուոլ | դ) ջուր | ե) ջրածին | զ) ածխածնի(IV) օքսիդ | է) գլյուկոզ | ը) էթիլալիտ |
| 1) ա, բ, գ, դ | 2) բ, ե, գ, է | 3) ա, գ, դ, ը | 4) գ, դ, գ, է | | | | |

15. Պատասխանների ո՞ր շարքն է համապատասխանում իոնային բյուրեղավանդակով նյութերին.

- | | | | | | |
|---------------------|------------|------------------|---------------------|-----------------|--------------------|
| ա) ամոնիումի քլորիդ | բ) սախարոզ | գ) սպիտակ ֆոսֆոր | դ) կալիումի սուլֆատ | ե) ստեարինաթթու | զ) լիթիումի նիտրատ |
| 1) ա, գ, զ | 2) բ, դ, ե | 3) դ, ե, գ | 4) ա, դ, գ | | |

16. Պատասխանների ո՞ր շարքն է համապատասխանում մետաղային բյուրեղավանդակ առաջացնող նյութերին.

- | | | | | | |
|------------|------------------|------------|----------------------|----------|-----------|
| ա) ալմաստ | բ) պալմիտինաթթու | գ) երկաթ | դ) մանգանի(IV) օքսիդ | ե) բրոնզ | զ) պողպատ |
| 1) ա, գ, զ | 2) բ, դ, ե | 3) գ, ե, գ | 4) ա, դ, գ | | |

17. Ո՞ր պնդումներն են ճիշտ մոլեկուլային բյուրեղավանդակով նյութերի վերաբերյալ.

- ա) մոլեկուլներում առկա են կովալենտային կապեր
բ) մոլեկուլների միջև գործում են թույլ միջմոլեկուլային կապեր
գ) նյութերն օժտված են հալման բարձր ջերմաստիճանով
- 1) ա, գ 2) բ, գ 3) ա, բ, գ 4) ա, բ

**1.2.10. Պինդ նյութեր: Բյուրեղային և ամորֆ նյութեր:
Բյուրեղափանդակների տեսակներ**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	7	4	13	4
2	1	8	1	14	3
3	1	9	3	15	4
4	3	10	4	16	3
5	3	11	2	17	4
6	1	12	3		

1.2.11. Անօրգանական միացությունների հիմնական դասերը, դրանց ստացումը, դասակարգումը, անվանումը, հատկությունները և կիրառումը: Աղերի հիդրոլիզը

1. Հետևյալ նյութերից որի հետ չի փոխազդի ազոտական թթուն.

- 1) $\text{Cu}(\text{OH})_2$ 2) K_2CO_3 3) SiO_2 4) Cu

2. Ո՞ր շարքում են թթու աղեր առաջացնող թթուների բանաձևեր.

- 1) H_2CO_3 , H_3PO_4 , CH_3COOH 3) HCl , HNO_3 , H_3PO_4
2) H_2SO_3 , $\text{C}_2\text{H}_5\text{COOH}$, H_3PO_3 4) H_2SO_4 , H_2CO_3 , H_3PO_4

3. Ո՞ր պնդումներն են ճիշտ աղաթթվի վերաբերյալ.

- ա) փոխում է լակմուսի գույնը
բ) փոխազդում է ալյումինի օքսիդի հետ
գ) լուծում է պղինձը
դ) չեզոքացնում է նատրիումի հիդրօքսիդի լուծույթը

- 1) ա, գ 2) բ, գ 3) ա, գ, դ 4) ա, բ, դ

4. Ինչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա ծծմբական թթվի 9,8 % զանգվածային բաժին ունեցող 40 գ լուծույթը BaCl_2 -ի 10,4 % զանգվածային բաժին ունեցող 50 գ լուծույթի հետ խառնելիս.

- 1) 4,66 2) 5,825 3) 9,32 4) 20,97

5. Ո՞ր նյութի լուծույթի հետ Fe_2O_3 -ի փոխազդեցությունը չի համապատասխանի $\text{Fe}_2\text{O}_3 + 6\text{H}^+ = 2\text{Fe}^{3+} + 3\text{H}_2\text{O}$ կրճատ իոնային հավասարմանը.

- 1) H_2SO_4 2) HCl 3) HNO_3 4) CH_3COOH

6. Նատրիումի հիդրօքսիդի լուծույթին աստիճանաբար ավելացրել են ֆոսֆորական թթվի նոսր լուծույթ մինչև հնարավոր ռեակցիաների ավարտը: Ո՞ր շարքն է համապատասխանում լուծույթում աղերի առաջացման հաջորդականությանը.

- 1) Na_2HPO_4 , Na_3PO_4 , NaH_2PO_4 3) Na_3PO_4 , NaH_2PO_4 , Na_2HPO_4
2) Na_2HPO_4 , NaH_2PO_4 , Na_3PO_4 4) Na_3PO_4 , Na_2HPO_4 , NaH_2PO_4

7. Ո՞ր շարքում են համապատասխանաբար միահիմն, երկհիմն և եռահիմն թթուների բանաձևերը.

- 1) H_2CO_3 , CH_3COOH , H_3PO_4 3) H_2SO_3 , HCOOH , H_3PO_3
2) CH_3COOH , H_3PO_3 , H_3AsO_4 4) $\text{C}_3\text{H}_7\text{COOH}$, HClO_4 , H_2S

8. Ո՞ր նյութերի միջև է ընթանում չեզոքացման ռեակցիա.

- 1) արծաթի նիտրատ և կալիումի քլորիդ
- 2) ֆոսֆորական թթու և բարիումի հիդրօքսիդ
- 3) մանգանի(IV) օքսիդ և աղաթթու
- 4) կապարի քլորիդ և կալիումի սուլֆիդ

9. Հետևյալ օքսիդներից որո՞նք են թթվային.

- | | | | |
|---------------|---------------|--------------|------------|
| ա) SO_2 | գ) Na_2O | ե) CrO_3 | |
| բ) SO_3 | դ) MgO | զ) Mn_2O_7 | |
| 1) ա, բ, ե, գ | 2) բ, գ, դ, ե | 3) ա, բ, գ | 4) բ, դ, ե |

10. Ի՞նչ զանգվածով (գ) նստվածք կգոյանա 3,8 գ $MgCl_2$ պարունակող լուծույթին բավարար քանակով ալկալու լուծույթ ավելացնելիս.

- 1) 0,58
- 2) 1,16
- 3) 2,32
- 4) 23,2

11. Ո՞ր աղերի ջրային լուծույթի միջավայրն է թթվային.

- | | | | |
|-------------|-----------------|-------------------|------------|
| ա) Na_2S | գ) CH_3COOK | ե) $(NH_4)_2SO_4$ | |
| բ) $FeCl_3$ | դ) $Mg(NO_3)_2$ | զ) $LiCl$ | |
| 1) բ, դ, ե | 2) գ, դ, ե | 3) ա, գ, գ | 4) ա, բ, գ |

12. Որքան են 14,5 գ մագնեզիումի հիդրօքսիդ ստանալու համար ծախսված A և B նյութերի զանգվածները (գ) համապատասխանաբար՝ ըստ հետևյալ փոխարկումների. $Mg \xrightarrow{O_2} A \xrightarrow{HNO_3} B \xrightarrow{NaOH} Mg(OH)_2$.

- 1) 6 և 14, 5
- 2) 14 և 41
- 3) 10 և 37
- 4) 37 և 10

13. Ո՞ր շարքում են թթվի, հիմքի, ամֆոտեր և հիմնային օքսիդների բանաձևերը համապատասխանաբար.

- | | |
|---|---|
| 1) CH_4 , $NaOH$, Al_2S_3 , SO_3 | 3) H_2SO_4 , $Fe(OH)_3$, CO_2 , CO |
| 2) HBr , $Ca(OH)_2$, BeO , CaO | 4) HNO_3 , $NaOH$, Ag_2O , Mn_2O_7 |

14. Ո՞ր նյութերի փոխազդեցության արդյունքում առաջացող օքսիդն է օժտված առավել ուժեղ թթվային հատկություններով.

- | | |
|---------------------------------|---------------------------------------|
| 1) $HNO_3 + P_2O_5 \rightarrow$ | 3) $SiH_4 + O_2 \rightarrow$ |
| 2) $CuS + O_2 \rightarrow$ | 4) $Ca_3(PO_4)_2 + SiO_2 \rightarrow$ |

15. Երկու աղերի խառնուրդին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի լուծույթի ավելցուկ և տաքացրել: Նստվածքն առանձնացրել են, իսկ լուծույթում, բացի Na^+ և OH^- իոններից, հայտաբերել են Cl^- և SO_4^{2-} իոններ: Ո՞ր զույգ աղերն են եղել ելային խառնուրդում.

- | | |
|------------------------------|--------------------------------|
| 1) NH_4NO_3 և $KHSO_3$ | 3) $(NH_4)_2SO_4$ և NH_4NO_3 |
| 2) $CuSO_4$ և $[CH_3NH_3]Cl$ | 4) K_2SO_4 և $CuCl_2$ |

16. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և միացության դասը.

Նյութի անվանում	Միացության դաս
ա) կալիումի սուլֆատ	1) թթու
բ) կալիումի հիդրոկարբոնատ	2) չեզոք աղ
գ) ածխաթթու	3) թթու աղ
դ) պղնձի(I) օքսիդ	4) թթվային օքսիդ
	5) հիմնային օքսիդ


Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ2, գ1, դ5 2) ա1, բ2, գ5, դ3 3) ա2, բ3, գ1, դ5 4) ա3, բ2, գ1, դ4

17. Ո՞ր շարքի օքսիդների հիմնային հատկություններն են աստիճանաբար թուլանում.

- 1) K_2O , Li_2O , BeO 3) BaO , Na_2O , Cr_2O_3
 2) CaO , SrO , BaO 4) K_2O , ZnO , MnO

18. Որո՞նք են 1, 2, 3, 4 նյութերը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) H_2 , H_2SO_4 , HCl , KOH 3) O_2 , H_2SO_4 , $BaCl_2$, KOH
 2) H_2O , SO_3 , $NaCl$, $NaOH$ 4) O_2 , SO_3 , HCl , H_2O

19. Նշված քանակներով ո՞ր զույգ նյութերի փոխազդեցությունից կարող է գոյանալ հիմնային աղ.

- 1) 1 մոլ $Cu(OH)_2$ և 1 մոլ HCl 3) 1 մոլ $Mg(OH)_2$ և 1 մոլ H_2SO_4
 2) 1 մոլ $AlCl_3$ և 3 մոլ $NaOH$ 4) 1 մոլ $FeCl_3$ և 3 մոլ KOH

20. Համապատասխանեցրե՛ք օքսիդների բանաձևերը և դրանց դիպլածային անվանումները.

Բանաձև	Դիպլածային անվանում
ա) SiO_2	1) կարմիր երկաթաքար
բ) Fe_2O_3	2) քվարցային ավազ
գ) Cu_2O	3) կուպրիտ
դ) TiO_2	4) ռուտիլ
	5) կասիտերիտ
	6) բոքսիտ

- 1) ա2, բ1, գ5, դ6 2) ա2, բ1, գ3, դ4 3) ա1, բ2, գ3, դ4 4) ա1, բ2, գ5, դ6

21. Հետևյալ օքսիդներից որո՞նք են փոխազդում աղաթթվի հետ.

- ա) SO_3 գ) MgO ե) Al_2O_3 է) BaO
 բ) CO դ) ZnO զ) Mn_2O_7

- 1) ա, գ, դ, ե 2) գ, դ, ե, է 3) ա, գ, ե, զ 4) բ, դ, գ, է

22. Որո՞նք են սիլիցիումի այրումից ստացված նյութի և այդ նյութի ու NaOH-ի փոխազդեցության արգասիքի բանաձևերը.

- 1) $\text{SiO}_2, \text{Na}_2\text{O}$ 2) $\text{SiO}_2, \text{Na}_2\text{O}_2$ 3) $\text{SiO}_2, \text{Na}_2\text{SiO}_3$ 4) $\text{SiO}, \text{Na}_2\text{SiO}_3$

23. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ է փոխազդում կալիումի օքսիդը.

- 1) $\text{SO}_3, \text{HNO}_3, \text{Ba}(\text{OH})_2$ 3) $\text{P}_2\text{O}_5, \text{HCl}, \text{KOH}$
 2) $\text{H}_2\text{O}, \text{SO}_2, \text{H}_2\text{SO}_4$ 4) $\text{SiO}_2, \text{N}_2\text{O}_5, \text{Na}_2\text{O}$

24. Ո՞ր հիմքը կարող է ստացվել միացման ռեակցիայի արդյունքում.

- 1) CuOH 2) KOH 3) $\text{Cu}(\text{OH})_2$ 4) $\text{Fe}(\text{OH})_2$

25. Համապատասխանեցրե՞ք անհիդրիդների և թթուների բանաձևերը.

Անհիդրիդ	Թթու
ա) P_2O_5	1) HClO_2
բ) Cl_2O_7	2) HPO_3
գ) P_2O_3	3) HClO_4
դ) Cl_2O_5	4) HClO_3
	5) H_3PO_3

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշդ.

- 1) ա1, բ4, գ6, դ5 3) ա2, բ5, գ1, դ4
 2) ա2, բ3, գ5, դ4 4) ա3, բ4, գ1, դ5

26. Ո՞ր զույգ նյութերի փոխազդեցությունից հնարավոր չէ ստանալ թթու աղ.

- 1) NaOH և HNO_3 3) $\text{Ca}(\text{OH})_2$ և P_2O_5
 2) NaOH և CO_2 4) K_2SO_3 և H_2SO_3

27. Ո՞րն է կալիումի հիդրօքսիդի և ֆոսֆորի(V) օքսիդի փոխազդեցությունից ստացվող աղերի առավելագույն թիվը.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

28. Համապատասխանեցրե՞ք ռեակցիայի ելանյութերը վերջանյութի բանաձևերին.

Ելանյութեր	Վերջանյութ
ա) $\text{H}_3\text{PO}_4 + \text{NaOH}$	1) Na_2HPO_4
բ) $\text{H}_3\text{PO}_4 + 2\text{NaOH}$	2) NaH_2PO_4
գ) $\text{H}_3\text{PO}_4 + 3\text{NaOH}$	3) Na_3PO_4

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշդ.

- 1) ա2, բ1, գ3 2) ա1, բ2, գ3 3) ա3, բ2, գ1 4) ա3, բ1, գ2

29. Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի ելանյութերը և վերջանյութերի աղերի բանաձևերը.

Ելանյութեր	Վերջանյութ
ա) $H_3PO_3 + NaOH$	1) Na_2HPO_3
բ) $H_3PO_3 + 2NaOH$	2) NaH_2PO_3
	3) Na_3PO_3

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ1 2) ա1, բ2 3) ա2, բ3 4) ա3, բ1

30. Հետևյալ թթուներից որո՞նք են եռահիմն.

- ա) H_2SO_4 գ) H_3PO_3 ե) H_2S
 բ) H_3PO_4 դ) $H_4P_2O_7$ զ) H_3AsO_4
 1) ե, գ 2) բ, գ, դ 3) ա, բ, ե 4) բ, գ

31. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը.

Նստրիումի հիդրոսուլֆատի ջրային լուծույթի միջավայրը թթվային է, քանի որ _____ :

- 1) հիդրոսուլֆատ իոնը հիդրոլիզվում է՝ $(HSO_4)^- + H_2O \rightarrow H_2SO_4 + (OH)^-$
 2) հիդրոսուլֆատ իոնը դիսոցվում է՝ $(HSO_4)^- \rightarrow (SO_4)^{2-} + H^+$
 3) նատրիումի իոնը հիդրոլիզվում է՝ $Na^+ + H_2O \rightarrow NaOH + H^+$
 4) $NaHSO_4$ -ը դիսոցվում է՝ $NaHSO_4 \rightarrow Na^+ + (HSO_4)^-$

32. Որո՞նք են հիմնային օքսիդների բանաձևեր.

- ա) BaO գ) ZnO ե) CaO
 բ) Cr_2O_3 դ) Na_2O զ) CrO_3
 1) ա, բ, գ 2) բ, գ, զ 3) ա, դ, ե 4) դ, ե, գ

33. Որո՞նք են երկդիմի (ամֆոտեր) օքսիդների բանաձևեր.

- ա) CO գ) ZnO ե) CaO
 բ) Cr_2O_3 դ) Na_2O զ) BeO
 1) ա, բ, գ 2) բ, գ, զ 3) ա, դ, ե 4) դ, ե, գ

34. Հետևյալ աղերից որո՞նք են ջրային լուծույթներում ենթարկվում հիդրոլիզի.

- ա) NaCl գ) KNO_3 ե) Na_2CO_3
 բ) $CuCl_2$ դ) Na_2S զ) $Ca(NO_3)_2$
 1) ա, բ, գ 2) բ, գ, զ 3) ա, դ, ե 4) բ, դ, ե

35. Ո՞ր շարքում են հաջորդաբար հիմնային օքսիդի, թթվային օքսիդի և աղ չառաջացնող օքսիդի բանաձևեր.

- | | |
|---|--|
| 1) BaO, Al ₂ O ₃ , CO | 3) Na ₂ O, ZnO, P ₂ O ₅ |
| 2) K ₂ O, SO ₃ , NO | 4) MgO, SO ₂ , Mn ₂ O ₇ |

36. Ո՞ր շարքի բոլոր օքսիդներն են աղ առաջացնող.

- | | |
|--|--|
| 1) Al ₂ O ₃ , CuO, SiO | 3) P ₂ O ₅ , SO ₃ , NO |
| 2) MgO, SO ₂ , N ₂ O | 4) MgO, SO ₂ , Mn ₂ O ₇ |

37. Ո՞ր նյութի հետ չի փոխազդում նատրիումի հիդրօքսիդը.

- | | | | |
|------------------------|--------|-----------------------------------|------------------------|
| 1) Al(OH) ₃ | 2) ZnO | 3) H ₂ SO ₄ | 4) Ba(OH) ₂ |
|------------------------|--------|-----------------------------------|------------------------|

38. Ո՞ր շարքում են միայն աղերի բանաձևեր.

- | | |
|--|--|
| 1) CuSO ₄ , H ₂ SO ₃ , KHSO ₄ | 3) KHSO ₄ , HClO ₃ , NaOH |
| 2) BaSO ₃ , Ba(HCO ₃) ₂ , KNaSO ₄ | 4) Na ₂ S, Fe ₂ (SO ₄) ₃ , CCl ₄ |

39. Ո՞րն է եռահիմն թթվի բանաձևը.

- | | | | |
|-------------------------|-----------------------------------|-----------------------------------|-----------------------------------|
| 1) CH ₃ COOH | 2) H ₃ PO ₄ | 3) H ₂ SO ₃ | 4) H ₃ PO ₃ |
|-------------------------|-----------------------------------|-----------------------------------|-----------------------------------|

40. Ո՞ր զույգի հիդրօքսիդներից առաջինն է օժտված ավելի ուժեղ հիմնային հատկություններով.

- | | |
|--|--|
| 1) Fe(OH) ₃ և Fe(OH) ₂ | 3) Mg(OH) ₂ և Ba(OH) ₂ |
| 2) Cu(OH) ₂ և Ca(OH) ₂ | 4) Cr(OH) ₂ և Cr(OH) ₃ |

41. Ո՞ր օքսիդները կարող են ցուցաբերել միայն հիմնային հատկություններ.

- | | | | |
|---------|---------|---------|---------------------|
| ա) MnO | բ) ZnO | գ) BaO | դ) CrO ₃ |
| 1) ա, բ | 2) ա, դ | 3) բ, դ | 4) ա, գ |

42. Ո՞ր նյութերի հետ է CaO-ն փոխազդում, իսկ P₂O₅-ը՝ ոչ.

- | | | | |
|----------------|------------------------|---------|---------|
| ա) ջուր | գ) նատրիումի հիդրօքսիդ | | |
| բ) քլորաջրածին | դ) ածխածնի(IV) օքսիդ | | |
| 1) ա, բ | 2) բ, գ | 3) ա, դ | 4) բ, դ |

43. 0,02 մոլ Ba(OH)₂-ի և 0,04 մոլ H₃PO₄-ի փոխազդեցությունից ինչ զանգվածով (գ) աղ կգոյանա.

- | | | | |
|----------|---------|---------|---------|
| 1) 12,02 | 2) 6,62 | 3) 4,66 | 4) 9,32 |
|----------|---------|---------|---------|

44. Օքսիդների զույգի ջրային լուծույթներում լակմուրը կստանա կապույտ գունավորում.

- 1) BaO և Na₂O
2) N₂O₅ և CuO
3) CuO և ZnO
4) BaO և CuO

45. Ո՞ր նյութերի փոխազդեցությունից թթու կգոյանա.

- 1) SO₃ և H₂O
2) SiO₂ և H₂O
3) N₂O և H₂O
4) CO և H₂

46. Ո՞ր նյութերը կփոխազդեն ամոնիումի սուլֆատի հետ.

- 1) KCl և KOH
2) Ba(OH)₂ և NaOH
3) HCl և Ba(NO₃)₂
4) KNO₃ և CaCl₂

47. Ո՞ր թթուն է օքսիդավերականգնման ռեակցիաներում ցուցաբերում միայն օքսիդիչ հատկություններ.

- 1) HMnO₄ 2) H₂SO₃ 3) HNO₂ 4) H₂S

48. Ո՞ր շարքի բոլոր նյութերն են փոխազդում նոսր H₂SO₄-ի հետ.

- 1) Al, CaO, Cu
2) Al₂O₃, Fe(OH)₃, Zn
3) KNO₃, BaCl₂, Na₂CO₃
4) CH₃COOK, Ba(OH)₂, Ag

49. Ո՞ր շարքում են միայն չեզոք աղերի բանաձևեր.

- 1) CuCl₂, Na₂CO₃, KHCO₃
2) K₂CO₃, NaCl, (CuOH)Cl
3) Ca₃(PO₄)₂, (CuOH)₂CO₃, Fe(NO₃)₃
4) K₃PO₄, Ba(NO₃)₂, FeCl₃

50. Ի՞նչ թվով չեզոք աղեր կարող են ստացվել KCl, Na₃PO₄, Ba(OH)₂ և AgNO₃ նյութերի զույգ առ զույգ փոխազդեցությունից.

- 1) 6 2) 5 3) 4 4) 3

1.2.11. Անօրգանական միացությունների հիմնական դասերը, դրանց ստացումը, դասակարգումը, անվանումը, հատկությունները և կիրառումը: Աղերի հիդրոլիզը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	18	3	35	2
2	4	19	1	36	4
3	4	20	2	37	4
4	2	21	2	38	2
5	4	22	3	39	2
6	4	23	2	40	4
7	2	24	2	41	4
8	2	25	2	42	4
9	1	26	1	43	2
10	3	27	3	44	1
11	1	28	1	45	1
12	3	29	1	46	2
13	2	30	4	47	1
14	1	31	2	48	2
15	2	32	3	49	4
16	3	33	2	50	1
17	1	34	4		

ԳԼՈՒԽ 2. ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ


2.1. ՄԵՏԱՂՆԵՐ

2.1.1. Մետաղական կապ: Մետաղներ: I–III խմբի գլխավոր ենթախմբի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը

1. Մետաղները հիմնականում ո՞ր տարրերի շարքին են դասվում.

- 1) s, p, d 2) s, p, f 3) p, d, f 4) s, d, f

2. Նշվածներից որո՞նք են X, Y, Z ազդանյութերը փոխարկումների հետևյալ շղթայում համապատասխանաբար.



- 1) Ag, H₂SO₄(լիստ), K₂S 3) Zn, H₂SO₄(տսր), H₂S
2) Fe, H₂SO₄(լիստ), Na₂S 4) Fe, H₂SO₄(տսր), (NH₄)₂S

3. Հետևյալ մետաղներից որի՞ ատոմային շառավիղն է առավել մեծ.

- 1) Cs 2) Li 3) K 4) Na

4. Ի՞նչ զանգվածով (գ) աղ է գոյացել ցինկի և ծծմբական թթվի նոսր լուծույթի փոխազդեցությունից, եթե անջատվել է 2,8 լ (ն. պ.) գազ.

- 1) 2,0125 2) 4,025 3) 10,0625 4) 20,125

5. Հետևյալ պարզ նյութերից որո՞նք են առաջացնում մետաղական բյուրեղավանդակ.

- ա) Li բ) Ar գ) Fe դ) S ե) F₂ զ) K
1) բ, դ, զ 2) ա, գ, դ 3) ա, գ, զ 4) բ, գ, ե

6. Ո՞ր շարքի տարրերն են դասավորված ըստ մետաղական հատկությունների թուլացման.

- 1) Mg, Ca, Ba 2) Na, Mg, Al 3) K, Ca, Cs 4) Ag, Hg, Cu

7. Ո՞ր զույգի մետաղները սովորական պայմաններում կփոխազդեն ջրի հետ.

- 1) Zn և Li 2) Mg և Ba 3) Na և Ca 4) Fe և Li

8. Հետևյալ նյութերից որի՞ ջրային լուծույթը չի կարելի պահել ցինկապատ տարայում.

- 1) Na₂SO₄ 2) KCl 3) KNO₃ 4) NH₄Cl

9. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Տվյալ մեքտադի ֆիզիկական հատկությունները պայմանավորված են _____ :
_____ :

- 1) միջուկի դրական լիցքով
- 2) մետաղային կապով
- 3) պարբերական համակարգում զբաղեցրած դիրքով
- 4) արտաքին էլեկտրոնային շերտի կառուցվածքով

10. Արծաթի նիտրատի ջրային լուծույթից հետևյալ մետաղներից ո՞րը չի կարող դուրս մղել մետաղական արծաթ.

- 1) ցինկ
- 2) երկաթ
- 3) նիկել
- 4) ոսկի

11. Հետևյալ մետաղներից ո՞րը կարող է փոխազդել և՛ աղաթթվի, և՛ կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի հետ.

- 1) բերիլիում
- 2) բարիում
- 3) մագնեզիում
- 4) երկաթ

12. Ո՞ր նյութն է խիտ ազոտական թթվի հետ փոխազդեցությունից որոշ մետաղների մակերեսին առաջացած պաշտպանիչ թաղանթը.

- 1) հիդրօքսիդ
- 2) նիտրատ
- 3) օքսիդ
- 4) նիտրիտ

13. a գ երկաթի, b գ պղնձի և c գ ցինկի փոշիների խառնուրդին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի լուծույթի ավելցուկ և թողել մինչև ընթացող ռեակցիայի(ների) ավարտը: Հնարավոր ռեակցիայի(ների) ավարտից հետո լուծույթը ֆիլտրել են, նստվածքը՝ չորացրել և նորից կշռել: Որքան է պինդ մնացորդի զանգվածը (գ).

- 1) $b + c$
- 2) $a + c$
- 3) $a + b + c$
- 4) $a + b$

14. Պղնձի և ալյումինի փոշիների որոշակի զանգվածով խառնուրդին ավելացրել են a գ աղաթթու: Որոշ ժամանակ անց՝ նստվածքը հեռացնելուց հետո, լուծույթի զանգվածը կազմել է b գ: Ինչպե՞ս են փոխհարաբերվում այդ զանգվածները.

- 1) $a = b$
- 2) $b > a$
- 3) $a > b$
- 4) $a \gg b$

15. Ո՞ր շարքում են միայն մետաղական տարրերի քիմիական նշաններ.

- 1) Cs, Be, B
- 2) K, Ca, Sr
- 3) H, Li, Na
- 4) Bi, W, F

16. Հետևյալ մետաղներից որի՞ իոնացման էներգիան է առավել մեծ.

- 1) Li
- 2) Na
- 3) Mg
- 4) K

17. Ո՞ր պնդումն է սխալ տարրերի հետևյալ՝ Ba–Sr–Ca–Mg, շարքի վերաբերյալ.

- 1) ատոմային շառավիղները փոքրանում են
- 2) էլեկտրաբացասականությունը մեծանում է
- 3) իոնացման էներգիան մեծանում է
- 4) ատոմների արտաքին էներգիական մակարդակում էլեկտրոնների թիվը փոխվում է

18. Ո՞ր շարքի մետաղներն են դասավորված ըստ ջրային լուծույթում վերականգնիչ հատկությունների ուժեղացման.

- 1) Na, K, Li
- 2) Li, Na, K
- 3) K, Na, Li
- 4) Na, Li, K

19. Հետևյալ մետաղներից որի ստանդարտ էլեկտրոդային պոտենցիալի արժեքն է առավել մեծ.

- 1) Al
- 2) Fe
- 3) Pb
- 4) Cu

20. Ո՞ր պնդումն է սխալ ստանդարտ էլեկտրոդային պոտենցիալների շարքում մետաղների դիրքի վերաբերյալ.

- 1) որքան փոքր է մետաղի էլեկտրոդային պոտենցիալի արժեքը, այնքան հեշտ է էլեկտրոն կորցնում
- 2) որքան մեծ է մետաղի էլեկտրոդային պոտենցիալի արժեքը, այնքան դրա իոնը դժվար է էլեկտրոն ձեռք բերում
- 3) յուրաքանչյուր մետաղ (բացի ակալիական և հողալկալիական մետաղներից) աղերի ջրային լուծույթներից դուրս է մղում իրենից ավելի մեծ էլեկտրոդային պոտենցիալի արժեք ունեցող մետաղը
- 4) որքան փոքր է մետաղի էլեկտրոդային պոտենցիալի արժեքը, այնքան ավելի ուժեղ վերականգնիչ է

21. Ո՞ր շարքի բոլոր մետաղներն են բնության մեջ հանդիպում ազատ վիճակում.

- 1) Cu, Na, K
- 2) Fe, Al, Na
- 3) Cu, Au, Ag
- 4) V, Ni, Mg

22. Հետևյալ նյութերից որը չի փոխազդի մետաղական մագնեզիումի հետ.

- 1) խիտ ազոտական թթուն
- 2) նատրիումի հիդրօքսիդը
- 3) նոսր ծմբական թթուն
- 4) պղնձի(II) սուլֆատը

23. Քանի կենտ էլեկտրոն է առկա համապատասխանաբար Mn^{2+} և Fe^{3+} իոնների 3d ենթամակարդակներում.

- 1) 25 և 26
- 2) 5 և 4
- 3) 5 և 5
- 4) 4 և 5

24. Ինչպե՞ս են փոխվում d–տարրերի օքսիդների և համապատասխան հիդրատների հատկությունները մետաղի օքսիդացման աստիճանի մեծացմանը զուգընթաց.

- 1) հիմնային հատկություններն ուժեղանում են
- 2) տեղի է ունենում ոչ օրինաչափ անցում հիմնային հատկություններից թթվայինի

3) հիմնային հատկություններն ամֆոտերության վրայով անցնում են թթվայինի

4) հիմնային հատկությունները կտրուկ անցնում են թթվայինի

25. Ո՞ր շարքի օքսիդներն են դասավորված ըստ թթվային հատկությունների ուժեղացման.

1) Na_2O , Al_2O_3 , CrO_3

3) MgO , Na_2O , Al_2O_3

2) CrO_3 , Cr_2O_3 , CrO

4) Fe_2O_3 , FeO , Al_2O_3

26. Ո՞ր զույգի իոններն ունեն վալենտային շերտի $3d^{10}4s^0$ էլեկտրոնային բանաձև.

1) K^+ , Ca^{2+}

2) Cu^+ , Zn^{2+}

3) Cu^+ , K^+

4) Cu^{2+} , Zn^{2+}

27. Հետևյալ շարքերից որո՞ւմ են մետաղները դասավորված ըստ ատոմային շառավիղների մեծացման.

1) Na, Mg, Al

2) K, Na, Li

3) Mg, Na, K

4) K, Sr, Mg

28. Ո՞ր պնդումն է ճիշտ.

ա) կովալենտային կապը տեղայնացված է երկու ատոմների միջև.

բ) մետաղային կապը տեղայնացված չէ և առկա է մետաղի ամբողջ բյուրեղավանդակում

1) ճիշտ է միայն ա–ն

3) ճիշտ է միայն բ–ն

2) երկուսն էլ ճիշտ են

4) երկուսն էլ սխալ են

29. Ո՞ր շարքի մետաղներն են դասավորված ըստ ատոմային շառավիղների փոքրացման.

1) Mg, Na, Al

2) Na, K, Li

3) Mg, Na, K

4) K, Ca, Mg

30. Ինչպե՞ս է փոխվում կատիոնների շառավիղը Na^+ , Mg^{2+} , Al^{3+} շարքում.

1) փոքրանում է, ապա մեծանում

3) մեծանում է, ապա փոքրանում

2) փոքրանում է

4) մեծանում է

31. Ո՞ր պնդումն է ճիշտ մետաղների վերաբերյալ.

1) արտաքին էներգիական մակարդակներում առկա են քիչ թվով էլեկտրոններ

2) արտաքին էներգիական մակարդակներում առկա են մեծ թվով էլեկտրոններ

3) արտաքին էներգիական մակարդակներում առկա են քիչ թվով դատարկ օրբիտալներ

4) տվյալ պարբերությունում առավել փոքր ատոմային շառավիղներով տարրերն են

32. Ո՞ր շարքի բոլոր մետաղները սենյակային ջերմաստիճանում կփոխազդեն խիտ ծծմբական թթվի հետ.

1) Al, Ni, Be

2) Sn, Cu, Fe

3) Ba, Mg, Zn

4) Ca, Al, Sr

33. Հետևյալ աղերից որի ջրային լուծույթի մեջ ընկղմելիս երկաթե թիթեղի զանգվածը կմեծանա.

- 1) CuSO_4 2) ZnCl_2 3) MgBr_2 4) CaCl_2

34. Ո՞րն է առավել թեթև մետաղին համապատասխան օքսիդի բանաձևը.

- 1) Li_2O 2) PbO_2 3) Al_2O_3 4) CaO

35. Ո՞ր պնդումներն են ճիշտ IV պարբերության d-տարրերի վերաբերյալ.

- ա) միացություններում ցուցաբերում են հաստատուն օքսիդացման աստիճան
 բ) միացություններում հիմնականում ցուցաբերում են փոփոխական օքսիդացման աստիճան
 գ) դրանց օքսիդներն ու հիդրօքսիդները միայն ամֆոտեր են
 դ) 4s ենթամակարդակում հիմնականում ունեն երկու էլեկտրոն
 1) ա, բ 2) ա, գ 3) բ, դ 4) գ, դ

2.1.1. Մետաղական կապ: Մետաղներ: I-III խմբի գլխավոր ենթախմբի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	13	4	25	1
2	2	14	2	26	2
3	1	15	2	27	3
4	4	16	3	28	2
5	3	17	4	29	4
6	2	18	1	30	2
7	3	19	4	31	1
8	4	20	2	32	3
9	2	21	3	33	1
10	4	22	2	34	1
11	1	23	3	35	3
12	3	24	3		

2.1.2. Ալկալիական մետաղներ, ֆիզիկական և քիմիական հատկությունները

- Ո՞ր նյութի ձևով են հիմնականում հանդիպում ալկալիական մետաղները բնության մեջ.
 - կարբոնատների
 - օքսիդների
 - հիդրօքսիդների
 - քլորիդների
- Ո՞ր շարքի տարրերի էլեկտրոնային բանաձևերն են համապատասխանորեն [Kr] 5s¹; [Xe] 6s¹; [Ar] 4s¹.
 - Rb, Cs, K
 - Cs, K, Rb
 - Rb, K, Na
 - Na, K, Li
- Քանի՞ պրոտոն է պարունակում 7 գ լիթումը.
 - 6,02 · 10²³
 - 7 · 10²³
 - 1,806 · 10²⁴
 - 4,214 · 10²⁴
- Ո՞ր պարզ նյութը սենյակային ջերմաստիճանում կարող է միանալ մոլեկուլային ազոտին.
 - Li
 - Na
 - C
 - P
- Մետաղական լիթումի խտությունը 20 °C-ում 0,534 գ/սմ³ է: Ինչ ծավալ (սմ³) կզբաղեցնեն նշված ջերմաստիճանում լիթումի 6,02 · 10²³ թվով ատոմները.
 - 3,738
 - 11,27
 - 13,11
 - 26,22
- Որքան է քիմիական միացության զանգվածային բաժինը (%) լուծույթում, որը ստացվել է 14 գ լիթումի և 88 գ ջրի փոխազդեցությունից.
 - 47,06
 - 14,00
 - 48,98
 - 48,00
- Ո՞րն է $\text{HCO}_3^- + \text{OH}^- \rightarrow$ ուրվագրին համապատասխանող կրճատ իոնական հավասարման աջ մասում գոյացող իոնի մոլային զանգվածը.
 - 18
 - 44
 - 60
 - 61
- Ո՞ր հատկությունն է բնորոշ ալկալիական մետաղներին.
 - ուժեղ վերականգնիչներ են
 - ուժեղ օքսիդիչներ են
 - օժտված են վերօքս երկակիությամբ
 - թույլ վերականգնիչներ են
- Ինչպե՞ս կփոխվի կալիումի քլորիդի մոլային բաժինը կալիումի քլորիդի և Բերթոլեյի աղի հավասարամոլային խառնուրդը բաց անոթում MnO₂ կատալիզատորի առկայությամբ տաքացնելիս.
 - կմեծանա 100%-ով
 - կփոքրանա 50%-ով
 - կփոքրանա 100%-ով
 - կմեծանա 50%-ով

10. Նատրիումի քլորիդի և կալիումի քլորատի հավասարամոլային σ գ զանգվածով խառնուրդը տաքացրել են բաց անոթում (առանց կատալիզատորի) և ստացել b գ պինդ մնացորդ: Ո՞րն է զանգվածների փոխհարաբերությունը.

- 1) $a > b$ 2) $a = b$ 3) $b > a$ 4) $b \gg a$

11. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին կստացվի 10 % խառնուկ պարունակող 61,25 գ Բերթոլեյի աղը MnO_2 կատալիզատորի առկայությամբ տաքացնելիս.

- 1) 6,72 2) 15,12 3) 22,4 4) 33,6

12. Ո՞ր նյութի ջրային լուծույթի էլեկտրոլիզի ընթացքում է տեղի ունենում ջրի կաթոդային վերականգնում.

- 1) $AgNO_3$ 2) K_2SO_4 3) $CuSO_4$ 4) $CuCl_2$

13. Ո՞ր շարքի բոլոր նյութերն են փոխազդում կալիումի հիդրօքսիդի լուծույթի հետ.

- 1) $FeCl_3, KHS, NH_4NO_3$ 3) $CH_4, K_2S, Al(OH)_3$
2) $CuO, FeCl_2, Zn(OH)_2$ 4) $NO_2, H_2S, CaCO_3$

14. Հետևյալ ռեակցիաներից ո՞րն է ընթանում MnO_2 կատալիզատորի առկայությամբ.

- 1) $2NaNO_3 = 2NaNO_2 + O_2$ 3) $2KClO_3 = 2KCl + 3O_2$
2) $4KClO_3 = KCl + 3KClO_4$ 4) $2KMnO_4 = K_2MnO_4 + MnO_2 + O_2$

15. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Նատրիումի հիդրօքսիդի արդյունաբերական ստացման եղանակ է նատրիումի քլորիդի _____:

- 1) և բարիտաջրի փոխազդեցությունը 3) և կրաջրի փոխազդեցությունը
2) հալույթի էլեկտրոլիզը 4) ջրային լուծույթի էլեկտրոլիզը

16. Նատրիումի ո՞ր միացությունից կարելի է ստանալ նատրիումի օքսիդ.

- 1) հիդրօքսիդի ջերմային քայքայումից
2) նիտրատի ջերմային քայքայումից
3) հիդրօքսիդի հալույթի էլեկտրոլիզից
4) պերօքսիդի և մետաղական նատրիումի փոխազդեցությունից

17. Ո՞ր միացության և՛ կատիոնը, և՛ անիոնն ունեն նույն էլեկտրոնային բանաձևը.

- 1) LiF 2) NaF 3) $NaCl$ 4) KBr

18. Հետևյալ նյութերից որո՞նց հետ է փոխազդում նատրիումը.

- ա) Cl_2 բ) H_2O գ) S դ) C_2H_6 ե) HCl զ) C_6H_6
1) ա, բ, գ, դ 2) բ, գ, դ, ե 3) գ, դ, ե, զ 4) ա, բ, գ, ե

19. Ո՞ր մեծությունն է նույնը ավալիական մետաղների ատոմներում.

- 1) էներգիական մակարդակների թիվը
- 2) երկրորդ էներգիական մակարդակում էլեկտրոնների թիվը
- 3) վալենտային էլեկտրոնների թիվը
- 4) պրոտոնների ու էլեկտրոնների գումարը

20. Հետևյալ օքսիդներից ո՞րը կփոխազդի ավալու հետ.

- 1) N_2O
- 2) Al_2O_3
- 3) CaO
- 4) Ag_2O

21. Ո՞ր նյութն(երն) է(են) ստացվում $FeCl_2$ և $AlCl_3$ խառնուրդը ավելցուկով կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթով մշակելիս և ստացված նստվածքն առանց օդի մուտքի շիկացնելիս.

- 1) FeO և Al_2O_3
- 2) Al_2O_3 և Fe_2O_3
- 3) FeO
- 4) Fe_2O_3

22. Հետևյալ նյութերից որո՞նք են փոխազդում նատրիումի հիդրօքսիդի հետ՝ երկու տարբեր թթուների աղեր առաջացնելով.

- | | | | | | |
|-----------|-----------|-----------|-----------|---------|------------|
| ա) Cl_2 | բ) CO_2 | գ) NO_2 | դ) N_2O | ե) CO | զ) SiO_2 |
| 1) ա, բ | 2) գ, դ | 3) ե, զ | 4) ա, գ | | |

23. Ո՞ր նյութն է գոյանում նատրիումի օքսիդի և երկաթի(II) սուլֆատի ջրային լուծույթի փոխազդեցությունից ստացված նստվածքն առանց օդի մուտքի շիկացնելիս.

- 1) FeO
- 2) $NaOH$
- 3) $Fe(OH)_2$
- 4) Fe_2O_3

24. Ո՞ր աղի ջրային լուծույթում լակմուսը չի փոխի գույնը.

- 1) K_2S
- 2) KCN
- 3) KNO_3
- 4) KNO_2

25. Հետևյալ նյութերից որի՞ հազեցած ջրային լուծույթի և մագնեզիումի տաշեղների փոխազդեցությունից կանջատվի ջրածին.

- 1) KOH
- 2) $KHSO_4$
- 3) K_2CO_3
- 4) K_2SO_3

26. Ո՞րն է արդյունաբերական եղանակով նատրիումի հիդրօքսիդի ստացման ռեակցիայի հավասարումը.

- 1) $Na_2SO_4 + Ba(OH)_2 = 2NaOH + BaSO_4$
- 2) $Na_2CO_3 + Ca(OH)_2 = 2NaOH + CaCO_3$
- 3) $2Na_2O_2 + 2H_2O = 4NaOH + O_2$
- 4) $2NaCl + 2H_2O = H_2 + Cl_2 + 2NaOH$

27. Ո՞րն է $X + {}^1_0n \rightarrow {}^3_1H + {}^4_2He$ միջուկային ռեակցիայում փոխարկման ենթարկված X իզոտոպը.

- 1) 6_3Li 2) 7_3Li 3) 7_4Be 4) 7_6Be

28. Կալիումի դ՛ր միացությունից և ինչ եղանակով են արդյունաբերության մեջ ստանում այդ մետաղը.

- 1) քլորիդի լուծույթի էլեկտրոլիզով
 2) նիտրատի ջերմային քայքայումով
 3) քլորիդի լուծույթի և նատրիումի փոխազդեցությամբ
 4) հիդրօքսիդի հալույթի և նատրիումի գոլորշու փոխազդեցությամբ

29. Լիթիումի ատոմի վալենտային էլեկտրոնը գլխավոր և օրբիտալային քվանտային թվերի ինչ արժեքներով է բնութագրվում.

- 1) 2 և 0 2) 2 և 2 3) 1 և 0 4) 2 և 1

30. Ո՞ր ուրվագրերը չեն համապատասխանում $H^+ + (OH)^- = H_2O$ կրճատ իոնային հավասարմանը.

- ա) $NaOH + CH_3COOH \rightarrow$ գ) $LiOH + HBr \rightarrow$
 բ) $KOH + HClO_4 \rightarrow$ դ) $NH_4OH + HCl \rightarrow$
 1) ա, դ 2) ա, գ 3) բ, գ 4) գ, դ

31. Համապատասխանեցրե՛ք աղի անվանումը և ջրային լուծույթի միջավայրը.

Անվանում	Միջավայր
ա) ցինկի սուլֆատ	1) թթվային
բ) կալիումի նիտրատ	2) հիմնային
գ) կալիումի ֆտորիդ	3) չեզոք

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշդ.

- 1) ա1, բ3, գ1 2) ա3, բ1, գ2 3) ա1, բ3, գ2 4) ա3, բ2, գ1

32. Հետևյալ նյութերից որո՞նք կփոխազդեն ջրի հետ՝ առաջացնելով NaOH.

- ա) NaH բ) Na_2SO_3 գ) Na դ) Na_2CO_3
 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, գ

33. Ո՞ր աղի հալույթի էլեկտրոլիզից ջրածին կստացվի.

- 1) $NaHCO_3$ 2) $KHSO_3$ 3) KH 4) $KHCO_3$

34. Ո՞ր իոնի օքսիդիչ հատկությունն է ջրային լուծույթում առավել ուժեղ արտահայտված.

- 1) Li^+ 2) Ag^+ 3) Rb^+ 4) K^+

35. Քանի պրոտոն է առկա ատոմի միջուկում 19 պրոտոն պարունակող տարրի օքսիդի մեկ մոլեկուլում.
- 1) 23 2) 21 3) 46 4) 27
36. Ռեակցիաների ո՞ր տեսակն է ներկայացված $2\text{NaHCO}_3 = \text{Na}_2\text{CO}_3 + \text{CO}_2 + \text{H}_2\text{O}$ հավասարումով.
- 1) փոխանակման 3) տեղակալման
2) քայքայման 4) միացման
37. Հետևյալ նյութերից որո՞նք կփոխազդեն NaOH-ի հետ ջրային լուծույթում.
- ա) NaNO_3 բ) KHCO_3 գ) BaO դ) CuSO_4
- 1) ա, գ 2) բ, դ 3) բ, գ 4) ա, բ
38. Ի՞նչ նյութեր են ստացվում ալկալիական մետաղների և սպիրտների փոխազդեցությունից.
- 1) հիդրօքսիդ և եթեր 3) ալկոհոլատ և ջրածին
2) հիդրիդ և ալդեհիդ 4) էթեր և ջրածին
39. Ո՞ր պնդումը ճիշտ չէ քիմիական տարրերի պարբերական համակարգի I խմբի գլխավոր ենթախմբի տարրերի վերաբերյալ.
- 1) վերականգնիչներ են
2) հեշտությամբ վերցնում են էլեկտրոն՝ ցուցաբերելով օքսիդիչ հատկություն
3) ակտիվ մետաղներ են
4) օժտված են իոնացման էներգիայի համեմատաբար փոքր արժեքներով
40. Հիմնականում ո՞ր նյութն է ստացվում մետաղական նատրիումը թթվածնի մթնոլորտում այրելիս.
- 1) Na_2O 2) Na_2O_2 3) NaO_2 4) $(\text{NaO}_2)_n$
41. Հետևյալ մետաղներից ո՞րն է միացություններում ցուցաբերում հաստատուն օքսիդացման աստիճան.
- 1) Cr 2) Mn 3) Na 4) Fe
42. Ո՞ր շարքի նյութերն են առաջանում ջրի և մետաղական կալիումի փոխազդեցությունից.
- 1) $\text{K}_2\text{O}_2, \text{H}_2\text{O}$ 2) $\text{KOH}, \text{H}_2\text{O}$ 3) $\text{K}_2\text{O}, \text{H}_2$ 4) KOH, H_2
43. Ի՞նչ զանգվածով (գ) պոտաշը կարող է չեզոքացնել այնքան աղաթթու, որքան չեզոքացնում է 53 գ նատրիումի կարբոնատը.
- 1) 53 2) 69 3) 138 4) 13,8

44. Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի մետաալյումինատ կառաջանա 20 գ նատրիումի հիդրօքսիդի և ավելցուկով վերցրած ալյումինի օքսիդի միահալումից.

1) 20,5

2) 41

3) 48

4) 56

2.1.2. Ալկալիական մետաղներ, ֆիզիկական և քիմիական հատկությունները

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	16	4	31	3
2	1	17	2	32	4
3	3	18	4	33	3
4	1	19	3	34	2
5	3	20	2	35	3
6	4	21	3	36	2
7	3	22	4	37	2
8	1	23	1	38	3
9	1	24	3	39	2
10	2	25	2	40	2
11	2	26	4	41	3
12	2	27	1	42	4
13	1	28	4	43	2
14	3	29	1	44	2
15	4	30	1		

**2.1.3. Հողալկալիական մետաղներ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները:
Ջրի կոշտությունը և դրա վերացման եղանակները**

1. Ինչ ծավալով (մլ, ն. պ.) գազ կանջատվի 0,8 գ կալցիումի և բավարար քանակով ջրի փոխազդեցությունից.

- 1) 448 2) 224 3) 112 4) 56

2. Հետևյալ համակարգերից որի անվանումն է կրաջուր.

- 1) CaCl_2 -ի ջրային լուծույթի
2) CaCO_3 -ի ջրային սուսպենզիայի
3) Ca(OH)_2 -ի ջրային սուսպենզիայի
4) Ca(OH)_2 -ի թափանցիկ ջրային լուծույթի

3. Ինչ զանգվածով (գ) նստվածք կգոյանա 74 գ մագնեզիումի նիտրատ պարունակող ջրային լուծույթին 0,8 մոլ լիթիումի հիդրօքսիդ ավելացնելիս.

- 1) 11,6 2) 23,2 3) 29,0 4) 46,4

4. Որքան է մետաղի հարաբերական ատոմային զանգվածը, եթե դրա MeO օքսիդում թթվածին տարրի զանգվածային բաժինը 64 % է.

- 1) 9 2) 24 3) 40 4) 64

5. Ժամանակավոր կոշտության վերացման նպատակով ջուրը եռացնելիս դր նյութերն են հեռանում.

- ա) CaCl_2 բ) CaCO_3 գ) MgCO_3 դ) H_2O
1) ա, բ, դ 2) բ, գ 3) գ, դ 4) բ, դ

6. Ո՞ր ազդանյութով կարելի է տարբերել CaSO_4 և CaCO_3 աղերի սպիտակ փոշիները.

- 1) ալկալու սպիրտային լուծույթ 3) աղաթթու
2) ջուր 4) կերակրի աղի ջրային լուծույթ

7. Հետևյալ նյութերից որո՞նց հետ կփոխազդի $\text{Mg(NO}_3)_2$ -ը.

- ա) NH_4OH գ) CuCl_2 ե) K_2SO_4
բ) AgCl դ) Na_2CO_3 զ) KOH
1) ա, դ, գ 2) բ, գ, զ 3) ա, դ, ե 4) բ, դ, գ

8. Հետևյալ մետաղներից որն է սենյակային ջերմաստիճանում փոխազդում ջրի հետ.

- 1) Zn 2) Ca 3) Ag դ) Fe

9. Ի՞նչ գույնով են ներկում կրակի բոցը կալցիումի միացությունները.

- 1) աղյուսակարմիր
- 2) մանուշակագույն
- 3) նարնջագույն
- 4) դեղին

10. Ի՞նչ նյութեր են առաջանում կալցիումի հիդրիդի և աղաթթվի փոխազդեցությունից.

- 1) աղ և ջուր
- 2) աղ և ջրածին
- 3) ալկալի և ջրածին
- 4) ալկալի և թթվածին

11. Հետևյալ նյութերից որը պետք է ավելացնել բարիումի հիդրօքսիդի և ածխածնի(IV) օքսիդի փոխազդեցությունից ստացված նստվածքը լուծելու համար.

- 1) NaOH
- 2) էթանոլ
- 3) աղաթթու
- 4) K_2SO_4

12. Որքան է K_3PO_4 -ի և $Ba(NO_3)_2$ -ի ջրային լուծույթների խառնումից առաջացած նստվածքի մոլեկուլում ատոմների գումարային թիվը.

- 1) 6
- 2) 9
- 3) 13
- 4) 15

13. Փոխարկումների հետևյալ շղթայում որը կարող է լինել C նյութի բանաձևը.



- 1) CaO
- 2) $CaCO_3$
- 3) $Ca(OH)_2$
- 4) Ca

14. Հետևյալ փոխարկումներից որի արգասիքն է կալցիումի հիդրօքսիդը.

- 1) մետաղական Ca-ի և ջրածնի փոխազդեցության
- 2) $CaCl_2$ -ի հալույթի էլեկտրոլիզի
- 3) $CaCO_3$ -ի և նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցության
- 4) CaO-ի և ջրի փոխազդեցության

15. Հետևյալ փոխարկումներից որին է համապատասխանում $Ca^{2+} + CO_3^{2-} = CaCO_3$ կրճատ իոնային հավասարումը.

- 1) $CaCl_2 + Na_2CO_3 \rightarrow$
- 2) $CaCO_3 + Na_2CO_3 \rightarrow$
- 3) $Ca + H_2CO_3 \rightarrow$
- 4) $CaO + H_2CO_3 \rightarrow$

16. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ է փոխազդում կալցիումի հիդրօքսիդը.

- 1) KOH, HCl, CO
- 2) Na_2CO_3 , CO_2 , HNO₃
- 3) NaOH, KCl, SO_3
- 4) H_2O , K_2CO_3 , MgO

17. Կալիումի հիդրօքսիդի և հետևյալ նյութերից որի փոխազդեցությունից է նստվածք առաջանում.

- 1) $Ba(NO_3)_2$
- 2) $Mg(NO_3)_2$
- 3) NH_4NO_3
- 4) $Sr(NO_3)_2$

18. Ինչպե՞ս է կոչվում բժշկության մեջ լայնորեն կիրառվող բյուրեղահիդրատը, որը ստացվում է գիպսից՝ $\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$, ջրի 3/4–ը կորցնելիս.
- 1) բնական գիպս
2) մեռած գիպս
3) կեսջրյա գիպս
4) անջուր գիպս
19. Հետևյալ դժուար տարրերն են համարվում միկրոտարրեր, որոնք կազմում են օրգանիզմում պարունակվող բոլոր ատոմների 0,01–1 %-ը.
- 1) նատրիում և ալյումին
2) կալցիում և ֆտոր
3) մագնեզիում և բրոմ
4) կալցիում և ֆոսֆոր
20. Կշեռքի նժարների վրա հավասարակշռված նոսր աղաթթու պարունակող երկու անոթներից մեկին ավելացրել են 1 գ CaCO_3 : Ինչ զանգվածով (գ) BaO է անհրաժեշտ ավելացնել մյուս անոթին, որպեսզի հավասարակշռությունը չխախտվի.
- 1) 1,05
2) 1,53
3) 0,56
4) 2,09
21. Ինչ հատկանիշով են տարբերվում CaCO_3 բանաձևին համապատասխանող բնական միացությունները՝ կրաքարը, կավիճը և մարմարը.
- 1) լուծելիությամբ
2) ագրեգատային վիճակով
3) բյուրեղավանդակի կառուցվածքով
4) մոլեկուլի բաղադրությամբ
22. Երկրորդ խմբի գլխավոր ենթախմբի դժուարի առաջացրած հիդրօքսիդն է լուծվում և՛ թթվի, և՛ ալկալու լուծույթում.
- 1) կալցիումի
2) բարիումի
3) մագնեզիումի
4) բերիլիումի
23. Ո՞ր պնդումներն են ճիշտ.
- ա) մագնեզիումը և կալցիումը ընդունակ են վերականգնելու մոլիբդենը և վոլֆրամը դրանց օքսիդներից
բ) պարբերական համակարգի II խմբի գլխավոր ենթախմբի տարրերի օքսիդները ստացվում են համապատասխան կարբոնատների քայքայումից
գ) կալցիումի օքսիդի տեխնիկական անվանումն է չհանգած կիր
- 1) ա, բ
2) բ, գ
3) ա, գ
4) ա, բ, գ
24. Ինչ գույն է ստանում ֆենոլֆտալեինը կրաջրում.
- 1) դեղին
2) կապույտ
3) մորեգույն
4) կանաչ
25. Ինչպե՞ս կփոխվի 0,2 մոլ $\text{Ba}(\text{OH})_2$ պարունակող լուծույթի զանգվածը դրանում 0,3 մոլ ածխաթթու գազ լուծելիս.
- 1) կմեծանա 13,2 գ–ով
2) կփոքրանա 13,2 գ–ով
3) կփոքրանա 6,5 գ–ով
4) կմեծանա 8,8 գ–ով

26. Ո՞ր նյութն է ստացվում CaCO_3 -ի ջրային սուսպենզիայի մեջ ածխածնի(IV) օքսիդ անցկացնելիս.
- 1) կալցիումի կարբիդ 3) կալցիումի հիդրօքսիդ
2) կալցիումի հիդրիդ 4) կալցիումի հիդրոկարբոնատ
27. Ո՞ր աղերով է պայմանավորված ջրի կարբոնատային կոշտությունը.
- 1) $\text{Ca}(\text{HCO}_3)_2$, $\text{Mg}(\text{HCO}_3)_2$ 3) NaHCO_3 , KHCO_3
2) CaCl_2 , MgSO_4 4) MgSO_4 , KHCO_3
28. Ո՞ր նյութը պետք է օգտագործել չհանգած կրից հանգած կիր ստանալու համար.
- 1) HCl 2) NaOH 3) H_2O 4) CO_2
29. Արդյունաբերության մեջ ինչ եղանակով են ստանում կալցիումի օքսիդը.
- 1) հանգած կրի տաքացումով 3) կրաքարի շիկացումով
2) կալցիումի քլորիդի օքսիդացմամբ 4) օդում կալցիումի այրմամբ
30. Ո՞րն է $\text{Ca}(\text{HCO}_3)_2 + \text{Ca}(\text{OH})_2 \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման աջ մասում նստվածք առաջացնող միացության գործակիցը.
- 1) 1 2) 2 3) 3 4) 4
31. Ո՞րն է $\text{Ca} + \text{WO}_3 \xrightarrow{t} \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.
- 1) 8 2) 3 3) 4 4) 5
32. Ինչպե՞ս են անվանվում Ca , Sr , Ba , Ra տարրերը.
- 1) ալկալիական մետաղներ 3) հողալկալիական մետաղներ
2) հալոգեններ 4) հալկոգեններ
33. Ո՞ր նյութերի փոխազդեցությանն է համապատասխանում հետևյալ կրճատ իոնային հավասարումը. $\text{H}^+ + (\text{OH})^- = \text{H}_2\text{O}$.
- ա) $\text{NaOH} + \text{CH}_3\text{COOH} \rightarrow$ գ) $\text{LiOH} + \text{HBr} \rightarrow$
բ) $\text{Ba}(\text{OH})_2 + \text{HClO}_4 \rightarrow$ դ) $\text{RbOH} + \text{HNO}_2 \rightarrow$
- 1) ա, բ 2) բ, դ 3) բ, գ 4) ա, դ
34. Հետևյալ իոններից ո՞րն ունի նեոն իներտ գազի էլեկտրոնային բանաձևը.
- 1) Li^+ 2) Ca^{2+} 3) K^+ 4) Mg^{2+}
35. Բարիումի քանի՞ ատոմ է պարունակվում 169 գ բարիումի պերօքսիդում.
- 1) 0,5 2) $6,02 \cdot 10^{23}$ 3) $3,01 \cdot 10^{23}$ 4) 1,5

36. Ո՞րն է $\text{Ca} + \text{H}_2 \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

- 1) 6 2) 3 3) 4 4) 5

37. Ո՞րն է $\text{Ca} + \text{C} \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

- 1) 6 2) 3 3) 4 4) 5

38. Համապատասխանեցրե՞ք բնական հանքատեսակների անվանումները և քիմիական բանաձևերը.

Անվանումներ	Բանաձևեր
ա) մագնետիտ	1) $\text{MgCO}_3 \cdot \text{CaCO}_3$
բ) դոլոմիտ	2) $\text{MgSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$
գ) դառը աղ	3) Fe_3O_4

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ2, գ3 2) ա2, բ3, գ1 3) ա3, բ1, գ2 4) ա3, բ2, գ1

39. Որո՞նք են ջրի ժամանակավոր կոշտության վերացման ռեակցիաների հավասարումներ.

- ա) $\text{Ca}(\text{HCO}_3)_2 + \text{H}_2\text{SO}_4 \rightarrow \text{CaSO}_4 + 2\text{H}_2\text{O} + 2\text{CO}_2$
 բ) $\text{Ca}(\text{HCO}_3)_2 + \text{Ca}(\text{OH})_2 \rightarrow 2\text{CaCO}_3 + 2\text{H}_2\text{O}$
 գ) $\text{Mg}(\text{HCO}_3)_2 + \text{Na}_2\text{CO}_3 \rightarrow \text{MgCO}_3 + 2\text{NaHCO}_3$
 դ) $\text{MgSO}_4 + \text{Na}_2\text{CO}_3 \rightarrow \text{MgCO}_3 + \text{Na}_2\text{SO}_4$

- 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, դ

40. Ո՞ր նյութերը հաջորդաբար կգոյանան կրաջուրը ծծմբի(IV) օքսիդով հագեցնելիս.

- 1) $\text{Ca}(\text{HSO}_3)_2$ և CaSO_3 3) CaSO_4 և $\text{Ca}(\text{HSO}_4)_2$
 2) CaSO_3 և $\text{Ca}(\text{HSO}_3)_2$ 4) $\text{Ca}(\text{HSO}_4)_2$ և CaSO_4

41. Ալյումինի և կալցիումի կարբիդների խառնուրդը ջրով մշակելիս ինչ գազային նյութեր են առաջանում.

- ա) CH_4 բ) H_2 գ) C_2H_2 դ) C_2H_6
 1) ա, բ 2) ա, գ 3) բ, դ 4) բ, գ

42. Ինչ քանակով (մոլ) արծաթի քլորիդ կգոյանա 1 մոլ/լ կոնցենտրացիայով կալցիումի քլորիդի 0,2 լ լուծույթին 30,6 գ արծաթի նիտրատ ավելացնելիս.

- 1) 0,1 2) 0,12 3) 0,15 4) 0,18

43. Արդյունաբերության մեջ ինչպե՞ս են ստանում կալցիում.

- 1) CaCl_2 և CaF_2 խառնուրդի հալույթի էլեկտրոլիզով
- 2) կալցիումի քլորիդի լուծույթի էլեկտրոլիզով
- 3) կրաքարի ջերմային քայքայումով
- 4) կալցիումի սուլֆատի ջերմային քայքայումով

44. Հետևյալ աղերից որի մոլեկուլում է մետաղի զանգվածային բաժինն առավել մեծ.

- 1) MgCl_2
- 2) CaCl_2
- 3) SrCl_2
- 4) BaCl_2

45. Ինչպե՞ս է փոխվում հողալկալիական մետաղների իոնացման էներգիան կարգաթվի աճմանը զուգընթաց.

- 1) մեծանում է
- 2) փոքրանում է
- 3) նախ փոքրանում է, ապա մեծանում է
- 4) նախ մեծանում է, ապա փոքրանում է

46. Ո՞ր էլեկտրոնային բանաձևն է համապատասխանում Ca^{2+} իոնին.

- 1) $3p^6 4s^2$
- 2) $3p^6 4s^2 3d^0$
- 3) $3p^6 4s^0$
- 4) $3p^6 3s^2 3p^4$

2.1.3. Հողալկալիական մետաղներ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները: Ջրի կոշտությունը և դրա վերացման եղանակները

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	17	2	33	3
2	4	18	3	34	4
3	2	19	4	35	2
4	1	20	3	36	2
5	2	21	3	37	3
6	3	22	4	38	3
7	1	23	4	39	2
8	2	24	3	40	2
9	1	25	3	41	2
10	2	26	4	42	4
11	3	27	1	43	1
12	3	28	3	44	4
13	2	29	3	45	2
14	4	30	2	46	3
15	1	31	1		
16	2	32	3		

2.1.4. Այլումին և երկաթ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները

1. Հետևյալ մետաղներից որն է բնության մեջ հանդիպում միայն միացությունների ձևով.

- 1) Cu 2) Ag 3) Al 4) Au

2. Քանի տոկոսով է փոխվում ալյումինի զանգվածը այն օդում այրելիս.

- 1) ավելանում է 88,9%-ով 3) ավելանում է 11,1%-ով
2) պակասում է 88,9%-ով 4) պակասում է 11,1%-ով

3. Հետևյալ նյութերից որոնց հետ կփոխազդի ալյումինը.

- ա) Cl_2 բ) $Ca(NO_3)_2$ գ) N_2 դ) H_2 ե) KCl զ) C
1) ա, դ, զ 2) բ, գ, ե 3) գ, դ, ե 4) ա, գ, զ

4. Որքան է A նյութում մեծ ատոմային զանգված ունեցող տարրի ատոմի զանգվածային բաժինն (%) ըստ հետևյալ փոխարկումների. $AlCl_3 \xrightarrow{A} Al(OH)_3 \xrightarrow{A} NaAlO_2$.

- 1) 57,5 2) 40 3) 2,5 4) 1,0


5. Ո՞ր նյութերի հետ կարող է փոխազդել $Al(OH)_3$ -ը.

- ա) $NaOH$ (հալույթ) գ) H_2SO_4 ե) $FeSO_4$
բ) $NaOH$ (լուծույթ) դ) $BaSO_4$ զ) CuS
1) ա, դ 2) բ, գ 3) դ, ե, զ 4) ա, բ, գ

6. Որքան է 1 մոլ Fe_2O_3 -ի ընդունած էլեկտրոնների քանակն (մոլ) ըստ հետևյալ ռեակցիայի. $Fe_2O_3 + 2Al = Al_2O_3 + 2Fe$.

- 1) 2 2) 4 3) 6 4) 12

7. Ո՞րն է A նյութի բանաձևն ըստ հետևյալ ռեակցիայի հավասարման.



- 1) $Fe(OH)_2$ 2) $Fe(OH)_3$ 3) $FeSO_4$ 4) Fe_2O_3


8. Ո՞ր ռեակցիայի հավասարման աջ մասում է գործակիցների գումարային թիվը 5.

- 1) $Al + O_2 =$ 2) $Al + Cl_2 =$ 3) $Al + S =$ 4) $Al + HCl =$

9. Ո՞ր նյութի ջրային լուծույթի հետ կարող է փոխազդել ալյումինի հիդրօքսիդը.

- 1) $CuSO_4$ 2) $MgSO_4$ 3) $NaOH$ 4) KNO_3

18. Ո՞րն է հետևյալ ուրվագրով ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.



- 1) 11 2) 10 3) 14 4) 15

19. Ո՞րն է հետևյալ ուրվագրով ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.



- 1) 12 2) 18 3) 14 4) 15

20. Ո՞րն է $\text{KSCN} + \text{FeCl}_3 \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

- 1) 6 2) 8 3) 11 4) 12

21. Ո՞րն է Fe^{2+} իոնի որակական ռեակցիայի կրճատ իոնային հավասարումը.

- 1) $\text{Fe}^{2+} + [\text{Fe}(\text{CN})_6]^{4-} = \text{Fe}_4[\text{Fe}(\text{CN})_6]_3$
2) $\text{Fe}^{2+} + [\text{Fe}(\text{CN})_6]^{3-} = \text{Fe}_3[\text{Fe}(\text{CN})_6]_2$
3) $3\text{Fe}^{2+} + 2[\text{Fe}(\text{CN})_6]^{3-} = \text{Fe}_3[\text{Fe}(\text{CN})_6]_2$
4) $3\text{Fe}^{2+} + 4[\text{Fe}(\text{CN})_6]^{4-} = \text{Fe}_4[\text{Fe}(\text{CN})_6]_3$

22. Ո՞րն է $\text{K}_4[\text{Fe}(\text{CN})_6] + \text{FeCl}_3 \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

- 1) 12 2) 13 3) 20 4) 21

23. Երկաթի(III) օքսիդի և ալյումինի փոխազդեցության ռեակցիայում որքան է 1 մոլ վերականգնիչի տրամադրած էլեկտրոնների քանակը (մոլ).

- 1) 1 2) 2 3) 3 4) 6

24. Հետևյալ նյութերից որո՞նց հետ չի փոխազդում երկաթը.

- ա) ջրածին դ) նատրիումի հիդրօքսիդի լուծույթ
բ) աղաթթու ե) քլոր
գ) ածխածնի(IV) օքսիդ

- 1) բ, դ, ե 2) ա, բ, ե 3) ա, բ, դ 4) ա, գ, դ

25. Սենյակային ջերմաստիճանում ալյումինը դ՞ր թթվի հետ չի փոխազդում.

- 1) H_2SO_4 _(լիսն) 2) H_2SO_4 _(տաք) 3) HNO_3 _(տաք) 4) HCl _(լիսն)

26. Համապատասխանեցրե՞ք ռեակցիաների ելանյութերն իրենց արգասիքներին.

Ելանյութ	Արգասիք
ա) $\text{Fe} + \text{HCl} \rightarrow$	1) $\text{FeSO}_4 + \text{H}_2$
բ) $\text{Fe} + \text{Cl}_2 \xrightarrow{t}$	2) $\text{Fe}_2(\text{SO}_4)_3 + \text{H}_2$
գ) $\text{Fe} + \text{H}_2\text{SO}_{4(\text{u})} \rightarrow$	3) $\text{Fe}_2(\text{SO}_4)_3 + \text{SO}_2 + \text{H}_2\text{O}$
դ) $\text{Fe} + \text{H}_2\text{SO}_{4(\text{u})} \xrightarrow{t}$	4) $\text{FeCl}_2 + \text{H}_2$
	5) FeCl_3
	6) $\text{FeCl}_3 + \text{H}_2$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա5, բ4, գ2, դ3 | 3) ա6, բ5, գ2, դ1 |
| 2) ա4, բ5, գ3, դ2 | 4) ա4, բ5, գ1, դ3 |

27. Ինչպե՞ս կփոխվի ալյումինի թիթեղի զանգվածը այն պղնձարջասպի լուծույթի մեջ ընկղմելիս.

- | | |
|----------------|-----------------|
| 1) կմեծանա | 3) կփոքրանա |
| 2) կմնա նույնը | 4) շատ կփոքրանա |

28. Հետևյալ նյութերից որո՞նք կարող են լինել X-ը և Y-ը՝ ըստ հետևյալ ուրվագրի.
 $\text{Al}(\text{OH})_3 + \text{X} \rightarrow \text{Al}^{3+} + \text{Y}$.

- | | |
|---|--|
| 1) NaOH և H_2O | 3) NaOH և H_2SO_4 |
| 2) H_2SO_4 և H_2O | 4) H_2SO_4 և NaOH |

29. Ո՞ր շարքի բոլոր նյութերը կփոխազդեն մետաղական երկաթի հետ.

- | | |
|---|--|
| 1) HCl , CuCl_2 , FeCl_3 | 3) Al_2O_3 , C , H_2O |
| 2) AgNO_3 , S , ZnSO_4 | 4) HNO_3 , $\text{Cu}(\text{NO}_3)_2$, Cu |

30. Ի՞նչ նյութեր կարող են լինել X-ը և Y-ը փոխարկումների հետևյալ՝ $\text{Al} \rightarrow \text{X} \rightarrow \text{Y} \rightarrow \text{Al}_2\text{O}_3$, շղթայում.

- | | |
|--|--|
| 1) $\text{Al}(\text{NO}_3)_3$ և $\text{Al}(\text{OH})_3$ | 3) $\text{Al}(\text{OH})_3$ և NaAlO_2 |
| 2) AlPO_4 և $\text{Al}(\text{OH})_3$ | 4) Al_2O_3 և AlCl_3 |





31. Ո՞ր մասնիկի և Fe^{2+} իոնի էլեկտրոնային կառուցվածքներն են նույնը.

- | | | | |
|-------|---------------------|---------------------|---------------------|
| 1) Ar | 2) Co^{3+} | 3) Mn^{2+} | 4) Cr^{2+} |
|-------|---------------------|---------------------|---------------------|





32. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի երկաթի(II) քլորիդը.

- | | |
|--|---|
| 1) MgO , HCl , H_2SO_4 | 3) HNO_3 , Cu , NaOH |
| 2) Mg , AgNO_3 , Cl_2 | 4) CuSO_4 , $\text{Ca}(\text{OH})_2$, CO_2 |

33. Ի՞նչ նյութեր կարող են լինել X-ը և Y-ը փոխարկումների հետևյալ շղթայում.



34. Ո՞րն է այլումինի վալենտային շերտի էլեկտրոնային բանաձևը ատոմի հիմնական վիճակում.



35. Ի՞նչ զանգվածով (գ) պղինձ կստացվի 5 գ պղնձարջասպ պարունակող լուծույթի և ավելցուկով երկաթի փոխազդեցությունից.

1) 1,6

2) 2,0

3) 0,64

4) 1,28

36. Ո՞րն է այլումինի կարբիդի բանաձևը.



37. Հետևյալ օքսիդներից ո՞րն է օժտված երկդիմի հատկություններով.



38. Ո՞րն է $\text{Al} + \text{NaOH} + \text{H}_2\text{O} \rightarrow \text{NaAlO}_2 + \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման մեջ բաց թողած նյութի գործակիցը.



1) 4

2) 15


3) 8

4) 3

39. Ո՞ր շարքում են միայն երկդիմի հիդրօքսիդների բանաձևերը.



40. Ո՞ր փոխազդեցության արդյունքում է առաջանում ջրում չլուծվող հիդրօքսիդ.



41. Ո՞րն է թթվային միջավայրում Fe^{2+} իոնի օքսիդացման արգասիքը.



42. Ո՞ր պնդումն է ճիշտ երկաթ տարրի վերաբերյալ.

ա) երկաթի բարձրագույն օքսիդացման աստիճանը +3 է

բ) երկաթի(II) օքսիդն օժտված է վերօքս երկակիությամբ

1) ճիշտ է միայն ա-ն

3) երկուսն էլ ճիշտ են

2) ճիշտ է միայն բ-ն

4) երկուսն էլ սխալ են

43. Ո՞րն է $\text{Al} + \text{H}_2\text{SO}_4 (\text{տոք}) \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 5 2) 8 3) 7 4) 9

44. Ո՞րն է $\text{Al} + \text{NaOH} + \text{H}_2\text{O} \rightarrow \text{NaAlO}_2 + \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման մեջ աղի մոլային զանգվածը (գ/մոլ).

- 1) 82 2) 92 3) 78 4) 128

45. Որքան է երկաթի ատոմների թիվը մեկ մոլ երկաթի հարուկում.

- 1) $1,806 \cdot 10^{24}$ 2) $6,02 \cdot 10^{23}$ 3) $3,01 \cdot 10^{23}$ 4) 3

2.1.4. Այլումին և երկաթ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	16	2	31	2
2	1	17	4	32	2
3	4	18	1	33	4
4	1	19	3	34	2
5	4	20	2	35	4
6	3	21	3	36	4
7	2	22	3	37	2
8	4	23	3	38	4
9	3	24	4	39	3
10	4	25	1	40	3
11	3	26	4	41	3
12	4	27	1	42	2
13	2	28	2	43	4
14	3	29	1	44	1
15	4	30	1	45	1

**2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա:
Համաձուլվածքներ: Թուջ և պողպատ**

1. Ինչ ծավալով (լ) ջրածին է անհրաժեշտ 1160 գ վոլֆրամի(VI) օքսիդից մետաղ ստանալու համար.

- 1) 22,4 2) 33,6 3) 22,4 4) 336

2. Համապատասխանեցրե՞ք մետաղարտադրությունը և դրանց հիմքում ընկած քիմիական ռեակցիաների հավասարումները.

<i>Մետաղարտադրություն</i>	<i>Ռեակցիայի հավասարումներ</i>
ա) ջրածնամետաղարտադրություն	1) $2Al_2O_3 = 4Al + 3O_2$
բ) ջրամետաղարտադրություն	2) $CuSO_4 + Fe = FeSO_4 + Cu$
գ) էլեկտրամետաղարտադրություն	3) $3Fe_3O_4 + 8Al = 4Al_2O_3 + 9Fe$
դ) ալյումաջերմային	4) $2NaCl + 2H_2O = H_2 + Cl_2 + 2NaOH$
	5) $WO_3 + 3H_2 = W + 3H_2O$


Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշդ.

- 1) ա5, բ2, գ1, դ3 3) ա5, բ1, գ3, դ2
2) ա3, բ4, գ1, դ2 4) ա2, բ4, գ1, դ5

3. Ո՞ր նյութի լուծույթում կարելի է ամբողջությամբ լուծել արույր (Zn-Cu) համաձուլվածքի նմուշը.

- 1) նոսր աղաթթու 3) նոսր ծծմբական թթու
2) ալկալու ջրային լուծույթ 4) խիտ ազոտական թթու

4. Ինչ զանգվածով (գ) թթվածին է մասնակցել 784 գ ժանգի առաջացմանն ըստ հետևյալ ուրվագրի.



- 1) 384 2) 192 3) 144 4) 64

5. Ո՞ր մետաղի հետ հպումը կնպաստի երկաթե իրի էլեկտրաքիմիական կոռոզիային.

- 1) Mg 2) Zn 3) Cu 4) Cr

6. Արդյունաբերության մեջ ինչպե՞ս են ստանում մետաղը սուլֆիդային հանքից.

- 1) հալված հանքը ենթարկում են էլեկտրոլիզի
2) ջրածնով սուլֆիդը վերականգնում են
3) կիրառում են ալյումաջերմային եղանակ
4) հանքն այրում են և ստացված օքսիդից վերականգնում մետաղը

7. Ո՞ր նյութերը կարելի է օգտագործել ջրամետաղարտադրական եղանակով պղնձի(II) քլորիդի լուծույթից պղինձ ստանալու համար.
- ա) K բ) Zn գ) Ag դ) Fe
 1) բ, դ 2) ա, բ 3) գ, դ 4) ա, դ
8. Ի՞նչ ծավալով (մ^3 , ն. պ.) ջրածին կծախսվի մոլիբդենի(VI) օքսիդից 192 կգ մոլիբդեն ստանալիս.
- 1) 124,4 2) 134,4 3) 164,4 4) 144,4
9. Ո՞ր ազդանյութով կարելի է տարբերել պղնձի(II) օքսիդի, երկաթի և արծաթի փոշիները.
- 1) KOH 2) HCl 3) Na_2CO_3 4) CuSO_4
10. Ո՞ր արտադրությունն է զբաղվում ալկալիական մետաղների ստացմամբ.
- 1) հրամետաղարտադրություն 3) ջրամետաղարտադրություն
 2) էլեկտրամետաղարտադրություն 4) հանքամետաղարտադրություն
11. Ո՞ր զույգի մետաղներն են արդյունաբերության մեջ կիրառվում առավել մեծ չափով.
- 1) կալիում և ոսկի 3) ցինկ և վոլֆրամ
 2) նատրիում և երկաթ 4) ալյումին և երկաթ
12. Ո՞ր մետաղն է մտնում բոլոր ամալգամների բաղադրության մեջ.
- 1) անագ 2) կապար 3) սնդիկ 4) ոսկի
13. Պղնձի և հր մետաղի համաձուլվածքն է մելքիորը.
- 1) կապարի 2) նիկելի 3) երկաթի 4) սնդիկի
14. Թվարկվածներից որո՞նք *համաձուլվածք չեն*.
- ա) արույր գ) թուջ ե) մելքիոր
 բ) ցեմենտիտ դ) մալաքիտ զ) դյուրալյումին
 1) ա, բ 2) բ, դ 3) ե, զ 4) դ, զ
15. Ո՞ր շարքի մետաղներից յուրաքանչյուրի հետ հպումը կդանդաղեցնի երկաթի էլեկտրաքիմիական կոռոզիան.
- 1) Cu, Ni, Zn 2) Zn, Mg, Ca 3) Ag, Hg, Mg 4) Cu, Ag, Au
16. Ո՞րը մետաղների ստացման արդյունաբերական *եղանակ չէ*.
- 1) հրամետաղարտադրություն 3) հանքամետաղարտադրություն
 2) ջրամետաղարտադրություն 4) էլեկտրամետաղարտադրություն

17. Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը.

Պողպատը չեն սրանում _____ :

- 1) դոմնային վառարանում
- 2) կոնվերտորում
- 3) մարտենյան վառարանում
- 4) էլեկտրաաղեղային վառարանում


18. Ո՞ր շարքի բոլոր նյութերն են կիրառվում որպես վերականգնիչ հրամետաղարտադրական եղանակով մետաղների ստացման համար.

- 1) C, NH₃, Na, Au
- 2) H₂, C, CO, Al
- 3) CH₄, Al, CO, CO₂
- 4) Ag, Hg, Zn, Mg

19. Ո՞ր շարքում են երկաթի միացությունները ճիշտ դասավորված ըստ դոմնային վառարանում կատարվող գործընթացների հաջորդականության.

- 1) Fe₃O₄, Fe₂O₃, FeO, Fe
- 2) Fe, FeO, Fe₂O₃, Fe₃O₄
- 3) Fe₂O₃, Fe₃O₄, FeO, Fe
- 4) Fe, FeO, Fe₃O₄, Fe₂O₃

20. Քանի մոլ էլեկտրոն է ձեռք բերել օքսիդիչ նյութի մեկ մոլն ըստ հետևյալ ուրվագրի.



- 1) 3
- 2) 8
- 3) 8/3
- 4) 3/8

21. Ինչպե՞ս է անվանվում չոր գազի ազդեցությամբ տեղի ունեցող մետաղների կոռոզիան.

- 1) էլեկտրաքիմիական
- 2) քիմիական
- 3) մթնոլորտային
- 4) օդային

22. Ինչպե՞ս է փոխվում ջերմաստիճանը դոմնային վառարանում.

- 1) տարբեր բարձրություններում մնում է հաստատուն
- 2) նվազում է ներքևից վերև
- 3) նվազում է վերևից ներքև
- 4) փոխվում է պարբերականորեն

23. Արդյունաբերության մեջ դ՞ր եղանակով են ստանում կալցիումը.

- 1) մետաղաջերմային
- 2) ջրամետաղարտադրական
- 3) էլեկտրամետաղարտադրական
- 4) ածխածնաջերմային

24. Երկաթի և հիմնականում դ՞ր տարրի համաձուլվածքն է թուջը.

- 1) մանգան
- 2) ֆոսֆոր
- 3) ածխածին
- 4) սիլիցիում

25. Երկաթի և ածխածնի դ՞ր միացությունն է կազմում սպիտակ թուջի բաղադրամաս.

- 1) FeC
- 2) Fe₄C₃
- 3) FeC₂
- 4) Fe₃C

26. Որքան է ածխածնի պարունակությունը (%) պողպատում, եթե դրա 10 գ նմուշը թթվածնում այրելիս առաջացել է 0,88 գ CO₂.

- 1) 0,5 2) 0,8 3) 1,2 4) 2,4

27. Ո՞րն է ալյումինի ստացման արդյունաբերական եղանակ.

- 1) ալյումինի քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզը
 2) ալյումինի քլորիդի հալույթի էլեկտրոլիզը
 3) կրիոլիտի առկայությամբ բոքսիտի հալույթի էլեկտրոլիզը
 4) կալցիումով բոքսիտի վերականգնումը

28. Ո՞ր շարքի բոլոր մետաղները կարելի է ստանալ ալյումաջերմային եղանակով.

- 1) Na, K, Li 2) Ba, Mg, Ca 3) Rb, Cs, Fe 4) Mn, Cr, Fe

29. Ո՞րն է մետաղական նատրիումի ստացման արդյունաբերական եղանակ.

- 1) նատրիումի քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզը
 2) նատրիումի քլորիդի հալույթի էլեկտրոլիզը
 3) ալյումաջերմային եղանակով նատրիումի օքսիդի վերականգնումը
 4) նատրիումի նիտրատի ջերմային քայքայումը

30. Որքան է դոմնային վառարանում Fe₂O₃-ի՝ CO-ով վերականգնման առաջին փուլի հավասարման գործակիցների գումարային թիվը.

- 1) 6 2) 7 3) 8 4) 9

2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա: Համաձուլվածքներ: Թուջ և պողպատ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	11	4	21	2
2	1	12	3	22	3
3	4	13	2	23	3
4	2	14	2	24	3
5	3	15	2	25	4
6	4	16	3	26	4
7	1	17	1	27	3
8	2	18	2	28	4
9	2	19	3	29	2
10	2	20	2	30	2

2.2. ՈՉՄԵՏԱՂՆԵՐ

2.2.1. Ոչմետաղներ: Ջրածին, ջուր, հալոգեններ

1. Ո՞րն է VII խմբի երկրորդական ենթախմբի տարրի ատոմի վալենտային շերտի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $2s^2 2p^5$ 2) $3d^5 4s^1$ 3) $3d^5 4s^2$ 4) $3s^2 3p^4$

2. Ո՞ր տարրի ատոմն է միացություններում ցուցաբերում -1 հաստատուն օքսիդացման աստիճան.

- 1) H 2) Na 3) F 4) Ca

3. Ինչո՞ւ են ջրածին քիմիական տարրը հաճախ տեղադրում պարբերական համակարգի և առաջին, և յոթերորդ խմբերի գլխավոր ենթախմբերում.

- 1) ալկալիական մետաղների նման դրսևորում է միայն վերականգնիչ հատկություն
2) ֆտորի նման դրսևորում է միայն օքսիդիչ հատկություն
3) ալկալիական մետաղների նման դրսևորում է $+1$ բարձրագույն և հալոգենների նման՝ -1 ցածրագույն օքսիդացման աստիճան
4) թեթև իզոտոպում նեյտրոններ չկան

4. Ո՞ր շարքի բոլոր միացություններում են ջրածնի մոլային բաժինները նույնը.

- 1) H_2O , C_4H_8 , CH_3OH 3) NaH , C_2H_2 , CaH_2
2) H_2O_2 , C_6H_6 , C_2H_4 4) NH_3 , C_2H_6 , C_3H_7OH

5. Ո՞րն է հիդրիդ իոնի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $1s^2$ 2) $1s^1$ 3) $1s^2 2s^1$ 4) $2s^2$

6. Որո՞նք են իոնային բյուրեղավանդակով ջրածնային միացություններ.

- ա) LiH բ) CH_4 գ) NH_3 դ) CaH_2 ե) H_2S զ) NaH
1) ա, բ, գ 2) ա, դ, զ 3) բ, գ, ե 4) բ, ե, գ

7. Որո՞նք են մոլեկուլային բյուրեղավանդակով պարզ նյութեր.

- ա) $C_{ամասս}$ գ) S_8 ե) I_2 է) $P_{սև}$
բ) P_4 դ) Si զ) $C_{գրաֆիտ}$ լ) Br_2
1) բ, գ, է, լ 2) ա, դ, գ, է 3) բ, դ, գ, լ 4) բ, գ, ե, լ

8. Ջրածնի հնարավոր մոլեկուլներից որոնք ունեն հավասար զանգվածներ.

- ա) ${}^1\text{H}_2$ բ) ${}^2\text{H}_2$ գ) ${}^3\text{H}_2$ դ) ${}^1\text{H}^2\text{H}$ ե) ${}^1\text{H}^3\text{H}$ զ) ${}^2\text{H}^3\text{H}$
1) ա, բ 2) բ, գ 3) դ, զ 4) բ, ե

9. Ո՞րն է $\text{H}_2 + \text{CH}_3\text{CHO} \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայում վերականգնիչի մեկ մոլեկուլի տրամադրած էլեկտրոնների թիվը.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

10. Որքան է $\text{H}_2 + \text{Fe}_3\text{O}_4 \rightarrow \text{Fe} + \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման վերականգնիչ նյութի գործակիցը.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

11. Ջրածնի ստացման հետևյալ եղանակներից ո՞րն է արդյունաբերական.

- 1) $\text{Fe} + \text{H}_2\text{SO}_4 = \text{FeSO}_4 + \text{H}_2$ 3) $\text{Zn} + 2\text{KOH} = \text{K}_2\text{ZnO}_2 + \text{H}_2$
2) $\text{Zn} + 2\text{HCl} = \text{ZnCl}_2 + \text{H}_2$ 4) $2\text{H}_2\text{O} + \text{CH}_4 = \text{CO}_2 + 4\text{H}_2$

12. Ի՞նչ քանակով (մոլ) HD գազում կպարունակվի նույնքան նեյտրոն, որքան պրոտոն է պարունակվում 5 մոլ H_2 գազում.

- 1) 2 2) 6 3) 8 4) 10

13. Հիդրոլիզի ռեակցիաների հետևյալ հավասարումներից ո՞րն է օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարում.

- 1) $\text{Na}_3\text{N} + 3\text{H}_2\text{O} = 3\text{NaOH} + \text{NH}_3$ 3) $\text{CaC}_2 + 2\text{H}_2\text{O} = \text{Ca}(\text{OH})_2 + \text{C}_2\text{H}_2$
2) $\text{CaH}_2 + 2\text{H}_2\text{O} = \text{Ca}(\text{OH})_2 + 2\text{H}_2$ 4) $\text{Al}_2\text{S}_3 + 6\text{H}_2\text{O} = 2\text{Al}(\text{OH})_3 + 3\text{H}_2\text{S}$

14. Ջրածին տարրի ի՞նչ թվով իզոտոպներ են հայտնի.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

15. Ո՞ր մասնիկն է օժտված լիցքի առավել մեծ խտությամբ.

- 1) H^+ 2) H^- 3) OH^- 4) H_3O^+

16. Ո՞ր արտահայտությունն է ճիշտ ջրածին պարզ նյութի վերաբերյալ.

- ա) օդից թեթև է 14,5 անգամ
բ) թթվածնից թեթև է 16 անգամ

- 1) ձիշտ է միայն ա-ն 3) երկուսն էլ ձիշտ են
2) ձիշտ է միայն բ-ն 4) երկուսն էլ սխալ են

17. Ինչ զանգվածով (գ) ցինկի և աղաթթվի փոխազդեցությունից կանջատվի 12 գ գազ.

- 1) 65 2) 130 3) 260 4) 390

18. Ո՞րն է նախադասության ճիշտ լրացումը.

Ջրածինը փոխազդում է որոշ ակտիվ մետաղների հետ՝ հանդես գալով որպես _____:

- 1) օքսիդիչ 3) ն՝ օքսիդիչ, ն՝ վերականգնիչ
2) վերականգնիչ 4) էլեկտրոնի դոնոր

19. Ինչ ծավալով (լ, ն. ս.) ջրածին կպահանջվի պղնձի(II) օքսիդից 96 գ մետաղ վերականգնելու համար.

- 1) 11,2 2) 33,6 3) 44,8 4) 56,8

20. Ո՞ր շարքի տարրերն են առաջացնում երկատոմ մոլեկուլներ.

- 1) կրիպտոն, սիլիցիում, ազոտ 3) թթվածին, ֆոսֆոր, ծծումբ
2) ազոտ, ֆտոր, թթվածին 4) ծծումբ, ջրածին, հելիում

21. Համապատասխանեցրե՞ք քիմիական ռեակցիաների հավասարումները և դրանցում ջրածնի ցուցաբերած հատկությունները.

<i>Ռեակցիայի հավասարում</i>	<i>Ջրածնի հատկություն</i>
1) $2\text{Li} + \text{H}_2 = 2\text{LiH}$	ա) օքսիդիչ
2) $2\text{H}_2 + \text{O}_2 = 2\text{H}_2\text{O}$	բ) վերականգնիչ
3) $\text{CuO} + \text{H}_2 = \text{Cu} + \text{H}_2\text{O}$	
4) $\text{F}_2 + \text{H}_2 = 2\text{HF}$	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2բ, 3բ, 4բ 3) 1ա, 2ա, 3բ, 4բ
2) 1բ, 2ա, 3ա, 4ա 4) 1ա, 2ա, 3ա, 4բ

22. Ջրածնի ստացման հետևյալ եղանակներից որո՞նք են արդյունաբերական.

- ա) ցինկի և աղաթթվի փոխազդեցությունը
բ) մեթանի կոնվերսիան
գ) նատրիումի և էթիլսպիրտի փոխազդեցությունը
դ) ջրի էլեկտրոլիզը
ե) մեթանի պիրոլիզը
զ) նատրիումի հիդրիդի հիդրոլիզը

- 1) բ, ե, գ 2) ա, գ, դ 3) ա, գ, զ 4) բ, դ, ե

23. Ինչ քանակով (մոլ) ջրածին է անհրաժեշտ 44 գ ազոտի(I) օքսիդը մինչև ազոտ վերականգնելու համար.

- 1) 4 2) 3 3) 2 4) 1

24. Ո՞ր շարքում են բացասական օքսիդացման աստիճանով ջրածնի ատոմ պարունակող նյութերի բանաձևերը.

- 1) H_2O , SiH_4 2) BH_3 , LiH 3) LiH , C_2H_2 4) C_2H_2 , $LiOH$

25. Ո՞ր արտահայտությունն է վերաբերում ջրածին պարզ նյութին.

- 1) բոլոր օրգանական նյութերի բաղադրամաս է
2) մտնում է ջրի բաղադրության մեջ
3) բոլոր հիդրիդների բաղադրամաս է
4) ստացվում է ջրի էլեկտրոլիզից

26. Ո՞րն է քլորի ատոմի էլեկտրոնային բանաձևը հիմնական վիճակում.

- 1) $1s^2 2s^2 2p^5$ 3) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6$
2) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^5$ 4) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^5 4s^2 4p^5$

27. Քլորաջրածնի և դր նյութի փոխազդեցությունից են լաբորատորիայում քլոր ստանում.

- 1) $NaCl$ 2) MnO_2 3) K_2SO_4 4) $CaCl_2$

28. Ո՞ր նյութի օքսիդացումից են լաբորատորիայում քլոր ստանում.

- 1) $NaCl$ 2) HCl 3) $KClO_3$ 4) MnO_2

29. Հետևյալ նյութերից ո՞րը կփոխազդի ալկալու հետ.

- 1) ածխածին 2) թթվածին 3) ջրածին 4) քլոր

30. Որո՞նք են հետևյալ ուրվագրով ռեակցիայի վերջանյութերը. $K_2SO_3 + Br_2 + H_2O \rightarrow \dots$

- 1) SO_2 , HBr , KOH 3) K_2SO_4 , HBr
2) H_2S , KBr 4) K_2S , HBr

31. Ո՞րն է վերականգնման արգասիքի գործակիցը հետևյալ ուրվագրով ռեակցիայում.
 $KOH + \dots \xrightarrow{t} KCl + KClO_3 + H_2O$.

- 1) 1 2) 3 3) 5 4) 6

32. Ո՞րն է օքսիդացման արգասիքի գործակիցը հետևյալ ուրվագրով ռեակցիայում.
 $KMnO_4 + \dots \rightarrow Cl_2 + MnCl_2 + KCl + H_2O$.

- 1) 2 2) 5 3) 8 4) 16

33. Ո՞րն է առավել ուժեղ վերականգնիչ անիոնը.

- 1) F^- 2) Cl^- 3) Br^- 4) I^-

34. Ո՞ր պնդումն է սխալ քլոր գազի վերաբերյալ.

- 1) սուր հոտով հեղձուցիչ գազ է
2) փոխազդում է ալկալիների հետ
3) ստացվում է աղաթթվի և մանգանի(IV) օքսիդի փոխազդեցությունից
4) օդից ծանր է 1,5 անգամ

35. Ո՞ր պնդումներն են ճիշտ քլորաջրածնի վերաբերյալ.

- ա) սուր հոտով հեղձուցիչ գազ է
բ) օդից ծանր է 2,5 անգամ
գ) ստացվում է կերակրի աղի և խիտ ծծմբական թթվի փոխազդեցությունից
դ) փոխազդում է սնդիկի հետ

- 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, գ

36. Որո՞նք են X_1 և X_2 նյութերի բանաձևերը հետևյալ փոխարկումներին համապատասխանող ռեակցիաների հավասարումներում. $NaCl \xrightarrow{X_1} HCl \xrightarrow{X_2} CaCl_2$

- 1) H_2 , $Ca(NO_3)_2$ 2) H_2CO_3 , CaO 3) H_2SO_4 , CaO 4) H_2 , $CaSO_4$

37. Ո՞ր շարքում են աղաթթվի հետ փոխազդող նյութերի բանաձևեր.

- 1) $NaHCO_3$, $KMnO_4$, P_2O_5 3) Na_2SO_4 , $KClO_3$, CuO
2) Na_2CO_3 , MnO_2 , $Cu(OH)_2$ 4) CH_3COONa , SiO_2 , K_2S

38. Ո՞ր թթուն է թույլ էլեկտրոլիտ.

- 1) պերքլորական 3) ֆտորաջրածնային
2) ծծմբական 4) ազոտական

39. Որքան է քլորաջրի լուսավորման արդյունքում ստացվող գազի հարաբերական խտությունն ըստ հելիումի.

- 1) 17,75 2) 5 3) 9,12 4) 8

40. Ո՞րն է VII խմբի գլխավոր ենթախմբի տարրերի ընդհանուր անվանումը.

- 1) քալոգեններ 3) հալոգեններ
2) ազնիվ գազեր 4) ոչ աղածիններ

41. Ո՞ր պնդումներն են ճիշտ պարզ նյութերի $F_2-Cl_2-Br_2-I_2$ շարքի վերաբերյալ.

- ա) խտությունը մեծանում է
բ) հալման ջերմաստիճանը փոքրանում է
գ) միջմոլեկուլային փոխազդեցության ուժերն աճում են

դ) ազրեգատային վիճակը փոխվում է գազ-գազ-գազ-հեղուկ կարգով
 ե) ազրեգատային վիճակը փոխվում է գազ-գազ-հեղուկ-սինդ կարգով

- 1) ա, բ, դ 2) բ, գ, դ 3) ա, բ, ե 4) ա, գ, ե

42. Ո՞ր ռեակցիայում է Cl_2 պարզ նյութը դրսևորում վերօքս երկակիություն.

- 1) $H_2S + 4Cl_2 + H_2O = H_2SO_4 + 8HCl$ 3) $2FeCl_2 + Cl_2 = 2FeCl_3$
 2) $Cl_2 + 3F_2 = 2ClF_3$ 4) $Cl_2 + 2KOH = KCl + KClO + H_2O$

43. Ո՞րն է հետևյալ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը. $Cl_2 + Na \rightarrow \dots$

- 1) 6 2) 5 3) 7 4) 9

44. Հետևյալ պնդումներից որոնք են ճիշտ.

- ա) քլորաջրում քլորի մոտ 30 %-ը դարձելիորեն փոխազդում է ջրի հետ
 բ) բրոմաջրում և յոդաջրում հալոգենները գերազանցապես մոլեկուլային ձևով են
 գ) հալոգենների լուծելիությունը ջրում մեծանում է $Cl_2 - Br_2 - I_2$ շարքում

- 1) ա, գ 2) ա, բ, գ 3) բ, գ 4) ա, բ

45. Որքան է օքսիդացման արգասիքի հարաբերական մոլեկուլային զանգվածը հետևյալ ուրվագրին համապատասխանող ռեակցիայում. $Cl_2 + KOH \xrightarrow{100^\circ C} \dots$

- 1) 90,5 2) 74,5 3) 122,5 4) 36,5

46. Որքան է վերականգնման արգասիքի գործակիցը հետևյալ ուրվագրին համապատասխանող ռեակցիայում. $Cl_2 + KOH \xrightarrow{100^\circ C} \dots$

- 1) 4 2) 3 3) 1 4) 5

47. Համապատասխանեցրե՛ք հալոգենաջրածնային թթուների և դրանց թթվային մնացորդների անվանումները.

<i>Թթու</i>	<i>Թթվային մնացորդ</i>
ա) ֆտորաջրածնային թթու	1) քլորիդ
բ) քլորաջրածնային թթու	2) քլորիտ
	3) ֆտորիդ
	4) ֆտորիտ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ2 2) ա3, բ2 3) ա3, բ1 4) ա3, բ4

48. Ո՞րն է օքսիդիչ մասնիկը հետևյալ ուրվագրին համապատասխանող ռեակցիայում. $HCl + Al \rightarrow \dots$

- 1) Cl^- 2) H^+ 3) Al^0 4) Cl^0

49. Ո՞ր պնդումն է ճիշտ ջրային լուծույթում քլորաջրածնի վերաբերյալ.

ա) դասվում է ուժեղ էլեկտրոլիտների շարքին

բ) դասվում է օքսիդիչ թթուների շարքին

1) ճիշտ է միայն p -ն

3) ճիշտ է միայն $ա$ -ն

2) ճիշտ են ն $ա$ -ն, ն $բ$ -ն

4) երկու պնդումներն էլ սխալ են

50. Ո՞ր թթուն են օգտագործում ապակին խածատելու համար.

1) յոդաջրածնային

3) ֆտորաջրածնային

2) բրոմաջրածնային

4) քլորաջրածնային

51. Ո՞ր մետաղների հետ *չի փոխազդում* աղաթթուն.

ա) Au

զ) Ag

ե) Cu

է) Hg

բ) Fe

դ) Zn

զ) Al

ը) Mg

1) գ, ե, է, ը

2) ա, գ, ե, է

3) ա, գ, է, ը

4) բ, դ, գ, ը

52. Քլորաջրածնի հնարավոր մոլեկուլներից որո՞ւմ է նեյտրոնների թիվը հավասար պրոտոնների թվին.

1) ${}^1\text{H}^{35}\text{Cl}$

2) ${}^1\text{H}^{37}\text{Cl}$

3) ${}^2\text{H}^{35}\text{Cl}$

4) ${}^2\text{H}^{37}\text{Cl}$

53. Ի՞նչ կապ է առկա ջրի մոլեկուլների միջև.

1) իոնային

3) կովալենտ բևեռային

2) ջրածնային

4) կովալենտ ոչ բևեռային

54. 0,3 մոլ քանակով R^- անիոնում պարունակվում է 5,4 մոլ էլեկտրոն: Ո՞րն է այդ անիոնը.

1) I^-

2) Br^-

3) Cl^-

4) F^-

55. Ո՞ր անիոնի շառավիղն է առավել մեծ.

1) I^-

2) Br^-

3) Cl^-

4) F^-

56. 6 L ծավալով անոթը լցված է 4 գ ջրածին գազով: Որքան է գազի մոլային կոնցենտրացիան (մոլ/ L).

1) $1/3$

2) $1/4$

3) $1/2$

4) $1,5$

57. Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ մոլեկուլում կապի երկարության մեծացման.

1) F_2 , BrCl , Br_2

3) Cl_2 , BrCl , I_2

2) I_2 , Br_2 , F_2

4) HI , HBr , HF

58. Ո՞ր շարքի նյութերն են ստացվում նատրիումի բրոմիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզով (իններտ էլեկտրոդներ).

- 1) Na, HBr, Br₂ 3) H₂, Br₂, NaOH
2) H₂, Br₂, NaBr 4) Na, HBr, NaH

59. 0,2 մոլ կալիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի մեջ անցկացրել են 4,0 Լ (ն. պ.) քլորաջրածին: Ստացված լուծույթում ի՞նչ գույն կունենա լակմուսը.

- 1) կապույտ 2) կարմիր 3) դեղին 4) մորու գույն

60. Ո՞ր շարքի բոլոր նյութերն են փոխազդում աղաթթվի հետ.

- 1) Zn, Al₂O₃, K₂SO₃ 3) Al(OH)₃, ZnO, BaSO₄
2) NaNO₂, KF, Ca(NO₃)₂ 4) CuO, NaOH, NaNO₃

61. Ո՞րն է տարրի էլեկտրոնային բանաձևը, եթե դրա բարձրագույն օքսիդացման աստիճանով թթվածնավոր թթվի բանաձևն է HRO₄.

- 1) [He]2s²2p⁵ 2) [Ne]3s²3p⁵ 3) [Ar]3d⁶4s² 4) [Ar]3d³4s²

62. Ինչո՞վ են նման ³⁵Cl և ⁷⁹Br ատոմները.

- 1) զանգվածով
2) չափերով
3) արտաքին էներգիական մակարդակում առկա էլեկտրոնների թվով
4) հիմնական վիճակում էլեկտրոնային շերտերի թվով

63. Ի՞նչ քիմիական կապ կարող է առաջանալ երկու ոչմետաղային տարրերի ատոմների միջև.

- 1) մետաղային 2) իոնային 3) կովալենտային 4) ջրածնային

64. Որքան է «ծանր» ջրի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) 18 2) 19 3) 20 4) 22

65. Նյութերի ո՞ր գույգի փոխազդեցությունից ջրածին կանջատվի.

- 1) կալցիումի հիդրիդ և ջուր 3) խիտ ծծմբական թթու և պղինձ
2) կալցիումի կարբիդ և ջուր 4) խիտ ազոտական թթու և ցինկ

66. Որքան է 44,8 մ³ (ն. պ.) ծավալով ջրածնի զանգվածը (կգ).

- 1) 5 2) 10 3) 2 4) 4

67. Ո՞ր փոխազդեցության հետևանքով մետաղ կստացվի.

- 1) Cu + O₂ → 3) Cu + H₂O →
2) Cu₂O + O₂ → 4) CuO + H₂ →

68. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի ջրածինը համապատասխան պայմաններում.

- 1) թթվածին, ազոտ, պղնձի(II) օքսիդ 3) թթվածին, ծծումբ, ջուր
 2) ջուր, թթվածին, երկաթի(III) օքսիդ 4) ջուր, քլոր, վոլֆրամի(VI) օքսիդ

69. Ո՞ր տարրի օքսիդը *չի փոխազդում* ջրի հետ.

- 1) նատրիում 2) արծաթ 3) կալցիում 4) ածխածին(IV)

70. Ո՞ր նյութերն են առաջանում կալցիումի և ջրի փոխազդեցությունից.

- 1) CaO և H₂ 2) Ca(OH)₂ և H₂ 3) Ca₂O 4) Ca(OH)₂ և CaO₂

71. Կրաքարի և աղաթթվի փոխազդեցությունից անջատվել է 44,8 Լ (ն. պ.) գազ: Ինչքանակով (մոլ) քլորաջրածին է փոխազդել.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

72. Ո՞ր նյութերի հետ փոխազդելիս ջուրը կցուցաբերի օքսիդիչ հատկություն.

- ա) Na բ) C գ) CaO դ) CO ե) SO₂
 1) ա, բ, դ 2) բ, գ, դ 3) գ, ե 4) ա, բ, ե

73. Ո՞ր նյութը կարելի է օգտագործել Cl₂ գազը խոնավազրկելու համար.

- ա) CuSO₄ բ) Na₂SO₄ գ) KOH դ) H₂SO₄ ե) FeCl₂
 1) ա, բ, դ 2) բ, գ, դ 3) բ, գ, ե 4) ա, բ, ե

74. Ո՞ր նյութի և ջրի փոխազդեցության արդյունքում գազ *չի անջատվում*.

- 1) CaC₂ 2) NaH 3) BaO 4) Al₄C₃

75. Համապատասխանեցրե՛ք մասնիկի լիցքը և էլեկտրոնային բանաձևը.

<i>Մասնիկի լիցք</i>	<i>Էլեկտրոնային բանաձև</i>
ա) Cl ⁺⁷	1) 1s ² 2s ² 2p ⁶ 3s ² 3p ⁶
բ) Cl ⁺⁵	2) 1s ² 2s ² 2p ⁶ 3s ² 3p ²
գ) Cl ⁰	3) 1s ² 2s ² 2p ⁶ 3s ²
դ) Cl ⁻¹	4) 1s ² 2s ² 2p ⁶
	5) 1s ² 2s ² 2p ⁶ 3s ² 3p ⁵
	6) 1s ² 2s ² 2p ⁶ 3s ² 3p ⁴

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ2, գ6, դ1 3) ա4, բ3, գ5, դ1
 2) ա2, բ6, գ4, դ3 4) ա6, բ2, գ4, դ5

76. Համապատասխանեցրե՛ք քիմիական տարրի նշանը և այդ տարրի բարձրագույն օքսիդացման աստիճանով քլորիդի բանաձևը.

Տարրի նշան	Քլորիդի բանաձև
ա) C	1) XCl
բ) Al	2) XCl ₄
գ) S	3) XCl ₂
դ) P	4) XCl ₅
	5) XCl ₃
	6) XCl ₆

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա6, բ5, գ6, դ5 3) ա2, բ5, գ6, դ4
2) ա2, բ3, գ4, դ3 4) ա3, բ3, գ2, դ5

77. Ո՞ր պնդումներն են ճիշտ ջրածնի համար.

- ա) ակտիվ մետաղների հետ առաջացնում է իոնական միացություններ
բ) ոչմետաղների հետ միացություններ չի առաջացնում
- 1) երկու պնդումներն էլ ճիշտ են 3) երկու պնդումներն էլ սխալ են
2) ճիշտ է միայն ա–ն 4) ճիշտ է միայն բ–ն

78. Ո՞ր նյութերի հետ են փոխազդում և՛ ջրածինը, և՛ քլորը.

- ա) ջուր բ) էթիլեն գ) կալցիումի հիդրօքսիդ դ) մետաղական կալցիում
- 1) ա, բ 2) բ, դ 3) ա, դ 4) բ, գ

79. Ո՞ր պնդում(ներն) է(են) ճիշտ.

- ա) պարբերական համակարգի VII խմբի բոլոր տարրերը կոչվում են հալոգեններ
բ) բոլոր հալոգենները միացություններում կարող են ցուցաբերել –1 նվազագույն և +7 առավելագույն օքսիդացման աստիճաններ
գ) Ֆտորը բոլոր միացություններում ցուցաբերում է –1 օքսիդացման աստիճան
- 1) բ 2) բ, գ 3) ա, գ 4) գ

80. Համապատասխանեցրե՛ք քիմիական ռեակցիաների էլանյութերը և վերջանյութերը.

Ելանյութեր	Վերջանյութեր
ա) HCl + Fe ₃ O ₄	1) FeCl ₃ + H ₂ O
բ) HCl + Fe ₂ O ₃	2) FeCl ₂ + FeCl ₃ + H ₂ O
գ) HCl + FeO	3) CuCl ₂ + H ₂ O
դ) HCl + Cu ₂ O	4) FeCl ₂ + H ₂ O
	5) CuCl + H ₂ O

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

1) ա2, բ1, գ4, դ3

3) ա4, բ1, գ1, դ5

2) ա4, բ1, գ4, դ5

4) ա2, բ1, գ4, դ5

81. Համապատասխանեցրե՛ք նյութի քիմիական բանաձևը և դրանում քլորի օքսիդացման աստիճանը.

Քիմիական բանաձև	Քլորի օքսիդացման աստիճան
ա) $KClO_4$	1) +5
բ) $KClO_3$	2) +7
գ) $NaOCl$	3) +1
դ) PCl_5	4) -1
	5) 0

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

1) ա4, բ2, գ5, դ1

3) ա2, բ1, գ3, դ4

2) ա2, բ1, գ4, դ3

4) ա4, բ2, գ1, դ5

2.2.1. Ոչմետաղներ: Ջրածին, ջուր, հալոգեններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	28	2	55	1
2	3	29	4	56	1
3	3	30	3	57	3
4	1	31	3	58	3
5	1	32	2	59	1
6	2	33	4	60	1
7	4	34	4	61	2
8	4	35	4	62	3
9	2	36	3	63	3
10	4	37	2	64	3
11	4	38	3	65	1
12	4	39	4	66	4
13	2	40	3	67	4
14	2	41	4	68	1
15	1	42	4	69	2
16	3	43	2	70	2
17	4	44	4	71	3
18	1	45	3	72	1
19	2	46	4	73	1
20	2	47	3	74	3
21	1	48	2	75	3
22	4	49	3	76	3
23	4	50	3	77	2
24	2	51	2	78	2
25	4	52	1	79	4
26	2	53	2	80	4
27	2	54	3	81	3

2.2.2. Թթվածնի ենթախումբ: Թթվածին և ծծումբ

1. Ինչ օքսիդացման աստիճան է ցուցաբերում թթվածինը միացություններում.

- | | |
|---------------|---|
| 1) միայն -1 | 3) -2 , հիմնականում -1 |
| 2) միայն -2 | 4) -1 , հիմնականում -2 , ավելի հազվադեպ $+1$, $+2$ |

2. Որքան է թթվածին տարրի ատոմի զանգվածը՝ m_0 (կգ), եթե հարաբերական ատոմային զանգվածը 16 է.

- | | | | |
|--------------------------|--------------------------|--------------------------|---------------------------|
| 1) $2,66 \cdot 10^{-23}$ | 2) $1,66 \cdot 10^{-23}$ | 3) $2,66 \cdot 10^{-26}$ | 4) $1,674 \cdot 10^{-28}$ |
|--------------------------|--------------------------|--------------------------|---------------------------|

3. Հետևյալ գազերից որոնք են օդի հիմնական բաղադրամասերը.

- | | |
|---------------------|---------------------------|
| 1) ջրածին և ազոտ | 3) թթվածին և ազոտ |
| 2) ջրածին և թթվածին | 4) ջրային գոլորշի և արգոն |

4. Քանի՞ պրոտոն է պարունակվում թթվածնի համապատասխանաբար ^{16}O , ^{17}O , ^{18}O իզոտոպների միջուկներում.

- | | | | |
|------------|------------|-------------|---------------|
| 1) 6, 7, 8 | 2) 8, 8, 8 | 3) 8, 9, 10 | 4) 16, 17, 18 |
|------------|------------|-------------|---------------|

5. Ո՞ր տարրի առաջացրած պարզ նյութն է կազմում օդի բաղադրության $1/5$ մասը՝ ըստ ծավալի.

- | | | | |
|---------|---------|-----------|------------|
| 1) ազոտ | 2) քլոր | 3) ջրածին | 4) թթվածին |
|---------|---------|-----------|------------|

6. Ո՞ր շարքի բոլոր նյութերի ջերմային քայքայումից թթվածին կստացվի.

- | | |
|--|---|
| 1) BaO , Fe_3O_4 , $\text{Al}(\text{OH})_3$ | 3) CaO , NH_4NO_3 , BaO_2 |
| 2) Na_2O , CaCO_3 , Al_2O_3 | 4) KMnO_4 , $\text{Ca}(\text{NO}_3)_2$, KClO_3 |

7. Միացությունների զո՞ր շարքում են նյութերը դասավորված թթվածնի օքսիդացման աստիճանի աճման կարգով.

- | | |
|---|---|
| 1) BaO , O_2 , $\text{Al}(\text{OH})_3$ | 3) Na_2O_2 , NH_4NO_3 , OF_2 |
| 2) Na_2O , O_2 , OF_2 | 4) KMnO_4 , O_2 , KClO_3 |

8. Ո՞րն է VI խմբի գլխավոր ենթախմբի տարրերի ցնդող ջրածնային միացությունների ընդհանուր բանաձևը.

- | | | | |
|-------------------------|------------------|----------------|------------------|
| 1) H_2R | 2) RH_3 | 3) RH | 4) RH_4 |
|-------------------------|------------------|----------------|------------------|

9. Ո՞ր շարքում են պարբերական համակարգի միայն VI խմբի գլխավոր ենթախմբի տարրերի անվանումներ.

- | | |
|------------------------------------|------------------------------------|
| 1) ծծումբ, սելեն, տելուր և վոլֆրամ | 3) քրոմ, մոլիբդեն և վոլֆրամ |
| 2) թթվածին, ծծումբ, քրոմ և սելեն | 4) թթվածին, ծծումբ, սելեն և տելուր |

10. Ինչպե՞ս են անվանվում ^{16}O , ^{17}O և ^{18}O ատոմները.

- 1) իզոմերներ 2) իզոտոպներ 3) հոմոլոգներ 4) ալոտրոպներ

11. Ո՞ր նյութի ջրային լուծույթով կարելի է օգնը տարբերել թթվածնից.

- 1) կալիումի յոդիդի 3) ջրածնի պերօքսիդի
2) կալիումի նիտրատի 4) կաուստիկ սոդայի

12. H_2O , H_2S , H_2Se , H_2Te շարքում ինչպե՞ս է փոխվում հետևյալ բանաձևերից յուրաքանչյուրին համապատասխան մոլեկուլի կայունությունը.

- 1) մեծանում է
2) փոքրանում է
3) H_2O , H_2S , H_2Se շարքում մեծանում է, իսկ H_2Se , H_2Te շարքում՝ փոքրանում
4) H_2O , H_2S , H_2Se շարքում փոքրանում է, իսկ H_2Se , H_2Te շարքում՝ մեծանում

13. Ջրային լուծույթներում ինչպե՞ս է փոխվում H_2O , H_2S , H_2Se , H_2Te բանաձևերին համապատասխանող թթուների ուժը.

- 1) մեծանում է
2) փոքրանում է
3) H_2O , H_2S , H_2Se շարքում մեծանում է, իսկ H_2Se , H_2Te շարքում՝ փոքրանում
4) H_2O , H_2S , H_2Se շարքում փոքրանում է, իսկ H_2Se , H_2Te շարքում՝ մեծանում

14. Ի՞նչ քանակով (մոլ) օզոն կստացվի 120 գրամ թթվածինը օզոնի փոխարկելիս.

- 1) 1 2) 1,5 3) 2 4) 2,5

15. Ո՞ր օքսիդացման-վերականգնման գործընթացն է տեղի ունենում կալիումի յոդիդի ջրային լուծույթի մեջ օզոն անցկացնելիս.

- 1) թթվածին տարրը ենթարկվում է ինքնաօքսիդացման-ինքնավերականգնման
2) յոդը ենթարկվում է ինքնաօքսիդացման-ինքնավերականգնման
3) յոդը վերականգնվում է, թթվածինը՝ օքսիդանում
4) յոդն օքսիդանում է, թթվածինը՝ վերականգնվում

16. Հետևյալ գործընթացներից որի՞ դեպքում է թթվածին ստացվում.

- 1) մալաքիտի քայքայում
2) կալցիումի կարբոնատի շիկացում
3) կալիումի պերմանգանատի քայքայում
4) նատրիումի քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզ

17. Ինչպե՞ս են փոխվում թթվային հատկությունները օքսիդների հետևյալ շարքում.
 SO_2 - SeO_2 - TeO_2 .

- 1) ուժեղանում են 3) SO_2 - SeO_2 -ը ուժեղանում է, SeO_2 - TeO_2 -ը՝ թուլանում
2) թուլանում են 4) SO_2 - SeO_2 -ը թուլանում է, SeO_2 - TeO_2 -ը՝ ուժեղանում

18. Հետևյալ նյութերից որի հետ է անմիջականորեն փոխազդում թթվածինը.

- 1) արծաթի 2) ոսկու 3) բրոմի 4) ազոտի(II) օքսիդի

19. Հետևյալ միացություններից որի բյուրեղավանդակն է իոնային.

- 1) H_2S 2) H_2O 3) SO_2 4) Na_2S

20. Ինչպե՞ս է փոխվում քալկոգենների իոնացման էներգիան կարգաթվի մեծացմանը զուգընթաց.

- 1) մեծանում է օրինաչափորեն 3) մեծանում է ոչ օրինաչափ
2) փոքրանում է օրինաչափորեն 4) փոքրանում է ոչ օրինաչափ

21. Ինչպե՞ս են փոխվում մոլեկուլների քանակը և զանգվածը փակ անոթում գտնվող թթվածինն օզոնի փոխարկելիս.

- 1) ն՝ քանակը, ն՝ զանգվածը մեծանում են
2) քանակը փոքրանում է, իսկ զանգվածը մնում է նույնը
3) քանակը մեծանում է, իսկ զանգվածը՝ փոքրանում
4) քանակը մնում է նույնը, իսկ զանգվածը՝ մեծանում

22. Ո՞ր շարքում են ներկայացված թթվածին տարրի օքսիդացման աստիճանները Cl_2O_7 , H_2O_2 , OF_2 միացություններում համապատասխանաբար.

- 1) $-2, -2, -2$ 2) $+2, -1, -2$ 3) $-2, -1, +2$ 4) $-2, +1, -2$

23. Ինչ ծավալով (լ, ն. պ.) օզոն կստացվի 6,72 լ (ն. պ.) թթվածինն օզոնարարում ամբողջությամբ օզոնի փոխարկելիս.

- 1) 6,72 2) 2,24 3) 4,48 4) 1,12

24. Ո՞ր նյութն է առաջանում հավասար նյութաքանակներով նատրիումի հիդրօքսիդի և ծծմբի(IV) օքսիդի փոխազդեցությունից.

- 1) Na_2SO_3 2) Na_2SO_4 3) $NaHSO_4$ 4) $NaHSO_3$





25. Ո՞րն է օքսիդիչը հետևյալ ուրվագրով ռեակցիայում. $H_2S + K_2SO_3 \rightarrow S + KOH + H_2O$.

- 1) H_2S 2) K_2SO_3 3) KOH 4) S





26. Ո՞ր նյութերն են փոխազդում ծծմբի(IV) օքսիդի հետ համապատասխան պայմաններում.

- 1) նատրիումի սուլֆիտ և ծծմբաջրածին
2) կալիումի սուլֆատ և թթվածին
3) նատրիումի քլորիդ և բրոմաջուր
4) արծաթի նիտրատ և ածխածնի(IV) օքսիդ




27. Ո՞ր ռեակցիայում է մանգանի(IV) օքսիդը կիրառվում որպես կատալիզատոր.




28. Ո՞ր նյութերի հետ է փոխազդում ծծումբը.



29. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի նսւր ծծմբական թթուն.







30. Ի՞նչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա 0,02 մոլ S^{2-} իոն պարունակող լուծույթին 0,04 մոլ Cu^{2+} իոն ավելացնելիս.





31. 4 % չայրվող խառնուկներ պարունակող 500 գ ծծմբի այրումից ստացվել է 268,8 լ (ն. պ.) ծծմբի(IV) օքսիդ: Որքան է ռեակցիայի ելքը (%).





32. Քանի՞ նեյտրոն է պարունակվում թթվածնի ^{16}O , ^{17}O , ^{18}O իզոտոպների միջուկներում համապատասխանաբար.



33. Ո՞րն է $\text{CuO} + \text{H}_2\text{SO}_4 = \text{CuSO}_4 + \text{H}_2\text{O}$ ռեակցիայի կրճատ իոնային հավասարումը.



34. Ո՞ր ռեակցիայում է ծծմբի(IV) օքսիդը ցուցաբերում վերականգնիչ հատկություն.



35. Համապատասխանեցրե՛ք մասնիկը և էլեկտրոնային բանաձևը.

Մասնիկ	Էլեկտրոնային բանաձև
ա) S^{+4}	1) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6$
բ) S^0	2) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^4$
գ) S^{+6}	3) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^2$
	4) $1s^2 2s^2 2p^6 3s^2$
	5) $1s^2 2s^2 2p^6$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ2, գ1 2) ա3, բ2, գ5 3) ա4, բ2, գ5 4) ա2, բ3, գ4

36. Ծծումբ պարունակող հանքանյութերից ո՞րը սուլֆիդային չէ.

- 1) ցինկի խաբուսակ 3) գիպս
2) պիրիտ 4) կապարափայլ

37. Ո՞ր պնդումներն են ճիշտ ծծմբային թթվի համար.

- ա) դիսոցվում է աստիճանաբար
բ) դրանում ծծմբի օքսիդացման աստիճանը +6 է
գ) երկհիմն թույլ թթու է
դ) ստացվում է կալիումի սուլֆատի և աղաթթվի փոխազդեցությունից

- 1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) ա, գ

38. Սուլֆիդ-, սուլֆատ- և սուլֆիտ իոններ պարունակող լուծույթը մշակել են բարիումի քլորիդի ավելցուկով, նստվածքն առանձնացրել են, դրա վրա ավելացրել աղաթթվի ավելցուկ և եռացրել: Ո՞րն է (որոնք են) վերջնական լուծույթում հայտաբերված անիոն(ներ)ը.

- 1) SO_4^{2-} 2) S^{2-} , Cl^- 3) SO_3^{2-} , Cl^- 4) Cl^-

39. Հետևյալ մասնիկներից որոնք են գտնվում ծծմբաջրածնի ջրային լուծույթում.

- ա) H ատոմ բ) S ատոմ գ) HS^- անիոն դ) S^{2-} անիոն ե) H_2S մոլեկուլ
1) ա, բ, ե 2) գ, դ, ե 3) ա, գ, դ 4) բ, գ, դ

40. Հետևյալ նյութերից որոնք կփոխազդեն ծծմբական թթվի նոսր ջրային լուծույթի հետ.

- ա) K_2S բ) Na_2SO_3 գ) K_2SO_4 դ) Hg ե) Fe զ) $NaNO_3$
1) ա, դ, գ 2) բ, գ, դ 3) բ, ե, գ 4) ա, բ, ե

41. Ո՞րն է բաց թողած բառը հետևյալ արտահայտությունում.

Ծծմբական թթվի և սուլֆատների որակական հայտարերման համար կիրառում են _____ լուծելի աղեր:

- 1) պղնձի 2) բարիումի 3) նատրիումի 4) երկաթի

42. Որքան է ծծմբի մոլային բաժինը (%) հետևյալ ուրվագրում բաց թողած նյութի մոլեկուլում. $\text{SO}_2 + \text{NO}_2 \rightarrow \text{NO} + \dots$

- 1) 15 2) 25 3) 35 4) 45

43. Ո՞ր վերօքս ռեակցիայում է ծծումբ տարրը հանդես գալիս որպես վերականգնիչ.

- 1) $\text{S} + \text{Cu} = \text{CuS}$ 2) $\text{S} + \text{Hg} = \text{HgS}$ 3) $\text{S} + \text{H}_2 = \text{H}_2\text{S}$ 4) $\text{S} + \text{O}_2 = \text{SO}_2$




44. Ո՞ր շարքի տարրերն են դասավորված ատոմային շառավիղների մեծացման կարգով.

- 1) O, S, Se, Te 2) I, Br, Cl, F 3) C, N, O, F 4) Sb, As, P, N

45. Առավելագույնը ինչ ծավալով (լ, ն. պ.) SO_2 կփոխազդի 10 գ NaOH -ի հետ.




- 1) 1,4 2) 2,8 3) 5,6 4) 11,2

46. Հետևյալ ռեակցիաներից որոնցում է ջրածնի պերօքսիդը դրսևորում միայն օքսիդիչ հատկություն.



- 1) ա, բ 2) բ, դ 3) գ, դ 4) ա, գ

47. Հետևյալ ռեակցիաներից որոնում է ջրածնի պերօքսիդը դրսևորում վերօքս երկակիություն.



48. Որքան է հետևյալ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը. $\text{S} + \text{HNO}_3_{(\text{խ})} \rightarrow \text{H}_2\text{SO}_4 + \dots + \dots$

- 1) 7 2) 9 3) 17 4) 16

49. Որքան է ծծմբաջրածնի լրիվ այրման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 7 2) 8 3) 9 4) 10

57. Ո՞րն է քիմիական տարրի ջրածնային միացության բանաձևը, եթե այդ տարրին համապատասխանող R^{2-} իոնի և արգոնի ատոմի էլեկտրոնային բանաձևերը նույնն են.

- 1) CH_4 2) H_2S 3) HF 4) PH_3

58. Ո՞ր միացության մոլեկուլում է ծծմբի ատոմի օքսիդացման աստիճանը -1 .

- 1) Cu_2S 2) FeS_2 3) H_2S 4) FeS

59. Ո՞ր գրառումներն են ճիշտ.

ա) $M_r(SO_2) = 64$

գ) $M(SO_4^{2-}) = 96$ գ/մոլ

բ) $A_r(H) = 1$ գ/մոլ

դ) $M(H_2^{18}O) = 20$ գ/մոլ

- 1) ա, բ 2) բ, գ 3) ա, գ, դ 4) բ, գ, դ

60. Ո՞ր աղը կգոյանա RO_3 բանաձևն ունեցող օքսիդի և ավելցուկով վերցրած $NaOH$ -ի լուծույթի փոխազդեցությունից.

- 1) NaR_3O_4 2) Na_2RO_4 3) Na_2RO_3 4) $NaRO_3$

61. Ո՞ր աղի ջրային լուծույթի հետ կփոխազդի նատրիումի հիդրօքսիդը.

- 1) $CuSO_4$ 2) $BaCl_2$ 3) K_2S 4) $Ba(NO_3)_2$

62. Ո՞ր թթուներն են համապատասխանում ծծմբի(VI) օքսիդին.

- 1) H_2SO_3 և H_2SO_4 3) $H_2S_2O_3$ և H_2SO_4
2) H_2SO_4 և $H_2S_2O_7$ 4) $H_2S_2O_7$ և H_2SO_3

63. Ո՞ր թթուն կցուցաբերի միայն վերականգնիչ հատկություն ծծմբի(IV) օքսիդի հետ փոխազդելիս.

- 1) ազոտական 3) ծծմբաջրածնային
2) ծծմբական 4) ֆոսֆորական

64. CuO -ի, CuS -ի և $CuCO_3$ -ի խառնուրդն աղաթթվի ավելցուկով մշակելուց և լուծույթը ֆիլտրելուց հետո ի՞նչ նյութ կմնա ֆիլտրի թղթի վրա.

- 1) CuO 2) CuS 3) $CuCl_2$ 4) $CuCO_3$

65. Հետևյալ նյութերից որո՞նք կարելի է կիրառել ծծմբի(IV) օքսիդը կլանելու համար.

- ա) $NaOH$ բ) P_2O_5 գ) CaO դ) $CaCl$

- 1) ա, գ 2) ա, բ 3) բ, գ 4) բ, դ

66. Ո՞ր ռեակցիայում է SO_2 -ը ցուցաբերում վերականգնիչ հատկություն.

- 1) $SO_2 + Na_2SO_3 + H_2O = 2NaHSO_3$ 3) $SO_2 + Cl_2 + 2H_2O = H_2SO_4 + 2HCl$
2) $SO_2 + 2CO = S + 2CO_2$ 4) $SO_2 + Na_2CO_3 = Na_2SO_3 + CO_2$

67. Գազի հավաքման դր եղանակը կարելի է օգտագործել լաբորատորիայում թթվածին ստանալիս.

1) խոր սառեցման

3) միայն ջրի դուրսմղման

2) միայն օդի դուրսմղման

4) ն ջրի, ն օդի դուրսմղման

68. Ինչ զանգվածով (գ) օզոնի և թթվածնի խառնուրդ (օզոնացված թթվածին) կստացվի օզոնարարում, եթե σ գ թթվածնի 10 %-ը փոխարկվի օզոնի.

1) 0,1 a

2) 0,15 a

3) a

4) 1,5 a

69. Ո՞ր նյութերի հետ կփոխազդի թթվածինը համապատասխան պայմաններում.

ա) SO_2 բ) CO_2 գ) SO_3 դ) H_2S ե) CH_3OH

1) բ, դ, ե

2) ա, գ, դ

3) գ, դ, ե

4) ա, դ, ե

70. Ինչ զանգվածով (գ) O_2 -ի հետ կարող է միանալ 5,6 գ ծծումբը.

1) 32

2) 16

3) 8,6

4) 5,6

2.2.2. Թթվածնի ենթախումբ: Թթվածին և ծծումբ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	4	25	2	49	3
2	3	26	1	50	4
3	3	27	3	51	3
4	2	28	3	52	2
5	4	29	4	53	2
6	4	30	3	54	4
7	2	31	3	55	1
8	1	32	2	56	3
9	4	33	2	57	2
10	2	34	2	58	2
11	1	35	3	59	3
12	2	36	3	60	2
13	1	37	4	61	1
14	4	38	4	62	2
15	4	39	2	63	3
16	3	40	4	64	2
17	2	41	2	65	1
18	4	42	2	66	3
19	4	43	4	67	4
20	2	44	1	68	3
21	2	45	3	69	4
22	3	46	2	70	4
23	3	47	1		
24	4	48	4		

2.2.3. Ազոտի ենթախումբ: Ազոտ և ֆոսֆոր

1. Ինչ նվազագույն և առավելագույն օքսիդացման աստիճաններ են բնորոշ ազոտի ենթախմբի տարրերին.
1) -3, +5 2) -2, +5 3) -3, +4 4) -1, +5
2. Լաբորատորիայում դ՞ր նյութի ջերմային քայքայումով են ազոտ ստանում.
1) NH_4OH 2) NH_4Cl 3) NH_4NO_3 4) NH_4NO_2
3. Ինչ զանգվածով (գ) ամոնիակ կստացվի 7 գ ազոտի և ավելցուկով վերցրած ջրած-
նի խառնուրդը կատալիզատոր պարունակող խողովակի միջով անցկացնելիս.
1) 1,5 2) 7,5 3) 8,5 4) 17
4. Ո՞րն է ամոնիումային աղի ստացման ռեակցիայի հավասարման ճախ մասը.
1) $\text{NH}_3 + \text{H}_2\text{O} \rightarrow$ 3) $\text{NH}_3 + \text{HCl} \rightarrow$
2) $\text{NH}_3 + \text{CuO} \rightarrow$ 4) $\text{NO}_2 + \text{HCl} \rightarrow$
5. Որքան է A ազղանյութի հարաբերական մոլեկուլային զանգվածն ըստ հետևյալ
ուրվագրի. $\text{NH}_3 \xrightarrow{\text{A}} \text{NO} \xrightarrow{\text{A}} \text{NO}_2 \xrightarrow{\text{A}, \text{H}_2\text{O}} \text{HNO}_3$.
1) 2 2) 16 3) 17 4) 32
6. Ինչ զանգվածով (գ) թթու կառաջանա 44,8 լ (ն. պ.) ազոտի(IV) օքսիդի և ավելցու-
կով թթվածնի խառնուրդը ջրի մեջ անցկացնելիս.
1) 17 2) 63 3) 126 4) 252
7. Որքան է մետաղական պղնձի և նոսր ազոտական թթվի փոխազդեցության ռեակ-
ցիայի քանակաչափական գործակիցների գումարը.
1) 5 2) 8 3) 12 4) 20
8. Ո՞ր շարքում են ընդգրկված միայն ազոտի ենթախմբի տարրեր.
1) N, P, V, As, Fe 3) C, Si, Ge, Sn, Pb
2) N, P, As, Sb, Bi 4) V, Nb, Fe, Db, Ta
9. Ո՞ր զույգում թթուն և անհիդրիդը միմյանց չեն համապատասխանում.
1) $\text{P}_2\text{O}_5, \text{H}_3\text{PO}_4$ 3) $\text{SO}_2, \text{H}_2\text{SO}_3$
2) $\text{N}_2\text{O}_3, \text{HNO}_3$ 4) $\text{Cl}_2\text{O}_7, \text{HClO}_4$
10. Ազոտի դ՞ր օքսիդն է ստացել «ուրախացնող գազ» անվանումը.
1) N_2O_5 2) NO_2 3) N_2O_3 4) N_2O

20. Ո՞ր աղի ջերմային քայքայումից է ստացվում երկդիմի օքսիդ.

- 1) NH_4NO_3 2) NH_4NO_2 3) NH_4HCO_3 4) $(\text{NH}_4)_2\text{Cr}_2\text{O}_7$

21. 56 լ (ն. պ.) ազոտի և 168 լ (ն. պ.) ջրածնի խառնուրդը տաքացրել են կատալիզորդի առկայությամբ: Ինչ զանգվածով (գ) ամոնիակ կստացվի, եթե ռեակցիայի ելքը 60 % է.

- 1) 21 2) 31 3) 41 4) 51

22. Հետևյալ օքսիդներից ո՞րն է փոխազդում կալիումի հիդրօքսիդի հետ առանց ազոտի օքսիդացման աստիճանի փոփոխության.

- 1) N_2O 2) NO 3) NO_2 4) N_2O_5

23. Ո՞ր զույգում են ճիշտ ներկայացված ազոտի վալենտականությունն ու օքսիդացման աստիճանը ազոտական թթվի մոլեկուլում.

- 1) V և +5 2) IV և +5 3) V և +4 4) IV և +4

24. Ո՞ր մետաղի նիտրատի քայքայման արգասիքներում է մեկ գազային նյութ պարունակվում.

- 1) նատրիում 2) պղինձ 3) սնդիկ 4) ալյումին

25. 25 գ պղնձի(II) նիտրատի մասնակի քայքայումից ստացվել է 22,84 գ պինդ մնացորդ: Որքան է ստացված փոքր մոլային զանգվածով գազի ծավալը (լ, ն. պ.).

- 1) 0,112 2) 0,224 3) 0,336 4) 0,448

26. Ինչ կապեր են առկա ազոտի մոլեկուլում.

- 1) երեք σ 2) երեք π 3) մեկ σ և երկու π 4) երկու σ և մեկ π

27. Որքան է ամոնիակի կատալիտիկ օքսիդացման ռեակցիայի հավասարման աջ մասի քանակաչափական գործակիցների գումարը.

- 1) 6 2) 8 3) 10 4) 12

28. Ինչ հատկություն է ցուցաբերում օքսիդացման-վերականգնման ռեակցիաներում ազոտի ատոմն ամոնիակի մոլեկուլում.

- 1) միայն օքսիդիչ 3) միայն վերականգնիչ
2) օքսիդիչ և վերականգնիչ 4) վերօքս հատկություն չի ցուցաբերում

29. Որքան է թթվածնում ամոնիակի այրման ռեակցիայի հավասարման աջ մասի քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

- 1) 4 2) 7 3) 8 4) 10

30. Ո՞ր գույգ միացություններում ազոտն ունի նույն օքսիդացման աստիճանը.

- 1) HNO_2 , N_2O_3 2) Li_3N , HNO_3 3) Mg_3N_2 , N_2H_4 4) NH_3 , HNO_2

31. Ո՞ր նյութի հետ է փոխազդում ազոտական թթուն.

- 1) CuSO_4 2) Au 3) CaCO_3 4) CO_2

32. Ո՞րն է ամոնիակի կատալիտիկ օքսիդացման ռեակցիայի հավասարման ուրվագիրը.

- 1) $\text{NH}_3 + \text{O}_2 \rightarrow \text{NO} + \text{H}_2\text{O}$ 3) $\text{NH}_3 + \text{O}_2 \rightarrow \text{N}_2 + \text{H}_2\text{O}$
2) $\text{NH}_3 \rightarrow \text{N}_2 + \text{H}_2$ 4) $\text{NH}_3 + \text{HCl} \rightarrow \text{NH}_4\text{Cl}$

33. Ի՞նչ նյութեր են առաջանում ամոնիակի կատալիտիկ օքսիդացումից.

- 1) NO_2 և H_2O 2) NO և H_2O 3) N_2 և O_2 4) N_2O_3 և H_2O

34. Ի՞նչ նյութեր են առաջանում ամոնիումի նիտրատը շիկացնելիս.

- 1) ազոտի(II) օքսիդ և ջուր 3) ազոտ և ջուր
2) ամոնիակ և ազոտական թթու 4) ազոտի(I) օքսիդ և ջուր

35. Ի՞նչ նյութ(եր) է(են) առաջանում ազոտի(IV) օքսիդը ջրի հետ փոխազդելիս.

- 1) միայն HNO_3 2) միայն HNO_2 3) NH_4NO_3 4) HNO_3 և HNO_2

36. Ո՞ր նյութի $3,01 \cdot 10^{23}$ մոլեկուլների զանգվածն է 49 գրամ.

- 1) $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$ 2) $\text{Mg}_3(\text{PO}_4)_3$ 3) $(\text{NH}_4)_2\text{HPO}_4$ 4) H_3PO_4

37. Ո՞ր օքսիդներն են փոխազդում ալկալու հետ ազոտի օքսիդացման աստիճանի փոփոխությամբ.

- 1) N_2O_3 , N_2O_5 2) N_2O_3 , NO_2 3) NO_2 , N_2O_4 4) N_2O_3 , N_2O

38. Ո՞ր շարքի մետաղների նիտրատներն են քայքայվում ըստ հետևյալ ուրվագրի.
 $\text{Me}(\text{NO}_3)_n \rightarrow \text{Me} + \text{NO}_2 + \text{O}_2$

- 1) Na , K , Ru 2) Fe , Al , Zn 3) Ca , Ba , Mg 4) Au , Hg , Ag

39. Ո՞ր շարքում են ներկայացված ֆոսֆորի օքսիդացման աստիճանները Ca_3P_2 , P_2O_5 , H_3PO_4 միացություններում համապատասխանաբար.

- 1) +3, +5, -3 2) -3, +5, +3 3) -3, +5, +5 4) +3, -5, -3

40. Ո՞ր նյութերի փոխազդեցության արգասիքն է ֆոսֆինը.

- 1) կալցիումի ֆոսֆիդ և ջրածին 3) ֆոսֆոր և ջրածին
2) ֆոսֆորի(III) օքսիդ և քլորաջրածին 4) կալցիումի ֆոսֆիդ և ջուր

41. Հետևյալ նյութերից որո՞նց հետ կարող է փոխազդել ֆոսֆորի(V) օքսիդը.

ա) H_2O բ) HCl գ) $NaOH$ դ) KNO_3 ե) Na_2O

1) ա, բ, գ, ե 2) ա, գ, դ, ե 3) բ, գ, դ 4) ա, գ, ե

42. Ո՞ր աղը կառաջանա 0,04 մոլ/լ կոնցենտրացիայով H_3PO_4 և 0,06 մոլ/լ կոնցենտրացիայով $Ba(OH)_2$ պարունակող հավասար ծավալներով լուծույթները խառնելիս.

1) $Ba_3(PO_4)_2$ 2) $BaHPO_4$ 3) $Ba(H_2PO_4)_2$ 4) $(BaOH)_3PO_4$

43. Ո՞ր միջավայրում է հնարավոր իրականացնել Ag^+ իոններով ֆոսֆատ իոնների հայտաբերման ռեակցիան.

1) թթվային 2) հիմնային 3) չեզոք 4) ցանկացած

44. Ո՞ր շարքում են օրթոֆոսֆորական թթվի առաջացրած աղերի անունները.

1) ֆոսֆիդներ, ֆոսֆիտներ, ֆոսֆատներ
2) ֆոսֆիտներ, օրթոֆոսֆատներ, երկֆոսֆատներ
3) երկհիդրոֆոսֆատներ, հիդրոֆոսֆատներ, ֆոսֆատներ
4) ֆոսֆիտներ, մետաֆոսֆատներ, հիդրոֆոսֆատներ

45. Նյութերի ո՞ր զույգն է առաջանում ֆոսֆորի(V) քլորիդը տաք ջրի հետ փոխազդելիս.

1) HPO_3 և HCl 2) H_3PO_3 և PH_3 3) $H_4P_2O_7$ և H_2 4) H_3PO_4 և HCl

46. Ի՞նչ զանգվածով (գ) օրթոֆոսֆորական թթու կարելի է ստանալ 20 % խառնուկներ պարունակող 1550 գ կալցիումի ֆոսֆատից.

1) 274 2) 374 3) 784 4) 474

47. Ո՞ր ռեակցիայում է ֆոսֆորը դրսևորում օքսիդիչ հատկություն.

1) $2P + 5Cl_2 = 2PCl_5$ 3) $3Mg + 2P = Mg_3P_2$
2) $4P + 5O_2 = 2P_2O_5$ 4) $4P + 3O_2 = 2P_2O_3$

48. Հետևյալ նյութերից որի՞ հետ է փոխազդում ազոտը սենյակային ջերմաստիճանում.

1) H_2 2) Ca 3) Li 4) O_2

49. Հետևյալ գործոններից ո՞րը $PCl_{3(q)} + Cl_{2(q)} \rightarrow PCl_{5(q)} + Q$ համակարգում հավասարակշռությունը կտեղաշարժի դեպի աջ.

1) ջերմաստիճանի բարձրացումը 3) PCl_5 -ի կոնցենտրացիայի մեծացումը
2) ճնշման մեծացումը 4) ճնշման փոքրացումը

50. Ֆոսֆորի ալոտրոպ ձևափոխություններից որն է առավել ռեակցունակ.

- 1) սպիտակը
2) սևը
3) կարմիրը
4) ն սպիտակը, ն կարմիրը հավասարաչափ

51. Հետևյալ միացություններից որի մոլեկուլում է ֆոսֆորը ցուցաբերում –3 օքսիդացման աստիճան.

- 1) K_3P 2) K_3PO_4 3) KPO_3 4) $K_4P_2O_7$

52. Հիմնական վիճակում քանի կենտ էլեկտրոն է առկա ֆոսֆորի ատոմում.

- 1) 7 2) 5 3) 3 4) 1

53. Ո՞ր միացության մոլեկուլում են ֆոսֆոր տարրի վալենտականության և օքսիդացման աստիճանի թվային արժեքները տարբեր.

- 1) PCl_3 2) P_4 3) HPO_3 4) PF_5

54. Ո՞ր թթուն է ստացվում օրթոֆոսֆորական թթվի տաքացումից.

- 1) մետաֆոսֆորական 3) ֆոսֆորային
2) երկֆոսֆորական 4) մետաֆոսֆորային

55. 4,11 գ մետաղի և ավելցուկով ֆոսֆորի փոխազդեցությունից առաջացել է 4,73 գ մետաղի(II) ֆոսֆիդ: Ո՞րն է այդ մետաղը.

- 1) ցինկ 2) կալցիում 3) մագնեզիում 4) բարիում

56. Որքան է աղերի հետևյալ շարքում առկա հիդրոֆոսֆատների հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը.

- ա) Na_3PO_4 բ) Na_2HPO_4 գ) $(NH_4)_2HPO_4$ դ) KH_2PO_4 ե) $(NH_4)_3PO_4$
1) 164 2) 274 3) 394 4) 498

57. Ո՞ր նյութը կստացվի թթվածնի ավելցուկում կարմիր ֆոսֆորի այրման արգասիքը տաք ջրում լուծելիս.

- 1) $H_4P_2O_7$ 2) H_3PO_4 3) HPO_3 4) PH_3

58. Բարձր ջերմաստիճանի պայմաններում ածխածնի և ստորև բերված դր նյութի փոխազդեցությամբ են ստանում ֆոսֆոր.

- 1) PH_3 2) H_3PO_4 3) P_2O_5 4) Ca_3P_2

59. Ինչ լիցք կունենա օրթոֆոսֆորական թթվի դիսոցման երկրորդ փուլում առաջացած անիոնը.

- 1) +2 2) +1 3) –2 4) –3

60. Որքան է 1 մոլեկուլ վերականգնիչից օքսիդիչին տրամադրած էլեկտրոնների թիվն ըստ հետևյալ վերօքս ռեակցիայի ուրվագրի. $P + HNO_{3(l)} \rightarrow$.

- 1) 7 2) 5 3) 2 4) 1

61. Ինչ զանգվածով և զոր աղը կառաջանա ջրային լուծույթում 49 գ օրթոֆոսֆորական թթուն մեկ մոլ նատրիումի հիդրօքսիդով չեզոքացնելիս.

- 1) 71 գ Na_2HPO_4 3) 60 գ NaH_2PO_4
2) 142 գ Na_2HPO_4 4) 120 գ NaH_2PO_4

62. Որքան է կովալենտային անկյունը NH_4^+ իոնում.

- 1) 90° 2) $106,7^\circ$ 3) 120° 4) $109,5^\circ$

63. Ո՞րն է կրկնակի սուպերֆոսֆատի քիմիական բանաձևը.

- 1) $(NH_4)_2HPO_4$ 3) $Ca(H_2PO_4)_2$
2) $CaHPO_4 \cdot 2H_2O$ 4) $Ca(H_2PO_4)_2 + 2CaSO_4$

64. Ո՞րն է պրեցիպիտատի քիմիական բանաձևը.

- 1) $(NH_4)_2HPO_4$ 3) $Ca(H_2PO_4)_2$
2) $CaHPO_4 \cdot 2H_2O$ 4) $Ca(H_2PO_4)_2 + 2CaSO_4$

2.2.3. Ազոտի ենթախումբ: Ազոտ և ֆոսֆոր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	23	2	45	4
2	4	24	1	46	3
3	3	25	2	47	3
4	3	26	3	48	3
5	4	27	3	49	2
6	3	28	3	50	1
7	4	29	3	51	1
8	2	30	1	52	3
9	2	31	3	53	2
10	4	32	1	54	2
11	2	33	2	55	4
12	2	34	4	56	2
13	3	35	4	57	2
14	3	36	4	58	3
15	3	37	3	59	3
16	4	38	4	60	2
17	2	39	3	61	1
18	3	40	4	62	4
19	2	41	4	63	3
20	4	42	1	64	2
21	4	43	3		
22	4	44	3		

2.2.4. Ածխածնի ենթախումբ: Ածխածին և սիլիցիում

1. Հետևյալ նյութերից որն ունի մոլեկուլային բյուրեղավանդակ.

- 1) CaF_2 2) CO_2 3) SiO_2 4) AlF_3

2. Հետևյալ դր զույգ նյութերի փոխազդեցությամբ կարելի է ստանալ կալցիումի կարբոնատ.

- 1) CO_2 և $\text{Ca}(\text{NO}_3)_2$ 2) CO_2 և CaO 3) CO_2 և CaCl_2 4) CO_2 և CaC_2

3. Ո՞ր իոնի միջոցով կարելի է հայտաբերել կարբոնատ իոնը.

- 1) Na^+ 2) Ca^{2+} 3) NH_4^+ 4) K^+

4. Ո՞ր շարքում են միայն կովալենտային բևեռային կապով նյութերի բանաձևեր.

- 1) CO_2 , H_2 , HBr 2) K_3P , H_2 , NH_3 3) CO , CS_2 , CCl_4 4) O_2 , P_4 , O_2

5. Ի՞նչ հիբրիդային վիճակում է ածխածնի ատոմը ածխածնի(IV) օքսիդի մոլեկուլում, և ինչպիսի՞ կապ է առկա ածխածնի ու թթվածնի ատոմների միջև.

- 1) sp^2 և բևեռային կովալենտային 3) sp^3 և բևեռային կովալենտային
2) sp և ոչ բևեռային կովալենտային 4) sp և բևեռային կովալենտային

6. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի 2 մոլ կալցիումի կարբիդի և ջրի փոխազդեցությամբ.

- 1) 2,24 2) 11,2 3) 22,4 4) 44,8

7. Որքան է մեկ մոլ ածխածնի և խիտ ծծմբական թթվի փոխազդեցության արգասիքների գումարային քանակը (մոլ).

- 1) 3 2) 5 3) 6 4) 8

8. Ո՞րն է CaC_2 , SiC , Al_4C_3 բանաձևերն ունեցող նյութերի ընդհանուր անվանումը.

- 1) կարբոնատներ 3) կարբիդներ
2) հիդրոկարբոնատներ 4) կարբոնիլներ

9. Հետևյալ նյութերից որո՞նց հետ կփոխազդի SiO_2 -ը համապատասխան պայմաններում.

- ա) O_2 բ) C գ) Mg դ) H_2SO_4 ե) NaOH զ) NaCl
1) բ, գ, ե 2) ա, դ, ե 3) ա, ե, գ 4) բ, ե, գ

10. Որքան է 4,8 գ ածխածնի լրիվ այրման համար պահանջվող օդի ծավալը (լ, ն. պ.) (թթվածնի ծավալային բաժինն օդում ընդունել 20 %).

- 1) 22,4 2) 44,8 3) 56 4) 67,2

11. Հետևյալ հատկանիշներից որն է բնորոշ ածխածնի(IV) օքսիդի մոլեկուլին.

- 1) ունի կանոնավոր քառանիստային կառուցվածք
2) պարունակում է միայն բևեռային կովալենտային կապեր
3) բևեռային մոլեկուլ է
4) վալենտային անկյունը 120° է

12. Հետևյալ նյութերից որի հետ համապատասխան պայմաններում կփոխազդի ածխածնի(IV) օքսիդը.

- 1) Na_2CO_3 2) HCl 3) CuO 4) SiO_2

13. Հետևյալ նյութերից որն ածխաթթվի աղ չէ.

- 1) կրաքար 2) դոլոմիտ 3) մալաքիտ 4) սիլվինիտ

14. Հետևյալ նյութերից որոնք կարող են լինել A-ն և B-ն՝ ըստ $\text{A} + \text{O}_2 \rightarrow \text{B} + \text{H}_2\text{O}$ ուրվագրի, եթե A գազային նյութի խտությունը հավասար է թթվածնի խտությանը.

- 1) SiH_4 , Si 2) CH_4 , CO_2 3) H_2S , SO_2 4) SiH_4 , SiO_2

15. Ինչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա 1120 մլ (ն. պ.) ածխածնի(IV) օքսիդը 12% զանգվածային բաժնով բարիումի հիդրօքսիդի 80 գ լուծույթի մեջ անցկացնելիս.

- 1) 1,46 2) 9,85 3) 3,46 4) 4,46

16. Ո՞ր զույգի տարրերն են քիմիական հատկություններով նման.

- 1) Mg և Al 2) Al և S 3) C և Si 4) Al և C

17. Ո՞ր նյութի հետ կարող է փոխազդել ածխածնի(II) օքսիդը համապատասխան պայմաններում.

- 1) KCl 2) Cl_2 3) CO_2 4) HCl

18. Ո՞ր նյութի ջրային լուծույթի միջոցով կարելի է տարբերել մագնեզիումի և բարիումի կարբոնատների սպիտակ փոշիները.

- 1) HCl 2) HNO_3 3) H_2SO_4 4) CH_3COOH

19. Ինչ նյութեր կառաջանան սովորական պայմաններում ածխածնի(IV) օքսիդը նատրիումի պերօքսիդի հետ փոխազդելիս.

- 1) Na_2CO_3 2) $\text{Na}_2\text{C}_2\text{O}_4$ 3) Na_2CO_3 և O_2 4) $\text{Na}_2\text{C}_2\text{O}_4$ և O_2

20. Հետևյալ պնդումներից որն է ճիշտ ածխածնի(IV) օքսիդի մոլեկուլի վերաբերյալ.
- 1) ունի կանոնավոր քառանիստային կառուցվածք
 - 2) ածխածնի ատոմը sp^3 հիբրիդային վիճակում է
 - 3) ունի գծային կառուցվածք
 - 4) ածխածնի ատոմը sp^2 հիբրիդային վիճակում է
21. Հետևյալ նյութերից որոնց հետ կարող է փոխազդել ածխածնի(IV) օքսիդը համապատասխան պայմաններում.
- | | |
|------------------------|----------------------|
| ա) նատրիումի հիդրօքսիդ | ե) նատրիումի քլորիդ |
| բ) քլոր | զ) կալիումի կարբոնատ |
| գ) պղնձի(II) սուլֆատ | է) ջուր |
| դ) ծծմբական թթու | |
- 1) ա, գ, է
 - 2) ա, գ, ե, զ
 - 3) բ, գ, դ, ե
 - 4) բ, դ, զ
22. Ո՞ր նյութի և խիտ ծծմբական թթվի խառնուրդը տաքացնելիս կարելի է ստանալ ածխածնի(II) օքսիդ.
- 1) CH_3COOH
 - 2) $HCOOH$
 - 3) H_2CO_3
 - 4) C_3H_7COOH
23. Հետևյալ նյութերից որն ածխածնի *ալոտրոպ ձևափոխություն* չէ.
- 1) մալաքիտ
 - 2) գրաֆիտ
 - 3) կարբին
 - 4) ալմաստ
24. Հետևյալ կարբիդներից որն է փոխազդում ջրի հետ՝ ացետիլեն առաջացնելով.
- 1) CaC_2
 - 2) Fe_3C
 - 3) Al_4C_3
 - 4) SiC
25. Ո՞ր պնդումն է ճիշտ ալմաստի վերաբերյալ.
- 1) ունի մոլեկուլային բյուրեղավանդակ
 - 2) ամենակարծր բնական նյութն է
 - 3) փափուկ է
 - 4) էլեկտրահաղորդիչ է
26. Ո՞ր քիմիական ռեակցիայում է ածխածինը ցուցաբերում միայն օքսիդիչ հատկություն.
- | | |
|-----------------------------------|--------------------------|
| 1) $C + 3Fe_2O_3 = 2Fe_3O_4 + CO$ | 3) $C + H_2O = CO + H_2$ |
| 2) $3C + CaO = CaC_2 + CO$ | 4) $C + 2H_2 = CH_4$ |
27. Ի՞նչ հիբրիդային վիճակում են ածխածնի ատոմներն ալմաստում և գրաֆիտում համապատասխանաբար.
- 1) sp^2 և sp^3
 - 2) sp^2 և sp
 - 3) sp^3 և sp
 - 4) sp^3 և sp^2
28. Հետևյալ նյութերի որ զույգն են օգտագործում սիլիցիումի(IV) օքսիդից սիլիցիումը վերականգնելու համար.
- 1) Cu և Fe
 - 2) CO_2 և H_2O
 - 3) Cl_2 և C
 - 4) Mg և C

29. Համապատասխան պայմաններում դ՞ր նյութի հետ են անմիջականորեն փոխազդում և՛ ածխածինը, և՛ սիլիցիումը.
- 1) մոլեկուլային ջրածին 2) թթվածին 3) ալկալու լուծույթ 4) աղաթթու
30. Ո՞ր հատկություններով են նման ածխածնի(IV) և սիլիցիումի(IV) օքսիդները.
- ա) ագրեգատային վիճակով
 բ) բյուրեղավանդակի տեսակով
 գ) ալկալիների հետ փոխազդեցությամբ
 դ) ջրում լուծվելու ընդունակությամբ
 ե) ածխածնի հետ փոխազդելու ընդունակությամբ
- 1) գ, ե 2) ա, բ, դ 3) բ, դ 4) ա, գ, ե
31. Ո՞ր պնդում(ներ)ն է (են) ճիշտ ածխածնի(IV) օքսիդի վերաբերյալ.
- ա) մոլեկուլի կառուցվածքը գծային է
 բ) 1,5 անգամ թեթև է օդից
 գ) ստացվում է ալկալիական մետաղների կարբոնատների ջերմային քայքայումից
 դ) ջրային լուծույթը չի փոխում լակմուսի գույնը
 ե) մասնակցում է ֆոտոսինթեզին
- 1) ա, բ 2) բ, գ, ե 3) ա, բ, դ 4) ա, ե
32. Հետևյալ նյութերից որի հետ չի փոխազդի ածխածնի(IV) օքսիդը.
- 1) CaCO_3 2) HCl 3) Mg 4) NaOH
33. Ո՞ր նյութը կառաջանա կրաջրի մեջ քիչ քանակությամբ ածխածնի(IV) օքսիդ անցկացնելիս.
- 1) CaCO_3 2) Ca(OH)_2 3) $\text{Ca(HCO}_3)_2$ 4) CaO
34. Քանի գրամով կփոքրանա 42 գ նատրիումի հիդրոկարբոնատի զանգվածը այն մինչև հաստատուն զանգված շիկացնելիս.
- 1) 7,75 2) 15,5 3) 31 4) 62
35. Ո՞ր շարքում են համապատասխանաբար կալցինացված սոդայի, բյուրեղային սոդայի և խմելու սոդայի բանաձևերը.
- 1) CaCO_3 , Na_2CO_3 , NaHCO_3 3) NaOH , Na_2CO_3 , $\text{Ca(HCO}_3)_2$
 2) CaCO_3 , $\text{Na}_2\text{CO}_3 \cdot 10\text{H}_2\text{O}$, NaHCO_3 4) Na_2CO_3 , $\text{Na}_2\text{CO}_3 \cdot 10\text{H}_2\text{O}$, NaHCO_3
36. Ո՞ր շարքում են համապատասխանաբար ածխածին և սիլիցիում տարրերի նվազագույն և առավելագույն օքսիդացման աստիճանները.
- 1) -4, +4 և -4, +4 3) -4, +2 և -4, +2
 2) -2, +4 և -4, +4 4) -1, +4 և -2, +4

37. Ո՞ր գույգի նյութերն են օգտագործվում լաբորատորիայում ածխածնի(IV) օքսիդ ստանալու համար.

- 1) CaC_2, HCl
- 2) $CaCO_3, HCl$

- 3) $CaCO_3, Na_2SO_4$
- 4) $(NH_4)_2CO_3, KOH$

38. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ածխածնի(IV) օքսիդ կստացվի 10 գ կալցիումի կարբոնատի և 18,25 % զանգվածային բաժնով քլորաջրածին պարունակող 10 գ աղաթթվի փոխազդեցությունից.

- 1) 11,2
- 2) 5,6
- 3) 0,56
- 4) 0,28

39. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների ձախ և աջ մասերը.

Ձախ մաս	Աջ մաս
ա) $SiO_2 + Mg \xrightarrow{t}$	1) չեն փոխազդում
բ) $SiO_2 + Na_2CO_3 \xrightarrow{t}$	2) $SiCl_4 + 2H_2O$
գ) $SiO_2 + HCl \rightarrow$	3) $Na_2SiO_3 + CO_2$
դ) $SiO_2 + HF \rightarrow$	4) $SiF_4 + H_2O$
	5) $MgO + Si$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ3, գ2, դ4
- 2) ա5, բ3, գ2, դ2
- 3) ա5, բ3, գ1, դ4
- 4) ա1, բ3, գ1, դ1

40. Սենյակային ջերմաստիճանում հետևյալ նյութերից որի՞ հետ կփոխազդի ամորֆ սիլիցիումը.

- 1) Cl_2
- 2) O_2
- 3) F_2
- 4) C

41. Ո՞ր նյութերի հետ կփոխազդի ածխածնի(II) օքսիդը համապատասխան պայմաններում.

- ա) O_2 բ) Ag գ) CuO դ) H_2O ե) Fe_3O_4 զ) CO_2
- 1) ա, գ, դ, ե 2) ա, դ, ե, գ 3) բ, գ, ե 4) ա, դ, գ

42. Ի՞նչ զանգվածով (գ) պարզ նյութ կստացվի 3,36 լ (ն. պ.) ածխածնի(II) օքսիդի և ավելցուկով Fe_2O_3 -ի փոխազդեցությունից.

- 1) 2,8
- 2) 5,6
- 3) 8,4
- 4) 11,2

43. Որքան կլինի $(NH_4)_2CO_3$ աղի զանգվածի կորուստը (%) այն ջերմային քայքայման ենթարկելիս.

- 1) 21,52
- 2) 22,78
- 3) 55,70
- 4) 100

44. Հետևյալ միացություններից որոնցում է սիլիցիումը ցուցաբերում բարձրագույն օքսիդացման աստիճան.

ա) Na_2SiO_3 բ) Ca_2Si գ) SiO_2 դ) SiC

1) ա, բ, գ 2) բ, գ 3) գ, դ 4) բ, դ

45. Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի հեղուկ ապակին.

1) CO_2 , CaCl_2 , HCl 3) H_2SO_4 , $\text{Ba}(\text{NO}_3)_2$, KCl

2) CO_2 , SO_2 , $(\text{NH}_4)_2\text{SO}_4$ 4) HNO_3 , CaCl_2 , K_2CO_3

46. Ջրային լուծույթում ո՞ր զույգի նյութերի փոխազդեցությունից սիլիկաթու չի կարող ստացվել.

ա) K_2SiO_3 և CO_2 բ) SiO_2 և H_2O գ) Na_2SiO_3 և H_3PO_4 դ) Si և HNO_3

1) ա, բ 2) գ, դ 3) բ, դ 4) բ, գ

47. Ո՞ր նյութի և աղաթթվի փոխազդեցությունից է նստվածք առաջանում.

1) CaCO_3 2) $\text{Cu}(\text{OH})_2$ 3) Na_2SiO_3 4) K_2SO_3

48. Ո՞րն է X նյութը հետևյալ ռեակցիայի հավասարման մեջ. $\text{Ca}_2\text{Si} + 4\text{HBr} = 2\text{CaBr}_2 + \text{X}$.

1) SiO 2) SiO_2 3) SiH_4 4) H_2SiO_3

49. Հետևյալ բանաձևերով նյութերից որի՞ հետ չի փոխազդում սիլիցիումի(IV) օքսիդը.

1) Mg 2) $\text{HF}_{(\text{լուծույթ})}$ 3) $\text{NaOH}_{(\text{լուծույթ})}$ 4) H_2O

50. Հետևյալ նյութերից որի՞ հետ չեն փոխազդում և՛ նատրիումի սիլիկատը, և՛ նատրիումի կարբոնատը.

1) CO_2 2) HCl 3) $\text{Ba}(\text{NO}_3)_2$ 4) KNO_3

51. Ո՞ր նյութերի հետ սիլիցիումը չի փոխազդում.

ա) HCl բ) H_2 գ) FeO դ) H_2SO_4 ե) C

1) ա, բ, գ 2) ա, բ, դ 3) գ, դ, ե 4) բ, գ, ե

52. Ինչպե՞ս է փոխվում սիլիցիում ստանալու նպատակով վերցված քվարցային ավազի և մագնեզիումի փոշու խառնուրդի զանգվածը այն հալանոթում (անօդ պայմաններում) տաքացնելիս.

1) մնում է անփոփոխ 3) նվազում է կրկնակի չափով

2) մեծանում է 4) նվազում է եռակի չափով

53. Համապատասխանեցրե՞ք ածխածին պարունակող նյութի անվանումը և դրա բյուրեղավանդակը.

<i>Նյութի անվանում</i>	<i>Բյուրեղավանդակ</i>
ա) ալմաստ	1) իոնային
բ) ածխաթթու գազ	2) ատոմային
գ) գրաֆիտ	3) մոլեկուլային
	4) մետաղային

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ3, գ4 2) ա2, բ3, գ3 3) ա2, բ3, գ2 4) ա3, բ1, գ4

54. Ո՞րն է երկրակեղևում առավել տարածված տարրը.

- 1) ածխածին 2) սիլիցիում 3) մագնեզիում 4) ալյումին

55. Ո՞ր պնդումն է ճիշտ սիլիկաթթվի վերաբերյալ.

- 1) միահիմն ուժեղ թթու է 3) ավելի թույլ թթու է, քան ածխաթթուն
2) լուծույթում լրիվ դիսոցված է 4) լուծույթից անջատվում է սև նստվածքի ձևով

56. Ո՞ր օքսիդն են օգտագործում ճենապակյա և հախճապակյա իրերը կապույտ գունավորելու համար.

- 1) FeO 2) MgO 3) CaO 4) CoO

57. Ո՞ր օքսիդն է պարունակվում բյուրեղապակում.

- 1) PbO 2) CuO 3) CoO 4) NiO

58. Հետևյալ նյութերից որի՞ հետ *չի փոխազդում* ածխածնի(IV) օքսիդը.

- 1) Mg 2) HF_(լուծույթ) 3) NaOH_(լուծույթ) 4) H₂O

59. Ո՞ր գազը *չի փոխազդում* թթվածնի հետ.

- 1) H₂ 2) CO 3) CO₂ 4) SO₂

60. Ո՞ր նյութի մոլեկուլում առկա չէ դոնորակցեպտորային մեխանիզմով առաջացած կովալենտային կապ.

- 1) CO₂ 2) CO 3) HNO₃ 4) NH₄Cl

61. Ո՞րն է սիլիցիումի(IV) օքսիդի և նատրիումի հիդրօքսիդի միջև ընթացող ռեակցիայի կրճատ իոնային հավասարումը.

- 1) $2\text{SiO}_2 + 2\text{OH}^- = 2\text{SiO}_3^{2-} + \text{H}_2$ 3) $\text{SiO}_2 + 2\text{OH}^- = \text{SiO}_3^{2-} + \text{H}_2\text{O}$
2) $\text{SiO}_2 + 2\text{Na}^+ + 2\text{OH}^- = \text{Na}_2\text{SiO}_3 + \text{H}_2\text{O}$ 4) $\text{Si} + 2\text{OH}^- + \text{H}_2\text{O} = \text{SiO}_3^{2-} + 2\text{H}_2$

62. Ո՞րն է $\text{Si}^0 \rightarrow \text{Si}^{-4}$ փոխարկմանը համապատասխանող ռեակցիայի հավասարման ձախ մասը.
- 1) $\text{Si} + \text{KOH} + \text{H}_2\text{O} \rightarrow$ 2) $\text{SiO}_2 + \text{C} \rightarrow$ 3) $\text{SiO}_2 + \text{KOH} \rightarrow$ 4) $\text{Si} + \text{Mg} \rightarrow$
63. Ո՞ր նյութի հիդրոլիզն է օքսիդացման-վերականգնման գործընթաց.
- 1) CaC_2 2) Al_4C_3 3) Mg_2Si 4) PCl_5
64. Ո՞ր շարքի բոլոր նյութերը համապատասխան պայմաններում կփոխազդեն սիլիցիումի(IV) օքսիդի հետ.
- 1) C, KOH, HF 3) Ca, NaOH, H_2
 2) HCl, Mg, H_2O 4) Al_2O_3 , CaO, N_2
65. Որքան է մագնեզիումի և մագնեզիումի սիլիցիդի խառնուրդն աղաթթվով մշակելիս անջատված գազային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի.
- 1) >16 2) <16 3) 0,9 4) 16
66. Ի՞նչ բյուրեղավանդակ ունի կարբորունը.
- 1) մոլեկուլային 3) իոնային
 2) մետաղային 4) ատոմային
67. Ո՞ր նյութերի հետ կփոխազդի սիլիցիումը.
- ա) HCl բ) HNO_3 գ) Cl_2 դ) Mg ե) H_2
 1) գ, դ 2) ա, գ, ե 3) ա, գ, դ 4) բ, դ, ե
68. Ո՞րն է լուծելի ապակու բանաձևը.
- 1) $\text{CaO} \cdot \text{SiO}_2$ 2) $\text{MgO} \cdot \text{SiO}_2$ 3) $\text{Na}_2\text{O} \cdot \text{SiO}_2$ 4) $\text{Al}_2\text{O}_3 \cdot \text{SiO}_2$
69. Ո՞ր խմբի գլխավոր ենթախմբի տարրերն են առաջացնում RO_2 ընդհանուր բանաձևով բարձրագույն օքսիդ.
- 1) III 2) IV 3) V 4) VI
70. Ո՞ր զույգի տարրերի հետ առաջացրած միացություններում է ածխածնի ատոմը ցուցաբերում բարձրագույն օքսիդացման աստիճան.
- 1) H և O 2) O և Cl 3) Fe և Ca 4) Si և Br
71. Ո՞ր զույգի նյութերում է ածխածինը գտնվում համապատասխանաբար sp^2 և sp^3 հիբրիդային վիճակներում.
- 1) ալմաստ և գրաֆիտ 3) կարբին և մուր
 2) գրաֆիտ և ալմաստ 4) գրաֆիտ և կարբին

72. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների ելանյութերը և վերջանյութերը.

Ելանյութ	Վերջանյութ
ա) $\text{SiO}_2 + \text{Na}_2\text{O} \xrightarrow{t}$	1) $\text{Na}_2\text{SiO}_3 + \text{CO}_2$
բ) $\text{SiO}_2 + \text{H}_2\text{O} \rightarrow$	2) Na_2SiO_3
գ) $\text{SiO}_2 + \text{Na}_2\text{CO}_3 \xrightarrow{t}$	3) H_2SiO_3
դ) $\text{SiO}_2 + \text{NaOH} \xrightarrow{t}$	4) $\text{Na}_2\text{SiO}_3 + \text{H}_2\text{O}$
	5) $\text{Na}_2\text{SiO}_3 + \text{CO}$
	6) չեն փոխազդում

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

1) ա1, բ5, գ3, դ2

3) ա2, բ6, գ1, դ4

2) ա4, բ1, գ3, դ5

4) ա2, բ6, գ6, դ2

2.2.4. Ածխածնի ենթախումբ: Ածխածին և սիլիցիում

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	25	2	49	4
2	2	26	4	50	4
3	2	27	4	51	2
4	3	28	4	52	1
5	4	29	2	53	3
6	4	30	1	54	2
7	2	31	4	55	3
8	3	32	2	56	4
9	1	33	1	57	1
10	2	34	2	58	2
11	2	35	4	59	3
12	1	36	1	60	1
13	4	37	2	61	3
14	4	38	3	62	4
15	2	39	3	63	3
16	3	40	3	64	1
17	2	41	1	65	2
18	3	42	2	66	4
19	3	43	4	67	1
20	3	44	4	68	3
21	1	45	1	69	2
22	2	46	3	70	2
23	1	47	3	71	2
24	1	48	3	72	3

ԳԼՈՒԽ 3. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ

3.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Որո՞նք են օրգանական միացությունների բազմաթվության պատճառները.

- ա) իզոմերիա բ) հոմոլոգիա գ) ալոտրոպիա դ) հիբրիդացում
1) ա, դ 2) բ, գ 3) ա, բ 4) գ, դ

2. Որո՞նք են բաց թողած բառերը.

Իզոմերիան նույն քանակական և որակական _____, բայց տարբեր _____ ու հատկություններ ունեցող նյութերի գոյության երևույթն է:

- 1) բանաձևը, մոլային զանգված 3) կառուցվածքը, բաղադրություն
2) զանգվածը, բաղադրություն 4) բաղադրությունը, կառուցվածք

3. Համապատասխանեցրե՛ք իզոմերիայի տեսակը և զույգ իզոմերները.

<i>Իզոմերիայի տեսակ</i>	<i>Իզոմերներ</i>
1) ածխածնային կմախքի	ա) պենտեն-1 և պենտեն-2
2) կապի դիրքի	բ) բութան և իզոբութան
3) ֆունկցիոնալ խմբի դիրքի	գ) ացետոն և պրոպանալ
4) միջդասային	դ) ցիսբութեն-2 և տրանսբութեն-2 ե) պրոպանոլ-1 և պրոպանոլ-2

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- 1) 1բ, 2ա, 3ե, 4գ 3) 1գ, 2ա, 3բ, 4ե
2) 1դ, 2բ, 3գ, 4ա 4) 1բ, 2դ, 3ե, 4գ

4. Հետևյալ բանաձևով միացություններից որը կառաջացնի ցիս-տրանս իզոմերներ.

- 1) $\text{CH}_2 = \text{CH}_2$ 3) $\text{CH}_2 = \text{CH} - \text{CH}_2 - \text{CH}_3$
2) $\text{CHCl} = \text{CHCl}$ 4) $\text{CH}_3 - \text{CH} = \text{CH}_2$

5. Ո՞ր զույգ նյութերն *իզոմերներ* չեն.

- 1) պրոպեն-1 և ցիկլոպրոպան 3) ցիկլոպենտան և 2-մեթիլբութան
2) պենտադիեն-1,3 և պենտին-2 4) պենտան և երկմեթիլպրոպան

6. Ո՞ր զույգ նյութերը *հոմոլոգներ* չեն.

- 1) էթան և պրոպան 3) քացախալիդեհիդ և բութանալ
2) կումոլ և ֆենոլ 4) պրոպիոնաթթու և կարազաթթու

7. Ո՞ր զույգ թթուներն են հոմոլոգներ.

- | | |
|---------------------------------|-----------------------------|
| 1) քացախաթթու և պիկրինաթթու | 3) մրջնաթթու և կաթնաթթու |
| 2) պալմիտինաթթու և ստեարինաթթու | 4) օլեինաթթու և բենզոլաթթու |

8. Ո՞րն է $C_5H_{10}O$ բանաձևով իզոմերային ալդեհիդների թիվը.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 2 | 2) 5 | 3) 3 | 4) 4 |
|------|------|------|------|

9. Ո՞ր զույգի նյութերն *իզոմերներ չեն*.

- | | |
|------------------------|------------------------|
| 1) գլյուկոզ և ֆրուկտոզ | 3) մալթոզ և լակտոզ |
| 2) ֆրուկտոզ և գալակտոզ | 4) ռիբոզ և դեօքսիռիբոզ |

10. Հետևյալ նյութերից որո՞նք ունեն նույն մոլեկուլային բանաձևը.

- | | |
|-------------|---------------------|
| ա) հեքսին-1 | դ) ն-պենտան |
| բ) հեքսեն-1 | ե) մեթիլցիկլոպենտան |
| գ) ն-հեքսան | |
- | | | | |
|---------|---------|---------|---------|
| 1) բ, ե | 2) ա, գ | 3) դ, ե | 4) ա, բ |
|---------|---------|---------|---------|

11. Քանի՞ իզոմեր է համապատասխանում $C_3H_5Cl_3$ բանաձևով միացությանը.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 3 | 2) 4 | 3) 5 | 4) 6 |
|------|------|------|------|

12. Ո՞ր միացությունը կարող է առաջացնել ցիս-տրանս իզոմերներ.

- | | |
|-------------|---------------------|
| 1) պրոպեն | 3) 2-պենտեն |
| 2) 1-պենտեն | 4) 2-մեթիլ-1-բուտեն |

13. Ո՞ր միացության մոլեկուլում են ածխածնի ատոմները sp հիբրիդային վիճակում.

- | | | | |
|-------------|-------------|-------------|-------------|
| 1) C_2H_2 | 2) C_2H_4 | 3) C_2H_6 | 4) C_6H_6 |
|-------------|-------------|-------------|-------------|

14. Ո՞ր միացության մոլեկուլում են ածխածնի ատոմները sp^2 հիբրիդային վիճակում.

- | | | | |
|-------------|-------------|-------------|-------------|
| 1) C_3H_8 | 2) C_2H_6 | 3) C_2H_2 | 4) C_6H_6 |
|-------------|-------------|-------------|-------------|

15. Հետևյալ միացություններից որի մոլեկուլում են ածխածնի բոլոր ատոմները նույն հիբրիդային վիճակում.

- | | |
|---------------------------------------|----------------------------|
| 1) $CH \equiv C - CH_2 - C \equiv CH$ | 3) $CH_2 = CH - CH = CH_2$ |
| 2) $C_6H_5CH_3$ | 4) $CH_2 = CH - CH_3$ |

16. Ի՞նչ հիբրիդային վիճակում է ածխածնի ատոմը մեթանի մոլեկուլում, և ի՞նչ քիմիական կապ է առկա.

- | | |
|--------------------------------------|-----------------------------------|
| 1) sp^2 և կովալենտային բևեռային | 3) sp^3 և կովալենտային բևեռային |
| 2) sp^3 և կովալենտային ոչ բևեռային | 4) sp և կովալենտային բևեռային |

17. Ի՞նչ հիբրիդային վիճակում են ածխածնի ատոմներն էթիլենի հոմոլոգների մոլեկուլներում.

- 1) sp^2 2) sp 3) sp^2, sp^3 4) sp, sp^3

18. Առաջնային ածխածնի քանի՞ ատոմ է առկա 2,3-երկմեթիլբուտանի մոլեկուլում.

- 1) 1 2) 3 3) 4 4) 6

19. Չորրորդային ածխածնի քանի՞ ատոմ է առկա 2,2,3-տրիմեթիլ-3-էթիլհեքսանի մոլեկուլում.

- 1) 1 2) 2 3) 4 4) 6

20. Համապատասխանեցրե՞ք նյութի անվանումը և դրա մոլեկուլում σ -կապերի թիվը.

Նյութ	σ -կապերի թիվ
1) քացախաթթու	ա) 9
2) ացետոն	բ) 3
3) ֆորմալդեհիդ	գ) 10
4) էթիլֆորմիատ	դ) 7

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2բ, 3գ, 4դ 3) 1ա, 2դ, 3գ, 4ա
2) 1դ, 2բ, 3ա, 4գ 4) 1դ, 2ա, 3բ, 4գ

21. Ո՞ր նյութի մոլեկուլում են առկա միայն σ -կապեր.

- 1) էթիլեն 2) բուրադիեն 3) բենզոլ 4) ցիկլոպենտան

22. Համապատասխանեցրե՞ք նյութի բանաձևը և այդ բանաձևով միացության մոլեկուլում σ -կապերի թիվը.

Բանաձև	σ -կապերի թիվ
1) CH_4	ա) 2
2) C_2H_2	բ) 4
3) C_2H_4	գ) 3
4) CH_3OH	դ) 5

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2գ, 3բ, 4դ 3) 1ա, 2դ, 3բ, 4գ
2) 1բ, 2գ, 3դ, 4դ 4) 1բ, 2ա, 3բ, 4դ

23. Հետևյալ նյութերից որի՞ մոլեկուլում են տարբերվում ածխածնի օքսիդացման աստիճանի և վալենտականության թվային արժեքները.

- 1) մեթան 3) ածխածնի(IV) օքսիդ
2) քառաքլորածխածին 4) եռքլորմեթան

24. Ո՞րը կառուցվածքային իզոմերիայի տարատեսակ չէ.

- 1) ածխածնային կմախքի
 2) ֆունկցիոնալ խմբի դիրքի
 3) կրկնակի կապի դիրքի
 4) ցիս-տրանս

25. Ո՞ր շարքի բոլոր նյութերին են բնորոշ միացման ռեակցիաները.

- 1) ցիկլոպրոպան, էթեն, էթին
 2) պրոպան, ցիկլոպրոպան, պրոպեն
 3) մեթանալ, էթանալ, էթան
 4) բութին, բութան, բութեն

26. Հետևյալ նյութերից որի մոլեկուլն է երկբևեռ իոն.

- 1) գլիցերին
 2) գլիցին
 3) էթիլենգլիկոլ
 4) էթանոլ

27. Հետևյալ նյութերից որի հիմնային հատկություններն են առավել ուժեղ արտահայտված.

- 1) երկմեթիլամին
 2) մեթիլամին
 3) անիլին
 4) ամոնիակ

28. Համապատասխանեցրե՞ք ածխաջրածինների դասերը և դրանց ընդհանուր բանաձևերը.

<i>Ածխաջրածինների դաս</i>	<i>Ընդհանուր բանաձև</i>
1) ցիկլոալկաններ	ա) C_nH_{2n+2}
2) ալկադիեններ	բ) C_nH_{2n}
3) ալկաններ	գ) C_nH_{2n-2}
4) արեններ	դ) C_nH_{2n-6}

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2գ, 3ա, 4դ
 2) 1բ, 2ա, 3բ, 4դ
 3) 1բ, 2գ, 3ա, 4դ
 4) 1բ, 2բ, 3ա, 4դ

3.1. Քիմիական կառուցվածքի տեսություն

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	11	3	21	4
2	4	12	3	22	2
3	1	13	1	23	4
4	2	14	4	24	4
5	3	15	3	25	1
6	2	16	3	26	2
7	2	17	3	27	1
8	4	18	3	28	3
9	4	19	2		
10	1	20	4		

3.2. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ. ԱԼԿԱՆՆԵՐ ԵՎ ՑԻԿԼՈԱԼԿԱՆՆԵՐ

1. Որո՞նք են բաց թողած բառերը համապատասխանաբար.

Արկանների համար բնութագրական է _____, բայց բնութագրական չէ _____ հզուներին:

- 1) միջդասային, ֆունկցիոնալ խմբի դիրքի
- 2) ածխածնային կմախքի, ցիս-տրանս
- 3) բազմակի կապի, ածխածնային կմախքի
- 4) օպտիկական, միջդասային

2. Ածխածնի ո՞ր ալոտրոպի կառուցվածքն է նման մեթանի կառուցվածքին.

- 1) գրաֆիտի
- 2) ֆուլերենի
- 3) կարբինի
- 4) ալմաստի

3. Հետևյալ բանաձևերով նյութերից որո՞նք են մեթանի հոմոլոգներ.

ա) C_2H_6 բ) C_4H_{10} գ) C_5H_8 դ) C_6H_6 ե) C_8H_{18} զ) C_6H_{14}

- 1) ա, բ, ե, զ
- 2) գ, դ, ե, զ
- 3) բ, դ, ե, զ
- 4) ա, գ, ե, զ

4. Որքան է քիմիական կապերի առաջացմանը մասնակցած sp^3 հիբրիդային օրբիտալների թիվը բուխանի մոլեկուլում.

- 1) 12
- 2) 14
- 3) 15
- 4) 16

5. Առաջնային ածխածնի քանի՞ ատոմ է առկա 2,2,4,4-քառամեթիլպենտանի մոլեկուլում.

- 1) 3
- 2) 4
- 3) 5
- 4) 6

6. Ո՞ր նյութը չի ստացվում մեթանի կատալիտիկ օքսիդացումով.

- 1) մեթանոլ
- 2) մեթանալ
- 3) մեթիլֆորմիատ
- 4) մրջնաթթու

7. Չորրորդային ածխածնի քանի՞ ատոմ է առկա 2,2,5,5-քառամեթիլհեքսանի մոլեկուլում.

- 1) 2
- 2) 4
- 3) 5
- 4) 6

8. Որո՞նք կարող են լինել X_1 և X_2 նյութերը փոխարկումների հետևյալ շղթայում.
 $Al_4C_3 \rightarrow X_1 \rightarrow X_2 \rightarrow CH_3OH$.

- 1) մեթան և ջուր
- 2) էթան և քլորէթան
- 3) մեթան և քլորմեթան
- 4) ացետիլեն և քլորմեթան

9. Համապատասխանեցրեք ածխաջրածնի անվանումը և բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) 2,3-երկմեթիլպենտան	1) $\text{CH}_3 - \text{CH}(\text{CH}_3) - \text{CH}(\text{CH}_3) - \text{CH}_2 - \text{CH}_3$
բ) իզոբութան	2) $\text{CH}_3 - \text{C}(\text{CH}_3)_2 - \text{CH}_3$
գ) 2,2,3-եռմեթիլբութան	3) $\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{CH}_2 - \text{CH}_3$
դ) 2,2,4,4-քառամեթիլպենտան	4) $\text{CH}_3 - \text{CH}(\text{CH}_3) - \text{CH}_3$
	5) $\text{CH}_3 - \text{C}(\text{CH}_3)_2 - \text{CH}(\text{CH}_3) - \text{CH}_3$
	6) $\text{CH}_3 - \text{C}(\text{CH}_3)_2 - \text{CH}_2 - \text{C}(\text{CH}_3)_2 - \text{CH}_3$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- 1) ա1, բ4, գ2, դ5 2) ա4, բ3, գ1, դ6 3) ա4, բ2, գ6, դ5 4) ա1, բ4, գ5, դ6

10. Ո՞ր նյութի կատալիտիկ օքսիդացումից են արդյունաբերության մեջ քացախաթթու ստանում.

- 1) մեթան 2) պրոպան 3) բութան 4) հեքսան

11. Ո՞ր շարքի բոլոր միացություններն են իզոմերներ.

- 1) բութեն-1, ցիկլոբութեն, 2-մեթիլպրոպեն
 2) 2-մեթիլպրոպեն, բութեն-1, հեքսեն-2
 3) բութան, բութեն-2, 2-մեթիլբութեն-1
 4) պենտան, 2-մեթիլբութան, 2,2-երկմեթիլպրոպան

12. Որքան է ալկանի մոլային զանգվածը (գ/մոլ), եթե դրա մոլեկուլում ածխածնի առաջնային ատոմների թիվը չորս անգամ մեծ է չորրորդային ատոմների թվից, իսկ ածխածնի երկրորդային և երրորդային ատոմներ չկան.

- 1) 58 2) 72 3) 78 4) 86

13. Որո՞նք են բաց թողած բառերը.

Ալկաններ են անվանվում _____, _____ ածխաջրածինները, որոնք ունեն _____ ընդհանուր բանաձևը և մոլեկուլում միայն միակի կապեր:

- 1) ցիկլիկ, հագեցած, $\text{C}_n\text{H}_{2n+2}$ 3) ացիկլիկ, հագեցած, $\text{C}_n\text{H}_{2n+2}$
 2) ացիկլիկ, չհագեցած, C_nH_{2n} 4) ացիկլիկ, չհագեցած, $\text{C}_n\text{H}_{2n-2}$

14. Ո՞ր նյութն է ստացվում տաքացման պայմաններում 2,4-երկբրոմ-2-մեթիլպենտանի և նատրիումի փոխազդեցությունից.

- 1) 1,2,3 -եռմեթիլցիկլոպրոպան 3) 1,3-երկմեթիլցիկլոբութան
 2) 1,1-երկմեթիլցիկլոբութան 4) 1,1,2-եռմեթիլցիկլոպրոպան

15. Ո՞ր ալկանի մեկ մոլում են առկա $8,428 \cdot 10^{24}$ թվով ածխածնի և ջրածնի ատոմներ.

- 1) բութան 2) պրոպան 3) էթան 4) մեթան

16. Որքան է ջրածին տարրի ատոմների մոլային բաժինը (%) մեթանում.

- 1) 25 2) 40 3) 50 4) 80

17. Որքան է ջրածնի 12 ատոմ պարունակող ալկանի բոլոր իզոմերների մոլեկուլներում առաջնային ածխածնի ատոմների գումարային թիվը.

- 1) 7 2) 12 3) 9 4) 8

18. Ո՞ր հալոգենածանցյալի և ակտիվ մետաղների փոխազդեցությամբ է հնարավոր ստանալ ցիկլոալկան.

- 1) $\text{CH}_2\text{-CHBr-CHBr-CH}_2\text{-CH}_3$ 3) $\text{Br-CH}_2\text{-CH}_2\text{Br-CH}_3$
 2) $\text{Br-CH}_2\text{-CH}_2\text{-Br}$ 4) $\text{Br-CH}_2\text{-CH}_2\text{-CH}_2\text{-Br}$

19. Ո՞ր երկհալոգենածանցյալից կարելի է ստանալ 1,2-երկմեթիլցիկլոբուտան.

- 1) 1,3-երկբրոմիդ 3) 1,6-երկբրոմիդ
 2) 2,5-երկբրոմիդ 4) 1,4-երկբրոմիդ

20. Համապատասխանեցրե՞ք նյութի անվանումը և դրանում առաջնային ածխածնի ատոմների թիվը.

Նյութի անվանում	Առաջնային ածխածնի ատոմների թիվ
1) 1,1-երկմեթիլցիկլոպրոպան	ա) 2
2) մեթիլցիկլոբուտան	բ) 3
3) էթիլցիկլոպրոպան	գ) 0
4) ցիկլոպենտան	դ) 1

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2բ, 3գ, 4դ 2) 1գ, 2ա, 3ա, 4գ 3) 1ա, 2դ, 3դ, 4գ 4) 1գ, 2դ, 3ա, 4բ

21. Որո՞նք են X_1 , X_2 , X_3 օրգանական նյութերը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) պրոպիլբրոմիդ, պրոպիլեն, պրոպիլսպիրտ
 2) իզոպրոպիլբրոմիդ, իզոպրոպիլսպիրտ, պրոպան
 3) իզոպրոպիլբրոմիդ, պրոպիլսպիրտ, պրոպան
 4) պրոպիլբրոմիդ, պրոպիլսպիրտ, պրոպիլեն

22. Ո՞րն է n-թվով ածխածնի ատոմներ պարունակող ալկանի մոլեկուլային զանգվածի որոշման բանաձևը.

- 1) $14n+2$ 2) $14n$ 3) $14n-2$ 4) $14n-6$

23. Ո՞րն է n -թվով ածխածնի ատոմներ պարունակող ալկանում ջրածնի զանգվածային բաժնի որոշման բանաձևը.

- 1) $n/7n+1$ 2) $n/14n-2$ 3) $n+1/7n+1$ 4) $n/7n-3$

24. Ի՞նչ քանակով (մոլ) թթվածին է անհրաժեշտ n -թվով ածխածնի ատոմներ պարունակող 2 մոլ ալկանի լրիվ այրման համար.

- 1) $1,5n+0,5$ 2) $3n+1$ 3) $2n+2$ 4) $2n-1$

25. Ո՞րն է n -թվով ածխածնի ատոմներ պարունակող ալկանի մոլեկուլում σ -կապերի գումարային թվի որոշման բանաձևը.

- 1) $n+1$ 2) $2n+2$ 3) $3n-1$ 4) $3n+1$

26. Ո՞ր նյութի հետ *չի կարող փոխազդել* մեթանը.

- 1) թթվածին 2) քլոր 3) ազոտական թթու 4) քլորաջրածին

27. Ի՞նչ զանգվածով (գ) ցիկլիկ ածխաջրածին է գոյացել 34,5 գ նատրիումի և 113 գ 1,3-երկքլորպրոպանի փոխազդեցությունից.

- 1) 147,5 2) 78,5 3) 31,5 4) 63


28. Հետևյալ ռեակցիաներից ո՞րը բնութագրական չէ ալկանների համար.

- 1) այրման 2) տեղակալման 3) պոլիմերացման 4) դեհիդրման

29. Ո՞ր ռեակցիաներն են առավել բնութագրական ալկանների համար.

- 1) էլեկտրաֆիլ տեղակալման 3) ռադիկալային տեղակալման
2) ռադիկալային միացման 4) էլեկտրաֆիլ միացման

30. Որո՞նք են X_1, X_2, X_3, X_4 նյութերը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) մեթան, մեթիլքլորիդ, էթան, էթեն 3) էթին, էթիլքլորիդ, բութան, բութեն
2) մեթան, մեթիլենքլորիդ, էթեն, էթան 4) մեթան, քլորոֆորմ, էթան, էթեն

31. Ո՞ր զույգի նյութերն են պարունակում միայն sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմներ.

- ա) էթանոլ և բութան դ) 2,2-երկմեթիլպրոպան և էթան
բ) էթիլեն և էթիլենգլիկոլ ե) պրոպանոլ-2 և պենտան
գ) էթանալ և պրոպան

- 1) ա, բ, դ 2) բ, գ, դ 3) գ, դ, ե 4) ա, դ, ե

32. Ո՞ր նյութը կառաջանա 2-բրոմբութանի և ավելցուկով վերցրած մետաղական նատրիումի փոխազդեցությունից.
- 1) 2,3-երկմեթիլհեքսան 3) 3,4-երկմեթիլհեքսան
2) 2,4-երկմեթիլբութան 4) 3-մեթիլ-4-էթիլպենտան
33. Որքան է sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը 3-բրոմ-2-մեթիլպենտանի և ավկալու սպիրտային լուծույթի փոխազդեցությունից գոյացած ածխաջրածնի մոլեկուլում.
- 1) 1 2) 2 3) 3 4) 4
34. Ո՞ր նյութը կստացվի 2-մեթիլ-2-բրոմպրոպանը մետաղական նատրիումի հետ տաքացնելիս.
- 1) 2,3-երկմեթիլհեքսան 3) ն-օկտան
2) 2-մեթիլհեպտան 4) 2,2,3,3-քառամեթիլբութան
35. Ո՞ր ավկանը կստացվի պրոպանաթթվի նատրիումական աղից Դյունայի եղանակով.
- 1) C_3H_8 2) C_2H_6 3) CH_4 4) C_4H_{10}
36. Մեթանի և քլորի միջև փոխազդեցությունը ռեակցիաների դր դասին է պատկանում.
- 1) միացման 3) օքսիդացման
2) տեղակալման 4) պոլիմերացման
37. Հետևյալ նյութերից որը կարող է ստացվել մեթանի քայքայումից.
- 1) պրոպան 2) էթան 3) բենզոլ 4) մուր
38. Ի՞նչ ծավալային հարաբերությամբ են փոխազդում պրոպանն ու թթվածինը պրոպանի լրիվ այրման ռեակցիայում.
- 1) 1 : 3 2) 1 : 4 3) 1 : 5 4) 1 : 6
39. Որքան է ածխածնի ատոմների թիվն ավկանի մոլեկուլում, եթե դրա 2,24 լ այրման համար ծախսվել է 11,2 լ թթվածին.
- 1) 1 2) 2 3) 3 4) 4
40. Ո՞րը կարող է լինել պրոպանի և բութանի խառնուրդի խտությունն ըստ ջրածնի (ն. պ.).
- 1) 22 2) 26 3) 29 4) 44

3.2. Սահմանային ածխաջրածիններ, ալկաններ և ցիկլոալկաններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	15	1	29	3
2	4	16	4	30	1
3	1	17	3	31	4
4	4	18	4	32	3
5	4	19	2	33	4
6	3	20	3	34	4
7	1	21	4	35	2
8	3	22	1	36	2
9	4	23	3	37	4
10	3	24	2	38	3
11	4	25	4	39	3
12	2	26	4	40	2
13	3	27	3		
14	4	28	3		

3.3. ՉՀԱԳԵՑԱԾ (ԱԼԿԵՆՆԵՐ, ԱԼԿԻՆՆԵՐ, ԱԼԿԱԴԻԵՆՆԵՐ) ԵՎ ԱՐՈՄԱՏԻԿ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ

1. Համապատասխանեցրե՛ք միացության բանաձևը և անվանումը.

Բանաձև	Անվանում
1) $\text{CH}_3-\text{CH}=\underset{\text{CH}_3}{\text{C}}-\text{CH}_2-\text{CH}_3$	ա) 3-մեթիլպենտեն-2
2) $\text{CH}_3-\text{CH}=\text{CH}-\text{CH}_2-\text{CH}_3$	բ) 2-մեթիլբութեն-2
3) $\text{CH}_3-\text{CH}=\underset{\text{CH}_3}{\text{C}}-\text{CH}_3$	գ) 3,4-երկմեթիլպենտեն-1
4) $\text{CH}_3-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\text{CH}=\text{CH}_2$	դ) պենտեն-2

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2դ, 3բ, 4գ 2) 1ա, 2բ, 3գ, 4դ 3) 1բ, 2ա, 3դ, 4գ 4) 1բ, 2գ, 3դ, 4ա

2. Ո՞ր շարքի միացություններն են էթիլենի հոմոլոգներ.

- 1) բութեն, պրոպեն, պրոպան 3) հեքսադիեն, բութեն, հեքսեն
2) բութադիեն, պենտեն, պենտան 4) էթեն, պենտեն, բութեն

3. Ո՞րն է n -թվով ածխածնի ատոմներ պարունակող ալկենի հարաբերական մոլեկուլային զանգվածի որոշման բանաձևը.

- 1) $14n+2$ 2) $14n$ 3) $14n-2$ 4) $14n-6$

4. Քանի՞ և ինչպիսի՞ քիմիական կապեր են առկա պենտենի մոլեկուլում.

- 1) 15σ 2) 14σ և 1π 3) 13σ և 1π 4) 14σ և 2π

5. Ո՞ր միացության մոլեկուլը π -կապ չի պարունակում.

- 1) էթին 2) իզոբութան 3) պրոպեն 4) ցիկլոհեքսեն

6. Ո՞ր ազդանյութով կարելի է տարբերել էթիլենային և սահմանային ածխաջրածինները.

- 1) պղնձի(II) հիդրօքսիդով 3) ֆենոլֆտալեինով
2) մեթիլնարնջագույնով 4) բրոմաջրով

7. Ալկենի մոլեկուլում առավելագույնը քանի՞ կապով կարող են միանալ հարևան ածխածնի ատոմները.

- 1) մեկ 2) երկու 3) երեք 4) չորս

8. Համապատասխանեցրեք միացության քիմիական բանաձևը և մոլեկուլի տարածական կառուցվածքը.

Բանաձև	Կառուցվածք
ա) CH_4	1) բրգաձև
բ) C_2H_4	2) գծային
գ) C_2H_2	3) հարթ եռանկյուն
դ) NH_3	4) կանոնավոր քառանիստային

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ3, գ4, դ2 2) ա4, բ3, գ2, դ1 3) ա4, բ4, գ2, դ1 4) ա2, բ3, գ2, դ1

9. Ինչ հիբրիդային վիճակում են ածխածնի ատոմները երկբրոմէթիլենի՝ $\text{C}_2\text{H}_2\text{Br}_2$, մոլեկուլում.

- 1) sp 2) sp^2 3) sp^3 4) d sp^2

10. Ո՞ր շարքի բոլոր միացություններին է հատուկ ցիս-տրանս իզոմերիան.

- 1) բութան, պենտան, հեքսան
 2) բութին-2, պենտին-2, հեքսին-3
 3) բութեն-2, պենտեն-2, հեքսեն-3
 4) 2-մեթիլբութեն-2, 2-մեթիլպենտեն-2, 2-մեթիլհեքսեն-3

11. Հետևյալ միացություններից որին է հատուկ ցիս-տրանս իզոմերիան.

- 1) 1,1-երկբլորէթեն 2) պենտեն-2 3) վինիլբլորիդ 4) բութեն-1

12. Քանի՞ իզոմեր ունի մոլեկուլում 24 էլեկտրոն պարունակող ալկենի և բրոմաջրածնի փոխազդեցության արգասիքը.

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

13. Բութենի և բրոմաջրի փոխազդեցության արգասիքի զանգվածը քանի՞ անգամ է մեծ փոխազդած ածխաջրածնի զանգվածից.

- 1) 1,929 2) 2,857 3) 3,857 4) 7,714

14. Ո՞րն է ածխաջրածնի բանաձևը, եթե դրա այրումից գոյացած ածխաթթու գազի և ջրային գոլորշու ծավալային հարաբերությունը 3 : 2 է.

- 1) C_3H_6 2) C_3H_4 3) C_3H_8 4) C_6H_6

15. Ո՞ր միացության հիդրոհալոգենացման արգասիքն է 2-բրոմբութանը.

- 1) 1-բութենի 2) 2-մեթիլ-1-բութենի 3) մեթիլպրոպենի 4) 1-բութինի

16. Ո՞ր պնդումը ճիշտ է պենտեն–2–ի վերաբերյալ.

- 1) իզոմեր է ցիկլոբութանին
2) պոլիմերացվում է
3) առաջացնում է ցիս–տրանս իզոմերներ
4) իզոմեր է էթիլցիկլոպրոպանին

17. Ո՞ր միացությունը կարող է լինել A նյութն ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.
 $C_2H_5OH \rightarrow C_2H_4 \rightarrow A \rightarrow C_2H_5Cl$.

- 1) էթան
2) ացետիլեն
3) երկքլորէթան
4) էթիլենգլիկոլ

18. Ո՞րն է 2–մեթիլպրոպենի հիդրոքլորացման հիմնական արգասիքը.

- 1) 2–քլոր–2–մեթիլպրոպան
2) 2–մեթիլպրոպան
3) 1,2–երկքլոր–2–մեթիլպրոպան
4) 1–քլոր–2–մեթիլպրոպան

19. Քանի՞ ալկեն կարող է լինել ն–հեպտանի ջերմային կրեկինգի արգասիքներում (իզոմերումն անտեսել).

- 1) 2
2) 5
3) 3
4) 4

20. Հետևյալ միացություններից հիմնականում ո՞րը կստացվի դիվինիլին 1:1 մոլային հարաբերությամբ բրոմաջրածին միանալիս.

- 1) 1–երկբրոմբութեն–3
2) 1–բրոմբութեն–2
3) 1–երկբրոմբութեն–1
4) 2–բրոմբութեն–1

21. Ո՞րն է ալկալու սպիրտային լուծույթի հետ 2–բրոմբութանի փոխազդեցության արգասիքը.

- 1) բութեն–1
2) բութեն–2
3) բութանոլ–1
4) բութանոլ–2


22. Հետևյալ միացություններից որի՞ քլորացման արգասիքն է 1,2–երկքլորպրոպանը.

- 1) պրոպեն
2) պրոպան
3) պրոպին
4) պրոպադին

23. Ինչպե՞ս է փոխվում ածխածին տարրի մոլային բաժինը էթիլենային ածխաջրածիններում ածխածնի ատոմների թվի մեծացմանը զուգընթաց.

- 1) մեծանում է
2) փոքրանում է
3) մնում է անփոփոխ
4) նախ մեծանում է, ապա փոքրանում

24. Ո՞ր շարքում են ներկայացված X_1 , X_2 , X_3 օրգանական միացություններն ըստ հետևյալ փոխարկումների շղթայի.



- 1) բութան, էթան, ածխաթթու գազ
2) բութան, էթիլեն, էթիլենօքսիդ
3) բութան, էթիլեն, ածխաթթու գազ
4) բութեն–1, էթան, էթիլենօքսիդ

25. Համապատասխանեցրե՞ք դեհիդրոքլորացման արգասիքի և ելային քլորալկանի քանաձևերը.

Դեհիդրոքլորացման արգասիք	Քլորալկան
ա) $\text{CH}_3\text{-CH=CH-CH}_3$	1) $\text{CH}_3\text{-CH}_2\text{-CH}_2\text{-Cl}$
բ) $\text{CH}_2\text{=CH-CH}_2\text{-CH}_3$	2) $\text{CH}_3\text{-CH}_2\text{-CH}_2\text{-CH}_2\text{-Cl}$
գ) $\text{CH}_3\text{-CH=C(CH}_3\text{)-CH}_3$	3) $\text{CH}_3\text{-CH}_2\text{-CH(Cl)-CH}_3$
դ) $\text{CH}_3\text{-CH=CH}_2$	4) $\text{CH}_3\text{-CH(Cl)-CH(CH}_3\text{)-CH}_3$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ4, գ2, դ3
 2) ա1, բ2, գ3, դ4
 3) ա3, բ2, գ1, դ4
 4) ա3, բ2, գ4, դ1

26. Որքան է n-թվով ածխածնի ատոմներ պարունակող 4 մոլ ալկենի լրիվ այրման համար անհրաժեշտ թթվածնի քանակը (մոլ).

- 1) 2n
 2) 3n
 3) 6n
 4) n

27. Որքան է ածխածին տարրի ատոմի զանգվածային բաժինը մեթիլֆորմիատում.

- 1) 0,07
 2) 0,32
 3) 0,40
 4) 0,53

28. Որքան է ջրածին տարրի ատոմի զանգվածային բաժինը (%) գազային ածխաջրածնում, եթե դրա 14 գրամը զբաղեցնում է 5,6 լ (ս. պ.) ծավալ.

- 1) 7,15
 2) 14,29
 3) 17,24
 4) 85,71

29. Որքան է մոլեկուլում ածխածնի 4 ատոմ պարունակող չճյուղավորված շղթայով իզոմերային ալկենների թիվը (ներառյալ տարածական իզոմերները).

- 1) 1
 2) 2
 3) 4
 4) 3

30. Ո՞ր ազդանյութով է իրականացվում ալկեններից գլիկոլների ստացման ռեակցիան.

- 1) $\text{HNO}_3(\text{H}_2\text{O})$
 2) $\text{KOH}(\text{H}_2\text{O})$
 3) $\text{H}_2\text{SO}_4(\text{H}_2\text{O})$
 4) $\text{KMnO}_4(\text{H}_2\text{O})$

31. Որքան է A և B նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարն ըստ հետևյալ ռեակցիայի հավասարման.






- 1) 18
 2) 20
 3) 24
 4) 38

32. Ո՞ր միացությունը չի կարող պոլիմերացվել.

- 1) քլորոպրեն
 2) դիվինիլ
 3) իզոպրոպիլբենզոլ
 4) իզոպրեն

33. Ո՞րն է «Նաիրիտ» կաուչուկի կրկնվող տարրական օղակը.



34. Ո՞ր զույգ ածխաջրածինների դասերն ունեն C_nH_{2n-2} ընդհանուր բանաձևը.

1) ալկան և ալկին

3) ցիկլոալկան և ալկադիեն

2) ալկեն և արեն

4) ալկին և ալկադիեն

35. Հետևյալ ածխաջրածիններից ո՞րը զուգորդված ալկադիեն չէ.

1) բութադիեն-1,3

3) իզոպրեն

2) բութադիեն-1,2

4) 3-մեթիլ-1,3-պենտադիեն

36. Ո՞ր շարքում են հաջորդաբար ածխածնի ատոմների հիբրիդացման տեսակները հետևյալ դիենային ածխաջրածնի մոլեկուլում. $CH_2=C=CH-CH_3$ (ծախից աջ).

1) $sp\ sp\ sp^2\ sp^3$

2) $sp^2\ sp^2\ sp^2\ sp^3$

3) $sp^2\ sp\ sp\ sp^3$

4) $sp^2\ sp\ sp^2\ sp^3$

37. Ո՞րն է ածխածնի n -թվով ատոմ պարունակող դիենային ածխաջրածնում ածխածին տարրի զանգվածային բաժնի որոշման բանաձևը.

1) $6n/7n+1$

2) $7n/7n+1$

3) $7n/7n-1$

4) $6n/7n-1$

38. Ո՞ր զույգի նյութերը կարող են ենթարկվել պոլիմերացման.

1) պրոպեն և պրոպան

3) պրոպան և իզոպրեն

2) բենզոլ և տոլուոլ

4) ստիրոլ և քլորոպրեն

39. Ո՞ր նյութից հնարավոր չէ մեկ փուլով ստանալ իզոպրեն.

1) 2-մեթիլբրոպեն

3) 2-մեթիլբրոպեն-1

2) 3-մեթիլ-4-քլորբրոպեն-1

4) էթանոլ

40. Ո՞ր միացությունն է հիմնականում գոյանում հավասար նյութաքանակներով վերցրած 1,3-բութադիենի և բրոմի փոխազդեցությունից.

1) 1,2-երկբրոմբրոպեն-2

3) 1,3-երկբրոմբրոպեն-2

2) 1,4-երկբրոմբրոպեն-2

4) 1,3-երկբրոմբրոպեն-1

41. Ո՞ր միացության դեհիդրոհալոգենացումից կարող է ստացվել դիվինիլ.

1) 1,1-երկբրոմբրոպան

3) 1,2-երկբրոմբրոպան

2) 1,4-երկբրոմբրոպան

4) 2,3-երկբրոմբրոպան

42. Ո՞ր նյութը կստացվի պրոպինի և ավելցուկով բրոմաջրի փոխազդեցությունից.

- | | |
|----------------------|---------------------------|
| 1) 1,2-երկբրոմպրոպան | 3) 1,1,2,3-քառաբրոմպրոպան |
| 2) 1,1-երկբրոմպրոպան | 4) 1,1,2,2-քառաբրոմպրոպան |

43. Ո՞րն է օքսիդիչ նյութի գործակիցը ացետիլենի լրիվ այրման ռեակցիայի հավասարման մեջ.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 2 | 2) 3 | 3) 4 | 4) 5 |
|------|------|------|------|

44. Ո՞ր արտահայտություններն են ճիշտ մեթիլացետիլենի վերաբերյալ.

- ա) ածխածնի ատոմներից մեկն է sp^3 հիբրիդային վիճակում
 բ) բոլոր ածխածնի ատոմները sp^2 հիբրիդային վիճակում են
 գ) մոլեկուլում առկա են միայն σ -կապեր
 դ) ածխածնի երկու ատոմները sp հիբրիդային վիճակում են
- | | | | |
|---------|---------|---------|---------|
| 1) ա, բ | 2) ա, գ | 3) բ, գ | 4) ա, դ |
|---------|---------|---------|---------|

45. Քանի՞ և ինչպիսի՞ կովալենտային կապեր են առկա պրոպինի մոլեկուլում.

- | | | | |
|---------------------------------|--------------------------------|-------------------------------|-------------------------------|
| 1) երկու π , երկու σ | 2) չորս σ , երկու π | 3) երեք π , երեք σ | 4) վեց σ , երկու π |
|---------------------------------|--------------------------------|-------------------------------|-------------------------------|

46. Որքան է π -կապերի թիվը վինիլացետիլենի մեկ մոլեկուլում.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 3 | 2) 4 | 3) 5 | 4) 6 |
|------|------|------|------|

47. Ալկինների հոմոլոգիական շարքում իրար հաջորդող երկու անդամների մեկական մոլեկուլներում ջրածնի ատոմների գումարային թիվը 3-ով մեծ է ածխածնի ատոմների գումարային թվից: Քանի՞ իզոմերային ալկին է համապատասխանում մեծ մոլային զանգվածով ալկինին.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 4 | 2) 2 | 3) 1 | 4) 3 |
|------|------|------|------|

48. Հետևյալ նյութերից որի՞ հետ կարող է փոխազդել ացետիլենը.

- ա) NaOH բ) Cl_2 գ) HCl դ) KCl ե) H_2O
- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) ա, գ, դ | 2) ա, բ, գ | 3) բ, գ, ե | 4) բ, դ, ե |
|------------|------------|------------|------------|

49. Ո՞րն է փոխարկումների $CaC_2 \rightarrow X \rightarrow CH_3CHO$ շղթայում X նյութի գծային դիմերման արդյունքում ստացված նյութի մեկ մոլեկուլում sp^2 հիբրիդային օրբիտալների թիվը.

- | | | | |
|------|------|------|-------|
| 1) 4 | 2) 6 | 3) 8 | 4) 10 |
|------|------|------|-------|

50. Ո՞ր շարքի նյութերը կփոխազդեն ացետիլենի հետ.

- | | |
|--|---|
| 1) H_2O , NaCl, $[Ag(NH_3)_2]OH$, H_2 | 3) HCl, H_2O , $[Ag(NH_3)_2]OH$, H_2 |
| 2) Cu, NaCl, $[Ag(NH_3)_2]OH$, H_2 | 4) H_2 , H_2O , $[Ag(NH_3)_2]OH$, Cu |

51. Ո՞ր պնդումը ճիշտ չէ էթենի և էթինի համար.

- 1) հիդրատացվում են
- 2) չեն ենթարկվում հիդրման
- 3) գունազրկում են բրոմաջուրը
- 4) գունազրկում են կալիումի պերմանգանատի լուծույթը

52. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ջրածին կանջատվի մեկ մոլ հեպտանը համապատասխան պայմաններում տոլուոլի վերածելիս.

- 1) 22,4
- 2) 33,6
- 3) 89,6
- 4) 67,2

53. Ո՞րն է թթվածնի գործակիցն ըստ էթիլբենզոլի լրիվ այրման ռեակցիայի հավասարման.

- 1) 10
- 2) 15
- 3) 20
- 4) 21

54. Ո՞րն է նատրիումի ացետատից եռափուլ սինթեզով բենզոլի ստացման երեք ռեակցիաների հավասարումների գործակիցների գումարային թիվը.

- 1) 9
- 2) 12
- 3) 13
- 4) 14

55. Ո՞րն է արենների ընդհանուր բանաձևը.

- 1) C_nH_{2n}
- 2) C_nH_{2n-2}
- 3) C_nH_{2n-6}
- 4) C_nH_{2n+2}

56. Համապատասխանեցրե՛ք միացության բանաձևը և իր անվանումը.

Բանաձև	Անվանում
ա) $CH_3 = CH - CH = CH_3$	1) 1,4-երկմեթիլբենզոլ
բ) $Cl - CH_2 - CH(CH_3) - CH_2 - CH_3$	2) քլորբենզոլ
գ) $H_3C - \text{C}_6\text{H}_4 - CH_3$	3) 1-քլոր-2-մեթիլբենզոլ
դ) $\text{C}_6\text{H}_5 - Cl$	4) բութադիեն-1,3

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ3, գ1, դ4
- 2) ա2, բ3, գ1, դ2
- 3) ա4, բ3, գ1, դ2
- 4) ա4, բ3, գ1, դ4

57. Ո՞րն է վինիլբենզոլի մոլեկուլում σ -կապերի թիվը.

- 1) 16
- 2) 14
- 3) 15
- 4) 17

58. Որո՞նք են բաց թողած բառերը.

Սգրիտոլի մոլեկուլում ածխածնի _____ ատոմ գտնվում են _____ հիբրիդային վիճակում:

- 1) վեց, sp^2 2) վեց, sp^3 3) ութ, sp^2 4) ութ, sp

59. Որքան է եռլորբենզոլի բենզոլային օղակ պարունակող իզոմերների թիվը.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

60. C_8H_{10} բանաձևն ունեցող ինչ թվով իզոմեր արոմատիկ ածխաջրածիններ կարող են գոյություն ունենալ.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

61. Ո՞ր զույգի նյութերն են իզոմերներ.

- 1) 1,2-երկմեթիլբենզոլ և պրոպիլբենզոլ
2) 1-մեթիլ-3-էթիլբենզոլ և 1,4-երկմեթիլբենզոլ
3) վինիլբենզոլ և էթիլբենզոլ
4) 1,2-երկմեթիլբենզոլ և 1,4-երկմեթիլբենզոլ

62. Քանի՞ գ.ա.մ-ով կմեծանա վինիլբրոմիդի մեկ մոլեկուլի զանգվածն այն հիդրելիս.

- 1) 1 2) 2 3) 4 4) 6


63. Ո՞րն է օքսիդիչ նյութի գործակիցը բենզոլի լրիվ այրման ռեակցիայի հավասարման մեջ.

- 1) 2 2) 12 3) 15 4) 18

64. Ո՞ր զույգ նյութերի հետ կարող են փոխազդել և՛ հեքսանը, և՛ բենզոլը.


- 1) քլոր և կալիումի հիդրօքսիդի սպիրտային լուծույթ
2) նատրիումի հիդրօքսիդ և բրոմաջրածին
3) կալիումի պերմանգանատի ջրային լուծույթ և բրոմաջուր
4) քլոր և թթվածին

65. Ո՞րն է X նյութը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) 1-քլորհեքսան 2) ցիկլոհեքսան 3) հեքսեն 4) բենզոլ

66. Որո՞նք են X_1 և X_2 նյութերն ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



- 1) բենզոլ և ստիրոլ 3) ն-հեքսան և ն-հեքսեն
2) հեքսան և բենզոլ 4) բենզոլ և ստրուոլ

67. Որքան է տոլուոլի այրման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը.

1) 9

2) 10

3) 17

4) 21

3.3. Չհազեցած (ալկեններ, ալկիններ, ալկադիեններ) և արոմատիկ ածխաջրածիններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	24	2	47	2
2	4	25	4	48	3
3	2	26	3	49	2
4	2	27	4	50	3
5	2	28	2	51	2
6	4	29	4	52	3
7	2	30	4	53	4
8	2	31	2	54	4
9	2	32	3	55	3
10	3	33	3	56	3
11	2	34	4	57	1
12	2	35	2	58	3
13	3	36	3	59	2
14	2	37	4	60	3
15	1	38	4	61	4
16	1	39	4	62	2
17	1	40	2	63	3
18	1	41	2	64	4
19	4	42	4	65	4
20	2	43	4	66	4
21	2	44	4	67	4
22	1	45	4		
23	3	46	1		

3.4. ՍՊԻՐՏՆԵՐ ԵՎ ՖԵՆՈԼՆԵՐ

1. Ո՞րն է սահմանային միատոմ սպիրտի բանաձև.

- 1) C_6H_5OH 2) CH_3COOH 3) $C_5H_{11}OH$ 4) CH_3COH

2. $C_nH_{2n+2}O_2$ մոլեկուլային բանաձևը օրգանական միացությունների դր դասի ընդհանուր բանաձևն է.

- 1) միատոմ սպիրտների 3) կարբոնաթթուների
2) երկատոմ սպիրտների 4) էթերների

3. Միատոմ սպիրտներն անվանելու համար դր վերջածանցն է ավելացվում համապատասխան ածխաջրածնի միջազգային անվանը.

- 1) –ալ 2) –ոլ 3) –ոն 4) –իլ

4. Քանի հիդրօքսիլային խումբ է պարունակում գլիցերինի մոլեկուլը.

- 1) մեկ 2) երկու 3) երեք 4) չորս

5. Համապատասխանեցրեք նյութի քիմիական բանաձևը և հնարավոր անվանումը.

Նյութի բանաձև	Հնարավոր անվանում
ա) C_2H_6O	1) պրոպանտրիոլ-1,2,3
բ) CH_4O	2) ֆենոլ
գ) $C_3H_8O_3$	3) երկմեթիլեթեր
դ) C_7H_8O	4) մեթանոլ
	5) քենզիլապիրոս

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ4, գ1, դ5 2) ա1, բ4, գ3, դ5 3) ա3, բ4, գ3, դ2 4) ա1, բ4, գ5, դ2





6. Համապատասխանեցրեք նյութի անվանումը և օրգանական միացության դասը.

Անվանում	Դաս
ա) բուֆին	1) կարբոնաթթու
բ) բութանալ	2) սպիրտ
գ) բութանոլ	3) ածխաջրածին
դ) կարազաթթու	4) ալդեհիդ

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ1, գ3, դ4 3) ա3, բ4, գ2, դ1
2) ա4, բ2, գ1, դ3 4) ա4, բ3, գ1, դ2


7. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և բանաձևը.

Նյութի անվանում	Նյութի բանաձև
ա) 1,2-երկօքսիբենզոլ	
բ) պիկրինաթթու	
գ) կարբոլաթթու	
դ) կումոլ	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- 1) ա2, բ5, գ1, դ4
 2) ա1, բ3, գ5, դ4
 3) ա1, բ5, գ3, դ2
 4) ա4, բ3, գ1, դ5

8. Ո՞ր կառուցվածքային բանաձևում է ճիշտ պատկերված էթիլսպիրտի մոլեկուլում էլեկտրոնային զույգերի տեղաշարժը.



9. Ո՞ր շարքում է բութեն-1-ի փոխարկումների հիմնական ուղղությունների ճիշտ հաջորդականությունը.

- 1) բութեն-1 → բութանոլ-1 → բութեն-1
 2) բութեն-1 → բութանոլ-2 → բութեն-1
 3) բութեն-1 → բութանոլ-2 → բութեն-2
 4) բութեն-1 → բութանոլ-1 → բութեն-2

10. Բութանոլ-1-ի դեհիդրատացման արգասիքի մոլեկուլում ո՞րն է σ - և π -կապերի թվերի հարաբերությունը.

- 1) 8 : 1 2) 10 : 1 3) 12 : 1 4) 11 : 1

11. Քանի՞ C-H կապ է առկա էթանդիոլ-1,2-ի մոլեկուլում.

- 1) 6 2) 9 3) 1 4) 4

12. Իզոմերիայի ո՞ր տեսակներն են բնորոշ մոլեկուլում ածխածնի երեք ատոմ պարունակող հագեցած միատոմ սպիրտին.

- 1) ածխածնային կմախքի և հիդրօքսիլային խմբի դիրքի
- 2) հիդրօքսիլային խմբի դիրքի և միջդասային
- 3) միջդասային և տարածական
- 4) ածխածնային կմախքի և տարածական.

13. C_7H_8O բանաձևն ունեցող քանի՞ իզոմեր արոմատիկ միացություններ կարող են գոյություն ունենալ.

- 1) 2
- 2) 3
- 3) 4
- 4) 5

14. Որքան է $C_4H_{10}O$ քիմիական բանաձևն ունեցող իզոմեր առաջնային սպիրտների թիվը.

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

15. Ո՞րն է $C_4H_{10}O_2$ քիմիական բանաձևն ունեցող իզոմեր երկատոմ սպիրտների թիվը.

- 1) 2
- 2) 4
- 3) 5
- 4) 6

16. Որքան է 74 հարաբերական մոլեկուլային զանգված ունեցող սահմանային միատոմ սպիրտի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը.

- 1) 7
- 2) 9
- 3) 12
- 4) 15

17. Որքան է ածխածնի ատոմների թիվը սահմանային միատոմ սպիրտի մոլեկուլում, որի գոլորշու հարաբերական խտությունն ըստ ջրածնի 30 է.

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3

18. Հետևյալ փոխարկումներից ո՞րը բնորոշ չէ ֆենոլին.

- 1) դեհիդրատացում
- 2) բրոմացում
- 3) չեզոքացում
- 4) նիտրացում

19. Որքան է ֆենոլի նիտրացման ռեակցիայի ելքը (%), եթե 2,35 գ ֆենոլից ստացել են 4,58 գ զանգվածով 2,4,6-եռնիտրոֆենոլ.

- 1) 70
- 2) 40
- 3) 80
- 4) 60

20. Ո՞ր ռեակցիաների արդյունքում է հնարավոր ստանալ առաջնային սպիրտ.

- 1) $CH_3-CH_2-CH_2-Br \xrightarrow{Zn}$
- 2) $CH_3-CH_2-CH_2-Cl \xrightarrow[ջուր]{KOH}$
- 3) $CH_3-CH_2-CH_2-Br \xrightarrow[սպիրտ]{KOH}$
- 4) $CH_3-CH_2-CH_2-I \xrightarrow[սպիրտ]{KOH}$

21. Ո՞ր պնդումն(երն) է(են) ճիշտ գլիցերինի համար.

- ա) ջրում հեշտ լուծվող պինդ նյութ է
- բ) ստացվում է ճարպերի հիդրոլիզից
- գ) թանձր քաղցրահամ հեղուկ է

- 1) ա, բ 2) բ, գ 3) ա, բ, գ 4) ա, գ

22. Ո՞ր ազդանյութի հետ փոխազդեցությունն է համարվում որակական ֆենոլի համար.

- 1) FeCl_3 2) NaCl 3) FeCl_2 4) CaCl_2

23. Ո՞ր քլորալկանի հիդրոլիզից է առաջանում սպիրտ, որը KMnO_4 -ով ծծմբական թթվի միջավայրում օքսիդանում է մինչև 2-մեթիլպրոպանաթթու.

- 1) 2-քլոր-2-մեթիլպրոպան 3) 1-քլոր-2-մեթիլպրոպան
2) 2-քլորպրոպան 4) 1-քլորբրոպան

24. Ո՞ր քլորալկանի հիդրոլիզից գոյացող սպիրտը համապատասխան պայմաններում կօքսիդանա մինչև 3-մեթիլպենտանալ.

- 1) 1-քլոր-3-մեթիլպենտան 3) 2-քլոր-2-մեթիլպենտան
2) 2-քլոր-3-մեթիլպենտան 4) 2-քլորպենտան

25. Հետևյալ միացություններից ո՞րը կառաջանա բութեն-2-ը կալիումի պերմանգանատի ջրային լուծույթով օքսիդացնելիս.

- 1) 1,2-բութանդիոլ 3) 2,2-բութանդիոլ
2) 2,3-բութանդիոլ 4) մեթիլ-պրոպիլկետոն

26. Բրոմաջրածնի ավելցուկի և 12,4 գ երկատոմ սպիրտի փոխազդեցությունից գոյացել է 37,6 գ երկհալոգենածանցյալ: Ինչ թվով մեթիլենային խմբեր են առկա երկատոմ սպիրտի մոլեկուլում.

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

27. Ո՞ր ազդանյութն են օգտագործում բազմատոմ սպիրտների հայտաբերման համար.

- 1) NaOH 2) Cu(OH)_2 3) HNO_3 4) Na

28. Ինչ զանգվածով (գ) ացետալդեհիդ կստացվի 56 լ (ն. պ.) ացետիլենից.

- 1) 100 2) 110 3) 120 4) 140

29. Ո՞ր ռեակցիայի արդյունքում էթանոլ չի առաջանում.

- 1) $\text{CH}_3\text{COOC}_2\text{H}_5 + \text{NaOH} \xrightarrow{t}$ 3) $\text{CH}_2 = \text{CH}_2 + \text{H}_2\text{O} \xrightarrow{\text{H}^+, t}$
2) $\text{CH}_3\text{CH} = \text{O} + \text{Ag}_2\text{O} \xrightarrow{t}$ 4) $\text{CH}_3\text{CH} = \text{O} + \text{H}_2 \xrightarrow{\text{Ni}, t}$

30. Ո՞ր նյութն է ցուցաբերում առավել արտահայտված թթվային հատկություններ.

- 1) ջուր 2) ֆենոլ 3) էթանոլ 4) էթիլենգլիկոլ


31. Ո՞ր նյութը կստացվի էթանոլը խիտ ծծմբական թթվի առկայությամբ 140°C -ից ցածր ջերմաստիճանում տաքացնելիս.

- 1) էթան 2) էթին 3) էթանալ 4) երկէթիլէթեր

32. Ո՞ր նյութը կստացվի համապատասխան պայմաններում ացետոնը հիդրելիս.


- 1) պրոպան 3) պրոպանոլ-1
2) պրոպանաթթու 4) պրոպանոլ-2

33. Փոխարկումների հետևյալ շղթայում ո՞րը կարող է լինել X նյութը.



- 1) էթանոլ 2) էթանալ 3) բութանալ 4) քացախաթթու

34. Փոխարկումների հետևյալ շղթայում ո՞րը կարող է լինել X նյութը.



- 1) տոլուոլ 2) քսիլոլ 3) քլորբենզոլ 4) նիտրոբենզոլ

35. Ո՞ր նյութի հիդրոլիզից էթանոլ կստացվի.

- 1) էթիլֆորմիատ 3) նատրիումի մեթիլատ
2) մեթիլացետատ 4) էթանաթթվի մեթիլէթեր

36. Ո՞ր նյութի հետ կփոխազդեն Ա՝ էթանոլը, Ա՝ ֆենոլը.

- 1) մետաղական նատրիում 3) բրոմաջրածնային թթու
2) նատրիումի հիդրօքսիդ 4) բրոմաջուր

37. Ո՞ր նյութը կստացվի մեկ մոլ էթիլենգլիկոլի և երկու մոլ քլորաջրածնի փոխազդեցությունից.

- 1) 2,2-երկքլորէթանոլ-1 3) 1,1-երկքլորէթան
2) 1,2-երկքլորէթանոլ-1 4) 1,2-երկքլորէթան

38. Ո՞ր նյութը կստացվի ավելցուկով խիտ ազոտական թթվի և ֆենոլի փոխազդեցությունից.

- 1) 1-նիտրոֆենոլ 3) եռնիտրոֆենոլ
2) երկնիտրոֆենոլ 4) նիտրոբենզոլ

39. Հետևյալ նյութերից որի՞ հետ չի փոխազդի ֆենոլը.

- 1) NaCl 2) Br₂ 3) HNO₃ 4) NaOH

40. Որքան է ածխածնի ատոմների մոլային բաժինը (%) C_3H_8O բանաձևն ունեցող նյութերում.

- 1) 40 2) 60 3) 25 4) 80

41. Ինչ զանգվածով (գ) ֆենոլ է փոխազդել ավելցուկով բրոմաջրի հետ, եթե փոխազդեցության արդյունքում ստացվել է 165,5 գ նստվածք.

- 1) 94 2) 47 3) 39 4) 23

42. Ո՞ր նյութի սպիրտային խմորումից կստացվի էթանոլ.

- 1) գլյուկոզ 2) գլիցին 3) գլիցերին 4) բջջանյութ

43. Համապատասխանեցրե՞ք փոխազդող նյութերը և ռեակցիաների վերջանյութերը.

Փոխազդող նյութեր	Ռեակցիայի վերջանյութեր
ա) $C_2H_5OH + Na \rightarrow$	1) $HCOOCH_3 + H_2O$
բ) $CH_3COOC_2H_5 + H_2O \xrightarrow{NaOH, t}$	2) $CH_3CH = O + H_2O + Cu$
գ) $CH_3OH + HCOOH \rightarrow$	3) $CH_3COOH + H_2O + Cu$
դ) $C_2H_5OH + CuO \xrightarrow{t}$	4) $CH_3COONa + C_2H_5OH$
	5) $C_2H_5ONa + H_2$
	6) $CH_3COOH + C_2H_5ONa$


Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- 1) ա5, բ4, գ2, դ1 2) ա4, բ3, գ1, դ2 3) ա4, բ6, գ1, դ3 4) ա5, բ4, գ1, դ2

44. Ո՞ր նյութի ազդեցությամբ թարմ պատրաստված $Cu(OH)_2$ -ի նստվածքը կլուծվի.

- 1) պրոպեն 3) պրոպանտրիոլ-1,2,3
2) պրոպանոլ-1 4) պրոպանոլ-2

45. Ո՞ր օրգանական նյութը կառաջանա հետևյալ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի արդյունքում.



- 1) էթիլենգլիկոլ 3) քացախաթթու
2) քացախալդեհիդ 4) էթիլենօքսիդ

46. Ինչո՞վ է պայմանավորված ջրում էթանոլի լավ լուծելիությունը.

- 1) սպիրտի մոլեկուլների միջև ջրածնային կապերի առաջացմամբ
2) ջրի մոլեկուլների միջև ջրածնային կապերի առաջացմամբ
3) ջրի և սպիրտի մոլեկուլների միջև ջրածնային կապերի առաջացմամբ
4) ներմոլեկուլային ջրածնային կապերի առաջացմամբ

47. Ո՞ր նյութերը կստացվեն մեթանոլի և էթանոլի խառնուրդի միջմուլեկուլային դեհիդրատացումից.

- 1) երկմեթիլեթեր և երկէթիլեթեր 3) մեթիլէթիլեթեր, էթիլեն և երկմեթիլեթեր
 2) երկէթիլեթեր և էթիլեն 4) երկմեթիլեթեր, երկէթիլեթեր և մեթիլէթիլեթեր

48. Ի՞նչ ծավալով (լ) գազ կանջատվի 100 գ մեթանոլը 23 գ մետաղական նատրիումի հետ փոխազդելիս.

- 1) 22,4 2) 11,2 3) 5,6 4) 2,8

49. Ի՞նչ զանգվածով (գ) եռբրոմֆենոլ կստացվի 18,8 գ ֆենոլից.

- 1) 6,62 2) 13,24 3) 66,2 4) 331

50. Հետևյալ նյութերից որո՞նք կփոխազդեն նատրիումի հիդրօքսիդի հետ.

- ա) էթանոլի գ) բենզոլ ե) մեթանոլ
 բ) պրոպանտրիոլ դ) ֆենոլ զ) բենզիլսպիրտ
 1) ա, բ, դ 2) գ, դ, զ 3) ա, ե, գ 4) բ, դ, ե

51. Համապատասխանեցրե՞ք նյութի և օքսիդացման արգասիքի անվանումները.

Նյութ	Օքսիդացման արգասիք
ա) էթանոլ	1) պրոպանոլիոլ-1,2
բ) տոլուոլ	2) պրոպան
գ) պրոպեն	3) էթանալ
դ) մեթան	4) մեթանոլ
	5) բենզիլսպիրտ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- 1) ա3, բ5, գ1, դ4 3) ա2, բ5, գ1, դ4
 2) ա3, բ4, գ5, դ4 4) ա2, բ4, գ5, դ3

52. Համապատասխանեցրե՞ք ալկենի և հիդրատացման հիմնական արգասիքի անվանումները.

Ալկեն	Հիդրատացման արգասիք
ա) պրոպեն	1) պրոպանոլ-2
բ) բութեն-1	2) բութանոլ-1
գ) բութեն-2	3) էթանոլ
դ) էթեն	4) բութանոլ-2
	5) պրոպան

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշդ.

- 1) ա5, բ4, գ4, դ3 3) ա1, բ4, գ4, դ3
 2) ա1, բ2, գ2, դ3 4) ա5, բ2, գ2, դ3

53. Ո՞ր սպիրտը չի ստացվի համապատասխան ալկենի հիդրատացումով.

- 1) պրոպանոլ-2 2) պրոպանոլ-1 3) էթանոլ 4) բութանոլ-2

54. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի 23 գ պրոպանտրիոլ-1,2,3-ը 11,5 գ մետաղական նատրիումի հետ փոխազդելիս.

- 1) 1,4 2) 2,8 3) 5,6 4) 11,2

3.4. Սպիրտներ և ֆենոլներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	19	3	37	4
2	2	20	2	38	3
3	2	21	2	39	1
4	3	22	1	40	3
5	1	23	3	41	2
6	3	24	1	42	1
7	3	25	2	43	4
8	2	26	1	44	3
9	3	27	2	45	1
10	4	28	2	46	3
11	4	29	2	47	4
12	2	30	2	48	2
13	3	31	4	49	3
14	2	32	4	50	1
15	4	33	1	51	1
16	4	34	3	52	3
17	4	35	1	53	2
18	1	36	1	54	3

3.5. ԱԼԴԵՀԻԴՆԵՐ ԵՎ ԿԱՐԲՈՆԱԹԹՈՒՆԵՐ

1. Ո՞ր շարքի նյութերն ունեն $C_nH_{2n}O$ ընդհանուր բանաձևը.

- 1) միատոմ սահմանային սպիրտներ
 2) ալդեհիդներ
 3) միահիմն կարբոնաթթուներ
 4) էթերներ

2. Ո՞րն է ֆորմալդեհիդի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $\begin{array}{c} \cdot\cdot\cdot O \\ \cdot\cdot \\ H : C : \\ \cdot\cdot \\ \cdot H \end{array}$
 2) $\begin{array}{c} \cdot\cdot\cdot O : \\ \cdot\cdot \\ H : C : \\ \cdot\cdot \\ \cdot H \end{array}$
 3) $\begin{array}{c} \cdot\cdot\cdot \ddot{O} : \\ \cdot\cdot \\ H : C : \\ \cdot\cdot \\ \cdot H \end{array}$
 4) $\begin{array}{c} \cdot\cdot\cdot \ddot{O} : \\ \cdot\cdot \\ H : C : \\ \cdot\cdot \\ \cdot H \end{array}$

3. Ո՞ր ալդեհիդի մոլեկուլում է ածխածնի sp^3 և sp^2 հիբրիդային վիճակում գտնվող ատոմների թվի հարաբերությունը 3 : 1.

- 1) էթանալ
 2) պրոպանալ
 3) մեթիլպրոպանալ
 4) պենտանալ

4. Որքան է σ -կապերի թիվը պարզագույն երկհիմն կարբոնաթթվի ($C_2H_2O_4$) մոլեկուլում.

- 1) 1
 2) 3
 3) 5
 4) 7

5. Որքան է հետևյալ միացությունների մեկական մոլեկուլներում առկա մեթիլենային խմբերի գումարային թիվը. 2-քլորպրոպանալ, 3-մեթիլբուտանալ, 2,3-երկմեթիլբուտանալ, 3-հիդրոքսի-4-մեթիլհեքսանալ.

- 1) 3
 2) 4
 3) 5
 4) 6

6. Համապատասխանեցրե՛ք ալդեհիդի անվանումը և բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) մեթանալ	1) $CH_3CH(CH_3)CHO$
բ) պրոպանալ	2) $HCHO$
գ) բութանալ	3) CH_3CHO
դ) 2-մեթիլպրոպանալ	4) C_2H_5CHO
	5) $CH_3CH_2CH_2CHO$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3, բ4, գ5, դ1
 2) ա3, բ2, գ1, դ5
 3) ա2, բ4, գ5, դ1
 4) ա2, բ3, գ5, դ4

7. Որքան է σ -կապերի թիվը քացախաթթվի մոլեկուլում.

- 1) 7 2) 6 3) 1 4) 8

8. Համապատասխանեցրե՛ք կարբոնաթթվի անվանումը և բանաձևը.

<i>Անվանում</i>	<i>Բանաձև</i>
ա) պալմիտինաթթու	1) $C_{17}H_{33}COOH$
բ) օլեինաթթու	2) $C_{17}H_{35}COOH$
գ) վալերիանաթթու	3) $HOOC-COOH$
դ) օքսալաթթու	4) C_4H_9COOH
	5) C_3H_7COOH
	6) $C_{15}H_{31}COOH$

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ3, գ5, դ4 3) ա6, բ1, գ4, դ3
 2) ա6, բ2, գ4, դ1 4) ա2, բ5, գ1, դ6

9. Ո՞ր զույգի նյութերն են հոմոլոգներ.

- 1) պրոպիլոնաթթու, կարազաթթու 3) ֆենոլ, բենզոլ
 2) կարբոլաթթու, պիկրինաթթու 4) ստեարինաթթու, օլեինաթթու

10. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և ստացման եղանակը.

<i>Անվանում</i>	<i>Ստացման եղանակ</i>
ա) ֆորմալդեհիդ	1) էթիլենի հիդրատացում
բ) քացախալդեհիդ	2) ացետիլենի հիդրատացում
գ) քացախաթթու	3) մեթանի կատալիտիկ օքսիդացում
դ) մեթիլացետատ	4) բութանի կատալիտիկ օքսիդացում
	5) պրոպիլսպիրտի օքսիդացում
	6) քացախաթթվի և մեթանոլի փոխազդեցություն

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ5, գ2, դ3 3) ա1, բ4, գ6, դ2
 2) ա3, բ2, գ5, դ6 4) ա3, բ2, գ4, դ6

11. Ինչ զանգվածով (գ) աղ կստացվի 2 մոլ/լ կոնցենտրացիայով 100 մլ քացախաթթվի լուծույթին 5,6 գ կալիումի հիդրօքսիդ ավելացնելիս.

- 1) 19,6 2) 9,8 3) 5,6 4) 4,9


12. Ո՞ր շարքում են ացետոնի հիդրման ռեակցիայի տեսակը և վերջանյութի անվանումը.

- 1) միացման, պրոպանոլ-2 3) տեղակալման, պրոպանոլ-1
 2) քայքայման, պրոպանոլ -1 4) փոխանակման, պրոպանոլ-2

13. Ո՞ր սպիրտի օքսիդացումից կստացվի մեթիլէթիլկետոն.

- | | |
|---------------|---------------|
| 1) 1-պրոպանոլ | 3) 1-բութանոլ |
| 2) 2-պրոպանոլ | 4) 2-բութանոլ |

14. Ո՞ր շարքում են X_1 , X_2 և X_3 նյութերի բանաձևերն ըստ հետևյալ փոխարկումների.



- | | |
|--|--|
| 1) CH_3COH , $\text{C}_2\text{H}_5\text{OH}$, $\text{CH}_3\text{CH}_2\text{ONa}$ | 3) CH_3COH , CH_3COOH , CH_3COONa |
| 2) CH_3COOH , $\text{C}_2\text{H}_5\text{OH}$, $\text{CH}_3\text{CH}_2\text{ONa}$ | 4) CH_3COH , $\text{C}_2\text{H}_5\text{OH}$, CH_3COONa |

15. Որքան է սահմանային ալդեհիդի գոլորշու խտությունն ըստ ջրածնի, եթե դրա պարզագույն և իրական բանաձևերը համընկնում են, իսկ մոլեկուլում ածխածնի զանգվածային բաժինը 54,55 % է.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) 60 | 2) 45 | 3) 15 | 4) 22 |
|-------|-------|-------|-------|

16. Ո՞ր շարքում են բաց թողած բառերը.

Արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով քացախադեղինը օքսիդանում է մինչև _____, իսկ մրջնադեղինը՝ _____:

- 1) քացախաթթու, ածխածնի(IV) օքսիդ և ջուր
- 2) էթիլսպիրտ, մրջնաթթու
- 3) քացախաթթու, մեթանոլ
- 4) մրջնաթթու, ածխածնի(IV) օքսիդ և ջուր

17. Ո՞ր զույգի նյութերը կփոխազդեն NaOH -ի հետ.

- | | |
|---------------------|-----------------------|
| 1) քացախաթթու, էթան | 3) մրջնաթթու, ֆենոլ |
| 2) գլիցին, էթին | 4) կարազաթթու, բենզոլ |

18. Ո՞ր նյութն է պրոպանոլ-2-ի օքսիդացման արգասիքը.

- | | |
|-------------------|---------------------|
| 1) երկմեթիլկետոն | 3) երկմեթիլպրոպանոլ |
| 2) երկմեթիլպրոպան | 4) պրոպանալ |

19. Որքան է էթիլենից ացետալդեհիդի ստացման ռեակցիայի ելքը (%), եթե 280 Լ (ն. պ.) ելանյութից ստացվել է 330 գ ացետալդեհիդ.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) 60 | 2) 70 | 3) 80 | 4) 90 |
|-------|-------|-------|-------|

20. Ո՞ր զույգի նյութերի հետ կփոխազդի ֆորմալդեհիդը.

- | | |
|---|--|
| 1) N_2 , $[\text{Ag}(\text{NH}_3)_2]\text{OH}$ | 3) N_2 , $\text{Cu}(\text{OH})_2$ |
| 2) $[\text{Ag}(\text{NH}_3)_2]\text{OH}$, $\text{Cu}(\text{OH})_2$ | 4) HNO_3 , CH_3COOH |

21. Հետևյալ նյութերից ո՞րը կգոյանա պրոպանալի լրիվ հիդրումից.

- 1) պրոպանոլ-1 2) պրոպեն 3) պրոպանալ 4) պրոպանաթթու

22. Ո՞րն է X նյութը հետևյալ փոխարկումներում. $\text{CH}_3\text{Cl} \rightarrow \text{X} \rightarrow \text{HCHO}$.

- 1) մեթան 2) էթան 3) մեթանոլ 4) մրջնաթթու

23. Ո՞ր նյութը կստացվի պրոպանալի հիդրումից.

- 1) պրոպանաթթու 3) պրոպանոլ-1
2) պրոպանոն 4) պրոպանոլ-2

24. Ի՞նչ տեսակի և ի՞նչ թվով քիմիական կապեր են առկա ալդեհիդում, որը պարունակում է 27,586 % զանգվածային բաժնով թթվածին.

- 1) 9σ և 1π 2) 8σ և 2π 3) 6σ և 1π 4) 12σ և 1π

25. Ռեակցիաների ո՞ր դասին է պատկանում ֆորմալդեհիդից և ֆենոլից ֆենոլֆորմալդեհիդային խեժի ստացման ռեակցիան.

- 1) հիդրատացման 3) պոլիկոնդենսացման
2) դեհիդրման 4) պոլիմերացման

26. Ո՞ր ազդանյութով է հնարավոր տարբերել էթանոլի, էթանալի, էթիլենգլիկոլի և քացախաթթվի լուծույթները.

- 1) CuO 2) NaOH 3) Cu(OH)₂ 4) CuSO₄

27. Հետևյալ նյութերից որի՞ն է բնորոշ արծաթահայելու ռեակցիան.

- 1) C₂H₅OH 2) CH₃CHO 3) CH₃COOH 4) CH₃OH

28. Ի՞նչ զանգվածով և ո՞ր նյութն է գոյանում 58 գ պրոպանալը ջրածնով վերականգնելիս.

- 1) 60 գ պրոպանոլ 3) 44 գ պրոպան
2) 74 գ պրոպանաթթու 4) 46 գ երկպրոպիլէթեր

29. Ի՞նչ դասի նյութ կառաջանա պղնձի(II) օքսիդով միատոմ առաջնային սպիրտի օքսիդացումից.

- 1) ածխաջրածին 2) կետոն 3) էտեր 4) ալդեհիդ

30. Հավասար ծավալներով նույն կոնցենտրացիայի հետևյալ թթուներից որի՞ լուծույթում կպարունակվեն առավել մեծ քանակությամբ ջրածնի իոններ.

- 1) քացախաթթվի 3) քլորքացախաթթվի
2) երկքլորքացախաթթվի 4) պրոպանաթթվի

31. Ո՞ր զույգի նյութերը կփոխազդեն NaOH-ի հետ.

- | | |
|---------------------|-----------------------|
| 1) քացախաթթու, էթան | 3) մրջնաթթու, ֆենոլ |
| 2) գլիցին, էթին | 4) կարազաթթու, բենզոլ |

32. Քանի՞ իզոմեր կարբոնաթթուների մոլեկուլներում է պրոտոնների թիվը 10-ով մեծ նեյտրոնների թվից.

- | | | | |
|------|------|------|------|
| 1) 1 | 2) 2 | 3) 3 | 4) 4 |
|------|------|------|------|

33. Ո՞ր զույգի նյութերի հետ կփոխազդի քացախաթթուն.

- | | |
|------------------|---|
| 1) էթանոլ և էթան | 3) նատրիումի կարբոնատ և մագնեզիում |
| 2) քլոր և ջուր | 4) նատրիումի հիդրօքսիդ և մագնեզիումի քլորիդ |

34. Վալերիանաթթվի և երրորդային բութիլսպիրտի փոխազդեցությունից ստացված օրգանական միացության մոլեկուլում գումարային ինչ թվով ատոմներ են առկա.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) 26 | 2) 29 | 3) 23 | 4) 20 |
|-------|-------|-------|-------|

35. Քանի՞ գ.ա.մ-ով է վալերիանաթթվի մեկ մոլեկուլի զանգվածը մեծ կարազաթթվի մեկ մոլեկուլի զանգվածից.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) 12 | 2) 13 | 3) 14 | 4) 16 |
|-------|-------|-------|-------|

36. Ո՞ր շարքի զույգ նյութերի փոխազդեցությունից թթու կառաջանա.

- | | |
|-------------------------------------|--------------------------------|
| 1) C_4H_{10} և O_2 (t, p, կատ.) | 3) CH_3CHO և H_2 (t, կատ.) |
| 2) CH_3CH_2OH և CuO | 4) CO_2 և H_2 (t, կատ, p) |

37. Ո՞ր նյութերի ջրային լուծույթների հետ կփոխազդի մրջնաթթուն.

- | | | | |
|-----------------------|---------------------------------------|---------|---------|
| ա) նատրիումի կարբոնատ | գ) պղնձի սուլֆատ | | |
| բ) քլորաջրածին | դ) արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթ | | |
| 1) ա, բ | 2) բ, գ | 3) ա, դ | 4) բ, դ |




38. Ո՞ր նյութի հետ կփոխազդի նատրիումի ացետատը.

- | | |
|------------------------|---------------|
| 1) նատրիումի հիդրօքսիդ | 3) քացախաթթու |
| 2) էթան | 4) էթանալ |

39. Ո՞ր զույգ նյութերի փոխազդեցության արգասիքն է էթիլացետատը.

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) CH_3CHO և C_2H_5OH | 3) CH_3COOH և C_3H_7OH |
| 2) CH_3COOH և C_2H_5OH | 4) CH_3COOH և CH_3OH |

40. Որո՞նք են X և Y նյութերի բանաձևերը փոխարկումների հետևյալ շղթայում.



41. Ո՞ր նյութն է քացախաթթվի հոմոլոգ.

1) օլեինաթթու

2) կաթնաթթու

3) թրթնջկաթթու

4) պրոպանաթթու

42. Ո՞ր սպիրտը և թթուն կստացվեն $\text{C}_3\text{H}_6\text{O}_2$ բանաձևն ունեցող էսթերի հիդրոլիզից.

1) պրոպանոլ և մրջնաթթու

2) էթանոլ և մրջնաթթու



3) մեթանոլ և պրոպիոնաթթու

4) էթանոլ և քացախաթթու

43. Որո՞նք են պղնձի(II) հիդրօքսիդով քացախալդեհիդի օքսիդացման վերջանյութերի բանաձևերը.



44. Ո՞ր շարքում են քացախաթթվի հետ փոխազդող նյութերի բանաձևերը.



45. Ի՞նչ զանգվածով(գ) քացախաթթու կպահանջվի 20 գ նատրիումի հիդրօքսիդը չեզոքացնելու համար.

1) 10

2) 15

3) 20

4) 30

46. Ո՞րն է առավել ուժեղ թթվային հատկություններ ցուցաբերող նյութը.

1) էթիլենգլիկոլ

2) մրջնաթթու

3) քացախաթթու

4) քլորքացախաթթու

47. Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ թթվային հատկությունների ուժեղացման.

1) քլորքացախաթթու, քացախաթթու, ֆենոլ

2) քլորքացախաթթու, քացախաթթու, մրջնաթթու

3) ֆենոլ, քացախաթթու, մրջնաթթու

4) աղաթթու, մրջնաթթու, կարազաթթու

48. Ո՞ր զույգի նյութերի փոխազդեցությունից էթիլպրոպիոնատ կստացվի.

1) պրոպանոլ և քացախաթթու

2) էթանոլ և պրոպիոնաթթու

3) մեթանոլ և պրոպիոնաթթու

4) մեթանոլ և քացախաթթու

49. Համապատասխանեցրեք կարբոնաթթվի անվանումը և բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) պրոպիոնաթթու	1) $\text{CH}_3\text{CH}(\text{OH})\text{COOH}$
բ) կաթնաթթու	2) $\text{CH}_3\text{CH}_2\text{COOH}$
գ) կարազաթթու	3) HCOOH
դ) մրջնաթթու	4) CH_3COOH
	5) $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{COOH}$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ4, գ5, դ4 2) ա2, բ1, գ4, դ3 3) ա2, բ1, գ5, դ3 4) ա1, բ2, գ4, դ5

50. Հետևյալ միացություններից որին է բնորոշ արծաթահայելու ռեակցիան.

- 1) $\text{C}_2\text{H}_5\text{OH}$ 2) CH_3COOH 3) HCOOH 4) $\text{C}_3\text{H}_7\text{OH}$

3.5. Արդեհիդներ և կարբոնաթթուներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	18	1	35	3
2	4	19	1	36	1
3	3	20	2	37	3
4	4	21	1	38	1
5	1	22	3	39	2
6	3	23	3	40	4
7	1	24	1	41	4
8	3	25	3	42	2
9	1	26	3	43	4
10	4	27	2	44	1
11	2	28	1	45	4
12	1	29	4	46	4
13	4	30	2	47	3
14	3	31	3	48	2
15	4	32	4	49	3
16	1	33	3	50	3
17	3	34	2		

3.6. ԷՍԹԵՐՆԵՐ, ՃԱՐՊԵՐ, ԱԾԽԱԶՐԵՐ

1. Հետևյալ ռեակցիաներից որի հետևանքով է օճառ առաջանում.

- 1) ճարպերի հիդրոլում
2) ճարպերի հիմնային հիդրոլիզ
3) ալկինների հիդրատացում
4) սպիրտների օքսիդացում

2. Ո՞ր լուծիչում ճարպերը չեն լուծվում.

- 1) բենզին
2) ջուր
3) բենզոլ
4) քլորոֆորմ

3. Ո՞ր զույգի նյութերը կգոյանան $C_5H_{10}O_2$ բաղադրությամբ էսթերի հիդրոլիզից.

- 1) մեթանոլ և պենտանալ
2) պրոպիլոնաթթու և էթանալ
3) էթանոլ և բութանալ
4) էթանաթթու և պրոպանոլ

4. Ո՞ր նյութերն են էթիլացետատի հիմնային հիդրոլիզի արգասիքները, եթե լուծույթում նատրիումի հիդրօքսիդն ավելցուկով է.

- ա) նատրիումի ացետատ
բ) էթանոլ
բ) նատրիումի էթիլատ
դ) քացախաթթու

- 1) ա, գ
2) բ, գ
3) բ, դ
4) ա, դ

5. Ո՞րն է էսթերի կառուցվածքային բանաձև.

- 1) $CH_3-CH_2-CH_2-CH_2-C \begin{matrix} \text{O} \\ \parallel \\ \text{H} \end{matrix}$
2) $CH_3-CH_2-CH_2-HN-C \begin{matrix} \text{O} \\ \parallel \\ \text{O} \end{matrix} -CH_2-CH_3$
3) $CH_3-CH_2-CH_2-CH_2-C \begin{matrix} \text{O} \\ \parallel \\ \text{O}-CH_2-CH_3 \end{matrix}$
4) $CH_3-CH_2-CH_2-CH_2-C \begin{matrix} \text{O} \\ \parallel \\ \text{OH} \end{matrix}$

6. Որքան է իզոպրոպիլսպիրտի և իզոկարագաթթվի փոխազդեցությունից ստացված էսթերի մոլեկուլում երրորդային ածխածինների թիվը.

- 1) 3
2) 2
3) 1
4) 4

7. Համապատասխանեցրե՞ք նյութի բանաձևը և անվանումը.

Բանաձև	Անվանում
ա) $\text{CH}_3\text{COOCH}_2\text{CH}_3$	1) էթիլպրոպիոնատ
բ) $\text{CH}_3\text{COOCH}_3$	2) մեթիլացետատ
գ) $\text{CH}_3\text{COOCH}_2\text{CH}_2\text{CH}_3$	3) կարագաթթու
դ) $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{COOH}$	4) էթիլացետատ
	5) պրոպիոնաթթու
	6) պրոպիլացետատ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ2, գ1, դ5
 2) ա4, բ2, գ6, դ3
 3) ա6, բ4, գ2, դ5
 4) ա6, բ2, գ1, դ3

8. Ո՞րն է $\text{C}_4\text{H}_8\text{O}_2$ բանաձևն ունեցող էսթերների թիվը.

- 1) 2
 2) 3
 3) 4
 4) 5

9. Ո՞ր նյութերի փոխազդեցությունից կստացվի պրոպիոնաթթվի ն-բութիլէսթեր.

- 1) կարագաթթու և էթանոլ
 2) պրոպիոնաթթու և բութանոլ-1
 3) բութանաթթու և պրոպանոլ-1
 4) բութիլսպիրտ և պրոպանոլ

10. Ո՞ր ճարպի հիդրոլիզից կստացվեն 1:1:2 մոլային հարաբերությամբ գլիցերին, կարագաթթու և ստեարինաթթու.

- 1) եռօլեատ
 2) եռստեարատ
 3) եռպալմիտատ
 4) բութիրոներկստեարատ

11. Ո՞ր նյութերի փոխազդեցությունից օճառ չի ստացվի.

- 1) ճարպ և ծծմբական թթու
 2) ճարպ և նատրիումի հիդրօքսիդ
 3) ճարպ և նատրիումի կարբոնատ
 4) ճարպաթթու և նատրիումի հիդրօքսիդ

12. Ո՞ր ազդանյութով է հնարավոր հեղուկ ճարպը փոխարկել պինդ ճարպի.

- 1) Na_2CO_3
 2) մետաղական Na
 3) թթվածին
 4) ջրածին

13. Ո՞րն է իզոպրոպիլպրոպիոնատի հիդրոլիզից ստացված սպիրտի մոլեկուլում C-C-C կովալենտային անկյան մեծությունը.

- 1) 180°
 2) 120°
 3) 90°
 4) 109°

14. Ճարպաթթուների դ՞ր զույգն է գունագրկում բրոմաջուրը.

- 1) օլեինաթթու և լինոլաթթու
 2) օլեինաթթու և կարագաթթու
 3) ստեարինաթթու և պալմիտինաթթու
 4) ստեարինաթթու և օլեինաթթու

15. Ո՞ր նյութի ջրային լուծույթի և ճարպի փոխազդեցությունից է առաջանում պինդ-
օճառ.

- 1) NaOH 2) KOH 3) NaCl 4) KCl

16. Ո՞ր ճարպն է պարունակում առավել մեծ թվով կրկնակի կապեր.

- 1) եռօլեատ 3) եռպալմիտին
2) եռստեարատ 4) բուրբիրոներկաստեարատ

17. Ո՞ր էսթերին է բնորոշ արծաթահայելու ռեակցիան.

- 1) էթիլպրոպիոնատ 3) իզոպրոպիլպրոպիոնատ
2) էթիլացետատ 4) բութիլֆորմիատ

18. Ո՞րն է $C_3H_6O_2$ բաղադրությամբ իզոմերային էսթերների թիվը.

- 1) 1 2) 4 3) 3 4) 2

19. Ո՞ր զույգի նյութերն են առաջանում տաքացման պայմաններում ճարպերի հիմ-
նային հիդրոլիզից.

- 1) գլիցերին և ճարպաթթու 3) ճարպաթթու և օճառ
2) գլիցերին և օճառ 4) էսթեր և օճառ

20. Ո՞րն է բաց թողած բառը.

Հեղուկ ճարպերը փոխարկվում են պինդ ճարպերի _____ ռեակցիայի արդյունքում.

- 1) պոլիմերացման 3) հիդրման
2) պոլիկոնդենսացման 4) հիդրատացման

21. Միացությունների ո՞ր դասին են պատկանում օճառները.

- 1) սպիրտների 2) էսթերների 3) աղերի 4) կարբոնաթթուների

22. Ո՞ր կարբոնաթթվի էսթերներին է բնորոշ արծաթահայելու ռեակցիան.

- 1) կարազաթթվի 2) վալերիանաթթվի 3) կապրոնաթթվի 4) մրջնաթթվի

23. Օրգանական նյութերի ո՞ր դասերին են պատկանում նիտրոբենզոլ և եռնիտրո-
գլիցերին միացությունները համապատասխանաբար.

- 1) էսթեր և էթեր 3) էսթեր և նիտրիլ
2) նիտրոմիացություն և էսթեր 4) ածխաջրածին և նիտրոմիացություն

24. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և քիմիական բանաձևը.

Անվանում	Բանաձև
ա) մեթիլացետատ	1) $C_2H_4O_2$
բ) էթիլֆորմիատ	2) $C_7H_6O_2$
գ) պրոպանաթթու	3) $C_3H_6O_2$
դ) բենզոլյաթթու	4) $C_2H_6O_2$
	5) $C_7H_8O_2$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա3, բ3, գ3, դ2 | 3) ա1, բ3, գ3, դ3 |
| 2) ա1, բ4, գ5, դ5 | 4) ա3, բ4, գ5, դ5 |

25. Ո՞ր պնդումն է ճիշտ միաիման կարբոնաթթվի և ստացված էսթերների վերաբերյալ.

- | | |
|---|--------------------------------|
| ա) կարբոնաթթվի և էթանոլի փոխազդեցությունից ստացված էսթերի M_r -ը 28 միավորով մեծ է այդ կարբոնաթթվի M_r -ից | |
| բ) միաիման կարբոնաթթվի և մեթանոլի փոխազդեցությունից ստացված էսթերի M_r -ը 14 միավորով մեծ է այդ կարբոնաթթվի M_r -ից | |
| 1) ճիշտ է միայն <i>բ</i> -ն | 3) ճիշտ է միայն <i>ա</i> -ն |
| 2) երկու պնդումներն էլ ճիշտ են | 4) երկու պնդումներն էլ սխալ են |

26. Ո՞րն է գլյուկոզի սպիրտային խմորման գազային արգասիք.

- | | | | |
|-----------|-------|-----------|----------|
| 1) CO_2 | 2) CO | 3) CH_4 | 4) O_2 |
|-----------|-------|-----------|----------|

27. Ո՞րն է α -գլյուկոզի բնական պոլիմեր.

- | | |
|-------------|--------------------|
| 1) կաուչուկ | 3) կապրոն մանրաթել |
| 2) օսլա | 4) բնական կաուչուկ |

28. Ո՞ր զույգի նյութերը կօքսիդացնեն գլյուկոզին.

- | | |
|---------------------|----------------------|
| 1) $Cu(OH)_2, NaOH$ | 3) $Cu(OH)_2, H_2$ |
| 2) $Ag_2O, NaOH$ | 4) $Ag_2O, Cu(OH)_2$ |

29. Հետևյալ փոխարկումներից ո՞րն է հիդրոլիզի ռեակցիա.

- $C_6H_{12} + H_2O \rightarrow C_6H_{13}OH$
- $(C_6H_{10}O_5)_n + nH_2O \rightarrow nC_6H_{12}O_6$
- $C_6H_{12}O_6 + H_2 \rightarrow C_6H_{14}O_6$
- $C_2H_5OH + CH_3COOH \rightarrow CH_3COOC_2H_5 + H_2O$

30. Ինչ զանգվածով (տ) քացախաթթու է անհրաժեշտ 324 տ բջջանյութը եռացետատի փոխարկելու համար.

- 1) 45 2) 90 3) 180 4) 360

31. Ո՞ր զույգի նյութերն են երկշաքարներ.

- 1) մալթոզ, ֆրուկտոզ 3) սախարոզ, բջջանյութ
2) օսլա, գլյուկոզ 4) սախարոզ, մալթոզ

32. Ո՞րն է օսլայի հիդրոլիզի վերջնական արգասիքը.

- 1) α -գլյուկոզ 2) β -գլյուկոզ 3) սախարոզ 4) դեքստրին

33. Օրգանիզմում գլյուկոզի լրիվ օքսիդացումից ինչ նյութեր են գոյանում.

- 1) CO_2 , CH_3COOH 2) CO_2 , H_2O 3) CO , H_2O 4) CO , CH_2O

34. Ո՞րն է բնական պոլիմեր.

- 1) պոլիէթիլեն 2) բջջանյութ 3) պոլիպրոպիլեն 4) կապրոն

35. Ո՞ր ածխաջուրը հիդրոլիզի չի ենթարկվում.

- 1) մալթոզ 2) սախարոզ 3) գլյուկոզ 4) օսլա

36. Ո՞ր նյութը պղնձի(II) հիդրօքսիդի հետ փոխազդելիս Cu_2O կարմիր նստվածք չի առաջացնում.

- 1) մալթոզ 2) ֆրուկտոզ 3) ռիբոզ 4) գլյուկոզ

37. Որքան է հիդրօքսիլային խմբերի թիվը ֆրուկտոզի մոլեկուլում.


- 1) 5 2) 4 3) 3 4) 7

38. Ag_2O -ի ամոնիակային լուծույթով օքսիդացող միաշաքարի մեկ մոլի այրումից ստացվում են 5-ական մոլ CO_2 և ջուր: Ո՞րն է այդ միաշաքարը.

- 1) գլյուկոզ 2) ֆրուկտոզ 3) ռիբոզ 4) դեզօքսիռիբոզ

39. Ո՞ր նյութին է համապատասխանում հետևյալ կառուցվածքային բանաձևը.

- 1) β -ռիբոզ
2) β -ֆրուկտոզ
3) β -գլյուկոզ
4) α -ռիբոզ




40. Որո՞նք են X և Y նյութերն ըստ հետևյալ փոխարկումների.



- 1) ֆրուկտոզ և էթիլեն 3) ֆրուկտոզ և էթան
2) գլյուկոզ և էթիլեն 4) գլյուկոզ և էթան

41. Ո՞րն է X օրգանական նյութն ըստ հետևյալ փոխարկումների.



- 1) էթանալ 2) էթանոլ 3) ածխաթթու գազ 4) կաթնաթթու


42. Որո՞նք են բաց թողած բառերը.

Գլյուկոզի վերականգնումից առաջանում է _____, իսկ էթանալի վերականգնման արդյունքում _____:

- 1) գլյուկոնաթթու, քացախաթթու 3) սորբիտ, էթիլապիրտ
2) ֆրուկտոզ, էթիլապիրտ 4) սորբիտ, էթիլացետատ

43. Ո՞ր նյութին է համապատասխանում ներկայացված կառուցվածքային բանաձևը.

- 1) գլյուկոզի β-ձևին
2) ֆրուկտոզին
3) մալթոզին
4) գլյուկոզի α-ձևին



44. Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և գլյուկոզից դրա ստացման եղանակը.

Անվանում	Ստացման եղանակ
ա) սորբիտ	1) վերականգնում
բ) գլյուկոնաթթու	2) խմորում
գ) պենտաացետիլգլյուկոզ	3) էսթերացում
դ) կաթնաթթու	4) հիդրոլիզ
	5) օքսիդացում
	6) հիդրատացում

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա5, բ1, գ6, դ2 3) ա1, բ2, գ4, դ5
2) ա1, բ5, գ3, դ2 4) ա5, բ3, գ2, դ1

45. Որքան է ածխածնի զանգվածային բաժինը (%) գլյուկոզում.

- 1) 20 2) 6,64 3) 53,3 4) 40

46. Որքան է հիդրօքսիլային խմբերի թիվը գլյուկոզի ացիկլային (գծային) և ցիկլային ձևերի մեկական մոլեկուլներում համապատասխանաբար.
- 1) 4 և 5 2) 5 և 6 3) 6 և 5 4) 5 և 5
47. Ո՞րն է β -գլյուկոզի բնական պոլիմերը.
- 1) բջջանյութ 2) օսլա 3) մալթոզ 4) եռնիտրոցելյուլոզ
48. Ո՞ր զույգի նյութերից յուրաքանչյուրը կփոխազդի պղնձի(II) հիդրօքսիդի հետ.
- 1) պրոպան, ցելյուլոզ 3) մրջնաթթու, դեգօքսիտիբոզ
2) գլիցերին, էթեն 4) էթիլենգլիկոլ, ցիկլոպենտան
49. Առավելագույնը քանի մոլ քացախաթթու կփոխազդի մեկ մոլ գլյուկոզի հետ.
- 1) 1 2) 2 3) 3 4) 5
50. Քանի գ.ա.մ-ով է սահմանային միահիմն կարբոնաթթվի մեկ մոլեկուլի զանգվածը մեծ համապատասխան ալդեհիդի մեկ մոլեկուլի զանգվածից.
- 1) 12 2) 16 3) 18 4) 19
51. Ո՞ր նյութի ազդանյութն է Ag_2O -ի ամոնիակային լուծույթը.
- 1) գլիցերին 2) էթանոլ 3) ֆրուկտոզ 4) գլյուկոզ
52. Ո՞ր նյութն է ստացվում գլյուկոզը Ag_2O -ի ամոնիակային լուծույթով օքսիդացնելիս.
- 1) կաթնաթթու 3) գլյուկոնաթթու
2) կարազաթթու 4) վեցատոմ սպիրտ (սորբիտ)
53. Որքան է թթվածնի ատոմների թիվը գլյուկոզի կաթնաթթվային խմորման արգասիքի մեկ մոլեկուլում.
- 1) 3 2) 1 3) 2 4) 4

3.6. Էսթերներ, ճարպեր, ածխաջրեր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	19	2	37	1
2	2	20	3	38	3
3	4	21	3	39	1
4	1	22	4	40	2
5	3	23	2	41	2
6	2	24	1	42	3
7	2	25	2	43	4
8	3	26	1	44	2
9	2	27	2	45	4
10	4	28	4	46	4
11	1	29	2	47	1
12	4	30	4	48	3
13	4	31	4	49	4
14	1	32	1	50	2
15	1	33	2	51	4
16	1	34	2	52	3
17	4	35	3	53	1
18	4	36	2		

3.7. ԱԶՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՄԻՆԱԹԹՈՒՆՆԵՐ

1. Ալկիլամոնիումային աղի և հետկյալներից որի փոխազդեցությունից ամին կստացվի.

- 1) աղաթթու 2) բրոմաջուր 3) ալկալի (ջուր) 4) ջուր

2. Որքան է ազոտի օքսիդացման աստիճանը մեթիլամինի մոլեկուլում.

- 1) -3 2) 0 3) -1 4) -2

3. Ո՞ր նյութերի հետ կարող են փոխազդել և՛ անհիլինը, և՛ ֆենոլը.

- ա) Br_2 (բրոմաջուր) բ) NaBr (լ-թ) գ) O_2 դ) CH_4

- 1) բ, գ 2) ա, գ 3) գ, դ 4) բ, դ

4. Հետևյալ միացություններից որի և ամինաթթվի փոխազդեցությունից կստացվի այդ ամինաթթվի մերձավոր հոմոլոգի իզոմեր էսթերը.

- 1) CH_3COCl 2) CH_3OH 3) HBr 4) $\text{C}_2\text{H}_5\text{OH}$

5. Ո՞ր նյութերի հետ կփոխազդեն և՛ մեթանոլը, և՛ ֆենիլամինը.

- ա) H_2 բ) HBr գ) O_2 դ) NO

- 1) ա, գ 2) բ, գ 3) գ, դ 4) բ, դ

6. Ո՞ր մոլեկուլների միջև կարող են առաջանալ ջրածնային կապեր.

- 1) $(\text{CH}_3)_3\text{N}$ և $(\text{C}_2\text{H}_5)_3\text{N}$ 3) $\text{NH}_2\text{CH}_2\text{COOH}$ և H_2O

- 2) CH_3Br և $(\text{C}_2\text{H}_5)_3\text{N}$ 4) $\text{C}_2\text{H}_5\text{NH}_2$ և C_2H_6

7. Ո՞ր նյութն է կապրոնի ստացման հումքը.


- 1) երկնիտրոբջջանյութ 3) նիտրոգլիցերին

- 2) կապրոլակտամ 4) եռնիտրոբջջանյութ

8. Որքան է ամինաքացախաթթվի և կալիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից գոյացած աղի զանգվածը (գ), եթե որպես ռեակցիայի արգասիք ստացվել է նաև 54 գ ջուր.

- 1) 339 2) 226 3) 113 4) 33,9

9. Որքան է A և B նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարն ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



- 1) 36,5 2) 75 3) 111,5 4) 133,5

10. Ո՞ր զույգ պոլիմերներն ունեն նույն տարրական օղակները.

- 1) լավսան և կապրոն 3) օսլա և գլիկոլեն
2) կապրոն և նայլոն 4) լավսան և նայլոն

11. Ո՞րն է գլիցինի հոմոլոգը.

- 1) սերին 2) ցիստեին 3) լիզին 4) ալանին

12. Ո՞րն է առաջնային ամինի բանաձև.

- 1) $(\text{CH}_3)_2\text{NH}$ 2) $\text{C}_2\text{H}_5\text{NH}_2$ 3) $(\text{CH}_3)_2\text{NC}_2\text{H}_5$ 4) $\text{C}_6\text{H}_5\text{NHCH}_3$

13. Ո՞ր ամինն է ցուցաբերում առավել ուժեղ հիմնային հատկություններ.

- 1) մեթիլամին 2) ֆենիլամին 3) ամոնիակ 4) երկմեթիլամին

14. Ո՞ր ամինն է ցուցաբերում առավել թույլ արտահայտված հիմնային հատկություններ.

- 1) էթիլամին 2) անիլին 3) ամոնիակ 4) երկմեթիլամին

15. Ո՞ր շարքում են նշված էթիլամինի լրիվ այրման վերջանյութերի բանաձևերը.


- 1) CO_2 , H_2O , NO_2 2) CO_2 , H_2O , NO 3) CO , H_2O , N_2 4) CO_2 , H_2O , N_2

16. Ո՞ր պնդումներն են ճիշտ անիլինի վերաբերյալ.

- ա) ավելի հեշտությամբ է փոխազդում բրոմի հետ, քան բենզոլը
բ) ավելի թույլ հիմք է, քան ամոնիակը
գ) ստացվում է բենզոլի հիդրումից

- 1) ա, բ 2) բ, գ 3) ա, գ 4) ա, բ, գ

17. Ո՞րը կարող է լինել X նյութը փոխարկումների հետևյալ շղթայում.



- 1) տոլուոլ 2) քսիլոլ 3) քլորբենզոլ 4) նիտրոբենզոլ

18. Ո՞ր նյութի հետ է մեթիլամինը փոխազդում.

- 1) $\text{C}_2\text{H}_5\text{OH}$ 2) NaOH 3) NH_3 4) HCl

19. Ո՞ր նյութն է ստացվում անհլինի և ավելցուկով բրոմի փոխազդեցությունից.

- 1) 2-բրոմանհլին
- 2) 4-բրոմանհլին
- 3) 2,6-երկբրոմանհլին
- 4) 2,4,6-տրիբրոմանհլին

20. Ո՞ր ազդանյութով է հնարավոր հայտաբերել անհլինը.

- 1) NaOH (սպիրտային)
- 2) Na₂CO₃ (ջրային)
- 3) Ag₂O (ամոնիակային)
- 4) Br₂ (ջրային)

21. Ո՞րն է մեթիլամինի այրման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

- 1) 12
- 2) 20
- 3) 26
- 4) 29

22. Հետևյալ ամինաթթուներից ո՞րն է երկամինամիակարբոնաթթու.

- 1) ալանին
- 2) ֆենիլալանին
- 3) գլիցին
- 4) լիզին

23. Ո՞ր ամինաթթուն է պարունակում –COOH, –NH₂ և –OH ֆունկցիոնալ խմբեր.

- 1) ալանին
- 2) գլիցին
- 3) սերին
- 4) վալին

24. Ո՞ր ամինաթթուն է ստացվում քլորէթանաթթուն ամոնիակի հետ փոխազդելիս.

- 1) գլիցին
- 2) ալանին
- 3) լիզին
- 4) օրնիտին

25. Որքան է ազոտի զանգվածային բաժինը (%) A նյութում՝ ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.

- $C_6H_5NO_2 \rightarrow A \rightarrow C_6H_5NH_3Cl$
- 1) 7,53
 - 2) 14,89
 - 3) 15,05
 - 4) 15,22

26. Ո՞ր զույգի նյութերի հետ է փոխազդում α-ալանինը.

- 1) ֆենոլ և բենզոլ
- 2) մեթան և մեթիլամին
- 3) էթանոլ և էթանալ
- 4) քլորաջրածին և էթանոլ

27. Ինչպիսին է միջավայրը լիզինի ջրային լուծույթում.

- 1) թույլ թթվային
- 2) հիմնային
- 3) չեզոք
- 4) ուժեղ թթվային

28. Ինչ զանգվածով (գ) անհլին կարող է փոխազդել 11,2 լ (ն. պ.) քլորաջրածնի հետ.

- 1) 23
- 2) 46,5
- 3) 78
- 4) 93

29. Համապատասխանեցրե՛ք ամինաթթուների անվանումներն ու բանաձևերը.

<i>Անվանում</i>	<i>Բանաձև</i>
ա) գլիցին	1) $\text{CH}_3\text{NH}_2\text{CHCOOH}$
բ) սերին	2) $\text{H}_2\text{NCH}_2\text{COONH}_2$
գ) α -ալանին	3) $\text{CH}_2(\text{SH})\text{NH}_2\text{CHCOOH}$
դ) ցիստին	4) $\text{NH}_2\text{CH}_2\text{COONa}$
	5) $\text{NH}_2\text{CH}_2\text{COOH}$
	6) $\text{CH}_2(\text{OH})\text{NH}_2\text{CHCOOH}$

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա5, բ2, գ3, դ1 2) ա1, բ6, գ3, դ1 3) ա5, բ6, գ1, դ3 4) ա1, բ4, գ6, դ3

30. Հետևյալ ամիններից ո՞րն է արոմատիկ.

- 1) $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$ 2) $\text{C}_6\text{H}_{13}\text{NH}_2$ 3) $\text{C}_5\text{H}_{11}\text{NH}_2$ 4) $(\text{C}_2\text{H}_5)_3\text{N}$

31. Ո՞րն է $\text{C}_3\text{H}_9\text{N}$ բանաձևով իզոմերային ամինների թիվը.

- 1) 4 2) 3 3) 2 4) 5

32. Ո՞րն է $\text{C}_4\text{H}_{11}\text{N}$ բանաձևով իզոմերային առաջնային ամինների թիվը.

- 1) 8 2) 6 3) 4 4) 3

33. Ո՞րն է $\text{C}_4\text{H}_{11}\text{N}$ բանաձևով իզոմերային երրորդային ամինների թիվը.

- 1) 1 2) 2 3) 4 4) 3

34. Համապատասխանեցրե՛ք ամինների անվանումը և քիմիական բանաձևը.

<i>Անվանում</i>	<i>Բանաձև</i>
ա) երկմեթիլամին	1) $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$
բ) էթիլամին	2) $\text{CH}_3\text{CH}(\text{CH}_3)\text{NH}_2$
գ) իզոպրոպիլամին	3) $(\text{CH}_3)_2\text{NH}$
դ) ֆենիլամին	4) $\text{C}_2\text{H}_5\text{NH}_2$


Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա4, բ1, գ2, դ3 2) ա4, բ3, գ1, դ4 3) ա3, բ4, գ1, դ2 4) ա3, բ4, գ2, դ1

35. Ինչպե՞ս են ստանում կապրոն սինթետիկ մանրաթելի մոնոմերը՝ կապրոլակտամը.

- 1) ամինակապրոնաթթվի միջմոլեկուլային դեհիդրատացումից
- 2) կապրոնաթթվի ներմոլեկուլային դեհիդրատացումից
- 3) ամինակապրոնաթթվի ներմոլեկուլային դեհիդրատացումից
- 4) կապրոնաթթվի միջմոլեկուլային դեհիդրատացումից

36. Ո՞ր բանաձևում է ճիշտ արտացոլված էլեկտրոնային զույգերի տեղաշարժն անիլինի մոլեկուլում.



37. Ո՞րն է $-COOH$, $-NH_2$ և $-SH$ ֆունկցիոնալ խմբեր պարունակող ամինաթթուն.

- 1) ալանին 2) թիրոզին 3) ցիստեին 4) սերին

38. Նյութերից ո՞րն ալանինի իզոմերը չէ.

- 1) գլիցինի մեթիլէտեր 3) γ - ամինակարագաթթու
2) β -ամինապրոպիոնաթթու 4) 1-նիտրոպրոպան

39. Ո՞րն է բաց թողած բառը.

Ամինները _____ ածանցյալներն են, որոնց մոլեկուլներում ջրածնի մեկ, երկու կամ երեք ատոմներ տեղակալված են ածխաջրածնային ռադիկալներով:

- 1) մեթանի 3) ամոնիակի
2) ամինաթթուների 4) էթանոլի

40. Որո՞նք են բաց թողած բառերը.

Սպիրտակուցի հիմնային լուծույթին մի քանի կաթիլ $CuSO_4$ -ի լուծույթ ավելացնելիս առաջանում է _____ միացություն: Այդ ռեակցիան անվանում են _____:

- 1) մանուշակագույն, բիուրետային
2) դեղին, քսանտոպրոտեինային
3) մանուշակագույն, քսանտոպրոտեինային
4) դեղին, բիուրետային

41. Հետևյալ ամինաթթուներից որի հարաբերական մոլեկուլային զանգվածն է առավել մեծ.

- 1) ալանին 2) գլիցին 3) վալին 4) սերին

42. Քանի իզոմերային ամինաթթուներ ունեն $C_4H_9NO_2$ ընդհանուր բանաձևը.

- 1) 2 2) 4 3) 5 4) 6

43. Համապատասխանեցրե՛ք ամինաթթվի բանաձևը և անվանումը.

Բանաձև		Անվանում
ա) $\text{H}_2\text{N}-\text{CH}_2-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$	զ) $\text{H}_2\text{N}-\underset{\text{CH}_3}{\text{CH}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$	1) ալանին 2) գլիցին 3) օրնիտին 4) սերին
բ) $\text{H}_2\text{N}-\underset{\text{H}_2\text{C}-\text{OH}}{\text{CH}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$	ը) $\text{H}_2\text{N}-\underset{(\text{CH}_2)_2-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}}{\text{CH}}-\overset{\text{O}}{\parallel}{\text{C}}-\text{OH}$	5) գլուտամինաթթու 6) ցիստեին

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ4, գ1, դ5
2) ա1, բ2, գ3, դ4
3) ա1, բ3, գ2, դ5
4) ա2, բ4, գ6, դ3

44. Ո՞րն է ալիֆատիկ ամինների ընդհանուր բանաձևը.

- 1) $\text{C}_n\text{H}_{2n+1}\text{NO}_2$ 2) $\text{C}_n\text{H}_{2n}\text{NH}_2$ 3) $\text{C}_n\text{H}_{2n+1}\text{NH}_2$ 4) $\text{C}_n\text{H}_{2n-1}\text{N}$

45. Ո՞ր ամինաթթուների մնացորդներն են մտնում երկպեպտիդի բաղադրության մեջ, եթե նրա մեկ մոլը փոխազդում է քլորաջրածնի հետ 1 : 1, իսկ կալիումի հիդրօքսիդի հետ 1 : 2 մոլային հարաբերությամբ.

- 1) ալանին և ֆենիլալանին 3) գլիցին և գլուտամինաթթու
2) ալանին և գլիցին 4) ֆենիլալանին և գլիցին

46. Որքան է σ -կապերի թիվը մեթիլամինի մեկ մոլեկուլում.

- 1) 3 2) 5 3) 6 4) 7

47. Ջրային լուծույթում մեթիլամոնիումի քլորիդը ո՞ր նյութի հետ կփոխազդի.

- 1) AgNO_3 2) NaNO_3 3) HCl 4) $\text{Ba}(\text{NO}_3)_2$

48. Ո՞ր ամինի հիմնային հատկություններն են առավել ուժեղ արտահայտված.

- 1) անիլին 2) բենզիլամին 3) երկֆենիլամին 4) մեթիլամին

49. Ո՞ր օրգանական միացություններն են ամֆոտեր.

- 1) կարբոնաթթուներ 3) ամիններ
2) էթերներ 4) ամինաթթուներ

50. Համապատասխանեցրե՛ք օրգանական նյութի անվանումը և քիմիական բանաձևը.

<i>Անվանում</i>	<i>Բանաձև</i>
ա) նիտրոբութան	1) $C_4H_9NO_2$
բ) ալանին	2) $(CH_3)_3N$
գ) անիլին	3) $C_6H_{11}N$
դ) եռմեթիլամին	4) $CH_3CH(NH_2)COOH$
	5) $C_6H_5NH_2$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) ա1, բ4, գ3, դ2 | 3) ա1, բ4, գ5, դ2 |
| 2) ա4, բ4, գ5, դ4 | 4) ա4, բ1, գ5, դ3 |

51. Ո՞ր ամինաթթվի ջրային լուծույթում լակմուսը կգունավորվի կարմիր.

- 1) սերին 2) լիզին 3) գլուտամինաթթու 4) գլիցին

52. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) գլիցինի լրիվ այրումից ստացված գազագոլորշային խառնուրդում.

- 1) 4 2) 5 3) 10 4) 20

53. Որքան է C_3H_5N բանաձևով իզոմերային ամինների թիվը.

- 1) 8 2) 7 3) 5 4) 4

54. Քանի՞ իզոմեր ամինաթթուներ են համապատասխանում $C_3H_7NO_2$ բանաձևին.

- 1) 2 2) 4 3) 5 4) 6

3.7. Ազոտ պարունակող օրգանական միացություններ: Ամիններ և ամինաթթուներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	19	4	37	3
2	1	20	4	38	3
3	2	21	4	39	3
4	2	22	4	40	1
5	2	23	3	41	3
6	3	24	1	42	3
7	2	25	3	43	1
8	1	26	4	44	3
9	4	27	2	45	3
10	3	28	2	46	3
11	4	29	3	47	1
12	2	30	1	48	4
13	4	31	1	49	4
14	2	32	3	50	3
15	4	33	1	51	3
16	1	34	4	52	3
17	4	35	3	53	4
18	4	36	1	54	1

3.8. ԲՆԱԿԱՆ ԳԱԶ: ՆԱՎԹ: ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ

1. Ո՞ր մետաղի ագետիլենիդն է պայթյունավտանգ.

- 1) կալցիում 2) արծաթ 3) ալյումին 4) նատրիում

2. Հետևյալ նյութերից որի և ագետիլենի փոխազդեցությունից կգոյանա վինիլքլորիդ.

- 1) քլոր 2) ջրածին 3) քլորաջրածին 4) քլորաջուր

3. Ինչ ծավալով (լ, ն. պ.) էթեն կպահանջվի 42 գրամ պոլիէթիլեն ստանալու համար, եթե ռեակցիայի ելքը 80 % է.

- 1) 14 2) 28 3) 42 4) 56

4. Որքան են 240 գ շիկացած կոքսի և 672 լ (ն. պ.) ածխածնի(IV) օքսիդի փոխազդեցությունից ստացված գազային խառնուրդում առկա նյութերի ծավալային բաժինները (%), եթե կոքսը ամբողջությամբ է փոխազդել.

- 1) 80 % CO, 20 % CO₂ 3) 60 % CO, 40 % CO₂
2) 20 % CO, 80 % CO₂ 4) 50 % CO, 50 % CO₂

5. Որո՞նք են բաց թողած բառերը.

Բնական գազում պարունակվող _____ կարալիդիկ փոխազդեցությունը ջրային գոլորշու հետ բարձր ջերմաստիճանում հանգեցնում է _____ ստաջացմանը: Այն լայնորեն կիրառվում է _____ սրացման համար:

- 1) էթանի, էթանալի, կաուչուկների 3) պրոպանի, պրոպիլենի, պրոպանոլի
2) մեթանի, սինթետիկ գազի, մեթանոլի 4) բութանի, սինթետիկ գազի, էթանոլի

6. Նավթի թորմասերից որն ունի առավել ցածր եռման ջերմաստիճան.

- 1) բենզին 2) լիզոլին 3) կերոսին 4) գազոլլ

7. Ո՞ր պնդումներն են ճիշտ նավթի վերաբերյալ.

- ա) ռեկտիֆիկացիոն աշտարակում չի թույլատրվում 350 °C-ից բարձր ջերմաստիճանի գերազանցում
բ) հայտնի է կրեկինգի երկու տեսակ՝ ջերմային և կատալիտիկ
գ) կատալիտիկ կրեկինգը իրականացվում է ցանկացած մետաղի առկայությամբ
դ) հեպտանի կրեկինգի հնարավոր արգասիքներից է պրոպենը
ե) կատալիտիկ կրեկինգի պայմաններում ձեռքման ռեակցիայի հետ մեկտեղ ընթանում է հիդրատացում

- 1) ա, գ, դ 2) բ, դ, ե 3) բ, գ, դ 4) ա, բ, դ

8. Ո՞ր պնդումներն են ճիշտ բնական գազի վերաբերյալ.

- ա) հիմնական բաղադրիչը մեթանն է
- բ) հիմնական բաղադրիչը ազոտիլենն է
- գ) կիրառվում է որպես վառելանյութ մեքենաների ներքին այրման շարժիչներում
- դ) կիրառվում է օդապարիկները լցնելու համար

- 1) ա, գ 2) ա, դ 3) ա, բ 4) գ, դ

9. Ո՞րն է բաց թողած բառը.

Կատարյալի կրեկինգի պայմաններում ճեղքման ռեակցիաների հետ մեկտեղ ընթացում են _____ ռեակցիաներ:

- 1) իզոմերացման 3) դեհիդրատացման
- 2) հիդրատացման 4) տեղակալման

10. Նավթամշակման ո՞ր գործընթացում քիմիական ռեակցիաներ չեն ընթանում.

- 1) թորման 3) ջերմային կրեկինգի
- 2) կատալիտիկ կրեկինգի 4) ռիֆորմինգի

11. Նավթի թորմասերից ո՞րն ունի առավել բարձր եռման ջերմաստիճան.

- 1) բենզին 2) լիզրոին 3) գազոլլ 4) կերոսին

12. Համապատասխանեցրե՛ք մանրաթելի տեսակը և անվանումը.

<i>Տեսակ</i>	<i>Անվանում</i>
ա) բուսական	1) բուրդ
բ) կենդանական	2) բամբակ
գ) հանքային	3) կապրոն
դ) արհեստական	4) սպրեստ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ1, գ3, դ4 3) ա4, բ1, գ2, դ3
2) ա2, բ1, գ4, դ3 4) ա4, բ2, գ1, դ3

13. Որո՞նք են բաց թողած բառերը.

Հեղուկ գազը _____ և _____ խառնուրդ է, կիրառվում է որպես կենսադային վառելանյութ:

- 1) մեթանի, էթանի 3) պրոպանի, բութանի
- 2) էթանի, պրոպանի 4) բութանի, պենտանի

14. Որո՞նք են բաց թողած բառերը.

Եթե բենզինը տաքացնում են պլաստիկ կապալիզատորի առկայությամբ, ապա տեղի է ունենում ածխաջրածինների արոմատացում՝ ալկանների և ցիկլոալկանների փոխարկում _____ ածխաջրածինների, և զգալիորեն մեծանում է _____ թիվը:

- 1) էթիլենային, օկտանային 3) դիենային, դեկանային
2) արոմատիկ, օկտանային 4) ագետիլենային, նոնանային

15. Ո՞ր շարքում են պինդ վառելանյութը գազայինի փոխարկելու ռեակցիաների հավասարումները.

- 1) $2C + O_2 = 2CO$ և $2CO + O_2 = 2CO_2$ 3) $C + O_2 = CO_2$ և $CO_2 + C = 2CO$
2) $CO_2 + C = 2CO$ և $2CO + O_2 = 2CO_2$ 4) $2CO + O_2 = 2CO_2$ և $CO_2 + C = 2CO$

16. Ո՞րն է պոլիէթիլենի տարրական օղակը.

- 1) $CH_2 = CH_2$ 3) $(-CH_2 - CH_2-)$
2) $(-CH_2 - CH_2-)_n$ 4) $(-CH_2 - CH(CH_3)-)$

17. Ո՞րն է X նյութի մեկ մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվն ըստ հետևյալ փոխարկումների.

ագետիլեն \rightarrow X \rightarrow քլորոպրեն

- 1) 6 2) 8 3) 9 4) 11

18. Ո՞րն է X նյութի մեկ մոլեկուլում π -կապերի թիվն ըստ հետևյալ փոխարկումների.

էթանոլ \rightarrow X \rightarrow բութադիենային կաուչուկ

- 1) 2 2) 3 3) 8 4) 9

19. Ի՞նչ ծավալով (m^3 , ն. պ.) օդ է անհրաժեշտ 3 : 1 ծավալային հարաբերությամբ բութանից և պրոպանից կազմված 80 m^3 գազային խառնուրդն այրելու համար.

- 1) 325 2) 650 3) 1500 4) 2450

20. Ի՞նչ զանգվածային հարաբերությամբ են գոյանում ալկանը և ալկենը բութանի ոչ սիմետրիկ կրեկինգի ժամանակ.

- 1) 1 : 1 2) 1 : 3 3) 2,625 : 1 4) 1 : 2,625

21. Որքան է A նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածն ըստ հետևյալ փոխարկման.



- 1) 73 2) 71 3) 36,5 4) 35,5

22. Որքան է ըստ ծավալի 90% CH₄, 5% C₂H₆, 3% CO₂, 2% N₂ պարունակող բնական գազի նմուշի միջին մոլեկուլային զանգվածը.

- 1) 16,74 2) 17,57 3) 17,78 4) 1778

23. Որո՞նք են հեքսադեկանի՝ C₁₆H₃₄, ջերմային կրեկինգի հիմնական վերջանյութերը.

- 1) C₁₆H₃₂ և H₂ 3) C₈H₁₆ և C₈H₁₈
 2) C₁₅H₃₀ և CH₄ 4) C և H₂

24. Ո՞րն է բնական պոլիմեր.

- 1) սպիտակուց 3) պոլիստիրոլ
 2) պոլիէթիլեն 4) բութադիենային կաուչուկ

25. Համապատասխանեցրե՞ք կենսապոլիմերը և ստացմանը մասնակցող ցածրամոլեկուլային նյութերը.

Կենսապոլիմեր	Ցածրամոլեկուլային նյութեր
ա) սպիտակուց	1) ամինաթթուներ
բ) պոլիսախարիդ	2) նուկլեոտիդներ
գ) դեզօքսիռիբոնուկլեինաթթու	3) մոնոսախարիդներ
դ) ռիբոնուկլեինաթթու	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա2, բ3, գ1, դ2 3) ա2, բ2, գ3, դ1
 2) ա1, բ1, գ2, դ3 4) ա1, բ3, գ2, դ2

3.8. Բնական գազ: Նավթ: Վառելանյութեր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	10	1	19	4
2	3	11	3	20	4
3	3	12	2	21	3
4	1	13	3	22	3
5	2	14	2	23	3
6	1	15	3	24	1
7	4	16	3	25	4
8	1	17	2		
9	1	18	1		

3.9. ՔԻՄԻԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԸ

1. Ո՞րն է ռեակցիայի ելքը հաշվելու բանաձևը.

$$1) \eta = \frac{m_{\text{տ}}}{m_{\text{գ}}} \cdot 100\%$$

$$3) \eta = \frac{m_{\text{գ}}}{m_{\text{տ}} + m_{\text{գ}}} \cdot 100\%$$

$$2) \eta = \frac{m_{\text{գ}}}{m_{\text{տ}}} \cdot 100\%$$

$$4) \eta = m_{\text{գ}} \cdot m_{\text{տ}} \cdot 100\%$$

2. Ի՞նչ ծավալով (մ^3) գազ չի կլանվի ազոտի(IV) օքսիդի և թթվածնի 2:1 ծավալային հարաբերությամբ 120 մ^3 խառնուրդը ճնշման տակ ջրի միջով անցկացնելիս, եթե օքսիդն ամբողջությամբ փոխազդել է.

1) 2

2) 10

3) 15

4) 20

3. Ո՞րն է թթվածնի ստացման արտադրական եղանակը.

1) հեղուկ օդի թորումը

2) նատրիումի նիտրատի քայքայումը

3) Բերթոլեյի աղի քայքայումը

4) կալիումի պերմանգանատի քայքայումը

4. Որքան է վերականգնիչ նյութի գործակիցն ըստ ֆոսֆորի(V) օքսիդի և ածխի փոխազդեցության ռեակցիայի հավասարման.

1) 2

2) 5

3) 4

4) 6

5. Ո՞ր շարքի նյութերը կարող են ազոտական թթվի ստացման հումք լինել.





1) օդ, ամոնիակ, չիլիական սելիտրա

2) մագնիսական երկաթաքար, ազոտ, թթվածին

3) սիլվինիտ, ազոտ, թթվածին

4) ամոնիակ, կերակրի աղ, թթվածին

6. Ծծմբական թթվի արտադրության ո՞ր փուլն է իրականացվում կատալիզատորի առկայությամբ.



7. Ո՞րը էթանոլի ստացման արտադրական եղանակ չէ.

1) էսթերի հիդրոլիզ

3) գլյուկոզի սպիրտային խմորում

2) բջջանյութի հիդրոլիզ

4) էթիլենի հիդրատացում

8. Համապատասխանեցրե՞ք նյութի բանաձևը և ստացման եղանակը.

Բանաձև	Ստացման եղանակ
ա) NH_3	1) ազոտի և ջրածնի փոխազդեցություն
բ) HNO_3	2) ացետիլենի հիդրատացում
գ) H_2SO_4	3) բութանի կատալիտիկ օքսիդացում
դ) CH_3COOH	4) ջրով NO_2 -ի կլանում O_2 -ի առկայությամբ 5) էթանոլի միջմոլեկուլային դեհիդրատացում 6) SO_3 -ի կլանում ջրով

Ո՞ր շարքի բոլոր պարասխաններն են ճիշտ.

- 1) ա1, բ4, գ6, դ3
2) ա4, բ1, գ3, դ2
3) ա4, բ1, գ6, դ5
4) ա1, բ4, գ6, դ5

9. Հետևյալ նյութերից ո՞րն են ստանում Լեբեդևի եղանակով.

- 1) էթանալ
2) 1,3-բութադիեն
3) ֆենոլ և ացետոն
4) անիլին

10. Ո՞ր նյութն են ստանում հեղուկ ճարպերի կատալիտիկ հիդրումով.

- 1) գլիցերին
2) օլեինաթթու
3) պինդ ճարպ
4) օձառ

11. Ո՞րն է բաց թողած բառը.

Տոլուոլի արտադրական ստացման գործընթացում օգտագործում են նավթի այն թորամասերը, որոնք պարունակում են _____ :

- 1) բութան
2) պենտան
3) հեքսան
4) հեպտան

12. Ո՞ր ապարատում են իրականացնում օլեոմի ստացումը ծծմբական թթվի արտադրությունում.

- 1) ցիկլոն
2) էլեկտրագտիչ
3) չորացնող աշտարակ
4) կլանող աշտարակ

13. Հետևյալ նյութերից ո՞րն է պոլիվինիլացետատի ստացման ելանյութ.

- 1) ացետիլեն
2) բութադիեն
3) քլորոպրեն
4) պոլիէթիլեն

14. Ո՞ր ռեակցիան չի կիրառվում էթանոլի արտադրությունում.

- 1) $\text{CH}_2 = \text{CH}_{2(\text{g})} + \text{H}_2\text{O}_{(\text{g})} \rightarrow \text{C}_2\text{H}_5\text{OH}_{(\text{g})}$
2) $(\text{C}_6\text{H}_{10}\text{O}_5)_n + n\text{H}_2\text{O} \rightarrow n\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6$
3) $\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6 \rightarrow 2\text{C}_2\text{H}_5\text{OH} + 2\text{CO}_2$
4) $\text{CH}_3\text{CH}_2\text{Cl} + \text{H}_2\text{O} \rightarrow \text{C}_2\text{H}_5\text{OH} + \text{HCl}$


15. Որքան է պոլիմերացման աստիճանը բնական կաուչուկի նմուշում, որի միջին մոլային զանգվածը 1000000 է.

- 1) 16706,25 2) 15706,88 3) 14705,88 4) 14806,58

16. Շիկացած կոքսի վրայով անցկացրել են 200 լ ջրային գոլորշի: Որքան է ստացված գազագոլորշային խառնուրդի խտությունն ըստ հելիումի, եթե փոխարկումն ընթացել է 90 % ելքով.

- 1) 3,75 2) 3,79 3) 7,58 4) 15,16

17. Ինչ զանգվածով (գ) պղնձի(I) օքսիդ կարելի է վերականգնել A գազով, որը ստացվել է 116 գ բուխանից՝ ըստ հետևյալ փոխարկման.



- 1) 144 2) 288 3) 320 4) 576

18. Ո՞րը բնական վառելանյութ չէ.

- 1) ջրագազ 2) քարածուխ 3) նավթ 4) բնական գազ

19. Որքան է քլորաջրածնի գոյացման ջերմությունը (կՋ/մոլ), եթե ավելցուկով վերցրած ջրածնի և 2 լ (ն. պ.) քլորի փոխազդեցությունից անջատվում է 16,4 կՋ ջերմություն.

- 1) 92,84 2) 91,84 3) 90,24 4) 89,24

20. Ինչ քանակով (կՋ) ջերմություն կանջատվի 2 մոլ մեթանի այրումից, եթե այդ ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է $\text{CH}_{4(g)} + 2\text{O}_{2(g)} = \text{CO}_{2(g)} + 2\text{H}_2\text{O}_{(h)} + 802$ կՋ/մոլ.

- 1) 401 2) 1600 3) 1604 4) 1203

21. Ինչ քանակությամբ ջերմություն (կՋ) կանջատվի 111 գ կալցիումի քլորիդի և ջրային գոլորշու փոխազդեցությունից՝ ըստ հետևյալ ջերմաքիմիական հավասարման. $\text{CaCl}_2 + 6\text{H}_2\text{O}_{(g)} = \text{CaCl}_2 \cdot 6\text{H}_2\text{O} + 1967$ կՋ.

- 1) 1967 2) 327,8 3) 3934 4) 2951

22. Ո՞ր նյութերով են պայմանավորված թթվային անձրևներ առաջացնող արտանետումները.

- 1) NH_3 , CO_2 , NO 3) SO_2 , NO , NO_2
2) CO , NO_2 , N_2 4) NH_3 , CO_2 , NO_2

23. Հետևյալ նյութերից ո՞րն է պոլիմեր.

- 1) օձառ 2) ձարպ 3) սախարոզ 4) ռետին

24. Ո՞ր շարքում են տարրերը ներկայացված ըստ մարդու օրգանիզմում դրանց զանգվածային բաժնի նվազման.

- 1) ջրածին, թթվածին, ածխածին, ազոտ
- 2) թթվածին, ածխածին, ջրածին, ազոտ
- 3) ջրածին, ազոտ, թթվածին, ածխածին
- 4) ածխածին, թթվածին, ջրածին, ազոտ

25. Ո՞ր շարքում են հետևյալ բանաձևերն ունեցող նյութերը ներկայացված ըստ օդում դրանց ծավալային բաժնի նվազման.

- 1) CO_2 , N_2 , O_2
- 2) O_2 , N_2 , CO_2
- 3) N_2 , O_2 , CO_2
- 4) N_2 , CO_2 , O_2

26. Ո՞ր միացություններով է պայմանավորված ջրի կոշտությունը.

- 1) երկաթի աղերով
- 2) կալցիումի և մագնեզիումի լուծելի աղերով
- 3) քլորիդներով և սուլֆատներով
- 4) ալյումինի լուծելի աղերով

27. Ջրի գոլորշացման ջերմությունը 44 կՋ/մոլ է: Ի՞նչ զանգվածով ջուր է ենթարկվել գոլորշացման, եթե ծախսվել է 220 կՋ ջերմություն.

- 1) 9
- 2) 18
- 3) 90
- 4) 180

28. Ամինային խումբ պարունակող դեղամիջոցների լուծելիությունը ջրում մեծացնելու նպատակով դրանք փոխարկում են.

- 1) ամիդների
- 2) կարբոնաթթուների
- 3) նիտրոմիացությունների
- 4) թթուների աղերի

29. Ո՞ր մետաղի իոնն է մարդու օրգանիզմում պարունակվում առավել մեծ քանակությամբ.

- 1) երկաթ
- 2) կալիում
- 3) նատրիում
- 4) կալցիում

30. Ո՞ր շարքում են միայն կենսածին քիմիական տարրերի նշաններ.

- 1) Ca, I, C, N
- 2) C, H, O, N
- 3) Fe, K, P, H
- 4) Zn, Na, S, N

31. Ո՞ր պոլիմերն է ստացվում բնական կաուչուկը չափավոր քանակությամբ ծծմբի հետ տաքացնելիս.

- 1) կապրոն
- 2) պոլիէթիլեն
- 3) ռետին
- 4) էրոնիտ

32. Սննդանյութերից ո՞րն է էներգիայով առավել հարուստ.

- 1) ածխաջրեր
- 2) ճարպեր
- 3) ածխաջրեր և սպիտակուցներ
- 4) սպիտակուցներ

33. Ո՞րն է երկշաքար.

- 1) գլյուկոզ 2) ֆրուկտոզ 3) մալթոզ 4) ռիբոզ

34. Որո՞նք են բաց թողած բառակապակցությունները.

Վերքերը 3%-անոց ջրածնի պերօքսիդով մշակելիս այն փրփրում է, քանի որ _____ ազդեցությամբ ջրածնի պերօքսիդը քայքայվում է՝ անջարելով _____ :

- 1) կատալազ ֆերմենտի, ատոմային ջրածին
2) ուրեազ ֆերմենտի, ատոմային թթվածին
3) ուրեազ ֆերմենտի, ատոմային ջրածին
4) կատալազ ֆերմենտի, ատոմային թթվածին

35. Ո՞րն է բաց թողած արտահայտությունը.

Միաշկին ալկալի թափելիս անհրաժեշտ է այն լվանալ _____ :

- 1) ծծմբական թթվի 2 %-անոց լուծույթով
2) սոդայի 3 %-անոց լուծույթով
3) բորաթթվի 2 %-անոց լուծույթով
4) ազոտական թթվի 1 %-անոց լուծույթով

36. Որո՞նք են բաց թողած բառերը.

Ֆերմենտները գլոբուլային բնույթի _____ են, որոնք առկա են բոլոր կենդանի օրգանիզմներում և կատարում են կենսաբանական _____ դեր:

- 1) ամիններ, ինհիբիտորների 3) ածխաջրեր, սուբստրատների
2) սպիտակուցներ, կատալիզատորների 4) ճարպեր, վիտամինների

37. Որո՞նք են բաց թողած բառերը.

Կենդանի օրգանիզմում պոլիպեպտիդների կենսասինթեզում _____ պահանջվող հերթականությունը ապահովում է _____ :

- 1) β-ամինաթթուների, դեզօքսիռիբոնուկլեինաթթուն
2) α-ամինաթթուների, դեզօքսիռիբոնուկլեինաթթուն
3) α-ամինաթթուների, ռիբոնուկլեինաթթուն
4) β-ամինաթթուների, ռիբոնուկլեինաթթուն

38. Կենդանի օրգանիզմների նյութերից որի՞ բաղադրությունում է առկա ազոտ տարրը.

- 1) սպիրտներ 2) ճարպեր 3) ածխաջրեր 4) սպիտակուցներ

39. Կատալազ ֆերմենտի 1 մոլեկուլը 1 վրկ-ում քայքայում է ջրածնի պերօքսիդի 40 000 մոլեկուլ: Ինչ զանգվածով (գ) H_2O_2 կարող է քայքայել կատալազի $3,01 \cdot 10^{18}$ մոլեկուլը 10 վ-ում.

- 1) 170 2) 34 3) 68 4) 680

40. Ո՞ր պնդումն(երն) է(են) ճիշտ օրգանոգեն տարրերի վերաբերյալ.

- ա) ունեն փոքր շառավիղ
բ) ունեն փոքր հարաբերական ատոմային զանգված
գ) ընդունակ չեն ամուր կովալենտային կապեր առաջացնելու

- 1) ա, գ 2) բ, գ 3) գ 4) ա, բ

41. Ո՞րն է ատոմային բյուրեղավանդակով նյութը.

- 1) նատրիումի քլորիդ 3) կարբորունդ
2) ածխածնի(IV) օքսիդ 4) սիլիցիումի(IV) քլորիդ

42. Հետևյալ օքսիդներից ո՞րն է մտնում բոլոր ապակիների բաղադրության մեջ.

- 1) SiO_2 2) Cr_2O_3 3) CuO 4) PbO

43. Ո՞րն է բնական գիպսի բանաձևը.

- 1) $CaSO_4$ 3) $CaSO_4 \cdot 2H_2O$
2) $CaSO_4 \cdot 1/2H_2O$ 4) $CaSO_4 \cdot 3/4H_2O$

44. Ո՞ր նյութերից կստացվի սիլիկոնային կաուչուկ.

- 1) սողա և գլիցերին 3) հեղուկ ապակի և էթանոլ
2) սողա և մեթանոլ 4) հեղուկ ապակի և մեթանոլ

45. Ինչ նյութ է ստացվում օրգանիզմում էթիլսպիրտի օքսիդացման հետևանքով.

- 1) ֆենոլ 2) էթանալ 3) էթիլենգլիկոլ 4) ամինաթթու

46. Ո՞ր կարևորագույն օրգանական նյութերում ազոտ չի պարունակվում, թեև այն օրգանածին տարր է.

- 1) ճարպերում 3) ֆերմենտներում
2) սպիտակուցներում 4) նուկլեինաթթուներում

3.9. Քիմիան և կյանքը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	17	4	33	3
2	4	18	1	34	4
3	1	19	2	35	3
4	2	20	3	36	2
5	1	21	1	37	2
6	2	22	3	38	4
7	1	23	4	39	3
8	1	24	2	40	4
9	2	25	3	41	3
10	3	26	2	42	1
11	4	27	3	43	3
12	4	28	4	44	3
13	1	29	4	45	2
14	4	30	2	46	1
15	3	31	3		
16	1	32	2		

ԲԱԺԻՆ

2

ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Երկրորդ գլխում ընդգրկված են կարճ պատասխանով առաջադրանքներ:

Առաջադրանքների և ենթաառաջադրանքների պատասխանները դրական ամբողջ թվեր են: Այդ առաջադրանքների համար նշվում են առաջադրանքի և ենթաառաջադրանքների լուծումից ստացված պատասխանի միայն թվային արժեքները: Պատասխանները պետք է լրացնել այդ նպատակի համար հատկացված տեղում՝ ձևաթղթում՝ ըստ պահանջվող ձևի: Պատասխանում չափման միավորը չի նշվում:

Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ նախատեսված հորիզոնական չորս վանդակներից **յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան**: Առաջադրանքի պատասխան կարող է լինել 0–ից 9999–ը ամբողջ թվերից որևէ մեկը: Եթե պատասխանը միանիշ թիվ է, ապա այն պետք է լրացնել վերջին՝ **չորրորդ** վանդակում՝ բաց թողնելով առաջին, երկրորդ և երրորդ վանդակները, իսկ եթե երկնիշ թիվ է, ապա պետք է լրացվի **երրորդ** և **չորրորդ** վանդակներում՝ բաց թողնելով առաջին և երկրորդ վանդակները: Եթե պատասխանը եռանիշ թիվ է, ապա պետք է լրացնել **երկրորդ**, **երրորդ** և **չորրորդ** վանդակներում՝ բաց թողնելով առաջին վանդակը (*տե՛ս նկ. 2*):

23	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text" value="8"/>
24	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text" value="2"/>	<input type="text" value="2"/>
25	<input type="text"/>	<input type="text" value="3"/>	<input type="text" value="8"/>	<input type="text" value="3"/>
26	<input type="text" value="3"/>	<input type="text" value="8"/>	<input type="text" value="8"/>	<input type="text" value="3"/>

նկ.2

Հաշվարկներում պետք է օգտագործել հարաբերական ատոմային զանգվածների կիրառված արժեքները, բացի բլորից՝ 35,5:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ

1.1. ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1.1. Ատոմաճեղկույթային ուսմունք

1. Քանի՞ անգամ է երկաթի մեկ ատոմի զանգվածը մեծ ազոտի մեկ մոլեկուլի զանգվածից:
2. Քանի՞ անգամ է յոդաջրածնի մեկ մոլեկուլի զանգվածը մեծ պղնձի մեկ ատոմի զանգվածից:
3. Որքան է պղինձ տարրի զանգվածային բաժինը (%) պղնձի(II) սուլֆատում:
4. Որքան է ծծմբի այն օքսիդի հարաբերական մոլեկուլային զանգվածը, որում տարրերի զանգվածային բաժինները հավասար են:
5. Որքան է 12 և 17 կարգաթիվ ունեցող տարրերին համապատասխանող պարզ նյութերի միացման արգասիքի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
6. Որքան է նատրիումի 2 մլն ատոմների և թթվածնի 1 մլն մոլեկուլների միացման արգասիքի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
7. Որքան է նատրիումի կարբոնատի բյուրեղահիդրատներից մեկի հարաբերական մոլեկուլային զանգվածը, եթե այդ բյուրեղահիդրատի մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը չորսով մեծ է թթվածնի ատոմների թվից:
8. Օրգանական նյութերի հոմոլոգիական շարքում յուրաքանչյուր անդամի մեկ մոլեկուլի զանգվածը քանի՞ գ.ա.մ-ով է փոքր հաջորդ անդամի մեկ մոլեկուլի զանգվածից:
9. Մետաղի(III) օքսիդի 30,6 գրամում պարունակվում է նույնքան թթվածնի ատոմ, որքան ատոմ պարունակվում է նույն մետաղի 21,3 գ նիտրատում: Ո՞րն է այդ մետաղի կարգաթիվը:
10. Ածխածնի(II) օքսիդի և թթվածնի 20 լ (ն. պ.) խառնուրդը պայթեցրել են և ստացել 11 գ ածխածնի(IV) օքսիդ: Որքան է ելային խառնուրդում ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%), եթե թթվածինը փոխազդել է ամբողջությամբ:
11. Որոշակի ծավալով (ն. պ.) թթվածնի և ավելցուկով վերցրած ջրածնի խառնուրդը պայթեցնելիս առաջացել է 45 գ ջուր: Որքանով է կրճատվել խառնուրդի ծավալը (լ, ն. պ.) սկզբնական պայմանների բերելուց հետո:

12. Ջրածինը խառնել են 2,5 մոլ օդին և այրել: Ջուրը հեռացնելուց հետո ստացված գազային խառնուրդի խտությունն ըստ հելիումի դարձել է 1,8: Ի՞նչ քանակով (մոլ) ջրածին են խառնել օդին:
13. Որքան է ատոմների գումարային թիվը միացության պարզագույն բանաձևում, եթե դրանում տարրերի զանգվածային բաժիններն են՝ Na(21,60%), Cl (33,33%), O (45,07%):
14. Օրգանական միացության 1,5 գրամն այրելիս ստացվել են 2,2 գ ածխածնի(IV) օքսիդ և 0,9 գ ջուր: Որքան է միացության բանաձևում ատոմների գումարային թիվը, եթե միացության գոլորշիների խտությունն ըստ ջրածնի 45 է:
15. Մագնեզիումի և երկաթի 40 գ խառնուրդի վրա բավարար քանակով աղաթթվով ազդելիս անջատվել է 2 գ ջրածին: Որքան է մագնեզիումի զանգվածային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:
16. Ածուխն այրել են տեսականորեն անիրաժեշտ օդի քառապատիկ ծավալում: Որքան է թթվածնի ծավալային բաժինը (%) ստացված գազային խառնուրդում:
17. Որքան է արգոնի և հելիումի 88,48 լ (ն. պ.) խառնուրդի զանգվածը (գ), եթե հելիումի զանգվածային բաժինը դրանում 24% է:
18. Ի՞նչ ծավալով (լ) օդոն պետք է ավելացնել 45 լ օդին, որպեսզի օդոնի լրիվ քայքայումից հետո վերջնական գազային խառնուրդում թթվածնի ծավալային բաժինը դառնա 40%:
19. Ածխածնի ^{12}C և ^{13}C իզոտոպներից կազմված 2,41 գ նմուշի լրիվ այրման համար պահանջվել է 4,48 լ (ն. պ.) թթվածին: Որքան է ծանր իզոտոպի մոլային բաժինը (%) ածխածնի այդ նմուշում:
20. Մեթանոլը լուծել են ծանր ջրում (D_2O) և ստացել լուծույթ, որում թթվածին տարրի զանգվածային բաժինը 56% է: Որքան է մեթանոլի զանգվածային բաժինը (%) այդ լուծույթում:
21. Մագնետիտ հանքաքարի նմուշում Fe_3O_4 -ի զանգվածային բաժինը 58% է: Որքան է երկաթ տարրի զանգվածային բաժինը (%) հանքաքարի այդ նմուշում:
22. Ըստ զանգվածի 38,71% ածխածին, 45,16% ազոտ և 16,13% ջրածին պարունակող օրգանական միացության գոլորշիների խտությունն ըստ ջրածնի 15,5 է: Որքան է միացության մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:
23. Էթիլենի որոշակի թվով մոլեկուլներ պարունակող նմուշում ատոմների թիվը քանի՞ անգամ է մեծ նույնքան մոլեկուլներ պարունակող օդոնում ամկա ատոմների թվից:

24. Ածխաջրածնի մոլեկուլում ածխածին տարրի զանգվածային բաժինը 80% է: Որքան է այդ նյութի մոլեկուլում ատոմների գումարային թիվը:
25. Քանի ատոմ է պարունակվում նյութի մեկ մոլեկուլում, եթե դրա 3,4 գ զանգվածով նմուշի այրումից ստացվում են 2,8 գ ազոտ և 5,4 գ ջուր:
26. Ազոտից և ազոտի(I) օքսիդից կազմված գազային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 16 է: Որքան է ազոտի ծավալային բաժինն (%) այդ խառնուրդում:
27. Տաքացման պայմաններում 7,1 գ ֆոսֆորի(V) օքսիդը լուծել են 2,36 գ օրթոֆոսֆորական թթու պարունակող 30 մլ լուծույթում ($\rho = 1,03$ գ/սմ³): Որքան է թթվի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:
28. Որքան է $4,816 \cdot 10^{24}$ թվով թթվածնի ատոմներ պարունակող ծանր ջրի (D₂O) զանգվածը (գ):
29. Մետաղի(II) օքսիդի 2 գ նմուշից ստացվում է 6 գ այդ մետաղի սուլֆատ: Որքան է մետաղի զանգվածային բաժինն (%) այդ օքսիդում:
30. Որքան է միացություններում հաստատուն օքսիդացման աստիճան ցուցաբերող 6 գ զանգվածով մետաղի ատոմներում պրոտոնների քանակը (մոլ), եթե այդ մետաղի յոդիդի և բրոմիդի մոլային զանգվածների հարաբերությունը 1,47 : 1 է:
31. Պարբերական համակարգի IV խմբի տարրերից մեկի բարձրագույն օքսիդի և ջրածնային միացության մոլային զանգվածների հարաբերությունը 15 : 8 է: Ինչ թվով պրոտոններ են պարունակվում այդ տարրի ատոմի միջուկում:
32. Պարբերական համակարգի V խմբի տարրերից մեկի ջրածնային միացության մոլեկուլում ջրածնի զանգվածային բաժինը 3,846% է: Որքան է այդ տարրի բարձրագույն օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ):
33. Կալցիումի և մագնեզիումի կարբոնատների խառնուրդում ածխածին տարրի զանգվածային բաժինը 1/8 է: Որքան է մագնեզիումի կարբոնատի մոլային բաժինն (%) այդ խառնուրդում:
34. Ազոտի օքսիդի մոլեկուլում որքան է ազոտի և թթվածնի ատոմների գումարային թիվը, եթե 11,2 լ (ն. պ.) այդ օքսիդը ջրածնով վերականգնելիս ստացվում են 11,2 լ (ն. պ.) ազոտ և 9 գ ջուր:
35. Ինչ զանգվածով (գ) երկաթի(III) սուլֆատում կպարունակվի 2,8 գ երկաթ տարր:
36. Որքան է 284 գ զանգվածով ֆոսֆորի(V) օքսիդի քանակը (մոլ):

37. Որքան է N_2O , N_2O_3 , N_2O_4 , N_2O_5 միացություններից ազոտի առավելագույն զանգվածային բաժին ունեցող միացության մեկ մոլեկուլում ատոմների գումարային թիվը:
38. Ալկանում ածխածին տարրի զանգվածային բաժինը 0,01503-ով փոքր է, քան նույն թվով ածխածնի ատոմներ պարունակող ալկենում է: Որքան է ջրածնի ատոմների գումարային թիվն ալկանի և ալկենի մեկական մոլեկուլներում:
39. Ազոտի օքսիդներից մեկում թթվածնի զանգվածային բաժինը 53,33% է: Որքան է այդ օքսիդի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
40. Փոխազդել են ածխածնի 100 ատոմ և թթվածնի 50 մոլեկուլ: Որքան է ստացված միացության մեկ մոլեկուլում ատոմների ընդհանուր թիվը:
41. Որքան է $NO_2 + O_2 + KOH \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող ռեակցիայի իոնային կառուցվածքով արգասիքի մոլային զանգվածը (գ/մոլ):
42. Որքան է 2-քլորպրոպանից Վյուրցի ռեակցիայով ստացված միացության մեկ մոլեկուլում σ -կապերի թիվը:
- 43–44. Միլիցիումի ջրածնային միացությունը՝ սիլանը, այրել են օդում:*
43. Որքան է ատոմային կառուցվածքով վերջանյութի մոլային զանգվածը (գ/մոլ):
44. Որքան է այրման ռեակցիայի հավասարման մեջ մոլեկուլային կառուցվածքով նյութերի քանակաչափական գործակիցների գումարը:
- 45–46. Երկաթի(III) օքսիդի զանգվածային բաժինը երկաթահանքում 60% է:*
45. Որքան է երկաթ տարրի զանգվածային բաժինը (%) հանքանյութում:
46. Որքան է 100 գ երկաթահանքում պարունակվող օքսիդը լուծելու համար անհրաժեշտ 36,5% զանգվածային բաժնով աղաթթվի զանգվածը (գ):
- 47–48. Երկտարր միացության մոլեկուլում կալիում և ծծումբ տարրերի զանգվածների հարաբերությունը 39:16 է:*
47. Որքան է այդ միացության 68,75 գ զանգվածով նմուշի և ավելցուկով աղաթթվի փոխազդեցությունից անջատված գազի ծավալը (մլ, ն. ս.):
48. Քանի՞ պրոտոն է բաժին ընկնում կալիումին երկտարր միացության մեկ մոլեկուլում:

49-50. *Բերթոլեյի աղի և ֆոսֆորի փոխազդեցությունից ստացված 26,4 գ ֆոսֆորի(V) օքսիդը ստաբացման պայմաններում լուծել են 85,2 գ օրթոֆոսֆորական թթու պարունակող 214,8 գ լուծույթում:*

49. Ինչ քանակով (մոլ) Բերթոլեյի աղ կծախսվի 85,2 գ ֆոսֆորի(V) օքսիդի ստացման համար:

50. Որքան է թթվի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

51-52. *Յուրահատուկ հոտով ազոտի օքսիդը սովորական պայմաններում գորշ գազ է: Ճնշումը բարձրացնելիս կամ ջերմաստիճանն իջեցնելիս այն վերածվում է բաց դեղնավուն հեղուկի:*

51. Որքան է ազոտի օքսիդացման աստիճանի թվային արժեքը այդ միացության մեջ:

52. Ինչ զանգվածով (գ) ազոտական թթու կստացվի բավարար քանակով թթվածնի առկայությամբ 4 մոլ գորշ օքսիդը ջրում լուծելիս:

53-54. *Ալկանի մեկ մոլի այրումից առաջանում է 7 մոլ գազազոլորչային խառնուրդ:*

53. Քանի ատոմ է առկա ածխաջրածնի մեկ մոլեկուլում:

54. Ինչ ծավալով (լ, ն. ս.) օդ կծախսվի այդ ածխաջրածնի մեկ մոլը լրիվ այրելու համար:

55-56. *Միացություններում հաստատուն օքսիդացման աստիճան ցուցաբերող մետաղի որոշակի զանգվածով նմուշն անմնացորդ փոխազդել է 960 գ հալոգենի հետ: Այդ մետաղի նույն զանգվածով մեկ այլ նմուշ փոխազդել է 245 գ զանգվածով Բերթոլեյի աղի ջերմային քայքայման արդյունքում ստացված գազի հետ:*

55. Որքան է Բերթոլեյի աղի ջերմային քայքայման գազային արգասիքի նյութաքանակը (մոլ):

56. Որքան է հալոգենի հարաբերական ատոմային զանգվածը:

57-58. *Պրուպանի, պրոպենի և պրոպինի 186 գ խառնուրդն այրելիս ստացվել է 302,4 լ (ն. ս.) ածխածնի(IV) օքսիդ, որը լրիվ կլանվել է 1092 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող ջրային լուծույթով:*

57. Որքան է ծախսված թթվածնի զանգվածը (գ):

58. Որքան է գոյացած թթու աղի զանգվածը (գ):

59–60. *Երկաթի(II) սուլֆատի 27,8 գ բյուրեղահիդրատը, որի մեկ մոլեկուլում բոլոր էլեկտրոնների թիվը 9 անգամ մեծ է ծծմբի ատոմներին բաժին ընկնող էլեկտրոնների թվից, լուծել են ջրում և ստացել լուծույթ:*

59. Որքան է բյուրեղահիդրատի մոլային զանգվածը (գ/մոլ):

60. Ինչ զանգվածով (գ) նստվածք կգոյանա ստացված լուծույթում 0,3 մոլ քանակով մետաղական նատրիում «լուծելիս»:

61–62. *Պղնձի և պղնձի(II) օքսիդի 40 գ խառնուրդին 10% զանգվածային բաժնով ազոտական թթու ավելացնելիս անջատվել է 4,48 լ (ն. ս.) գազ:*

61. Որքան է պղնձի(II) օքսիդի զանգվածային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

62. Ինչ ծավալով (մլ) 10% զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթ ($\rho = 1,05$ գ/մլ) է ծախսվել ելային խառնուրդն անմնացորդ լուծելու համար:

63–64. *Պայթեցրել են մեթան, արգոն և ավելցուկով թթվածին պարունակող 20 մլ գազային խառնուրդը, որի խտությունն ըստ ջրածնի 14,6 է: Համակարգը սկզբնական պայմանների բերելուց հետո մնացել է 10 մլ գազ:*

63. Ինչ ծավալով (մլ) թթվածին է պարունակում ելային խառնուրդը:

64. Որքան է արգոնի ծավալային բաժինը (%) վերջնական խառնուրդում:

65–66. *Թթվածնի, ջրածնի, մեթանի և ածխածնի(II) օքսիդի խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 9 է: 12 լ ծավալով այդ խառնուրդը լրիվ այրման համար ծախսվել է 30 լ օդ, և ստաջացել է 8 լ ջրային գոլորշի:*

65. Ինչ ծավալով (լ) ջրածին է պարունակել ելային խառնուրդը:

66. Որքան է ածխածնի(IV) օքսիդի ծավալային բաժինը (%) վերջնական չոր խառնուրդում:

67–68. *Ջրածնի և պրոպանի 13,44 լ (ն. ս.) խառնուրդի լրիվ այրման համար ծախսվել է 84 լ (ն. ս.) օդ:*

67. Որքան է ելային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

68. Ի՞նչ քանակով (մոլ) ազոտ է բաժին ընկնում մեկ մոլ ածխածնի(IV) օքսիդին ջրային գոլորշիների կոնդենսացումից հետո մնացած գազային խառնուրդում:

69–70. Ծծմբի օքսիդներից մեկում թթվածնի զանգվածային բաժինը 0,6 է:

69. Որքան է այդ օքսիդին համապատասխանող թթվի մոլային զանգվածը (գ/մոլ):

70. Որքան է այդ թթվի մոլեկուլի էլեկտրոնային բանաձևում պատկերվող էլեկտրոնների ընդհանուր թիվը:

71–73. Յինկի սուլֆիդի 194 գ նմուշը բովանալի վառարանում փոխազդեցության մեջ են դրել 1010 գ կալիումի նիտրատի ջերմային քայքայումից առացված A գազի հետ:

71. Որքան է A գազային նյութի ծավալը (լ, ն. պ.):

72. Որքան է վառարանից դուրս եկող գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ հելիումի:

73. Ի՞նչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա վառարանից դուրս եկող գազային խառնուրդը բարիումի հիդրօքսիդի 2,5 մոլ/լ կոնցենտրացիայով 1000 մլ լուծույթի մեջ անցկացնելիս:

74–76. Նատրիումի հիդրօքսիդի 80 գ նմուշը հալել են օրգանական թթվի նատրիումական A աղի հետ: Ստացվել են էթան և 212 գ B պինդ նյութ: Ռեակցիան ընթացել է քանակայես:

74. Որքան է փոխազդած A նյութի զանգվածը (գ):

75. Առավելագույն ի՞նչ զանգվածով (գ) ածխածնի(IV) օքսիդ կարող է փոխազդել B պինդ նյութի հետ ջրային լուծույթում:

76. Ի՞նչ զանգվածով (գ) միահալոգենածանցյալ կգոյանա, եթե ստացված էթանը լուսավորման պայմաններում փոխազդեցության մեջ դրվի բավարար քանակով քլորի հետ:

77–79. Էթանոլի և ջրի 10 : 1 մոլային հարաբերությամբ 717 գ խառնուրդը փոխազդեցության մեջ են դրել 57,5 գ մետաղական նատրիումի հետ:

77. Որքան է մոլեկուլում երեք ատոմ պարունակող արգասիքի զանգվածը (գ):

78. Որքան է գազային արգասիքի ծավալը (լ, ն. պ.):

79. Որքան է ելանյութերից մեկի ավելցուկի զանգվածը (գ):

80–82. Որոշակի զանգվածով երկաթի(III) նիտրատի և 40 գ ամոնիումի նիտրատի խառնուրդը մինչև հաստատուն զանգված շիկացնելիս խառնուրդի զանգվածը փոքրացել է 4,025 անգամ:

80. Ինչ զանգվածով (գ) չոր գազ կստացվի խառնուրդում պարունակվող ամոնիումի նիտրատի ջերմային քայքայումից:

81. Որքան է ելային խառնուրդում պարունակվող երկաթի(III) նիտրատի զանգվածը (գ):

82. Ինչ քանակով (մոլ) նեյտրոններ են պարունակվում շիկացումից հետո ստացված պինդ մնացորդում:

83–85. 54 գ գլյուկոզը լուծել են 54 գ ջրում և ստացել լուծույթ:

83. Քանի անգամ է ջրի մոլեկուլների թիվը մեծ գլյուկոզի մոլեկուլների թվից այդ լուծույթում:

84. Ինչ զանգվածով (գ) գլյուկոզում են առկա այնքան թթվածնի ատոմներ, որքան 54 գ ջրում:

85. Ինչ զանգվածով (գ) ջրում են առկա այնքան ջրածնի ատոմներ, որքան 45 գ գլյուկոզում:

86–88. Մետաղի(III) օքսիդից ստացված մետաղի(III) սուլֆատի զանգվածը 2,5 անգամ մեծ է օքսիդի զանգվածից:

86. Քանի էլեկտրոն է առկա մետաղի մեկ ատոմում:

87. Որքան է մետաղի(III) օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ):

88. Ինչ զանգվածով (գ) մետաղի(III) հիդրօքսիդի քայքայումից կստացվի 1 մոլ մետաղի(III) սուլֆատ ստանալու համար անհրաժեշտ քանակով մետաղի(III) օքսիդ:

89–91. Պղնձի(II) անջուր չեզոք աղի զանգվածային բաժինը դրա հինգջրյա բյուրեղահիդրատում 64 % է:

89. Քանի մոլ ատոմ է պարունակում այդ բյուրեղահիդրատի մեկ մոլը:

90. Որքան է պղինձ տարրի զանգվածային բաժինը (%) անջուր աղում:

91. Որքան է բյուրեղաչրի զանգվածը (գ) այդ բյուրեղահիդրատի և Գլաուբերի աղի 1-ական մոլ պարունակող խառնուրդում:

92-94. Տարրի RO_2 բանաձևով օքսիդում թթվածնի զանգվածային բաժինը 72,72 % է:

92. Ո՞րն է այդ տարրի կարգաթիվը:

93. Որքան է շիկացած ածխի հետ RO_2 օքսիդի լրիվ փոխազդեցությունից գոյացող նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

94. Որքան է RO_2 օքսիդի մեկ մոլի հետ փոխազդող կալիումի հիդրօքսիդի 28% զանգվածային բաժնով լուծույթի առավելագույն զանգվածը (գ):

1.1.1. Ատոմամոլեկուլային ուսմունք

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	2	33	25	65	4
2	2	34	3	66	20
3	40	35	10	67	9
4	64	36	2	68	10
5	95	37	3	69	98
6	78	38	34	70	32
7	232	39	30	71	112
8	14	40	2	72	12
9	13	41	101	73	434
10	86	42	19	74	192
11	84	43	60	75	88
12	9	44	5	76	129
13	5	45	42	77	60
14	12	46	225	78	28
15	30	47	14	79	644
16	15	48	38	80	22
17	50	49	1	81	121
18	10	50	48	82	21
19	5	51	4	83	10
20	80	52	252	84	90
21	42	53	11	85	27
22	7	54	560	86	26
23	2	55	3	87	160
24	8	56	80	88	214
25	4	57	624	89	21
26	75	58	750	90	40
27	32	59	278	91	270
28	160	60	9	92	6
29	60	61	52	93	28
30	3	62	792	94	400
31	14	63	12	95	
32	230	64	30	96	

1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն

1. Հետևյալ մասնիկներից մեկում պրոտոնների թիվը 2-ով մեծ է էլեկտրոնների թվից. ա) S^{2-} , բ) Ca^{2+} , գ) Na^{+} , դ) Al^{3+} : Որքան է ընտրված մասնիկին համապատասխանող օքսիդի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
2. Հետևյալ իզոտոպներից մեկի միջուկում նեյտրոնների թիվը 2-ով մեծ է պրոտոնների թվից. ա) ^{16}O , բ) 2H , գ) ^{18}O , դ) 1H : Որքան է ընտրված իզոտոպի ատոմ պարունակող էթանոլի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
3. Քանի՞ լրիվ լրացված s -օրբիտալ է առկա նեոնի ատոմում:
4. Քանի՞ չզույգված էլեկտրոն է առկա երկաթի Fe^{2+} իոնում:
5. Որքան է ատոմի միջուկում 16 պրոտոն պարունակող տարրի բարձրագույն օքսիդի մոլեկուլում պրոտոնների գումարային թիվը:
6. Ինչ զանգվածով (գ) ջուրը կպարունակի նույնքան պրոտոն, որքան պարունակում է 98 գ ծծմբական թթուն:
7. Ինչ զանգվածով (գ) ամոնիակը կպարունակի այնքան պրոտոն, որքան էլեկտրոն է պարունակում 80 գ զանգվածով մեթանը:
8. Որքան է ալկալիական մետաղի կարգաթիվը, եթե դրա ատոմի միջուկում նեյտրոնների թիվը 11-ով մեծ է պրոտոնների թվից:
9. Որքան է հողալկալիական մետաղի կարգաթիվը, եթե դրա մեկ ատոմի միջուկում պրոտոնների թիվը 12-ով փոքր է նեյտրոնների թվից:
10. Բնական սիլիցիումը երեք իզոտոպների խառնուրդ է, որոնց մոլային բաժիններն են՝ ^{28}Si – 92%, ^{29}Si – 5% և երրորդ իզոտոպինը՝ 3%: Ո՞րն է երրորդ իզոտոպի զանգվածային թիվը, եթե սիլիցիումի հարաբերական ատոմային զանգվածը 28,11 է:
11. Որքան է արգոնի և ծծմբի(IV) օքսիդի 3 լ (ն. պ.) ծավալով գազային խառնուրդի զանգվածը (գ), եթե խառնուրդում մեկ ծավալ ծծմբի(IV) օքսիդին բաժին է ընկնում չորս ծավալ արգոն:
12. Օզոնատորի միջով 25 լ թթվածին բաց թողնելիս ծավալը կրճատվել է 3 լ-ով: Թթվածնի ղր մասն է (%) վերածվել օզոնի:
13. Ազոտի(II) և (IV) օքսիդների 1 լ ծավալով խառնուրդին ավելացրել են 3 լ թթվածին: Ռեակցիայի հետևանքով գազերի ընդհանուր ծավալը կրճատվել է 1,5%-ով: Ընդունելով, որ գազերի ծավալները չափված են նույն պայմաններում, հաշվե՞ք ազոտի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

14. Տարրի ատոմում պրոտոնների, նեյտրոնների և էլեկտրոնների թվերի գումարը 115 է, իսկ նեյտրոնների թիվը 10-ով մեծ է էլեկտրոնների թվից: Ո՞րն է տարրի կարգաթիվը:
15. Ո՞րն է $^{226}_{88}\text{Ra}$ իզոտոպի α -տրոհման հետևանքով ստացվող տարրի իզոտոպի զանգվածային թիվը:
16. ^{14}C իզոտոպը ռադիոակտիվ է և ենթարկվում է β -տրոհման: Ո՞րն է ստացվող տարրի ատոմային համարը:
17. Տարրերի միայն կայուն և տարածված իզոտոպներ պարունակող ֆորմալդեհիդի ջրային լուծույթում յուրաքանչյուր 11 պրոտոնին բաժին է ընկնում 9 նեյտրոն: Որքան է ֆորմալդեհիդի զանգվածային բաժինն այդ լուծույթում (%):
18. Որքան է ատոմի $[\text{Ar}]3d^{10}4s^2$ էլեկտրոնային բանաձև ունեցող տարրի կարգաթվի և ավարտված էլեկտրոնային մակարդակների թվի գումարը:
19. Որքան է X տարրի ատոմում նեյտրոնների թիվն ըստ հետևյալ միջուկային ռեակցիայի հավասարման՝ $^{238}_{92}\text{U} + ^{14}_7\text{N} \rightarrow \text{X} + 4^1_0\text{n}$:
20. Հաշվե՞ք ստորև բերված այն նյութերի մոլային զանգվածների գումարը, որոնցում ազոտի օքսիդացման աստիճանը -3 է՝ NH_3 , NH_2OH , N_2H_4 , NH_4I , N_2O , HNO_3 :
21. Որքան է ^{35}Cl իզոտոպի մոլային բաժինը (%) ^{35}Cl և ^{37}Cl իզոտոպների խառնուրդում, եթե քլորի հարաբերական ատոմային զանգվածը 35,5 է:
22. Որքան է ^{20}Ne իզոտոպի մոլային բաժինը (%) ^{20}Ne և ^{22}Ne իզոտոպների խառնուրդում, եթե բնական նեոնի հարաբերական ատոմային զանգվածը 20,18 է:
23. Արտաքին էներգիական մակարդակի $2s^2 2p^6$ էլեկտրոնային բանաձև ունեցող ատոմում որքան է s-էլեկտրոնների մոլային բաժինը (%):
24. Որքան է վալենտային էլեկտրոնների քանակը (մոլ) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^4$ էլեկտրոնային բանաձևն ունեցող քիմիական տարրի մեկ ատոմում (մոլ):
25. $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^5$ էլեկտրոնային բանաձևն ունեցող քիմիական տարրի ջրածնային միացության և բարձրագույն օքսիդի մեկական մոլեկուլներում որքան է ատոմների ընդհանուր թիվը:
26. ^{14}C իզոտոպի ճառագայթումը պայմանավորված է հետևյալ միջուկային ռեակցիայով. $^{14}_6\text{C} \rightarrow \text{X} + e^-$: Ո՞րն է X քիմիական տարրի կարգաթիվը:
27. Ո՞րն է քիմիական տարրի կարգաթիվը, եթե նրա ատոմի զանգվածը $2,1809 \cdot 10^{-22}$ գ է, իսկ ատոմի միջուկում նեյտրոնների թիվը՝ 77:

28. Ծծմբի իզոտոպներից մեկի ատոմներից կազմված շեղանկյուն ծծմբի (S_8) 0,1 մոլ քանակում պարունակվում են 40 մոլ տարրական մասնիկներ՝ պրոտոն, նեյտրոն, էլեկտրոն: Որքան է իզոտոպի զանգվածային թիվը:
29. Որքան է տարրի ջրածնային միացության մոլային զանգվածը (գ/մոլ), եթե այդ տարրի 0,1 մոլ քանակով R^{2-} իոնները պարունակում են 1,8 մոլ էլեկտրոններ:
30. Որքան է քիմիական տարրի բարձրագույն օքսիդի մոլեկուլում թթվածնին բաժին ընկնող պրոտոնների թիվը, եթե այդ տարրի ատոմում էլեկտրոններն ունեն $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^2 4s^2$ փոխդասավորություն:
31. Բնության մեջ պղինձը գտնվում է երկու կայուն իզոտոպների ձևով՝ 63 և 65 զանգվածային թվերով: Եթե դրանց մոլային հարաբերությունը լինել 1:1, ապա որքան կլինել այդ մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:
32. Որքան են HSO_4^- , HCO_3^- և NH_4^+ իոններում առկա բոլոր պրոտոնների գումարային թիվը:
33. Որքան է X մասնիկի զանգվածային թիվն ըստ ${}^2H + {}^3H \rightarrow n + X$ միջուկային ռեակցիայի հավասարման:
34. Որքան է 10 մոլ պրոտոն պարունակող մեթանի զանգվածը (գ):
- 35–36. Կատալիզորդ պարունակող խողովակի միջով անցկացրել են 1:2 մոլային հարաբերությամբ էթիլենի և ջրային գոլորշու 336 լ (ն. պ.) խառնուրդ:*
35. Որքան է էթիլենի և ջրի փոխազդեցության արգասիքի զանգվածը (գ), եթե հիդրատացման ռեակցիան ընթացել է 80% ելքով:
36. Որքան է էլեկտրոնների քանակը (մոլ) ստացված արգասիքի մեկ մոլում:
- 37–38. Տարրի իզոտոպներից մեկի միջուկում առկա է 16 նեյտրոն, իսկ էլեկտրոնների թվի հարաբերությունը նեյտրոնների թվին 0,875 է:*
37. Քանի՞ p -էլեկտրոն է առկա այդ տարրի ատոմում:
38. Որքան է այդ իզոտոպի առաջացրած բարձրագույն օքսիդի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
- 39–40. Մեթանի և էթանի խառնուրդում պրոտոնների թիվը 1,6 անգամ մեծ է նեյտրոնների թվից:*
39. Որքան է մեթանի ծավալային բաժինն(%) այդ խառնուրդում:

40. Բնչ ծավալով (յ) թթվածին կապահանջվի 200 լ ելային խառնուրդում պարունակվող էթանն այրելու համար:
- 41–42. Փակ անոթում պայթեցրել են ջրածին, ազոտ և ավելցուկով վերցրած թթվածին պարունակող 102 մլ ծավալով գազային խառնուրդ: Հասնակարգը սկզբնական պայմանների բերելուց և ջրային գոլորշիների խոսացումից հետո մնացել է 96 մլ ծավալով գազային խառնուրդ, որի խտությունն ըստ օդի 1 է:
41. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) վերջնական խառնուրդում:
42. Որքան է սկզբնական խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):
- 43–44. Ածխածնի(II) և (IV) օքսիդների խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 18 է: 10 լ ծավալով այդ խառնուրդին ավելացրել են օդ և այրել: Նախնական պայմանների բերելուց հետո ստացված նոր խառնուրդի խտությունն ըստ ջրածնի դարձել է 17,6:
43. Բնչ ծավալով (յ) օդ է ավելացվել:
44. Ստացված նոր խառնուրդն ինչ ծավալով (լ) սկզբնական խառնուրդի հետ կարող է փոխազդել:
- 45–46. Ածխածնի(II) և (IV) օքսիդների խառնուրդի միջին մոլային զանգվածը 40 գ/մոլ է: Այդ խառնուրդը նատրիումի հիդրօքսիդի 25 % զանգվածային բաժնով 640 գ լուծույթի մեջ անցկացնելիս ստաջացրել է աղերի 274 գ խառնուրդ:
45. Որքան է ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:
46. Որքան է թթու աղի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:
- 47–48. Երկտարր միացությունը, որում տարրերի ատոմներն ունեն միևնույն էլեկտրոնային բանաձևը, հիդրոլիզվելիս ստաջացնում է միաթթու հիմք և երկատոմանի ամենաթեթև գազային պարզ նյութը:
47. Որքան է հիմքի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
48. Բնչ ծավալով (լ, ն. ս.) գազ կստացվի 2,5 գ միացության հիդրոլիզից:
- 49–51. Ալկանների հոմոլոգիական շարքում իրար հաջորդող երկու անդամների մեկական մոլեկուլներում պրոտոնների գումարային թիվը 18-ով մեծ է նեյտրոնների գումարային թվից:

49. Որքան է փոքր մոլային զանգվածով ալկանի մոլեկուլում C-H կապերի թիվը:

50. Որքան է մեծ մոլային զանգվածով ալկանի մոլեկուլում C-C կապերի թիվը:

51. Ինչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա ալկանների 0,448 լ (ն. պ.) հավասարամոլային խառնուրդի այրումից գոյացած գազը կալցիումի հիդրօքսիդի ավելցուկ պարունակող ջրային լուծույթի մեջ անցկացնելիս:

52-54. 44,8 լ (ն. պ.) ծավալով ամոնիակը, որի մոլեկուլները կազմված են ^{14}N և ^2H իզոտոպներից, լուծել են 10 մոլ ջրում, որի մոլեկուլները կազմված են ^2H և ^{18}O իզոտոպներից: Անուիտեն ստացված լուծույթին ավելացրել են 73 գ HCl պարունակող 192 գ աղաթթու:

52. Որքան է ամոնիակի լուծույթի զանգվածը (գ):

53. Որքան է վերջնական լուծույթում գոյացած աղի զանգվածային բաժինը (%):

54. Որքան է 44,8 լ ամոնիակ ստանալու համար անհրաժեշտ $^{14}\text{N}_2$ և $^2\text{H}_2$ գազերի գումարային զանգվածը (գ), եթե ռեակցիայի ելքը 20% է:

55-57. N_2 -ի և NO_2 -ի խառնուրդի միջին մոլային զանգվածը 38,8 գ/մոլ է: Այդ խառնուրդը կալիումի հիդրօքսիդի անհրաժեշտ քանակ պարունակող 356 գ լուծույթի մեջ անցկացնելիս ստաջացել է 139,5 գ աղերի խառնուրդ:

55. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

56. Որքան է սկզբնական գազային խառնուրդի ծավալը (լ, ն. պ.):

57. Որքան է կալիումի նիտրիտի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

58-60. Էթանի և էթիլենի 0,2 մոլ քանակով խառնուրդն անցկացրել են բրոմի ավելցուկ պարունակող բրոմաջրի միջով և ստացել 3,76 գ միացման արգասիք, որը մշակել են կալիումի հիդրօքսիդի տաք սպիրտային լուծույթով:

58. Որքան է էթիլենի մոլային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

59. Որքան է ծախսված բրոմի զանգվածը (մգ):

60. Որքան է էթիլենի բրոմացման արգասիքի և կալիումի հիդրօքսիդի սպիրտային լուծույթի փոխազդեցության արդյունքում առաջացած գազի մեկ մոլեկուլում σ -կապերի թիվը:

1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	56	21	75	41	75
2	48	22	91	42	28
3	2	23	40	43	15
4	4	24	6	44	2
5	40	25	11	45	25
6	90	26	7	46	168
7	85	27	54	47	24
8	37	28	34	48	7
9	38	29	34	49	8
10	30	30	16	50	3
11	6	31	64	51	7
12	36	32	91	52	260
13	12	33	4	53	25
14	35	34	16	54	200
15	222	35	184	55	40
16	7	36	26	56	56
17	25	37	8	57	15
18	33	38	62	58	10
19	149	39	75	59	3200
20	162	40	175	60	3

**1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների
փոփոխության պարբերական բնույթը:
Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք**

1. Որքան է արտաքին էներգիական մակարդակի ns^2np^5 էլեկտրոնային բանաձևով երկու տարրերի կարգաթվերի գումարը, եթե դրանց համապատասխանող պարզ նյութերի մոլային զանգվածների հարաբերությունը $1,5875 : 1$ է:
2. Որքան է արտաքին էներգիական մակարդակի ns^2np^4 էլեկտրոնային բանաձևով տարրերի բարձրագույն օքսիդներին համապատասխանող առավել ուժեղ թթվի մոլային զանգվածը (գ/մոլ):
3. Հետևյալ շարքերից մեկում ներառված են միայն այն տարրերը, որոնց առավելագույն վալենտականությունները չեն համընկնում պարբերական համակարգում դրանց խմբի համարին՝ 1) N, O, F; 2) P, S, Cl; 3) O, S, Se: Որքան է այդ տարրերի կարգաթվերի գումարը:
4. Հետևյալ շարքերից մեկում ներառված օքսիդները դասավորված են ըստ թթվային հատկությունների թուլացման. 1) SO_3, P_2O_5, SiO_2 ; 2) CrO, Cr_2O_3, CrO_3 ; 3) CO_2, N_2O_5, BeO_2 : Որքան է այդ շարքի օքսիդների հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:
5. Որքան է R տարրի բարձրագույն օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ), եթե այդ օքսիդում թթվածնի զանգվածային բաժինը 60% է, իսկ գազային ջրածնային միացությունն ունի H_2R բանաձևը:
6. Որքան է մոլեկուլներում դեյտերիում, պրոտիում և ^{16}O իզոտոպներ պարունակող ջուր նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):
7. Միացություններում +6 օքսիդացման աստիճան ցուցաբերող քիմիական տարրի առաջացրած 0,875 գ զանգվածով երկհիմն թթվի քայքայումից գոյացել է 0,812 գ այդ թթվին համապատասխանող օքսիդ: Որքան է թթվի մոլային զանգվածը (գ/մոլ):
8. RO_3 բանաձևով բարձրագույն օքսիդն ունեցող տարրի ջրածնային միացության մոլեկուլում ջրածնի զանգվածային բաժինը 5,882% է: Ո՞րն է այդ տարրի կարգաթիվը:
9. Ատոմի շառավիղ, միջուկի լիցք, s-էլեկտրոնների թիվ, p-էլեկտրոնների թիվ, պրոտոնների թիվ, իոնացման էներգիա բնութագրերից քանիսն են նույնը կալիում ատոմի և K^+ իոնի համար:
10. Պարբերական համակարգի VII խմբի տարրերից մեկն առաջացնում է HRO_4 բանաձևով թթու: Որքան է այդ տարրի կարգաթիվը, եթե նշված թթվին համապատասխանող օքսիդում թթվածնի զանգվածային բաժինը 50,45% է:

11. Երկու հալոգենների բարձրագույն օքսիդացման աստիճանով թթվածնավոր թթուներում հալոգենների զանգվածային բաժինները կազմում են 35,32% և 66,16%: Որքան է այդ հալոգենների կարգաթվերի գումարը:
12. Որքան է NH_3 , H_2O , CO_2 , HCl մոլեկուլների շարքից ոչ բևեռային մոլեկուլի զանգվածը (գ.ա.մ.):
13. Որքան է պրոտոնների թիվը հետևյալ բանաձևով միացություններից՝ NH_3 , CH_4 , H_2O , BCl_3 , այն նյութի մոլեկուլում, որն ունի հարթ, ոչ բևեռային կառուցվածք:
14. Ցիս-2-բութենի մոլեկուլում որքան է միևնույն՝ sp^2 հիբրիդային օրբիտալների հարթությունում գտնվող ատոմների թիվը:
15. 1,3-բութադիենի մոլեկուլում որքան է σ - և π -կապերի թվերի տարբերությունը:
16. Ալկանների հոմոլոգիական շարքի յուրաքանչյուր անդամի մեկ մոլեկուլում σ -կապերի թիվը քանիսով է փոքր հաջորդ անդամի մեկ մոլեկուլում առկա σ -կապերի թվից:
17. Քանի՞ կովալենտային կապ է առկա CH_3OH և CH_3COOH բանաձևերով նյութերի փոխազդեցության արգասիքի մոլեկուլում:
18. Որքան է CO_2 , NH_3 , SiH_4 , H_2O , CCl_4 , C_2H_2 մոլեկուլներից ոչ բևեռային մոլեկուլներին համապատասխանող նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:
19. Որքան է 1) NO_2 , 2) NH_3 , 3) NO , 4) Na_3N , 5) NH_4Cl նյութերի շարքում ազոտի բացասական օքսիդացման աստիճանով միացությունների համարների գումարային թիվը:
20. Որքան է HPO_3 , Na_3PO_4 , PH_3 բանաձևերով նյութերի մեկական մոլեկուլում կովալենտային կապերի գումարային թիվը:
21. Ինչ թվով σ -կապ է առկա քիմիական տարրի բարձրագույն օքսիդին համապատասխանող թթվի մոլեկուլում, եթե տարրի ատոմի արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևն է՝ $3s^2 3p^5$:
- 22–23. Երրորդ պարբերության տարրի հիմնական վիճակում գտնվող ատոմն ունի երկու կենտ էլեկտրոն՝ վալենտային էլեկտրոնների կեսը:*
22. Որքան է այդ տարրի ջրածնային միացության մոլային զանգվածը (գ/մոլ):
23. Որքան է թթվածնի ավելցուկում այդ տարրի ջրածնային միացության այրումից գոյացող պինդ նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):

24–25. Պարբերական համակարգի գլխավոր ենթահանքերի տարրերից մեկի բարձրագույն օքսիդի մոլային զանգվածը 108 գ/մոլ է, իսկ այդ օքսիդում թթվածնի զանգվածային բաժինը 74 % է:

24. Որքան է այդ տարրի ջրածնային միացության մոլային զանգվածը (գ/մոլ):

25. Ինչ զանգվածով (գ) թթու կառաջանա այդ օքսիդի մեկ մոլը ջրում լուծելիս:

26–27. Մետաղի(II) սուլֆատի մոլային զանգվածը երեք անգամ մեծ է դրա օքսիդի մոլային զանգվածից:

26. Որքան է այդ մետաղի ատոմի միջուկում պրոտոնների թիվը:

27. Ինչ զանգվածով (գ) օքսիդ կառաջանա, եթե այդ մետաղի 2,4 գ զանգվածով նմուշը տաքացման պայմաններում լրիվ փոխազդի ավելցուկով թթվածնի հետ:

28–29. Մետաղի(II) հիդրիդի և նիտրիդի 1 : 2 մոլային հարաբերությամբ 33,8 գ խառնուրդին ջուր ավելացնելիս անջատվել է 13,44 լ (ն. սլ.) գազային խառնուրդ:

28. Ո՞րն է այդ մետաղի կարգաթիվը:

29. Որքան է անջատված գազային խառնուրդի խտությունն ըստ հելիումի:

30–31. Քիմիական տարրի իզոտոպի զանգվածային թիվը 127 է:

30. Որքան է այդ իզոտոպի ատոմում պարունակվող նեյտրոնների թիվը:

31. Որքան է այդ տարրի բարձրագույն օքսիդին համապատասխանող հիդրատի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

32–33. Փոխազդեցության մեջ են դրել 2–քլորբութանը կալիումի հիդրօքսիդի սպիրտային տաք լուծույթի հետ:

32. Որքան է C–C–C անկյան թվային արժեքը ստացված հիմնական արգասիքի մոլեկուլում:

33. Ինչ թվով sp^2 -հիբրիդային օրբիտալներ են առկա վերջանյութի մոլեկուլում:

34-35. $N \equiv N$ քիմիական կապի էներգիան 946 կՋ/մոլ է:

34. Որքան ջերմություն (կՋ) կկլանվի 44,8 լ (ն. ս.) ազոտն ատոմների վերածելիս:

35. Ինչ զանգվածով (գ) ազոտ է տրոհվել ատոմների, եթե կլանվել է 473 կՋ ջերմություն:

1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը: Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	88	13	56	25	126
2	98	14	6	26	12
3	24	15	7	27	4
4	282	16	3	28	20
5	80	17	11	29	3
6	19	18	256	30	74
7	250	19	11	31	192
8	16	20	14	32	120
9	3	21	5	33	6
10	25	22	32	34	1892
11	70	23	60	35	14
12	44	24	17		

**1.1.4. Պինդ, հեղուկ, գազային նյութեր: Մաքուր նյութեր և
խառնուրդներ: Նյութերի գազային վիճակը:
Մենդելեև-Կլապեյրոնի հավասարումը: Ավոգադրոյի օրենքը:
Պինդ նյութեր: Բյուրեղային և ամորֆ նյութեր**

1. Ջրածնի և թթվածնի 30 լ խառնուրդը պայթեցնելուց հետո մնացել է 3 լ թթվածին: Որքան է ջրածնի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:
2. Ածխածնի(II) օքսիդի և մեթանի 50 դմ³ խառնուրդը պայթեցրել են 60 դմ³ թթվածնի հետ: Սկզբնական պայմանների բերելուց հետո ընդհանուր ծավալը կազմել է 70 դմ³: Որքան է մեթանի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:
3. Սենյակային ջերմաստիճանում սնդիկը միանում է պինդ ազրեգատային վիճակում գտնվող ոչմետաղի հետ՝ առաջացնելով ոչմետաղ տարրի 50% մոլային և 13,734% զանգվածային բաժիններով միացություն: Որքան է միացության հարաբերական մոլեկուլային զանգվածը:
4. Նորմալ պայմաններում 178,57 գ զանգվածով միատոմ գազը զբաղեցնում է 100 լ ծավալ: Ինչ քանակով (մոլ) էլեկտրոններ են պարունակվում 1 մոլ գազում:
5. Որքան է նատրիումի և արծաթի նիտրատների հավասարամոլային խառնուրդի քայքայումից ստացվող գազային խառնուրդում պարզ նյութի մոլային բաժինը (%):
6. 10 մոլ ծծմբի(IV) օքսիդի և 8 մոլ թթվածնի խառնուրդը տաք կատալիզորդի վրայով անցկացնելիս առաջացել է 4 մոլ ծծմբի(VI) օքսիդ: Որքան է ծծմբի(VI) օքսիդի ծավալային բաժինը (%) ստացված գազային խառնուրդում:
7. Արծաթի և պղնձի(II) նիտրատների հավասարամոլային խառնուրդի քայքայումից ստացված գազային խառնուրդն անցկացրել են ավելցուկով վերցրած ալկալու ջրային լուծույթով: Կլանված գազի քանակը քանի՞ անգամ է մեծ չկլանված գազի քանակից:
8. 27 °C ջերմաստիճանի և 133254 Պա ճնշման պայմաններում 400 մլ ծավալով գազի զանգվածը 0,685 գ է ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$): Որքան է գազի մոլային զանգվածը (գ/մոլ):
9. Ջրածին, թթվածին և ինչ-որ գազ պարունակող խառնուրդում դրանց ծավալային բաժիններն են՝ 20%, 40% և 40% համապատասխանաբար, իսկ միջին մոլային զանգվածը 19,6 գ/մոլ է: Որքան է անհայտ գազի մոլային զանգվածը (գ/մոլ):
10. Ինչ քանակով (մոլ) ածխածնի(IV) օքսիդ են խառնել 5,6 լ (ն. պ.) ածխածնի(II) օքսիդին, եթե այդ խառնուրդում էլեկտրոնների թիվը 25,5 անգամ գերազանցում է Ավոգադրոյի թիվը:

11. Որքան է 1-ական գ զանգվածներով հեղիում, նեոն և արգոն պարունակող գազային խառնուրդի ծավալը (մլ, ն. պ.):
12. Որքան է 8,3 լ ծավալ ունեցող փակ անոթում 400 Կ ջերմաստիճանի և 1600 կՊա ճնշման պայմաններում գտնվող թթվածնի զանգվածը (գ) ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$):
13. Միևնույն պայմաններում 10 լ բութենի զանգվածը քանի՞ անգամ է մեծ 4 լ ազոտի զանգվածից:
14. Որքան է մեթանի և պրոպանի հավասարամոլային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ էթանի:
- 15–16. Ըստ հեղիումի 5,7 հարաբերական խտությանը ջրածնի, ածխածնի(II) օքսիդի և էթիլենի 224 լ (ն. պ.) խառնուրդի այրման համար ծախսվել է 640 գ թթվածին:*
15. Որքան է ջրածնի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:
16. Որքան է էթիլենի զանգվածը(գ) ելային խառնուրդում:
- 17–18. 12,84 գ նյութի այրումն իրականացրել են 25 °C ջերմաստիճանի և 107,28 կՊա ճնշման պայմաններում: Ստացվել են 8,3 լ ածխածնի(IV) օքսիդ, 2,16 գ զանգվածով հեղուկ ջուր և 8,28 գ կալիումի կարբոնատ ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$, $T_0 = 273 \text{ Կ}$):*
17. Որքան է ածխածնի(IV) օքսիդի նյութաքանակը (մմոլ):
18. Որքան է ելանյութի մոլային զանգվածը (գ/մոլ):
- 19–20. Ածխածնի(IV) և (II) օքսիդների 112 լ (ն. պ.) խառնուրդի զանգվածը 188 գ է:*
19. Որքան է ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) խառնուրդում:
20. Որքան է ածխածնի(IV) օքսիդի զանգվածը (գ) խառնուրդում:
- 21–22. 1,25 մոլ արծաթի նիտրատը ենթարկել են ջերմային քայքայման և ստացված գազային խառնուրդն անցկացրել ակալու ավելցուկ պարունակող ջրային լուծույթով:*
21. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ չի կլանվել:
22. Ինչ զանգվածով (գ) պինդ մնացորդ է գոյացել ջերմային քայքայումից:

23–24. $0,2 \text{ մ}^3$ ծավալով փակ անոթում 500 Կ ջերմաստիճանի և $4,15 \cdot 10^4$ Պա ճնշման պայմաններում ջրածին է պարունակվում ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$, $T_0 = 273 \text{ Կ}$):

23. Որքան է գազի զանգվածը (գ):

24. Ինչ զանգվածով (գ) պղնձի(II) օքսիդի հետ կարող է փոխազդել նույն զանգվածով ջրածինը:

25–26. *Կալցիումի սուլֆիտի և հիդրոկարբոնատի խառնուրդը, որում կալցիում տարրի ատոմների թիվը 6 անգամ մեծ է ծծմբի ատոմների թվից, մշակել են ավելցուկով վերցրած աղաթթվով, որի արդյունքում անջատվել է գազային խառնուրդ:*

25. Քանի անգամ է ածխածնի(IV) օքսիդի ծավալը մեծ ծծմբի(IV) օքսիդի ծավալից:

26. Որքան է աղերի $0,3$ մոլ խառնուրդի հետ փոխազդելու համար անհրաժեշտ կալիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

27–28. 300 ր ծավալ ունեցող փակ անոթում $-33 \text{ }^\circ\text{C}$ ջերմաստիճանում տեղավորել են 2 գ հելիում ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$, $T_0 = 273 \text{ Կ}$):

27. Ինչ ճնշում (Պա) կստեղծվի անոթում:

28. Ինչ ճնշում (Պա) կստեղծվի անոթում, եթե այն տաքացվի մինչև $+87 \text{ }^\circ\text{C}$:

29–30. *Էթիլենի 7 գրամը ենթարկել են պոլիմերացման: Ստացված պոլիմերը պարունակում է $1,05952 \cdot 10^{21}$ թվով մակրոմասնիկ, իսկ չփոխազդած էթիլենը կարող է գունազրկել բրոմի 3% զանգվածային բաժնով 160 գ լուծույթը:*

29. Որքան է պոլիմերի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

30. Որքան է էթիլենի պոլիմերացման աստիճանը:

31–33. *Ցինկի և ցինկի օքսիդի որոշակի զանգվածով խառնուրդը մշակել են ավելցուկով վերցրած աղաթթվով: Ստացված լուծույթը գոլորշացնելիս մնացել է $4,08 \text{ գ}$ պինդ մնացորդ: Փոխանակման ռեակցիայում ծախսված քլորաջրածնի քանակը երկու անգամ մեծ է տեղակարման ռեակցիայում ծախսվածից:*

31. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (մգ):

32. Ինչ ծավալով (մլ, ն. պ.) գազ է անջատվել:

33. Որքան է ցինկ տարրի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

34–36. $AgNO_3$ -ի 680 գ զանգվածով նմուշը ենթարկել են ջերմային քայքայման և գազային նյութերն անցկացրել կալիումի հիդրօքսիդի անհրաժեշտ քանակ պարունակող լուծույթի մեջ:

34. Ի՞նչ զանգվածով (գ) մետաղական արծաթ է նստել:

35. Ի՞նչ զանգվածով (գ) աղ է առաջացել լուծույթում:

36. Ի՞նչ նյութաքանակով (մոլ) գազ չի կլանվել ալկալու լուծույթի կողմից:


**1.1.4. Պինդ, հեղուկ, գազային նյութեր: Մաքուր նյութեր և խառնուրդներ:
Նյութերի գազային վիճակը: Մենդելեև - Կլապեյրոնի հավասարումը:
Ալոգադրոյի օրենքը: Բյուրեղային և ամորֆ նյութեր**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	60	13	5	25	10
2	20	14	1	26	28
3	233	15	20	27	3320
4	18	16	168	28	4980
5	50	17	360	29	3500
6	25	18	214	30	125
7	15	19	40	31	2270
8	32	20	132	32	224
9	16	21	7	33	60
10	1	22	135	34	432
11	7280	23	4	35	404
12	128	24	160	36	1

1.2. ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ

1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը

1. Որքան է մերիլամինի այրման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
2. NaOH , H_2SO_4 , $\text{Al}(\text{OH})_3$, $\text{Cu}(\text{OH})_2$, $\text{Ca}(\text{OH})_2$, $\text{Fe}(\text{OH})_3$ միացություններից մի քանիսը հնարավոր է ստանալ համապատասխան օքսիդի և ջրի միացումով: Որքան է հնարավոր ռեակցիաների հավասարումների գործակիցների գումարը:
3. Որքան է կալիումի քլորատի քայքայման հնարավոր երկու ռեակցիաների (կատալիտիկ և ոչ կատալիտիկ) հավասարումներում կալիումի քլորիդի գործակիցների գումարը:
4. Որքան է, ըստ երկաթի(II, III) օքսիդի (երկաթի հարուկի) և ազոտական թթվի միջև ընթացող ռեակցիայի հավասարման, ստացված աղի գործակիցը, եթե ազոտական թթուն վերականգնվում է մինչև NO :
5. Ազոտի օքսիդներից մեկը սովորական պայմաններում ինքնաբերաբար միանում է թթվածնին՝ առաջացնելով մեկ այլ օքսիդ: Որքան է համապատասխան ռեակցիայի հավասարման գործակիցների գումարը:
6. Համապատասխան պայմաններում SO_2 և NO_2 օքսիդների փոխազդեցությունից ստացվում են երկու այլ օքսիդներ: Որքան է ատոմների թիվը ստացված մեծ մոլային զանգվածով օքսիդի մոլեկուլում:
7. Որքան է հետևյալ ուրվագրով ռեակցիայի հավասարման ձախ մասի գործակիցների գումարը.
$$\text{KMnO}_4 + \text{H}_2\text{O}_2 + \text{H}_2\text{SO}_4 \rightarrow \text{MnSO}_4 + \text{K}_2\text{SO}_4 + \text{O}_2 + \text{H}_2\text{O}$$
8. Երկտարր գազային նյութի 20 լիտրն այրելիս առաջացել են 10 լ ազոտ և 30 լ ջրային գոլորշի: Որքան է գազի մեկ մոլեկուլում պրոտոնների թիվը:
9. Օդի և քլորի 4 լ խառնուրդը քավարար քանակով կալիումի յոդիդ պարունակող լուծույթի միջով անցկացնելիս անջատվել է 5,08 գ յոդ: Որքան է քլորի զանգվածը (մգ) մեկ լիտր օդում:
10. Բրոմաջրի և 6,8 գ ալկինի փոխազդեցությունից գոյացել է 38,8 գ քառաբրոմածանցյալ: Որքան է ալկինի մոլեկուլում σ -կապերի թիվը:
11. Որքան է օքսիդիչ նյութի մեկ մոլեկուլի ընդունած էլեկտրոնների թիվն ըստ հետևյալ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման.



12. Որքան է վերականգնիչ նյութի 1 մոլի տրամադրած էլեկտրոնների քանակն (մոլ) ըստ հետևյալ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման.



13. Համապատասխան պայմաններում հետևյալ գույգերից մի քանիսի նյութեր փոխազդում են.

ա) Zn և FeCl₂, բ) Fe և ZnCl₂, գ) Cu և AgNO₃, դ) CuO և HNO₃, ե) C₂H₅OH և Na:

Որքան է տեղակալման ռեակցիաներում ստացվող բարդ նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:

14–15. Ջերմային քայքայման են ենթարկել ցինկի նիտրատը:

14. Որքան է գոյացող գազային նյութերի խառնուրդում պարզ նյութի մոլային բաժինը (%):

15. Որքան է պինդ մնացորդի մոլային զանգվածը (գ/մոլ):

16–17. Պղնձի և ալյումինի 10 գ խառնուրդի և նատրիումի հիդրօքսիդի լուծույթի փոխազդեցությունից անջատվել է 6,72 լ (ն. ս.) գազ:

16. Որքան է սկզբնական խառնուրդում պղնձի զանգվածային բաժինը (%):

17. Որքան է փոխազդած նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ), եթե ռեակցիայի արդյունքում ստացվել է Na[Al(OH)₄]:

18–19. Քլորի և օդի խառնուրդը ավելցուկով կալիումի յոդիդի լուծույթի միջով անցկացնելիս առաջացել է 63,5 գ յոդ, և մնացել է չփոխազդած 22,4 լ (ն. ս.) գազ:

18. Որքան է քլորի ծավալային բաժինը (%) սկզբնական գազային խառնուրդում:

19. Որքան է փոխազդած կալիումի յոդիդի զանգվածը (գ):

20–22. Մեկական մոլ FeS և Na₂SO₃ պարունակող անոթներից յուրաքանչյուրին ավելացրել են բավարար քանակով աղաթթու և անջատված գազերը լուծել ջրում: Ջրային լուծույթում գազերի փոխազդեցությունից ստացվել է նստվածք:

20. Որքան է FeS պարունակող փորձանոթում անջատված գազի զանգվածը (գ):

21. Որքան է Na₂SO₃ պարունակող փորձանոթում առաջացած աղի զանգվածը (գ):

22. Որքան է ջրային լուծույթում ստացված պինդ նյութի զանգվածը (գ):

23-25. Որոշակի ծավալով ծծմբաջրածինը լրիվ այրվել է 3,75 մոլ նատրիումի նիտրատի ջերմային քայքայումից առաջագած գազում: Այրումից առաջացած գազի կեսը փոխազդեցության մեջ են դրել բավարար քանակով վերցրած ծծմբաջրածնի մեկ այլ նմուշի հետ, իսկ մյուս կեսն օքսիդացրել են ըստ զանգվածի 20 % բրոմ պարունակող բրոմաջրով:

23. Որքան է այրված ծծմբաջրածնի ծավալը (լ, ն. պ.):

24. Որքան է ծախսված բրոմաջրի զանգվածը (գ):

25. Որքան է ծծմբաջրածնի այրումից առաջացած գազի և ծծմբաջրածնի փոխազդեցությունից ստացված պինդ նյութի զանգվածը (գ):

26-28. Երկաթի, պղնձի և ալյումինի 87 գ զանգվածով խառնուրդը նատրիումի հիդրօքսիդի լուծույթի հետ փոխազդելիս անջատվել է 33,6 լ (ն. պ.) գազ, իսկ նույն զանգվածով խառնուրդի մեկ այլ նմուշ առանց օդի մուտքի աղաթթվի հետ փոխազդելիս՝ 44,8 լ (ն. պ.) գազ:

26. Որքան է ալյումինի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

27. Որքան է երկաթի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

28. Ինչ զանգվածով (գ) ազոտի օքսիդ կառաջանա խիտ ազոտական թթվի և ելային խառնուրդում պարունակվող պղնձի փոխազդեցությունից:

1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	29	11	5	21	117
2	10	12	1	22	48
3	3	13	392	23	28
4	9	14	20	24	500
5	5	15	81	25	60
6	80	16	46	26	27
7	10	17	8	27	28
8	10	18	20	28	46
9	355	19	83		
10	12	20	34		

1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին: Քիմիական հավասարակշռություն

1. Փակ համակարգում $H_{2(g)} + I_{2(g)} = 2HI_{(g)}$ հավասարումով ընթացող ռեակցիայի արագությունը մեծացնելու նպատակով ջրածնի կոնցենտրացիան մեծացրել են 3 անգամ: Քանի անգամ պետք է փոքրացնել յոդի կոնցենտրացիան, որպեսզի ռեակցիայի արագությունը չփոխվի:
2. Որքան է $A + 2B = D$ ռեակցիայի արագությունն (մոլ/լ · ը) ըստ B նյութի սպառման, եթե 10 րոպեի ընթացքում A նյութի քանակը 10 մլ ծավալով ռեակցիոն խառնուրդում պակասել է 0,3-ով:
3. $A + 2B = D$ ռեակցիայի արագությունն ըստ A նյութի սպառման 2 մոլ/լ · վ է: Որքան կլինի նույն ռեակցիայի արագությունը (մոլ/լ · վ) ըստ D նյութի առաջացման:
4. 20 °C ջերմաստիճանում ընթացող ինչ-որ ռեակցիա ավարտվում է 2,7 ժամում: Քանի աստիճանով պետք է բարձրացնել ջերմաստիճանը, որպեսզի նույն ռեակցիան ավարտվի 6 րոպեում (ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 3$):
5. $2NO_{(g)} + O_{2(g)} = 2NO_{2(g)}$ հավասարումով ընթացող ռեակցիան սկսվելուց 5 վրկ հետո NO-ի կոնցենտրացիան պակասել է 0,2 մոլ/լ-ով: Որոշե՛ք NO₂-ի առաջացման միջին արագությունը (մմոլ/լ · վրկ):
6. Փակ անոթում ընթանում է քիմիական ռեակցիա՝ ըստ $A + B = C$ հավասարման: Ռեակցիան սկսվելուց 10 րոպե հետո A նյութի կոնցենտրացիան 0,8 մոլ/լ-ից դարձել է 0,55 մոլ/լ: Որքան է ռեակցիայի միջին արագությունը (մմոլ/լ · րոպե):
7. 10 °C ջերմաստիճանում ռեակցիայի արագությունը հավասար է 0,5 մոլ/լ · րոպե: Որքան է ռեակցիայի արագությունը (մոլ/լ · րոպե) 50 °C ջերմաստիճանում, եթե ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 2$:
8. Քանի անգամ կմեծանա ռեակցիայի արագությունը ջերմաստիճանը 30 °C-ից մինչ 70 °C բարձրացնելիս, եթե ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 2$:
9. Քիմիական ռեակցիայի արագությունը 20 °C ջերմաստիճանում հավասար է 2 մոլ/լ · վրկ, իսկ 50 °C ջերմաստիճանում՝ 16 մոլ/լ · վրկ: Որքան է ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը (γ):
10. Քանի անգամ կմեծանա $2NO + O_2 = 2NO_2$ համասեռ ռեակցիայի արագությունը, եթե էլակյութերից յուրաքանչյուրի մոլային կոնցենտրացիան մեծացվի 2 անգամ:
11. $A + B = C + D$ ռեակցիան սկսվելուց որոշ ժամանակ անց A նյութի կոնցենտրացիան փոքրացել է մինչև 3 մոլ/լ: Քանի անգամ է փոքրացել ռեակցիայի արագությունը, եթե A նյութի սկզբնական կոնցենտրացիան եղել է 5 մոլ/լ, իսկ B նյութինը՝ 3 մոլ/լ:

12. Քանի՞ անգամ կփոխվի փակ անոթում իրականացվող $2\text{NO}_{(գազ)} + \text{O}_{2(գազ)} = 2\text{NO}_{2(գազ)}$ ռեակցիայի արագությունը, եթե ձնշումն այդ անոթում մեծացվի 2 անգամ:
13. Քանի՞ անգամ կփոքրանա ռեակցիայի միջին արագությունը, եթե համակարգում ջերմաստիճանը $90\text{ }^\circ\text{C}$ -ից իջեցվի մինչև $60\text{ }^\circ\text{C}$: Ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 3$:
14. Քանի՞ անգամ կմեծանա պարզ նյութերից յոդաջրածնի ստացման ռեակցիայի արագությունը, եթե ջերմաստիճանը $20\text{ }^\circ\text{C}$ -ից բարձրացվի մինչև $170\text{ }^\circ\text{C}$: Հայտնի է, որ ջերմաստիճանը $25\text{ }^\circ\text{C}$ -ով բարձրացնելիս ռեակցիայի արագությունը մեծանում է 3 անգամ:
15. Ինչ զանգվածով (գ) պրոպեն կստացվի 5 դմ^3 ծավալով անոթում 60 վայրկյանի ընթացքում, եթե դրա առաջացման միջին արագությունը $0,02\text{ մոլ/դմ}^3 \cdot \text{վրկ}$ է:
16. Ջերմաստիճանը $60\text{ }^\circ\text{C}$ -ից $80\text{ }^\circ\text{C}$ բարձրացնելիս ռեակցիայի արագությունը մեծանում է 4 անգամ: $80\text{ }^\circ\text{C}$ ջերմաստիճանում ռեակցիան ընթանում է 5 վրկ-ում: Քանի՞ վրկ-ում կընթանա ռեակցիան $50\text{ }^\circ\text{C}$ ջերմաստիճանում:
17. Տաքացման պայմաններում խառնել են 4 լ ջրածնի և 1 լ յոդի գոլորշին: Որոշ ժամանակ անց ստացվել է հավասարակշռային խառնուրդ, որում յոդաջրածնի ծավալային բաժինը 8% է: Որքան է ջրածնի ծավալային բաժինը (%) հավասարակշռային խառնուրդում:
18. Ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 3$: Քանի՞ անգամ կարագանա ռեակցիան, եթե համակարգում ջերմաստիճանը բարձրացվի $40\text{ }^\circ\text{C}$ -ով:
19. Ամոնիակի մասնակի քայքայումից ձնշումը փակ անոթում մեծացել է 60% -ով: Քանի՞ տոկոսով (%) կպակասի անոթում ստացված գազային խառնուրդի քանակը, եթե այն անցկացվի ծծմբական թթվի ջրային լուծույթով:
20. Որքան է $\text{A}_{(գազ)} + \text{B}_{(գազ)} \rightleftharpoons \text{C}_{(գազ)} + \text{D}_{(գազ)}$ դարձելի ռեակցիայի հավասարակշռության հաստատունի արժեքը, եթե ելանյութերի սկզբնական կոնցենտրացիաներն են $\text{A} = 3\text{ մոլ/լ}$, $\text{B} = 3\text{ մոլ/լ}$, իսկ $[\text{C}]$ վերջանյութի հավասարակշռային կոնցենտրացիան՝ 2 մոլ/լ :
21. Պարզ նյութերից մեթանի ստացման ռեակցիայի արդյունքում հաստատված հավասարակշռային խառնուրդում մեթանի ծավալային բաժինը 60% է: Որքան է ջրածնի փոխարկման աստիճանը (%):
- 22–23. Հաստատուն ձնշման տակ ընթացող $2\text{CO}_{(գազ)} + \text{O}_{2(գազ)} \rightarrow 2\text{CO}_{2(գազ)}$ համասեռ ռեակցիայի միջին արագությունն ըստ CO -ի հավասար է $0,05\text{ մոլ/լ} \cdot \text{վրկ}$, իսկ CO նյութի սկզբնական կոնցենտրացիան՝ $4,0\text{ մոլ/լ}$:
22. Քանի՞ վայրկյան հետո CO նյութի կոնցենտրացիան կդառնա $2,5\text{ մոլ/լ}$:
23. Ինչ զանգվածով (գ) CO_2 կպարունակվի 1 լ ռեակցիոն խառնուրդում 30 վրկ հետո:

- 24–25. Գազային նյութերի միջև ռեակցիան ընթանում է ըստ $A_{(գազ)} + B_{(գազ)} = C$ հավասարման, իսկ այդ ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը՝ $\gamma = 2$:
24. Քանի՞ անգամ կմեծանա ռեակցիայի արագությունը, եթե համակարգում ձնշումը մեծացվի 3 անգամ:
25. Քանի՞ անգամ կփոքրանա ռեակցիայի արագությունը, եթե ջերմաստիճանը իջեցվի 20°C -ով:
- 26–27. Ջրածնի և ազոտի 4 : 1 մոլային հարաբերությամբ խառնուրդը կատալիզորդի առկայությամբ փոխազդեցության մեջ դնելիս ստացվել է նոր խառնուրդ, որի խտությունն ըստ հելիումի 2 է:
26. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ամոնիակ կստացվի, եթե սկզբնական խառնուրդը 2,5 մոլ ազոտ է պարունակում:
27. Որքան է ամոնիակի ստացման ռեակցիայի ելքը (%):
- 28–29. Փակ համակարգում ստեղծվել է $A_{2(գազ)} + 2B_{(գազ)} \rightleftharpoons 2AB_{(գազ)}$ հավասարակշռությունը:
28. Որքան է հավասարակշռության հաստատունի արժեքը (լ/մոլ), եթե նյութերի հավասարակշռային կոնցենտրացիաներն են $[AB] = 1$ մոլ/լ, $[B] = 1$ մոլ/լ, $[A_2] = 0,5$ մոլ/լ:
29. Որքան է եղել A_2 նյութի կոնցենտրացիան սկզբնական խառնուրդում:
- 30–31. Երկու համարակալված (1 և 2) փակ անոթներում տեղադրել են 1-ական մոլ I_2 -ի գոլորշի և տաքացրել տարբեր ջերմաստիճաններում: Երկու անոթներում էլ ստեղծվել է $I_{2(գազ)} \rightleftharpoons 2I_{(գազ)}$ հավասարակշռություն: Առաջին անոթում խառնուրդի միջին մոլային զանգվածը եղել է 203,2 գ/մոլ, իսկ երկրորդում՝ 158,75 գ/մոլ:
30. Որքան է չտրոհված յոդի մոլեկուլների նյութաքանակը (մմոլ) առաջին անոթում:
31. Որքան է գոյացած յոդի ատոմների նյութաքանակը (մմոլ) երկրորդ անոթում:
- 32–33. Կատալիզորդի առկայությամբ տաքացրել են ծծմբի(IV) օքսիդի, ծծմբի(VI) օքսիդի և թթվածնի 240 լ (ն. պ.) հավասարամոլային գազային խառնուրդը: Տաքացումից հետո ստացված խառնուրդում ծծմբի(VI) օքսիդի ծավալային բաժինը կազմել է 18,75 %:
32. Որքան է ծծմբի(IV) օքսիդի քանակը (մոլ) վերջնական խառնուրդում:

33. Քանի՞ լիտր (ն. պ.) մեթան կայրվի վերջնական խառնուրդում:

34–36. Ազոտի և ամոնիակի 40 լ (ն. պ.) խառնուրդին ավելացրել են 20 լ (ն. պ.) քլորաջրածին: Փոխազդեցության ավարտից հետո մնացել է ըստ հելիումի 5,9 հարաբերական խտությամբ գազային խառնուրդ:

34. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

35. Ինչ ծավալով (լ, ն. պ.) օդ կպահանջվի սկզբնական խառնուրդում պարունակվող ամոնիակի կատալիտիկ օքսիդացման համար:

36. Ինչ զանգվածով (գ) երկաթի(II) օքսիդ կարելի է վերականգնել սկզբնական խառնուրդում պարունակվող ամոնիակով:

37–39. Ազոտի և ամոնիակի 70 լ (ն. պ.) խառնուրդին ավելացրել են 42 լ (ն. պ.) քլորաջրածին: Փոխազդեցության ավարտից հետո մնացել է 30,125 միջին մոլային զանգվածով գազային խառնուրդ:

37. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

38. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին կպահանջվի սկզբնական խառնուրդում պարունակվող ամոնիակն այրելու համար:

39. Ինչ զանգվածով (գ) երկաթի(III) օքսիդ կարելի է վերականգնել սկզբնական խառնուրդում պարունակվող ամոնիակով:

40–42. 3,6 գ զանգվածով քացախաթթու պարունակող 3,6 լ տարողությամբ անոթում 177°C -ում հաստատվել է $2\text{CH}_3\text{COOH} \rightleftharpoons (\text{CH}_3\text{COOH})_2$ հավասարակշռությունը, և գոյորշու ճնշումն անոթում դարձել է 41,5 կՊա ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$):

40. Որքան է գազային ֆազում քացախաթթվի և դրա դիմերի գումարային նյութաքանակը (մմոլ):

41. Որքան է դիմերի մոլային բաժինը (%) խառնուրդում:


42. Որքան է դիմերման գործընթացի հավասարակշռության հաստատունի թվային արժեքը:

**1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին:
Քիմիական հավասարակշռություն**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	15	252	29	1
2	6	16	40	30	750
3	2	17	76	31	1200
4	30	18	81	32	5
5	40	19	25	33	48
6	25	20	4	34	30
7	8	21	75	35	175
8	16	22	30	36	135
9	2	23	66	37	60
10	8	24	9	38	21
11	5	25	4	39	100
12	8	26	28	40	40
13	27	27	25	41	50
14	729	28	2	42	50

1.2.3. Քիմիական ռեակցիայի ջերմեֆեկտ: Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ: Ջերմաքիմիական հավասարումներ

1. Որքան է $2\text{Cu} + \text{O}_2 = 2\text{CuO}$ ռեակցիայի ջերմեֆեկտը (կՋ), եթե $Q_{(\text{գոյ})}(\text{CuO}) = 202$ կՋ/մոլ է:
2. Որքան է $3\text{Fe} + 2\text{O}_2 = \text{Fe}_3\text{O}_4$ ռեակցիայի ջերմեֆեկտը (կՋ), եթե $Q_{(\text{գոյ})}(\text{Fe}_3\text{O}_4) = 1117$ կՋ/մոլ է:
3. AB_3 բաղադրությամբ աղի լուծման ջերմությունը 52,0 կՋ/մոլ է: Որքան ջերմություն (կՋ) կանջատվի այդ աղի իոնների 2,0 մոլ/լ գումարային կոնցենտրացիայով 500 սմ³ լուծույթ պատրաստելիս:
4. Նատրիումի սուլֆատի 180 գ լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի իներտ էլեկտրոդներով: Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ աղի զանգվածային բաժինը լուծույթում կրկնապատկվել է: Որքան ջերմություն (կՋ) կանջատվի, եթե էլեկտրոդների վրա անջատված գազերն անմնացորդ փոխազդեն (պարզ նյութերից մեկ մոլ ջուր առաջանալիս անջատվում է 286 կՋ ջերմություն):
5. Ծծմբական թթվի՝ ջրում լուծման ջերմությունը 92 կՋ/մոլ է: Որքան ջերմություն (կՋ) կանջատվի ծծմբական թթվի 49% զանգվածային բաժնով 200 գ լուծույթ պատրաստելիս:
6. H-Cl կապի էներգիան 431 կՋ/մոլ է, իսկ H-H և Cl-Cl կապերինը՝ համապատասխանաբար 436 կՋ/մոլ և 242 կՋ/մոլ: Ինչ քանակով ջերմություն (կՋ) կանջատվի պարզ նյութերից 1 մոլ քլորաջրածին գոյանալիս:
7. H-H քիմիական կապի էներգիան $7 \cdot 10^{-19}$ Ջ է: Որքան է ատոմներից 40 գ ջրածին ստանալիս անջատվող ջերմությունը (կՋ):
8. Օգտվելով հետևյալ էներգիական դիագրամից՝ գտե՛ք $\text{A} + \text{B} = \text{C}$ ռեակցիայի ջերմեֆեկտը (կՋ):




9. Թթվածնի ֆտորիդի՝ OF_2 , գոյացման ջերմությունը 22 կՋ/մոլ է: Որքան է O-F կապի էներգիան (կՋ/մոլ), եթե O_2 և F_2 մոլեկուլներում կապերի էներգիաները համապատասխանաբար 498 կՋ/մոլ և 159 կՋ/մոլ են:

10. Էթանի և բութանի 67,2 լ (ն. պ.) խառնուրդի այրումից անջատվել է 6855 կՋ ջերմություն: Որքան է էթանի զանգվածը (գ) խառնուրդում, եթե էթանի և բութանի այրման ջերմությունները համապատասխանաբար 1541 կՋ/մոլ և 2657 կՋ/մոլ են:

11. Ինչ քանակությամբ (կՋ) ջերմություն է կլանվել, եթե 200 գ կալցիումի կարբոնատի ջերմային քայքայումից առաջացած կալցիումի օքսիդը փոխազդել է ածխի ավելցուկի հետ՝ ըստ հետևյալ ջերմաքիմիական հավասարման.




12. Ինչ քանակությամբ (կՋ) ջերմություն է անջատվել ծծմբածխածինը լրիվ այրելիս, եթե առաջացած ծծմբի(IV) օքսիդից համապատասխան փոխարկումներով ստացվել է 392 գ ծծմբական թթու: Ծծմբածխածնի այրման ջերմաքիմիական հավասարումն է.




13. 3,0 գ մագնեզիումն այրելիս անջատվել է 75,25 կՋ ջերմություն: Որքան է մագնեզիումի օքսիդի գոյացման ջերմությունը (կՋ/մոլ):

14. Ինչ քանակությամբ ջերմություն (կՋ) կծախսվի 24 գ շիկացած ածխի վրայով ջրային գոլորշիներ անցկացնելիս՝ ըստ հետևյալ հավասարման.





$$Q_{(գոյ)}(\text{H}_2\text{O}) = 286 \text{ կՋ/մոլ}, Q_{(գոյ)}(\text{CO}) = 112 \text{ կՋ/մոլ}$$

15. Ռեակցիային համապատասխանում է հետևյալ էներգիական գծապատկերը: Որքան է ռեակցիայի ջերմությունը (կՋ):



16. Որքան է $A + 2B = D$ ռեակցիայի ջերմաքիմիականը (կՋ), եթե A, B և D միացությունների գոյացման ջերմություններն են՝ $Q_{(գոյ)}(A) = 100 \text{ կՋ/մոլ}$, $Q_{(գոյ)}(B) = 150 \text{ կՋ/մոլ}$, $Q_{(գոյ)}(D) = 200 \text{ կՋ/մոլ}$:

17–18. Արսենի(III) օքսիդի փոխազդեցությունը թթվածնի և օզոնի հետ արտահայտվում է հետևյալ ջերմաքիմիական հավասարումներով.



17. Որքան է $O_{2(q_{ազ})} = 2/3O_{3(q_{ազ})}$ ռեակցիայի ջերմեֆեկտն (կՋ) ըստ ջերմաքիմիական հավասարումների:

18. Որքան ջերմություն (կՋ) կպահանջվի 112 լ (ն. պ.) թթվածինը լիովին օզոնի վերածելիս:

19–20. Թթվածնում ալյումինի այրման ռեակցիայի ջերմեֆեկտը 1670 կՋ/մոլ է:

19. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի 21,6 գ ալյումինը թթվածնում այրելիս:

20. Ինչ զանգվածով (գ) ալյումին է այրվել, եթե անջատվել է 5010 կՋ ջերմություն:

21–22. Սննդանյութում ջրի, սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի զանգվածային բաժինները համապատասխանաբար հավասար են 50 %, 30 %, 15 % և 5 %:

21. Որքան է 700 գ զանգվածով սննդանյութի կալորիականությունը (կՋ), եթե սպիտակուցների և ածխաջրերի կալորիականությունը 17 կՋ/գ է, իսկ ճարպերինը՝ 39 կՋ/գ:

22. Որքան կլիներ նույն զանգվածով սննդանյութի կալորիականությունը (կՋ), եթե դրանում սպիտակուցների զանգվածային բաժինը ավելանար 10 %-ով, իսկ ճարպերինը՝ պակասեր նույն չափով:

23–24. Պղնձի(II) քլորիդի լուծույթի մեջ ընկղմել են երկաթե թիթեղ: Որոշ ժամանակ անց, երբ թիթեղի զանգվածը փոխվել է 16 գ-ով, այն հանել են, չորացրել, օքսիդացրել մինչև MeO օքսիդներ՝ ծախսվելով 78,4 լ (ն. պ.) թթվածին:

23. Որքան է երկաթե թիթեղի վրա անջատված պղնձի զանգվածը (գ):


24. Որքան է թիթեղի օքսիդացման ժամանակ անջատված ջերմության քանակը (կՋ), եթե CuO -ի և FeO -ի գոյացման ջերմությունները համապատասխանաբար հավասար են 267,5 կՋ/մոլ և 202 կՋ/մոլ:

25–26. Մեթանի և ացետիլենի որոշակի ծավալով (ն. պ.) խառնուրդը լրիվ այրելիս ծախսվել է 179,2 լ (ն. պ.) թթվածին, և անջատվել է 4177 կՋ ջերմություն: 1 մոլ մեթանի այրումից անջատվում է 1045 կՋ, իսկ մեկ մոլ ացետիլենի այրումից՝ 1305 կՋ ջերմություն:

25. Որքան է մեթանի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

26. Որքան է ելային խառնուրդի լրիվ հիդրումից ստացված գազային խառնուրդի զանգվածը (գ):

27–29. Մեթանի այրման ռեակցիայի հավասարումն է.



իսկ ռեակցիային մասնակցող նյութերի գոյացման ջերմություններն են.


$$Q_{\text{գոյ}}(\text{CO}_2) = 394 \text{ կՋ/մոլ}, Q_{\text{գոյ}}(\text{H}_2\text{O}) = 286 \text{ կՋ/մոլ}, Q_{\text{գոյ}}(\text{CH}_4) = 75 \text{ կՋ/մոլ}:$$

27. Որքան է մեթանի այրման ռեակցիայի ջերմությունը (կՋ/մոլ):

28. Ինչ քանակով ջերմություն (կՋ) կանջատվի 32 գ մեթանն այրելիս:

29. Ինչ զանգվածային բաժնով (%) աղ կառաջանա 32 գ մեթանի այրման արգասիքները 280 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող 1220 գ լուծույթի մեջ անցկացնելիս:

30–32. *Գլյուկոզի սպիրտային խմորումն ընթանում է ըստ հետևյալ հավասարման.*



իսկ ռեակցիային մասնակցող նյութերի գոյացման ջերմություններն են.


$$Q_{\text{գոյ}}(\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6) = 1263 \text{ կՋ/մոլ}, Q_{\text{գոյ}}(\text{C}_2\text{H}_5\text{OH}) = 277 \text{ կՋ/մոլ}, Q_{\text{գոյ}}(\text{CO}_2) = 393,5 \text{ կՋ/մոլ}:$$

30. Որքան է գլյուկոզի սպիրտային խմորման ռեակցիայի ջերմեֆեկտը (կՋ):

31. Ինչ զանգվածով (գ) գլյուկոզ է ենթարկվել խմորման, եթե անջատվել է 195 կՋ ջերմություն:

32. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի 450 գ գլյուկոզի կաթնաթթվային խմորումից ստացված կաթնաթթվի և անհրաժեշտ քանակով մետաղական նատրիումի փոխազդեցությունից:

33–35. *Որոշակի քանակով ացետիլենն այրելիս անջատվել է 1631,25 կՋ ջերմություն, իսկ ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումն է.*



33. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ացետիլեն է այրվել:

34. Ինչ զանգվածով (գ) մեթանի այրումից կստացվի այնքան ածխածնի(IV) օքսիդ, որքան առաջացել է ելային քանակով ացետիլենի այրումից:

35. Որքան է ելային քանակով ացետիլենի ստացման համար անհրաժեշտ կալցիումի կարբիդի զանգվածը (գ):

36-38. Երկաթի և ալյումինի 357 գ խառնուրդը քանակապես փոխազդել է 985,5 գ քլորաջրածին պարունակող լուծույթի հետ, իսկ անջատված գազն օգտագործել են ամոնիակ սինթեզելու համար:

36. Ինչ քանակով ջերմություն (կՋ) կանջատվի, եթե ամոնիակի սինթեզի ջերմաքիմիական հավասարումն է $1/2N_{2(գազ)} + 3/2H_{2(գազ)} = NH_{3(գազ)} + 46 կՋ$:

37. Որքան է ելային խառնուրդում երկաթի մոլային բաժինը (%):

38. Ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդի 25 % զանգվածային բաժնով լուծույթ կպահանջվի ելային խառնուրդում պարունակվող ալյումինը $Na[Al(OH)_4 \cdot 2H_2O]$ միացության վերածելու համար:

**1.2.3. Քիմիական ռեակցիայի ջերմէֆեկտ:
Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ:
Ջերմաքիմիական հավասարումներ**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	404	14	348	27	891
2	1117	15	60	28	1782
3	13	16	200	29	20
4	1430	17	95	30	78
5	92	18	475	31	450
6	92	19	1336	32	112
7	8428	20	81	33	28
8	30	21	8260	34	40
9	215	22	6720	35	80
10	30	23	128	36	414
11	920	24	1545	37	30
12	2160	25	16	38	1120
13	602	26	88		

1.2.4. Լուծույթներ: Դիսպերս համակարգեր, կոլոիդ համակարգեր, սուսպենզիաներ և իսկական լուծույթներ: Լուծույթների քանակական բաղադրության արտահայտման ձևերը. լուծված նյութի զանգվածային բաժին, մոլային կոնցենտրացիա

1. Որոշակի ջերմաստիճանում աղի լուծելիությունը 14,5 գ է 100 գ ջրում: Ի՞նչ զանգվածով (գ) հազեցած լուծույթ կստացվի տվյալ ջերմաստիճանում 58 գ աղից:
2. Ծծմբական թթվի 37,5 % զանգվածային բաժնով 400 գ լուծույթից գոլորշացմամբ 100 գ ջուր է հեռացվել: Որքան է ծծմբական թթվի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:
3. Կալցիումը փոխազդել է 915,5 մլ ջրի հետ, և առաջացել է ստացված նյութի 2 % զանգվածային բաժնով լուծույթ: Որքան է փոխազդած կալցիումի զանգվածը (գ):
4. Կալիումի նիտրատի լուծելիությունը 60 °C ջերմաստիճանում 120 գ է 100 գ ջրում: Ի՞նչ զանգվածով (գ) աղ պետք է լուծել ջրում նշված ջերմաստիճանում 550 գ հազեցած լուծույթ պատրաստելու համար:
5. Ծծմբական թթվի 9 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթում թթվի զանգվածային բաժինը 61,74 % է: Որքան է 1000 գ զանգվածով այդպիսի լուծույթի ծավալը (մլ):
6. Պատրաստել են KBr, KNO₃, CaCl₂ և Na₂SO₄ աղերի միևնույն մոլային կոնցենտրացիայով լուծույթներ: Որքան է այն աղի մոլային զանգվածը (գ/մոլ), որի զանգվածային բաժինը լուծույթում առավել մեծ է (ընդունել, որ լուծույթներն ունեն նույն խտությունը):
7. Որոշակի ծավալով ջրում լուծել են 224 գ չհանգած կիր և ստացված սուսպենզիայի մեջ բաց թողել այնքան ածխածնի(IV) օքսիդ, որ համակարգում նստվածք չմնա: Որքան է ծախսված ածխածնի(IV) օքսիդի զանգվածը (գ):
8. 10 °C ջերմաստիճանում աղի լուծելիությունը 12 գ է 100 գ ջրում, իսկ 70 °C-ում՝ 28 գ: Ի՞նչ զանգվածով (գ) աղ կնստի 70 °C ջերմաստիճանում հազեցած 752 գ զանգվածով լուծույթից այն մինչև 10 °C սառեցնելիս:
9. Մեկ մոլ նատրիումի հիդրօքսիդը ջրում լուծելիս անջատվում է 37 կՋ ջերմություն: Որքան է հիդրօքսիդ իոնների հիդրատացման ջերմությունը (կՋ/մոլ), եթե Na⁺ իոնների հիդրատացման և նատրիումի հիդրօքսիդի բյուրեղավանդակի էներգիաները համապատասխանաբար հավասար են 410 կՋ/մոլ և 884 կՋ/մոլ:
10. Պատրաստել են նատրիումի սուլֆիտի 8 % զանգվածային բաժնով 5 լ լուծույթ ($\rho = 1,075$ գ/մլ): Որքան է օգտագործված աղի զանգվածը (գ):

11. Ի՞նչ զանգվածով (գ) $MgSO_4 \cdot 6H_2O$ բյուրեղահիդրատ պետք լուծել ջրում 290 գ հազեցած լուծույթ պատրաստելու համար, եթե անջուր աղի լուծելիությունը 45 գ է 100 գ ջրում:
12. Ի՞նչ զանգվածով (գ) ջրում պետք է լուծել 398 գ $FeCl_2 \cdot 4H_2O$ բյուրեղահիդրատը՝ անջուր աղի 25,4 % զանգվածային բաժնով լուծույթ ստանալու համար:
13. Խառնել են քացախաթթվի 600 մլ 6 մոլ/լ և լիթիումի հիդրօքսիդի 400 մլ 5 մոլ/լ կոնցենտրացիաներով լուծույթներ: Որքան է աղի կոնցենտրացիան (մոլ/լ) լուծույթում, եթե խառնելիս լուծույթների ծավալները գումարվել են:
- 14–15. Կալիումի պերմանգանատի 8 մոլ/լ կոնցենտրացիայով 500 մլ լուծույթը փոխազդեցության մեջ են դրել քլորաջրածնի 10 մոլ/լ կոնցենտրացիայով 4 լ աղաթթվի հետ:*
14. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) գազային քլոր է ստացվել:
15. Ի՞նչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 44,8 % զանգվածային բաժնով լուծույթ կպահանջվի քլորի հեռացումից հետո մնացած լուծույթում թթուն չեզոքացնելու համար:
- 16–17. Որոշակի զանգվածով ցինկի և 20 % զանգվածային բաժնով քլորաջրածնային թթվի ($\rho = 1,095$ գ/մլ) փոխազդեցությունից առացված ջրածնով հնարավոր է վերականգնել 40,8 գ քրոմի(II) օքսիդ:*
16. Որքան է ցինկի զանգվածը (գ):
17. Որքան է ծախսված աղաթթվի ծավալը (մլ):
- 18–19. Նատրիումի հիդրօքսիդի 8 % զանգվածային բաժնով 150 գ լուծույթի հետ անմաքորդ փոխազդել է 6,4 գ ծծմբի այրումից առաջացած գազը:*
18. Որքան է փոխազդած $NaOH$ -ի զանգվածը (գ):
19. Որքան է լուծույթում առաջացած նատրիումի սուլֆիտի և հիդրոսուլֆիտի գումարային զանգվածը (գ):
- 20–21. Ամոնիակի 2,3 % զանգվածային բաժնով 500 գ լուծույթ պատրաստելու համար ամոնիակի 10 % զանգվածային բաժնով լուծույթը ($\rho = 0,92$ գ/մլ) ջրով նստացրել են:*
20. Որքան է ամոնիակի 10 % զանգվածային բաժնով լուծույթի ծավալը (մլ):
21. Ի՞նչ զանգվածով (գ) ջուր են ավելացրել:

22-23. Կալիումի կարբոնատի 40 % զանգվածային բաժնով 207 գ լուծույթին ավելացրել են 6,25 մոլ/լ կոնցենտրացիայով 144 մլ ազոտական թթու: Ստացվել է 363,6 գ լուծույթ ($\rho = 1,212$ գ/մլ):

22. Որքան է չեզոք աղի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

23. Որքան է թթու աղի կոնցենտրացիան (մոլ/լ) վերջնական լուծույթում:

24-25. Մետաղական կալցիումի 3 գ զանգվածով նմուշը լուծել են 51,3 գ ջրում և ստացել սուսպենզիա, որն իսկական լուծույթի վերածելու համար դրա մեջ անցկացրել են ածխածնի(IV) օքսիդ:

24. Որքան է ծախսված ածխածնի(IV) օքսիդի զանգվածը (մգ):

25. Որքան է լուծույթում առկա նյութի զանգվածային բաժինը (%):

26-27. Ծծմբի(VI) օքսիդի 20 գ նմուշը լուծել են 49 գ ծծմբական թթու պարունակող 470 գ լուծույթում:

26. Որքան է ծծմբական թթվի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

27. Ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ է անհրաժեշտ ավելացնել ստացված լուծույթին՝ աղերի հավասար քանակներ պարունակող լուծույթ ստանալու համար:

28-29. Նատրիումի հիդրօքսիդի 3,6 % զանգվածային բաժնով 200 գ լուծույթին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի 4 % զանգվածային բաժնով 20 գ լուծույթ և ստացել նոր լուծույթ, որի $\rho = 1,1$ գ/սմ³:

28. Որքան է նատրիումի հիդրօքսիդի մոլային կոնցենտրացիան (մոլ/լ) ստացված լուծույթում:

29. Ինչ զանգվածով (մգ) նստվածք կգոյանա ստացված լուծույթի 1/10 մասի վրա անհրաժեշտ քանակով պղնձարջասպ ավելացնելիս:

30-31. Պղնձարջասպի 125 գ զանգվածով նմուշը լուծել են 375 գ ջրում, ստացված լուծույթին ավելացրել փոխազդեցության համար անհրաժեշտ քանակով նատրիումի հիդրօքսիդ պարունակող 259 գ լուծույթ, իսկ ստացված նստվածքն առանձնացրել են ֆիլտրումով:

30. Որքան է պղնձի սուլֆատի զանգվածային բաժինը (%) պղնձարջասպի լուծույթում:

31. Որքան է նստվածքը հեռացնելուց հետո լուծույթում մնացած նյութի զանգվածային բաժինը (%):
- 32–33. Նատրիումի ֆոսֆատի բյուրեղահիդրատի 380 գ զանգվածով նմուշը լուծել են որոշակի ծավալով ջրում և ստացել 1,5 դմ³ լուծույթ, որում նատրիումի իոնների կոնցենտրացիան 2 մոլ/դմ³ է:
32. Որքան է նատրիումի իոնների քանակը (մոլ) լուծույթում:
33. Որքան է բյուրեղաջրի քանակը (մոլ) մեկ մոլ բյուրեղահիդրատում:
- 34–35. 40 °C ջերմաստիճանում $KAl(SO_4)_2$ աղի լուծելիությունը 40 գ է 100 գ ջրում: Այդ աղի 451,5 գ հազեցած լուծույթին ավելացրել են 3 մոլ/լ կոնցենտրացիայով կալիումի հիդրօքսիդի լուծույթ՝ մինչև նստվածքագոյացման ավարտը:
34. Որքան է ծախսված ավելալու լուծույթի ծավալը (մլ):
35. Որքան է կալիումի սուլֆատի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:
- 36–38. Արծաթի նիտրատի 20 °C ջերմաստիճանում հազեցած 540 գ լուծույթին (լուծելիությունը՝ 170 գ 100 գ ջրում) ավելացրել են նատրիումի քլորիդի 58,5 % զանգվածային բաժնով լուծույթ մինչև նստվածքագոյացման ավարտը:
36. Որքան է Ag^+ իոնների զանգվածը (գ) 540 գ հազեցած լուծույթում:
37. Որքան է ծախսված նատրիումի քլորիդի լուծույթի զանգվածը (գ):
38. Որքան է նիտրատ իոնների քանակը (մոլ) վերջնական լուծույթում:
- 39–41. Կալցիումի հիդրօքսիդի 5 % զանգվածային բաժնով 2960 գ կրաջրի մեջ ծծմբի(IV) և ածխածնի(II) օքսիդների (ըստ հելիումի՝ 8,8 հարաբերական խտությամբ) 224 լ (ն. պ.) խառնուրդ անցկացնելիս ստացվել է սուսպենզիա:
39. Որքան է սուսպենզիա առաջացնող նյութի զանգվածը (գ):
40. Որքան է ածխածնի (II) օքսիդի ծավալային բաժինը (%) նշված գազային խառնուրդում:
41. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազային խառնուրդ պետք է անցկացնել սուսպենզիայի մեջ այն թափանցիկ լուծույթի փոխարկելու համար:

42–44. Երկաթի 0,06 մոլ քանակով նմուշը լուծել են քլորաջրածնի 18,5 % զանգվածային բաժնով 160 գ աղաթթվում: Անջատված գազն անցկացրել են 6,4 գ տաք պղնձի(II) օքսիդի վրայով, իսկ ստացված պինդ մնացորդը՝ լուծել ազոտական թթվի 30 % զանգվածային բաժնով լուծույթում ($\rho = 1,2$ գ/մլ):

42. Որքան է անջատված գազի զանգվածը (մգ):

43. Որքան է ստացված պինդ մնացորդում նյութերի գումարային նյութաքանակը (մմոլ):

44. Որքան է ծախսված ազոտական թթվի լուծույթի ծավալը (մլ):

45–47. Մետաղական կալցիումի և կալցիումի հիդրիդի 2 : 1 մոլային հարաբերությամբ որոշակի զանգվածով խառնուրդին ավելացրել են 80 գ կալցիումի կարբիդ և ստացված խառնուրդը մշակել են ջրի մեծ ավելցուկով: Ստացվել է լուծույթ, և անջատվել է գազերի խառնուրդ: Գազային խառնուրդը տաք նիկելի կատալիզորդի վրայով անցկացնելիս ստացվել է 28,4 գ/մոլ միջին մոլային զանգվածով ածխաջրածինների խառնուրդ:

45. Որքան է մետաղական կալցիումի զանգվածը (գ) սկզբնական խառնուրդում:

46. Որքան է մեծ մոլային զանգվածով գազի ծավալային բաժինը (%) ածխաջրածինների խառնուրդում:

47. Ինչ զանգվածով (գ) ծծմբի(IV) օքսիդ կպահանջվի ստացված լուծույթում առկա Ca^{2+} իոնները լրիվ նստեցնելու համար:

1.2.4. Լուծույթներ: Դիսպերս համակարգեր, կոլոիդ համակարգեր, սուսպենզիաներ և իսկական լուծույթներ: Լուծույթների քանակական բաղադրության արտահայտման ձևերը. լուծված նյութի զանգվածային բաժին, մոլային կոնցենտրացիա

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	458	17	200	33	12
2	50	18	12	34	500
3	10	19	23	35	174
4	300	20	125	36	216
5	700	21	385	37	200
6	142	22	25	38	2
7	352	23	1	39	240
8	94	24	6600	40	80
9	511	25	20	41	224
10	430	26	15	42	120
11	171	27	45	43	80
12	602	28	1	44	35
13	2	29	980	45	30
14	224	30	16	46	20
15	1000	31	10	47	152
16	39	32	3		

1.2.5. Էլեկտրոլիտներ և ոչ էլեկտրոլիտներ: Իոնների հատկությունները: Դիսոցման աստիճան: Իոնափոխանակային ռեակցիաները: Հիմքերի, թթուների և աղերի դիսոցումը: Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ

1. Որքան է A^+ և B^{2-} իոնների կոնցենտրացիաների (մոլ/լ) գումարը A_2B տիպի էլեկտրոլիտի 1,25 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթում, եթե էլեկտրոլիտի դիսոցման աստիճանը $\alpha = 80\%$ է:
2. Հետևյալ նյութերից՝ KOH , K_2SO_4 , HNO_3 , $C_6H_{12}O_6$, մեկի ավելացումը ջրին զգալիորեն չի ազդի լուծույթի էլեկտրահաղորդականության վրա: Որքան է այդ նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
3. Նատրիումի և հետևյալ՝ OH^- , ClO_4^- , CH_3COO^- , MnO_4^- , իոններից մեկի առաջացրած միացության ջրային լուծույթը գունավոր է: Որքան է ընտրված իոնում պրոտոնների թիվը:
4. 0,01 մոլ քացախաթթվի ջրային լուծույթում հայտնաբերվել է $6,2608 \cdot 10^{21}$ մասնիկ (իոններ և մոլեկուլներ): Որքան է թթվի դիսոցման աստիճանը (%):
5. Ծծմբական թթվի 250 մլ ծավալով լուծույթում պարունակվում է 0,1225 գ H_2SO_4 : Որքան է ջրածնի իոնների կոնցենտրացիան (մոլ/լ) լուծույթում, եթե թթուն դիսոցվել է ամբողջությամբ:
6. HX միահիմն թթվի ջրային լուծույթում HX -ի յուրաքանչյուր չդիսոցված մոլեկուլին բաժին են ընկնում 4-ական H^+ և X^- իոններ: Որքան է այդ թթվի դիսոցման աստիճանը (%):
7. Էլեկտրոլիտի $3,01 \cdot 10^{24}$ թվով մոլեկուլներ պարունակող լուծույթում դրա դիսոցման աստիճանը 80% է: Ի՞նչ քանակով (մոլ) էլեկտրոլիտ է դիսոցվել:
8. $MgCl_2$ -ի 2 լ լուծույթում պարունակվում են 284 գ Cl^- իոններ: Որքան է աղի կոնցենտրացիան (մոլ/լ) այդ լուծույթում, եթե աղը դիսոցվել է 100%-ով:
9. Պղնձի(II) քլորիդի 10% զանգվածային բաժնով 405 գ լուծույթի մեջ անցկացրել են 5,6 լ (ն. պ.) ծծմբաջրածին: Որքան է առաջացած նստվածքի զանգվածը (գ):
10. Միահիմն թույլ թթվի 0,2 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթում թթվի դիսոցման աստիճանը 0,02 է: Ի՞նչ քանակով (մոլ) մասնիկներ (չդիսոցված մոլեկուլներ և իոններ) են պարունակվում այդ թթվի 250 մլ լուծույթում:
11. Օրթոֆոսֆորական թթվի ջրային լուծույթում հայտնաբերվել են 0,7904 գ հիդրօքսոնիում իոններ: Այդ լուծույթի լրիվ չեզոքացման վրա ծախսվել է 33,6 գ կալիումի հիդրօքսիդ: Որքան է թթվի երկրորդ փուլի դիսոցման աստիճանը (%), եթե առաջին փուլն ընթացել է 20%-ով, իսկ երրորդ փուլով թթուն գործնականորեն չի դիսոցվել:

12. Տրված են մագնեզիումի սուլֆատ, բարիումի քլորիդ և նատրիումի կարբոնատ պարունակող լուծույթներ: Որքան է այդ նյութերի միջև զույգ առ զույգ տեղի ունեցող ռեակցիաների կրճատ իոնական հավասարումների քանակաչափական գործակիցների գումարը:
13. Որոշակի քանակով R_2SO_4 աղ պարունակող 1560 գ լուծույթին ավելացրել են անհրաժեշտ քանակով չոր բարիումի նիտրատ՝ մինչև նստվածքի առաջացման ավարտը: Նստվածքը ֆիլտրելուց հետո պարզվել է, որ ելային լուծույթի զանգվածը փոխվել է 140 գրամով, իսկ ֆիլտրատում աղի զանգվածային բաժինը կազմել է 50 %: Որքան է վերցրած սուլֆատի մոլային զանգվածը (գ/մոլ):
14. Որքան է $NaH_2PO_4 + 2NaOH = Na_3PO_4 + 2H_2O$ ռեակցիայի կրճատ իոնային հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
15. Ազոտական թթվի և նատրիումի հիդրօքսիդի միևնույն ծավալով լուծույթները պարունակում են համապատասխանաբար 15,75 գ թթու և 40 գ ալկալի: 1 մլ ալկալու լուծույթին ինչ ծավալով (մլ) թթվի լուծույթ պետք է ավելացնել, որպեսզի չեզոքացումը կատարվի լրիվ:
16. Որքան է մագնեզիումի հիդրոկարբոնատի և նատրիումի հիդրօքսիդի միջև ընթացող իոնափոխանակային ռեակցիայի կրճատ իոնական հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
17. Լուծույթում հայտնաբերվել են 2 մոլ քանակով K^+ իոններ, 4 մոլ Cl^- իոններ: Ինչ քանակով (մոլ) Na^+ իոններ կան այդ լուծույթում, եթե վերջինս այլ իոններ չի պարունակում:
18. Ալյումինի սուլֆատ պարունակող 200 մլ լուծույթում առկա են 10,8 գ զանգվածով Al^{3+} իոններ: Որքան է այդ լուծույթում իոնների գումարային կոնցենտրացիան (մոլ/լ):
19. Նատրիումի հիդրօքսիդի լուծույթին ավելացրել են փոխազդեցության համար անհրաժեշտ քանակով աղաթթու: Ստացված լուծույթի 40 մլ ծավալում առկա են 4,6 գ Na^+ իոններ: Որքան է քլորիդ իոնների կոնցենտրացիան (մոլ/լ) այդ լուծույթում:
20. Ազոտային թթվի լուծույթում իոնների չտրոհված մոլեկուլների թիվը երկու անգամ մեծ է հիդրօքսոնիում և նիտրիտ իոնների գումարային քանակից: Քանի միլիգրամ հիդրօքսոնիում իոն կառաջանա այդ թթվի 11,75 գրամը ջրում լուծելիս:
21. Որոշակի քանակով նատրիումի և կալիումի հիդրօքսիդներ պարունակող 200 մլ լուծույթի լրիվ չեզոքացման համար ծախսվել է ծծմբական թթվի 5 % զանգվածային բաժնով 588 գ լուծույթ: Որքան է ելային լուծույթում իոնների գումարային կոնցենտրացիան (մոլ/լ), եթե հիմքերը դիսոցվում են 100 %-ով:
22. Ալյումինի հիդրօքսիդի 23,4 գ նմուշը ալյումինի քլորիդի վերածելու համար ավելացրել են անհրաժեշտ քանակով 0,75 մոլ/լ կոնցենտրացիայով աղաթթու: Որքան է ծախսված աղաթթվի ծավալը (մլ):

23. Աղաթթվի նմուշին բավարար քանակով արծաթի նիտրատ ավելացնելիս անջատվել է 2,87 գ նստվածք: Կալիումի հիդրօքսիդի 2 % զանգվածային բաժնով քանի՞ գրամ լուծույթ կպահանջվի աղաթթվի այդ նմուշը լրիվ չեզոքացնելու համար:
24. Ծծմբական թթվի 49 գ լուծույթը լրիվ չեզոքացնելու համար պահանջվել է կալիումի հիդրօքսիդի 7 % զանգվածային բաժնով 40 սմ³ ($\rho = 1,00$ գ/սմ³) լուծույթ: Որքան է թթվի զանգվածային բաժինը (%) ելային լուծույթում:
25. Փոխարկումների հետևյալ շղթայում՝ $Al \xrightarrow{Cl_2} X \xrightarrow{NaOH} Y_{(լուծույթ)}$, որքան է X և Y նյութերի գումարային զանգվածը (գ), եթե փոխարկմանը մասնակցել է 2 մոլ մետաղ:
26. Նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի և ալյումինի փոխազդեցությունից անջատվել է 33,6 լ (ն. պ.) ջրածին: Որքան է փոխազդած ալյումինի զանգվածը (գ):
27. Ալյումինի և աղաթթվի փոխազդեցությունից անջատվել է 67,2 լ (ն. պ.) գազ: Որքան է փոխազդած ալյումինի զանգվածը (գ):
28. Որքան է $O_3 + CrCl_3 + KOH \rightarrow O_2 + K_2CrO_4 + KCl + H_2O$ ուրվագրին համապատասխան ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարը:
29. Որքան է $Fe_3O_4 + HNO_3 \rightarrow Fe(NO_3)_3 + NO + H_2O$ ուրվագրին համապատասխան հավասարման մեջ աղի գործակիցը:
30. Ինչ քանակով (մոլ) էլեկտրոն է ձեռք բերում մեկ մոլ օքսիդիչ նյութը հետևյալ ուրվագրով օքսիդացման-վերականգնման ռեակցիայում՝ $Fe_3O_4 + Al \rightarrow Fe + Al_2O_3$:
- 31–32. *Որոշակի զանգվածով երկտարր աղը լուծել են 371 գ ջրում: Ստացված լուծույթում հայտնաբերվել են $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6$ էլեկտրոնային բանաձևով $2,408 \cdot 10^{24}$ թվով միալիցք իոններ՝ կատիոններ և անիոններ:*
31. Որքան է լուծված աղի զանգվածը (գ):
32. Որքան է կատիոնի զանգվածային բաժինը (%) լուծույթում:
- 33–34. *Որոշակի զանգվածով աղը, որում անիոնի զանգվածային բաժինը 60 % է, լուծել են ջրում: Ստացված լուծույթում հայտնաբերվել են $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^9$ էլեկտրոնային բանաձևով $3,01 \cdot 10^{23}$ թվով երկլիցք կատիոններ և նույնքան երկլիցք անիոններ:*
33. Որքան է լուծված աղի զանգվածը (գ):
34. Ինչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա աղի լուծույթին բավարար քանակով նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս:

35–36. Յինկի քլորիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով 1 և լուծույթին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթ:

35. Ինչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա ցինկի քլորիդի նշված ծավալով լուծույթին նատրիումի հիդրօքսիդի 2 և լուծույթ ավելացնելիս:

36. Ինչ քանակով (մմոլ) նստվածք կառաջանա ցինկի քլորիդի ելային լուծույթին 2,5 և ավելի լուծույթ ավելացնելիս:

37–38. Ջրում լուծել են նատրիումի և մեկ այլ մետաղի քլորիդներ՝ 1 : 1 մոլային հարաբերությամբ: Պարզվել է, որ լուծույթում առկա են 0,5 մոլ Na^+ և 2 մոլ Cl^- իոններ:

37. Որքան է անհայտ մետաղի կարգաթիվը, եթե դրա քլորիդի զանգվածը եղել է 66,75 գ:

38. Ինչ զանգվածով (մգ) նստվածք կառաջանա, եթե քլորիդների լուծույթին ավելացվի 76 գ նատրիումի հիդրօքսիդ:

39–40. Ջրում լուծել են 160 գ ծծմբի(VI) օքսիդ և ստացել 0,5 և ծավալով լուծույթ, որում ջրածնի իոնների կոնցենտրացիան 6,8 մոլ/լ է:

39. Որքան է նյութի կոնցենտրացիան (մոլ/լ) ստացված լուծույթում:

40. Որքան է լուծույթում ստացված նյութի երկրորդ փուլի դիսոցման աստիճանը (%), եթե առաջին փուլն ընթացել է 100 %-ով:

41–42. Բարիումի քլորիդի բյուրեղահիդրատի 36,6 գ նմուշը մինչև հաստատուն զանգված տաքացնելիս զանգվածի կորուստը կազմում է 5,4 գ: Որոշակի զանգվածով այդ բյուրեղահիդրատի նմուշը լուծել են ջրում և ստացել անջուր աղի 10,4 % զանգվածային բաժնով 500 գ լուծույթ:

41. Որքան է բարիումի քլորիդի 1 մոլ բյուրեղահիդրատում բյուրեղաջրի քանակը (մոլ):

42. Ինչ զանգվածով (գ) բյուրեղահիդրատ են լուծել ջրում:

43–44. Հետևյալ շարքի՝ NaI , NaF , Na_3PO_4 , CH_3COONa , նյութերի մի մասը փոխազդում է արծաթի նիտրատի ջրային լուծույթի հետ նստվածքի առաջացմամբ:

43. Որքան է նստվածք առաջացնող անիոնների մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:

44. Որքան է համապատասխան ռեակցիաների կրճատ իոնային հավասարումներում բոլոր գործակիցների գումարը:

45–46. Հետևյալ շարքի՝ NH_4HCO_3 , NH_4NO_3 , Al_2O_3 , $ZnCl_2$, $Zn(OH)_2$, նյութերի մի մասը փոխազդում է *և՛ աղաթթվի, և՛ նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի հետ*:

45. Որքան է ընտրված նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:

46. Որքան է փոխանակման ռեակցիաների ընթացքում ստացված զազային նյութերի մեկական մոլեկուլներում կովալենտային կապերի գումարային թիվը:

47–48. Հետևյալ շարքի՝ H_3PO_4 , H_3PO_3 , HPO_3 , $HOOC-COOH$, CH_3COOH , H_2SO_4 , թթուների մի մասը երկհիմն է:

47. Որքան է երկհիմն թթուների հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:

48. Որքան է մեծ մոլային զանգվածով երկհիմն թթվի նատրիումական թթու աղի մոլային զանգվածը (գ/մոլ):

49–50. Անմնացորդ փոխազդել են 2 մոլ օրթոֆոսֆորական թթուն և 3 մոլ նատրիումի հիդրօքսիդը:

49. Որքան է մեծ մոլային զանգվածով աղի զանգվածը (գ):

50. Որքան է փոքր մոլային զանգվածով աղի քանակը (մոլ):

51–52. Մետաղի 32 գ նմուշի և 2 մոլ խիտ ազոտական թթվի փոխազդեցությունից ստացվել է 0,5 մոլ մետաղի(II) նիտրատ:

51. Որքան է մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

52. Ինչ քանակով (մոլ) էլեկտրոններ է ձեռք բերել օքսիդիչ նյութի մեկ մոլը:

53–54. Մեկ մոլ պղնձի(II) նիտրատը ենթարկվել է ջերմային քայքայման:

53. Որքան է վերականգնման արդյունքում ստացված նյութի քանակը (մոլ):

54. Որքան է օքսիդացման արդյունքում ստացված նյութի զանգվածը (գ):

55–57. Փակ անոթում բարձր ջերմաստիճանում 60 % ելքով փոխազդել են 87,5 գ երկաթի փոշին և 56 լ (ն. պ.) ջրային գոլորշին: Ռեակցիայից հետո անոթում գոյացել են գազագոլորշային խառնուրդ և պինդ մնացորդ, որն անհրաժեշտ քանակով քլորաջրածին պարունակող 1084,375 գ աղաթթվում լուծելիս ստացվել է աղերի լուծույթ:

55. Որքան է ջրածնի մոլային բաժինը (%) անոթում գոյացած գազագոլորշային խառնուրդում:

56. Պինդ մնացորդում պարզ նյութի քանակը քանի՞ անգամ է մեծ բարդ նյութի քանակից:

57. Որքան է փոքր մոլային զանգվածով աղի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

58–60. Որոշակի զանգվածով ֆոսֆորի(V) օքսիդը լուծել են տաք ջրում և ստացել 2,5 լ լուծույթ, որում հիդրօքսսնիում իոնների թիվը $6,1404 \cdot 10^{23}$ է: Լուծույթում օրթոֆոսֆորական թթուն դիսոցվել է ստաջին փուլով 20 %-ով, երկրորդ փուլով՝ 2 %-ով, երրորդ փուլով գործնականում չի դիսոցվել:

58. Որքան է ջրում լուծված ֆոսֆորի(V) օքսիդի զանգվածը (գ):

59. Որքան է թթվի կոնցենտրացիան (մոլ/լ) ստացված լուծույթում:

60. Ինչ ծավալով (լ) նատրիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթ է անհրաժեշտ ամբողջ թթուն նատրիումի հիդրոֆոսֆատի փոխարկելու համար:

61–63. 664 գ կալիումի յոդիդը անմնացորդ փոխազդել է 490 գ ծծմբական թթվի 80 % զանգվածային բաժնով լուծույթի հետ: Լուծույթը գոլորշացրել են, մնացորդն ստանձնացրել և ավելացրել բարիումի քլորիդի անհրաժեշտ քանակով լուծույթ:

61. Որքան է ծծմբական թթվի վերականգնման արգասիքի (S^{2-}) խտությունն ըստ ջրածնի:

62. Որքան է ընթացող օքսիդացման–վերականգնման ռեակցիայի գործակիցների գումարը:

63. Որքան է բարիումի քլորիդի ավելացումից հետո ստացված նստվածքի զանգվածը (գ):

64–66. Նատրիումի հիդրոկարբոնատի 77,4 գ լուծույթին, որը պարունակում է 12,2 գ հիդրոկարբոնատ իոններ, ավելացրել են չեզոքացման համար անհրաժեշտ քանակով կալցիումի հիդրօքսիդ: Ստացված անհամասեռ համակարգին ավելացրել են 10 % զանգվածային բաժնով աղաթթու մինչև զազի անջատման ավարտը:

64. Որքան է ստացված նստվածքի զանգվածը (գ):

65. Որքան է ծախսված աղաթթվի զանգվածը (գ):

66. Որքան է կալցիումի քլորիդի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

67–69. Մեկ մոլ ալյումինի նիտրատի ջերմային քայքայումից ստացված պինդ մնացորդը նատրիումի մետասալյումինատի վերածելու համար ավելացրել են անհրաժեշտ քանակից կրկնակի շատ նատրիումի հիդրօքսիդի խիտ լուծույթ: Ստացված լուծույթին ավելացրել են աղաթթվի մեծ ավելցուկ:

67. Որքան է մեծ մոլային զանգվածով աղի նյութաքանակը (մոլ) վերջնական լուծույթում:

68. Որքան է փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:

69. Որքան է ալյումինի նիտրատի ջերմային քայքայումից ստացված վերականգնման արգասիքի հարաբերական խտությունն ըստ ջրածնի:

70–72. Փոխազդեցության համար անհրաժեշտ ծավալով օդի հետ 112 լ (ն. պ.) ամոնիակի կատալիտիկ օքսիդացումից ստացված գազը խառնելիս ստացվել է նոր գազային խառնուրդ:

70. Որքան է ամոնիակի կատալիտիկ օքսիդացման ռեակցիայի հավասարման մեջ օքսիդիչ նյութի գործակիցը:

71. Որքան է նոր գազային խառնուրդի ծավալը (լ, ն. պ.):

72. Ինչ զանգվածով (գ) ազոտական թթվի 50 % զանգվածային բաժնով լուծույթ կստացվի նոր գազային խառնուրդում գտնվող ազոտի օքսիդը անհրաժեշտ թթվածնի առկայության պայմաններում ջրում լուծելիս:

**1.2.5. Էլեկտրոլիտներ և ոչ էլեկտրոլիտներ: Իոնների հատկությունները:
Դիսոցիան աստիճան: Իոնափոխանակային ռեակցիաները: Հիմքերի, թթուների և
աղերի դիսոցումը: Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3	25	423	49	142
2	180	26	27	50	1
3	57	27	54	51	64
4	4	28	31	52	1
5	10	29	9	53	2
6	80	30	8	54	16
7	4	31	149	55	50
8	2	32	15	56	2
9	24	33	80	57	10
10	51	34	49	58	355
11	4	35	198	59	2
12	9	36	1500	60	5
13	142	37	13	61	17
14	6	38	7800	62	9
15	4	39	4	63	466
16	12	40	70	64	10
17	2	41	2	65	146
18	5	42	61	66	5
19	5	43	222	67	1
20	950	44	8	68	117
21	6	45	280	69	23
22	1200	46	7	70	5
23	56	47	270	71	336
24	5	48	120	72	630

1.2.6. Էլեկտրոլիզ: Հալույթների և լուծույթների էլեկտրոլիզը: Էլեկտրոլիզի գործնական նշանակությունը

1. Հետևյալ շարքի անիոնների՝ PO_4^{3-} , I^- , NO_2^- , OH^- , մի մասը համապատասխան աղերի ջրային լուծույթների էլեկտրոլիզի ընթացքում ենթարկվում է անոդային օքսիդացման: Որքան է անոդային օքսիդացմանը մասնակցող անիոնների մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:
2. Արծաթի նիտրատ պարունակող 4000 գ լուծույթն իներտ էլեկտրոդներով էլեկտրոլիզի ենթարկելիս անոդի վրա անջատվել է 22,4 լ (ն. պ.) գազ: Որքան է աղի զանգվածային բաժինը (%) ելային լուծույթում, եթե էլեկտրոլիզը դադարեցրել են, երբ լուծույթում արծաթի իոններ չեն մնացել:
3. Կալիումի հիդրօքսիդի 22,4 % զանգվածային բաժնով 300 մլ լուծույթի ($\rho = 1,2$ գ/մլ) էլեկտրոլիզը (իններտ էլեկտրոդներ) դադարեցրել են, երբ կաթոդի վրա անջատվել է 89,6 լ (ն. պ.) գազ: Որքան է կալիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%) էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում:
4. Ինչ զանգվածով (գ) կալցիում կանջատվի կաթոդի վրա կալցիումի քլորիդի հալույթի էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներ) ընթացքում, եթե վերականգնմանը մասնակցել են $1,505 \cdot 10^{23}$ թվով էլեկտրոններ:
5. Պղնձի(II) սուլֆատի ջրային լուծույթի էլեկտրոլիզն (իններտ էլեկտրոդներ) ավարտվելուց հետո մնացած լուծույթի 1/10 մասի վրա բավարար քանակով բարիումի քլորիդ ավելացնելիս անջատվել է 29,125 գ նստվածք: Որքան է կաթոդի վրա անջատված մետաղի զանգվածը (գ):
6. Նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 690 գ ջրային լուծույթի էլեկտրոլիզն (իններտ էլեկտրոդներ) իրականացնելիս անոդի վրա անջատվել է 56 լ (ն. պ.) գազ: Որքան է նատրիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%) էլեկտրոլիզից հետո ստացված լուծույթում:
7. 30 գ նատրիումի սուլֆատ պարունակող 290 գ ջրային լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի (իններտ էլեկտրոդներ): Վերջինս դադարեցրել են այն պահին, երբ կաթոդի վրա անջատվել է 10 գ գազ: Որքան է լուծված նյութի զանգվածային բաժինը (%) էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում:
8. Կալիումի քլորիդ պարունակող 706 գ լուծույթն էլեկտրոլիզի ենթարկելիս էլեկտրոդների վրա անջատվել է ջրածին և քլորի 146 գ խառնուրդ: Որքան է ստացված լուծույթում կալիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%):
9. Ինչ զանգվածով (կգ) նատրիումի հիդրօքսիդ է ստացվել 4680 կգ նատրիումի քլորիդ պարունակող լուծույթի էլեկտրոլիզից, եթե արդյունաբերական կորուստները կազմել են 15 %:

10-11. Էլեկտրոլիզ (իներտ էլեկտրոդներ) իրականացնելիս անոդային օքսիդացման է ենթարկվել 180 գ ջուր:

10. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ է անջատվել անոդային օքսիդացման հետևանքով:

11. Որքան է անոդային օքսիդացման ընթացքում գոյացած իոնների զանգվածը (գ):

12-13. Էլեկտրոլիզ (իներտ էլեկտրոդներ) իրականացնելիս կաթոդային վերականգնման է ենթարկվել 180 գ ջուր:

12. Ինչ քանակով (մոլ) էլեկտրոն է մասնակցել այդ գործընթացին:

13. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ է գոյացել կաթոդային վերականգնման հետևանքով:

14-15. Կալիումի քլորիդի 25 % զանգվածային բաժնով 1490 գ ջրային լուծույթի էլեկտրոլիզը (իներտ էլեկտրոդներ) դադարեցրել են քլորիդ իոնների օքսիդացման ավարտին, իսկ ստացված ջրածինն ամբողջությամբ փոխարկել են ծմբաջրածնի:

14. Որքան է էլեկտրոլիզի ընթացքում անջատված գազային նյութերի գումարային ծավալը (լ, ն. պ.):

15. Որքան է ստացված ծմբաջրածնի զանգվածը (գ):

16-17. Արծաթի նիտրատի ջրային լուծույթի էլեկտրոլիզի (իներտ էլեկտրոդներ) արդյունքում ստացված լուծույթի կեսը չեզոքացնելու համար ծախսվել է կալիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 40 մլ լուծույթ ($\rho = 1,05$ գ/մլ):

16. Որքան է էլեկտրոլիզի ենթարկված արծաթի նիտրատի զանգվածը (գ):

17. Ինչ զանգվածով (գ) ազոտական թթվի 16,8 % զանգվածային բաժնով լուծույթ կպահանջվի կաթոդի վրա անջատված մետաղը լուծելու համար:

18-19. Նատրիումի հիդրօքսիդի և քլորիդի 157 գ խառնուրդը լուծել են 752 գ ջրում և լուծույթը ենթարկել էլեկտրոլիզի: Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ էլեկտրոդների վրա անջատվել է 5 մոլ քանակով գազային խառնուրդ, որում թթվածնի ծավալային բաժինը 20 % է:

18. Որքան է էլեկտրոդների վրա անջատված նյութերի զանգվածների գումարը (գ):

19. Որքան է նատրիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

20–21. Պղնձե էլեկտրոդների կիրառմամբ պղնձի(II) սուլֆատի ջրային լուծույթի էլեկտրոլիզն իրականացնելիս կաթոդի զանգվածը մեծացել է 240 գրամով, իսկ խառնուկներ պարունակող անոդի զանգվածը պակասել է 250 գրամով:

20. Որքան է որպես անոդ ծառայող պղնձում խառնուկների զանգվածային բաժինը (%) (խառնուկները չեն մասնակցում էլեկտրաքիմիական գործընթացին):

21. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանչատվի ազոտական թթվի 75,6 % զանգվածային բաժնով լուծույթի բավարար քանակի և կաթոդի վրա նստած պղնձի փոխազդեցությունից:

22–23. Պղնձե իրն արծաթապատելու նպատակով այն օգտագործել են որպես կաթոդ (որպես անոդ ծառայել է գրաֆիտե էլեկտրոդ) և իրականացրել արծաթի նիտրատ պարունակող 56,075 գ ջրային լուծույթի էլեկտրոլիզ: Էլեկտրոլիզը դադարեցրել են, երբ իրի զանգվածն ավելացել է 2,7 գրամով, իսկ անոդի վրա անջատվել է 560 մլ (ն. պ.) գազ:

22. Որքան է կաթոդի վրա անջատված գազի ծավալը (մլ, ն. պ.):

23. Որքան է թթվի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

24–26. Նատրիումի քլորիդի 2,34 % զանգվածային բաժնով 100 գ լուծույթի էլեկտրոլիզն (իներտ էլեկտրոդներ) իրականացնելիս անոդի վրա անջատվել է 0,784 լ (ն. պ.) գազային խառնուրդ, որն անցկացրել են 16,1 գ տաքացրած պղինձ պարունակող սպակյա խողովակով (գազային խառնուրդը փոխազդել է ամբողջությամբ):

24. Որքան է էլեկտրոդների վրա անջատված գազերի գումարային ծավալը (մլ, ն. պ.):

25. Որքան է ապակյա խողովակում ստացված նյութերի խառնուրդի զանգվածը (գ):

26. Որքան է ապակյա խողովակում պարունակվող խառնուրդում աղի զանգվածային բաժինը (%):

27–29. Պղնձի(II) սուլֆատ պարունակող 500 գ լուծույթի էլեկտրոլիզը (իներտ էլեկտրոդներ) դադարեցրել են լուծույթի զունագրկման պահին: Անոդի վրա անջատված գազը բավարարել է բութանից (կատալիտիկ օքսիդացում) 18 գ քաղախաթթու ստանալուն: Էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթին ավելացրել են կալիումի հիդրօքսիդի 35 % զանգվածային բաժնով 200 գ լուծույթ:

27. Որքան է կաթոդի վրա անջատված նյութի զանգվածը (գ):

28. Որքան է ելային լուծույթում աղի զանգվածային բաժինը (%):

29. Որքան է չեզոք աղի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:

30–32. Իներտ էլեկտրոդներով էլեկտրոլիզի են ենթարկել 31,75գ երկաթի(II) քլորիդ պարունակող 276,65 գ ջրային լուծույթը: Էլեկտրոլիզը դադարեցնելիս էլեկտրոդների վրա անջատվել է 43,4 գ/մոլ միջին մոլային զանգվածով 5,6 լ (ն. ս.) գազերի խառնուրդ, իսկ լուծույթում առաջացած նոր նյութն ամբողջությամբ անջատվել է նստվածքի ձևով:

30. Որքան է էլեկտրոլիզի ընթացքում լուծույթում առաջացած նստվածքի զանգվածը (գ):

31. Որքան է էլեկտրոլիզը դադարեցնելու պահին լուծույթում պարունակվող աղի զանգվածային բաժինը (%):

32. Լուծույթում մնացած Fe^{2+} իոնների քանակը քանի անգամ է մեծ կաթոդի վրա վերականգնված Fe^{2+} իոնների քանակից:

33–35. Պղնձի(II) նիտրատի 8 % զանգվածային բաժնով 470 գ լուծույթի էլեկտրոլիզը (իններտ էլեկտրոդներով) դադարեցրել են այն պահին, երբ լուծույթի զանգվածը պակասել է 50 գրամով: Ստացված լուծույթին ավելացրել են կալցիումի կարբոնատ մինչև գազի անջատման ավարտը:

33. Որքան է կաթոդի վրա անջատված պղնձի քանակը (մմոլ):

34. Որքան է էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում նյութի զանգվածային բաժինը (%):

35. Ի՞նչ զանգվածով (գ) կալցիումի կարբոնատ են ավելացրել:

36–38. Պղնձե թիթեղը նիկելապատելու նպատակով այն օգտագործել են որպես կաթոդ և իրականացրել նիկելի(II) սուլֆատի 31 % զանգվածային բաժնով ջրային լուծույթի էլեկտրոլիզ (իններտ էլեկտրոդներ): Էլեկտրոլիզը դադարեցրել են, երբ թիթեղի զանգվածն ավելացել է 59 գրամով, անոդի վրա անջատվել է 3,5 մոլ գազ, իսկ աղի քանակը լուծույթում կրկնակի պակասել է:

36. Որքան է ելային լուծույթի զանգվածը (գ):

37. Որքան է էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթի զանգվածը (գ):

38. Ի՞նչ զանգվածով (գ) չոր կալիումի հիդրօքսիդ պետք է ավելացնել մնացած լուծույթին՝ հնարավոր բոլոր ռեակցիաներն իրականացնելու նպատակով:

39–41. Որոշակի գանգվածով լիթիումի քլորիդ պարունակող 782,5 գ ջրային լուծույթի էլեկտրոլիզից (իներտ էլեկտրոդներ) գոյացած ալկալու գանգվածային բաժինը մնացած լուծույթում կազմել է 20 %, իսկ քլորիդ իոններն այդ լուծույթից հեռացնելու համար պահանջվել է 5 մոլ/լ կոնցենտրացիայով արծաթի նիտրատի 1000 մլ լուծույթ:

39. Որքան է աղի գանգվածը (գ) ելային լուծույթում:

40. Որքան է էլեկտրոդների վրա անջատված գազերի գումարային ծավալը (լ, ն. պ.):

41. Ինչ գանգվածով (գ) մագնեզիումի հետ կարող է փոխազդել անոդի վրա անջատված գազը:

42–44. Նատրիումի նիտրատի 5,6 % գանգվածային բաժնով 1000 գ լուծույթն էլեկտրոլիզի (իներտ էլեկտրոդներ) ենթարկելիս անոդի վրա անջատվել է 25 °C ջերմաստիճանում և 119,2 կՊա ճնշման տակ չստված 415 լ գազ ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$, $T_0 = 273 \text{ Կ}$):

42. Որքան է էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթի գանգվածը (գ):

43. Քանի լիտր (ն. պ.) գազ է անջատվել կաթոդի վրա:

44. Որքան է աղի գանգվածային բաժինը (%) էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում:

45–47. Ածխե էլեկտրոդներով ալյումինի օքսիդի հալույթի էլեկտրոլիզի ընթացքում անոդի վրա անջատվել է ածխածնի(II) և (IV) օքսիդների խառնուրդ՝ ըստ հելիումի 9 հարաբերական խտությամբ: Վերջինս կալիումի հիդրօքսիդի 20 % գանգվածային բաժնով 560 մլ լուծույթով ($\rho = 1,25 \text{ գ/մլ}$) անցկացնելիս ածխածնի(IV) օքսիդն ամբողջությամբ կլանվել է՝ վերածվելով թթու աղի:

45. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին է անջատվել ալյումինի օքսիդի հալույթի էլեկտրոլիզի ընթացքում:

46. Ինչ գանգվածով (գ) թթու աղ է ստացվել ածխածնի(IV) օքսիդի փոխազդեցությունից:

47. Ինչ գանգվածով (գ) երկաթի հարուկ կարելի է վերականգնել էլեկտրոլիզի ընթացքում ստացված ալյումինով:


1.2.6. Էլեկտրոլիզ: Հալույթների և լուծույթների էլեկտրոլիզը: Էլեկտրոլիզի գործնական նշանակությունը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	144	17	150	33	200
2	17	18	109	34	6
3	28	19	15	35	20
4	5	20	4	36	1000
5	80	21	168	37	817
6	23	22	840	38	224
7	15	23	3	39	425
8	40	24	1904	40	112
9	2720	25	18	41	60
10	112	26	15	42	280
11	20	27	48	43	896
12	10	28	24	44	20
13	112	29	87	45	84
14	112	30	9	46	250
15	85	31	5	47	435
16	51	32	2		

1.2.7. Անօրգանական միացությունների դասերը, դրանց ստացումը, դասակարգումը, անվանումը, հատկությունները և կիրառումը: Հիմքերի, թթուների, աղերի և օքսիդների քիմիական հատկությունները

1. 22,4 գ երկվալենտ մետաղը ավելցուկով վերցրած աղաթթվի հետ փոխազդելիս անջատվել է 8,96 լ (ն. պ.) գազ: Որքան է այդ մետաղի(II) օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ):

2. Պղինձը թթվածնով օքսիդացնելիս անջատվել է 43,1 կՋ ջերմություն: Ինչ զանգվածով (գ) պղինձի(II) օքսիդ է առաջացել, եթե օքսիդացման ջերմաքիմիական հավասարումն է.




3. Երկաթի և պղինձի 3 գ խառնուրդի քլորացման համար պահանջվել է 1,12 լ (ն. պ.) քլոր: Ինչ զանգվածով (գ) 83,3 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթ կպահանջվի նշված խառնուրդի հետ սենյակային ջերմաստիճանում փոխազդելու համար:

4. Նատրիումի և պղինձի(II) նիտրատների հավասարամոլային խառնուրդը շիկացրել են մինչև աղերի լրիվ քայքայվելը և ստացված գազային խառնուրդն անցկացրել ավելցուկով ալկալու լուծույթի մեջ: Քանի՞ անգամ է փոքրացել գազային խառնուրդի ծավալը:

5. 372 գ կալցիումի ֆոսֆատից 75 % էլքով ստացել են օրթոֆոսֆորական թթու: Որքան է թթվի չեզոքացման համար անհրաժեշտ նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

6. Որքան է Y նյութի մոլային զանգվածը (գ/մոլ) ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



7. Որքան է A և B նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարն ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



8–9. Երկաթի(III) քլորիդի 1 մոլ/լ կոնցենտրացիայով 10 լ ջրային լուծույթում աղը ենթարկվել է հիդրոլիզի: Առաջին փուլն ընթացել է 4 %-ով, 2-րդը՝ 1 %-ով (երրորդ փուլն անտեսվում է):

8. Որքան է վերջնական լուծույթում գոյացած ջրածնի կատիոնների (H⁺) զանգվածը (մգ):

9. Որքան է չհիդրոլիզված աղի զանգվածը (գ):

10–11. Երկվայենտ մետաղի օքսիդի, ալյումինի 15,6 գ խառնուրդի և ավելցուկով պլակաու փոխազդեցությունից ստացված գազն օդում այրելիս ստացվել է 10,8 գ ջուր: Մնացած պինդ մնացորդը լուծելու համար պահանջվել է քլորաջրածնի 36,5 % զանգվածային բաժնով 12 գ աղաթթու:

10. Որքան է մետաղի(II) օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ):

11. Ինչ զանգվածով (գ) աղաթթու է անհրաժեշտ ալյումինի և մետաղի(II) օքսիդի ելային խառնուրդը լուծելու համար:

12–13. Սիլիցիումից և ածխածնից կազմված 5 գ խառնուրդը տաքացնան պայմաններում պլակաու խիտ լուծույթի հետ փոխազդելիս անջատվել է 2,8 լ (ն. ս.) ջրածին:

12. Որքան է ածխածնի զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:

13. Ինչ զանգվածով (մգ) մագնեզիումի սիլիցիդ կառաջանա ելային խառնուրդի և բավարար բանակով մագնեզիումի փոխազդեցությունից:

14–15. Կալիումի հիդրօքսիդի 40 % զանգվածային բաժնով 1500 մլ լուծույթին ($\rho = 1,4$ գ/սմ³) ավելացրել են 852 գ ֆոսֆորի(V) օքսիդ:

14. Որքան է մեծ մոլային զանգվածով աղի նյութաքանակը (մոլ) ստացված լուծույթում:

15. Որքան է փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (գ) ստացված լուծույթում:

16–18. Նատրիումի կարբոնատի 5 մոլ/լ կոնցենտրացիայով 1 լ ջրային լուծույթում հայտնաբերվել են 8,5085 գ հիդրօքսիդ իոններ:

16. Որքան է աղի I փուլի հիդրոլիզի աստիճանը, եթե II փուլն ընթացել է 0,1 %-ով:

17. Որքան է I փուլում գոյացած նատրիումի հիդրոկարբոնատի զանգվածը (գ):

18. Ինչ ծավալով (լ) 2 մոլ/լ կոնցենտրացիայով աղաթթու կփոխազդի սկզբնական լուծույթի հետ:

19–21. Մագնեզիումի և արծաթի նիտրատների որոշակի զանգվածով խառնուրդի շիկացումից ստացվել են 20,96 գ պինդ մնացորդ և գազերի խառնուրդ: Վերջինս 20,8 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող 413,92 գ լուծույթի մեջ անցկացնելիս 0,672 լ (ն. ս.) գազ չի կլանվել:

19. Որքան է օքսիդի զանգվածը (գ) շիկացումից ստացված պինդ մնացորդում:

20. Որքան է նիտրատների խառնուրդի զանգվածը (գ):

21. Որքան է շիկացումից ստացված գազերի կլանումից հետո լուծույթում առկա նյութի զանգվածային բաժինը (%):

22–24. Նատրիումի սուլֆատի, կալցիումի կարբոնատի և ածխի խառնուրդի 33,8 գ նմուշը շիկացնելիս բաղադրանքներն անմնացորդ փոխազդել են, և անջատվել է ածխածնի(II) օքսիդ: Ընկացումից ստացված պինդ մնացորդին ավելացրել են անհրաժեշտ քանակով 3,65 % զանգվածային բաժնով աղաթթու և անջատված գազերն անցկացրել բավարար քանակով պղնձի(II) սուլֆատ պարունակող լուծույթով, որի արդյունքում գոյացել է 9,6 գ սև նստվածք:

22. Որքան է շիկացման արդյունքում անջատված գազի քանակը (մոլ):

23. Ինչ զանգվածով (գ) աղաթթու է ծախսվել:

24. Որքան է աղաթթվով մշակելուց հետո անջատված գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

25–27. Բարիումի բրոմիդի 19,8 % զանգվածային բաժնով 3000 գ լուծույթին ավելացրել են 474 գ կալիումի սուլֆիտ, այնուհետև ստացված անհամասեռ՝ նստվածք–լուծույթ համակարգ են մղել 44,8 լ (ն. ս.) ծծմբային գազ և մնացած նստվածքը ֆիլտրելով առանձնացրել:

25. Որքան է առանձնացրած նստվածքի զանգվածը (գ):

26. Որքան է վերջնական լուծույթի զանգվածը (գ):

27. Որքան է վերջնական լուծույթում բոլոր աղերի գումարային զանգվածը (գ):

28–30. 25 °C ջերմաստիճանի և 132,8 կՊա ճնշման պայմաններում 37,25 լ ծծմբաջրածինն այրել են թթվածնի ավելցուկում, իսկ այրման արգասիքներն անցկացրել են նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 560 մլ լուծույթի մեջ ($\rho = 1,25$ գ/սմ³): ($R = 8,3$ Ջ/մոլ · Կ, $T_0 = 273$ Կ):

28. Որքան է ծծմբաջրածնի նյութաքանակը (մոլ):

29. Որքան է վերջնական լուծույթի զանգվածը (գ):

30. Որքան է լուծույթում փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (գ):

1.2.7. Անօրգանական միացությունների դասերը, դրանց ստացումը, դասակարգումը անվանումը, հատկությունները և կիրառումը: Հիմքերի, թթուների, աղերի և օքսիդների քիմիական հատկությունները:

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	72	11	132	21	10
2	16	12	65	22	700
3	10	13	4750	23	400
4	6	14	3	24	30
5	216	15	1224	25	217
6	331	16	10	26	3385
7	215	17	42	27	1015
8	404	18	5	28	2
9	1560	19	8	29	864
10	80	20	50	30	52

ԳԼՈՒԽ 2. ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ

2.1. ՄԵՏԱՂՆԵՐ

2.1.1. Մետաղային կապ: I–III գլխավոր ենթախմբերի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը

1. Որքան է Na^+ , K^+ , Mg^{2+} , Al^{3+} կատիոններից առավել փոքր շառավիղ ունեցող իոնին համապատասխանող օքսիդի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
2. Որքան է Cr_2O_3 , CrO , CrO_3 նյութերից առավել հիմնային հատկություններ ունեցող օքսիդի և աղաթթվի փոխազդեցությունից ստացվող աղի մոլային զանգվածը (գ/մոլ):
3. 5,92 գ զանգվածով երկաթե թիթեղն ընկղմել են 1,6 գ պղնձի սուլֆատ պարունակող լուծույթի մեջ: Որքան է թիթեղի զանգվածը (գ) ռեակցիան ավարտվելուց հետո:
4. Ոսկուց հնարավոր է գլանել 0,003 մմ հաստությամբ փայլաթիթեղ: Որքան է նշված հաստությամբ և 100 սմ² մակերեսով փայլաթիթեղի զանգվածը (մգ), եթե ոսկու խտությունը 19,3 գ/սմ³ է:
5. Նատրիումի քլորիդի և Բերթոլեյի աղի հավասարամոլային խառնուրդը տաքացրել են (առանց կատալիզորդի): Քանի՞ անգամ է պինդ մնացորդում պարունակվող նյութերի գումարային քանակը (մոլ) մեծ կալիումի քլորիդի քանակից:
6. 11,5 գ զանգվածով նատրիումի և 46,5 գ նատրիումի օքսիդի խառնուրդի և ջրի փոխազդեցությունից ստացված լուծույթը գոլորշացրել են և մնացորդը չորացրել: Որքան է ստացված չոր մնացորդի զանգվածը (գ):
7. Մետաղի(II) քլորիդի ջրային լուծույթում պարունակվում են $3,612 \cdot 10^{23}$ թվով քլորիդ իոններ և 12 գ զանգվածով մետաղի Me^{2+} իոններ: Որքան է մետաղի կարգաթիվը:
8. Ի՞նչ զանգվածով (գ) մետաղական նատրիումն է պարունակում $1,3244 \cdot 10^{25}$ թվով էլեկտրոններ:
9. Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) գազ կստացվի 20% զանգվածային բաժնով չքայքայվող խառնուկներ պարունակող 631,25 գ կալիումի նիտրատի նմուշի ջերմային քայքայումից:
10. Նատրիումի հիդրօքսիդի լուծույթը, որը պարունակում է 4 գ ալկալի, խառնել են 9,8 գ ֆոսֆորական թթվին: Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ պետք է ավելացնել ռեակցիոն խառնուրդին, որպեսզի լուծույթում առաջանա միայն չեզոք աղ:

11. Որքան է մեկական մոլ քանակով Zn, Al₂O₃, K₂S նյութերի և ավելցուկով աղաթթվի փոխազդեցությունից գոյացած աղերի ընդհանուր զանգվածը (գ):

12. Արծաթի նիտրատի, ամոնիումի նիտրատի և կարբոնատի խառնուրդը շիկացրել են և անջատված գազերը հաջորդաբար անցկացրել նախ ավելցուկով վերցրած կալիումի հիդրօքսիդի, ապա ծծմբական թթվի լուծույթներով: Որքան է երկու լուծույթներով անցկացնելուց հետո չկլանված գազերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:

13. Բնչ զանգվածով (գ) նստվածք կառաջանա 6 գ պղնձի և անհրաժեշտ քանակով խիտ ծծմբական թթվի փոխազդեցությունից անջատված գազն ավելցուկով վերցրած ծծմբաջրածնի լուծույթի մեջ անցկացնելիս:

14. 18,8 գ զանգվածով պղնձի(II) նիտրատը շիկացրել են մինչև հաստատուն զանգված: Որքան է շիկացման հետևանքով առաջացած պինդ նյութի զանգվածը (գ):

15–16. Քսան մոլ մետաղը պարունակում է $1,5652 \cdot 10^{26}$ էլեկտրոն:

15. Ո՞րն է այդ մետաղի ատոմային համարը:

16. Բնչ ծավալով (լ, ն. պ.) թթվածնի հետ կմիանա նշված քանակով մետաղը:

17–18. Մագնեզիումի և միացություններում +2 օքսիդացման աստիճան ցուցաբերող մետաղի 68,5 գ զանգվածով խառնուրդն աղաթթվով մշակելիս անջատվել է 44,8 լ (ն. պ.) գազ, իսկ ալկալու լուծույթով մշակելիս՝ 11,2 լ (ն. պ.) գազ:

17. Ո՞րն է մետաղի ատոմային համարը:

18. Որքան է մետաղների ատոմներում պարունակվող բոլոր էլեկտրոնների քանակը (մոլ) տրված զանգվածով խառնուրդում:

19–21. Ըստ հետևյալ ուրվագրի՝ $Zn(NO_3)_2 \xrightarrow{t} X \rightarrow K_2ZnO_2 \rightarrow Zn(OH)_2$, 94,5 գ ցինկի նիտրատը ենթարկել են փոխարկումների:

19. Որքան է զանգվածի (գ) կորուստը ցինկի նիտրատը շիկացնելիս:

20. Բնչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդ է անհրաժեշտ տրված քանակով ցինկի նիտրատից ստացված X նյութը կալիումի ցինկատի փոխարկելու համար:

21. Ստացված կալիումի ցինկատից ցինկի հիդրօքսիդ ստանալու համար ի՞նչ ծավալով (մլ) 2 մոլ/լ կոնցենտրացիայով աղաթթու կպահանջվի:

2.1.1. Մետաղային կապ: I-III գլխավոր ենթախմբերի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	102	8	46	15	13
2	123	9	56	16	336
3	6	10	8	17	30
4	579	11	552	18	33
5	8	12	76	19	54
6	80	13	9	20	56
7	20	14	8	21	500

2.1.2. Ալկալիական մետաղներ. Ֆիզիկական և քիմիական հատկությունները

1. Ինչ զանգվածով (գ) թթվածնային միացություն կառաջանա 7 գ մետաղական լիթիումը օդում տաքացնելիս:
2. 7,8 գ զանգվածով կալիումը լուծել են 48,4 գ ջրում: Որքան է նյութի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:
3. Ըստ փոխարկումների հետևյալ շղթայի՝ $K_2ZnO_2 \xrightarrow{1} ZnCl_2 \xrightarrow{2} Na_2[Zn(OH)_4] \xrightarrow{3} ZnSO_4$, որքան է 2-րդ և 3-րդ փուլերում անհրաժեշտ ազդանյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:
4. Որքան է Y և Z նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարն ըստ փոխարկումների հետևյալ շղթայի՝ $ZnSO_4 \xrightarrow{Y} Zn(OH)_2 + Na_2SO_4 \xrightarrow{Z} K_2[Zn(OH)_4]$:
5. Ալկալիական մետաղի հիդրիդի և նիտրիդի 21,375 գ հավասարամոլային խառնուրդը ավելցուկով վերցրած ջրի հետ փոխազդելիս ստացվել է 5,6 լ (ն. պ.) ծավալով գազերի խառնուրդ: Որքան է մետաղի կարգաթիվը:
6. Կալցիումի և ածխածնի խառնուրդը շիկացրել են, մշակել ավելցուկով վերցրած ջրով և ստացել գազային խառնուրդ, որի խտությունն ըստ ջրածնի 7,0 է: Որքան է մետաղի մոլային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:
7. Նատրիումի նիտրատի 212,5 գ զանգվածով նմուշը ջերմային քայքայման ենթարկելիս ստացվել է 138 գ նատրիումի նիտրիտ: Հաշվեք նատրիումի նիտրատի քայքայման աստիճանը (%):
8. Նատրիումի հիդրօքսիդի և 51,25 գ նատրիումի ացետատի խառնուրդը շիկացրել են մինչև հնարավոր ռեակցիայի ավարտը: Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):
9. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ջրածին կստացվի 437,5 սմ³ ծավալ զբաղեցնող լիթիումի կտորի ($\rho = 0,53$ գ/սմ³) և ավելցուկով ջրի փոխազդեցությունից:
10. Արծաթի նիտրատի 20 % զանգվածային բաժնով 1700 գ լուծույթը խառնել են 25 % զանգվածային բաժնով կալիումի քլորիդի 745 գ լուծույթի հետ: Որքան է ստացված նստվածքի զանգվածը (գ):
11. Կալիումի բրոմիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով 500 մլ ծավալով լուծույթը մշակել են արծաթի նիտրատի 0,1 մոլ/լ կոնցենտրացիայով 2000 մլ լուծույթով: Որքան է նստվածքի հեռացումից հետո լուծույթում բրոմիդ իոնների զանգվածը (գ):

12. Որքան է նյութի զանգվածային բաժինը (%) լուծույթում, որը ստացվել է 1 մոլ մետաղական կալիումը 522 մլ ծավալով ջրում ($\rho = 1,0 \text{ գ/սմ}^3$) լուծելիս:

13. Մետաղի(I) սուլֆիդի և հիդրոսուլֆատի մոլային զանգվածների հարաբերությունը 0,65 է: Որքան է մետաղի ատոմում նեյտրոնների թիվը:

14. Ինչ զանգվածով մետաղական լիթիում կփոխազդի 0,571 լ ջրի հետ, որպեսզի ստացվի լիթիումի հիդրօքսիդի 20% զանգվածային բաժնով լուծույթ:

15. Ինչ ծավալով (ն. պ., մլ) ջրածին կանջատվի 4,6 գ նատրիում և 3,9 գ կալիում պարունակող համաձուլվածքի և ջրի փոխազդեցությունից:

16–17. Որոշակի զանգվածով մետաղի(I) հիդրիդի և 99,4 գ ջրի փոխազդեցությունից ստացվել է 2,4% զանգվածային բաժնով ալկալու լուծույթ:

16. Ո՞րն է մետաղի կարգաթիվը, եթե ստացված լուծույթի զանգվածը 0,2 գրամով փոքր է ջրի և հիդրիդի գումարային զանգվածից:

17. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի 10 գ մետաղի հիդրիդի և ջրի փոխազդեցությունից:

18–19. Միացություններում +1 օքսիդացման աստիճան ցուցաբերող 4,2 գ զանգվածով մետաղի և ֆոսֆորի փոխազդեցությունից գոյացել է 10,4 գ ֆոսֆիդ:

18. Որքան է մետաղի(I) ֆոսֆիդի մոլային զանգվածը (գ/մոլ):

19. Որքան է նույն զանգվածով մետաղի նմուշը 284,4 գ ջրում «լուծելու» արդյունքում ստացված լուծույթում էլեկտրոլիտի զանգվածային բաժինը (%):

20–21. Նատրիումի հիդրօքսիդի հալույթի էլեկտրոլիզի արդյունքում էլեկտրոդների վրա անջատվել են 186 գ զանգվածով պարզ նյութեր:

20. Ինչ զանգվածով (գ) էթիլսպիրտի հետ կարող է փոխազդել կաթոդի վրա անջատված նյութը:

21. Ինչ զանգվածով (գ) ածխածնի հետ կարող է փոխազդել անոդի վրա անջատված նյութը, որպեսզի ստացվող գազերի ծավալների հարաբերությունը լինի 1 : 1:

22–23. Ջրային լուծույթում հետևյալ փոխարկումներն իրականացնելիս օգտագործվել են A գազային նյութը, B թթուն, և ստացվել է 87 գ սուլֆատ.



22. Որքան է A և B նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարը:

23. Որքան է 87 գ սուլֆատի ստացման համար անհրաժեշտ A և B նյութերի զանգվածների գումարը:

24–25. Մետաղական նատրիումի և կալցիումի 39,375 գ զանգվածով հավասարաճային խառնուրդը լուծել են 493,75 գ ջրում:

24. Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):

25. Որքան է հիդրօքսիդ իոնների զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում (հիմքերը դիտցված են ամբողջությամբ):

26–27. 97,5 գ զանգվածով մետաղական կալիումը փոխազդել է 46 % զանգվածային բաժնով էթանոլի 75 գ ջրային լուծույթի հետ:

26. Որքան է ստացված կալիումի էթիլատի զանգվածը (գ):

27. Որքան է ռեակցիաների ընթացքում անջատված ջրածնի ծավալը (լ, ն. պ.):

28–30. Կալիումի պերմանգանատի և քլորատի 1438 գ զանգվածով խառնուրդը մինչև հաստատուն զանգված շիկացնելիս ստացվել է պինդ մնացորդ, որը պարունակում է 261 գ օքսիդ:

28. Որքան է կալիումի քլորատի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

29. Որքան է անջատված գազի քանակը (մոլ):

30. Որքան է փոքր մոլային զանգվածով նյութի մոլային բաժինը (%) շիկացումից ստացված պինդ մնացորդում:

31–33. 44 գ զանգվածով ալկալիական մետաղի սուլֆիդը մշակել են նոսր ծծմբական թթվով: Անջատված գազը 24 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 200 գ լուծույթի մեջ անցկացնելիս աղի և ալկալու կոնցենտրացիաները (մոլ/լ) լուծույթում հավասարվել են:

31. Որքան է ալկալիական մետաղի կարգաթիվը:

32. Որքան է ծախսված նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

33. Ինչ զանգվածով (գ) պղնձի(II) սուլֆատ կպահանջվի տրված քանակով ելային աղից սուլֆիդ իոններն ամբողջությամբ նստեցնելու համար:

34–36. Կատալիզատորի առկայությամբ A աղի ջերմային քայքայումից առաջացել են B աղը և այրմանը նպաստող C գազը: Նույն քանակով A աղի և աղաթթվի փոխազդեցությունից ստացվել է B աղի լուծույթը, և անջատվել C գազի հետ չփոխազդող դեղնականաչավուն D գազը: B աղի լուծույթի և անհրաժեշտ քանակով վերցված արծաթի նիտրատի փոխազդեցությունից ստացվել է 57,4 գ սպիտակ նստվածք:

34. Որքան է C և D գազերի մեկական մոլում պարունակվող պրոտոնների քանակը (մոլ):

35. Ինչ զանգվածով (գ) A աղ է ենթարկվել ջերմային քայքայման:

36. Որքան է փոքր մոլային զանգվածով նյութի մոլային բաժինը (%) A նյութն առանց կատալիզատորի տաքացնելիս ստացված պինդ մնացորդում:

37–39. Մոլային զանգվածների 1 : 8 հարաբերությամբ երկու մետաղների 22,4 գ զանգվածով խառնուրդը, որում մետաղների մոլային հարաբերությունը 8 : 1 է, աղաթթվի հետ փոխազդելիս առաջացրել է հաննապատասխանաբար $MeCl$ և $MeCl_2$ աղերի խառնուրդ և այնքան գազ, որքան կանջատվեք կաթոդի վրա 149 գ կալիումի քլորիդ պարունակող լուծույթն էլեկտրոլիզի ենթարկելիս (հաշվի առեք, որ էլեկտրոլիզվում է միայն աղը):

37. Որքան է աղաթթվի հետ փոխազդելիս առաջացած գազի քանակը (մոլ):

38. Որքան է մեծ հարաբերական ատոմային զանգվածով մեկ մոլ քանակով մետաղում պրոտոնների քանակը (մոլ):


39. Որքան է մետաղների ելային խառնուրդում +1 օքսիդացման աստիճան ցուցաբերող մետաղի զանգվածային բաժինը (%):

2.1.2. Ավելիական մետաղներ. ֆիզիկական և քիմիական հատկությունները

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	15	14	35	27	28
2	20	15	3360	28	490
3	138	16	3	29	9
4	96	17	28	30	40
5	19	18	52	31	19
6	50	19	5	32	32
7	80	20	276	33	64
8	14	21	24	34	50
9	371	22	142	35	49
10	287	23	71	36	25
11	64	24	21	37	1
12	10	25	6	38	26
13	12	26	21	39	50

2.1.3. Հողալկալիական մետաղներ. Ֆիզիկական և քիմիական հատկությունները

1. Ինչ զանգվածով (գ) ջուր կփոխազդի 280 գ չհանգած կրի հետ:
2. Ո՞ր կատիոններով է պայմանավորված ջրի կոշտությունը. Ca^{2+} , Cu^{2+} , Co^{2+} , Mg^{2+} , Na^{+} : Որքան է այդ իոնների մոլային զանգվածների (գ/մոլ) գումարային թիվը:
3. Կալցիումի և մագնեզիումի կարբոնատների 60,5 գ զանգվածով խառնուրդն ավելցուկով վերցրած աղաթթվով մշակելիս անջատվել է 14 լ (ն. պ.) ծավալով գազ: Որքան է մագնեզիումի կարբոնատի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:
4. Որքան է ազոտ տարր պարունակող X_1 , X_2 և X_3 նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը փոխարկումների հետևյալ շղթայում.



5. Միացություններում +2 օքսիդացման աստիճան ցուցաբերող 4,11 գ մետաղի և ֆոսֆորի փոխազդեցությունից գոյացել է 4,73 գ զանգվածով ֆոսֆիդ: Որքան է ֆոսֆիդի մոլային զանգվածը (գ/մոլ):
6. Միացություններում +2 օքսիդացման աստիճան ցուցաբերող մետաղի բրոմիդի մոլային զանգվածը 5 անգամ մեծ է նույն մետաղի մոլային զանգվածից: Ո՞րն է մետաղի կարգաթիվը:

7–8. Հողալկալիական մետաղի հիդրիդի և նիտրիդի 38 գ հավասարամոլային խառնուրդը 561,6 գ ջրում լուծելիս անջատվել է 17,92 լ (ն. պ.) գազային խառնուրդ, և ստացվել է լուծույթ:

7. Որքան է մետաղի նիտրիդի մոլային զանգվածը (գ/մոլ):
8. Որքան է ալկալու զանգվածային բաժինը (%) լուծույթում:

9–10. Ստացվել է համասեռ լուծույթ 10 գ զանգվածով մետաղական կալցիումի և 490,5 գ ջրի փոխազդեցությունից:

9. Որքան է լուծույթի զանգվածը (գ):
10. Ինչ զանգվածով (գ) էթիլենի հետ կարող է փոխազդել առաջացած գազը:

11-12. Կրաքարի 156,25 գ զանգվածով նմուշը շիկացնելիս ստացվել է 101,25 գ պինդ մնացորդ:

11. Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):

12. Որքան է կալցիումի կարբոնատի զանգվածային բաժինը (%) կրաքարի նմուշում:

13-14. Որոշակի զանգվածով կալցիումի կարբոնատի և կալիումի հիդրոկարբոնատի խառնուրդը բաժանել են երկու հավասար մասի: Խառնուրդի առաջին կեսն ավելցուկով վերցրած աղաթթվի հետ փոխազդելիս անջատվել է 10,752 լ (ն. պ.) ծավալով գազ: Խառնուրդի երկրորդ կեսը մինչև հաստատուն զանգված շիկացնելիս ստացվել է 6,72 լ (ն. պ.) գազ:

13. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

14. Որքան է կալցիումի կարբոնատի մոլային բաժինը (%) խառնուրդում:

15-16. Բյուրեղահիդրատը պարունակում է ըստ զանգվածի 9,756 % Mg, 13,008 % S, 26,016 % O և 51,220 % բյուրեղաջուր:

15. Որքան է ջրի մոլեկուլների թիվը բյուրեղահիդրատի մեկ մոլեկուլում:


16. Որքան է անջուր աղի զանգվածային բաժինը (%) լուծույթում, որը ստացվել է այդ բյուրեղահիդրատի 49,2 գ զանգվածով նմուշը 190,8 գ ջրում լուծելիս:

17-18. Մագնեզիումի նիտրատի և կալցիումի կարբոնատի որոշակի զանգվածով խառնուրդը 1000 °C ջերմաստիճանում շիկացնելիս դրա զանգվածը պակասել է 520 գրամով: Նույն զանգվածով նշված խառնուրդի մեկ այլ նմուշ լրիվ լուծելու համար պահանջվել է բորաջրածնի 20 % զանգվածային բաժնով 730 գ աղաթթու:

17. Որքան է լուծույթում ստացված հալոգենիդի զանգվածը (գ):

18. Որքան է մագնեզիումի նիտրատի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

19-21. Կալցիումի քլորիդի 555 գ զանգվածով նմուշը փոխարկել են կալցիումի կարբոնատի՝ ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



19. Որքան է Na₂X և A միացությունների մոլային զանգվածների գումարը (գ/մոլ):

20. Ինչ ծավալով (լ, ն. պ.) A միացություն կծախսվի կալցիումի կարբոնատի կախույթը լուծելու համար:

21. Ինչ զանգվածով (գ) կալցիումի կարբոնատ կստացվի վերջին ռեակցիայի ընթացքում, եթե ռեակցիայի ելքը 80% է:

22-24. Երկարժեք մետաղի սուլֆատի, նիտրատի և կարբոնատի հալիասարանության խառնուրդը շիկացնելիս զանգվածը պակասել է 41,8 գրամով: Ելային խառնուրդում մետաղի զանգվածային բաժինը 30% է (սուլֆատը ջերմային քայքայման չի ենթարկվում, իսկ նիտրատի քայքայումից ստացվում է մեկ զագային նյութ):

22. Որքան է մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

23. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

24. Որքան է ելային խառնուրդում նիտրատի զանգվածային բաժինը (%):


**2.1.3. Հողակալիական մետաղներ.
Ֆիզիկական և քիմիական հատկությունները**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	90	9	500	17	222
2	64	10	7	18	592
3	20	11	28	19	150
4	571	12	80	20	112
5	473	13	96	21	400
6	20	14	25	22	40
7	148	15	7	23	220
8	10	16	10	24	41

2.1.4. Ալյումին և երկաթ. դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները

1. Լուծույթում առկա 3,42 գ ալյումինի սուլֆատից առավելագույն քանակով նստվածք ստանալու համար ինչ ծավալով (մլ) կալիումի հիդրօքսիդի 0,2 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթ է անհրաժեշտ:
2. Ալյումինի նիտրատի 213 գ զանգվածով նմուշը շիկացրել են մինչև հաստատուն զանգված: Որքան է շիկացման հետևանքով առաջացած պինդ նյութի զանգվածը (գ):
3. Որոշակի զանգվածով երկաթարջասպը ծծմբական թթվի միջավայրում օքսիդացնելիս ծախսվել է 15,8 գ կալիումի պերմանգանատ: Ինչ զանգվածով (գ) երկաթարջասպ է օքսիդացել:


4. Որքան է վերականգնված նյութի քանակաչափական գործակիցը հետևյալ օքսիդացման-վերականգնման ռեակցիայի հավասարման մեջ.



- 5-6. Երկաթի(II) և (III) օքսիդների 10 գ զանգվածով խառնուրդը լուծել են բավարար քանակությամբ 8,5 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթում: Ստացված լուծույթի օքսիդացման համար ծախսվել է կալիումի պերմանգանատի 5 % զանգվածային բաժնով 31,6 գ թթվեցրած լուծույթ:

5. Որքան է երկաթի(II) օքսիդի զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:
6. Ինչ զանգվածով (գ) ծծմբական թթվի լուծույթ է ծախսվել օքսիդների խառնուրդը լուծելու համար:

- 7-8. Մեկ մոլ երկաթի հարուկը փոխարկել են X_4 նյութի՝ ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



7. Որքան է երկաթ պարունակող X_2 և X_4 նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը (H_2SO_4 -ը նոսր է):
8. Ինչ զանգվածով (գ) X_4 նյութ կստացվի 1 մոլ երկաթի հարուկից:
- 9-10. Մեկ մոլ երկաթի խարտուքն օդում տաքացնելիս առաջացել է միացություն, որի զանգվածը 1,381 անգամ մեծ է փոխազդած երկաթի զանգվածից:

9. Որքան է միացության հարաբերական մոլեկուլային զանգվածը:

10. Բնչ ծավալով (լ, ն. պ.) ջրածին կպահանջվի 1,25 մոլ քանակով այդ միացությունը լրիվ վերականգնելու համար:
- 11–12. Երկաթի(III) քլորիդի 20 % զանգվածային բաժնով լուծույթի մեջ անցկացրել են անհրաժեշտ քանակով ծծմբաջրածին, որի արդյունքում գոյացել է 160 գ պարզ նյութի դեղին նստվածք (կախույթ):
11. Որքան է փոխազդած ծծմբաջրածնի ծավալը (լ, ն. պ.):
12. Բնչ զանգվածով (գ) աղ է ստացվել լուծույթում:
- 13–14. Օքսիդային թաղանթից մաքրված 10 գ զանգվածով ալյումինե լարն ընկղմել են աղաթթվի մեջ: 69 մնոլ ջրածնի անջատումից հետո լարը թթվից հանել են, լվացել և ընկղմել պղնձի(II) քլորիդի լուծույթի մեջ: Որոշ ժամանակ անց լարը հանել են լուծույթից, չորացրել և կշռել: Պարզվել է, որ լարի զանգվածը կրկին 10 գրամ է:
13. Որքան է ալյումինե լարի զանգվածի փոփոխությունը (մգ) աղաթթվի հետ փոխազդելուց հետո:
14. Բնչ զանգվածով (մգ) պղինձ է նստել լարի վրա:
- 15–17. Երկաթի(II) և պղնձի(II) նիտրատների 109,6 գ զանգվածով խառնուրդը մինչև հաստատուն զանգված շիկացնելիս ստացվել է 31,36 լ (ն. պ.) գազային խառնուրդ, իսկ Fe^{2+} –ը օքսիդացել է մինչև Fe^{3+} :
15. Որքան է երկաթի(II) նիտրատի զանգվածը (գ) ելային խառնուրդում:
16. Որքան է ելային խառնուրդի ջերմային քայքայման արդյունքում ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):
17. Որքան է գազային խառնուրդի խտությունն ըստ հելիումի:
- 18–20. 784 գ զանգվածով Մորի աղը՝ $(NH_4)_2SO_4 \cdot FeSO_4 \cdot 6H_2O$, լուծել են 3148 գ ջրում և ավելացրել 40 % զանգվածային բաժնով բարիումի քլորիդի 2080 գ լուծույթ:
18. Որքան է ստացված նստվածքի զանգվածը (գ):
19. Որքան է նստվածքի հեռացումից հետո մնացած լուծույթում երկաթի աղի զանգվածային բաժինը (%):

20. Որքան է լուծույթում առկա մյուս աղի զանգվածը (գ):

21–23. Ալյումինի, երկաթի և պղնձի որոշակի զանգվածով խառնուրդի նմուշն ավելցուկով վերցրած քլորի հետ փոխազդելիս խառնուրդի զանգվածն ավելացել է 124,25 գրամով: Այդ խառնուրդի նույն զանգվածով մեկ այլ նմուշ ավելցուկով 27,5% զանգվածային բաժնով աղաթթվի հետ փոխազդելիս անջատվել է 30,8 լ (ն. ս.) գազ: Խառնուրդի նույն զանգվածով երրորդ նմուշն ավելցուկով վերցրած ավկալու հետ փոխազդելիս անջատվել է 25,2 լ (ն. ս.) գազ:

21. Որքան է պղնձի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

22. Որքան է ալյումինի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

23. Ինչ զանգվածով (գ) աղաթթու է ծախսվել:

**2.1.4. Ալյումին և երկաթ.
դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	300	9	232	17	11
2	51	10	112	18	932
3	139	11	112	19	5
4	1	12	1270	20	214
5	36	13	1242	21	16
6	196	14	1728	22	60
7	259	15	72	23	365
8	321	16	48		

**2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա:
Համաձուլվածքներ: Թուջ և պողպատ**

1. Ինչ զանգվածով (տոննա) 4% ածխածին պարունակող երկաթի համաձուլվածք (թուջ) կստացվի 464 տ զանգվածով մագնիսական երկաթաքարից:
2. Ինչ զանգվածով (կգ) 80% երկաթ պարունակող համաձուլվածք կստացվի 20% խառնուկներ պարունակող 0,8 տ կարմիր երկաթաքարից (Fe_2O_3):
3. Ըստ զանգվածի 73,63% սնդիկից և 26,37% արծաթից բաղկացած համաձուլվածքն ունի որոշակի քիմիական բանաձև: Որքան է միացության պարզագույն բանաձևում ատոմների գումարային թիվը:
- 4-5. *2,4 գ զանգվածով A երկտարր միացության հալույթն էլեկտրոլիզի ենթարկելիս անոդի վրա անջատված ջրածինը կարող է վերականգնել պղինձը 12 գ զանգվածով պղնձի(II) օքսիդից:*
4. Որքան է A նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
5. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազ կանջատվի 5 գ զանգվածով A նյութի հիդրոլիզից:
- 6-7. *Թուջում պարունակվում է 3,6% ածխածին՝ երկաթի կարբիդի (Fe_3C) ձևով:*
6. Որքան է երկաթի կարբիդի զանգվածային բաժինը թուջում (%):
7. Որքան է 625 գ զանգվածով թուջից գոյացող ածխածնի(IV) օքսիդի ծավալը (լ, ն. պ.):
- 8-9. *Քրոմը ստանում են՝ 68,421% (ըստ զանգվածի) մետաղ պարունակող քրոմի օքսիդը ալյումինով վերականգնելով:*
8. Ինչ զանգվածով (կգ) ալյումին կպահանջվի 208 կգ քրոմ ստանալու համար:
9. Ինչ զանգվածով (կգ) բոքսիտ ($Al_2O_3 \cdot 2H_2O$) հանքաքար է անհրաժեշտ 304 կգ քրոմի օքսիդից քրոմը վերականգնելու համար անհրաժեշտ ալյումինը ստանալու համար:
- 10-11. *Պղնձե իրն արծաթապատելու համար այն ընկղմել են արծաթի նիտրատի 10% զանգվածային բաժնով 6800 գ լուծույթի մեջ: Որոշ ժամանակ անց լուծույթի զանգվածը դարձել է 6648 գ:*
10. Ինչ զանգվածով (գ) արծաթ է նստել թիթեղի վրա:

11. Որքան է վերջնական լուծույթում պարունակվող աղերի զանգվածների գումարը:

12–14. Ածխե էլեկտրոդներով ալյումինի օքսիդի հալույթն էլեկտրոլիզի ենթարկելիս անոդի վրա անջատված թթվածինն ամբողջությամբ փոխազդել է ածխի հետ՝ ստացված նեյտրալ ածխածնի(II) և (IV) օքսիդների խառնուրդ, որի հարաբերական խտությունն ըստ ջրածնի 18 է: Այդ խառնուրդը 32 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 400 մլ լուծույթով ($\rho = 1,25$ գ/մլ) անցկացնելիս 89,6 լ (ն. պ.) գազ չի կլանվել:

12. Ինչ զանգվածով (գ) մետաղ է անջատվել կաթոդի վրա:

13. Ինչ զանգվածով (գ) աղ է ստացվել գազային խառնուրդի և նատրիումի հիդրօքսիդի լուծույթի փոխազդեցությունից (գ):

14. Ինչ զանգվածով (գ) երկաթի(III) օքսիդ կվերականգնվի էլեկտրոլիզի ընթացքում ստացված ալյումինով:

15–17. 32,8 գ զանգվածով պղնձե թիթեղն ընկղմել են 0,28 մոլ քանակով երկաթի(III) սուլֆատ պարունակող 387,2 գ լուծույթի մեջ: Որոշ ժամանակ անց, երբ լուծույթում նոր գոյացած մեծ մոլային զանգվածով աղի և չփոխազդած երկաթի(III) սուլֆատի զանգվածային բաժինները հավասարվել են, գործընթացն ընդհատել են, թիթեղը հանել, չորացրել ու կշռել:

15. Որքան է դարձել պղնձե թիթեղի զանգվածը (գ):

16. Որքան է ստացված լուծույթի զանգվածը (գ):

17. Որքան է երկաթի(III) սուլֆատի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

18–20. Նիկել և քրոմ մետաղների հավասար քանակներ (մոլ) պարունակող պողպատի 111,5 գ զանգվածով նմուշը 255,5 գ թլորաջրածին պարունակող 622,5 գ աղաթթվում լուծելիս անջատվել է 44,8 լ (ն. պ.) ծախյով գազ:

18. Որքան է բոլոր մետաղների քանակների (մոլ) գումարը պողպատի նմուշում:

19. Որքան է թլորաջրածնի զանգվածային բաժինը (%) պողպատի նմուշը լուծելուց հետո ստացված լուծույթում:

20. Ինչ նվազագույն ծավալով (մլ) նատրիումի հիդրօքսիդի 5 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթ կփոխազդի (անօդ պայմաններում) ստացված լուծույթի հետ:

**2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա:
Համաձուլվածքներ: Թուջ և պողպատ**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	350	8	108	15	20
2	560	9	276	16	400
3	5	10	216	17	8
4	8	11	528	18	2
5	14	12	216	19	15
6	54	13	336	20	1400
7	42	14	640		

2.2. ՈՉՄԵՏԱՂՆԵՐ

2.2.1. Ջրածին, ջուր: Հայրոգենների ընդհանուր բնութագիրը: Հայրոգենաջրածիններ: Շղթայական ռեակցիաներ: Հայրոգենների և դրանց կարևորագույն միացությունների կիրառությունն ու կենսաբանական նշանակությունը

1. Ինչ զանգվածով (գ) ծծմբական թթուն կպարունակի ջրածնի այնքան ատոմներ, որքան թթվածնի ատոմներ է պարունակում 180 գ էթանաթթուն:
2. Պարբերական համակարգի V խմբի գլխավոր ենթախմբի տարրերից մեկի ջրածնային միացությունը պարունակում է ըստ զանգվածի 8,823 % ջրածին: Որքան է այդ նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):
3. Քանի՞ վալենտային էլեկտրոն ունի $[Ar]3d^54s^2$ էլեկտրոնային բանաձևով տարրի ատոմը:
4. Ինչ քանակով էներգիա (կՋ) կծախսվի 2 գ դեյտերիումի $D_2 \rightarrow 2D \rightarrow 2D^+$ փոխարկումն իրականացնելիս, եթե դեյտերիումի մոլեկուլում կապի էներգիան 440 կՋ/մոլ է, իսկ իոնացման էներգիան՝ 1330 կՋ/մոլ:
5. Որքան է նատրիումի յոդիդի գործակիցն ըստ խիտ ծծմբական թթվով օքսիդացման ռեակցիայի հավասարման, եթե ծծումբը վերականգնվել է մինչև ծծմբաջրածին:
6. Որքան է հետևյալ հավասարումներում բաց թողած նյութերի գործակիցների գումարը:
$$6KOH + \dots = 5KCl + KClO_3 + 3H_2O$$
$$2NaCl + \dots = Na_2SO_4 + 2HCl$$
7. Ջրածին և թթվածին գազերի խառնուրդի խտությունը (ն. պ.) 0,625 գ/լ է: Որքան է ջրածնի ծավալը (լ, ն. պ.) 40 լ այդպիսի խառնուրդում:
- 8–9. Կալցիումի, կալցիումի օքսիդի և կալցիումի հիդրիդի 1 : 3 : 2 մոլային հարաբերությամբ 146 գ զանգվածով խառնուրդին ավելացրել են այնքան ջուր, որ նոր ստացված նյութի զանգվածային բաժինը լուծույթում դարձել է 20 %:
8. Որքան է ավելացրած ջրի զանգվածը (գ):
9. Որքան է սկզբնական խառնուրդի և ջրի փոխազդեցությունից ստացված գազի ծավալը (լ, ն. պ.):

10–11. Երկարի 35–ական գրամ զանգվածով երկու նմուշներից մեկը փոխազդեցության մեջ են դրել մի դեպքում աղաթթվի, մյուս դեպքում՝ քլորի հետ:

10. Որքան է աղաթթվի հետ փոխազդեցությունից ստացված գազի ծավալը (լ, ն. պ.):

11. Ինչ ծավալով (լ, ն. պ.) քլոր է փոխազդում նշված զանգվածով երկարի հետ:

12–13. Քլորի և թթվածնի 10 մոլ խառնուրդին ավելացրել են 19 մոլ ջրածին և փակ անոթում պայթեցրել: Գազերն անմնացորդ փոխազդել են, և ստացվել է աղաթթու:

12. Որքան է թթվածնի մոլային բաժինը (%) գազերի սկզբնական խառնուրդում:

13. Որքան է քլորաջրածնի մոլային բաժինը (%) ստացված աղաթթվում:

14–15. Ֆտորի և նեոնի 168 լ (ն. պ.) խառնուրդը պարունակում է $4,9966 \cdot 10^{25}$ էլեկտրոն:

14. Որքան է ֆտորի զանգվածը (գ) խառնուրդում:

15. Որքան է խառնուրդի խտությունը (գ/լ, ն. պ.):

16–17. Ջրածնի պերօքսիդի 2,5 % զանգվածային բաժնով որոշակի զանգվածով լուծույթը քանակապես փոխազդել է 19,75 գ կալիումի պերմանգանատ պարունակող ջրային լուծույթի հետ:

16. Որքան է ջրածնի պերօքսիդի լուծույթի զանգվածը (գ):

17. Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):

18–19. Միացություններում +2 և +3 օքսիդացման աստիճաններ ցուցաբերող մետաղի որոշակի զանգվածով կշռանքը քլորի հետ փոխազդելիս առաջացնում է 65 գ զանգվածով քլորիդ, իսկ աղաթթվի հետ՝ 50,8 գ զանգվածով քլորիդ:

18. Ո՞րն է մետաղի կարգաթիվը:

19. Պահանջվող քլորը ստանալու համար ինչ զանգվածով (գ) 20 % զանգվածային բաժնով քլորաջրածնի լուծույթ պետք է օքսիդացնել մանգանի(IV) օքսիդով:

20-21. Իներտ էլեկտրոդներով 58,5 գ կերակրի աղ պարունակող ջրային լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի մինչև դեղնականաչավուն գազի անջատման ավարտը: Էլեկտրոլիզի ընթացքում կաթոդի վրա անջատված գազն անցկացրել են 108 գ զանգվածով պղնձի(II) օքսիդ պարունակող տաք խողովակով:

20. Որքան է գոյացած ջրի զանգվածը (գ):

21. Որքան է պղնձի(II) օքսիդի զանգվածային բաժինը (%) ստացված պինդ մնացորդում:

22-23. Կալիումի պերմանգանատի 63,2 գ զանգվածով նմուշի և աղաթթվի ավելցուկի փոխազդեցությունից ստացված գազը խառնել են 44,8 լ (ն. պ.) ջրածնի հետ և պայթեցրել:

22. Որքան է կալիումի պերմանգանատի և աղաթթվի փոխազդեցությունից ստացված գազի զանգվածը (գ):

23. Որքան է պայթեցնելուց հետո ստացված խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

24-26. Կալիումի հիդրօքսիդի 84 գ տաք լուծույթի մեջ անցկացրել են բլոր, ստացված լուծույթը՝ գոլորշացրել, չոր մնացորդը՝ կատալիզորդի առկայությամբ ենթարկել ջերմային քայքայման մինչև հաստատուն զանգված: Անջատվել է 336 մլ (ն. պ.) թթվածին:

24. Որքան է երկու ռեակցիաների քանակաչափական գործակիցների գումարը:

25. Որքան է կալիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%) ելային լուծույթում:

26. Որքան է ստացված պինդ մնացորդի զանգվածը (մգ):

27-29. Ազոտի և ջրածնի 1 : 4 ծավալային հարաբերությամբ 448 լ (ն. պ.) խառնուրդը կատալիզորդի առկայությամբ տաքացնելիս ազոտի կեսը փոխարկվել է վերջանյութի:

27. Որքան է ջրածնի ծավալը (լ, ն. պ.) ստացված գազային խառնուրդում:

28. Որքան է վերջանյութի ծավալային բաժինը (%) ստացված գազային խառնուրդում:

29. Ինչ քանակով (մոլ) պղինձ կստացվի պղնձի օքսիդը ստացված գազային խառնուրդով վերականգնելիս:

30–32. 195 գ զանգվածով երկվալենտ մետաղի քլորիդ պարունակող ջրային լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի մինչև դեղնականաչավուն գազի անջատման ավարտը: Պարզվել է, որ կաթոդի վրա անջատվել է 21 լ (ն. պ.) գազ, որը քանակապես փոխարկել են քլորաջրածնի: Անոդի վրա անջատված գազն ամբողջությամբ փոխազդեցության մեջ են դրել մետաղական երկաթի հետ:

30. Ո՞րն է երկվալենտ մետաղի կարգաթիվը:

31. Որքան է փոխազդած երկաթի զանգվածը (գ):

32. Որքան է ստացված քլորաջրածնի ծավալը (լ, ն. պ.):

33–35. Կալիումի նիտրատի, քլորիդի և յոդիդի 83 գ զանգվածով կշռանքը լուծել են 322,4 գ ջրում և ստացել լուծույթ: Ստացված լուծույթին ավելցուկով քլորաջուր ավելացնելիս անջատվել է 25,4 գ նստվածք: Նույն զանգվածով լուծույթի մեկ այլ նմուշին ավելացրել են փոխազդեցության համար անհրաժեշտ քանակով արծաթի նիտրատ, ինչի արդյունքում անջատվել է 104,4 գ զանգվածով նստվածք:

33. Որքան է կալիումի յոդիդի զանգվածային բաժինը (%) աղերի սկզբնական խառնուրդում:

34. Որքան է կալիումի նիտրատի զանգվածը (գ) աղերի ելային խառնուրդում:

35. Որքան է լուծված նյութի զանգվածային բաժինը (%) արծաթի նիտրատով մշակելուց հետո ստացված լուծույթում:

36–38. Նատրիումի երկու հալոգենիդների 96,5 գ զանգվածով խառնուրդ պարունակող լուծույթի մեջ անցկացրել են գազային քլոր մինչև աղերի լրիվ փոխարկումը: Լուծույթը գոլորշացնելուց և մնացորդը 300 °C ջերմաստիճանում մինչև հաստատուն զանգված տաքացնելուց հետո մնացել է 46,8 գ պինդ մնացորդ:

36. Որքան է հալոգենիդների մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը:

37. Որքան է լուծույթում մեծ մոլային զանգվածով հալոգենիդի զանգվածը (գ):

38. Ի՞նչ զանգվածով (գ) նյութ կանջատվի անոդի վրա, եթե փոքր մոլային զանգվածով հալոգենիդի ջրային լուծույթը ենթարկվի էլեկտրոլիզի:

39–41. Կալիումի երկու հալոգենիդների հախասար քանակներով (մոլ) 560 գ զանգվածով խտնուրդ պարունակող լուծույթին ավելացրել են արծաթի նիտրատի լուծույթի ավելցուկ, ինչի հետևանքով անջատվել է միայն մեկ նյութի 587,5 գ նստվածք:

39. Որքան է փոքր մոլային զանգվածով կալիումի հալոգենիդի մոլային զանգվածը (գ/մոլ):

40. Որքան է մեծ մոլային զանգվածով կալիումի հալոգենիդի զանգվածը (գ):

41. Ինչ ծավալով (լ, ն. պ.) քլորի հետ կփոխազդի հալոգենիդների տրված լուծույթը:

**2.2.1. Ջրածին, ջուր: Հալոգենների ընդհանուր բնութագիրը:
Հալոգենաջրածիններ: Շղթայական ռեակցիաներ: Հալոգենների և դրանց կարևորագույն միացությունների կիրառությունն ու կենսաբանական նշանակությունը**

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	294	15	1	29	50
2	34	16	1275	30	56
3	7	17	21	31	35
4	1550	18	26	32	42
5	8	19	438	33	40
6	4	20	9	34	20
7	24	21	68	35	20
8	414	22	335	36	253
9	56	23	25	37	45
10	14	24	25	38	40
11	21	25	4	39	58
12	90	26	4470	40	415
13	10	27	150	41	28
14	38	28	25		

2.2.2. Թթվածնի ենթախումբը: Թթվածին և ծծումբ

1. Արծաթի փոշի պարունակող խողովակի միջով ըստ ծավալի 10% օդոն պարունակող օզոնաթթվածնային խառնուրդ անցկացնելիս մետաղի զանգվածն ավելացել է 4 գրամով (օզոնը փոխազդել է ամբողջությամբ): Որքան է խողովակից դուրս եկող գազի ծավալը (լ, ն. պ.):
2. Օզոնացված թթվածնի ծավալն օզոնի լրիվ քայքայումից հետո ավելացել է 3 %-ով: Որքան է օզոնի ծավալային բաժինը (%) օզոնացված թթվածնում:
3. Ըստ ծավալի 20% օզոն պարունակող օզոնացված թթվածինն ավելցուկով վերցրած կալիումի յոդիդի ջրային լուծույթով անցկացնելիս անջատվել է 31,75 գ յոդ: Ինչ ծավալով (լ, ն. պ.) օզոնացված թթվածին է անցկացվել լուծույթով:
4. Թթվածնի և օզոնի խառնուրդի հարաբերական խտությունն ըստ հելիումի 9 է: Որքան է այդ խառնուրդում օզոնի ծավալային բաժինը (%):
5. Ըստ զանգվածի 4% չայրվող խառնուկներ պարունակող ծծմբի 250 գ զանգվածով նմուշի այրումից ստացվել է 134,4 լ (ն. պ.) ծծմբի(IV) օքսիդ: Որքան է ռեակցիայի ելքը (%):
6. $^{16}\text{O}_2$ մոլեկուլում նեյտրոնների մոլային բաժինը 34,694% է: Որքան է ծծմբի իզոտոպի զանգվածային թիվը:
7. Խիտ ծծմբական թթվի ազդեցությամբ սախարոզը վերածվում է A (պարզ) և B (բարդ) նյութերի.
$$\text{C}_{12}\text{H}_{22}\text{O}_{11} \xrightarrow{\text{H}_2\text{SO}_4(\text{խիտ})} \text{A} + \text{B}$$
Ինչ զանգվածով (գ) A նյութ կստացվի 684 գ սախարոզից:
8. Որքան է 25% խառնուկներ պարունակող 3,2 տոննա զանգվածով պիրիտից 75% ելքով ստացվող ծծմբային գազի ծավալը (մ^3 , ն. պ.):
9. Թթվածնի և օզոնի խառնուրդի հարաբերական խտությունն ըստ հելիումի 11 է: Որքան է այդ խառնուրդում օզոնի ծավալային բաժինը (%):
10. Որքան է ցինկի և խիտ ծծմբական թթվի փոխազդեցության ռեակցիայի հավասարման գործակիցների գումարային թիվը, եթե ծծմբական թթվի վերականգնման հիմնական արգասիքը ծծումբն է:
11. Որքան է $\text{FeCl}_2 + \text{H}_2\text{SO}_4(\text{խիտ}) \rightarrow \text{Fe}_2(\text{SO}_4)_3 + \text{HCl} + \text{SO}_2 + \text{H}_2\text{O}$ ուրվագրով ռեակցիայի հավասարման գործակիցների գումարային թիվը:

12. Ծծմբական թթվի 61,25% զանգվածային բաժնով որոշակի զանգվածով լուծույթին ավելացրել են 0,5 մոլ քանակով ծծմբի(VI) օքսիդ և ստացել ծծմբական թթվի 73,5% զանգվածային բաժնով նոր լուծույթ: Որքան է 61,25% զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթի զանգվածը (գ):

13. Ծծմբական թթվի 19% զանգվածային բաժնով 200 գ ջրային լուծույթին ինչ զանգվածով (գ) ծծմբի(VI) օքսիդ պետք է ավելացնել անջուր ծծմբական թթու ստանալու համար:

14–15. 11,2 լ (ն. ս.) ծծմբաջրածինն այրել են պահանջվածից եռակի անգամ մեծ ծավալով օդում և ստացված չոր գազային խառնուրդն անցկացրել փոխազդեցության համար անհրաժեշտ զանգվածով բրոմի 10% զանգվածային բաժնով ջրային լուծույթով:

14. Որքան է այրումից հետո ստացված չոր գազային խառնուրդում բոլոր բաղադրիչների գումարային քանակը (մոլ):

15. Որքան է գազային խառնուրդի հետ փոխազդած բրոմաջրի զանգվածը (գ):

16–17. Փակ անոթում փոխազդել են 1,4-ական լիտր (ն. ս.) ծծմբաջրածին և ծծմբի(IV) օքսիդ:

16. Որքան է գոյացած պինդ նյութի զանգվածը (գ):

17. Քանի անգամ է փոքրացել ճնշումն անոթում (ջուրը հեղուկացել է):

18–19. Պղնձի(I) և (II) սուլֆիդների որոշակի զանգվածով խառնուրդն օդի ավելցուկում բռվելիս գոյացել են 320 գ պղնձի(II) և 67,2 լ (ն. ս.) ծծմբի(IV) օքսիդներ:

18. Որքան է սուլֆիդների ելային խառնուրդի զանգվածը (գ):

19. Որքան է ծախսված թթվածնի զանգվածը (գ):

20–21. Պիրիտի 1 գ զանգվածով նմուշի օքսիդացումից ստացված գազը բավարարել է նատրիումի հիդրօքսիդի 25% զանգվածային բաժնով 4 մլ ծավալով լուծույթի ($\rho = 1,28$ գ/սմ³) լրիվ չեզոքացման համար:

20. Որքան է լուծույթում առաջացած աղի զանգվածը (մգ):

21. Որքան է խառնուկների զանգվածային բաժինը (%) պիրիտի նմուշում:

22-23. Որոշակի ծավալով ծծմբի(IV) օքսիդը լուծել են ծծմբային թթվի 10 % զանգվածային բաժնով 820 գ լուծույթում և ստացել թթվի 20,5 % զանգվածային բաժնով նոր լուծույթ:

22. Որքան է ծծմբի(IV) օքսիդի ծավալը (լ, ն. պ.):

23. Որքան է վերջնական լուծույթի զանգվածը (գ):

24-25. Խիտ ծծմբական թթվի հետ չփոխազդող խառնուկներ պարունակող մագնեզիումի և կալցիումի սուլֆիտների 398 գ զանգվածով խառնուրդի և խիտ ծծմբական թթվի փոխազդեցությունից անջատվել է 67,2 լ (ն. պ.) գազ, և ստացվել է 366,4 գ սուլֆատների խառնուրդ:

24. Որքան է կալցիումի սուլֆիտի զանգվածը ելային խառնուրդում (գ):

25. Որքան է խիտ ծծմբական թթվի հետ չփոխազդող խառնուկների զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:

26-27. Փակ անոթում տեղավորել են որոշակի քանակներով գազային ծծմբի(IV) օքսիդ և քլոր: Համապատասխան պայմաններում ստեղծվել է հավասարակշռություն SO_2 -ի 3,2 մոլ/լ, Cl_2 -ի 1,2 մոլ/լ և SO_2Cl_2 -ի 2,8 մոլ/լ հավասարակշռային կոնցենտրացիաներով:

26. Որքան է ծծմբի(IV) օքսիդի ելային կոնցենտրացիան (մոլ/լ):

27. Որքան է ծծմբի(IV) օքսիդի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

28-29. Առանց օդի մուտքի տաքացրել են 45 գ զանգվածով մագնեզիումի և 40 գ ծծմբի խառնուրդը, ստացված պինդ մնացորդը մշակել բավարար քանակով աղաթթվով:

28. Որքան է մագնեզիումի և ծծմբի փոխազդեցությունից ստացված նյութի զանգվածը (գ):

29. Որքան է պինդ մնացորդն աղաթթվով մշակելուց հետո ստացված գազի ծավալը (լ, ն. պ.):

30-31. Երկաթի(II) սուլֆատի 40 % զանգվածային բաժնով 15,20 գ լուծույթի և 1,56 գ զանգվածով կալիումի փոխազդեցությունից ստացված նստվածքն առանձնացրել են և շիկացրել մինչև հաստատուն զանգված, իսկ մնացած լուծույթին ավելացրել են 20 % զանգվածային բաժնով բարիումի քլորիդի 41,60 գ լուծույթ:

30. Որքան է շիկացումից հետո ստացված մնացորդի զանգվածը (մգ):

31. Որքան է բարիումի բլորիդի լուծույթ ավելացնելուց հետո ստացված նստվածքի զանգվածը (մգ):
- 32–33. *Կատալիզորդ պարունակող խողովակի միջով անցկացրել են ծծմբի(IV) օքսիդի և թթվածնի 179,2 լ (ն. պ.) խառնուրդ (խտությունը 2,5 գ/լ է): Գոյացած արգասիքը հեռացնելուց հետո մնացել է գազերի 78,4 լ (ն. պ.) ծավալով խառնուրդ:*
32. Որքան է ծծմբի(IV) օքսիդի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:
33. Որքան է ծծմբի(IV) օքսիդի փոխարկման աստիճանը (%):
- 34–35. *Քլորաջրածնի 25 % զանգվածային բաժնով 730 գ լուծույթի և 242,5 գ ցինկի սուլֆիդի փոխազդեցությունից անջատված գազը լրիվ այրել են թթվածնի ավելցուկում: Ստացված ծծմբի(IV) օքսիդն անցկացրել են կալիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 1120 գ լուծույթի մեջ:*
34. Որքան է թթու աղի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:
35. Որքան է չեզոք աղի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:
- 36–38. *Ըստ ծավալի 20 % օզոն պարունակող օզոնացված թթվածինն ավելցուկով վերցրած կալիումի յոդիդի ջրային լուծույթով անցկացնելիս անջատվել է 158,75 գ յոդ:*
36. Ինչ ծավալով (լ, ն. պ.) օզոնացված թթվածին է ծախսվել:
37. Որքան կղառնա օզոնացված թթվածնի նույն քանակությամբ նմուշի ծավալը (լ, ն. պ.) դրանում պարունակվող ամբողջ օզոնը թթվածնի փոխարկելիս:
38. Ինչ ծավալով (լ, ն. պ.) մեթան կայրվի կալիումի յոդիդի և օզոնացված թթվածնի փոխազդեցությունից հետո մնացած գազով:
- 39–41. *Միացություններում +1 հաստատուն օքսիդացման աստիճան ցուցաբերող մետաղի սուլֆիդի 55 գ նմուշը մշակել են նուրբ ծծմբական թթվով և անջատված գազն անցկացրել նատրիումի հիդրօքսիդի 24 % զանգվածային բաժնով 250 գ ջրային լուծույթի մեջ, ինչի հետևանքով ստացվել է աղի և ալկալու հավասարաձայն լուծույթ:*
39. Որքան է մետաղի կարգաթիվը:
40. Որքան է չփոխազդած նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

41. Որքան է անջատված գազը կլանելուց հետո ստացված լուծույթի զանգվածը (գ):

42–44. 150 գ զանգվածով պղնձարջասայր լուծել են 666 մլ ծավալով ջրում և ստացված լուծույթն իներտ էլեկտրոդներով ենթարկել են էլեկտրոլիզի: Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ էլեկտրոլիտային ավազանում մնացած լուծույթում թթվի քանակը երկու անգամ գերազանցել է աղի քանակը:

42. Որքան է անջուր աղի զանգվածը (գ) ելային լուծույթում:

43. Որքան է թթվի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

44. Ինչ զանգվածով (գ) բարիումի քլորիդի 20% զանգվածային բաժնով լուծույթ կպահանջվի էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթից սուլֆատ իոնները լրիվ նստեցնելու համար:

45–47. 450 գ զանգվածով պղնձարջասայր լուծել են 1998 մլ ծավալով ջրում և ստացված լուծույթն իներտ էլեկտրոդներով ենթարկել են էլեկտրոլիզի: Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ էլեկտրոլիտային ավազանում մնացած լուծույթում աղի քանակը երկու անգամ գերազանցել է թթվի քանակը:

45. Որքան է անջուր աղի զանգվածը (գ) ելային լուծույթում:

46. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

47. Ինչ զանգվածով (գ) բարիումի քլորիդի երկջրյա բյուրեղահիդրատ կպահանջվի վերջնական լուծույթի 1000 գ նմուշում առկա սուլֆատ իոնները նստեցնելու համար:

48–50. I մոլ ծծմբական թթու պարունակող 320 գ զանգվածով լուծույթին ավելացրել են I մոլ ծծմբի(VI) օքսիդ:

48. Որքան է վերջնական լուծույթում ծծմբական թթվի զանգվածը (գ):

49. Որքան է ծծումբ տարրի զանգվածային բաժինը (%) նոր ստացված լուծույթում:

50. Առավելագույնը ինչ ծավալով (լ, ն. պ.) ամոնիակ կկլանի նոր ստացված լուծույթի 62,5 գ նմուշը:

51–53. Պղնձի(II) սուլֆիդի և պիրիտի 864 գ խառնուրդը փոխազդեցության համար անհրաժեշտ օդի կրկնակի ծավալում շիկացնելիս պինդ նյութերի զանգվածը նվազել է 224 գրամով:

51. Որքան է պղնձի(II) սուլֆիդի զանգվածը (գ) տրված խառնուրդում:

52. Որքան է վերցված օդի ծավալը (լ, ն. պ.):

53. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ջրածին է անհրաժեշտ ստացված պինդ զանգվածը մետաղների փոխարկելու համար:

54–56. Ծծմբական թթվի 15,4% զանգվածային բաժնով 250 գ զանգվածով լուծույթում որոշակի քանակով ծծմբի(VI) օքսիդ լուծելով՝ ստացել են թթվի 46% զանգվածային բաժնով լուծույթ:

54. Որքան է լուծված ծծմբի(VI) օքսիդի զանգվածը (գ):

55. Ինչ զանգվածով (գ) ծծմբական թթվի 46% զանգվածային բաժնով լուծույթ կպահանջվի 36,8 գ երկաթի(III) օքսիդը լուծելու համար:

56. Ինչ զանգվածով (գ) ծծմբի(VI) օքսիդ պետք է լուծել ծծմբական թթվի 46% զանգվածային բաժնով 100 գ լուծույթում՝ 20% զանգվածային բաժնով օլեում ստանալու համար:

57–59. Պղնձի և ցինկի խառնուրդի 71 գ զանգվածով նմուշը տաքացման պայմաններում խիտ ծծմբական թթվի հետ փոխազդելիս ստացվել է 24,64 լ (ն. պ.) ծավալով գազ: Վերջինս կալիումի հիդրօքսիդի 649,6 գ լուծույթի մեջ անցկացնելիս ստացվել են 6 : 5 մոլային հարաբերությամբ թթու և չեզոք աղեր:

57. Որքան է պղնձի զանգվածը (գ) մետաղների ելային խառնուրդում:

58. Որքան է միջին աղի զանգվածը (գ) ստացված լուծույթում:

59. Որքան է թթու աղի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

2.2.2. Թթվածնի ենթախումբը: Թթվածին և ծծումբ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	56	21	4	41	267
2	6	22	28	42	96
3	14	23	900	43	5
4	25	24	48	44	624
5	80	25	20	45	288
6	34	26	6	46	8
7	288	27	60	47	183
8	672	28	70	48	196
9	75	29	42	49	16
10	15	30	1440	50	14
11	14	31	9320	51	384
12	160	32	75	52	3808
13	720	33	50	53	224
14	11	34	120	54	100
15	800	35	237	55	147
16	3	36	70	56	325
17	4	37	77	57	32
18	352	38	35	58	79
19	160	39	19	59	10
20	2016	40	20		

2.2.3. Ազոտ, ֆոսֆոր

1. Թթվածնի 47,52% զանգվածային բաժնով ավալիական մետաղի նիտրատի քայքայումից ստացվել է 11,2 լ (ն. պ.) գազ: Ինչ զանգվածով (գ) նիտրատ է քայքայվել:
2. Ինչ զանգվածով (գ) չոր նատրիումի հիդրօքսիդ կապահանջվի 372 գ կալցիումի ֆոսֆատից 75% ելքով ստացված օրթոֆոսֆորական թթուն չեզոքացնելու համար:
3. Ինչ զանգվածով (գ) ամոնիակ կգոյանա 56 լ (ն. պ.) ծավալով ազոտի և 168 լ (ն. պ.) ջրածնի խառնուրդը կատալիզորդի առկայությամբ տաքացնելիս, եթե ռեակցիայի ելքը 60% է:
4. Ինչ թվով ատոմներ են պարունակվում հետևյալ փոխարկումներին մասնակցող X նյութի մեկ մոլեկուլում.



5. Ինչ զանգվածով (գ) չոր նատրիումի հիդրօքսիդ է անհրաժեշտ 248 գ կալցիումի ֆոսֆատից ստացված օրթոֆոսֆորական թթուն չեզոքացնելու համար, եթե թթվի ստացման ելքը 75% է:
6. Ավելցուկով թթվածնում այրել են 67,2 լ (ն. պ.) ծավալով ֆոսֆին և ստացված ամբողջ զանգվածին ավելացրել 240 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթ: Որքան է լուծույթում գոյացած աղի զանգվածը (գ):

7–8. Ըստ մեթանի 2,875 հարաբերական խտություն ունեցող որոշակի ծավալով (ն. պ.) ազոտի օքսիդն առանց օդի մուտքի փոխազդել է կալիումի հիդրօքսիդի ավելցուկ պարունակող ջրային լուծույթի հետ, որի արդյունքում գոյացել է 116,25 գ զանգվածով աղերի խառնուրդ: Ազոտի այդ օքսիդի նույն ծավալով մեկ այլ նմուշ փոխազդել է կալիումի հիդրօքսիդի ավելցուկ պարունակող ջրային լուծույթի հետ անհրաժեշտ քանակությամբ թթվածնի առկայության պայմաններում:

7. Որքան է կլանված օքսիդի մեկ նմուշի ծավալը (լ, ն. պ.):

8. Որքան է կլանված թթվածնի ծավալը (լ, ն. պ.):

9–10. Պարբերական համակարգի II A խմբի մետաղի և նատրիումի նիտրատների խառնուրդի ջերմային քայքայումից ստացվել է 356 գ զանգվածով պինդ մնացորդ և ըստ հեղիումի 10 հարաբերական խտություն ունեցող 156,8 լ (ն. պ.) ծավալով գազերի խառնուրդ:

9. Որքան է II A խմբի մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

10. Ինչ զանգվածով (գ) նատրիումի նիտրատ է պարունակվում ելային խառնուրդում:

11–12. Ազոտի, ամոնիակի և էթանի 1:2:1 ծավալային հարաբերությամբ գազային խառնուրդն ավելցուկով աղաթթվի մեջ անցկացնելիս լուծույթի զանգվածն ավելացել է 42,5 գրամով:

11. Որքան է չկլանված գազի հարաբերական խտությունն ըստ օդի:

12. Որքան է ելային գազային խառնուրդի զանգվածը (գ):

13–14. Ազոտական թթվի 40 % զանգվածային բաժնով 500 մլ լուծույթին ($\rho = 1,26$ գ/սմ³) ավելացրել են ջուր և ստացել 10 % զանգվածային բաժնով ազոտական թթվի նոսր լուծույթ: Ստացված նոսր լուծույթը լրիվ օգտագործել են ավազի և պղնձի փոշիների խառնուրդից պղինձը լրիվ լուծելու համար:

13. Որքան է նոսրացման համար անհրաժեշտ ջրի զանգվածը (գ):

14. Որքան է 10 % զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթի հետ փոխազդած պղնձի զանգվածը (գ):

15–16. 380 գ զանգվածով նատրիումի ֆոսֆատի բյուրեղահիդրատը լուծել են 1,42 լ ջրում: Ստացվել է նատրիումի իոնների 2,0 մոլ/լ մոլային կոնցենտրացիայով լուծույթ ($\rho = 1,2$ գ/սմ³):

15. Ինչ քանակով (մոլ) նատրիումի իոններ են առկա լուծույթում:

16. Որքան է բյուրեղահիդրատի մոլային զանգվածը (գ/մոլ):

17–18. 896 լ (ն. պ.) ծավալով ամոնիակի կեսը լրիվ այրել են բավարար քանակով թթվածնում, իսկ մյուս կեսը՝ ենթարկել կատալիտիկ օքսիդացման 80 % ելքով:

17. Որքան է օքսիդացման և այրման ռեակցիաներին մասնակցած թթվածնի գումարային ծավալը (լ, ն. պ.):

18. Որքան է կատալիտիկ օքսիդացման ռեակցիայում ստացված գազի ծավալը (լ, ն. պ.):

19–20. Ամոնիումի նիտրատի զանգվածային բաժինը մետաղի(II) նիտրատի հետ խառնուրդում 18 % է, իսկ ազոտ տարրի զանգվածային բաժինն այդ նույն խառնուրդում 20,3 % է:

19. Ո՞րն է անհայտ մետաղի կարգաթիվը:

20. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին կանջատվի 250 գ զանգվածով նույն խառնուրդի ջերմային քայքայումից:

21–22. Որպես պարարտանյութ կիրառվող ֆոսֆորի 1 մոլ ատոմներ պարունակող աղում ֆոսֆորի զանգվածային բաժինը 26,9565 % է: Այդ աղում թթվածնի և ազոտի մոլային հարաբերությունը հավասար է 4 : 1:

21. Որքան է ֆոսֆոր պարունակող աղի մոլային զանգվածը (գ/մոլ):

22. Ինչ զանգվածով (գ) նոր աղ կստացվի այդ աղի 1 մոլը ավելցուկով կալիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի հետ փոխազդելիս:

23–25. Պղնձի(I) օքսիդի և պղնձի 1:5 մոլային հարաբերությամբ խառնուրդին փոխազդեցության համար անհրաժեշտ քանակով խիտ ազոտական թթու ավելացնելիս ստացվել է լուծույթ, և անջատվել է գազ: Լուծույթը գոլորշացրել են, իսկ մնացորդը՝ շիկացրել մինչև հաստատուն զանգված: Անջատված գազն ամբողջությամբ փոխազդել է 60 գ զանգվածով նատրիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի հետ:

23. Որքան է ազոտական թթվի վերականգնման արգասիքի զանգվածը (գ):

24. Որքան է շիկացման արդյունքում ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):

25. Որքան է սկզբնական խառնուրդի զանգվածը (գ):

26–28. Մագնեզիումի և կարմիր ֆոսֆորի 163 գ զանգվածով խառնուրդը տաքացրել են մինչև ռեակցիայի ավարտը և ստացված պինդ մնացորդին անհրաժեշտ քանակով աղաթթու ավելացնելիս ստացել 8,4 գ/մոլ միջին մոլային զանգվածով գազերի խառնուրդ: Վերջինս փակ անոթում անհրաժեշտ քանակով թթվածնում այրելիս գոյացել է օրթոֆոսֆորական թթվի ջրային լուծույթ:

26. Որքան է ֆոսֆորի զանգվածը (գ) սկզբնական խառնուրդում:

27. Որքան է աղաթթվում լուծված քլորաջրածնի քանակը (մոլ):

28. Որքան է օրթոֆոսֆորական թթվի մոլային բաժինը (%) ստացված լուծույթում:

29–31. Անոնիակի և ջրածնի 56 լ (ն. պ.) ծավալով խառնուրդին ավելացրել են այնքան քլորաջրածին, որ ստացվել է նույն ծավալով և ըստ ջրածնի 11,35 հարաբերական խտությամբ գազերի մեկ այլ խառնուրդ:

29. Որքան է ելային խառնուրդում ջրածնի ծավալային բաժինը (%):

30. Ինչ քանակով (մոլ) քլորաջրածին են ավելացրել:

31. Ինչ զանգվածով (գ) մետաղ կստացվի գազերի ելային խառնուրդով բավարար քանակությամբ պղնձի(II) օքսիդը վերականգնելիս:

32–34. Ազոտի և ամոնիակի 60 լ (ն. ս.) ծավալով խառնուրդին 10 լ (ն. ս.) քլորաջրածին ավելացնելիս ստացվել է ըստ հելիումի 6,23 հարաբերական խտությամբ գազերի նոր խառնուրդ:

32. Ինչ ծավալով (լ, ն. ս.) ամոնիակ է պարունակվում ելային խառնուրդում:

33. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) գազերի ստացված խառնուրդում:

34. Ինչ զանգվածով (գ) մետաղ կստացվի գազերի ստացված խառնուրդով բավարար քանակությամբ երկաթի(III) օքսիդը վերականգնելիս:

35–37. Ազոտի և ամոնիակի 70 լ (ն. ս.) ծավալով խառնուրդին 42 լ (ն. ս.) քլորաջրածին ավելացնելիս ստացվել է 30,125 գ/մոլ միջին մոլային զանգվածով գազերի նոր խառնուրդ:

35. Ինչ ծավալով (լ, ն. ս.) ամոնիակ է պարունակվել ելային խառնուրդում:

36. Որքան է ազոտի ծավալային բաժինը (%) գազերի ստացված խառնուրդում:

37. Ինչ զանգվածով (գ) երկաթի(III) օքսիդ է հնարավոր վերականգնել ելային խառնուրդում պարունակվող ամոնիակով:

38–40. Կալցիումի ֆոսֆիդի 91 գ զանգվածով կշռանքի լրիվ հիդրոլիզից ստացված գազն այրել են ավելցուկով թթվածնում, իսկ այրումից ստաջացած պինդ նյութը՝ լուծել կալիումի հիդրօքսիդի 7,5 մոլ/լ կոնցենտրացիայով 200 մլ ծավալով լուծույթում:

38. Որքան է հիդրոլիզի ընթացքում ստացված հիմքի զանգվածը (գ):

39. Ինչ ծավալով (լ, ն. ս.) օդ է ծախսվել հիդրոլիզի արդյունքում ստացված գազն այրելու համար:

40. Որքան է այրման արդյունքում ստացված պինդ նյութը կալիումի հիդրօքսիդի լուծույթում լուծելիս ստացված աղերի գումարային զանգվածը (գ):

41–43. Ծծմբի և ֆոսֆորի 15,7 գ զանգվածով խառնուրդը անհրաժեշտ քանակով 54% զանգվածային բաժնով ազոտական թթվում լուծելիս ստացվել է լուծույթ, և անջատվել է գորշ գազ: Ստացված գազը թթվածնի սոկայությամբ կալիումի հիդրօքսիդի 28% զանգվածային բաժնով լուծույթով կլանելիս ստացվել է 272,7 գ աղ:

41. Որքան է ֆոսֆորի մոլային բաժինը պարզ նյութերի ելային խառնուրդում (%):

42. Որքան է ծախսված կալիումի հիդրօքսիդի 28 % զանգվածային բաժնով լուծույթի զանգվածը (գ):
43. Ինչ զանգվածով (գ) 54 % զանգվածային բաժնով ազոտական թթու է ծախսվել ելային խառնուրդը լուծելու համար:
- 44–46. *Ֆոսֆորի(V) օքսիդի 14,2 գ զանգվածով կշռանքը լուծել են 73,8 գ տաք ջրում, ստացված լուծույթը չեզոքացրել են նատրիումի հիդրօքսիդի 2,5 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթով ($\rho = 1,1$ գ/սմ³) և ստացել միայն հիդրոֆոսֆատ:*
44. Որքան է թթվի մոլային բաժինը (%) ելային լուծույթում: 5
45. Որքան է ծախսված ալկալու լուծույթի ծավալը (մլ):
46. Ինչ զանգվածով ջուր պետք է ավելացնել վերջնական լուծույթին, որպեսզի ստացվի աղի 10 % զանգվածային բաժնով լուծույթ (գ):
- 47–49. *Կալցիումի նիտրիդի և մետաղական կալցիումի որոշակի զանգվածով խառնուրդը ջրում լուծելիս ստացվել է 1184 գ զանգվածով թափանցիկ լուծույթ, և անջատվել 13,44 լ (ն. պ.) ծավալով, ըստ հեղիումի 3–ի համասար հարաբերական խտությամբ գազերի խառնուրդ, որը քանակապես փոխազդել է ավելցուկով վերցրած տաք պղնձի(II) օքսիդի հետ:*
47. Որքան է կալցիումի զանգվածը (գ) ելային պինդ խառնուրդում:
48. Որքան է ստացված լուծույթում էլեկտրոլիտի զանգվածային բաժինը (%):
49. Ինչ զանգվածով (գ) պղնձի(II) օքսիդ է փոխազդել գազերի խառնուրդի հետ:
- 50–52. *Կալիումի և արծաթի նիտրատների որոշակի զանգվածով խառնուրդը շիկացրել են և ստացված գազերի խառնուրդն անցկացրել նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 200 գ զանգվածով լուծույթի մեջ: Փոխազդեցության ընթացքում ծախսվել է ալկալու 80 %-ը, իսկ գազերի խառնուրդի ծավալը կրճատվել է 2,25 անգամ:*
50. Ինչ զանգվածով (գ) աղ է գոյացել գազերի խառնուրդն ալկալու լուծույթով անցկացնելիս:
51. Ինչ քանակով (մոլ) գազերի խառնուրդ է փոխազդել ալկալու լուծույթի հետ:
52. Որքան է կալիումի նիտրատի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

53-55. Ավելցուկով թթվածնում 62 գ զանգվածով ֆոսֆորի այրման պինդ վերջանյութը լուծել են նատրիումի հիդրօքսիդի 40 % զանգվածային բաժնով 280 գ լուծույթում, այնուհետև ստացված լուծույթին ավելացրել են 48 գ նույն ավելի պարունակող ևս 2418 գ լուծույթ:

53. Որքան է այրման ընթացքում ծախսված թթվածնի ծավալը (լ, ն. պ.):

54. Որքան է փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (գ) առաջին լուծույթում:

55. Որքան է աղի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

2.2.3. Ազոտ, ֆոսֆոր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	101	20	28	39	224
2	216	21	115	40	155
3	51	22	212	41	60
4	8	23	69	42	540
5	144	24	70	43	315
6	426	25	58	44	5
7	28	26	31	45	160
8	7	27	11	46	20
9	24	28	20	47	8
10	340	29	40	48	5
11	1	30	3	49	64
12	115	31	208	50	68
13	1890	32	24	51	1
14	96	33	72	52	60
15	3	34	35	53	56
16	380	35	28	54	144
17	784	36	75	55	10
18	448	37	100		
19	20	38	111		

2.2.4. Ածխածին, սիլիցիում

1. Երկաթի(III) օքսիդն ածխի հետ տաքացնելիս ստացվել է 33,6 Լ (ն. պ.) ծավալով ածխածնի(II) օքսիդ: Ի՞նչ զանգվածով (գ) երկաթ է գոյացել:
2. Որոշակի քանակով ածխի և 250 գ պղնձի(II) օքսիդի շիկացումից ստացվել է գազերի խառնուրդ, որի այրման համար պահանջվել է 28 Լ (ն. պ.) թթվածին: Որքան է ածխածնի(IV) օքսիդի ծավալը (Լ, ն. պ.) շիկացման արդյունքում ստացված գազային խառնուրդում (պղնձի օքսիդն այս ռեակցիայում ամբողջությամբ է փոխազդել):
3. Անմնացորդ փոխազդել են 0,1 մոլ քանակով կալցիումի հիդրոկարբոնատը և 0,15 մոլ նատրիումի հիդրօքսիդը: Որքան է ռեակցիայի արգասիքների (բացի ջրից) մոլային զանգվածների գումարը (գ/մոլ):
4. Սիլիցիումի և ածխի 5 գ խառնուրդի և ավելցուկով վերցրած նատրիումի հիդրօքսիդի լուծույթի փոխազդեցությունից 2,8 Լ (ն. պ.) գազ է անջատվել: Որքան է ածխածնի զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:
5. Ի՞նչ զանգվածով (գ) թթու աղ կստացվի համապատասխան փոխարկումներով 8,4 գ մագնեզիումի կարբոնատից կալիումի հիդրոկարբոնատ ստանալիս:
6. Որքան է ըստ զանգվածի 20% խառնուկներ պարունակող 25 գ կրաքարի լուծման համար պահանջվող 7,3% զանգվածային բաժնով աղաթթվի լուծույթի զանգվածը (գ), եթե խառնուկները աղաթթվի հետ չեն փոխազդում:
7. Նատրիումի հիդրօքսիդի 30% զանգվածային բաժնով 160 գ լուծույթի մեջ որոշակի ծավալով ածխածնի(IV) և ածխածնի(II) օքսիդների խառնուրդ անցկացնելիս գազի զանգվածը պակասել է 22 գրամով: Ի՞նչ զանգվածով (գ) աղ է գոյացել լուծույթում:
8. Մետասիլիկաթթվի ջերմային քայքայման պինդ արգասիքը համապատասխան պայմաններում փոխազդել է վերականգնման համար անհրաժեշտ քանակով ածխածնի հետ, և ստացվել է 84 գ զանգվածով պարզ նյութ: Ի՞նչ զանգվածով (գ) մետասիլիկաթթու է ենթարկվել քայքայման:
- 9–10. *Կալցիումի և ածխածնի հալստարանոլային խառնուրդը թթվածնի բացակայությամբ տաքացրել են էլեկտրական վառարանում: Ստեղծնելուց հետո ստացված պինդ մնացորդը ջրով մշակելիս անջատվել է 11,2 Լ (ն. պ.) ծավալով գազերի խառնուրդ:*
9. Որքան է ստացված գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):
10. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

11–12. Սիլիցիումի և մագնեզիումի փոշիների խառնուրդը, որում մետաղի զանգվածային բաժինը 30 % է, տաքացրել են հալանոթում: Ռեակցիայի ավարտից հետո ստացված ամբողջ զանգվածը աղաթթվի հետ փոխազդելիս անջատվել է 4,48 լ (ն. ս.) ծավալով գազ:

11. Որքան է փոշիների ելային խառնուրդի զանգվածը (գ):


12. Ինչ զանգվածով (գ) սիլիցիում պարունակող նյութ կստացվի անջատված գազն այրելիս:

13–14. Կալցիումի կարբոնատի, ֆոսֆատի և ամոնիումի կարբոնատի 63 գ զանգվածով խառնուրդի կշռանքի շիկացումից ստացված 42,2 գ պինդ մնացորդին ավելացրել են ջուր և անցկացրել ավելցուկով ածխածնի(IV) օքսիդ: Մնացել է 31 գ չլուծված մնացորդ:

13. Որքան է չլուծված մնացորդը կազմող միացության մոլային զանգվածը (գ/մոլ):

14. Որքան է ամոնիումի կարբոնատի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

15–16. Կալցիումի օքսիդի 280 գ կշռանքից ստացել են 536 գ D աղ՝ ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



15. Որքան է համապատասխան փոխարկումների ընթացքում ստացված B նյութի ծավալը (լ, ն. ս.):

16. Որքան է D նյութի ստացման ռեակցիայի ելքը (%):

17–18. Նատրիումի կարբոնատի 464 գ բյուրեղահիդրատի քայքայումից գոյացած գոլորշին անցկացրել են ֆոսֆորի(V) օքսիդ պարունակող խողովակով, որի արդյունքում խողովակի պարունակության զանգվածն ավելացել է 252 գրամով:

17. Որքան է բյուրեղահիդրատի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

18. Ինչ զանգվածով (գ) 20 % զանգվածային բաժնով բարիումի հիդրօքսիդի լուծույթի հետ կփոխազդի 464 գ բյուրեղահիդրատը:

19–20. ՊՀ IV խմբի գլխավոր ենթախմբի տարրին համապատասխան պինդ, մոխրագույն, մետաղական փայլով A պարզ նյութը տաքացրել են թթվածնի հոսքում: Առաջացած սպիտակ բյուրեղային B նյութը հալել են ավելցուկով մետաղական մագնեզիումի հետ: Ստացված արգասիքները աղաթթվով մշակելիս անջատվել է D գազը, որն օդում ինքնաբոցավառվում է՝ առաջացնելով B նյութը:

19. Որքան է B նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

20. Որքան է D գազի հարաբերական խտությունն ըստ ջրածնի:

21–22. Մագնեզիումից և 120 գ զանգվածով սիլիցիումի(IV) օքսիդից բաղկացած խառնուրդն անօդ պայմաններում շիկացնելուց հետո ստացված պինդ զանգվածը փոխազդել է ավելցուկով աղաթթվի հետ: Ստացվել է 56 լ (ն. պ.) ծավալով երկու գազի խառնուրդ, որի հարաբերական խտությունն ըստ հելիումի 2 է:

21. Որքան է սիլանի ծավալային բաժինը (%) ստացված գազային խառնուրդում:

22. Որքան է մագնեզիումի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

23–25. Մագնեզիումի ու նատրիումի կարբոնատների և կալիումի հիդրոկարբոնատի խառնուրդը շիկացրել են մինչև հաստատուն զանգված, որի արդյունքում անջատվել է 5,6 լ (ն. պ.) ծավալով գազ, և մնացել է 36,1 գ զանգվածով պինդ մնացորդ: Վերջինս մշակել են 14,6% զանգվածային բաժնով աղաթթվով ($\rho = 1,125 \text{ գ/սմ}^3$), որի արդյունքում անջատվել է դարձյալ 5,6 լ (ն. պ.) գազ:

23. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

24. Որքան է մագնեզիումի կարբոնատի զանգվածային բաժինը (%) խառնուրդում:

25. Որքան է 14,6% զանգվածային բաժնով աղաթթվի ծավալը (մլ):

26–28. Միացություններում +3 օքսիդացման աստիճան ցուցաբերող մետաղը ածխի հետ փոխազդելիս ստացվել է 72 գ զանգվածով A պինդ նյութ, որում ածխածնի օքսիդացման աստիճանը –4 է: A նյութը ջրով մշակելիս անջատվել է 33,6 լ (ն. պ.) ծավալով գազ, և գոյացել է B պինդ նյութ:

26. Որքան է մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

27. Որքան է B նյութի զանգվածը (գ):

28. Ինչ նվազագույն զանգվածով (գ) 20% զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի լուծույթ է անհրաժեշտ B նյութի լրիվ լուծման համար:

29–31. Կալիումի և կալցիումի հիդրոկարբոնատների հալմաստանոլային խառնուրդը մինչև 1000 °C շիկացնելիս անջատվել է 112 լ (ն. պ.) ծավալով ածխածնի(IV) օքսիդ, և մնացել է պինդ մնացորդ:

29. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

30. Որքան է օքսիդի զանգվածը (գ) պինդ մնացորդում:
31. Ինչ քանակով (մոլ) ածխածնի(IV) օքսիդ կանջատվի ելային խառնուրդի նույն զանգվածով մեկ այլ նմուշն աղաթթվի ավելցուկով մշակելիս:
- 32–34. Սիլանի և մեթանի 1 մոլ խառնուրդն այրել են օդում: Ստացված գազագոլորշային խառնուրդն անցկացրել են ավելցուկով վերցրած նատրիումի հիդրօքսիդի լուծույթի մեջ, իսկ պինդ արգասիքը՝ մշակել կալիումի հիդրօքսիդի լուծույթով: Պարզվել է, որ ծախսված նատրիումի հիդրօքսիդի զանգվածը 5 անգամ մեծ է ծախսված կալիումի հիդրօքսիդի զանգվածից:*
32. Քանի անգամ է մեթանի մոլեկուլների թիվը մեծ սիլանի մոլեկուլների թվից:
33. Որքան է թթվածին տարրի զանգվածը (գ) պինդ արգասիքում:
34. Որքան է գազերի ելային խառնուրդի այրման համար ծախսված թթվածնի զանգվածը (գ):
- 35–37. Սիլիցիումի և մագնեզիումի հալսասարանդային խառնուրդի 130 գ զանգվածով նմուշը շիկացրել են մինչև ռեակցիայի ավարտը և ստացված պինդ զանգվածը բաժանել երկու հավասար մասի: Մի մասը մշակել են աղաթթվով, իսկ մյուսը՝ ալկալու ջրային լուծույթով:*
35. Որքան է պարզ նյութի զանգվածը (գ) ստացված պինդ մնացորդում:
36. Որքան է աղաթթվով մշակելիս անջատված գազի ծավալը (լ, ն. պ.):
37. Որքան է ալկալու լուծույթով մշակելիս անջատված գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):
- 38–40. Փակ անոթում շիկացրել են 175 գ զանգվածով կալցիումի օքսիդի և 67,5 գ ածխածնի խառնուրդը: Ելանյութերից մեկը սպառվել է անբողջությամբ: Անջատված գազը լուսավորման պայմաններում փոխազդել է 70 լ (ն. պ.) ծավալով քլորի հետ՝ գոյացնելով երկու գազից բաղկացած A խառնուրդ: Առաջին փոխարկումից հետո մնացած B պինդ զանգվածը մշակել են 2,5 մոլ/լ կոնցենտրացիայի աղաթթվով:*
38. Որքան է փակ անոթում գոյացած գազի ծավալը (լ, ն. պ.):
39. Որքան է A գազային խառնուրդում փոքր մոլային զանգվածով գազի մոլային բաժինը (%):
40. Ինչ ծավալով (մլ) աղաթթու է փոխազդում B պինդ մնացորդի հետ:

2.2.4. Ածխածին, սիլիցիում

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	56	15	112	29	524
2	7	16	670	30	112
3	290	17	232	31	6
4	65	18	1710	32	7
5	10	19	60	33	4
6	200	20	16	34	64
7	53	21	20	35	35
8	234	22	168	36	14
9	14	23	48	37	12
10	26	24	35	38	42
11	32	25	200	39	40
12	12	26	27	40	2500
13	310	27	156		
14	12	28	560		

ԳԼՈՒԽ 3. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ

3.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ, ՑԻԿԼՈԱԿԱՆՆԵՐ

1. Ալկանի մոլեկուլը պարունակում է առաջնային և չորրորդային ածխածնի համապատասխանաբար 9 և 3 ատոմ: Գտնե՛ք երրորդային ածխածնի ատոմների թիվը ալկանում, եթե նրա մոլեկուլում երկրորդային ածխածնի ատոմներ չեն պարունակվում:
2. 2,84 գ յոդմեթանի և 0,69 գ մետաղական նատրիումի փոխազդեցությունից ստացվել է 179,2 մլ (ն. պ.) ալկան: Որքան է ալկանի ստացման ռեակցիայի ելքը (%):
3. Որոշակի ծավալով ալկանի և այրման համար անհրաժեշտ թթվածնի խառնուրդը պայթեցնելուց և ջրային գոլորշիները խտացնելուց հետո ծավալը կրճատվել է 2 անգամ: Որքան է ալկանի մոլեկուլում ածխածնի sp^3 հիբրիդային օրբիտալների թիվը:
4. Ալկանի այրման արգասիքները նատրիումի հիդրօքսիդի 99,2 գ լուծույթով անցկացնելիս վերջինիս զանգվածը դարձել է 100 գ, իսկ նատրիումի կարբոնատի զանգվածային բաժինը՝ 1,06 %: Որքան է ատոմների թիվն ալկանի մոլեկուլում:
5. Ալկանների հոմոլոգիական շարքի միմյանց հաջորդող անդամների 2 : 3 մոլային հարաբերությամբ խառնուրդում ածխածնի ատոմների մոլային բաժինը 28,125 % է: Քանի՞ մոլ ատոմ ջրածին է պարունակվում ալկանների 10 մոլ խառնուրդում:
6. Որքան է ալկանի հարաբերական մոլեկուլային զանգվածը, եթե դրա մոլեկուլում ածխածին և ջրածին տարրերի ատոմների գումարային թիվը $8,428 \cdot 10^{24}$ է:
7. Որքան է պրոտոնների թիվն ածխածնի և քլորի առաջացրած միացության մոլեկուլում, եթե քլորի մոլային բաժինը դրանում 80 % է:
8. Որքան է գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ էթանի, որը ստացվել է քացախաթթվի և կարագաթթվի նատրիումական աղերի հավասարամոլային խառնուրդը չոր նատրիումի հիդրօքսիդի հետ շիկացնելիս:
9. Սահմանային ածխաջրածնի 2 լ ծավալով (ն. պ.) նմուշի զանգվածը հավասար է 30 լ ջրածնի զանգվածին: Որքան է այդ ածխաջրածնի մոլեկուլում պարունակվող պրոտոնների գումարային թիվը:
10. Որքան է ալկանի մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը, եթե 0,88 գ զանգվածով նրա ծավալը $1,16 \cdot 10^5$ Պա ճնշման տակ 17°C -ում 415 մլ է ($R = 8,3 \text{ Ջ/մոլ} \cdot \text{Կ}$):

11–12. Անհայտ ալկանի 36 գ զանգվածով միահալոգենածանցյալն ստանալու համար ծախսվել է 11,2 լ բլոր:

11. Որքան է ալկանի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

12. Որքան է առաջնային ածխածնի ատոմների թիվը ալկանի այն իզոմերի մոլեկուլում, որից կառաջանա միայն մեկ միահալոգենածանցյալ:

13–14. Լուսավորման պայմաններում փոխազդել են 8,96 լ (ն. պ.) մեթանը և 17,92 լ բլորը: Քլորացման արգասիքները սենյակային ջերմաստիճանում անցկացրել են նատրիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի մեջ:

13. Որքան է մեթանի քլորացման արգասիքի զանգվածը (գ):

14. Որքան է փոխազդած նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

15–16. Տաք $AlCl_3$ պարունակող խողովակով 8,96 լ (ն. պ.) բութանն անցկացնելիս ստացվել է գազային խառնուրդ:

15. Որքան է ստացված գազային խառնուրդում նյութերի գումարային քանակը (մմոլ):

16. Որքան է ստացված խառնուրդում առկա ածխաջրածինների մեկական մոլեկուլում առաջնային ածխածնի ատոմների գումարային թիվը:

17–18. Էթիլենի և պրոպանի 5 լ (ն. պ.) խառնուրդին ավելացրել են 5 լ ջրածին: Խառնուրդը կատալիզատորի վրայով անցկացնելիս ծավալը փոքրացել է երկու լիտրով:

17. Որքան է էթիլենի ծավալը (լ) ելային խառնուրդում:

18. Որքան է պրոպանի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

19–20. 1 մոլ նյութաքանակով ալկանի լրիվ այրման համար ծախսվել է 6,5 մոլ թթվածին:

19. Որքան է ալկանի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:

20. Որքան է իզոմեր ալկանների թիվը:

21–22. Ալկանը լրիվ այրելիս ստաջացել են 8,96 լ ածխածնի(IV) օքսիդ և 9 գ ջուր: Այդ նույն ալկանի քլորացումից հնարավոր է ստանալ երկու միաքլորոտեղակարված և երեք երկքլորոտեղակարված արգասիքներ:

21. Որքան է ալկանի մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը:

22. Որքան է ալկանի մոլեկուլում մեթիլ խմբերի թիվը:

23–24. Միահիմն հազեցած կարբոնատթվի նատրիումական աղը և նատրիումի հիդրօքսիդը միահալելիս առաջացել է 22,4 լ (ն. ս.) գազ ($\rho = 1,965$ գ/լ):

23. Որքան է փոխազդած աղի զանգվածը (գ):

24. Որքան է ստացված գազային նյութի մոլեկուլում ջրածնի ատոմների թիվը:

25–26. Քացախատթվի և կարազատթվի նատրիումական աղերի 115 գ նատրիում տարր պարունակող խառնուրդը չոր նատրիումի հիդրօքսիդի հետ հալելիս անջատվել է 21,6 գ/մոլ միջին մոլային զանգվածով գազային խառնուրդ:

25. Որքան է մեթանի նյութաքանակը (մոլ) ստացված գազային խառնուրդում:

26. Որքան է աղերի ելային խառնուրդի զանգվածը (գ):

27–28. 11,2 լ (ն. ս.) հազեցած ածխաջրածնում առկա է 24 գ ածխածին:

27. Որքան է ածխաջրածնի մոլային զանգվածը (գ/մոլ):

28. Որքան է այդ միացության մեկ մոլեկուլում sp^3 հիբրիդային օրբիտալների գումարային թիվը:

29–31. Մեթիլքլորիդի, մեթիլբրոմիդի և ցիկլոպրոպանի 9,82 գ գազային խառնուրդում ատոմների ընդհանուր թիվը $5,719 \cdot 10^{23}$ է: Հայտնի է, որ երկու հալոգենների ատոմների թիվն այդ խառնուրդում վեց անգամ պակաս է ջրածնի ատոմների թվից:

29. Որքան է ելային խառնուրդում մեծ մոլային զանգված ունեցող նյութի մոլային բաժինը (%):

30. Ինչ ծավալով (մլ) ջրածին կծախսվի սկզբնական խառնուրդը հիդրման ենթարկելիս:

31. Որքան է փոքր մոլային զանգված ունեցող աղի մոլային բաժինը (%) ելային խառնուրդն անհրաժեշտ քանակությամբ մետաղական նատրիումի հետ տաքացնելուց հետո ստացված աղերի խառնուրդում:

32–34. Ածխաջրածնի գոլորշիների խտությունն ըստ հելիումի 14 է: Հայտնի է, որ այն չի գունազրկում կալիումի պերմանգանատի լուծույթը, իսկ կատալիզատորի առկայությամբ հեշտությամբ փոխազդում է ջրածնի հետ՝ առաջացնելով երկու հազեցած ածխաջրածինների խառնուրդ:

32. Որքան է ելային ածխաջրածնի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

33. Որքան է ելային ածխաջրածնում մեթիլ խմբերի թիվը:

34. Որքան է ստացված երկու ածխաջրածինների առաջնային ածխածնի ատոմների գումարային թիվը:

35–37. Նույն թվով երկրորդային և առաջնային ածխածիններ պարունակող ն-պլանի և ացետիլենի $22,4 \text{ Լ}$ (ն. պ.) խառնուրդը, որի խտությունն ըստ հելիումի $9,7 \text{ է}$, այրել են թթվածնի ավելցուկում, իսկ այրման արգասիքները հաջորդաբար անցկացրել են խիտ ծծմբական թթվի և 25% զանգվածային բաժնով 640 գ նատրիումի հիդրօքսիդի լուծույթի միջով:

35. Որքան է պլանի մեկ մոլեկուլում պրոտոնների թիվը:

36. Որքան է ացետիլենի ծավալային բաժինը (%) խառնուրդում:

37. Որքան է վերջնական լուծույթում փոքր մոլային զանգվածով աղի քանակը (մմոլ):

38–40. Մեթանի $6,02 \cdot 10^{24}$ թվով էլեկտրոն պարունակող նմուշին ավելացրել են այնքան պրոպան, որ նեյտրոնների և պրոտոնների թվային հարաբերությունը խառնուրդում դարձել է $2 : 3$:

38. Որքան է ավելացրած պրոպանի նյութաքանակը (մոլ):

39. Որքան է ստացված գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

40. Որքան է ածխածին տարրի ատոմների մոլային բաժինը (%) խառնուրդում:

41–43. Որոշակի զանգվածով քացախաթթվին ավելացրել են անհրաժեշտ քանակով նատրիումի հիդրօքսիդ և տաքացրել մինչև հնարավոր ռեակցիաների ավարտը: Անջատվել է $22,4 \text{ Լ}$ (ն. պ.) գազ, որն այնուհետև տաքացրել են մինչև 1500°C և ստացված գազային խառնուրդն անցկացրել են սնդիկի(II) սուլֆատ պարունակող ջրային լուծույթով: Վերջինում հայտնաբերվել է $16,5 \text{ գ}$ էթանապ:

41. Որքան է քացախաթթվի զանգվածը (գ):

42. Որքան է ծախսված նատրիումի հիդրօքսիդի նյութաքանակը (մոլ):

43. Որքան է Կուչերովի ռեակցիայի ելքը (%), եթե մյուս ռեակցիաներն ընթացել են քանակական ելքով:


3.1. Քիմիական կառուցվածքի տեսություն, սահմանային ածխաջրածիններ, ցիկլոալկաններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	1	16	5	31	40
2	80	17	2	32	56
3	12	18	60	33	1
4	5	19	14	34	5
5	92	20	2	35	34
6	58	21	10	36	60
7	74	22	3	37	1600
8	1	23	110	38	1
9	18	24	8	39	30
10	8	25	4	40	25
11	72	26	438	41	60
12	4	27	58	42	2
13	34	28	16	43	75
14	32	29	40		
15	400	30	1120		

3.2. ՈՉ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ

1. Ինչ զանգվածով (գ) բրոմ կմիանա 53 գ էթիլբենզոլի դեհիդրման արգասիքին, որը կողմնային շղթայում կրկնակի կապ է պարունակում:
2. Կողմնային շղթայում մեկ կրկնակի կապ պարունակող արոմատիկ ածխաջրածնի մոլեկուլում ածխածին և ջրածին տարրերի ատոմների քանակները նույնն են: Որքան է արոմատիկ ածխաջրածնի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
3. 10 դմ³ ծավալով ջրածինը խառնել են էթանի և էթենի 10 դմ³ խառնուրդի հետ և անցկացրել տաք կատալիզատորի վրայով: Ստացվել է 18 դմ³ ծավալով նոր խառնուրդ: Որքան է ելային խառնուրդում էթենի ծավալային բաժինը (%):
4. Նույն թվով ածխածնի ատոմներ պարունակող ալկինի և ալկենի հավասարամոլային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 20,5 է: Որքան է σ -կապերի թիվն ալկինի մոլեկուլում:
5. Ինչ ծավալով (լ, ն. պ.) օդ է պահանջվում 20 % չայրվող խառնուրդներ պարունակող 56 լ (ն. պ.) ացետիլենն այրելու համար:
6. Ինչ զանգվածով (գ) քլորոպրեն կստացվի 112 լ (ն. պ.) էթինից, եթե դիմերացումն ընթացել է 80 % ելքով, իսկ քլորաջրածնի միացումը՝ քանակապես:
7. Էթենի և պրոպանի խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 16 է: Որքան է պրոպանի ծավալային բաժինը խառնուրդում (%):
8. 20 % խառնուկ պարունակող կալցիումի կարբիդի 60 կգ նմուշից երկու փուլով ստացել են 15,6 կգ բենզոլ: Որքան է երկրորդ փուլի ելքը (%), եթե առաջին փուլն ընթացել է քանակապես:
9. Արոմատիկ ածխաջրածնի մոլեկուլում ջրածնի զանգվածային բաժինը 10 % է: Որքան է ածխածնի ատոմների թիվն այդ նյութի կողմնային շղթայում:

10-11. Էթանից բութադիենի ստացումն իրականացվել է՝ ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



10. Ինչի է հավասար A նյութում σ -կապերի թիվը:

11. Ինչ ծավալով (լ, ն. պ.) բութադիեն կստացվի 600 գ էթանից, եթե փոխարկումներն ընթանան 50 % ելքերով:

12–13. Ացետիլենից ստացել են վինիլբրոմիդ, պոլիմերացրել և 80% ելքով ստացել են մեկ տոննա 20000 գ/մոլ միջին մոլային զանգվածով պոլիմեր:

12. Որքան է պոլիմերացման աստիճանը:

13. Որքան է փոխազդած ացետիլենի ծավալը(մ³):

14–15. Բենզոլի և ստիրոլի որոշակի զանգվածով խառնուրդը գունազրկում է բրոմի 3,2% զանգվածային բաժնով 500 գ ջրային լուծույթը: Նույն զանգվածով խառնուրդի մեկ այլ նմուշ այրելիս գոյացել է 18 գ ջուր:

14. Որքան է ստիրոլի զանգվածային բաժինն (%) ածխաջրածինների խառնուրդում:

15. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին կծախսվի սկզբնական խառնուրդն այրելիս:

16–17. Պրոպանի և ացետիլենի խառնուրդը բրոմաջրի միջով անցկացնելիս վերջինիս զանգվածն ավելացել է 5,2 գրամով, իսկ ածխաջրածինների նույն ծավալով խառնուրդը լրիվ այրելիս ծախսվել է 168 լ (ն. պ.) օդ:

16. Որքան է պրոպանի մոլային բաժինը (%) գազերի խառնուրդում:

17. Որքան է ածխաջրածինների խառնուրդի այրումից ստացված ածխաթթու գազի զանգվածը (գ):

18–19. Լրիվ այրելիս 20 լիտր ալկինի համար ծախսվում է 110 լ (ն. պ.) թթվածին:

18. Որքան է ալկինի մոլեկուլում ածխածնի ատոմների թիվը:

19. Որքան է բոլոր իզոմեր ալկինների թիվը:

20–21. Չհազեցած ածխաջրածնի 0,5 մոլում ածխածնի և ջրածնի զանգվածները կազմում են համապատասխանաբար 30 և 5 գրամ:

20. Որքան է ածխաջրածնի մոլային զանգվածը (գ/մոլ):

21. Որքան է ածխաջրածնի մոլեկուլում sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը:

22–23. Նիտրացնող խառնուրդով արոմատիկ ածխաջրածինը նիտրացնելիս ստացվում են երկու իզոմերային միանիտրոածանցյալներ, որոնց մոլեկուլում ազոտի զանգվածային բաժինը 8,4848% է:

22. Որքան է ածխածնի ատոմների թիվը ածխաջրածնի մեկ մոլեկուլում:

23. Որքան է ածխաջրածնի ճիշտ անվանման մեջ բենզոլային օղակում տեղակալիչների դիրքերը ցույց տվող թվերի գումարը:

24–25. Արոմատիկ ածխաջրածնի մեկ մոլը լրիվ այրելիս ծախսվել է 10,5 մոլ թթվածին:

24. Որքան է ելային ածխաջրածնի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:

25. Ինչի է հավասար նույն ածխաջրածնի դասին պատկանող բոլոր իզոմերներում sp^2 հիբրիդային օրբիտալների գումարային թիվը:

26–27. Հեքսաբյուրանը ստանում են ցրված լույսի ազդեցությամբ՝ բենզոլին գազային քլոր միացնելով:

26. Որքան է σ -կապերի թիվը հեքսաբյուրանի մեկ մոլեկուլում:

27. Քանի անգամ է փոխազդող քլորի նյութաքանակը մեծ բենզոլի նյութաքանակից:

28–30. Կալցիումի կարբիդի և հիդրիդի խառնուրդի որոշակի զանգվածով նմուշը հիդրոլիզի ենթարկելիս գոյացել է ըստ ջրածնի 3,4 հարաբերական խտությամբ գազային խառնուրդ, որի այրումից ստացվել է 22,5 գ ջուր:

28. Որքան է հիդրոլիզի ենթարկված պինդ նյութերի խառնուրդի զանգվածը (գ):

29. Որքան է հիդրոլիզի արդյունքում ստացված գազային խառնուրդի ծավալը (լ, ն. պ.):

30. Ինչ ծավալով (լ, ն. պ.) օդ է ծախսվել գազային խառնուրդն այրելիս:

31–33. Անհայտ ալկենի և կալիումի պերմանգանատի լուծույթի փոխազդեցությունից ստացված նստվածքի զանգվածը 1,0357 անգամ գերազանցել է փոխազդած ալկենի զանգվածը:

31. Որքան է ալկենի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

32. Որքան է ալկենի բանաձևին համապատասխանող բոլոր իզոմերների թիվը՝ տարածականը և միջդասայինը ներառյալ:

33. Որքան է ալկենի ծավալային բաժինը (%) ջրածնի հետ խառնուրդում, որի հարաբերական խտությունն ըստ հելիումի 3,2 է:

34–36. Կողմնային շղթայում մեկ կրկնակի կապ պարունակող արոմատիկ ածխաջրածնի և բլորի փոխազդեցությունից ստացվել է 3,78 գ երկբլորիդ: Այդ նույն ածխաջրածնի և բրոմաջրի փոխազդեցությունից ստացվել է 5,56 գ երկբրոմիդ:

34. Որքան է ատոմների թիվը ածխաջրածնի մոլեկուլում:

35. Որքան է խնդրի պայմանը բավարարող և կողմնային շղթայում կրկնակի կապ պարունակող իզոմերների թիվը (ցիս–տրանս իզոմերները բացառել):

36. Որքան է ածխաջրածնի I մոլի լրիվ այրման համար անհրաժեշտ թթվածնի զանգվածը (գ):

37–39. Գազային խառնուրդը, որը կազմված է պրոպենից, պրոպանից և 32 գ կալցիումի կարբիդի լրիվ հիդրոլիզից ստացված գազից, քանակապես փոխազդում է 32% զանգվածային բաժնով 1 կգ բրոմաջրի հետ: Բրոմաջրում չլուծված գազի ծավալը 9,6 անգամ փոքր է նույն խառնուրդի լրիվ այրման համար անհրաժեշտ թթվածնի ծավալից:

37. Որքան է կալցիումի կարբիդի հիդրոլիզից ստացված գազի զանգվածը (գ):

38. Որքան է պրոպենի զանգվածը (գ) սկզբնական խառնուրդում:

39. Որքան է պրոպանի զանգվածային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

40–42. Էթանի, էթինի և պրոպանի խառնուրդն անցկացրել են բրոմաջրի միջով: Մնացած գազային խառնուրդի խտությունն ըստ հելիումի դարձել է 9,25: Նույն ծավալով սկզբնական խառնուրդին հավասար ծավալով ջրածին են ավելացրել, խառնուրդը տաքացրել նիկել կատալիզատորի առկայությամբ: Ռեակցիայի ավարտից հետո վերջնական խառնուրդի խտությունն ըստ ջրածնի դարձել է 11,5:

40. Որքան է էթինի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

41. Որքան է պրոպանի ծավալային բաժինը (%) վերջնական խառնուրդում:

42. Ավելացրած ջրածնի ո՞ր մասն է (%) փոխազդել:

43–45. Համապատասխան պայմաններում արոմատիկ ածխաջրածնի որոշակի զանգվածով նմուշը բրոմի ավելցուկի հետ փոխազդելիս գոյանում է 72,948% զանգվածային բաժնով բրոմ պարունակող եռբրոմաձանցյալ:

43. Որքան է ելային ածխաջրածնի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

44. Որքան է արոմատիկ ածխաջրածնի մոլեկուլում σ -կապերի թիվը:

45. Ինչ ծավալով (լ, ն. պ.) օդ կծախսվի 0,5 մոլ ածխաջրածնի լրիվ այրման համար:

46–48. Այլեւնների հոմոլոգիական շարքում միմյանց հաջորդող երկու անդամների մեկական մոլեկուլներում ջրածնի ատոմների զումարային թիվը 5–ով մեծ է ածխածնի ատոմների զումարային թվից: Ածխաջրածինների 8,96 լ (ն. պ.) հավասարաճանաչային խառնուրդը կալիումի պերմանգանատի ավելցուկ պարունակող ջրային լուծույթով անցկացնելիս 75 % էլքով ենթարկվել է օքսիդացման:

46. Որքան է փոքր մոլային զանգվածով օրգանական վերջանյութի զանգվածը (մգ):

47. Որքան է մեծ մոլային զանգվածով օրգանական վերջանյութի նյութաքանակը (մմոլ):

48. Որքան է փոխազդած կալիումի պերմանգանատի նյութաքանակը (մմոլ):

3.2. Ոչ սահմանային ածխաջրածիններ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	80	17	44	33	20
2	104	18	4	34	19
3	20	19	4	35	6
4	6	20	70	36	368
5	560	21	3	37	13
6	177	22	9	38	42
7	25	23	6	39	50
8	80	24	18	40	20
9	3	25	72	41	25
10	7	26	18	42	40
11	28	27	3	43	92
12	320	28	37	44	15
13	448	29	28	45	504
14	40	30	126	46	9300
15	56	31	56	47	150
16	50	32	6	48	200

3.3. ՍՊԻՐՏՆԵՐ ԵՎ ՖԵՆՈԼՆԵՐ

1. Ի՞նչ զանգվածով (գ) օրգանական միացություն կառաջանա 188 գ ֆենոլի և խիտ ազոտական թթվի քանակական փոխազդեցությունից:
2. Հազեցած միատոմ սպիրտի այրումից գոյացած ածխաթթու գազի ծավալը 8 անգամ մեծ է նույն քանակով սպիրտի և մետաղական նատրիումի փոխազդեցությունից գոյացած գազի ծավալից: Ածխածնի քանի՞ ատոմ է առկա սպիրտի մեկ մոլեկուլում:
3. Ի՞նչ քանակով (մմոլ) ջրածին կանջատվի 87,5 գ էթանոլի 46% զանգվածային բաժնով ջրային լուծույթը անհրաժեշտ քանակով մետաղական նատրիումով մշակելիս:
4. 135 գ քլորբենզոլից երկու փուլով ստացել են 164,88 գ պիկրինաթթու: Որքան է երկրորդ փուլի ելքը (%), եթե առաջին փուլի ելքը 80% է:
5. Թթվածին տարրի զանգվածային բաժինը հազեցած միատոմ սպիրտում 21,62% է: Որքան է իզոմերային առաջնային սպիրտների թիվը:
6. Նատրիումի և պրոպանոլի փոխազդեցությունից ստացված ջրածնի լրիվ այրման համար ծախսվել է 28 լ (ն. պ.) օդ: Ի՞նչ զանգվածով (գ) պրոպանոլ է ծախսվել:
7. Սահմանային միատոմ սպիրտում ածխածին տարրի զանգվածային բաժինը 52,174% է: Որքան է նույն բաղադրությունն ունեցող բոլոր իզոմեր նյութերի թիվը:
8. Սահմանային միատոմ սպիրտի մոլեկուլում ատոմների ընդհանուր թիվը 15 է: Որքան է նույն բաղադրությունն ունեցող իզոմեր սպիրտների թիվը:
9. Որքան է ֆենոլի զանգվածային բաժինը դրա սպիրտային լուծույթում, եթե 47 գ այդ լուծույթի և բրոմաջրի փոխազդեցությունից անջատվել է 33,1 գ նստվածք:
- 10–11. *Հազեցած միատոմ սպիրտի 22,2 գ նմուշի դեհիդրատացումից ստաջացել է 1:9 մոլային հարաբերությամբ երկու իզոմեր ալկենների խառնուրդ, ընդ որում՝ փոքր զանգվածային բաժնով նյութի զանգվածը 1,68 գրամ է:*
10. Որքան է սպիրտի մոլային զանգվածը (գ/մոլ):
11. Որքան է իզոմեր սպիրտների թիվը:
- 12–13. *Ֆենոլի 188 գ զանգվածով նմուշի և անհրաժեշտ քանակով բրոմի ջրային լուծույթի փոխազդեցությունից ստացված նստվածքը հետաքրքել են, իսկ մնացած լուծույթը՝ չեզոքացրել նատրիումի հիդրօքսիդով:*
12. Որքան է գոյացած նստվածքի զանգվածը (գ):

13. Ինչ զանգվածով (գ) ավկալի է փոխազդել:

14–15. Անմնացորդ փոխազդել են 1 : 3 մոլային հարաբերությամբ գլիցերինը և ազոտական թթուն: Ռեակցիայի հետևանքով գոյացած ջուրը մետաղական նատրիումի հետ փոխազդելիս անջատվել է 168 լ (ն. ս.) գազ:

14. Ինչ զանգվածով (գ) օրգանական միացություն է գոյացել:

15. Ինչ զանգվածով 1,2,3–եռբրոմպրոպանից կարող է ստացվել օգտագործված գլիցերինը:

16–17. Ֆենոլի և արոմատիկ ածխաջրածնի որոշակի զանգվածով խառնուրդից ֆենոլն ստանձնացնելու համար պահանջվել է նատրիումի հիդրօքսիդի 16 % զանգվածային բաժնով 50 գ լուծույթ: Ջրային շերտն ստանձնացնելուց հետո՝ մնացորդը երկաթի(III) բրոմիդի առկայությամբ բրոմացնելիս, ստացվել է 0,4 մոլ քանակությամբ 62,8 գ միաբրոմ–տեղակալված ածխաջրածին:

16. Որքան է ելային խառնուրդի զանգվածը(գ):

17. Ինչ թվով ատոմներ են պարունակվում արոմատիկ ածխաջրածնի մոլեկուլում:

18–19. Բենզոլի հոմոլոգի 4 մոլի և որոշակի քանակով ֆենոլի 556 գ խառնուրդին ավելցուկով բրոմաջուր ավելացնելիս ստացվել է 662 գ նստվածք:

18. Որքան է ֆենոլի զանգվածը խառնուրդում (գ):

19. Որքան է բենզոլի հոմոլոգի մոլեկուլում ջրածնի ատոմների գումարային թիվը:

20–21. Սահմանային երկատոմ սպիրտի 9 գ նմուշը անհրաժեշտ քանակությամբ մետաղական նատրիումի հետ փոխազդելիս անջատվել է 2,24 լ (ն. ս.) ջրածին:

20. Որքան է սպիրտի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:

21. Որքան է բոլոր իզոմերային սպիրտների թիվը:

22–23. Պրոպանոլի և էթանոլի 3,94 գ խառնուրդը ծծմբական թթվի միջավայրում օքսիդացրել են կալիումի պերմանգանատով, որի ծախսը եղել է այնքան, որքան 2,52 գ էթիլենը չեզոք միջավայրում մինչև էթիլենգլիկոլ օքսիդացնելիս:

22. Որքան է կալիումի պերմանգանատի զանգվածը (մգ):

23. Որքան է պրոպանոլի զանգվածը (մգ) ելային խառնուրդում:

24–25. 18,5 գ միատոմ սահմանային սպիրտի դեհիդրատացումից ստացվել է 14 գ սիմետրիկ ալկեն:

24. Որքան է ալկենի մոլային զանգվածը (գ/մոլ):

25. Որքան է մեթիլ խմբերի թիվը սպիրտի մեկ մոլեկուլում:

26–27. Էթիլենգլիկոլի և գլիցերինի որոշակի զանգվածով խառնուրդի մեջ մդել են մեծ ավելցուկով քլորաջրածին: Հնարավոր ռեակցիաներն ավարտվելուց հետո զոյացել է քլորածանցյալների 59,2 գ խառնուրդ, որում մեծ մոլային զանգվածով նյութի մոլային բաժինը 40 % է:

26. Որքան է անջատված ջրի նյութաքանակը (մմոլ):

27. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):

28–30. Ֆենոլի էթանոլային լուծույթը բաժանել են երկու հավասար մասի: Առաջին կեսի չեզոքացման համար պահանջվել է կալիումի հիդրօքսիդի 5 մոլ/լ կոնցենտրացիայով 100 մլ լուծույթ: Մյուս կեսի և ավելցուկով վերցրած մետաղական կալիումի փոխազդեցությունից անջատվել է գազ, որը կարող է բավարարել 2115 գ օլեինաթթուն հիդրելու համար:

28. Որքան է ֆենոլի քանակը (մոլ) ելային խառնուրդում:

29. Որքան է ելային լուծույթի զանգվածը (գ):

30. Որքան է օլեինաթթվի հիդրոմից առաջացած կարբոնաթթվի զանգվածը (գ):

31–33. Ֆենոլի և բենզիլսպիրտի խառնուրդի և անհրաժեշտ քանակությամբ մետաղական կալիումի փոխազդեցությունից անջատվել է 8,4 լ (ն. ս.) գազ: Օրգանական նյութերի նույն զանգվածով մեկ այլ նմուշ բավարար քանակությամբ բրոմաջրով մշակելիս անջատվել է 165,5 գ սպիտակ նստվածք:

31. Որքան է օրգանական նյութերի ելային խառնուրդի զանգվածը (գ):

32. Ինչ զանգվածով (գ) նատրիումի կարբոնատ կպահանջվի ելային խառնուրդից բենզիլսպիրտն առանձնացնելու համար:

33. Ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդի հետ կփոխազդի օրգանական նյութերի ելային խառնուրդը:

34–36. Ծծմբական թթվի կատալիտիկ քանակների առկայությամբ 230 գ էթանոլը տաքացրել են և ստացել երկու օրգանական նյութերի 176 գ խառնուրդ: Այդ խառնուրդը 25% զանգվածային բաժնով բրոմաջրով անցկացնելիս այն ամբողջությամբ գունազրկվել է:

34. Որքան է խառնուրդում գազային նյութի քանակը (մոլ):

35. Որքան է խառնուրդում հեղուկ նյութի զանգվածը(գ):

36. Որքան է բրոմաջրի զանգվածը (գ):

37–39. Ծծմբական թթվի առկայությամբ 220 գ հագեցած միատոմ սպիրտը տաքացնելիս ստացվել է իզոմերային ալկենների և եթերի 184 գ խառնուրդ: 9,68 գ երային սպիրտի այրումից անջատվել է 358,6 կՋ ջերմություն, իսկ այդ սպիրտի այրման ջերմությունը 3260 կՋ/մոլ է:

37. Որքան է սպիրտի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:

38. Որքան է ստացված եթերի զանգվածը (գ):

39. Որքան է միջմոլեկուլային դեհիդրատացման ռեակցիայի ելքը (%):

40–42. Ֆենոլի, բենզոլի և անիլինի խառնուրդը չոր քլորաջրածնով մշակելիս ստաջացել է 518 գ նստվածք, որն առանձնացրել են, իսկ մնացած օրգանական շերտի հետ փոխազդել է նատրիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով 500 մլ լուծույթ: Նույն քանակով երային խառնուրդը անհրաժեշտ քանակությամբ օդում այրելիս ստացվել է 292 մոլ չոր գազերի խառնուրդ:

40. Որքան է անիլինի զանգվածը (գ):

41. Որքան է բենզոլի զանգվածը (գ):

42. Ինչ ծավալով (լ, ն. սլ.) օդ է ծախսվել:

43–45. Ֆենոլի և էթանոլի որոշակի զանգվածով խառնուրդի և բավարար քանակով մետաղական կալիումի փոխազդեցությունից անջատվել է 5,6 լ (ն. սլ.) գազ: Խառնուրդի նույն զանգվածով մեկ այլ նմուշի հետ կարող է փոխազդել 0,125 մոլ կալիումի հիդրօքսիդի լուծույթ:

43. Որքան է խառնուրդի զանգվածը (գ):

44. Որքան է էթանոլի մոլային բաժինը (%) խառնուրդում:

45. Ի՞նչ նյութաքանակով (մմոլ) պիկրինաթթու կատացվի խառնուրդում պարունակվող ֆենոլի 80 % ելքով նիտրացումից:

3.3. Սպիրտներ և ֆենոլներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	458	16	50	31	74
2	4	17	12	32	53
3	1750	18	188	33	20
4	75	19	8	34	1
5	2	20	16	35	148
6	60	21	6	36	640
7	2	22	9480	37	18
8	4	23	2100	38	79
9	20	24	56	39	40
10	74	25	2	40	372
11	4	26	1200	41	234
12	662	27	37	42	6776
13	320	28	1	43	29
14	1135	29	1428	44	75
15	1405	30	2130	45	100

3.4. ԱԼԴԵՀԻԴՆԵՐ, ԹԹՈՒՆԵՐ

1. Բենզոլյական թթվի հումոլոգի մոլեկուլը պարունակում է 72 էլեկտրոն: Որքան է այդ նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):
2. Մնդիկի(II) աղերի առկայությամբ 80 կգ պրոպիլի և ջրի փոխազդեցությունից ինչ զանգվածով (կգ) վերջանյութ կառաջանա:
3. RCOOH բանաձևով հագեցած կարբոնաթթվի 17,6 գ նմուշը մետաղական կալցիումի հետ փոխազդելիս առաջացնում է այնքան ջրածին, որքան գոյանում է 1,8 գ ջրի էլեկտրոլիզից: Որքան է R ռադիկալում ատոմների գումարային թիվը:
4. Ինչ զանգվածով (գ) էթանալ կգոյանա ըստ զանգվածի 88% հիմնական նյութ պարունակող 200 գ տեխնիկական կալցիումի կարբիդից:
5. Արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով $C_nH_{2n}O$ բաղադրությամբ ալդեհիդի օքսիդացումից գոյացել են 10,8 գ մետաղ և կարբոնաթթու, որն էթանոլի հետ փոխազդելիս 50% ելքով առաջացնում է 2,2 գ էսթեր: Որքան է $C_nH_{2n}O_2$ ընդհանուր բանաձևն ունեցող բոլոր իզոմերների թիվը:
6. Ինչ թվով ատոմներ են առկա $C_nH_{2n}O$ բաղադրությամբ ալդեհիդի մոլեկուլում, եթե դրանում ածխածնի sp^3 և sp^2 հիբրիդացված ատոմների թվային հարաբերությունը 4 : 1 է:
7. Ինչ թվով առաջնային ածխածնի ատոմներ են առկա ալդեհիդի մոլեկուլում, եթե դրա հիդրման արգասիքը դեհիդրատացնելիս առաջանում է իզոբութեն:
8. Արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով մրջնալդեհիդի լրիվ օքսիդացումից անջատվել է 1,4 լ (ն. պ.) գազ: Ինչ զանգվածով (գ) մետաղ է ստացվել:
9. Հավասար բանակներով քացախաթթվի և էթիլալիտի փոխազդեցությունից 80% ելքով ստացվել է 17,6 գ էթիլացետատ: Որքան է քացախաթթվի զանգվածը (գ) ելային խառնուրդում:
10. Ինչ զանգվածով (գ) 15% զանգվածային բաժնով ացետալդեհիդի ջրային լուծույթ կստացվի 78,4 լ (ն. պ.) ացետիլենից, եթե հիդրատացումն ընթացել է 90% ելքով:
11. Ինչ զանգվածով (գ) քացախալդեհիդ կստացվի 20% խառնուկ պարունակող կալցիումի կարբիդի 160 գ նմուշից, եթե հիդրոլիզն ընթացել է քանակապես, իսկ հիդրատացումը՝ 75% ելքով:
- 12–13. Միահիմն հագեցած կարբոնաթթվի մոլեկուլում ածխածին տարրի ատոմների մոլային բաժինը կրկնակի մեծ է թթվածնի ատոմների մոլային բաժնից:
12. Որքան է թթվի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

13. Որքան է նատրիումի հիդրօքսիդի 2 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթի ծավալը (մլ), որն անհրաժեշտ է 26,4 գ թթուն չեզոքացնելու համար:

14–15. Էթանալի և էթանաթթվի 268 գ խառնուրդը արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթի հետ փոխազդելիս ստաջացրել է 432 գ նստվածք:

14. Որքան է էթանալի զանգվածը (գ) տրված խառնուրդում:

15. Ինչ ծավալով (լ, ն. պ.) գազագոլորչային խառնուրդ կստացվի ելային խառնուրդը բավարար քանակով թթվածնում այրելիս:

16–17. Քացախալդեհիդի և էթանոլի խառնուկ պարունակող քացախաթթվի 8 գ նմուշը արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով մշակելիս ստաջացել է 5,4 գ արծաթ: Ստացված լուծույթը չեզոքացնելու համար պահանջվել է նատրիումի հիդրօքսիդի 20% զանգվածային բաժնով 16 մլ լուծույթ ($\rho = 1,25$ գ/մլ):

16. Որքան է քացախալդեհիդի զանգվածը (մգ) ելային նմուշում:

17. Որքան է էթանոլի զանգվածային բաժինը (%) ելային նմուշում:

18–19. Քացախաթթվի և կարագաթթվի նատրիումական աղերի հավասարամոլային խառնուրդն անհրաժեշտ քանակով չոր նատրիումի հիդրօքսիդի հետ շիկացնելիս ստացվել է գազերի խառնուրդ:

18. Որքան է շիկացումից ստացված աղի հարաբերական մոլեկուլային զանգվածը:


19. Որքան է ստացված գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ էթանի:

20–21. Որոշակի զանգվածով քացախաթթվի անհիդրիդը լուծել են ջրում և ստացել քացախաթթվի 30% զանգվածային բաժնով 400 գ լուծույթ:

20. Որքան է ջրում լուծված քացախաթթվի անհիդրիդի զանգվածը (գ):

21. Որքան է ստացված թթվի էպերացման համար պահանջվող պրոպանոլի զանգվածը (գ):

22–23. Ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



22. Որքան է X_2 նյութի մոլեկուլում առաջնային ածխածնի ատոմների թիվը:

23. Որքան է X_3 նյութի մոլեկուլում σ -կապերի թիվը:

24–25. *Սահմանային ալդեհիդի 12,9 գ նմուշի և արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթի փոխազդեցությունից անջատվել է 32,4 գ մետաղ:*

24. Որքան է ալդեհիդի մեկ մոլեկուլում ատոմների գումարային թիվը:

25. Որքան է իզոմերային ալդեհիդների թիվը:

26–27. *Երկու միահիմն հազեցած կարբոնատթուների խառնուրդը արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով օքսիդացնելիս ստացվել է 216 գ մետաղ, իսկ նույն խառնուրդի լրիվ չեզոքացման համար պահանջվել է 148 գ կալցիումի հիդրօքսիդ:*

26. Որքան է փոքր մոլային զանգվածով թթվի զանգվածը (գ) խառնուրդում:

27. Որքան է մեծ մոլային զանգվածով թթվի նյութաքանակը (մոլ) խառնուրդում:

28–29. *Էթանոլի և քացախաթթվի որոշակի զանգվածով խառնուրդի այրման համար ծախսված թթվածնի ծախսը 1,4 անգամ մեծ է ստացված ածխաթթու գազի ծախսից: Այրման արգասիքները ֆոսֆորի(V) օքսիդ պարունակող խողովակի միջով անցկացնելիս օքսիդի զանգվածն ավելացել է 252 գրամով:*

28. Որքան է քացախաթթվի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

29. Ինչ զանգվածով (գ) մետաղական նատրիում կարող է փոխազդել տրված խառնուրդի հետ:

30–31. *Հազեցած միահիմն կարբոնաթթվի լիթիումական աղի և ավելցուկով վերցրած լիթիումի հիդրօքսիդ պարունակող 69 գ խառնուրդը միահալել են: Ստացված պինդ մնացորդին ավելացրել են 75 գ սիլիցիումի(IV) օքսիդ և կրկին միահալել, որի հետևանքով անջատվել է 5,6 լ (ն. ս.) գազ, և մնացել է 15 գ ջրում չլուծվող նյութ:*

30. Որքան է ելային խառնուրդում կարբոնաթթվի լիթիումական աղի զանգվածը (գ):

31. Որքան է առաջին ռեակցիայի ժամանակ անջատված օրգանական նյութի մոլեկուլում σ -կապերի թիվը:

32–33. *Էթանաթթվի և պրոպանաթթվի նատրիումական աղերի հավասարամոլային խառնուրդը նատրիումի հիդրօքսիդի հետ շիկացնելիս անջատվել է գազերի խառնուրդ:*

32. Որքան է գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

33. Ինչ ծավալով (լ, ն. ս.) թթվածին կպահանջվի գազային խառնուրդի 4 լ (ն. ս.) նմուշն այրելու համար:

34–36. Մեթանալի, քացախաթթվի և մրջնաթթվի 2,33 գ խառնուրդն ամբողջությամբ փոխազդել է կալիումի հիդրօքսիդի 8,4% զանգվածային բաժնով 20 գ լուծույթի հետ: Ստացված լուծույթը արծաթի(I) օքսիդի սևոնիակային լուծույթով մշակելիս անջատվել է 9,72 գ մետաղ:

34. Որքան է ալդեհիդի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

35. Որքան է քացախաթթվի մոլային բաժինը (%) ելային խառնուրդում:

36. Որքան է մրջնաթթվի զանգվածը (մգ) ելային խառնուրդում:

37–39. Գլիցերինի և սահնանային միաձուլում կարբոնաթթվի 76 գ խառնուրդը կարող է փոխազդել 78 գ կալիումի հետ: Ելային խառնուրդում առկա թթվի էսթերացման համար պահանջվել է 2–բութանոլի և իզոպրոպիլալիդի 37 գ խառնուրդ:

37. Որքան է գլիցերինի նյութաքանակը (մմոլ) ելային խառնուրդում:

38. Որքան է խառնուրդում պարունակվող թթվի մոլային զանգվածը (գ/մոլ):

39. Որքան է ելային խառնուրդում առկա թթվի էսթերացումից ստացված օրգանական նյութերի գումարային զանգվածը (գ):

40–42. Ֆենոլի և քացախաթթվի որոշակի զանգվածով խառնուրդի և նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից անջատված գազը ավելցուկով վերցրած կալցիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթով անցկացնելիս անջատվել է 4 գ նստվածք: Ելային խառնուրդը կարող է փոխազդել նատրիումի հիդրօքսիդի 20% զանգվածային բաժնով 88 գ լուծույթի հետ:

40. Որքան է ֆենոլի և քացախաթթվի խառնուրդի զանգվածը (գ):

41. Որքան է քացախաթթվի զանգվածային բաժինը (%) խառնուրդում:

42. Ինչ նյութաքանակով (մմոլ) ածխածնի(IV) օքսիդ կառաջանա ելային խառնուրդն այրելիս:

43–45. Ըստ զանգվածի 37,79% ածխածին, 6,3% ջրածին և 55,91% քլոր պարունակող A նյութի 22,225 գ գոլորշին զբաղեցնում է 3,92 լ (ն. պ.) ծավալ: Որոշակի զանգվածով A նյութը հիդրոլիզել են և ստացել ածխածին, ջրածին և թթվածին տարրերի ատոմներից բաղկացած B օրգանական նյութը, որը ջրածնով վերականգնելիս ստացվել է 148 գ երկրորդային սպիրտ:

43. Որքան է A նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

44. Որքան է B նյութի մոլեկուլում մեթիլ խմբերի թիվը:

45. Որքան է սպիրտի ստացման համար ծախսված ջրածնի զանգվածը (գ):

46–48. Նատրիումի ազեոտառի և կարագաթթվի 212,5 գ խառնուրդը քանակապես փոխազդել է նատրիումի հիդրօքսիդի 2,5 մոլ/լ կոնցենտրացիայով 500 մլ լուծույթի հետ: Նույն զանգվածով խառնուրդի մեկ այլ նմուշ ավելցուկով վերցրած չոր նատրիումի հիդրօքսիդի հետ միահալելիս անջատվել է գազային խառնուրդ:

46. Որքան է ստացված գազային խառնուրդի ծավալը (լ, ն. պ.):

47. Որքան է ստացված գազային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի:

48. Որքան է ծախսված չոր նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):


3.4. Արդեհիդներ, թթուներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	136	17	30	33	11
2	116	18	106	34	40
3	10	19	1	35	50
4	121	20	102	36	230
5	6	21	120	37	500
6	16	22	5	38	60
7	2	23	20	39	58
8	27	24	16	40	40
9	15	25	4	41	6
10	924	26	46	42	2480
11	66	27	3	43	127
12	88	28	60	44	2
13	150	29	115	45	4
14	88	30	27	46	56
15	448	31	13	47	15
16	1100	32	23	48	150

3.5. ԷՍԹԵՐՆԵՐ

1. Որքան է պղնձի(II) հիդրօքսիդով գլյուկոզի՝ որպես ալդեհիդի օքսիդացումից ստացվող օրգանական միացության հարաբերական մոլեկուլային զանգվածը:
2. $\text{CH}_3\text{COOC}_n\text{H}_{2n+1}$ բաղադրությամբ 14,8 գ էսթերի հիմնային հիդրոլիզից 80% էլքով ստացվել է 13,12 գ նատրիումի ացետատ: Որքան է ածխածնի ատոմների թիվը էսթերի մոլեկուլում:
3. Էթիլացետատի և էթիլֆորմիատի որոշակի զանգվածով խառնուրդը հիդրոլիզի ենթարկելիս ծախսվել է նատրիումի հիդրօքսիդի 1,5 մոլ/լ կոնցենտրացիայով 100 մլ լուծույթ: Ինչ զանգվածով (մգ) սպիրտ է գոյացել հիդրոլիզի արդյունքում:
4. Որքան է $\text{C}_4\text{H}_8\text{O}_2$ բանաձևն ունեցող իզոմեր նյութերի թիվը:
5. Սահմանային միատոմ սպիրտի և սահմանային միաօքսիդ կարբոնաթթվի փոխազդեցությունից ստացված էսթերի մեկ մոլում պարունակվում է 48 մոլ պրոտոն: Որքան է իզոմեր էսթերների թիվը:
6. Սահմանային միատոմ սպիրտի և սահմանային միաօքսիդ կարբոնաթթվի փոխազդեցությունից ստացված էսթերի մեկ մոլում պարունակվում է 64 մոլ էլեկտրոն: Ինչ թվով մեթիլենային խմբեր են առկա էսթերին իզոմեր չձյուղավորված կարբոնաթթվի մեկ մոլեկուլում:
7. Ինչ զանգվածով (գ) էթանոլ կստացվի թթվածնի նշանակիր ատոմ պարունակող $\text{CH}_3\text{CO}_{18}\text{OC}_2\text{H}_5$ բանաձևն ունեցող 45 գ էսթերի հիդրոլիզից:
8. Որքան է ածխածին տարրի զանգվածային բաժինը (%) ռիբոզում:
9. Որքան է A և B նյութերի մոլային զանգվածների գումարային թիվը փոխարկումների հետևյալ շղթայում.
$$(\text{C}_6\text{H}_{10}\text{O}_5)_n \rightarrow \text{C}_6\text{H}_{12}\text{O}_6 \rightarrow \text{կարբոնաթթու} \xrightarrow{\text{NaOH}} \text{A} \xrightarrow{\text{Na}} \text{B}$$
10. Թթվածնի քանի՞ ատոմ է առկա եռնիտրոբջջանյութի տարրական օղակում:
- 11-12. 120 գ էսթերը 40% էլքով հիդրոլիզելիս ծախսվել է 14,4 գ ջուր:
11. Որքան է ածխածին տարրի զանգվածային բաժինը (%) էսթերում:
12. Որքան է հիդրոլիզի հետևանքով ստացված սպիրտի մոլեկուլում σ -կապերի թիվը:

13–14. Ֆոտոսինթեզով ստացված 1800 գ A նյութից ըստ հետևյալ փոխարկումների շղթայի ստացել են $C_6H_{12}O_7$ թթուն.



13. Որքան է A նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

14. Ինչ զանգվածով (գ) թթու կստացվի, եթե վերջին փուլում ռեակցիան ընթացել է 80 % ելքով, իսկ մյուսներում՝ 100 %:

15–16. Ճարպում ածխածնի զանգվածային բաժինը 75,93 % է, և դրա բաղադրության մեջ մտնում է միայն մեկ սահմանային միաիման կարբոնատթվի մնացորդ:

15. Որքան է մեթիլենային խմբերի թիվը ճարպի մոլեկուլում:

16. Ինչ զանգվածով(գ) ճարպ պետք է ենթարկել հիդրոլիզի 46 գ գլիցերին ստանալու համար:

17–18. Էսթերի ($M = 130$ գ/մոլ) հիդրոլիզից ստաջանում են միատոմ սպիրտ և միաիման հագեցած կարբոնատթու, որի նատրիումական աղում մեռադի զանգվածային բաժինը 23,9583 % է:

17. Որքան է թթվի մոլային զանգվածը (գ/մոլ):

18. Որքան է սպիրտի բանաձևն ունեցող բոլոր իզոմերների ընդհանուր թիվը:

19–20. Էթիլացետատի և պրոպանոլի 20,8 գ խառնուրդին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի 4 մոլ/լ կոնցենտրացիայով 62,5 մլ ջրային լուծույթ, ստացված նոր լուծույթը գոլորշացրել են, իսկ չոր մնացորդը՝ շիկացրել: Ստացված պինդ մնացորդում նատրիում տարրի զանգվածային բաժինը կազմել է 45,63492 %:

19. Որքան է չփոխազդած նատրիումի հիդրօքսիդի զանգվածը (գ):

20. Որքան է սպիրտի զանգվածը(գ) ելային խառնուրդում:

21–22. Մրջնատթվի և սահմանային միատոմ երկրորդային սպիրտի փոխազդեցությունից ստացվել է $C_4H_8O_2$ բաղադրությամբ էսթեր:

21. Որքան է մեթիլ խմբերի թիվը էսթերի մեկ մոլեկուլում:

22. Ինչ զանգվածով (գ) մետաղ կստացվի մեկ մոլ էսթերի և արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթի փոխազդեցությունից:
- 23–24. Միաշաքարը ջրածնով վերականգնելիս ստացվում է $C_5H_{12}O_4$ բաղադրությամբ բազմատոմ սպիրտ, իսկ արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծույթով օքսիդացնելիս՝ $C_5H_{10}O_5$ բաղադրությամբ կարբոնաթթու:
23. Որքան է ատոմների գումարային թիվը միաշաքարի մեկ մոլեկուլում:
24. Քանի մեթիլենային խումբ կա բազմատոմ սպիրտի մեկ մոլեկուլում:
- 25–27. Որոշակի զանգվածով գլյուկոզը միաժամանակ ենթարկվել է և՛ սպիրտային, և՛ կարծաթթվային խմորման: Ստացված օրգանական նյութերի խառնուրդը բաժանել են երկու հավասար մասի: Առաջին մասի և մետաղական նատրիումի փոխազդեցությունից անջատվել է 11,2 լ (ն. պ.) ջրածին, իսկ երկրորդ մասի հետ համապատասխան պայմաններում փոխազդել է 16 գրամ նատրիումի հիդրօքսիդ:
25. Որքան է ելային գլյուկոզի զանգվածը (գ):
26. Որքան է գլյուկոզի խմորումից անջատված գազի ծավալը (մլ, ն. պ.):
27. Որքան է գլյուկոզի խմորումից ստացված կարծաթթվի զանգվածը (գ):
- 28–30. Որոշակի զանգվածով գլյուկոզի 20 %-ը ենթարկվել է սպիրտային խմորման, իսկ մնացածը՝ կարծաթթվային: Ռեակցիաների ավարտից հետո խառնուրդի զանգվածը պակասել է 17,6 գրամով:
28. Որքան է գլյուկոզի սկզբնական զանգվածը (գ):
29. Ինչ զանգվածով (գ) կարծաթթու է ստացվել:
30. Որքան է նատրիումի հիդրօքսիդի 10 % զանգվածային բաժնով լուծույթի զանգվածը (գ), որը կփոխազդի ստացված մնացորդի հետ:
- 31–33. Որոշակի զանգվածով ճարպը հիդրելու համար պահանջվել է 44,8 լ (ն. պ.) ջրածին: Ճարպի հիդրման վերջանյութը թթվեցրած ջրային լուծույթով հիդրոլիզի ենթարկելիս ստացվել է գլիցերինի և միայն մեկ թթվի 377,6 գ խառնուրդ: Խառնուրդում պարունակվող թթվի և կալիումի հիդրոկարբոնատի փոխազդեցությունից անջատվել է 26,88 լ (ն. պ.) գազ:


31. Ինչ զանգվածով (գ) կալիումի հիդրոկարբոնատ է փոխազդել ճարպի հիդրոլիզից ստացված ճարպաթթվի հետ:
32. Ինչ թվով կրկնակի կապեր են առկա ելային ճարպի մեկ մոլեկուլում:
33. Որքան է ճարպի մոլային զանգվածը (գ/մոլ):
- 34–36. Էթիլացետատի և էթիլպրոպիոնատի խառնուրդի որոշակի զանգվածով նմուշն այրելիս ստացվել է 201,6 Լ (ն. ս.) ածխածնի(IV) օքսիդ, իսկ նույն զանգվածով նմուշի լրիվ հիդրոլիզի համար պահանջվել է նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 400 գ լուծույթ:*
34. Որքան է NaOH–ի նյութաքանակը (մոլ) լուծույթում:
35. Որքան է խառնուրդում էթիլացետատի մոլային բաժինը (%):
36. Որքան է ելային խառնուրդի զանգվածը (գ):
- 37–39. 2,2–երկմեթիլպրոպանաթթվի էթիլէթերի և էթանոլի 32,5 գ խառնուրդին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի 2,5 մոլ/լ կոնցենտրացիայով 226 մլ ջրային լուծույթ (ավելցուկով), ստացված լուծույթը գոլորշացրել են, իսկ չոր մնացորդը՝ շիկացրել: Պինդ մնացորդում ջրածին տարրի նյութաքանակը 265 մմոլ է:*
37. Որքան է սպիրտի զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:
38. Որքան է առաջնային ածխածնի ատոմների թիվը շիկացման ժամանակ ստացված օրգանական նյութի մոլեկուլում:
39. Որքան է պինդ մնացորդում աղի նյութաքանակը (մմոլ):
- 40–42. Երկու թթվի եռզլիցերիդ հանդիսացող պինդ ճարպի 6,38 գ նմուշը լուծել են կալիումի հիդրօքսիդի 25 % զանգվածային բաժնով 11,2 գ լուծույթում, իսկ հիմքի ավելցուկը՝ չեզոքացրել 5 % զանգվածային բաժնով 14,6 գ աղաթթվով: Ստացված լուծույթի հետագա թթվեցումը հանգեցրել է ջրում չլուծվող 5,12 գ նյութի ստացմանը, որում ածխածնի զանգվածային բաժինը 75 % է:*
40. Որքան է ճարպի հիդրոլիզի համար անհրաժեշտ հիմքի նյութաքանակը (մմոլ):
41. Որքան է ճարպի հարաբերական մոլեկուլային զանգվածը:
42. Որքան է ջրում չլուծվող նյութի մոլային զանգվածը (գ/մոլ):

3.5. Էսթերներ

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	196	15	44	29	144
2	3	16	403	30	640
3	6900	17	74	31	120
4	6	18	7	32	8
5	4	19	2	33	880
6	4	20	12	34	2
7	24	21	2	35	50
8	40	22	216	36	190
9	246	23	19	37	40
10	11	24	3	38	3
11	40	25	108	39	150
12	5	26	8960	40	30
13	180	27	72	41	638
14	1568	28	180	42	256

3.6. ԱԶՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՄԻՆԱԹԹՈՒՆՆԵՐ

1. Որքան է անհրաժեշտ քանակով թթվածնի մեջ մեթիլամինի այրման արդյունքում ստացվող գազագոլորչային խառնուրդում ածխածնի(IV) օքսիդի մոլային բաժինը (%):
2. Ինչ զանգվածով (գ) ջուր կանջատվի 300 գ գլիցինից և 315 գ սերինից երկպեպտիդ առաջանալիս:
3. Որքան է ազոտի մոլային բաժինը (%) էթիլամինում:
4. Ինչ զանգվածով (գ) եռբրոմանիլին կստացվի 18,6 գ անիլինի և 500 գ 20 % զանգվածային բաժնով բրոմաջրի փոխազդեցությունից:
5. α -ամինաթթվի մոլեկուլում կովալենտային կապերի թիվը 10 է: Որքան է ամինաթթվում ածխածնի զանգվածային բաժինը (%):
6. Առաջնային, հագեցած, ոչ ցիկլային կառուցվածքով 2,36 գ ամինի այրման արգասիքներն ալկալու լուծույթով անցկացնելիս 0,448 լ (ն. պ.) գազ չի կլանվել: Որքան է ջրածնի ատոմների գումարային թիվն ամինի մոլեկուլում:
7. Գծային կառուցվածքով պոլիպեպտիդը կազմված է 15 մոլեկուլ գլիցինի, 20 մոլեկուլ ալանինի և 20 մոլեկուլ ֆենիլալանինի մնացորդներից: Որքան է պոլիպեպտիդի մոլային զանգվածը (գ/մոլ):
8. Ալիլիլամինի և անհրաժեշտ քանակությամբ բրոմաջրածնի հետ փոխազդեցությունից ստացված նյութի մոլեկուլում բրոմի զանգվածային բաժինը 51,94% է: Որքան է ալիլիլամինի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը:
9. Որքան է A և C օրգանական նյութերի հարաբերական մոլեկուլային զանգվածների գումարային թիվը փոխարկումների հետևյալ շղթայում.



10. Ինչ զանգվածով (գ) ալանին կստացվի 1480 գ պրոպանաթթվից (երկփուլ սինթեզով), եթե առաջին փուլն ընթանում է 75 %, իսկ երկրորդը՝ 60 % ելքով:
- 11-12. *Որոշակի զանգվածով գլիցիլսերինը տաքացման պայմաններում փոխազդում է կալիումի հիդրօքսիդի 10 % զանգվածային բաժնով 560 գ ջրային լուծույթի հետ:*
11. Որքան է երկպեպտիդի զանգվածը (գ):

12. Ինչ զանգվածով (գ) ջուր կառաջանա նույն զանգվածով երկպեպտիդն այրելիս:

13–14. *Որոշակի զանգվածով 2–մեթիլ–3–ամինապրոպանաթթուն փոխազդել է 224 լ (ն. պ.) ամոնիակի հետ:*

13. Որքան է փոխազդած ամինաթթվի զանգվածը (գ):

14. Ինչ զանգվածով (գ) քլորաջրածին կփոխազդի նույն քանակով ամինաթթվի հետ:

15–16. *Երկպեպտիդի 33 գ կշռանքի թթվային հիդրոլիզից ստացվել է 55,75 գ զանգվածով միայն մեկ ամինաթթվի քլորաջրածնական աղ:*

15. Որքան է երկպեպտիդի մոլեկուլում կրկնակի կապերի թիվը:

16. Ինչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 20% զանգվածային բաժնով լուծույթ կփոխազդի նույն զանգվածով երկպեպտիդի հետ:

17–18. *Ըստ հետևյալ ուրվագրի՝ $C_4H_{10} \rightarrow X_1 \rightarrow X_2 \rightarrow$ գլիցին, 35 լ (ն. պ.) բութանից ստացել են գլիցին:*

17. Որքան է ստացված գլիցինի զանգվածը (գ), եթե բոլոր ռեակցիաներն ընթացել են 80% ելքով:

18. Որքան է փոխարկման արդյունքում ստացված X_1 նյութի զանգվածը (գ):

19–21. *Բենզոլի և անիլինի խառնուրդի լրիվ այրումից ստացվել է 765 գ ջուր: Ստացված գազազոլորչային խառնուրդն ավելցուկով կայցիումի հիդրօքսիդի լուծույթով անցկացնելիս առաջացել է 7,5 կգ նստվածք:*

19. Որքան է ելային խառնուրդի զանգվածը(գ):

20. Ինչ ծավալով (լ, ն. պ.) թթվածին է ծախսվել ելային խառնուրդն այրելիս:

21. Որքան կլինի անիլինի ընդհանուր զանգվածը (գ), եթե ելային խառնուրդում պարունակվող բենզոլը 80% ելքով փոխարկվի անիլինի:

22–24. *Ալիֆատիկ շարքի երկու հարևան ամինների հալսասրամուլային խառնուրդի լրիվ այրման համար ծախսված թթվածնի ծավալը 20%-ով մեծ է ստացված ջրային գոլորշու ծավալից:*

22. Որքան է մեծ մոլային զանգվածով հոմոլոգի մոլային զանգվածը (գ/մոլ):
23. Որքան է փոքր մոլային զանգվածով իզոմեր առաջնային ամինների ընդհանուր թիվը:
24. Որքան է ածխածին տարրի մոլային բաժինը (%) փոքր մոլային զանգվածով ամինի մոլեկուլում:
- 25–27. Սերինի նմուշը չեզոքացրել են 80 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթով, և ստացված ամբողջ լուծույթի հետ քանակական փոխազդեցության համար պահանջվել է 8 մոլ/լ կոնցենտրացիայով որոշակի ծավալով աղաթթու:*
25. Որքան է փոխազդած ամինաթթվի զանգվածը (գ):
26. Ինչ ծավալով (մլ) աղաթթու է ծախսվել:
27. Ինչ զանգվածով (գ) մետաղական նատրիում կփոխազդի նույն քանակով սերինի հետ:
- 28–30. Մեթիլ- և էթիլամինների խառնուրդը լրիվ այրել են անհրաժեշտ ծավալով օդում: Ստացված գազազոլորչային խառնուրդը նատրիումի հիդրօքսիդի 8 մոլ/լ կոնցենտրացիայով 1 լ լուծույթի միջով անցկացնելիս վերջինիս զանգվածն ավելացել է 329 գրամով, և ստացվել է չեզոք աղ:*
28. Որքան է ամինների ելային խառնուրդի զանգվածը (գ):
29. Ինչ ծավալով (լ, ն. պ.) օդ է պահանջվում ելային խառնուրդն այրելու համար:
30. Որքան է ստացված չեզոք աղի զանգվածը(գ):
- 31–33. ε-ամինակապրոնաթթվի քաղցիաթթվային լուծույթը չեզոքացնելու համար պահանջվել է 15% զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 3200 գ լուծույթ: Ամինաթթվի նույն զանգվածով լուծույթը քլորաջրածնով մշակելիս անջատվել է 335 գ բյուրեղային նյութ:*
31. Որքան է ամինաթթվի զանգվածը (գ) ելային լուծույթում:
32. Որքան է ելային լուծույթի զանգվածը (գ):
33. Ինչ զանգվածով (գ) կալցիումի հիդրօքսիդ կփոխազդի ելային լուծույթի հետ:

34–36. Երկպեպտիդի 32,4 գ զանգվածով նմուշի հիդրոլիզից ստացված α -ամինաթթուների խառնուրդն ամբողջությամբ փոխազդել է 20% զանգվածային բաժնով 73 գ աղաթթվի հետ: Նույն զանգվածով α -ամինաթթուների խառնուրդի մեկ այլ նմուշ մետաղական նատրիումով մշակելիս անջատվել է 6,72 լ (ն. ս.) ջրածին:

34. Որքան է երկպեպտիդից ստացված փոքր մոլային զանգվածով ամինաթթվի զանգվածը:

35. Ինչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ կծախսվի երկպեպտիդի հիդրոլիզի համար:

36. Որքան է երկպեպտիդում σ -կապերի ընդհանուր թիվը:

37–39. Ալանինի հիդրոսուլֆատի և գլիցինի սուլֆատի խառնուրդում ծծմբի ատոմների թիվը $3,612 \cdot 10^{24}$ է, իսկ ազոտի ատոմներինը՝ $6,02 \cdot 10^{24}$: Այդ խառնուրդն անմնացորդ փոխազդել է 40% զանգվածային բաժնով ($\rho = 1,4$ գ/սմ³) կալիումի հիդրօքսիդի լուծույթի հետ:

37. Որքան է ալանինի հիդրոսուլֆատի բանակը (մոլ) ելային խառնուրդում:

38. Որքան է ստացված օրգանական աղերի խառնուրդի զանգվածը (գ):

39. Որքան է փոխազդած ալկալու լուծույթի ծավալը (սմ³):

40–42. Ֆենոլի, անիլինի և բենզոլի 350 գ զանգվածով խառնուրդը ալկալու ջրային լուծույթի հետ թափահարելիս օրգանական շերտի զանգվածը պակասել է 47 գրամով: Օրգանական շերտն առանձնացրել են, մշակել աղաթթվով, որի արդյունքում օրգանական շերտի զանգվածը պակասել է 93 գրամով:

40. Որքան է անիլինի զանգվածը (գ) ելային խառնուրդում:

41. Որքան է բենզոլի զանգվածային բաժինը (%) ելային խառնուրդում:

42. Որքան է ֆենոլի լրիվ չեզոքացման համար անհրաժեշտ նատրիումի հիդրօքսիդի 25% զանգվածային բաժնով լուծույթի զանգվածը (գ):

43–45. Երկպեպտիդի 240 գ զանգվածով նմուշի թթվային հիդրոլիզի արդյունքում գոյացել է 376,5 գ միայն մեկ նյութ՝ միասամինաթթվի քլորաջրածնային աղ:

43. Որքան է համապատասխան ամինաթթվի մոլային զանգվածը (գ/մոլ):

44. Որքան է փոխազդած քլորաջրածնի նյութաքանակը (մոլ):

45. Քանի անգամ է երկպեպտիդում ածխածնի զանգվածային բաժինը մեծ ջրածնի զանգվածային բաժնից:

**3.6. Ազոտ պարունակող օրգանական միացություններ,
ամիններ և ամինաթթուներ**


Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	25	16	140	31	262
2	54	17	120	32	862
3	10	18	150	33	444
4	66	19	1125	34	15
5	32	20	2156	35	16
6	9	21	1116	36	20
7	5233	22	87	37	2
8	16	23	4	38	1158
9	135	24	25	39	2200
10	801	25	210	40	93
11	81	26	500	41	60
12	45	27	92	42	80
13	1030	28	107	43	89
14	365	29	924	44	3
15	2	30	424	45	6

3.7. ԲՆԱԿԱՆ ԳԱԶ, ՆԱՎԹ, ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ

1. Ինչ ծավալով (լ, ն. պ.) ացետիլեն կստացվի ըստ ծավալի 90 % մեթան պարունակող 240 լ բնական գազից, եթե ռեակցիայի ելքը 75 % է:
2. Ինչ ծավալով (լ, ն. պ.) օդ պետք է խառնել մեկ լիտր էթիլալիրտի գոլորշուն լրիվ այրում ապահովելու համար: Ընդունել, որ թթվածնի ծավալային բաժինն օդում 20 % է:
3. Ուղիղ շղթայով գազային ալկանի մասնակի կրեկինգից ստացված երեք գազերի խառնուրդի խտությունը 1,25 անգամ փոքր է ելային ածխաջրածնի խտությունից: Որքան է ռեակցիայի ելքը (%):
4. Ինչ ծավալով (լ, ն. պ.) էթեն կպահանջվի 42 գրամ պոլիէթիլենի ստացման համար, եթե ռեակցիայի ելքը 80 % է:
5. Ինչ զանգվածով (մգ) ամինաթթու կստացվի 3,52 գ էթանալից՝ ըստ փոխարկումների հետևյալ շղթայի, եթե օքսիդացման փուլում ելքը 75 % է, քլորացման փուլում՝ 60 %, իսկ ամինացման փուլում՝ 80 %.



6. Կերոսինից առանձնացված երկու ածխաջրածնի՝ $\text{C}_{12}\text{H}_{26}$ և $\text{C}_{14}\text{H}_{30}$, հավասարամոլային 368 գ խառնուրդն այրել են ավելցուկով թթվածնում: Որքան է ստացված ածխածնի(IV) օքսիդի զանգվածը (գ):
7. Ինչ ծավալով (մ³, ն. պ.) 25 % (ըստ ծավալի) մեթան պարունակող կոքսագազ է անհրաժեշտ 150 կգ պոլիմրջնալենիից ստանալու համար՝ ըստ հետևյալ ուրվագրի.



8–9. Համապատասխան պայմաններում մեթանը և ջրային գոլորշին փոխազդելիս 80 % ելքով ստացվել է սինթեզ գազ, և համակարգի ծավալն ավելացել է 100 լիտրով:

8. Որքան է եղել ելանյութերի ընդհանուր ծավալը (լ):

9. Որքան է վերջնական խառնուրդում ջրածնի ծավալը (լ):

10–11. Ուղեկից նավթային գազերից առանձնացրել են պրոպանի և բութանի 2 : 1 ծավալային հարաբերությամբ 60 լ խառնուրդ և այրել 370 լ թթվածնում:

10. Որքան է ծախսված թթվածնի ծավալը (լ):

11. Որքան է ածխածնի(IV) օքսիդի մոլային բաժինը (%) ստացված գազագոլորշային խառնուրդում:
- 12–13. Ածխածնի երկու ստաջնային ստոմ պարունակող ալկանի լրիվ այրումից ստացվել են 7,04 գ ածխածնի(IV) օքսիդ և 3,24 գ ջուր: Նույն ածխաջրածնի համաչափ կրեկինգի արդյունքում գոյացած նյութից ստացել են 11 200 գ/մոլ միջին մոլային զանգվածով պոլիմեր:*
12. Որքան է ածխածնի ատոմների թիվն ածխաջրածնում:
13. Որքան է բարձրամոլեկուլային նյութի պոլիմերման աստիճանը:
- 14–15. Նատրիումի ացետատի և ավելցուկով նատրիումի հիդրօքսիդի խառնուրդի շիկացումից մնացած պինդ մնացորդի և 10 % զանգվածային բաժնով քլորաջրածնի 383,25 գ լուծույթի քանակական փոխազդեցությունից ստացվել է 7,84 լ (ն. ս.) գազ:*
14. Նատրիումի հիդրօքսիդի քանակը (մոլ) այդ խառնուրդում քանի՞ անգամ է մեծ նատրիումի ացետատի քանակից:
15. Որքան է շիկացումից ստացված գազի նյութաքանակը (մմոլ):
- 16–18. Անհայտ ալկանի, էթանի և էթենի 1568 լ ծավալով խառնուրդն անցկացրել են կալիումի պերմանգանատի լուծույթով: Դրա հետևանքով մնացել է չկլանված 1120 լ գազային խառնուրդ, որի հարաբերական խտությունն ըստ հելիումի 6,1 է:*
16. Որքան է ջրածնի զանգվածային բաժինն (%) անհայտ ալկանում:
17. Որքան է էթանի ծավալը (լ) տրված խառնուրդում:
18. Որքան է պերմանգանատի լուծույթում ընթացող ռեակցիայի քանակաչափական գործակիցների գումարը:
- 19–21. 11 200 մ³ (ն. ս.) էթենը բաժանել են 3 : 7 ծավալային հարաբերությամբ երկու մասի: Մեծ մասից ստացել են պոլիէթիլեն 90 % ելքով: Մյուս մասից նախ ստացել են էթիլբենզոլ 80 % ելքով, ապա ստիրոլ՝ 75 %, այնուհետև պոլիստիրոլ՝ 90 % ելքերով:*
19. Որքան է ստացված պոլիէթիլենի զանգվածը (կգ):
20. Որքան է ստացված էթիլբենզոլի քանակը (կմոլ):
21. Որքան է ստացված պոլիստիրոլի զանգվածը (կգ):

3.7. Բնական գազ, նավթ, փտեղանյութեր

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	81	12	8
2	15	13	200
3	25	14	2
4	42	15	350
5	2160	16	25
6	1144	17	672
7	448	18	16
8	125	19	8820
9	150	20	120
10	330	21	8424
11	40		

3.8. ՔԻՄԻԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԸ

1. Երկաթի(II) սուլֆիդ, պիրիտ և ըստ զանգվածի 10% չայրվող խառնուկներ պարունակող 1,760 տ հանքանյութը թթվածնի ավելցուկում շիկացնելիս ստացվել է 1,584 տ պինդ մնացորդ: Ինչ զանգվածով (կգ) 55% զանգվածային բաժնով ծծմբական թթու կստացվի գոյացող ծծմբի(IV) օքսիդի հետագա փոխարկումներից:
2. Տաքացման պայմաններում որոշակի զանգվածով ֆոսֆորի(V) օքսիդը լուծել են 612,5 գ 80% զանգվածային բաժնով օրթոֆոսֆորական թթվի լուծույթում և ջուր ավելացնելով՝ ստացել թթվի 1,5 և 6,0 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթ: Ինչ զանգվածով (գ) ֆոսֆոր պետք է այրել վերցրած զանգվածով ֆոսֆորի(V) օքսիդ ստանալու համար:
3. Պրոպենի և ջրածնի խառնուրդը, որում ջրածնի ատոմների մոլային բաժինը 75% է, անցկացրել են տաք նիկել կատալիզատորի վրայով և ստացել նոր խառնուրդ: Որքան է վերջնական գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի, եթե պրոպենը լրիվ է հիդրովել:
4. Մալթոզ երկսախարիդի լրիվ հիդրոլիզից գոյացած վերջանյութի սպիրտային խմորումից ստացված սպիրտից Լեբեդևսկի եղանակով 67,2 և (ն. պ.) դիվինիլ է սինթեզվել: Ինչ զանգվածով (գ) մալթոզ է հիդրոլիզվել:
5. Ացետիլենից ստանում են քլորոպրենային կաուչուկ՝ ըստ հետևյալ ուրվագրի.
 $C_2H_2 \rightarrow$ վինիլացետիլեն \rightarrow քլորոպրեն \rightarrow քլորոպրենային կաուչուկ: Որքան կլինի կաուչուկի զանգվածը (կգ), եթե փոխարկումների համար վերցվի 448 մ³ (ն. պ.) ացետիլեն, և ընդունվի, որ բոլոր ռեակցիաներն ընթանում են քանակապես:
6. Որքան ջերմություն (կՋ) կանջատվի 22,5 գ գլյուկոզի օքսիդացումից, եթե գլյուկոզի՝ օրգանիզմում օքսիդացման ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումը հետևյալն է.
 $C_6H_{12}O_6 + 6O_2 = 6CO_2 + 6H_2O + 2816$ կՋ:
7. Ինչ զանգվածով (գ) 100% զանգվածային բաժնով ծծմբական թթու կարելի է ստանալ ըստ զանգվածի 20% ոչ ծծմբային բնույթի խառնուկներ պարունակող 300 գ ծծմբի կոլչեդանից:
8. Ինչ զանգվածով (գ) օսլա է հիդրոլիզվել, եթե գործընթացին մասնակցել է 9 գրամ ջուր:
9. Ինչ քանակով (մոլ) թթվածին պետք է ծախսել 1792 և (ն. պ.) ծավալով ամոնիակից արտադրական եղանակով ազոտական թթու ստանալու համար (բոլոր փուլերում ռեակցիաներն ընթացել են 100% ելքով):
10. Ծծումբ պարունակող նյութերի այրումից մթնոլորտ է արտանետվել 448 և (ն. պ.) ծծմբային գազ: Ինչ զանգվածով (գ) ծծմբական թթու կարող է տեղալ թթվային անձրևների ձևով, եթե այդ պայմաններում թթվի ստացման ելքը 2,5% է:

11. Բնչ զանգվածով (կգ) ֆորմալին (40% զանգվածային բաժնով ֆորմալդեհիդի լուծույթ) է առաջանում փայտամշակման թափոնների չոր թորումից ստացված 44,8 լ ($\rho=0,8$ գ/սմ³) մեթանոլի օքսիդացումից:

12. Քիմիական ապակու բաղադրությունն արտահայտվում է $K_2O \cdot CaO \cdot 6SiO_2$ բանաձևով: Բնչ զանգվածով (տ) կալիումի կարբոնատ է ծախսվել 6,375 տ այդպիսի ապակի ստանալու համար, եթե ստացման ելքը 86,25% է:

13–14. Ածխածնի(II) օքսիդի և թթվածնի որոշակի ծավալով խառնուրդը, որի խտությունն ըստ ջրածնի 15 է, պայթեցրել են: Սկզբնական պայմանների բերելուց հետո խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի դարձել է 18,75:

13. Որքան է ածխածնի(IV) օքսիդի ծավալային բաժինը (%) վերջնական խառնուրդում:

14. Որքան է ածխածնի(II) օքսիդի փոխարկման աստիճանը (%):

15–16. 128,8 գ Գլաուբերի աղը լուծել են 155,2 գ ջրում:

15. Որքան է նատրիումի սուլֆատի զանգվածային բաժինը (%) ստացված լուծույթում:

16. Բնչ զանգվածով (մգ) կապարի իոններ (Pb^{2+}) է հնարավոր հեռացնել արտադրական հոսքաջրերից՝ 28,4 գ ստացված լուծույթ օգտագործելով:

17–18. Կրեկինգի են ենթարկել 200 կգ զանգվածով ալկան և ստացել երկու ածխաջրածիններ, որոնց մոլեկուլներում ստոմների գումարային թվերը կազմում են 14 և 9:

17. Բնչ զանգվածով (կգ) քացախաթթու կարելի է ստանալ կրեկինգի արդյունքում առաջացած ալկանի կատալիտիկ օքսիդացումից:

18. Բնչ ծավալով (մ³, ն. պ.) օդ կպահանջվի սկզբնական ալկանի լրիվ այրման համար:

19–20. Ացետիլենի և քացախաթթվի փոխազդեցությունից ստացած նյութի պոլիմերացումից ստացել են զծային պոլիմեր, որի միջին մոլային զանգվածը 17200 գ/մոլ է:

19. Որքան է 215 կգ մոնոմերի ստացման համար անհրաժեշտ ացետիլենի ծավալը (մ³, ն. պ.):

20. Որքան է բարձրամոլեկուլային նյութի պոլիմերացման աստիճանը:

21–22. Ծծմբական թթվի արտադրությունը պիրիտից իրականացվում է երեք փուլով:

21. Որքան է օքսիդացման-վերականգնման ռեակցիաների հավասարումներում թթվածնի գործակիցների գումարը:
22. Ինչ զանգվածով (կգ) $H_2SO_4 \cdot 0,5 SO_3$ բաղադրությամբ օլեում կստացվի 10% չայրվող խառնուկներ պարունակող պիրիտի 4 տոննա զանգվածով հանքից, եթե առաջին փուլում ռեակցիայի ելքը 60% է, երկրորդում՝ 75%, իսկ երրորդում՝ 100%:
- 23–24. Որպես էներգիայի այլընտրանքային աղբյուր ներքին այրման շարժիչների համար վերջին տարիներին աստիճանաբար կիրառություն է գտնում ջրածինը:*
23. Քանի անգամ է ջրածնի ջերմատվությունը (կՋ/գ) մեծ բենզինի (հեպտանի) ջերմատվությունից, եթե 5 գ ջրածնի այրումից անջատվում է 645 կՋ, իսկ 10 գ հեպտանի այրումից՝ 430 կՋ ջերմություն:
24. Երկու մոլ հեպտանի այրման համար ծախսված թթվածնի զանգվածը քանի անգամ է մեծ մեկ մոլ ջրածնի այրման համար ծախսված թթվածնի զանգվածից:
- 25–26. Ջրի որակի վերահսկման լաբորատորիայի աշխատակիցը բնակավայրի ջրմուղի ջրում հայտնաբերել է 0,0575 գ/լ Na^+ իոններ:*
25. Ինչ քանակով (մմոլ) նատրիումի բլորիդ է պարունակում այդ ջրի 10 լ ծավալով նմուշը:
26. Թորած ջրի 20 լիտր նմուշում քանի՞ մմոլ նատրիումի սուլֆատ լուծելիս Na^+ իոնների կոնցենտրացիան ջրի նմուշում և ջրմուղի ջրում կհավասարվի:
- 27–28. Ջրածին և թթվածին տարրերի պարունակությունը մարդու օրգանիզմում ըստ զանգվածի համապատասխանաբար 10% և 62% է: Ընդունել, որ հասուն մարդու օրգանիզմում ջրի զանգվածային բաժինը 64,8% է:*
27. Ինչ քանակով (մոլ) ջուր է պարունակվում 70 կգ զանգվածով մարդու օրգանիզմում:
28. Ջրածին տարրի ատոմների ռո մասն է (%) մասնակցել ջրի առաջացմանը:
- 29–31. 94,5% զանգվածային բաժնով 500 կգ ազոտական թթու ստանալու նպատակով ազոտի(IV) օքսիդը ճնշման տակ և թթվածնի 50% ավելցուկի պայմաններում լուծել են անհրաժեշտ քանակի ջրում:*
29. Որքան է լուծված ազոտի(IV) օքսիդի ծավալը (մ³):
30. Որքան է եղել վերցված թթվածնի ծավալը (մ³):

31. Ինչ զանգվածով (կգ) աղ կառաջանա, եթե ստացված թթուն փոխազդեցության մեջ դրվի ավելցուկով կրաջրի հետ:

32–34. *Տաքացման պայմաններում պրատին կատալիզորդի առկայությամբ ն–հեպտանի 40%-ը վերածվել է ցիկլոալկանի, որի 20%-ը ենթարկվել է դեհիդրման, և ստացվել է բենզոլի ածանցյալ: Առաջացել է գազագոյորչային խառնուրդ՝ բաղկացած ցիկլոալկանից, արոմատիկ ածխաջրածնից, ջրածնից և չփոխազդած հեպտանից:*

32. Որքան է ստացված ցիկլոալկանի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

33. Որքան է ստացված ջրածնի քանակը (մոլ), եթե այն կարող է վերականգնել 240 գ պղնձի(II) օքսիդ:

34. Որքան է ելային ածխաջրածնի զանգվածը (գ):

3.8. Քիմիան և կյանքը

Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը	Համարը	Պատասխանը
1	3332	13	50	25	25
2	124	14	80	26	25
3	15	15	20	27	2520
4	513	16	8280	28	72
5	885	17	240	29	168
6	352	18	2464	30	63
7	392	19	56	31	615
8	81	20	200	32	98
9	160	21	12	33	3
10	49	22	2484	34	250
11	84	23	3		
12	2	24	44		

ԲԱԺԻՆ

3

«ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆՁ»

Երրորդ գլխում ընդգրկված են «Պնդումների փունջ» կոչվող առաջադրանքներ:

Այս առաջադրանքներն ունեն հետևյալ կառուցվածքը. ներկայացվում են հինգ պնդումներ, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ կարելի է տալ երեք տեսակի պատասխան՝ «ճիշտ է», «սխալ է» կամ «չգիտեմ»: Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «ճիշտ է» կամ «սխալ է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում: Յուրաքանչյուր սխալ նշված «ճիշտ է» կամ «սխալ է» պատասխանի համար առաջադրանքին տրվելիք ընդհանուր միավորից հանվում է մեկական միավոր: Եթե տրվող և հանվող միավորների քանակը հավասար է, կամ հանվող միավորների թիվը գերազանցում է տրվող միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է զրո, և վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը հինգ միավոր:

Դրանց պատասխանները պետք է լրացնել ձևաթղթում՝ այդ նպատակի համար հատկացված տեղում, ըստ պահանջվող ձևի:

Պատասխանների ձևաթղթում յուրաքանչյուր պնդման համարի ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը (*տես նկ. 3*): Օրինակ՝ 76–80 առաջադրանքի 77–րդ պնդման համար, եթե ընտրվել է «ճիշտ է» պատասխանը, ապա լրացվում է հետևյալ ձևով.

	76	77	78	79	80
ճիշտ է	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
սխալ է	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
չգիտեմ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

նկ. 3

Այս գլխի առաջադրանքները պետական ավարտական և միասնական քննությունների թեստերում նախատեսվում է ընդգրկել հաջորդ ուսումնական տարում, բայց դրանք կընդգրկվեն արտաքին ընթացիկ գնահատման թեստերում:

ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆՋ

1. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը նյութ և ֆիզիկական մարմին հասկացությունների վերաբերյալ.

- 1) Ֆիզիկական մարմինը կազմված է նյութից:
- 2) Պղնձե բաժակ բառակապակցությունում պղինձը նյութ է, իսկ բաժակը՝ մարմին:
- 3) Փայտն ունի հաստատուն բաղադրություն:
- 4) Այլումին, քանոն, ապակի, բաժակ, կաուչուկ բառերի շարքում երկուսը համապատասխանում են նյութի:
- 5) Բաժակ կարելի է պատրաստել տարբեր նյութերից:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

2. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը խառնուրդների բաժանման եղանակների վերաբերյալ.

- 1) Սողայի և կավճի խառնուրդի բաղադրամասերը հնարավոր է առանձնացնել տաքացման և հետագա սառեցման միջոցով:
- 2) Երկաթի և ալյումինի խարտուքների խառնուրդից երկաթը հնարավոր է բաժանել մագնիսով:
- 3) Էթանոլի և ջրի խառնուրդից էթանոլը հնարավոր է բաժանել բաժանիչ ձազարով:
- 4) Ավազի և ջրի խառնուրդի բաղադրամասերը հնարավոր է առանձնացնել պարզեցումով:
- 5) Աղաջրի բաղադրիչները կարելի է բաժանել շոգիացմամբ:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	X
սխալ է	X		X		
չգիտեմ					

3. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ֆիզիկական և քիմիական երևույթների վերաբերյալ.

- 1) Մեր շրջապատում կատարվող բոլոր փոփոխությունները միայն ֆիզիկական երևույթներ են:
- 2) Քիմիական երևույթների ընթացքում նյութերը փոխարկվում են մեկը մյուսի:
- 3) Օձանելիքի հոտի տարածվելն օդում քիմիական երևույթ է:

- 4) Բույսերում գլյուկոզի առաջացումը քիմիական երևույթ է:
- 5) Շաքարի կտորը մանր փոշու վերածելը ֆիզիկական երևույթ է:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	X
սխալ է	X		X		
չգիտեմ					

4. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ազոտ տարրի վերաբերյալ.

- 1) Ազոտով լցնում են շիկացման լամպերը:
- 2) Ազոտը մտնում է սելիտրաների (բորակների) բաղադրության մեջ:
- 3) Ազոտն օդի հիմնական բաղադրամասերից է:
- 4) Մաքուր ազոտի միջավայրում կենդանիները շնչահեղձ են լինում:
- 5) Ազոտի ատոմն ունի $1s^2 2s^2 2p^3$ էլեկտրոնային բանաձևը:

	1	2	3	4	5
ճիշտ է		X			X
սխալ է	X		X	X	
չգիտեմ					

5. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական ռեակցիաների հատկանիշների և ընթացքի պայմանների վերաբերյալ.

- 1) Առաջանում է նոր նյութ:
- 2) Կարող են ուղեկցվել էներգիայի անջատմամբ կամ կլանմամբ:
- 3) Կարող են ընթանալ գույնի, հոտի փոփոխությամբ, գազի, նստվածքի առաջացմամբ:
- 4) Տեղի են ունենում քիմիական հին կապերի խզում և նոր կապերի առաջացում:
- 5) Նոր նյութեր չեն առաջանում:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

6. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ջրածին պարզ նյութի վերաբերյալ.

- 1) Մասնակցում է բույսերի և կենդանիների շնչառական պրոցեսին:
- 2) Ջրի մոլեկուլում զանգվածային բաժինը 11,1% է:
- 3) Մտնում է բոլոր օքսիդների բաղադրության մեջ:

4) Ստացվում է ջրի քայքայումից:

5) Արեգակի մթնոլորտի հիմնական բաղադրիչն է:

	1	2	3	4	5
ճիշտ է				X	X
սխալ է	X	X	X		
չգիտեմ					

7. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունն ըստ օդի 2,793 հարաբերական խտությունն ունեցող հալոգենաջրածնի վերաբերյալ.

1) Հարաբերական խտությունն ըստ հելիումի 40,5 է:

2) Հարաբերական խտությունն ըստ ջրածնի 18,25 է:

3) Այդ հալոգենաջրածնում առկա հալոգենի և նատրիումի առաջացրած միացությունը օգտագործում են որպես նյարդային համակարգը հանգստացնող միջոց:

4) Այդ միացության մեկ մոլեկուլում առկա է 36 պրոտոն:

5) Այդ հալոգենաջրածինն օգտագործում են ապակիները նախշազարդելու համար:

	1	2	3	4	5
ճիշտ է			X	X	
սխալ է	X	X			X
չգիտեմ					

8. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ծծումբ տարրի ատոմային ճնափոխությունների վերաբերյալ.

1) Տարբերվում են հարման ջերմաստիճանով:

2) Ծծմբի տարածություններից է շեղանկյունայինը, ասեղնաձևը, պլաստիկականը:

3) Շեղանկյունային ծծմբի՝ S_8 , մոլային զանգվածը 256 գ/մոլ է:

4) Տարբերվում են բյուրեղավանդակի կառուցվածքով:

5) Ծծմբի տարածություններից ամենակայունը պլաստիկականն է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

9. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը միևնույն տարրի իզոտոպների վերաբերյալ.

- 1) Տարբերվում են ատոմում էլեկտրոնների թվով:
- 2) Միջուկում նեյտրոնների թիվը նույնն է:
- 3) Բնության մեջ պղինձը հանդիպում է ^{65}Cu և ^{63}Cu իզոտոպների ձևով, և թեթև իզոտոպի մոլային բաժինը 72,7 % է ($A_r(\text{Cu}) = 63,546$):
- 4) Տարբերվում են զանգվածային թվով:
- 5) Տարբերվում են միջուկում պրոտոնների թվով:

	1	2	3	4	5
ճիշտ է			X	X	
սխալ է	X	X			X
չգիտեմ					


10. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը տարրի ատոմի կառուցվածքի վերաբերյալ.

- 1) Տարրի կարգաթիվը հավասար է տարրի ատոմի միջուկի զանգվածին:
- 2) $A_r(X) = \frac{m_0(X)}{1/12m_0(^{12}\text{C})}$ բանաձևը համապատասխանում է հարաբերական ատոմային զանգվածի սահմանմանը:
- 3) Ատոմի զանգվածը հավասար է տարրի միջուկում պրոտոնների ընդհանուր զանգվածին:
- 4) ^{12}C և $^{12}\text{C}^{2-}$ մասնիկները տարբերվում են էլեկտրոնների թվով:
- 5) Հիմնական վիճակում ֆոսֆորի ատոմի արտաքին էներգիական մակարդակում առկա է հինգ ազատ օրբիտալ:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	X
սխալ է	X		X		
չգիտեմ					

11. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը +14 միջուկի լիցքով քիմիական տարրի վերաբերյալ.

- 1) Քիմիական նշանը N է:
- 2) Ատոմում պարունակում է 14 էլեկտրոն:
- 3) Օժտված է մետաղական հատկություններով:
- 4) Պարբերական համակարգի 3-րդ պարբերության տարր է:
- 5) Այդ տարրի ատոմի կառուցվածքը պատկերվում է հետևյալ գծապատկերով.



	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	X
սխալ է	X		X		
չգիտեմ					

12. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ^{16}O , ^{18}O , ^{40}K , ^{40}Ar , ^{39}K , O^{2-} , ^{79}Br մասնիկների վերաբերյալ.

- ^{40}K և ^{39}K իզոտոպներ են, տարբերվում են նեյտրոնների թվով:
- O^{2-} մասնիկում էլեկտրոնների թիվը մեծ է պրոտոնների թվից:
- ^{40}K և ^{40}Ar ատոմներն ունեն միևնույն էլեկտրոնային կառուցվածքը:
- ^{16}O և ^{18}O ատոմներում առկա են հավասար թվով պրոտոններ և էլեկտրոններ:
- ^{79}Br իզոտոպում նեյտրոնների թիվը 9-ով մեծ է պրոտոնների թվից:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	X
սխալ է			X		
չգիտեմ					

13. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը օրգանական նյութերի որակական հայտնաբերման ռեակցիաների վերաբերյալ.

- Էթենի խառնուկը էթանում հնարավոր է հայտնաբերել բրոմաջրով:
- Էթինի խառնուկը էթենում հնարավոր է հայտնաբերել արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով:
- Էթանալի խառնուկը էթանոլում հնարավոր է հայտնաբերել արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով:
- Էթանաթթվի խառնուկը էթանոլում հնարավոր է հայտնաբերել լակմուսով:
- Մեթանալի խառնուկը մեթանաթթվում հնարավոր է հայտնաբերել արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

14. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական կապերի և մոլեկուլի կառուցվածքի վերաբերյալ.

- 1) Իոնային կապը հազեցված չէ:
- 2) Կովալենտային կապը ուղղորդված է:
- 3) SiO_2 , NaCl , Cl_2 , K_2SO_4 , CO_2 միացությունների մոլեկուլներում առկա է միայն կովալենտային կապ:
- 4) CO_2 մոլեկուլում կովալենտային անկյան մեծությունը մոտ 109° է:
- 5) H_2O , H_2S , BeCl_2 և NH_3 մոլեկուլներից գծային կառուցվածք ունի միայն BeCl_2 -ը:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

15. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական կապերի և նյութի կառուցվածքի վերաբերյալ.

- 1) Ջրածնային կապը լինում է միջ- և ներմոլեկուլային:
- 2) Կովալենտային կապը լինում է բևեռային և ոչ բևեռային:
- 3) CO -ի մոլեկուլում առկա է դոնորակցեպտորային մեխանիզմով առաջացած կովալենտային կապ:
- 4) Մոլեկուլային բյուրեղավանդակով նյութերն ունեն գածր հալման և եռման ջերմաստիճան:
- 5) SiO_2 -ը իոնային բյուրեղավանդակով նյութ է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

16. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը իոնային բյուրեղավանդակով նյութերի վերաբերյալ.

- 1) Դժվարահալ են:
- 2) Բյուրեղավանդակում իոնների միջև կապը կովալենտային է:
- 3) Հալված կամ լուծված վիճակում էլեկտրահաղորդ են:
- 4) Մոլեկուլ հասկացությունը նման նյութերի համար պայմանական է:
- 5) Բոլոր իոնային միացությունները ջրում չեն լուծվում:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X	X	
սխալ է		X			X
չգիտեմ					

17. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական կապերի վերաբերյալ.

- 1) C_nH_{2n+2} ածխաջրածնի մոլեկուլում C–C կապերի թիվը $(n-1)$ է:
- 2) C_nH_{2n+2} ածխաջրածնի մոլեկուլում C–H կապերի թիվը $(2n+2)$ է:
- 3) C_nH_{2n+2} ածխաջրածնի մոլեկուլում բոլոր կապերի թիվը $(3n+1)$ է:
- 4) Մոլեկուլում չորրորդային ածխածնի մեկ ատոմ պարունակող պարզագույն ալկանի քիմիական բանաձևը C_5H_{12} է:
- 5) Մոլեկուլում 13 կովալենտային կապ պարունակող ալկանի այրման ռեակցիայի հավասարման մեջ թթվածնի գործակիցը 13 է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	X
սխալ է					
չգիտեմ					

18. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը գազի մոլային ծավալի վերաբերյալ.

- 1) Գազի զանգվածի հարաբերությունն է նրա նյութաքանակին:
- 2) Գազի ծավալի և մոլային զանգվածի արտադրյալի հարաբերությունն է նրա զանգվածին:
- 3) Միևնույն պայմաններում հավասար զանգվածներով C_2H_6 և CH_4 գազերի ծավալների հարաբերությունը 8 : 15 է:
- 4) Հավասար զանգվածներով C_2H_6 և CH_4 գազերի խառնուրդի միջին մոլային զանգվածը 5 գ/մոլ է:
- 5) Բոլոր պայմաններում գազի մոլային ծավալը՝ $V_m = 22,4$ լ/մոլ:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X		
սխալ է	X			X	X
չգիտեմ					

19. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը օքսիդացման–վերականգնման ռեակցիաների վերաբերյալ.

- 1) Ջրածնի այրումը թթվածնում միջմոլեկուլային օքսիդացման–վերականգնման ռեակցիա է:
- 2) Կալցիումի կարբոնատի ջերմային քայքայումը ներմոլեկուլային օքսիդացման–վերականգնման ռեակցիա է:
- 3) Չեզոքացման ռեակցիաները օքսիդացման–ինքնավերականգնման ռեակցիաներ են:

- 4) Կալիումի պերմանգանատի քայքայման ռեակցիայի ընթացքում կալիումի օքսիդացման աստիճանը չի փոփոխվում:
- 5) Շիկացած ածխի և ջրի փոխազդեցությունը օքսիդացման-վերականգնման ռեակցիա չէ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	
սխալ է		X	X		X
չգիտեմ					

20. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ռեակցիաների կինետիկական հավասարումների վերաբերյալ.

- 1) $\text{CO} + \text{O}_2 \rightarrow \text{CO}_2$ ուրվագրով ռեակցիայի կինետիկական հավասարումն է $v = k [\text{O}_2]$:
- 2) $\text{H}_2 + \text{O}_2 \rightarrow \text{H}_2\text{O}$ ուրվագրով ռեակցիայի կինետիկական հավասարումն է $v = k[\text{H}_2] [\text{O}_2]^2$:
- 3) $\text{N}_2 + \text{O}_2 \rightarrow \text{NO}$ ուրվագրով ռեակցիայի կինետիկական հավասարումն է $v = k[\text{N}_2] [\text{O}_2]$:
- 4) $\text{Ca} + \text{O}_2 \rightarrow \text{CaO}$ ուրվագրով ռեակցիայի կինետիկական հավասարումն է $v = k[\text{Ca}]^2 [\text{O}_2]$:
- 5) $\text{S} + \text{O}_2 \rightarrow \text{SO}_2$ ուրվագրով ռեակցիայի կինետիկական հավասարումն է $v = k [\text{O}_2]$:

	1	2	3	4	5
ճիշտ է			X		X
սխալ է	X	X		X	
չգիտեմ					

21. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը դարձելի ռեակցիաների վերաբերյալ.

- 1) Դարձելի ռեակցիաներն ընթանում են նստվածքի առաջացմամբ:
- 2) Հետևյալ ուրվագրերից՝ ա) $\text{Na}_2\text{CO}_3 + \text{HCl} \rightarrow \text{NaCl} + \text{H}_2\text{O} + \text{CO}_2$,
բ) $\text{H}_2\text{O} + \text{CO}_2 \rightarrow \text{H}_2\text{CO}_3$, գ) $\text{N}_2 + 3\text{H}_2 \rightarrow 2\text{NH}_3$, միայն *ա*-ն չի համապատասխանում դարձելի ռեակցիայի:
- 3) Դարձելի ռեակցիաների տեղաշարժի ուղղությունը որոշում են *Լ*և *Շ*ատեյերի սկզբունքով:
- 4) Հետևյալ ուրվագրերից՝ ա) $\text{NaCl} + \text{AgNO}_3 \rightarrow \text{AgCl} + \text{NaNO}_3$,
բ) $\text{Cl}_2 + \text{H}_2\text{O} \rightarrow \text{HCl} + \text{HClO}$, *բ*-ն համապատասխանում է դարձելի ռեակցիայի:
- 5) Ճնշումը մեծացնելիս հավասարակշռությունը տեղաշարժվում է դեպի համակարգի ծավալի փոքրացման կողմը:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X	X	X
սխալ է	X				
չգիտեմ					

22. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը այրման ռեակցիաների վերաբերյալ.

- 1) Ելանյութերից մեկը պարտադիր թթվածինն է:
- 2) Ուղեկցվում է ջերմության և լույսի անջատմամբ:
- 3) Ջերմության անջատումն արդեն բավարար պայման է ռեակցիան այրման կոչելու համար:
- 4) Նյութի այրման ջերմությունը նրա մեկ մոլի այրման ժամանակ անջատված ջերմության քանակն է:
- 5) 20 % չայրվող խառնուրդ պարունակող ածուխն այրելիս կծախսվի 12 գ թթվածին:

	1	2	3	4	5
ճիշտ է		X		X	
սխալ է	X		X		X
չգիտեմ					

23. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը իներտ էլեկտրոդների կիրառմամբ ծծմբական թթվի ջրային լուծույթի էլեկտրոլիզի վերաբերյալ.

- 1) Լուծույթի զանգվածը փոքրանում է:
- 2) Ծծմբական թթվի քանակը փոքրանում է:
- 3) Ծծմբական թթվի կոնցենտրացիան մեծանում է:
- 4) Ծծմբական թթվի կոնցենտրացիան փոքրանում է:
- 5) Անոդի վրա օքսիդանում են սուլֆատ իոնները:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		
սխալ է		X		X	X
չգիտեմ					

24. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը հողալկալիական մետաղների վերաբերյալ.

- 1) Կրաջուր են անվանում կալցիումի հիդրօքսիդի թափանցիկ լուծույթը:
- 2) Կրաջուր են անվանում կալցիումի հիդրօքսիդի սպիտակ կախույթը:
- 3) Կալցիումի օքսիդի և ջրի փոխազդեցությունն անվանում են կրի մարում:

- 4) Կալցիումն ընդունակ է վերականգնելու մոլիբդենը և վոլֆրամը համապատասխան օքսիդներից:
- 5) Բարիումի 1,37 գ նմուշը կարող է ջրից դուրս մղել 1 գ ջրածին:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X	X	
սխալ է		X			X
չգիտեմ					

25. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական կապերի վերաբերյալ.

- 1) Մոլեկուլում 13 քիմիական կապ պարունակող ալկանն ունի 2 իզոմեր:
- 2) Ներմոլեկուլային ջրածնային կապ առկա է սպիտակուցներում:
- 3) CH_4 , C_6H_6 միացություններում ածխածնի ատոմները գտնվում են sp^2 հիբրիդային վիճակում:
- 4) Էթանոլի անսահմանափակ լուծվելը ջրում պայմանավորված է միջմոլեկուլային ջրածնային կապերով:
- 5) N_2 -ի մոլեկուլում σ -կապերի թիվը երկու անգամ մեծ է π -կապերի թվից:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	
սխալ է			X		X
չգիտեմ					

26. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քլորաջրածնի $^1\text{H}^{35}\text{Cl}$, $^1\text{H}^{37}\text{Cl}$, $^2\text{H}^{35}\text{Cl}$, $^2\text{H}^{37}\text{Cl}$, $^3\text{H}^{35}\text{Cl}$, $^3\text{H}^{37}\text{Cl}$ հնարավոր բանաձևերի վերաբերյալ.

- 1) $^1\text{H}^{37}\text{Cl}$ և $^3\text{H}^{35}\text{Cl}$ մոլեկուլներում նեյտրոնների թիվը երկուսով մեծ է պրոտոնների թվից:
- 2) $^2\text{H}^{35}\text{Cl}$ մոլեկուլում պրոտոնների և նեյտրոնների թվերը հավասար են:
- 3) $^1\text{H}^{35}\text{Cl}$ -ի $6,02 \cdot 10^{23}$ թվով մոլեկուլների զանգվածը 36 գրամ է:
- 4) $^2\text{H}^{37}\text{Cl}$ մոլեկուլի զանգվածը 39 գ.ա.մ. է:
- 5) $^3\text{H}^{37}\text{Cl}$ -ում նեյտրոնների թիվը չորսով փոքր է պրոտոնների թվից:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X	X	
սխալ է		X			X
չգիտեմ					

27. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը նատրիումի հիդրօքսիդի և որոշ աղերի հնարավոր փոխազդեցության վերաբերյալ.

- 1) NH_4NO_3 պարունակող լուծույթին նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս և տաքացնելիս որևէ փոփոխություն չի արձանագրվել:
- 2) CuSO_4 պարունակող լուծույթին նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս անջատվել է կապույտ նստվածք:
- 3) $(\text{NH}_4)_2\text{SO}_4$ պարունակող լուծույթին նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս և տաքացնելիս անջատվել է գազ, իսկ լուծույթում հայտաբերվել են SO_4^{2-} իոններ:
- 4) $[\text{CH}_3\text{NH}_3]\text{Cl}$ պարունակող լուծույթին նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս և տաքացնելիս անջատվել է գազ, իսկ լուծույթում հայտաբերվել են Cl^- իոններ:
- 5) NaHSO_3 պարունակող լուծույթին նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս և տաքացնելիս անջատվել է սուր հոտով գազ:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X	X	
սխալ է	X				X
չգիտեմ					

28. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը երկրորդ խմբի գլխավոր ենթախմբի տարրերի հատկությունների վերաբերյալ.

- 1) Բոլոր միացություններում երկվալենտ են և ուժեղ վերականգնողներ:
- 2) Բնության մեջ հանդես են գալիս միացությունների ձևով:
- 3) Դրանց բոլոր աղերը ջրում լուծելի են:
- 4) Կալցիումի հիդրիդում ջրածնի օքսիդացման աստիճանը +1 է:
- 5) Մագնեզիումի և ածխածնի(IV) օքսիդի փոխազդեցության ռեակցիայի հավասարման մեջ վերականգնիչ նյութի գործակիցը 2 է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

29. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը չեզոքացման ռեակցիաների վերաբերյալ.

- 1) $\text{NaOH} + \text{CH}_3\text{COOH} \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանում է $\text{H}^+ + (\text{OH})^- = \text{H}_2\text{O}$ կրճատ իոնային հավասարումը:
- 2) $\text{Ba}(\text{OH})_2 + \text{HClO}_4 \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանում է $\text{H}^+ + (\text{OH})^- = \text{H}_2\text{O}$ կրճատ իոնային հավասարումը:
- 3) $\text{LiOH} + \text{HBr} \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանող կրճատ իոնային հավասարման գործակիցների գումարը 3 է:

- 4) $\text{RbOH} + \text{HNO}_2 \rightarrow \dots$ ուրվագրին համապատասխանում է $\text{HNO}_2 + (\text{OH})^- = \text{H}_2\text{O} + (\text{NO}_2)^-$ կրճատ իոնային հավասարումը:
- 5) $\text{Sr}(\text{OH})_2$ -ի մեկ և HNO_3 -ի երեք մոլ քանակների փոխազդեցությունից կատացվեն 2-ական մոլ քանակներով աղ և ջուր:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X	X	
սխալ է	X				X
չգիտեմ					

30. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ալկալիական մետաղների հատկությունների վերաբերյալ.

- 1) Առաջացնում են R_2O բաղադրությամբ հիմնային օքսիդներ:
- 2) Փոխազդում են ջրածնի հետ՝ առաջացնելով հիդրիդներ:
- 3) Դրանց աղերը հիմնականում ջրում անլուծելի են:
- 4) Նատրիումի հիդրօքսիդի 48 % զանգվածային բաժնով 200 գ լուծույթի մեջ 33,6 լ (ս. պ.) SO_2 անցկացնելիս կառաջանան 0,9 մոլ Na_2SO_3 և 0,6 մոլ NaHSO_3 պարունակող 296 գ լուծույթ:
- 5) Բնության մեջ հանդիպում են միայն ազատ վիճակում:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	
սխալ է			X		X
չգիտեմ					

31. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը մետաղական քիմիական կապի վերաբերյալ.

- 1) Առկա է մետաղական պարզ նյութերում:
- 2) Ի տարբերություն իոնային կապի՝ ունի ուղղորդվածություն:
- 3) Առկա է մետաղական բյուրեղացանցով համաձուլվածքներում:
- 4) Կովալենտային կապի նման առաջանում է էլեկտրոնների ընդհանրացման միջոցով:
- 5) Այդ կապի առկայությամբ է պայմանավորված մետաղների էլեկտրահաղորդականությունը:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X	X	X
սխալ է		X			
չգիտեմ					

32. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը փոխարկումների հետևյալ շղթայի վերաբերյալ. $\text{Na} \xrightarrow{X_1} \text{Na}_2\text{O} \xrightarrow{X_2} \text{NaOH} \xrightarrow{X_3} \text{Na}_2\text{CO}_3 \xrightarrow{X_4} \text{NaOH}$.

- 1) X_1 -ը կարող է լինել Na_2O_2 նյութը:
- 2) X_2 -ը կարող է լինել միայն H_2O նյութը:
- 3) X_3 -ը կարող է լինել CO_2 կամ $(\text{NH}_4)_2\text{CO}_3$ նյութերից մեկը:
- 4) X_4 -ը կարող է լինել $\text{Ba}(\text{OH})_2$ կամ $\text{Ca}(\text{OH})_2$ նյութերից մեկը:
- 5) Բոլոր ռեակցիաների 100 % ելքի դեպքում 23 գ ելանյութից կստացվի 23 գ վերջանյութ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

33. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը նատրիումի հիդրօքսիդի լաբորատոր և արդյունաբերական ստացման եղանակների վերաբերյալ.

- 1) Արդյունաբերությունում ստանում են կերակրի աղի լուծույթի էլեկտրոլիզից:
- 2) Արդյունաբերությունում ստանում են կերակրի աղի հալույթի էլեկտրոլիզից:
- 3) Լաբորատորիայում ստանում են ամոնիումի կարբոնատի հիդրոլիզից:
- 4) Կարելի է ստանալ նատրիումի և ջրի փոխազդեցությունից:
- 5) Նատրիումի օքսիդի 3,1 գ նմուշը 96,9 գ ջրում լուծելիս կստացվի նատրիումի հիդրօքսիդի 4 % զանգվածային բաժնով լուծույթ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	X
սխալ է		X	X		
չգիտեմ					

34. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ճախից աջ տարրերի Ba–Sr–Ca–Mg շարքի վերաբերյալ.

- 1) Մետաղական հատկությունները նվազում են:
- 2) Ատոմների շառավիղները փոքրանում են:
- 3) Իոնացման էներգիան մեծանում է:
- 4) Էլեկտրոնային թաղանթի արտաքին էներգիական մակարդակում էլեկտրոնների թիվը նույնն է:
- 5) 137 գ բարիումի և ջրի փոխազդեցությունից կանջատվի 3,425 անգամ ավելի շատ ջրածին, քան 40 գ կալցիումի և ջրի փոխազդեցությունից:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

35. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը չորրորդ խմբի գլխավոր ենթախմբի տարրերի երկհիմն թթուների հատկությունների վերաբերյալ.

- 1) Ածխաթթու առաջացնում է երկու շարք աղեր՝ կարբոնատներ և հիդրոկարբոնատներ:
- 2) $H_2CO_3 - H_2SiO_3 - H_2GeO_3$ շարքում թթուների ուժը նվազում է:
- 3) Ածխաթթուն գունազրկում է $KMnO_4$ -ի ջրային լուծույթը:
- 4) Սիլիկաթթուն լուծվում է ջրում և ամբողջությամբ դիսոսվում:
- 5) 9,6 գ ամոնիումի կարբոնատը շիկացնելիս զանգվածի կորուստը ռեակցիայի ավարտից հետո կազմում է 9,6 գ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

36. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը կալցիումի քիմիական հատկությունների վերաբերյալ.

- 1) 2 մոլ կալցիումը ջրից դուրս է մղում 44,8 լ (ն. պ.) ջրածին:
- 2) Ջրածնի հետ փոխազդելիս առաջացնում է կալցիումի հիդրիդ:
- 3) Ածխածնի(IV) օքսիդի հետ փոխազդելիս առաջացնում է կալցիումի կարբոնատ:
- 4) Նատրիումի հիդրօքսիդի հետ փոխազդելիս առաջացնում է կալցիումի հիդրօքսիդ:
- 5) Բլորի հետ փոխազդելիս առաջացնում է կալցիումի քլորիդ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

37. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունն ալյումինի հատկությունների վերաբերյալ.

- 1) Տաքացնելիս բուռն փոխազդում է թթվածնի հետ՝ արձակելով օքսիդի շիկացած շիթեր:
- 2) Հեշտությամբ փոխազդում է ջրածնի հետ:
- 3) Ստացվում է ալյումինի օքսիդի հալույթի էլեկտրոլիզից:

- 4) Սենյակային ջերմաստիճանում հեշտությամբ փոխազդում է խիտ ծծմբական և ազոտական թթուների հետ:
- 5) Այլումինի օքսիդի և նատրիումի կարբոնատի խառնուրդի 10 գ նմուշը բաց տիգելի մեջ շիկացնելիս խառնուրդի զանգվածը դարձել է 10,6 գ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		
սխալ է		X		X	X
չգիտեմ					

38. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը երկաթի հատկությունների վերաբերյալ.

- 1) Աղաթթվի հետ փոխազդելիս առաջացնում է երկաթի(II) քլորիդ:
- 2) Հեշտությամբ փոխազդում է ջրածնի հետ:
- 3) Սենյակային ջերմաստիճանում հեշտությամբ փոխազդում է խիտ ծծմբական և ազոտական թթուների հետ:
- 4) Fe^{3+} իոնի որակական հայտնաբերման ռեակցիայի կրճատ իոնային հավասարումն է $4Fe^{3+} + 3[Fe(CN)_6]^{4-} = Fe_4[Fe(CN)_6]_3$:
- 5) 0,1 մոլ երկաթի(III) քլորիդի և բավարար քանակով մետաղական երկաթի փոխազդեցությունից կստացվի 0,15 մոլ երկաթի(II) քլորիդ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X			X	X
սխալ է		X	X		
չգիտեմ					

39. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը մետաղների կոռոզիայի վերաբերյալ.

- 1) Մետաղների գազային կոռոզիա կարող է իրականանալ O_2 , SO_2 , Cl_2 , CO_2 չոր գազերով:
- 2) Էլեկտրաքիմիական կոռոզիա տեղի է ունենում այնպիսի միջավայրում, որտեղ ստեղծվում է էլեկտրական հոսանքի ծագման հնարավորություն:
- 3) Երկաթի կոռոզիան դանդաղեցնելու նպատակով այն հալման մեջ են դնում ավելի ակտիվ մետաղի հետ:
- 4) Էլեկտրապաշտպանության կիրառման դեպքում պրոտեկտորի (հովանավորողի) դերը կատարում է փոփոխական հոսանքը:
- 5) Պղնձի հետ շփումը դանդաղեցնում է երկաթի կոռոզիան:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

40. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ջրածնի ստացման լաբորատոր եղանակների վերաբերյալ.

- 1) Ջրի էլեկտրոլիզ:
- 2) Երկաթի և աղաթթվի փոխազդեցություն:
- 3) Ալյումինի և ալկալու լուծույթի փոխազդեցություն:
- 4) Ցինկի և ազոտական թթվի փոխազդեցություն:
- 5) Մեթանի կատալիտիկ քայքայում:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		
սխալ է				X	X
չգիտեմ					

41. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ջրածնի ստացման արդյունաբերական եղանակների վերաբերյալ.

- 1) Մեթանի և ջրային գոլորշու փոխազդեցություն:
- 2) Կերակրի աղի ջրային լուծույթի էլեկտրոլիզ:
- 3) Ալկալիական մետաղների և ջրի փոխազդեցություն:
- 4) Շիկացած ածխի և ջրային գոլորշիների փոխազդեցություն:
- 5) Ցինկի և աղաթթվի փոխազդեցություն:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	
սխալ է			X		X
չգիտեմ					

42. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը թթվածնի ստացման լաբորատոր եղանակների վերաբերյալ.

- 1) Պղնձի(II) հիդրօքսիդի շիկացում:
- 2) Կալիումի պերմանգանատի քայքայում:
- 3) Ջրածնի պերօքսիդի քայքայում:
- 4) Նատրիումի քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզ:
- 5) Ալկալիական մետաղների նիտրատների քայքայում:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X		X
սխալ է	X			X	
չգիտեմ					

43. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը թթվածնի ստացման արդյունաբերական եղանակների վերաբերյալ.

- 1) MnO_2 -ի ամկայությամբ Բերթոլեյի աղի քայքայում:
- 2) Կրաքարի քայքայում:
- 3) Հեղուկ օդի թորում:
- 4) Ջրածնի այրումն օդում:
- 5) Ջրի էլեկտրոլիզ:

	1	2	3	4	5
ճիշտ է			X		X
սխալ է	X	X		X	
չգիտեմ					

44. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ազոտական թթվի հատկությունների վերաբերյալ.

- 1) Ջրային լուծույթում դիսոցված է:
- 2) Փոխազդում է հիմքերի հետ:
- 3) Ջրային լուծույթում լակմուսը ներկվում է կապույտ:
- 4) Փոխազդում է բոլոր աղերի հետ:
- 5) Աղերը կոչվում են նիտրատներ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			X
սխալ է			X	X	
չգիտեմ					

45. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը սիլիկաթթվի հատկությունների վերաբերյալ.

- 1) Միահիմն ուժեղ թթու է:
- 2) Երկհիմն թույլ թթու է:
- 3) Լուծույթից անջատվում է դոնդողանման նստվածքի ձևով:
- 4) Ավելի թույլ է, քան ածխաթթուն:
- 5) Մեկ մոլ սիլիցիումի ատոմ պարունակող սիլիկաթթվի ջերմային քայքայումից կստացվի 60 գ պինդ մնացորդ:

	1	2	3	4	5
ճիշտ է		X	X	X	X
սխալ է	X				
չգիտեմ					

46. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը Ավոգադրոյի օրենքից բխող հետևությունների վերաբերյալ.

- 1) Միատեսակ պայմաններում գտնվող տարբեր գազերի ծավալների հարաբերությունը հավասար է նրանց մոլեկուլների թվերի հարաբերությանը՝ $V_1 : V_2 = N_1 : N_2$:
- 2) Նույն գազի տարբեր նմուշների զանգվածների հարաբերությունը հավասար է նրանց մոլեկուլների թվերի հարաբերությանը՝ $m_1 : m_2 = N_1 : N_2$:
- 3) Օզոնի 5 լիտրում առկա մոլեկուլների թիվը 2 անգամ մեծ է մեթանի 2,5 լիտրում առկա մոլեկուլների թվից:
- 4) Օզոնի 5 լիտրում առկա ատոմների թիվը 2 անգամ մեծ է մեթանի 3 լիտրում առկա ատոմների թվից:
- 5) Միատեսակ պայմաններում գտնվող տարբեր գազերի մոլային զանգվածների հարաբերությունը հավասար է նրանց խտությունների հարաբերությանը՝ $M_1 : M_2 = \rho_1 : \rho_2$:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		X
սխալ է				X	
չգիտեմ					

47. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը նավթի թորման և կրեկինգի վերաբերյալ.

- 1) Ռեկտիֆիկացիոն աշտարակում չի թույլատրվում 350°C ջերմաստիճանի գերազանցում:
- 2) Հայտնի է կրեկինգի երկու տեսակ՝ ջերմային և կատալիտիկ:
- 3) Հեքսանի կրեկինգից ստացվում է միայն մեկ ալկեն՝ պրոպեն:
- 4) Բութանի կրեկինգի հնարավոր արգասիքներից է պրոպանը:
- 5) Կատալիտիկ կրեկինգի պայմաններում ճեղքման ռեակցիայի հետ մեկտեղ ընթանում է հիդրատացում:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X			
սխալ է			X	X	X
չգիտեմ					

48. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը սպիրտների դասակարգման վերաբերյալ.

- 1) Ըստ -OH խմբերի թվի՝ լինում են միատոմ և բազմատոմ:
- 2) Ըստ -OH խմբի դիրքի՝ միատոմ սպիրտները լինում են առաջնային, երկրորդային և երրորդային:
- 3) Պրոպանոլ-1 և բութանոլ-2 միատոմ սպիրտները համապատասխանաբար առաջնային և երկրորդային են:
- 4) Պենտանոլ-3 միատոմ սպիրտը երրորդային է:
- 5) Բենզիլսպիրտը՝ $C_6H_5-CH_2-OH$, արոմատիկ սպիրտ է:


	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		X
սխալ է				X	
չգիտեմ					

49. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ցիկլոալկանների վերաբերյալ.

- 1) Բոլորն ունեն հարթ կառուցվածք:
- 2) Հոմոլոգիական շարքի առաջին հինգ անդամները նորմալ պայմաններում գազեր են:
- 3) σ -կապերն առաջանում են sp^3 հիբրիդային օրբիտալների փոխձածկից:
- 4) Իզոմեր են նույն թվով ածխածնի ատոմներ պարունակող արկեններին:
- 5) C_5H_{10} բաղադրությամբ իզոմեր ցիկլոալկանների թիվը 5 է:

	1	2	3	4	5
ճիշտ է			X	X	X
սխալ է	X	X			
չգիտեմ					

50. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը X_1 , X_2 , X_3 , X_4 , օրգանական միացությունների վերաբերյալ՝ ըստ փոխարկումների հետևյալ շղթայի.



- 1) X_1 -ը մեթան է:
- 2) X_2 -ի մոլեկուլում քլորի մոլային բաժինը $1/5$ է:
- 3) X_3 -ի մեկ մոլեկուլի զանգվածը 14 գ.ա.մ-ով մեծ է X_1 -ի մեկ մոլեկուլի զանգվածից:
- 4) X_4 -ում ածխածնի ատոմները գտնվում են sp^3 հիբրիդային վիճակում:
- 5) X_1 -ը, X_3 -ը և X_4 -ը նույն հոմոլոգիական շարքի անդամներ են:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		
սխալ է				X	X
չգիտեմ					

51. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը պրոպենի վերաբերյալ.

- 1) Ջրածնի զանգվածային բաժինը դրանում 14,3 % է:
- 2) Սիլեկուլում առկա է 8 σ -կապ:
- 3) Բրոմաջրածնի միացումը հանգեցնում է 1-բրոմպրոպանի առաջացմանը:
- 4) sp^2 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը 2 է:
- 5) Չի գունազրկում $KMnO_4$ -ի ջրային լուծույթը:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	
սխալ է			X		X
չգիտեմ					

52. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը ֆենոլի վերաբերյալ.

- 1) Արդյունաբերության մեջ ստացվում է պրոպենի և բենզոլի միացման արգասիքի հետագա օքսիդացումից:
- 2) Երկաթի(III) քլորիդի հետ տալիս է կապույտ գունավորում:
- 3) Անգույն, անհոտ, նյութառեռ հեղուկ է:
- 4) Օժտված է հականեխիչ հատկություններով:
- 5) Բրոմաջրի հետ փոխազդելիս ստացվում է 3,5-երկբրոմֆենոլ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X		X	
սխալ է			X		X
չգիտեմ					

53. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը մեթանի ստացման եղանակների վերաբերյալ.

- 1) Ալյումինի կարբիդի հիդրոլիզ:
- 2) Կալցիումի կարբիդի հիդրոլիզ:
- 3) Նատրիումի ացետատի և նատրիումի հիդրօքսիդի խառնուրդի տաքացում:
- 4) Պրոպանի կրեկինգ:
- 5) Վյուրցի ռեակցիա:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X	X	
սխալ է		X			X
չգիտեմ					

54. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը մրջնալղեհիդի վերաբերյալ.

- 1) Կիրառվում է ֆենոլֆորմալդեհիդային խեժի ստացման համար:
- 2) Հիդրման արդյունքում ստացվում է էթանոլ:
- 3) 0,5 մոլ մրջնալղեհիդին ավելցուկով վերցրած արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով օքսիդացնելիս անջատվում է 216 գ մետաղ:
- 4) Ստացվում է ճարպերի հիդրոլիզի արդյունքում:
- 5) Ածխածնի օքսիդացման աստիճանը դրանում 0 է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X		X		X
սխալ է		X		X	
չգիտեմ					

55. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը քացախալղեհիդի վերաբերյալ.

- 1) 20 °C ջերմաստիճանում գազ է:
- 2) Ենթարկվում է արոմատացման:
- 3) Բնորոշ են օքսիդացման և վերականգնման ռեակցիաներ:
- 4) Ստացվում է էթանոլը պղնձի(II) օքսիդով օքսիդացնելիս:
- 5) Ռեակցիայի 100 % ելքի դեպքում մեկ մոլ ացետիլենից կստացվի 44 գ քացախալղեհիդ:

	1	2	3	4	5
ճիշտ է			X	X	X
սխալ է	X	X			
չգիտեմ					

56. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը օրգանական նյութերի հոմոլոգիական շարքերին կից անդամների վերաբերյալ.

- 1) Մեկական մոլեկուլների զանգվածների տարբերությունը 14 գ.ա.մ. է:
- 2) Մեկական մոլեկուլներում կովալենտային կապերի թվի տարբերությունը 3 է:
- 3) Մեկական մոլեկուլներում պրոտոնների թվի տարբերությունը 8 է:

4) Իզոմերների թվերի տարբերությունը միշտ 3 է:

5) Մեկական մոլեկուլներում ատոմների թվերի տարբերությունը $1,806 \cdot 10^{24}$ է:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		X
սխալ է				X	
չգիտեմ					

57. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը օսլայի վերաբերյալ.

1) Օքսիդանում է արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով:

2) Օքսիդանում է $\text{Cu}(\text{OH})_2$ -ով՝ Cu_2O նստվածքի առաջացմամբ:

3) Բնության մեջ ստացվում է ֆոտոսինթեզով:

4) Կազմված է α -գլյուկոզի մնացորդներից:

5) Մասնակի հիդրոլիզի արդյունքում ստացվում են դեքստրիններ:

	1	2	3	4	5
ճիշտ է			X	X	X
սխալ է	X	X			
չգիտեմ					

58. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը մարդու օրգանիզմի քիմիայի վերաբերյալ.

1) Քիմիական այն տարրերը, որոնք անհրաժեշտ են բջիջների և օրգանիզմների աճման ու կենսագործունեության համար, անվանվում են *կենսածին տարրեր*:

2) Կենսածին տարրերը s- և p- տարրեր են, հիմնականում՝ 1-4-րդ պարբերություններից՝ H, Na, Mg, K, Ca, C, N, O, P, S, Cl:

3) Շատ մեծ էլեկտրաբացասականությամբ օժտված կենսատարրերը կենդանի օրգանիզմներում գտնվում են անիոնների ձևով:

4) Շատ փոքր էլեկտրաբացասականությամբ օժտված կենսատարրերը կենդանի օրգանիզմներում գտնվում են կատիոնների ձևով:

5) Na^+ իոնը հիմնականում պարունակվում է ներբջջային հեղուկում, իսկ K^+ իոնը՝ արտաբջջային հեղուկում:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

59. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը էներգետիկայի էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ.

- 1) Երկիրն Արեգակից ստանում է էներգիա գերազանցապես տեսանելի էլեկտրամագնիսական ճառագայթման միջոցով:
- 2) Երկիրը հատկապես գիշերային ժամերին արձակում է էներգիա ենթակարմիր (ինֆրակարմիր) ճառագայթման ձևով:
- 3) Ածխաթթու գազն ունի ուժգին կլանում ենթակարմիր մարզում և թույլ չի տալիս, որ Երկրի մակերևույթից առաքվող ջերմությունն անցնի տիեզերական տարածություն:
- 4) Մթնոլորտի թթվածինն ու ազոտը թափանցիկ են թե՛ տեսանելի, թե՛ ենթակարմիր ճառագայթների նկատմամբ:
- 5) Տեսանելի էլեկտրամագնիսական ճառագայթման էներգիան փոքր է ենթակարմիր ճառագայթման նկատմամբ:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

60. Հաստատե՞ք կամ հերքե՞ք պնդումների ճշմարտացիությունը Երկրի ջրոլորտի վերաբերյալ.

- 1) Ջրոլորտի հիմնական բաղադրիչներն են Համաշխարհային օվկիանոսը, մթնոլորտային ջուրը և ցամաքային ջրերը:
- 2) Ցամաքային ջրերը բաժանվում են երկու մասի՝ ստորերկրյա և մակերևութային:
- 3) Մակերևութային ջրեր են համարվում գետերը, լճերը, ճահիճները, սառցադաշտերը, ձյունածածկույթը:
- 4) Թթվածնի քանակը, որն անհրաժեշտ է ջրում առկա օքսիդացող նյութերի հետ փոխազդելու համար, կոչվում է *թթվածնի կենսաքիմիական պահանջարկ*:
- 5) Կենցաղային և արտադրական կեղտաջրերն առաջանում են անձրևներից ու ձնհալից:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X	X	
սխալ է					X
չգիտեմ					

61. Հաստատե՞ք կամ հերքե՞ք անդումների ճշմարտացիությունը կենցաղում կիրառվող օրգանական միացությունների վերաբերյալ.

- 1) Մեթանոլը թունավոր է նույնիսկ փոքր քանակներով: Դրա մահացու չափաքանակը մոտ 50 մլ է:
- 2) Էթանոլը թունավոր է: Մեծ քանակությամբ էթանոլ օրգանիզմ ընկնելիս խախտվում է գլխուղեղի բնականոն գործունեությունը, և ախտահարվում է լյարդը:
- 3) Սինթետիկ լվացող միջոցները մակերևութային ակտիվ նյութեր են՝ ՄԱՆ: Դրանք օճառի համեմատ առավել արդյունավետ են և չեն կորցնում իրենց լվացող հատկությունը նաև կոշտ ջրում:
- 4) Կետոններից կենցաղում օգտագործվում է միայն ացետոնը որպես համեմունք:
- 5) Մեթանի քլորացումից ստացված երկ-, եռ- և քառաքլորածանցյալներն օգտագործվում են հագուստի քիմիական մաքրման և ներկերի նոսրացման համար:

	1	2	3	4	5
ճիշտ է	X	X	X		X
սխալ է				X	
չգիտեմ					

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
---------------	---

ԲԱԺԻՆ 1

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ	5
1.1. ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	5
1.1.1. Ատոմամոլեկուլային ուսմունք	5
1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն	22
1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը	32
1.1.4. Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք	36
1.2. ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ	42
1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը	42
1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին	47
1.2.3. Քիմիական հավասարակշռություն: Լե Շատելյեի սկզբունքը	50
1.2.4. Քիմիական ռեակցիայի ջերմեֆեկտ: Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ: Ջերմաքիմիական հավասարումներ	53
1.2.5. Էլեկտրոլիտային դիսոցիաների տեսություն	57
1.2.6. Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ	67
1.2.7. Հալույթների և լուծույթների էլեկտրոլիզ	71
1.2.8. Նյութերի գազային վիճակը: Ավոգադրոյի օրենքը: Մենդելեև-Կլապեյրոնի հավասարումը	78
1.2.9. Լուծույթներ	84
1.2.10. Պինդ նյութեր: Բյուրեղային և ամորֆ նյութեր: Բյուրեղավանդակների տեսակներ	90
1.2.11. Անօրգանական միացությունների հիմնական դասերը, դրանց ստացումը, դասակարգումը, անվանումը, հատկությունները և կիրառումը: Աղերի հիդրոլիզ	94
ԳԼՈՒԽ 2. ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ	102
2.1. ՄԵՏԱԴՆԵՐ	102
2.1.1. Մետաղական կապ: Մետաղներ: I-III խմբի գլխավոր ենթախմբի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը	102

2.1.2. Ալկալիական մետաղներ, ֆիզիկական և քիմիական հատկությունները	107
2.1.3. Հողալկալիական մետաղներ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները: Ջրի կոշտությունը և դրա վերացման եղանակները.....	113
2.1.4. Ալյումին և երկաթ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները	119
2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա: Համաձուլվածքներ: Թուջ և պողպատ	125
2.2. ՈՉՄԵՏԱՂՆԵՐ.....	129
2.2.1. Ոչմետաղներ: Ջրածին, ջուր, հալոգեններ.....	129
2.2.2. Թթվածնի ենթախումբ: Թթվածին և ծծումբ	141
2.2.3. Ազոտի ենթախումբ: Ազոտ և ֆոսֆոր	151
2.2.4. Ածխածնի ենթախումբ: Ածխածին և սիլիցիում	159
ԳԼՈՒԽ 3. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ	169
3.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	169
3.2. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ. ԱԼԿԱՆՆԵՐ ԵՎ ՑԻԿԼՈԱԼԿԱՆՆԵՐ.....	173
3.3. ՉՀԱԳԵՑԱԾ (ԱԼԿԵՆՆԵՐ, ԱԼԿԻՆՆԵՐ, ԱԼԿԱԴԻԵՆՆԵՐ) ԵՎ ԱՐՈՄԱՏԻԿ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ	179
3.4. ՍՊԻՐՏՆԵՐ ԵՎ ՖԵՆՈԼՆԵՐ.....	188
3.5. ԱԼԴԵՀԻԴՆԵՐ ԵՎ ԿԱՐԲՈՆԱԹԹՈՒՆՆԵՐ	196
3.6. ԷՍԹԵՐՆԵՐ, ՃԱՐՊԵՐ, ԱԾԽԱԶՐԵՐ	203
3.7. ԱԶՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՄԻՆԱԹԹՈՒՆՆԵՐ	211
3.8. ԲՆԱԿԱՆ ԳԱԶ: ՆԱՎԹ: ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ	219
3.9. ՔԻՄԻԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԸ	223

ԲԱԺԻՆ 2

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ	231
1.1. ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	231
1.1.1. Ատոմամոլեկուլային ուսմունք.....	231
1.1.2. Ատոմի կառուցվածքը: Միջուկ: Էլեկտրոն	241
1.1.3. Քիմիական տարրերի հատկությունների փոփոխության պարբերական բնույթը: Քիմիական կապ և մոլեկուլի կառուցվածք	247

1.1.4. Պինդ, հեղուկ, գազային նյութեր: Մաքուր նյութեր և խառնուրդներ: Նյութերի գազային վիճակը: Մենդելեև–Կլապեյրոնի հավասարումը: Ավոգադրոյի օրենքը: Պինդ նյութեր: Բյուրեղային և ամորֆ նյութեր	251
1.2. ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ	255
1.2.1. Քիմիական ռեակցիաների դասակարգումը.....	255
1.2.2. Գաղափար քիմիական ռեակցիայի արագության մասին: Քիմիական հավասարակշռություն	258
1.2.3. Քիմիական ռեակցիայի ջերմէֆեկտ: Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ: Ջերմաքիմիական հավասարումներ.....	263
1.2.4. Լուծույթներ: Դիսպերս համակարգեր, կոլոիդ համակարգեր, սուսպենզիաներ և իսկական լուծույթներ: Լուծույթների քանակական բաղադրության արտահայտման ձևերը. լուծված նյութի զանգվածային բաժին, մոլային կոնցենտրացիա	268
1.2.5. Էլեկտրոլիտներ և ոչ էլեկտրոլիտներ: Իոնների հատկությունները: Դիսոցման աստիճան: Իոնափոխանակային ռեակցիաներ: Հիմքերի, թթուների և աղերի դիսոցումը: Օքսիդացման–վերականգնման ռեակցիաներ	274
1.2.6. Էլեկտրոլիզ: Հալույթների և լուծույթների էլեկտրոլիզը: Էլեկտրոլիզի գործնական նշանակությունը.....	282
1.2.7. Անօրգանական միացությունների դասերը, դրանց ստացումը, դասակարգումը, անվանումը, հատկությունները և կիրառումը: Հիմքերի, թթուների, աղերի և օքսիդների քիմիական հատկությունները	288
ԳԼՈՒԽ 2. ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ	292
2.1. ՄԵՏԱՂՆԵՐ	292
2.1.1. Մետաղային կապ: I–III գլխավոր ենթախմբերի և բոլոր երկրորդական ենթախմբերի մետաղների բնութագիրը.....	292
2.1.2. Ալկալիական մետաղներ. ֆիզիկական և քիմիական հատկությունները	295
2.1.3. Հողալկալիական մետաղներ. ֆիզիկական և քիմիական հատկությունները	300
2.1.4. Ալյումին և երկաթ. դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները	303
2.1.5. Մետաղների ստացման եղանակները: Կոռոզիա: Համաձուլվածքներ: Թուջ և պողպատ.....	306

2.2. ՈՉՄԵՏԱՂՆԵՐ	309
2.2.1. Զրածին, ջուր: Հալոգենների ընդհանուր բնութագիրը: Հալոգենաջրածիններ: Շղթայական ռեակցիաներ: Հալոգենների և դրանց կարևորագույն միացությունների կիրառությունն ու կենսաբանական նշանակությունը	309
2.2.2. Թթվածնի ենթախումբը: Թթվածին և ծծումբ	314
2.2.3. Ազոտ, ֆոսֆոր	321
2.2.4. Ածխածին, սիլիցիում	327
ԳԼՈՒԽ 3. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ	332
3.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ, ՑԻԿԼՈԱԿԱՆՆԵՐ	332
3.2. ՈՉ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ	337
3.3. ՍՊԻՐՏՆԵՐ ԵՎ ՖԵՆՈԼՆԵՐ	342
3.4. ԱԼԴԵՀԻԴՆԵՐ, ԹԹՈՒՆԵՐ	347
3.5. ԷՍԹԵՐՆԵՐ	352
3.6. ԱԶՈՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՄԻՆԱԹԹՈՒՆԵՐ	357
3.7. ԲՆԱԿԱՆ ԳԱԶ, ՆԱՎԹ, ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ	362
3.8. ՔԻՄԻԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԸ	365
ԲԱԺԻՆ 3	
ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆԶ	370

ՔԻՄԻԱՅԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ

III
ՄԱՍ

Հրատարակչության տնօրեն՝
ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հասնակարգչային ձևավորումը՝
ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Վերարուզող տրբագրիչ՝
ԼԻԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափանք՝ 70 × 100 1/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 25 տպ. մասնով



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, հեռապատճեն՝ (+37410) 23 25 95
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am
Էլ. փոստ՝ info@zangak.am

**« ԲԻՄԻԱ » 2013 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ, I ՄԱՍ**

Նկատված վրիպակներ

Էջ, առաջադրանք	Տված է	Պետք է լինի
Էջ 51, թիվ 11	$H_2 + I_2 \rightleftharpoons 2HI$	$H_{2(գազ)} + I_{2(գազ)} \rightleftharpoons 2HI_{(գազ)}$
Էջ 91, թիվ 28	Պատասխանը 3 է	4
Էջ 99, թիվ 25	3) $Fe(OH)_3$	3) $Fe(OH)_2$
Էջ 101, թիվ 39	$Ca^{2+} + PO_4^{3-} \rightarrow Ca_3(PO_4)_2$	Հանել՝ $\rightarrow Ca_3(PO_4)_2$
Էջ 105, թիվ 15	Տեքստում՝ ...պինդ մնացորդի զանգվածը...	...լուծույթի զանգվածը...
Էջ 110, թիվ 11	2) $NaCl$ և H_2O	2) $NaCl$ և $NaClO_4$
Էջ 113, թիվ 35	5) $S^{2-} + H_2O = HS^- + H^+$	5) $S^{2-} + H_2O = HS^- + OH^-$
Էջ 124, թիվ 19	1) 58	1) 22
Էջ 135, թիվ 28	Տեքստում՝ ...մոլեկուլում...; 1) At_2	Հանել <i>մոլեկուլում</i> բառը ...; 1) F_2
Էջ 138, թիվ 57	$^{56}Fe + ^1_0n \rightarrow ^1_0p$	$^{56}Fe + ^1_0n \rightarrow ^1_0p + X$
Էջ 159, թիվ 55	Տեքստում՝ ...սենյակային ջերմաստիճանում...	...տաք ջրում...
Էջ 181, թիվ 32	3) Al_2O_3	3) $AlCl_3$
Էջ 187, թիվ 24	3) $CH_3-CH_2-\underset{\substack{ \\ CH}}{CH}-CH_3$	3) $CH_3-CH_2-\underset{\substack{ \\ OH}}{CH}-CH_3$
Էջ 200, թիվ 45	Տեքստում՝ ... $C_6H_6Br_3O$ $C_6H_3Br_3O$...
Էջ 228, թիվ 3	1) պոլիէթիլեն	1) բութադիեն
Էջ 260, թիվ 5	$\rho = 2,084$ գ/լ	$\rho = 2,048$ գ/լ
Էջ 264, թիվ 9	«...երկաթի(II) քլորիդ ...»	«...պղնձի(II) քլորիդ ...»
Էջ 282, թիվ 45-47		Պատասխանները՝ 45-500; 46-199; 47-237
Էջ 284, թիվ 15	...և կալիումի հիդրօքսիդի...	...և ավելցուկով կալիումի հիդրօքսիդի...
Էջ 286, թիվ 37-38	$AgNO$	$AgNO_3$
Էջ 286, թիվ 40 (մգ) (գ)
Էջ 287, թիվ 43-44	... $Ba(CO_3)_2$; 43. ...գազային նյութերի... Էջ 290, 43 պատասխան՝ 7	Հանել $Ba(CO_3)_2$ -ը; 43. ...գազային նյութի մոլեկուլում... Էջ 290, 43 պատասխան՝ 4

Էջ 288, թիվ 53-54	Տեքստում՝ 20 գ զանգվածով երկաթի, ալյումինի,...	Երկաթի, ալյումինի և պղնձի 20 գ զանգվածով...
Էջ 295, թիվ 46-48		<i>Զանգվածային բաժնով... հանել</i>
Էջ 308, թիվ 6-7	Տեքստում՝ ...13,34 Լ...	...13,44 Լ...
Էջ 308, թիվ 10-11	Տեքստում՝ ... $1,2 \cdot 10^5$ կՊա...	... $1,2 \cdot 10^5$ Պա...
Էջ 311, թիվ 3	Փոխարկման շղթայում Al_2Cl_3	$AlCl_3$
Էջ 312, թիվ 10-11	Տեքստում՝ ...հայտնի է, որ A-ն կազմված է,...	...հայտնի է, որ C-ն կազմված է,...
Էջ 316, թիվ 11-13	Տեքստում՝ ...ցինկի օքսիդից...	...ցինկի սուլֆիդից...
Էջ 320, թիվ 21-22	Թիվ 21-ում ... (մոլ/լ)	... (գ/մոլ)
Էջ 329, թիվ 60-62	Թիվ 61-ում ...զանգվածը վերջնական լուծույթում (%)	...զանգվածը (գ) վերջնական լուծույթում
Էջ 332, թիվ 20-21		Թիվ 21, Որքան է անջատված գազի ծավալը (լ, ն. պ.)
Էջ 342, թիվ 1	Պատասխանը՝ 12	13
Էջ 347, թիվ 24	Պատասխանը՝ 2	3
Էջ 372, թիվ 6	...26,46 գ α -ամինաթթու...	... α -ամինաթթվից առաջացած 26,46 գ եռպեպտիդ...